ԱՐՍԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ Ս. ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼԻ ԱՆԱՊԱՏԸ

ԿԱՄ

ՉՈՐՍԱՎՈՐ Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ



ԵՐԵՎԱՆ

2020



Д Д Фонд Гарантирует фирменный фирменного.

Дворецкий 11.02.2021 р.

ԱՆԹԵՐՑԱՄՐԱՅ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ.

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ

Տ. ՆԱՒԱՍԱՐԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԵԱՆԻ

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ



ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ

Տ. ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱՅ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎՒԻ

ՋՈՐԱՒՈՐ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ



ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՕՐ՝

ԼՈՒՍԱՀՈԳԻ ՍԼԱՒԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

«МАТЕНАДАРАН»
НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬКИЙ ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ
ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

АРСЕН АРУТЮНЯН

ЕРЕВАНСКАЯ ПУСТЫНЬ СВ. АПОСТОЛА АНАНИИ
ИЛИ
ЦЕРКОВЬ СВ. БОГОРОДИЦЫ ЗОРАВОР

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

"MATENADARAN"
MESROP MASHTOTS RESEARCH INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPS

ARSEN HARUTYUNYAN

THE HERMITAGE OF ST. ANANIAS THE APOSTLE
OR
ZORAVOR ST. ASTVATSATSIN CHURCH OF YEREVAN

ЦЕРКОВЬ СВ. БОГОРОДИЦЫ ЗОРАВОР
ZORAVOR ST. ASTVATSATSIN CHURCH OF YEREVAN
ЕРЕВАН 2020 YEREVAN

ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

90229

ԵՐԵՎԱՆԻ Ս. ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼԻ ԱՆԱՊԱՏԸ

ԿԱՄ

ՋՈՐԱՎՈՐ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ



ՋՈՐԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՝ ԵԿԵՂԵՑԻ

ՀՀ ԳԱԱ

ՀՏԴ 27-72:94(479.25)
ԳՄԴ 86.37+63.3(5Հ)
Հ 422

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Մաշտոցյան Մատենադարանի գիտական խորհուրդների որոշմամբ

Խմբագրությամբ՝ պատմական գիտ. դոկտոր ***Գևորգ Տեր-Վարդանյանի***
պատմական գիտ. թեկնածու ***Գագիկ Գ. Սարգսյանի***

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ ԷԴՈՒԱՐԴԻ

Հ 422 Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատը կամ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցին/ Ա. Հարությունյան; խմբագրությամբ՝ Գ. Տեր-Վարդանյանի, Գ. Սարգսյանի.— Եր.: Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցի, 2020.— 354 էջ:

Աշխատությունը նվիրված է Երևանի երբեմնի հռչակավոր Ս. Անանիա առաքյալի անապատի և նրա տեղում՝ 1693 թ. կառուցված Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու պատմությանն ու մշակութային ժառանգությանը: Առաջին անգամ փորձ է արվել մատենագրական ու վիմագրական սկզբնաղբյուրների, ինչպես նաև արխիվային վավերագրերի միջոցով ամբողջացնել անապատի գրչության դպրոցում ընդօրինակված ձեռագիր մատյանները, Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու պատմությունը, վիմագրերն ու եկեղեցական առարկաների արձանագրությունները:

Վերստին անդրադարձ է արվել Ս. Անանիա առաքյալի վարքին և վկայաբանությանը, առաջին անգամ ներկայացվել է նրա պատկերագրությունը հայ մանրանկարչության մեջ: Նորովի է լուսաբանվում մեծանուն հայրապետ Մովսես Գ. Տաթևացու (1629—1633) ավանդը Հայ եկեղեցու պատմության համապատկերում:

Նախատեսված է աղբյուրագետների, պատմաբանների, Հայ եկեղեցու և Երևան քաղաքի պատմության հարցերով զբաղվողների և ընթերցող լայն հասարակության համար:

ՀՏԴ 27-72:94(479.25)
ԳՄԴ 86.37+63.3(5Հ)

ISBN 978-9939-1-1172-8

© Հարությունյան Արսեն, 2020
© Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցի, 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

9 **ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ**

11 **ԱՌԱՋԱԲԱՆ**

17 **Ս. ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՐՔԸ ԵՎ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

21 Ա. Վկայաբանութիւն Ս. Անանիայ առաքելոյն
(Յայսմաւուրք [խմբ. Գրիգոր Ծերենց])

22 Բ. Վկայաբանութիւն Սրբոյն Անանիայ առաքելոյն
(Հ. Մկրտիչ վրդ. Ււգերեան)

26 Գ. Ս. Անանիա *(Շնորհք արք. Գալուստեան)*

28 **Ս. ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

33 **Ս. ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼԻ ԱՆԱՊԱՏԸ ԺԵ–ԺԸ. ԴԴ.**

39 Ա. Անապատի վերազարթոնքը և Ս. Մովսես Գ. Տաթևացու ավանդը

47 Բ. Ս. Մովսես հայրապետի վախճանը, տապանագիրը և Կոզեռնի մատուռը

53 Գ. Ս. Անանիա առաքյալի անապատը Փիլիպոս Ա. Աղբակեցու օրոք

56 Դ. Երևանի 1679 թ. մեծ երկրաշարժը

59 Ե. Ս. Անանիա առաքյալի անապատը Սիմեոն Երևանցու «Ջամբռ»-ում

63 Զ. Ս. Անանիա առաքյալի անապատի վանական դպրոցը

64 – Ս. Մովսես Գ. Տաթևացի

74 – Փիլիպոս Ա. Աղբակեցի

75 – Մելքիսեթ Վժանեցի և Ոսկան Երևանցի

81 **Ս. ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼԻ ԱՆԱՊԱՏՈՒՄ ԸՆԴՕՐԻՆԱԿՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԸ**

19 – Ժամանակագրական աղյուսակ [illegible] առաքյալի անապատի ձեռագրական ժառանգության

121 **ՉՈՐԱՎՈՐ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ**

123 Ա. Եկեղեցու կառուցումը Նահապետ Ա. Եղեսացու օրոք

125 Բ. Ճարտարապետությունը

127 Գ. Որմնանկարը

130 Դ. Քանդակային հարդարատարրերը

131 Ե. Ս. Աննանիա առաքյալի մատուռ-դամբարանը և տապանաքարը

134 Զ. Եկեղեցին տեղագրություններում և Երևանին նվիրված աշխատություններում

140 Է. Եկեղեցուն կից գործած դպրոցները

142 Ը. Արխիվային վավերագրերը եկեղեցու պատմության սկզբնաղբյուր

152 Թ. Եկեղեցին ստալինյան բռնապետության և հետագա տարիներին

161 Ժ. Եկեղեցու հոգևոր դասը 1830-ականներից ի վեր

167 ԺԱ. Վիմագրերը. շինարարական արձանագրություններ և խաչքարային հիշատակագրություններ

185 ԺԲ. Տապանագրեր և այլ արձանագրություններ

200 – Ժամանակագրական աղյուսակ՝ Չորավոր Ս. Աստվածածին եկեղեցու վիմագրերի

201 ԺԳ. Եկեղեցական առարկաների արձանագրությունները

217 **ԱՄՓՈՓՈՒՄ**

222 **РЕЗЮМЕ**

227 **SUMMARY**

231 **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

245 **ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ**

317 **ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ**

324 **ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ**

342 **ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ**

350 **ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿ**

Նվիրվում է մեծ րաբունապետ, մեր երկրորդ Լուսավորիչ

Ս. ՄՈՎՍԵՍ Գ. ՏԱԹԵՎԱՑԻ

Ամենայն Հայոց Հայրապետի սուրբ հիշատակին



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ

Միջնադարյան Հայաստանի պատմությունն առավելապես մեր գրավոր մշակույթն է՝ մեզ հասած մագաղաթյա մատյաններն ու վիմագրերը, որոնք լրացնելով մեկը մյուսին՝ ամբողջացնում ու սերունդներին են ավանդում հայոց դարավոր պատմության լուսավոր էջերը: Մեր մշակութային ժառանգության իրապես հարուստ անդաստանում իրենց ուրույն տեղն ունեն Հայաստանի լեռներում ծվարած, ինչպես նաև բնակավայրերում գտնվող վանքերն ու եկեղեցիները: Միջնադարի բոլոր փուլերում այդ կենտրոններում են ստեղծվել, պահպանվել ու մեզ փոխանցվել անփոխարինելի արժեքներ դարձած պատմական վկայագրերը, որոնց մասնագիտական ուսումնասիրությունը նույնքան արժեքավոր ու ողջունելի է:

Հուրախություն ամենքիս՝ հայ աղբյուրագիտության շտեմարանը վերստին հարստացավ մեր եկեղեցու նվիրյալ հայորդի Արսեն Հարությունյանի հերթական ուսումնասիրությամբ՝ նվիրված Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատի և նրա տեղում՝ 1693 թ. կառուցված Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու պատմությանն ու գրավոր ժառանգությանը: Հայ Առաքելական Եկեղեցու սուրբ հայրապետ Մովսես Գ. Տաթևացու հիշատակին ձոնված աշխատությունը նորովի է լուսաբանում միջնադարյան Երևանը: Ընթերցողն ակամա հայտնվում է քաղաքի հինավուրց փողոցներում, հոգևոր կենտրոններում, ծանոթանում նրանցից մեկի՝ Քրիստոսի 72 աշակերտներից Սուրբ Անանիայի ստորգետնյա դամբարանի շուրջը ստեղծված սրբավայրի պատմությանը, տեղի գրչության դպրոցին ու այդ նույն դպրոցում ընդօրինակված ձեռագիր մատյաններին: Հեղինակն առաջին անգամ ամբողջացրել ու քննության է ենթարկել ԺԵ—Ի. դարերում այստեղ գրված մեկ տասնյակից ավելի տարբեր բովանդակության մատյաններ, որոնց մեծ մասը ներկայումս Մաշտոցյան Մատենադարանի հավաքածուում է: Գիրքն առավել արժեքավոր է այդ ձեռագրերի համառոտ նկարագրությամբ, ուր մեծ մասամբ տրված են նաև նրանցից յուրաքանչյուրի գրչության և հետագայի հիշատակարանները, որոնք անպայմանորեն ուղեկցվում են հեղինակի խորը ու հագեցած ծանոթագրություններով:

Մատենագրական աղբյուրներին հաջորդում է ներկայիս Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու վիմագրագիտական քննությունը: Այստեղ հեղինակն ամբողջացրել է նաև եկեղեցու երեք տասնյակ վիմագրերի վերծանությունները՝ դրանց կցելով իր իսկ ձեռքով արված գրչանկարներն ու լուսանկարները: Վիմագրերի ուսումնասիրությամբ պարզվում են ոչ միայն եկեղեցու կառուցման ու հետագա նորոգումների ժամանակագրությունը, այլև

այդ աշխատանքները նախաձեռնողների, վերակացուների, մեկենասների ու նրանց հարազատների անունները: Եկեղեցու պատմության հին ու նոր փուլերն իրար շաղկապող յուրօրինակ արժեքներ են նաև եկեղեցական առարկաների տարաբնույթ նմուշները՝ սրբապատկերներ, կանթեղներ, ձեռաց ու սեղանի խաչեր և այլն, որոնց արձանագրությունները ևս տեղ են գտել ուսումնասիրության էջերում:

Առանձնակի նշելի է նաև գրքի լուսանկարների բաժինը, որտեղ ընթերցողը կգտնի Երևանի այս հինավուրց կենտրոնին վերաբերող հին ու նոր լուսանկարներ, այդտեղ ընդօրինակված ձեռագրերի գրչության և մանրանկարչության որոշ էջերի թվային լուսապատճեններ, ինչպես նաև լուսանկարներ՝ եկեղեցու ճարտարապետական մանրամասների, առանձին կառույցների, խաչքարերի, տապանաքարերի, վիմագրերի և այլն:

Մեր օրհնության և քաջալերանքի խոսքն ենք հղում այս արժեքավոր ուսումնասիրության հեղինակին՝ մաղթելով նորանոր նվաճումներ և բարձունքներ՝ հայոց մշակութային ժառանգության անհայտ էջերը կյանքի կոչելու օրհնյալ առաքելության մեջ:

Ջերմագին սիրով և օրհնությամբ՝

Տ. ՆԱՎԱՍԱՐԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԱՆ

ԱՌԱՋԱԲԱՆ

Քաղաքամայր Երևանը միջնադարյան հուշարձաններով հարուստ բնակավայրերից է, որի պատմությանն ու ճարտարապետական կոթողներին բազմաթիվ մեծ ու փոքր աշխատություններ են նվիրվել: Հայ և օտարազգի[1] ճանապարհորդ-տեղագիրների տպավորություններում, ինչպես նաև Երվանդ Շահազիզի «Հին Երևան»[2] և Թադևոս Հակոբյանի «Երևանի պատմություն» քառահատոր[3] աշխատություններում բավականին ներկայանալի է պատմական Երևանը, իսկ հնագետ Կարո Ղաֆադարյանի՝ Երևանին նվիրված ուսումնասիրությունն ամբողջացնում է քաղաքի միջնադարյան հուշարձանների համահավաք նկարագիրը՝ ճարտարապետական վերլուծություններով և մեծաքանակ նորահայտ վիմագրերով[4]:

ԺԷ. դարի ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենն իր 1673 թ. «երևանյան» նկարագրություններում հատուկ անդրադարձել է նաև քաղաքի եկեղեցիներին՝ նշելով, որ Երևանը եկեղեցիներով հարուստ բնակավայր է, որոնցից գլխավորներն են՝ եպիսկոպոսանիստ Երկուերեսնին[5] (Ircou-yerise)

---

[1] ԺՉ—ԺԹ. դդ. օտարազգի ճանապարհորդներից Ջոն Նիուբերին, Ժան-Բատիստ Տավերնիեն, Ժան Շարդենը, Ջեյմս Մորիերը, Ֆրեյզանը, Սըր Ռոբերտ Քեր Պորտերը, Հենրի Լինչը և ուրիշներ իրենց տպավորություններում մեծ տեղ են հատկացրել Արարատյան երկրի, մասնավորապես՝ Երևան քաղաքի նկարագրությանը, կազմել քաղաքի գծապատկերը: Հատկանշելի են ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենի գրառումները, որը 1673 թ. լինելով Երևանում՝ նկարագրել է այն ամենը, ինչն ընդամենը վեց տարի անց՝ 1679 թ. հունիսի 4-ի ավերիչ երկրաշարժից հիմնահատակ կործանվեց: Ժ. Շարդենի «երևանյան» տպավորությունների մասին տե՛ս Voyages du Chevalier **Chardin**, en Perse, et autres lieux de l'Orient, tome deuxieme, Paris, 1811, էջ 161—168, հմմտ. Путешествие **Шардена** по Закавказью в 1672—1673 гг., Тифлис, 1902, էջ 241—244: Տարբեր գլուխներից Հայաստանին վերաբերող հատվածական թարգմանությունները տե՛ս **Ժան Շարդեն**, Ճանապարհորդություն դեպի Պարսկաստան և Արևելքի այլ երկրներ, ֆրանսերենից թարգմանեց **Ս. Բոչոլյանը**, «Հուշարձան» տարեգիրք, հ. Գ., Երևան, 2005, էջ 208—216, տե՛ս նաև **Գ. Օրբելյան**, Երևանի նկարագրությունը ըստ եվրոպացի ճանապարհորդների (17-րդ դ. — 19-րդ դարի առաջին քառորդ), «Երևան» գիտական հոդվածների ժողովածու՝ նվիրված Երևանի պատմության հարցերին, Երևան, 2006, էջ 250—253:

[2] **Ե. Շահազիզ**, Հին Երևանը, Երևան, 2003 (1931 թ. հրատարակության լրամշակված վերատպություն, այսուհետ՝ Շահազիզ): *Հղումներում նախընտրել ենք նշել հեղինակների անվան սկզբնատառը, ապա ազգանունը, բացառությամբ մատենագիրների և հոգևորականների, որոնց անուններն տրված են ամբողջությամբ, իսկ հոգևոր աստիճանները՝ կրճատ — Ա. Հ.:*

[3] **Թ. Հակոբյան**, Երևանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 1500 թ., Երևան, 1969, նույնի՝ Երևանի պատմությունը 1500—1800 թթ., Երևան, 1971, նույնի՝ Երևանի պատմությունը 1801—1879 թթ., Երևան, 1959, նույնի՝ Երևանի պատմությունը 1879—1917 թթ., Երևան, 1963:

[4] **Կ. Ղաֆադարյան**, Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975:

[5] Այս և Ս. Պողոս-Պետրոս եկեղեցիները վերջերս բավականին հետաքրքիր լուծմամբ նույնացրել է երկրաբան Ռուբեն Հարությունյանը: Հեղինակը հիմք է ընդունել Ժան Շարդենի և նրա ուղեկից նկարիչ Ժոզեֆ Գրելոյի՝ Երևանի մինչերկրաշարժյան համայնապատկերն ամբողջացնող փորագրանկարը (1673 թ.), որտեղ հստակ պատկերված են Ս. Կաթողիկե եկեղեցական համալիրը՝ բաղկացած մեծ և փոքր երկու գմբեթավոր եկեղեցիներից և նրանցից ոչ հեռու գտնվող դարձյալ գմբեթավոր երկհարկ Երկուերեսնի եկեղեցին, որը լուսանկարի բացատրագրում ներկայացված է իբրև «երկու սրբի» եկեղեցի: Հեղինակի խոսքով. «Երկու երեսի կամ Երկու երեցի եկեղեցին հենց Ս. Պողոս-Պետրոսն է: Բացառված չէ, որ եկեղեցին ի սկզբանե կոչվել է Ս. Պողոս-Պետրոս և միայն հետագայում ավելի կիրառական է դարձել «Երկու երեցի» անունը՝ նկա-

*և Կաթողիկեն (*Catovike*), որոնք կառուցվել են հայոց վերջին թագավորների օրոք: Քաղաքի այլ եկեղեցիներն, ըստ Ժան Շարդենի, կառուցվել են ավելի ուշ, որոնց շարքում՝ փոքր, սաորգեանյա և կատակոմբների նմանություն ունեցող շինությունները[6]: Ենթադրելի է, որ կատակոմբների, այսինքն՝ սաորգեանյա դամբարանների մասին հիշատակությունը վերաբերում է նաև Ս. Աննա-նիա առաքյալի գեհենափոր կառույցին:*

*ԺԹ. դարի տեղագիր, մանկավարժ Ադամ Ադամյանցը Երևանն այսպես է տեղորոշել. «Երևանի հիւսիսային կողմում գտնւում է Ղզլղալայի անապատը[7] և Քանաքեռ գիւղի հողերը, արևելեան կողմում՝ Աւան և Ջրվէզ գիւղերի հողերը, հարաւային կողմում՝ Աղբաշ, Դուգիւն գիւղերի հողերը, իսկ արևմտեան կողմում՝ Նորագաւիթ, Վերին-Շէնգաւիթ, Ներքին-Շէնգաւիթ, Սարվանլար, Ջաֆարաբադ, Փարաքար (Շիրաբադ) և Եղուարդ գիւղերի հողերը»[8]: Դառնալով քաղաքի թաղերին՝ հեղինակը գրում է, որ Երևանը «բաժանուած է եօթը մասի կամ թաղի (մահլա), որոնք են՝ Դամբրուլաղ, Շէնթաղ, Խանլղբաղ (կամ Նոր-թաղ), Շհար, Զորագիւղ (Դարաքեանդ), Կոնդ (Թափաբաշ) և Նորք (Զեօլմակչի)»[9]: Ինչ վերաբերում է քաղաքի հոգևոր կենտրոններին, ապա «Երևանում հայերն ունեն եօթն եկեղեցի, որոնք են՝ Ս. Սարգիս մայր եկեղեցին քաղաքի, Ս. Պետրոս-Պօղոս, Ս. Կաթուղիկէ, Ս. Անանիա առաքեալ (Զօրաւար), Ս. Յովհաննէս, Ս. Սիմէօն, Ս. Աստուածածին (կիսաշէն) և երկու ուխտատեղեր՝ Ս. Աստուածածին (Նորքի թաղում) և Ս. Գէորգ (բերդի մէջ): Յունադաւաններն կամ ռուսներն ունեն մէկ (մայր) եկեղեցի Սուրբ Մարիամ Աստուածածնի հովանաւորութեան անունով (*Соборная церковь Покрова Пресвятой Богородицы*): Մահմեդականները ունեն վեց մզկիթ..., իսկ մովսիսականները մի ժողովարան (սինագօգ՝ նորաշէն)»[10]: Ա. Ադամյանցի պատկերավոր նկարագրությունից դատելով՝ ԺԹ. դարավերջի Երևանը մարդաշատ բնակավայր է եղել, ունեցել քաղաքին հատուկ թաղամասեր ու աղթավայրեր՝ կրոնական տարբեր դավանանքների հետևորդների համար[11]:*

տի են ունեցել Ս. Պողոսին և Ս. Պետրոսին» (**Ռ. Հարությունյան,** Հին Երևանի ճարտարապետական առեղծվածների պարզաբանումը, Երևան, 2007, էջ 38):

[6] Voyages du Chevalier **Chardin**, en Perse, et autres lieux de l'Orient, tome deuxieme, էջ 163, հմմտ. Путешествие **Шардена** по Закавказью в 1672–1673 гг., էջ 242:

[7] Նկատի ունի Զովունի գյուղի մոտ գտնվող բրոնզ-երկաթեդարյան Կարմիր բերդ հնավայրը, որը նաև Թազաբենդ է կոչվում:

[8] Տեղագրութիւն Երեւանի, աշխատասիրեց **Ա. Ադամեանց,** Երեւան, 1889, էջ 10:

[9] Նույն տեղում:

[10] Նույն տեղում, էջ 34:

[11] Նույն դարի գերմանացի ճանապարհորդ Բարոն Օգոստոս Ֆոն Հակստհաուզենի տեղագրական աշխատության էջերում Երևանը բնութագրվում է իբրև ասիական քաղաք՝ հարուստ վաճառանոցներով, կրպակներով, որտեղ աշխատում են արհեստավորներն ու վաճառականները: Մեծանուն գրող Խաչատուր Աբովյանի ընկերակցությամբ քաղաքում շրջած Հակստհաուզենը մանրամասն նկարագրում է Քանաքեռի եկեղեցիները, որոնք կառուցված են իրար նման՝ երկայնական հորինվածքով, որոնցից մեկի շուրջը (Ս. Աստվածածին եկեղեցու – *Ա. Հ.*) ընդարձակ գերեզմանոցն է՝ բազմաթիվ տապանագրերով (**Քարօն Օգոստոս Ֆոն Հակստհաուզենայ** Ճանապարհորդութիւն յայսկոյս Կովկասու այն է ի Հայս և ի Վիրս, թարգմ. **Արիստակէս վրդ. Սեդրակեանի,** Վաղարշապատ, 1872, էջ 172–174, 180–181):

Նշենք, որ Երևանի ԺԸ–ԺԹ. դդ. պատմության ուսումնասիրության համար ուշագրավ արդյունքներ արձանագրվեցին Հանրապետության հրապարակի շինարարական աշխատանքներին զուգահեռ՝ 2003 թ. իրականացված հնագիտական պեղումների ընթացքում: Ի թիվս տարաբնույթ գտածոների՝ փաստագրվեցին աղյուսի տեսքով մշակված սև և կարմիր տուֆից կառուցված նկուղային հարկաբաժիններ՝ գլանաձև և խաչվող թաղերով, կամարակապ

Ներկա ուսումնասիրությամբ փորձել ենք հերթական անգամ լրացնել Երևանի միջնադարյան պատմությանը նվիրված աշխատությունների շարքը՝ ընթերցողի դատին հանձնելով Ս. Աննանիայի անվամբ հայտնի անապատի[12] և նրա տեղում՝ 1693 թ. կառուցված Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու պատմության ու մշակութային ժառանգության ընդհանուր նկարագիրը՝ սկսելով առաքյալի վարք-վկայաբանությունից, անապատի վերաբերյալ մատենագրության մեջ պահպանված հիշատակություններից ու այդտեղ ընդօրինակված ձեռագրերից մինչև վիմագրեր, արխիվային վավերագրեր ու եկեղեցական առարկաների արձանագրություններ:

Սրբոց վարք-վկայաբանությունների համաձայն՝ Քրիստոսի ուսմունքի հետևորդ 72 աշակերտներից մեկն էր ծագումով դամասկացի Սուրբ Անանիան, որը հանուն հավատի նահատակվեց Փրկչական 70 թ.: Մատենագրական աղբյուրները վկայում են, որ սրբի մասունքներից հետագայում ամփոփել են նաև Հայաստանում, որոնց վրա մատուռ է կառուցվել և ուխտատեղի դարձել: Ժե–ԺՀ. դդ. սրբավայրն առավելապես հայտնի է դարձել իբրև ուսումնական ու գրչության կենտրոն, որտեղից մեզ են հասել մեկ տասնյակից ավելի ձեռագիր մատյաններ: Վերջիններիս էջերում պահպանված հիշատակարանները արժանահավատ սկզբնաղբյուրներ են անապատի պատմության ու այստեղ գործած նշանավոր անձանց գործունեությունը լուսաբանելու առումով: Ժե. դարի հիշատակարաններում սրբավայրը քանիցս վկայաբերվում է իբրև Երևանի անապատ, Ս. Աննանիայի տաճար, որտեղ ամփոփվել են սրբի «ամենազոր» մասունքները: Բացառված չէ, որ դամբարանը, որից այսօր միայն ստորգետնյա մասն է պահպանվել, նախկին եկեղեցու ավագ խորանի մասն է կազմել, որպիսիք հայտնի են Վաղարշապատի Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց, Կարենիսի Ս. Անդրեաս և Ս. Մատթեոս, Ամարասի Ս. Գրիգորիս և այլ եկեղեցիների ճարտարապետական հորինվածքում: Այս առումով ուշագրավ է ԺԹ. դարի ռուս ճանապարհորդ Անդրեյ Մուրավյովի՝ Ս. Աննիա առաքյալի դամբարանից և Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցուց ստացած տպավորությունների նկարագրությունը: Հեղինակը 1846–1847 թթ. շրջագայել է Վրաստանի և Հայաստանի տեսարժան վայրերում, եղել վանական համալիրներում ու եկեղեցիներում և իր տպավորություններն ամփոփել 1848 թ. հրատարակված «Грузия и Армения» եռահատոր տեղագրության էջերում, որի երկրորդ հատորն ամբողջությամբ նվիրված է «հայաստանյան» ուղևորությանը: Էջմիածնից գալով Երևան՝ Մուրավյովը առիթ է ունեցել տեսնելու նաև Ս. Աննիա առաքյալի դամբարանն ու կից եկեղեցին, որոնց մասին հաղորդում է հետևյալը. «Երևանում ես գտա քրիստոնեական ժամանակաշրջանի մի գանձ, որի մասին նույնիսկ հայերից շատերը չգիտեին:

պատուհաններով (մանրամասն տե՛ս **Ֆ. Բաբայան, Ա. Ժամկոչյան,** Ուրվագծեր հին Երևանի պատմության և հնագիտության, Երևան, 2015, էջ 30–31, 34, 38–39):

[12] Անապատները հոգևոր կենտրոններ էին, որոնք վանքերից առավելապես տարբերվում էին իրենց կանոնադրությամբ (կենցաղավարում, սոցիալական վիճակ և այլն): Հատկապես արանց անապատները կառուցվում էին բնակությունից հեռու, մեկուսացված վայրերում (բայց ոչ պարտադիր), ուր ճգնում էին աշխարհիկ կյանքից հրաժարված խստակյաց կրոնավորները: Անապատականությունը մեզանում ձևավորվել է դեռևս մինչ քրիստոնեության ընդունման ժամանակաշրջանում և գոյատևել մինչև ԺԷ–ԺԸ. դդ. (տե՛ս **Հուսիկ արք. Տեր-Մովսիսյան,** Անապատականներ եւ վանականութիւն, Երկերի ժողովածու, հրատ. պատրաստեց՝ **Եզնիկ արք. Պետրոսյանը,** Ս. Էջմիածին, 2009, էջ 243–344 (վերահրատարակություն), **Մ. Հասրաթյան,** Սյունիքի XVII–XVIII դարերի ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1973, էջ 9–16):

Այն գտնվում էր քաղաքի ծայրամասում, մեկուսացած մի եկեղեցի, որը կոչվում էր Ջորավար, այսինքն՝ հրաշագործ սուրբ: Եկեղեցու ներսից աստիճաններն իջնում են դեպի ստորգետնյա հարկաբաժին, ինչպես Ս. Հռիփսիմե և Ս. Գայանե վանքերում է, որտեղ Սուրբ Անանիա առաքյալի դամբարանն է՝ մեկը յոթանասուն առաքյալներից, որին Տերը հրամայեց մկրտել Սավուղին՝ նրա ընտրյալ «անոթին»: Թե ինչ ճանապարհով կարող էին Սուրբ Անանիայի մասունքները հասնել Երևան, ես չկարողացա հաստատապես ճշտել, սակայն, այդ նույն եկեղեցու հոգևորականներն ինձ ասացին, որ մասունքները նվիրել են Ս. Գրիգոր Լուսավորչին: Տրամաբանական կլինի կարծել, որ ավելի ուշ սրբի նշխարներից մաս է հատկացվել (ինչպես ուղել՝ կալվածք, ստացվածք) որևէ հայ կաթողիկոսի կամ թագավորի»[13]: Ճանապարհորդի տեղեկություններն ուշագրավ են ոչ միայն այս եկեղեցական համալիրի ԺԹ. դարի առաջին կեսի պատմության ուսումնասիրման համար, այլև հետաքրքիր են նրանով, որ 1840-ականներին եկեղեցին արդեն իսկ հայտնի էր «Ջորավոր» անվամբ (թեպետ Մուրավյովը «Ջորավար» է նշում), այսինքն՝ 1830-ականներից մարաղացիների[14] ծխական եկեղեցի դարձած Ս. Աստվածածինն, ըստ էության, հենց նրանց կողմից էլ անվանակոչվել է «Ջորավոր»՝ տեւական ժամանակ այստեղ պահված «Ջորավոր» ձեռագիր Ավետարանի անունից (ներկայումս՝ ՄՄ ձեռ. Հ՞ 4060):

Անապատական կյանքն այստեղ վերագարթոնք է ապրել ԺԷ. դարի 20-ական թվականներից, երբ Մովսես Տաթևացի վարդապետը (հետագայում՝ կաթողիկոս Մովսես Գ. Տաթևացի — 1629—1633), կարին ուղևորվելու մտադրությամբ, Տաթևի Հարանց կամ Սյունյաց Մեծ անապատից եկել է Արարատյան երկիր, հանդիպել Երևանի կառավարիչ Ամիրգունա (Ամիրջան) խանին, ապա վերջինիս ու երևանցիների ցանկությամբ մնացել Երևանում և Ս. Անանիա առաքյալի ամայի վանքում վերստին անապատ հիմնել: Այս մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում պատմագիր Առաքել Դավրիժեցին, որոնց դեռ կանդրադառնանք:

Հիշյալ ժամանակներից Ս. Անանիայի վանքը, տևական դադարից հետո, կրկին վերածվել է նշանավոր ուսումնական ու գրչության կենտրոնի, բայց այս անգամ այն գործել է Մովսես Տաթևացու հիմնած անապատի կազմում, որտեղ շուրջ հարյուր միայնակյաց միաբաններ էին հավաքվել: Ներկայացված ձեռագրերի մեծ մասը հենց հիշյալ ժամանակաշրջանի ծնունդ են:

Վանք-անապատի գոյատևման բնականոն ընթացքը շարունակ խոչընդոտել են նվաճողական նկրտումներ ունեցող ցեղերի տեւական ասպատակությունները, ինչպես նաև բնական աղետները: 1635—1636 թթ. թուրք-պարսկական բախումներից հետո նորովի վերաշինված անապատը հողին է հավասարվել 1679 թ. մեծ երկրաշարժից: Ավերակների են վերածվել ոչ միայն բուն Երևանի, այլև հարակից բնակավայրերի հուշարձաններն ու կոթողները: Աղետից անմասն չմնացած Ս. Անանիա առաքյալի անապատի տեղում խոջա Փանոսի մեկենասությամբ 1693 թ. կառուցվել է ներկայումս կանգուն Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցին: Վերջինիս պատմության ու վիմագրերին է նվիրված աշխատության վերջին մասը, ուր ամբողջացվել են եկեղեցու պատմությունը լուսաբանող

---

[13] **А. Муравьев,** Грузия и Армения, часть II, С. П. Б., 1848, с. 108 (թարգմանությունը մերն է — *Ա. Հ.*).

[14] Ուրմիա լճի ավազանում գտնվող Մարաղա քաղաքից 1820-ականների վերջերին գաղթած հայերը բնակություն են հաստատել նաև Երևանում՝ Ս. Անանիա առաքյալի անապատին կից թաղամասում, որից հետո Երևանի վարչության ժամանակավոր անդամի պաշտոնը զբաղեցրած ապագա կաթողիկոս Ներսես Աշտարակեցու նախաձեռնությամբ Ս. Աստվածածինը դարձել է նրանց ծխական եկեղեցին:

արխիվային վավերագրերը, ինչպես նաև վիմագրերն ու եկեղեցական առարկաների արձանագրությունները, ընդհանուրը՝ 94 արձանագրություն: Ժամանակագրորեն վաղագույն արձանագրություններն ուղեկցվում են վիմագրագիտության բնագավառում հրատարակությունների համար ներկայումս ընդունելի բաղադրիչներով՝ գրչանկար[15], լուսանկար, վերծանությունները՝ անհրաժեշտ պայմանական նշաններով, կից նախորդ հրատարակությունների մատենագիտությամբ և համապատասխան ծանոթագրություններով:

Այսպիսով, մեր ներկա աշխատության հիմքում Երևանի Ս. Աննանիա առաքյալի անապատի և նրա տեղում կառուցված Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու պատմության աղբյուրագիտական քննությունն է: Այս հոգևոր կենտրոնի մասին առկա գրականությունը հիմնականում Երևանի պատմությանը նվիրված աշխատություններում է: Միայն վերջերս, մի քանի փոքրածավալ ուսումնասիրություն ու մագիստրոսական թեզ է նվիրվել ինչպես Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու պատմությանը, այնպես էլ մեծանուն հայրապետ Մովսես Գ. Տաթևացու կյանքին ու գործունեությանը[16]: Ուսումնասիրողները հիմնականում վկայակոչել են եկեղեցու որոշ վիմագրեր ու անապատում գրված ձեռագրերի հատվածական հիշատակարաններ: Նկատառելով այս հանգամանքը՝ տեղին համարեցինք ամբողջացնել վանք-անապատի ողջ գրավոր ժառանգությունը:

Ի դեպ, մի վանքի ձեռագրական ու վիմագրական ժառանգությունն ամփոփող աշխատությունները մեզանում սակավ են: Կարո Ղաֆադարյանը ժամանակին նախաձեռնեց հուշարձանների պատմությունն առանձին մատենաշարով հրատարակելու գործը, որի արդյունքում ծնունդ առան միջնադարյան Հայաստանի նշանավոր վանքերի՝ Հովհաննավանքի (1948 թ.), Սանահինի (1957 թ.) ու Հաղբատի (1963 թ.) պատմությանը, ճարտարապետական կառույցներին ու վիմագրությանը նվիրված մենագրությունները: Նշված աշխատություններում, սակայն, այդ վանքերն իբրև գրչության կենտրոններ ներկայացնելու փորձ չի արվել: Փոխարենը վերջերս, Խոր Վիրապի վանքին նվիրված մեր ուսումնասիրության էջերում ամփոփվեց տեղի ձեռագրական ու վիմագրական ժառանգությունը[17]: Նմանօրինակ աշխատություն է նաև պատմաբան Կարեն Մաթևոսյանի՝ վերջերս հրատարակած գիրքը՝ նվիրված Նորավանքի վիմագրերին ու ձեռագրերի հիշատակարաններին[18]: Այս շարքը համալրող աշխատություններից մեկն էլ ներկա ուսումնասիրությունն է, որտեղ մեկտեղվել են մի կողմից Ս. Աննանիա առաքյալի վանք-անապատում գրված ձեռագրերը, մյուս կողմից՝ նրա տեղում կառուցված Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու վիմագրերն ու եկեղեցական առարկաների արձանագրությունները:

Մեր այս աշխատանքին նախորդել է Արարատյան հայրապետական թեմի

[15] Արձանագրությունների գրչանկարները մերն են — Ա. Հ.:

[16] — **Կարապետ եպս. Ամատունի,** Մովսէս Գ. Տաթեւացի կաթողիկոս Էջմիածնի, Վենետիկ, Ս. Ղազար, 1992:

— **Բ. Ավետիսյան, Մամբրե քհն. Քեսաբյան,** Պատմություն Ս. Ջորավոր եկեղեցու, Երևան, 1994:

— **Շ. Դավթյան,** Մովսես Գ. Տաթևացի. Ամենայն Հայոց կաթողիկոս, Երևան, 2001:

— Տաթևացուց մինչև Տաթևացի, աշխատասիրությամբ **Աշոտ դպիր Արևշատյանի,** Երևան, 2002:

— **Ա. Հարությունյան,** Երևանը և շրջակայքը, Երևան, 2012, էջ 114–115:

— **Հովհաննես սրկ. Մանուկյան (Հրանտ քհն.),** Երևանի Սուրբ Անանիա առաքյալի անապատը, մագիստրոսական թեզ, Ս. Էջմիածին, 2014:

[17] **Ա. Հարությունյան,** Խոր Վիրապ. պատմությունը, ձեռագրական և վիմագրական ժառանգությունը, Երևան, 2017:

[18] **Կ. Մաթևոսյան,** Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները, Երևան, 2017:

առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արք. Կճոյանի օրհնությամբ և Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Գրիգոր քհն. Գրիգորյանի նախաձեռնությամբ կյանքի կոչված «Ջորավոր Ավետարանը» պատկերագիրք-ուսումնասիրությունը (հեղինակակակից՝ Արփինե Սիմոնյան)՝ նվիրված ՄՄ Հայր 4060 Ավետարանին (Թեռևս Կիլիկիա, ԺԳ. դար), որն ըստ կազմողի հիշատակարանի (ԺԵ. դար)՝ հայտնի է եղել նաև իր զորությամբ. «Ժամանակ ինչ ժամահար եղէ եւ տեսի զօրութիւն սուրբ Աւետարանիս, որ բազմաց ականատես իսկ են եղեալ բժշկութիւն սորա, որ կոչի Վիշապակենց Աւետարան»[19]: երկար տարիներ եկեղեցում հանգրվանելու պատճառով «Վիշապակենց» Ավետարանն իր անունով է օժտել այն և ժողովրդի մեջ ընդհանրացվել է հուշարձանին տրված Ջորավոր Ս. Աստվածածին կամ Ս. Ջորավոր անվանաձևը:

Եկեղեցական համալիրի ձեռագրական ու վիմագրական ժառանգության համակողմանի ուսումնասիրությունը ևս իրականացնում ենք Տ. Գրիգոր քհն. Գրիգորյանի նախաձեռնությամբ՝ իբրև շարունակություն նախորդ աշխատության: Նպատակը մեկն է՝ ամբողջացնել և ընթերցողին առավել հասանելի դարձնել եկեղեցու պատմության մասին վկայող էջերն ու դրանք հարստացնել աղբյուրագիտական նորահայտ տեղեկություններով ու վերլուծություններով:

Մինչ բուն շարադրանքին անցնելը՝ հարկ ենք համարում մեր խորին երախտագիտությունը հայտնել Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արք. Կճոյանին՝ գրքի ստեղծման առթիվ իր բերած օրհնության, ինչպես նաև Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Գրիգոր քհն. Գրիգորյանին՝ պատրաստակամության ու աջակցության համար:

Խորին շնորհակալություն ենք հայտնում գրքի խմբագիրներին՝ Մաշտոցյան Մատենադարանի գլխավոր ավանդապահ, պատմ. գիտ. դոկտոր Գևորգ Տեր-Վարդանյանին և վիմագրագետ, պատմ. գիտ. թեկնածու Գագիկ Սարգսյանին՝ աշխատության վերաբերյալ արված շահեկան առաջարկների համար, ինչպես նաև մեզ բազմաթիվ լուսանկարներ տրամադրած Հրայր Բագեհաչերյանին, Մանվել Բաբայանին, Գոռ Գրիգորյանին, Մաշտոցյան Մատենադարանի տնօրինությանը՝ ձեռագրերի գրչության և մանրանկարչության համապատասխան էջերի թվային լուսապատճենները տրամադրելու համար, Ձեռագրագիտության բաժնի իմ գործընկերներին, հատկապես՝ Խաչիկ Հարությունյանին, Արմինե Մելքոնյանին, Լիլիթ Հովսեփյանին, Արփինե Սիմոնյանին, սրբագրման համար՝ Հասմիկ Իրիցյանին, իսկ արվեստաբան Աշխեն Ենոքյանին՝ մասնագիտական հարցերում աջակցելու համար:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում նաև մեծարգո պարոն Ալեքսանդր Աբրահամյանին, որի մեկենասությամբ կյանքի կոչվեց սույն ուսումնասիրության հրատարակությունը:

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վիմագրագետ, պատմական գիտ. թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության
և ազգագրության ինստիտուտ,
«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին
ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ
էլ. փոստ՝ *ars.vimagraget@gmail.com*

[19] **Ա. Հարությունյան, Ա. Սիմոնյան,** Ջորավոր Ավետարանը, Երևան, 2016, էջ 9 (աշխարհաբարը՝ «որոշ ժամանակ իբրև կոչնակ եղա և տեսա սուրբ Ավետարանի զորությունը, որ բազում ականատեսներ են եղել սրա բժշկությանը, որ կոչվում է «Վիշապակենց» Ավետարան»: Նույն տեղում, էջ 31):

Ս. ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՐՔԸ ԵՎ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ



Ա 9028

«Եւ դարձեալ առաքիւնն առ աշակերտսն ասէ. Երանի աչաց, որ տեսանիցեն զոր տեսանէիդ. Ասեմ ձեզ, զի բազում մարգարէք եւ թագաւորք կամեցան տեսանել, զոր դուք տեսանէք, եւ ոչ տեսին. եւ լսել, զոր լսէիդ, եւ ոչ լուան» .

Ղուկ. ժ. 23–24

Ս. Անանիա առաքյալը Հիսուս Քրիստոսի վարդապետության հետևորդ 72 աշակերտներից մեկն էր, որը Պետրոս առաքյալի կողմից ձեռնադրվել էր Դամասկոսի եպիսկոպոս: Սուրբ Գրքում քանիցս նրան է վերագրվում մոլորված Սավուղին (կամ՝ Սողոսին) Դամասկոսում հոգու և մարմնի կուրությունից բժշկելու և իբրև Պողոս մկրտելու առաքելությունը: Երուսաղեմում հավաքված հրեաներին այդ մասին պատմել է անձամբ Պողոս առաքյալը. «Անանիա ումն այր երկիւղած ընտ օրինացն, վկայեալ յամենայն բնակչաց, որ ի Դամասկոս հրեայքն էին, եկն եկաց առ իս եւ ասէ. Սաւո՛ւղ եղբայր, ի վեր հայեաց: Եւ ես նոյնժամայն ի վեր հայեցայ ի նա. եւ նա ասէ ցիս, Աստուած հարցն մերոց յառաջագոյն ընտրեաց զքեզ ճանաչել զկամս նորա, եւ տեսանել զԱրդարն եւ լսել բարբառ ի բերանոյ նորա. Զի եղիցես վկայ նորա առ ամենայն մարդիկ՝ որոց տեսերն եւ լուար: Եւ արդ զի՞ հեղգաս, արի, մկրտեաց եւ լուա՛ զմեղս քո ի կարդալ զանուն նորա» (Գործք. ԻԲ. 12–16)[20]:

Տիրոջ կամքով և Անանիայի ձեռամբ մկրտվել ու բժշկվել է Սավուղը. «Եւ գնաց Անանիա եւ եմուտ յապարանսն, եւ եդեալ ի վերայ նորա ձեռս՝ ասէ, Սաւո՛ւղ եղբայր, ի վեր հայեաց, Տէր առաքեաց զիս, Յիսուս որ երեւեցաւն քեզ ի ճանապարհին յորում գայիրն, որպէս զի տեսցես եւ լցցիս Հոգւով Սրբով: Եւ վաղվաղակի անկան յաչաց նորա իբրև կեղևանք. եւ տես եւ յարեաւ մկրտեցաւ: Եւ առեալ կերակուր՝ զօրացաւ. եւ եղեւ ի Դամասկոս ընդ աշակերտսն աւուրս ինչ» (Գործք. Թ. 17–19): Բժշկվելուց հետո նախկին Սավուղը սկսում է Տիրոջ խոսքը տարածել ժողովրդի մեջ, ինչից բոլորը զարմանք էին ապրում. «Եւ վաղվաղակի ի ժողովուրդսն քարոզեաց զՅիսուս, թէ սա է Որդին Աստուծոյ: Զարմացեալ էին ամենեքեան, որ լսէին...» (Գործք. Թ. 20–21): Սուրբ Գրքում բավականին հետաքրքիր է ներկայացված նաև Աստծու և Սավուղի երկխոսությունը, ինչն արտահայտված է երկնային տեսիլքի միջոցով, որը երևացել է Սավուղին. «...ի ճանապարհի տեսի, արքայ, յերկնից առաւել քան զլուսաւորութիւն արեգական ծագեալ զինև լոյս, եւ զնոքօք որ ընդ իսն երթային: Եւ յամենեցուն մեր անկանելն յերկիր, լուայ ձայն, որ ասէր ցիս Հեբրայեցւոց բարբառովն. Սաւուղ, Սաւուղ, զի՞ հալածես զիս. խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել: Եւ ես ասեմ. Ո՞ ես, Տէր. եւ Տէր ասէ. Ես եմ Յիսուս, զոր դուն հալածես: Այլ արի եւ կաց ի վերայ ոտից քոց, զի վասն այսորիկ երեւեցայ քեզ առնուլ զքեզ ի ձեռն պաշտօնեայ եւ վկայ որոց տեսերդ զիս, եւ որոց երեւեցայց քեզ. Փրկել զքեզ ի ժողովրդենէդ եւ ի հեթանոսաց, յորս ես առաքեցից զքեզ. Բանալ զաչս նոցա, դարձուցանել ի խաւարէ ի լոյս, եւ յիշխանութենէ Սատանայի՝ յԱստուած. առնուլ նոցա զթողութիւն մեղաց, եւ վիճակ ընդ սուրբս հաւատովքն, որ յիս» (Գործք. ԻՋ. 13–18):

Սրբոց վարք-վկայաբանություններում Ս. Անանիայի նահատակությունը պատճառաբանված է իբրև հրեաներից ու հեթանոսներից ստացած տևական հալածանքների

[20] Այս մասին տե՛ս նաև **Дж. Холл,** Словарь сюжетов и символов в искусстве, перевод с английского **А. Майкапара,** М., 1996, с. 414, հմմտ. **Ֆ. Մելթիխանյան,** Աստվածաշնչի և հայոց սուրբ անվանց բառարան, Երևան, 2001, էջ 410–411:

արդյունք, որը տեղի է ունեցել Փրկչական 70 թ.: Տիրոջ պատգամին հավատարիմ՝ Ս. Անանիայի նշխարներն աշակերտներն ամփոփել են Դամասկոսի Հուդայի ապարանքում, որտեղ հետագայում եկեղեցի է կառուցվել: Ներկայումս այն գտնվում է քաղաքի Բաբ Շարքի թաղամասում և համարվում է աշխարհի հնագույն եկեղեցիներից մեկը, որը կառուցվել է քրիստոնեության ընդունման սկզբնական շրջանում կամ, միգուցե, ավելի վաղ: Ենթադրվում է, որ այստեղ է եղել Ս. Անանիայի տունը, որտեղ էլ նա մկրտել ու անվանակոչել է Պողոսին: Կոպտատաշ քարերով կառուցված և երկու փոքր սենյակից բաղկացած եկեղեցին, որը հարուստ է զանազան սրբապատկերներով, գտնվում է 5 մ խորության վրա և համարվում է քաղաքի ամենաուշագրավ ստորգետնյա մատուռը (նկ. 43ա, բ): 1921 թ. տարածքում իրականացվել են հնագիտական պեղումներ, որոնց արդյունքում հայտնաբերվել են Ե—Զ. դդ. թվագրվող բյուզանդական եկեղեցու մնացորդներ. այս հանգամանքը մեկ անգամ ևս փաստում է Ս. Անանիա եկեղեցու՝ վաղքրիստոնեական ծագում ունենալու հանգամանքը[21]:

Լենկ-Թեմուրի՝ Հայոց ՊԾ. (1401) թվականին իրականացրած ավերածությունների մասին խոսելիս՝ Ռշտունյաց Ս. Հակոբ վանքի առաջնորդ Փիր մականվամբ Ստեփանոս վարդապետի աշակերտ Սիմեոն Ռշտունեցին նշում է, որ, ի թիվս պատճառած մեծ վնասների ու կոտորածների, բռնակալ ամիրան ներխուժում է նաև Հալեպ ու Դամասկոս, թալանում, հրի ու սրի մատնում տեղի ժողովրդին, այրում Դամասկոսը, իսկ. «...զմեծ մզքիթն քակել երետ, յորում էր գերեզմանն Անանիայ առաքելոյն: Եւ զինչ մնիրա (աշտարակ, մինարեթ — Ա. Հ.) եւ մզկիթ կայր Բ. (2) քաղաքին, զամէն քանդել էրետ եւ քակել»[22]:

Իր ուղեգրության էջերում Դամասկոսի եկեղեցու վերաբերյալ ուշագրավ տեղեկություն է հաղորդում նաև ԺԷ. դարի մատենագիր Սիմեոն Լեհացին: Այցելությունը Դամասկոս նա այսպես է նկարագրում. «Եւ մտեալ ի Շամ, որ է Դամասկոս, տեսաք շէն եւ բարեկի, մրգաւէտ եւ պտղատու. եւ էր նա մեծ քան զԸՍտամպօլ. կային մէջիթք մեծամեծք եւ բարձր մինարայք, մեծածախ բաղանիք եւ բազմայարկ խաներ... օր մի գնացաք ի Եաշիլ մէջիթն, որ էր մեծ եւ լայնանիստ եւ զարմանաշէն. եւ ասին թէ սա եկեղեցի էր եւ այժմ անօրէնք խլել են, մէջիթ շինել: Եւ կայր յաջ կողմն աղբիւր մի մեծ, որ ասին թէ աստ մկրտեցաւ Պաւղոս առաքեալն Անանիայէ. եւ այն մէջիթն չթողուն քրիստոնեայ մտանել»[23]: Հիշյալ նկարագրություններից դատելով՝ երբեմնի եկեղեցին, փաստորեն, հետագայում վերածվել է մզկիթի, իսկ վերջին վկայության համաձայն՝ այստեղ արգելված է եղել քրիստոնյաների մուտքը:

Ավելի ուշ, Ս. Անանիա առաքյալի նշխարներից փոխադրել են նաև Հռոմի Ս. Պողոսի տաճար, որտեղ պարբերաբար ցուցադրվել է սրբի գլուխը: Նշխարներից մաս է պահվել նաև Բոհեմի Ս. Բրասկետայի եկեղեցում, որին Հռոմի Կառլոս Չորրորդ (1346—1378) կայսրը նվիրել է նաև սրբի՝ ոսկով ու արծաթով հարդարված գլուխը: Հայ մատենագրությունը (Գրիգոր Դարանաղցի, Առաքել Դավրիժեցի և այլք)

[21] http://www.syriaphotoguide.com/home/damascus-church-saint-hananiya

[22] ՄՄ ձեռ. Հմր 5707, 1ա, տե՛ս նաև Դիւան հայոց պատմութեան (այսուհետ՝ ԴՀՊ), գիրք Ժ., Մանր մատենագիրք. ԺԵ—ԺԹ. դդ., հրատ. **Գիւտ աւ. քհնյ. Աղանեանց**, Թիֆլիս, 1912, էջ 16:

[23] **Սիմէոն դպրի Լեհացւոյ** Ուղեգրութիւն. տարեգրութիւն եւ յիշատակարանք, ուսումնասիրեց եւ հրատարակեց **Հ. Ներսէս վրդ. Ակինեան**, Վիեննա, 1936, էջ 312 (այսուհետ՝ Սիմէոն Լեհացի):

հավաստի տեղեկություններ է ավանդում այն մասին, որ սրբի նշխարներից ամփոփել են նաև Հայաստանում, ինչի մասին է վկայում Երևան քաղաքի՝ ժամանակին այգիների մեջ ծվարած Ս. Անանիա առաքյալի մատուռ-դամբարանը:

Պետք է նշել, որ Սուրբ Գրքից բացի, Ս. Անանիայի վարքը բովանդակող պատումներ են պահպանվել նաև հայսմավուրքներում, ինչպես նաև «Վիճակատար վարք և վկայաբանություն սրբոց» ժողովածուում և այլ վարքաբանական ու աստվածաբանական աշխատություններում: Նկատառելով սույն ուսումնասիրության մեջ այդօրինակ պատումների գոնե հատվածական վերարտադրության անհրաժեշտությունը՝ ստորև մեջբերում ենք նշված երկու աշխատություններում ընդգրկված պատումները նախ գրաբար[24], ապա՝ աշխարհաբար տարբերակներով.

Ա. ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ Ս. ԱՆԱՆԻԱՅ ԱՌԱՔԵԼՈՅՆ

(Հռոմ. ԻԳ. (23) եւ Հոկտեմբերի երկու)

Առաքեալն Սուրբ Անանիա, մի էր ՀԲ. (72) աշակերտացն Քրիստոսի եւ ձեռնադրեցաւ ի Պետրոսէ եպիսկոպոս Դամասկոսի: Եւ թէ որպէս երևեցաւ սմա Տէր ի տեսլեանն եւ ետ մկրտել զՊօղոս ի Գործս առաքելոցն գրեալ է: Եւ էր սա յոյժ հեզ եւ հանդարտ եւ առնէր նշանս բազում եւ աքանչելիս եւ անուամբն Քրիստոսի փարատէր զցաւս ի մարդկանէ եւ չանասնոց եւ այլ մեծամեծ նշանս առնէր ի Դամասկոս եւ Յելևթերոյպօլիս: Եւ կալեալ զնա կռապաշտիցն՝ կացուցից առաջի Լիկիանեայ դատաւորին: Եւ ասէ ցնա դատաւորն. «Ո՛վ այր դու, տեսանեմ զքեզ սքանչելատեսիլ իմաստուն եւ հանճարեղ: Արդ, եթէ լուիցես դու ինձ, բազում բարութեանց հանդիպիս, մատիր եւ զոհեա՛ չաստուածոցն եւ մի՛ կորուսաներ զանձդ քո չարշարանօք»: Պատասխանի ետ Սուրբն Անանիա եւ ասաց. «Կռոց ես ո՛չ զոհեմ, եւ խուլ եւ համր բագնեաց երկիր ո՛չ պագանեմ, որ բնակարան են դիւաց: Այլ երկիր պագանեմ Յիսուսի Քրիստոսի՝ Աստուծոյն իմոյ ճշմարտի, որ եղեւ մեզ լոյս գիտութեան, զոր եւ տեսաք աչօք: Նաեւ ի մոլորութենէ կռոցն ազատեաց զմեզ: Եւ այլ բազում բանիւք յանդիմանեաց եւ անարգեաց զպաշտամունս նոցա»: Վասն որոյ բարկացեալ դատաւորն ետ չոր արջառաջւօք տանջել զսուրբն: Եւ ետ այնորիկ ետ կախել զնա ի փայտէ եւ քերել զամենայն ոսկերս նորա երկաթի քերչօք: Եւ յետ այնորիկ հանին զնա արտաքոյ քաղաքին եւ քարկոծ արարին, եւ նա այնպէս կատարեցաւ ի Քրիստոս, ի Հոռի ԻԳ. (23): Եւ երթեալ բարեկամաց եւ ծանօթից սորա առին զսուրբ մարմինն եւ տարան թաղեցին ի հայրենի ժառանգութիւնն իւր մեծաւ պատուով, յորմէ բազում նշանք լինին ի փառս Քրիստոսի՝ Աստուծոյ մերոյ[25]:

Ս. ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(աշխարհաբար տարբերակ)

Ս. Անանիա առաքյալը Քրիստոսի 72 աշակերտներից մեկն էր, որը Պետրոսի կողմից ձեռնադրվեց Դամասկոսի եպիսկոպոս: Թե ինչպես Տերը երևաց նրան տեսիլքում և պատվիրեց մկրտել Պողոսին, գրված է «Գործք առաքելոց»-ում: Նա շատ հեզ ու հանդարտ էր, բազում հրաշքներ ու

[24] Գրաբար բնագրում առկա համառոտագրված բառերը վերականգնել ենք առանց պայմանական նշանների օգտագործման, կետադրել՝ փորձելով հարազատ մնալ հայերենի կետադրության արդի կանոններին, միատառ *և*-ը փոխարինել ենք *եւ*-ով — *Ա. Հ.*:

[25] Գիրք, որ կոչի Այսմաւուրք, որ պարունակէ յինքեան զճառս վարուց սրբոց..., Կ. Պոլիս, 1730, տպ. Գրիգոր դպիր Մարսըւանեցի, էջ ՃԱ.:

սքանչելիքներ էր գործում և Քրիստոսի անվամբ փարատում էր մարդկանց ու անասունների ցավերը, մեծամեծ հրաշքներ էր գործում Դամասկոսում և Հելևթերուպոլսում (Թարգմանվում է՝ ազատ քաղաք)։ Եվ բռնելով նրան կռապաշտները՝ կանգնեցրին Լիկիանոս (Ղուկիանոս) դատավորի առջև։ Եվ դատավորն ասում է նրան. «Ո՛վ դու այր, տեսնում եմ, որ դու սքանչելատեսիլ և հանճարեղ իմաստուն ես։ Արդ, եթե լսես ինձ, բազում բարիքների կհանդիպես, մոտեցի՛ր և զոհ մատուցի՛ր չաստվածներին և չարչարանքներով անձդ կորստյան մի մատնիր»։ Պատասխանում է Սուրբ Անանիան և ասում. «Կուռքերին ես զոհ չեմ մատուցի, և խուլ ու համր բագիններին չեմ երկրպագի, որոնք բնակարան են դևերի, այլ կերկրպագեմ Հիսուս Քրիստոս իմ Ճշմարիտ Աստծուն, Որը մեզ համար եղավ դիտությյան լույս, Որին մեր իսկ աչքով տեսանք։ Նաև կուռքերի մոլորությունից մեզ ազատեց։ Այսպես բազում խոսքերով հանդիմանեց և անարգեց նրանց պաշտամունքը»։ Այդ պատճառով դատավորը բարկացավ և հրամայեց արջառի չորացրած ջիլերով տանջել սրբին, ապա կախել փայտից և երկաթե քերիչով քերել նրա ոսկորները։ Դրանից հետո նրան քաղաքից դուրս հանեցին և քարկոծեցին։ Եվ այսպես նահատակվեց նա հանուն Քրիստոսի, Հոռի 23-ին։ Բարեկամներն ու ծանոթները գնացին և սրբի մարմինը մեծ պատվով թաղեցին իր հայրենի կալվածքում, որտեղ բազում հրաշքներ են լինում ի փառս Քրիստոսի՝ մեր Աստծու։

Բ. ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ՄԱՆԱՆԻԱՅ ԱՌԱՔԵԼՈՅ

Անուանին յաշակերտս եւ երեսելին ի մէջ դասուց ընտրելոց Սուրբ առաքեալն Անանիաս՝ մի էր յեօթանասուն եւ երկու աշակերտացն Քրիստոսի, բայց միանգամայն աշակերտ ասի եւ սուրբ առաքելոցն Պետրոսի եւ Անդրէի՝ իբրև գործակից նոցա ի բազում իրս, մինչև ձեռնադրիլ նմա ի վիմէն հաւատոյ եպիսկոպոս Դամասկոսի, որ կարծի լինել երկիր ծննդեան նորա։ Եւ էր Անանիա փառացի մարմնով, այլ յոյժ հեզ եւ հանդարտ սրտիւ, լի հոգւով Աստուծոյ, առատ ի բանս եւ զուարթ-ի գործս։

Իսկ կատարեալ գովութիւն նորա բովանդակի ի Գործս առաքելոց, ի պատմել անդ Սրբոյն Ղուկայ, եթէ զիարդ երևեցաւ նմա Տէր եւ ընտանի բանիւ հրաման ետ երթալ գտանել զՍօղոս՝ զայն ինչ եկեալն ի Դամասկոս եւ մկրտել զանօթն ընտրութեան, այն, որ ի տեսլեան զնորուն, իսկ Անանիայի զկերպարանս տեսեալ՝ սպասէր գալստեան նորա, ի բժշկել զինքն ի կուրութենէ հոգւոյ եւ մարմնոյ, եւ թէ որպէս անվեհեր խնդրեաց եւ ընկալաւ Անանիա ի Տեառնէ որդիական համարձակութեամբ զլուծումն տարակուսանաց իւրոց, ըստ որում խիթալի էր ամենեցուն անուն Սօղոսի, եւ ապա տիրաբար չոքաւ քարոզեաց նմա եւ դարձոյց զՍօղոսն ի Պօղոս, քանզի ձեռն եդեալ լուսաւորեաց զխաւարեալ աչս նորա եւ մկրտեաց զնա եւ զօրացոյց լինել քարոզ Ճշմարտութեան, մինչև զի վարդապետին հեթանոսաց աստուածապարգև վարժապետ ճանաչի մեծն Անանիա եւ ըստ նմին ամենայն արդեանց վաստակոց նորա հաղորդ։

Սորին վասն եւ Պօղոս ինքնին յատենի հազարապետին յանդիման ամենայն հրէից յերուսաղեմէ պարծանօք պատմէր զդարձ իւր ի ձեռն Անանիայի, ասելով. «Անանիա ոմն այր երկիւղած ըստ օրինաց, վկայեալ յամենայն բնակչաց, որ ի Դամասկոս հրէայքն էին, եկն եկաց առ իս եւ ասէ. Սաւո՛ղ եղբայր, ի վեր հայեաց։ Եւ ես նոյնժամայն ի վեր հայեցայ ի նա (այս է, բացան կուրացեալ աչք իմ, եւ տեսի զնա) եւ նա ասէ ցիս. Աստուած հարցն մերոց յառաջագոյն

ընտրեաց զքեզ՝ ճանաչել զկամս նորա եւ տեսանել զարդարն, եւ լսել բարբառ ի բերանոյ նորա, զի եղիցիս վկայ նորա առ ամենայն մարդիկ, որոց տեսերն եւ լուար: եւ արդ, զի՞ հեղգաս, արի մկրտեաց եւ լուա՛ զմեղս քո ի կարդալ զանուն նորա»: Յայս վայր ի սուրբ գրոց, իսկ վկայաբանք աւանդեն զորս զկնի՝ այսպէս:

Արդ, Սուրբ առաքեալն Անանիա թէպէտև զաթոռ իւր ունէր ի Դամասկոս, ուր կային աշակերտք եւ հաւատացեալք ոչ սակաւ, բայց սաէպ քարոզէր զԱւետարանն եւ ի շրջակայ տեղիս երկիրն ասորւոց եւ պաղեստինացւոց՝ առնելով նշանս եւ արուեստս անուամբն Քրիստոսի՝ հալածանօք հանդերձ յերեսաց հրէից եւ հեթանոսաց զամս բազումս: Եւ եղեւ ի շրջիլ նորա քարոզութեամբ յԵլեւթերուպօլիս (որ Թարգմանի ազատ քաղաք) եւ ի շէնս նորա, կալան զնա կռապաշտք բնակեալք յաւանն Բեթագաւրայ՝ յարեւմտից Յորդանանու, որ եւ ըստ ոմանց Բեթալահիմ՝ միով մղոնաւ հեռի յԵլեւթերուպօլսոյ չիջանելն ի գագայ եւ կացուցին առաջի դատաւորի տեղւոյն, որ կոչիւր Լիկիանոս կամ Ղուկիանոս, այր թշնամի յոյժ անուանն Քրիստոսի եւ պնդագոյն ջատագով չաստուածոցն, զորս կայսերքն պաշտէին: Սա առաջինն քաղցրութեամբ խօսել սկսաւ ընդ Սուրբ առաքելոյն Անանիայ եւ ասէ. «Ո՛վ այր դու, տեսանեմ զքեզ աքանչելատեսիլ, իմաստուն եւ հանճարեղ: Արդ, եթէ լուիցես ինձ, բազում բարութեանց հանդիպիս դու, հապա մատիր եւ զոհեա՛ աստուածոցն եւ մի՛ կորուսաներ զանձն քո չարչարանօք»: Պատասխանի ետ Սուրբն Անանիա եւ ասէ. «Կռոց ես ո՛չ զոհեմ, եւ խուլ եւ համր բագնաց երկիր ո՛չ պագանեմ, որ բնակարան են դիւաց, այլ երկիր պագանեմ Յիսուսի Քրիստոսի՝ Տեառն իմոյ եւ Աստուծոյ ճշմարտի, որ եղեւ մեզ լոյս գիտութեան, զոր եւ աչօք իսկ մերովք տեսաք, զի նա եկն մարմնով յաշխարհ եւ ազատեաց զմեզ ի մոլորութենէ կռոցն, վասն որոյ եւ ես պատրաստ եմ ի տանջանս եւ ի մահ, քան թողուլ զճշմարտութիւն եւ մոլորիլ զհետ խաբէութեան»:

Բարկացաւ դատաւորն եւ ասէ. «Կարծեմ թէ ի մեծութիւն եւ ի զօրութիւն մարմնոյդ յուսացեալ իշխես ոգորիլ ընդ տանջանաց, որով եւ իմաստութիւն քո յանմտութիւն բերի»: Ապա ասէ առ դահիճն. «Մերկացուցէ՛ք զդա եւ հարէ՛ք չարաչար»: Իսկ առաքեալն ամբարձեալ զաչս եւ զձեռս յերկինս, ասէր. «Տէր Յիսուս Քրիստոս Աստուած զօրութեանց, մի երբէք ի վարմս իւր թակարդեսցէ զիս թշնամին, այլ արժանի եղէց եւ ես չարչարիլ վասն քո եւ զարդարիլ պսակաւ քով, համադասեալ ընդ ընտրեալ աշակերտս քո կենօք եւ մահու»:

Յայնմ վայրի դահիճքն անողորմ հարկանէին զթիկունս սրբոյն չոր արջառաջլօք եւ քարոզն աղաղակէր. «Հնազանդ լե՛ր դատաւորին եւ զոհեա՛ դից հզօրաց»: Իսկ սուրբն ոչինչ տայր պատասխանի եւ ոչ համարէր ինչ զցաւս մարմնոյն առ սէրն Քրիստոսի: Դարձեալ սկսաւ դատաւորն ողոք բանիւք հրապուրել զնա. այլ կշտամբեալ ի սրբոյն վասն լրբութեանն՝ ետ կախել զնա զփայտէ եւ քերել զմարմինն երկաթի քերչօք մինչև յոսկերս, եւ ջահիւք խանձողել զվէրսն:

Մինչդեռ յայն տանջանս էր երանելին, ասէ ցնա դատաւորն. «Մինչև յերբ ոչ հնազանդիս ինձ եւ չառնուս յանձն մեծարել զանմահ դիս՝ զորս ինքնակալն պաշտէ»: Պատասխանի ետ Անանիա. «Ձի՛ ստիպես զիս ի բերան անգամ առնուլ զսնոտիս եւ զմեռելոտիս եւ զգարշելիս, որ են ձեռագործք մարդկան փայտեղէնք եւ քարեղէնք եւ պղնձիք եւ որպե՞ս ոչ առնուս ի միտ զանմտութիւն բանաւորաց, որք զանբանս եւ զանշունչս աստուածականաւ անուամբ պատուեն եւ զարարուածս իւրեանց արարիչս կարդան եւ յուսան ի նոսա»:

Յայնժամ զամօթի հարեալ դատաւորին ետ հանել զնա արտաքոյ քաղաքին եւ քարկոծ առնել, եւ սուրբ առաքեալն ասէր ի ժամ կատարմանն. «Ո՛վ Թագաւոր թագաւորաց եւ Տէր տէրանց, ընկալ քեզ ի պատարագ ընդունելի զզոհ անձին իմոյ ի փառս անուանդ քում սրբոյ», եւ այնպէս աւանդեաց զոգին: Իսկ զմարմին սրբոյն ծածկեալ ընդ քարամբք ի բացի՝ եկին եւ բարձին աշակերտք եւ ծանօթք նորա եւ տարեալ թաղեցին ի հայրենի ժառանգութեան նորա ի Դամասկոս, յամի Տեառն իբր 70:

Տուն Սուրբ առաքելոյն Անանիայի ի Դամասկոս յիշատակի եւ ի զանազան մատենագրաց յետին դարուց, որք ասեն, թէ եկեղեցի շինեցաւ այն յանուն Փրկչին եւ առաքելոյ նորա Անանիայի, այլ զկնի այլազգիք արարին զայն իւրեանց մզկիթ: Իսկ պատուական նշխարք նորա, որպէս ասի, եդան զառաջինն ի Դամասկոս՝ յապարանս Յուդայ, ուր ագաւ Պօղոս եւ անդ եւս շինեցաւ տաճար գեղեցիկ. այլ յետ ժամանակաց փոխադրեցան ի Հռոմ, ուր գլուխ սրբոյն ցուցեալ լինէր երբեմն ի տաճար Սրբոյն Պօղոսի եւ այլ նշխարք ինչ յեկեղեցւոջ սրբուհւոյն Բրաքսետայ, բայց կարողս չորրորդ կայսրն, որ եւ արքայ Բոյեմիոյ, խնդրեաց եւ էառ ի Հռոմայ զգլուխ Սրբոյն Անանեայ եւ ոսկւով եւ արծաթով զարդարեալ՝ ետ յընծայ եկեղեցւոյն Բրակայ[26]:

Ս. ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(աշխարհաբար տարբերակ)

Աշակերտների մեջ անվանի և ընտրյալների մեջ երևելի Սուրբ Անանիա առաքյալը Քրիստոսի 72 աշակերտներից մեկն էր, որը համարվում էր նաև սուրբ առաքյալներ Պետրոսի և Անդրեասի աշակերտը, շատ հարցերում՝ նրանց գործակիցը, մինչև որ հավատի Վեմի (Պետրոսի) կողմից ձեռնադրվեց Դամասկոսի եպիսկոպոս: Ենթադրվում է, որ հենց Դամասկոսն է եղել նրա ծննդավայրը:

Անանիան մարմնով փառահեղ էր, սրտով՝ հեզ ու հանդարտ, լի՝ Աստծու հոգով, խոսքով՝ հարուստ, գործերում՝ զվարթ: «Գործք առաքելոց»-ում տրվում է նրա կատարյալ գովքը, որտեղ Սուրբ Ղուկասը պատմում է, թե ինչպես Տերը երևաց նրան և պատվիրեց՝ գնալ և գտնել Դամասկոս եկած Սողոսին և մկրտել ընտրյալ այդ «անօթին», որը, տեսնելով Անանիայի կերպարը, սպասում էր նրա գալստյանը, որպեսզի սա բժշկի իրեն հոգու և մարմնի կուրությունից: Եվ ինչ անվեհերությամբ և որդիական համարձակությամբ Անանիան իր տարակուսանքների փարատման համար խնդրեց Տիրոջը և պատասխան ստացավ Նրանից, որովհետև խորշելի էր բոլորի համար Սողոսի անունը: Եվ, այնուհետև, տիրաբար գնաց ու քարոզեց նրան և Սուրբ Սողոսին դարձրեց Պողոս, քանզի ձեռքը դնելով նրա վրա՝ լուսավորեց նրա խավարած աչքերը, մկրտեց ու զորացրեց նրան՝ դարձնելով ճշմարտության քարոզիչ: Եվ մեծն Անանիան նրա մեջ տեսավ հեթանոսների վարդապետին, աստվածապարգև վարժապետին, որի գործերին ու վաստակին հետագայում հաղորդ եղավ:

Այս ամենի մասին Պողոսն ինքը հազարապետի առյանում, Երուսաղեմի բոլոր հրեաների առջև պատմել է պարծանքով Անանիայի ձեռքով իր դարձի մասին՝ ասելով. «Անանիա անունով մի մարդ՝ երկյուղած ըստ օրենքի և ճանաչված Դամասկոսում բնակվող բոլոր հրեաների կողմից, եկավ, կանգնեց ինձ մոտ և ասաց.

[26] Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, որք կան ի հին Տօնացուցի եկեղեցւոյ Հայաստանեայց, հ. Է., ի **Հ. Մկրտիչ վրդ. Ազգերեան**, Վենետիկ, 1813, էջ 51–56:

«Սավու՛ղ, եղբայր, վե՛ր նայիր» և ես իսկույն վե՛ր նրան նայեցի. այդ պահին բացվեցին իմ կուրացած աչքերը, և ես տեսա նրան: Եվ Նա ասաց ինձ. «Մեր հայրերի Աստվածը սկզբից ընտրեց քեզ, որ ճանաչես Նրա կամքը և տեսնես Արդարին, լսես Նրա ձայնը, որպեսզի մարդկանց մոտ Նրա վկան լինես այն ամենի համար, որ տեսար և լսեցիր: Արդ, ինչու՞ ես հապաղում, վե՛ր կաց, մկրտվի՛ր և լվա՛ քո մեղքերը՝ Նրա անունը կանչելով»» (Գործք. ԻԲ. 12–16):

Մինչև այստեղ Սուրբ Գրքից էր, իսկ վկայաբանները նրա մասին ավանդում են այսպես. «Արդ, թեպետ Սուրբ Անանիա առաքյալի աթոռը Դամասկոսում էր, որտեղ կային ոչ սակավ աշակերտներ և հավատացյալներ, սակայն նա հաճախ Ավետարան էր քարոզում ասորիների և պաղեստինցիների երկրի շրջակայքում՝ Քրիստոսի անունից կատարելով հրաշքներ ու բարի գործեր՝ հրեաների և հեթանոսների կողմից տարիներ շարունակ կրելով բազում հալածանքներ: Եվ այնպես եղավ, որ նա քարոզչությամբ շրջում էր Հելևթերուպոլսում և շրջակայքում: Եվ կռապաշտները նրան բռնեցին, որոնք բնակվում էին Բեթագավր ավանում՝ Հորդանանից դեպի արևմուտք, որը, ըստ ոմանց, կոչվում է Բեթալուիմ, որը մի մղոն հեռու է Հելևթերուպոլսից, Գազայից դեպի վար: Եվ կանգնեցրին նրան դատավորի առջև, որին կոչում էին Լիկիանոս կամ Ղուկիանոս, որը Քրիստոսին թշնամի, չաստվածներին սաստիկ ջատագով մի այր էր, որոնց պաշտում էին նաև կայսրերը:

Առաջինը սա սկսեց քաղցրությամբ խոսել Սուրբ առաքյալ Անանիայի հետ և ասաց. «Ո՛վ դու այր, տեսնում եմ քեզ որպես մի աքանչելատեսիլ իմաստուն և հանճարեղ այր. արդ, եթե լսես ինձ, բազում բարիքների կարժանանաս դու. այժմ մոտեցի՛ր և զոհ մատուցի՛ր աստվածներին, որպեսզի չարաչար տանջանքներով անձդ կորստյան չմատնվի»: Պատասխան տվեց նրան Սուրբ Անանիան և ասաց. «Կուռքերին ես զոհ չեմ մատուցի, և խուլ ու համր բագիններին չեմ երկրպագի, որոնք բնակարան են դևերի, այլ կերկրպագեմ Հիսուս Քրիստոսին՝ իմ Տիրոջը և ճշմարիտ Աստծուն, Որը մեզ համար եղավ գիտության լույս և Որին մեր իսկ աչքերով տեսանք, քանզի Նա մարմնով եկավ աշխարհ և մեզ ազատեց կուռքերի մոլորությունից, ինչի համար և պատրաստ եմ տանջանքների ու մահվան, քան թողնեմ ճշմարտությունը և մոլորվեմ խաբեությամբ»: Դատավորը բարկացավ և ասաց. «Կարծում եմ, թե մարմնիդ մեծության և զորության վրա հույս դնելով՝ աշխատում ես արհամարհել տանջանքները, որով և քո իմաստությունը քեզ անմտության է մղում»: Ապա ասաց դահիճներին. «Մերկացրե՛ք և չարաչար ծեծե՛ք դրան»: Առաքյալն աչքերը և ձեռքերը երկինք բարձրացնելով՝ ասաց. «Տե՛ր Հիսուս Քրիստոս, զորությունների՛ Աստված, թող թշնամին ինձ իր թակարդը չգցի, այլ թող ես էլ արժանի լինեմ հանուն Քեզ չարչարանք կրելու և Քո պսակով զարդարվելու՝ իմ կյանքով և մահով Քո ընտրյալ աշակերտների շարքը դասվելու համար»: Այնժամ գազանաբարո դահիճներն անողորմաբար չոր արջառաջելերով հարվածում էին սրբի թիկունքին, իսկ պաշտոնյաներից մեկն աղաղակում էր. «Հնազանդ եղի՛ր դատավորին և զոհեր մատուցի՛ր հզոր դիցերին»: Սուրբը, սակայն, ոչ մի պատասխան չէր տալիս և ոչինչ էր համարում մարմնական ցավերը Քրիստոսի սիրո դիմաց: Դատավորը շարունակեց բարի խոսքերով հրապուրել նրան, բայց ի վերջո կշտամբեց սրբին անհնազանդության համար և հրամայեց կախել փայտից, քերել մարմինը երկաթե քերիչներով մինչև ոսկորները և ջահերով

խանձել վերքերը: Մինչ այդ տանջանքների մեջ էր երանելին, դատավորը նրան ասաց. «Մինչև ե՞րբ չպիտի հնազանդվես ինձ և հանձն չառնես մեծարել անմահ դիցերին, որոնց պաշտում է ինքնակալը»: Անանիան պատասխանեց. «Ինչու՞ ես ստիպում ինձ, որ պաշտեմ անոտիներին, մեռելոտներին և գարշելիներին, որոնք մարդկանց ձեռքի գործ են՝ կերտված փայտից, քարից եւ պղնձից, և ինչպե՞ս չես հասկանում անմտությունը նրանց, որոնք անբանը և անշունչը աստվածային անվամբ են պատվում և իրենց ստեղծածին արարիչ են համարում՝ ապավինելով նրանց»: Ամոթահար եղավ դատավորը և քաղաքից դուրս հանելով՝ հրամայեց քարկոծել նրան: Եվ վախճանվելու պահին սուրբ առաքյալն ասաց. «Ո՛վ Թագավոր թագավորների, Տե՛ր տերերի, ընդունի՛ր իմ անձը որպես Քեզ պատարագ, որպես ընդունելի զոհ ի փառս Քո սուրբ անվան», և այդպես ավանդեց հոգին:

Սրբի մարմինը, որը ծածկված էր քարերով, նրա աշակերտներն ու ծանոթները վերցրին, տարան թաղեցին Դամասկոսում՝ իր հայրենի կալվածքում, Տիրոջ 70 թվականին:

Սուրբ առաքյալ Անանիայի բնակավայրը, ըստ հին դարերի զանազան մատենագիրների՝ հիշատակվում է Դամասկոսը, որոնք ասում են, թե այնտեղ Փրկչի և Նրա առաքյալ Անանիայի անունով եկեղեցի կառուցվեց, հետո այլազգիներն այն իրենց համար մզկիթ դարձրին: Նրա պատվական նշխարները, ինչպես ասվում է, առաջինը տարան Դամասկոս՝ Հուդայի ապարանքը, որտեղ ժամանակին կենում էր Պողոսը, և այնտեղ ևս գեղեցիկ տաճար կառուցվեց: Որոշ ժամանակ անց նշխարները փոխադրվեցին Հռոմ, որտեղ սրբի գլուխը երբեմն ի ցույց էին դնում Սուրբ Պողոսի տաճարում: Նրա որոշ նշխարներ էլ պահվում են Սրբուհի Բրասկեետայի եկեղեցում: Կառլոս Չորրորդ կայսրը, որը Բոհեմի արքան էր, խնդրեց և վերցրեց Հռոմից Ս. Անանիայի գլուխը, ոսկով և արծաթով զարդարելով՝ նորից ընծայեց Բրասկեետայի եկեղեցուն[27]:

Սուրբ Գրքի և վերը նշված աշխատությունների հիմամբ Ս. Անանիա առաքյալի վարքն ու վկայաբանությունը համառոտ շարադրել է նաև աստվածաբանության խորագիտակ Շնորհք արք. Գալուստյանը՝ Անանիային բնութագրելով իբրև Պողոս առաքյալի մկրտիչը Դամասկոսում: Հարկ ենք համարում ստորև վկայակոչել նաև այդ հատվածը.

Գ. Ս. ԱՆԱՆԻԱ

Սողոս Դամասկոսի ճամբուն վրայ ունեցած փայլակնային տեսիլքէն յետոյ, գրեթէ կուրացած մտած էր քաղաք: Երեք օր ոչ կերաւ, ոչ ալ խմեց, այլ աղօթքով ու խոկումով անցուց: Երրորդ օրն է, որ Աստուած կը թելադրէ Անանիային, որ երթայ եւ պէտք եղածը խօսի անոր: Երբ եւ ինչ պարագաներու տակ քրիստոնեայ եղած է Անանիա, ոչինչ ըսուած է. բնիկ Դամասկոսցի էր թէ Հրէաստանէն գացած, այդ ալ յայտնի չէ. իրականութիւնն այն է, որ Փրկչի համբարձումէն քանի մը տարիներ յետոյ բաւական թիւով քրիստոնեաներ գտնուած են այնտեղ, որ հալածիչ Սողոս պէտք կը զգայ երուսաղէմէն յետոյ իր հալածողական գործունէութիւնը տարածել նաեւ Դամասկոսի մէջ:

Անանիա, գիտնալով հանդերձ, որ Սողոս հալածիչ մըն էր, աստուածային հրահանգին հնազանդելով, գնաց այն տունը, ուր կը մնար Սողոս: Ձեռքերը դրաւ անոր

[27] Տաթեւացուց մինչև Տաթեւացի, աշխատասիրությամբ **Աշոտ դպիր Արևշատյանի**, էջ 4–8 (Խմբագրված — Ա. Հ.):

վրայ եւ ըսաւ. «Սաւո՛ւղ եղբայր, Տէրդ ղրկեց զիս, այն Յիսուսը, որ երեւեցաւ քեզի հոս գալուդ ճամբուն վրայ, որպէսզի տեսողութիւնդ վերստանաս եւ Սուրբ Հոգիով լեզուիս»: Երբ Անանիա ձեռքերը դրաւ Սողոսի գլխին. «անոր աչքերէն կեղեւի պէս բաներ մը թափեցան, եւ իր տեսողութիւնը վերագտաւ ու մկրտուեցաւ» (Գործք. Թ. 15–19):

Այսչափ է մեր գիտցածը Անանիայի մասին Նոր Կտակարանէն: Յայսմաւուրքը սակայն կաւելցնէ, որ իբրեւ քրիստոնեայ ձերբակալուած եւ դատաւորի առջեւ հանուած է, որ ըսաւ իրեն. «Կը տեսնեմ, որ պատկառելի եւ իմաստուն մարդ մը կերեւիս, ուստի չարչարանքով պարապ տեղ կորուստիդ պատճառ մի ըլլար, այլ զոհէ մեր աստուածներուն»: Անանիա կը պատասխանէ. «Ջեմ զոհեր եւ երկրպագութիւն չեմ ըներ ձեր խուլ, համր եւ անզգայ աստուածներուն, այլ կը պաշտեմ Յիսուս Քրիստոսը, իմ ճշմարիտ Աստուածս, որ մեզի գիտութեան լոյս եղաւ, զոր տեսանք մեր աչքերով եւ շօշափեցինք մեր ձեռքերով, եւ որ զմեզ ազատեց կռապաշտութեան մոլորութենէն»: Կենթարկուի սաստիկ չարչարանքներու ի վերջոյ քարկոծումով կը կնքէ իր կեանքը[28]:

* * *

Ս. Անանիա առաքեալի անվանակիր սրբավայրերը մեզանում սակաւ են: Ստեփան Մելիք-Բախշյանն այս անունով վանքեր ու եկեղեցիներ է հիշատակում Արեւմտյան Հայաստանի Վանի, Բիթլիսի նահագներում, Կարսի մարզում և, որ հետաքրքիրն է, նրանցից մեկը դարձյալ գուգահեռ կոչվում է Ս. Ջորավոր[29]:

Վերջինս իր «Հայ վանորայք» հոդվածաշարում հիշատակում է նաև նախորդ դարասկզբի մեր նշանավոր հոգևոր գործիչներից Տրդատ եպս. Պալյանը. «այս վանքը, որ յանուն Անանիա առաքեալոյն կանգնուած էր, մօտիկը կգտնուէր Ամիրդօլի Ս. Յովհաննու վանքին, եւ կըսուէր նաեւ «Ս. Ջօրաւորի վանք», կամ՝ «Ս. Գէորգայ վանք»... այս վանքին մէջ, 1418 թուականին, Մկրտիչ անուն սարկաւագը, որ կկարծուի թէ Մկրտիչ Նախաշէն է, գրած է ձեռագիր Յայսմաւուրք մը...»[30]: Այնուհետ, հեղինակը հատվածաբար վկայակոչում է ձեռագրի գրչության հիշատակարանը. «Գրեցաւ սա ի գաւառն Բաղիշոյ, ի գեաւղս, որ կոչի Պոռ, ընդ հովանեաւ մեծաշնորհ եւ տիեզերահամբաւ սուրբ եւ գերապատիւ առաքելոյն Անանիայի եւ Սուրբ Գէորգայ, ի կաթողիկոսութեան մեր Աթոռոյն տէր Պօղոսի, յամի ՊԿԷ. (1418) [Հայոց] թուականիս...»[31]: Եկեղեցիների անվանումների զուգահեռները, իհարկե, առաջին հայացքից բավական գաղթակղիչ են, սակայն, եթե Երևանի Ս. Անանիայի անապատի եկեղեցին հետագայում «Ջորավոր» անունով է հռչակվել այդտեղ պահվող հրաշագործ ձեռագիր Ավետարանի անունից, նույնը չենք կարող ասել Բաղեշի համանուն վանքի համար, քանի որ մեզ ավելի հավանական է թվում, որ վերջինս, կրելով նաև Ս. Գևորգ զորավարի անունը, սրբի անվանաձևի առաջին բաղադրիչի կրճատման արդյունքում ընդհանրացվել և կոչվել է նաև Ս. Ջորավոր:

---

[28] **Շնորհք արք. Գալուստեան,** Աստուածաշնչական սուրբեր, Երևան, 1997, էջ 212–213:

[29] **Ստ. Մելիք-Բախշյան,** Հայոց պաշտամունքային վայրեր, Երևան, 2009, էջ 19:

[30] **Տրդատ եպս. Պալեան,** Հայ վանորայք, հրատ. պատրաստեց՝ **Կ. Ավետյան,** Ս. Էջմիածին, 2008, էջ 241:

[31] Նույն տեղում, տե՛ս նաև Հայերեն ձեռագրերի ԺԵ. դարի հիշատակարաններ, հ. Ա. (1401–1450 թթ.), կազմեց՝ **Լ. Խաչիկյան,** Երևան, 1955, էջ 215, ՀՄՄ 231 (այսուհետ՝ ԺԵ. դ. հիշ-ք, Ա.):

Ս. ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ս. Անանիայի վարք-վկայաբանության ուսումնասիրությունն առիթ հանդիսացավ անդրադառնալու նաև սրբի պատկերագրությանը հայ մանրանկարներում: Արվեստաբան Աստղիկ Գևորգյանի կազմած «Հայ մանրանկարիչներ. IX–XIX դդ.» (Գահիրէ, 1998) և «Անանուն մանրանկարիչներ. IX–XVII դդ.» (Գահիրէ, 2005) մատենագիտական ժողովածուների օգնությամբ մեզ հաջողվեց գտնել ձեռագրեր, որոնցում սակավ, բայց բավականին լավ պահպանված լուսանցային մանրանկարների միջոցով կարելի է ընդհանուր պատկերացում կազմել այս սրբի պատկերագրության առանձնահատկությունների վերաբերյալ: Քննության համար ընտրված մանրանկարները Մաշտոցյան Մատենադարանի հավաքածուի թվով 7 ձեռագրերից են (ՄՄ ձեռ. Հ՝ր 979, 980, 1502, 1509, 1512, 4547, 6378): Գրչագրերից 3-ը բովանդակությամբ Ճաշոց են (ՄՄ ձեռ. Հ՝ր 979, 980, 6378), 4-ը՝ Հայսմավուրք (ՄՄ ձեռ. Հ՝ր 1502, 1509, 1512, 4547): Ժամանակագրորեն վաղագույնը Հեթում արքայի հայտնի Ճաշոցն է (ՄՄ ձեռ. Հ՝ր 979)՝ գրված 1286 թ., ըստ ամենայնի՝ Սկևռայում, կիլիկյան Հեթում Բ. արքայի պատվերով. «...ի թուականութեանս Հայոց ՉԼԷ. (1286) յանկ ելեալ կատարեցաւ աստուածախաւս մատեանս հրամանաւ աստուածասէր եւ ամէնիմաստ, բարեպաշտ եւ հանճարեղ պարոնին Հեթմոյ, որդւոյ քրիստոսապսակ սուրբ արքային Լեւոնի, որ լի եւ պատարուն իբրև ծաղկազարդ բուրաստան հաւաքեալ ի Հին եւ ի Նոր աւրինաց, ի պետս պայծառութեան տաւնից տէրունականաց...»[32]:

Կիլիկյան մանրանկարչության Սկևռայի դպրոցին բնորոշ գրչագիրը մանրամասն քննել է արվեստագիտության դոկտոր Իրինա Դրամբյանը, որն առանձնացնում է Ճաշոցի նկարազարդմանը մասնակցած չորս վարպետների, որոնցից պայմանականորեն երկրորդ վարպետը հեղինակն է հիմնականում լուսանցային մանրանկարների: Ըստ արվեստաբանի՝ Ճաշոցի այդ մանրանկարները. «...մի առանձին ուժով են օժտված. նրա հորինվածքները հավաք են և ունեն կառուցվածքային ամրություն, իսկ կոլորիտը ինտենսիվ է և հագեցած գունահարաբերություններով»[33]: Ձեռագրում մեզ հետաքրքրող մանրանկարը կոչվում է «Պօղոս առաքեալ ընդ Անանիայ Դամասկացի» և ուղղակիորեն կապվում է «Գործք առաքելոց»-ից և Ս. Անանիայի վարքից հայտնի իրադարձությանը, երբ Աստծու հրամանով

---

[32] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի (այսուհետ՝ Մայր ցուցակ ՄՄ), հ. Գ., կազմեց՝ **Օ. Եգանեան,** Երևան, 2007, սյուն 1573:

[33] **Ի. Դրամբյան,** Հեթում Բ. արքայի Ճաշոցը (1286 թ. հայկական նկարազարդ մատյանը), Երևան, 2004, էջ 28: Վերջերս Հեթում արքայի Ճաշոցի նկարազարդումներին տարբեր առիթներով անդրադարձել է նաև արվեստաբան Էմմա Չուգասզյանը (տե՛ս **Է. Չուգասզյան,** Եռադեմ պատկերները Հեթում Բ. արքայի Ճաշոցում, «Վէմ» համահայկական հանդես, 2013, թ. 3, էջ 88–96, նույնի «Քրիստոսի գերեզմանի կնքումը» Հեթում Բ. արքայի Ճաշոցում, ԲԵՀ. Հայագիտություն, 141.1, 2013, էջ 52–56):

և Անանիայի շնորհներով հոգևոր ու մարմնավոր կուրությունից բժշկվեց և իբրև Պողոս մկրտվեց Սավուղը: Մանրանկարի հեղինակը Պողոսի և Անանիայի գլուխները հմտորեն ներառել է ոսկով հագեցած բուսական լուսանցազարդում (նկ. 47): Նրանք պատկերված են հանդիպակաց դիրքով. ձախից Պողոսն է՝ գլխաբաց, մանուշակագույն թիկնոցով փաթաթված, հայացքը դեպի Ս. Անանիան, իսկ վերջինս պատկերված է սպիտակ մազ-մորուքով, գլուխը փաթաթած ծիրանագույն գործվածքով, Պողոսին Աստծու պատգամը հաղորդելիս:

Ժամանակագրորեն հաջորդը ՄՄ Հմր 6378 ձեռագիրն է, որը դարձյալ Ճաշոց է՝ գրված 1477 թ. Արճեշում: Ձեռագրում ծաղկողի մասին ուղղակի հիշատակություն չկա, սակայն դատելով նկարների ոճից՝ Ա. Գևորգյանն այն վերագրում է ԺԵ. դարի շնորհաշատ ծաղկող Մինասի վրձնին: Մեծոփավանքի դպրոցում ուսանած Մինասի ընդօրինակած ձեռագրերից 18-ը պահվում են Մաշտոցյան Մատենադարանում, որոնք ստեղծվել են 1433–1483 թթ. միջակայքում: Բացի Արճեշից՝ Մինաս ծաղկողը գործել է նաև Վանի, Ոստանի, Լիմ և Կաուց անապատների գրչատներում և այլ վայրերում[34]: ՄՄ Հմր 6378 Ճաշոցի բովանդակության համապատասխան միավորին կից լուսանցային մանրանկարում Ս. Անանիա առաքյալը պատկերված է կլոր, կանաչ բազմոցին կամ բարձին նստած դիրքով, ունի լուսապսակ, սև մազ-մորուք, հագին՝ կապույտ պարեգոտ, մանուշակագույն շուրջառ, նարնջագույն ոտնամաններ (նկ. 49): Վասպուրականյան մանրանկարչության ավանդույթներն իրենց դրսևորումն են գտել առաքյալի կերպարում, որոնք ակնառու են հատկապես մանրանկարի գրաֆիկական մշակումներում: Ծաղկողը փորձել է լուսաստվերային մշակումների շնորհիվ ծավալ հաղորդել պատկերին, որոնք մարմնի մերկ հատվածներում արտահայտված են թղթի բնական երանգից մինչև բաց նարնջագույնի և բաց դարչնագույնի նրբերանգային անցումներով: Նույն սկզբունքով են մշակված նաև հագուստի ծալազարդերը՝ շեշտված կապույտի և վարդագույնի՝ մուգից բաց երանգային անցումներով:

Քննության ենթակա մյուս 5 ձեռագրերը թվագրվում են ԺԷ–ԺՀ. դարերով և գրվել են Էջմիածնի, Նորագավիթի, Կ. Պոլսի, Մարաշի (Գերմանիկ), Նոր Ջուղայի գրչակենտրոններում: Դառնանք նաև այդ ձեռագրերին.

ՄՄ Հմր 1502 Հայսմավուրքը գրվել է 1651 թ., Կ. Պոլսի Ս. Սարգիս եկեղեցում: Գրիչը Քրիստոսատուր է, ծաղկողը՝ Մարկոսը, իսկ ստացողներն են Խաչատուր, Հովհաննես և Մարտիրոս երեցները: Ճոխ մանրանկարչությամբ հարդարված ձեռագրի լուսանցային մանրանկարներից մեկում պատկերված է Ս. Անանիա առաքյալի նահատակության տեսարանը, այն է՝ փայտին ամրացված պարանից գլխիվայր և մերկ վիճակում կախված է արյունոտ մարմնով, բայց միաժամանակ լուսապսակակիր սուրբը, որի մարմինը երկու կողմից թիակաձև գործիքներով քերում են զույգ դահիճները (նկ. 46): Վերջիններս կարմիր և վարդագույն կարճ պարեգոտներով են, նրանց դեմքերը հետագայում փորձել են ջնջել, ըստ այդմ՝ որոշակի չեն:

Համաձայն հիշատակարանային տվյալների՝ Մարկոսը հայտնի է եղել իբրև պատկերահան, ինչի մասին են վկայում ձեռագիր մատյաններից հայտնի՝ նրա վրձնած դիմապատկերները[35]: Թեև քննվող ման-

[34] **Ա. Գէորգեան,** Հայ մանրանկարիչներ. մատենագիտութիւն (IX–XIX դդ.), Գահիրէ, 1998, էջ 408, Հմր 240/ԺԴ.:

[35] Նույնի Մարկոս Պատկերահան (ԺԷ դ., Կ. Պոլիս), «Էջմիածին», 2000, Է., էջ 79: Վերջերս Մարկոս Պատկերահանի նկարազարդումներին հիշյալ ձեռագրի օրինակով անդրադարձել է արվեստաբան

բանկարում անվնաս է մնացել միայն Ս. Անանիայի դիմապատկերը, սակայն դա էլ բավական է գնահատելու ծաղկողի վարպետությունն իբրև հմուտ պատկերահան: Նկատելի են Ս. Անանիայի դիմագծերի ծավալային մշակումները՝ արտահայտված լույսի և ստվերի համաչափ ու ճշգրիտ տեղաբաշխմամբ, որոնցում զգացվում է նկարչի ձգտումը կերպարին անհատականություն հաղորդելու գործում:

Ս. Անանիայի վարքից արդեն գիտենք, որ Լիկիանոս (Ղուկիանոս) դատավորի հորդորներին չհետևելուց հետո դատավորը հրամայել է. «...կախել զնա (Անանիային — Ա. Հ.) ի փայտէ եւ քերել զամենայն ոսկերս նորա երկաթի քերչօք», այսինքն՝ մանրանկարը պատկերում է ճիշտ այն տեսարանը, որի մասին կարդում ենք սրբի վարք-վկայաբանություններում: Չնայած նրան, որ Ա. Գևորգյանը նշված՝ ձեռագիրը վկայակոչելիս այս մանրանկարը չի հիշատակում՝ այդուհանդերձ նա տեղեկություններ է հաղորդում Մարկոս ծաղկողի արվեստի վերաբերյալ, ըստ այդմ՝ Մարկոսը ժէ. դարի երկրորդ կեսին Կ. Պոլսում ընդօրինակված բազմաթիվ ձեռագրերի նկարազարդումների հեղինակ է, որոնք պահվում են ինչպես Մաշտոցյան Մատենադարանի (3 ձեռ.), այնպես էլ Էջմիածնի (Հմր 224), Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի (Հմր 1552, 1970, 2275, 2276, 2289) և Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանի (Հմր 319) ձեռագրական հավաքածուներում[36]: ՄՄ Հմր 1502 ձեռագրում Մարկոս ծաղկողն իր անունը հիշատակել է մի քանի անգամ, այն էլ մանրանկարներում պատկերված կերպարների ձեռքերի գալարաթղթերին, ինչպես օրինակ՝ Անտոն Հգնավորի ձեռքի գալարաթղթին կարդում ենք. «Զմեղաւոր Մարկոս յիշե[ցէք]»[37]:

ՄՄ Հմր 1509 Հայսմավուրքը գրվել է 1685 թ., Փիլիպպոս գրչի ձեռքով, մահտեսի Ջաքարիա զալֆայի և եղիսաբեթի պատվերով: Այս գրչագիրն աչքի է ընկնում հատկապես լուսանցներում առկա սրբապատկերներով; որոնց ստեղծողի անունը, ցավոք, հայտնի չէ[38]: Ս. Անանիա առաքյալի վկայաբանությունը բովանդակող էջի լուսանցում ծաղկողը պատկերել է սրբին՝ հասակով մեկ կանգնած, սև մազ-մորուքով, գլխին՝ լուսապսակ, հագին ունի կապտականաչավուն պարեգոտ, վարդագույն շուրջառ, կարմիր ոտնամաններ: Սրբի աջ ձեռքը պարզած է, իսկ ձախով պահել է Սուրբ Գիրքը (նկ. 48): Դատելով պատկերի գեղարվեստական մշակումներից՝ ենթադրելի է, որ այն նկարազարդվել է Վասպուրականի տարածքում: Այդ մասին են վկայում կերպարի առանձին հատվածների հարթապատկերային մշակումները, գույների անխառն կիրառումը, որոնք, առավելապես բնորոշ են նշված տարածաշրջանի մանրանկարչությանը[39]:

Ժամանակագրորեն հաջորդ ձեռագիրը 1687–1689 թթ. Էջմիածնում և

Շուշանիկ Համբարյանը (տե՛ս **Շ. Համբարյան**, Մարկոս Պատկերահանը և Մատենադարանի Հմր 1502 Հայսմավուրքի պատկերազարդումները, «ՎԱՄ» համահայկական հանդես, 2018, թ. 1, էջ 149–165):

[36] **Ա. Գէորգեան**, Հայ մանրանկարիչներ, էջ 376, Հմր 219/Ա:

[37] Մայր ցուցակ ՄՄ, Ե., կազմեց՝ **Օ. Եգանեան**, Երևան, 2009, այուն 30, տե՛ս նաև **T. Greenwood**, An Unpublished Seventeenth-Century Armenian Psalter a Costantinopolitan Scriptorium and Marcos Patkerahan, "Revue des études Arméniennes", 29, 2003–2004, pp. 323–382.

[38] **Ա. Գէորգեան**, Անանուն հայ մանրանկարիչներ. մատենագիտութիւն (IX–XVII դդ.), Գահիրէ, 2005, էջ 550, Հմր 763:

[39] Վասպուրականի մանրանկարչական արվեստը և տեղի նշանավոր ծաղկողների գործունեությունը համակողմանի քննել է անվանի արվեստաբան Հրաչյա Հակոբյանը (տե՛ս **Հ. Հակոբյան**, Վասպուրականի մանրանկարչությունը, գիրք Ա–Բ., Երևան, 1976, 1982):

Նորագավիթում գրված ՄՄ Հմր 1512 Հայսմավուրքն է, որի գրիչը նշանավոր Գրիգոր Երևանցին է, ծաղկողը՝ Մովսես երեցը, ստացողը՝ երեմիա քահանան: Ս. Աննանիա առաքյալը դարձյալ պատկերված է իր վկայաբանությանը կից լուսանցում՝ հասակով մեկ կանգնած, սև մազ-մորուքով, գլխին՝ լուսապսակ, հագին՝ կարմրավուն պարեգոտ, կապտականաչավուն շուրջառ: Աջ ձեռքը դարձյալ պարզած է, իսկ ձախով բռնել է եպիսկոպոսական գավազանը (նկ. 51): Ա. Գևորգյանը կարծում է, որ Մովսեսից բացի ձեռագրի նկարազարդմանը մասնակցել է ևս մեկը, որը վարպետորեն արված լուսանցային մանրանկարների դիմապատկերների հեղինակն է[40]: Պատահական չէ, որ ձեռագրում Ս. Աննանիայի կերպարն առանձնանում է դիմապատկերի մանրակրկիտ մշակումներով, ուր ծաղկողը հատուկ ուշադրություն է դարձրել գլխի կառուցվածքին և մնացյալ մանրամասներին: Գունային հետաքրքիր լուծումներով են առանձնանում հագուստի ծալազարդերը՝ մշակված կապույտի և կանաչի, դեղինի և նարնջագույնի համադրությունից ստացված երանգներով, որը գեղանկարչական բնույթ է հաղորդում մանրանկարին:

Ժէ. դարով է թվագրվում ՄՄ Հմր 980 ճաշոցը, որը ենթադրաբար գրվել է Նոր Ջուղայում, Հարություն գրչի ձեռքով և խոջա Սկանդարի պատվերով: Ձեռագրի նկարազարդումն իրականացրել է Աստվածատուր ծաղկողը, որն ամբողջ գիրքը հարստացրել է տերունական և լուսանցային ճոխ մանրանկարներով: Ս. Աննանիան այս ձեռագրում ևս պատկերված է իր վկայաբանության դիմաց, այն տարբերությամբ, որ ծաղկողը սրբին պատկերել է կիսով չափ, լուսապսակով, սև մազ-մորուքով, հագին ունի կարմիր պարեգոտ և մանուշակագույն շուրջառ (նկ. 50): Ինչ վերաբերում է Աստվածատուր ծաղկողին, ապա նա իր անվան հիշատակությունը թողել է տերունական մանրանկարներից երկուսի վրա՝ սպիտակ երկաթագրով. «Ջնկարող սորին Աստուածատուրս յիշեցէք ի Քրիստոս, եւ դուք՛՛»[41]:

Այս լուսանցային մանրանկարում նկատելի է ծաղկողի վարպետությունը պատկերին ծավալ հաղորդելու և՛ միջավայրից համարեն առանձնացնելու գործում: Ուշագրավ են հագուստի ծալազարդերը շեշտող լույսի ու ստվերի նուրբ անցումները, առաքյալի մտասույզ ու խոհուն դիմապատկերը, որոնք խոսում են ծաղկողի նկարչական բացառիկ զգացողության մասին:

ՄՄ Հմր 4547 Հայսմավուրքը Սարգիս գրիչն ընդօրինակել է 1709 թ., Մարաշում (Գերմանիկ): Բավական հատակ ու կանոնիկ լուսանցային մանրանկարներից մեկը պատկերում է հասակով մեկ կանգնած Ս. Աննանիային՝ հայացքը սևեռած դեպի գրվածքը: Ի տարբերություն մյուս մանրանկարների՝ ծաղկողը, որի անունը, ցավոք, հայտնի չէ, սրբին պատկերել է հասակավոր, սպիտակ մազ-մորուքով: Ուշագրավ է, որ Ս. Աննանիան այստեղ պատկերված է հոգևորականի կերպարով, որը քրիստոնեական արվեստում հազվադեպ է հանդիպում, իսկ հայկական մանրանկարչության մեջ մեզ այլ օրինակներ դեռևս հայտնի չեն: Առաքյալի կապույտ պարեգոտը զարդարում է եպիսկոպոսական խաչակիր եմիփորոնը, որի մի մասը ծածկված է մանուշակագույն շուրջառի ծալազարդերով, իսկ եպիսկոպոսական գավազանն ու Սուրբ Գիրքն ամբողջացնում են նրա կերպարն իբրև հոգևորական (նկ. 52): Համաձայն սուրբգրային և վարքաբանական աղբյուրների՝ այսօրինակ պատկերագրությունը թերևս պետք է պայմանավորել Ս. Աննանիայի՝

[40] Նույնի Հայ մանրանկարիչներ, էջ 448–449, Հմր 262/Բ.:

[41] Մայր ցուցակ ՄՄ, Գ., սյուն 1586:

Պետրոս առաքյալի ձեռամբ Դամասկոսում եպիսկոպոս օծվելու հանգամանքով:

Մաշտոցյան Մատենադարանի նշված ձեռագրերի լուսանցային մանրանկարների հիմամբ ներկայացված այս համառոտ քննությունը թույլ է տալիս փաստել, որ Քրիստոսի 72 աշակերտներից Ս. Անանիայի պատկերագրությունը հայ մանրանկարներում առավելապես արտահայտված է սրբին՝ առաքյալին բնորոշ կերպարով պատկերելու եղանակով: Ինչպես վերը նշվեց, Ս. Անանիային երբեմն պատկերել են նաև եպիսկոպոսի կերպարով, որն ակնհայտորեն պայմանավորված է նրա վարքից հայտնի իրադարձության հետ: Գրեթե բոլոր օրինակներում Ս. Անանիան պատկերված է աջը պարզած, որն օրհնության խորհուրդն ունի: Ծաղկողները սրբին ներկայացնում են իր իսկ վկայաբանությանը զուգահեռ՝ էջի լուսանցային դաշտում՝ հիմնականում հասակով մեկ կանգնած դիրքում: Մանրանկարների գունային ներկապնակը բավական հարուստ է. օգտագործված են վարդագույնը, կարմիրն ու կապույտն իրենց բազմաթիվ երանգներով և այլ գունային համադրություններով:

Ս. ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼԻ ԱՆԱՊԱՏԸ ԺԹ–ԺԸ. ԴԱՐԵՐՈՒՄ



Ս. Անանիա առաքյալի դամբարանի մուտքը և տապանաքարը

«Կայր ի վաղեմի ժամանակաց վայելուչ մատուռ մի շինեալ ի վերայ դամբարանի սրբոյ առաքելոյն Անանիայի, որ էր ի հիւսիսային կողմանէ բաղաքին Երևանայ, ի մէջ այգեստանացն...»:

Առաքել Դաւրիժեցի,
(Գիրք պատմութեանց, գլ. ԻԴ.)

Վին Երևանի հոգևոր և մշակութային կենտրոնների շարքում իր պատկառելի տեղն ունի երբեմնի հռչակավոր Ս. Անանիա առաքյալի վանք-անապատը՝ հայտնի իր գրչության և ուսումնական դպրոցներով: Այս սրբավայրի գոյության վաղագույն շրջանի մասին ստույգ տեղեկություններ մեզ չեն հասել. հայտնի է միայն, որ այն հիմնադրվել է Հիսուս Քրիստոսի 72 աշակերտներից Ս. Անանիայի հինավուրց մատուռ-դամբարանի տեղում, որտեղ մինչ օրս պահպանվել է սրբի ստորգետնյա դամբարանը:

Հետագա դարերի կցկտուր տեղեկություններից հատկանշելի է Ժ–ԺԱ. դդ. սրբակյաց կրոնավոր, ականավոր տոմարագետ Հովհաննես Կոզեռն վարդապետի՝ Ս. Անանիա առաքյալի անապատից ոչ հեռու գտնվող Կոնդ թաղամասի երբեմնի գերեզմանոցում թաղված լինելու մասին վկայությունը (վարդապետի անունից էլ գերեզմանոցը կոչել են «Կոզեռն»): Նրա մասին տեղեկություններ են ավանդել մեր մատենագիրներից շատերը: Այսպես՝ պատմագիր Արիստակես Լաստիվերցին իր Պատմության երկրորդ գլխի սկզբում նկարագրում է Բագրատունյաց Գագիկ Ա. թագավորի (990–1020) գահակալման ժամանակաշրջանը՝ նշելով, որ «...ի սորա ժամանակս պայծառացան կարգք եկեղեցւոյ, եւ լուսաւորեցան մանկունք ուխտի սրբութեան. ի սորա աւուրս «Լցան երկիր գիտութեամբ Տեառն՝ իբրև զջուրս բազումս, որ ծածկեն զծովս (Եսայի ԺԱ. 9)» ըստ մարգարէին կանխաձայնութեան»[42]: Այդ նույն «լուսավորչյալ» ժամանակաշրջանում աչքի ընկած հոգևոր ու մշակութային գործիչներից պատմագիրը հիշատակում է նաև Հովհաննես Կոզեռնին[43]. «Եւ էին յայնմ ժամանակի վարդապետք՝ Սարգիս եւ Տիրանուն եւ Յեսնովք, որ կաթողիկոսարանին էին վարդապետք. եւ Սամուէլ, որ Կամրջացն Զորոյ վանացն առաջնորդութեամբ հովուէր. եւ Յովսէփ, որ Հնձուց վանացն էր նախագահ. եւ Ստեփաննոս Տարաւնացին, որ զաշխարհապատում գիրս շարագրեաց սքանչելի յաւրինուածովք, սկսեալ ի մարդն առաջին եւ գայ բովանդակէ զպատմութիւն իւր ի վախճան Գագկայ, վասն որոյ պատմութիւնս է. եւ Յովհաննէս ի նոյն գաւառէ, զոր վերադիր անուամբ Կոզեռն կոչէին, որ զհաւատոյ գիրսն գրեաց...»[44]: Հետագայում հնագույն ժամանակներից մինչև իր ապրած օրերը հայտնի պատմագիրների շարքում Հովհաննես Կոզեռնին հիշատակում է Մխիթար Այրիվանեցին[45], ապա Սամուել Անեցին, որը Հովհաննես Կոզեռնին նախ բնութագրում է իբրև ճարտասան վարդապետ, իսկ Ուռհայի գրավման առթիվ գրում է, որ «խաւարեցաւ

---

[42] Պատմութիւն **Արիստակիսի Լաստիվերցւոյ** վարդապետի վասն անցիցն անցելոց ի յայլասեռն ազգաց, որ շուրջ զմեօք են (այսուհետ՝ Արիստակես Լաստիվերցի), քննական բնագիրը և առաջաբանը՝ **Գ. Տէր-Վարդանեանի,** Մատենագիրք Հայոց (այսուհետ՝ ՄՀ), հ. ԺՉ., ԺԱ. դար, Երևան, 2012, էջ 530:

[43] Հովհաննես Կոզեռն Տարոնեցու կյանքի և գիտական ժառանգության մասին տե՛ս **Հ. Ներսէս վրդ. Ակինեան,** Մատենագրական հետազոտութիւններ, հ. Ա., Վիեննա, 1922, էջ 219–223, **Յ. Քիւրտեան,** Յովհաննէս վարդապետ Կոզեռն, «Հանդէս ամսօրեայ», ՁԱ. տարի, 1967, թ. 1–3, էջ 1–16, **Յ. Քէոսէեան,** Յովհաննէս Կոզեռն Տարօնեցին եւ նրա աստուածաբանական ժառանգութիւնը, ՄՀ, հ. ԺՉ., ԺԱ. դար, էջ 25–32:

[44] **Արիստակես Լաստիվերցի,** էջ 530:

[45] **Մխիթարայ Այրիվանեցւոյ** Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց **Մ. Էմին,** Մոսկվա, 1860, էջ 23:

արեգակն սխրալի եւ եղեւ սով սաստիկ եւ սգացաւ մեծ վարդապետն Կոզեռն Յովհաննէս եւ ասաց զեղծումն կարգաւորաց, եւ զաւեր աշխարհիս յանարժան քահանայից»[46]*: Հովհաննես վարդապետի անունը մեկ անգամ հիշատակված է նաև Սամուել Անեցու ժամանակագրությունը շարունակողների տողերում՝ կապված Մովսես Տաթեւացի կաթողիկոսի՝ 1632 թ. մայիսի 14-ին*[47] *Երևանում վախճանվելու և Կոզեռն վարդապետի շիրմին կից՝ նույնանուն գերեզմանոցում թաղվելու հետ. «Մեռաւ Մօսէս կաթուղիկոսն եւ թաղեցաւ ի Կոզեռն՝ մօտ Կոզեռ վարդապետին, մայիսի ԺԴ. (14)»*[48]*: Կոզեռնի տեսիլներն ու գիտական հայացքներն առավել հետաքրքրել են Մատթեոս Ուռհայեցուն, որն իր ժամանակագրության տարբեր մասերում քանիցս հիշատակում է մեծանուն վարդապետի անունը՝ բնութագրելով «սուրբ հայրապետն Հայոց Յոհաննէս», «վարդապետն Յոհաննէս մեծ» և այլ պատվավոր տիտղոսներով*[49]*:*

Ավելի ուշ, Առաքել Դավրիժեցի պատմագիրը (մոտ 1590–1670) հատակ մատնանշում է Կոզեռն վարդապետի գերեզմանի տեղը՝ Ս. Անանիա առաքյալի անապատին հարող բլրին, որը վարդապետի անունով հենց Կոզեռն է կոչվել[50]*. հետագայում այստեղ մատուռ է կառուցվել ու սրբատեղի դարձել: Նշանավոր վարդապետի հարևանությամբ էր թաղվել նաև ԺՉ–ԺԷ. դդ. նշանավոր փիլիսոփա, մեծ րաբունապետ, Ս. Անանիա առաքյալի անապատի դպրոցում գործած Մելքիսեթ Վժանեցին, ապա նաև՝ բազմարդյուն Մովսես Տաթեւացի կաթողիկոսը: Յավոք, այսօր կորսուած են մատնվել ոչ միայն Կոզեռնի մատուռն ու սուրբ հայրերի շիրիմները, այլև բլրի վրա տարածված ընդարձակ գերեզմանոցի երեք հարյուրից ավելի տապանաքարերը*[51]*: Ուսումնասիրողներից Թ. Հակոբյանը, նկատառելով այն հանգամանքը, որ Հովհաննես Կոզեռնը կյանքի վերջին տարիներին ապրել ու ստեղծագործել է Երևանում*[52]*,*

[46] **Սամուէլ Անեցի** եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն. Ադամից մինչև 1776 թ., աշխ. **Կ. Մաթևոսյանի,** Երևան, 2014, էջ 184:

[47] Ժամանակագիրն, ըստ էության, կրկնել է Առաքել Դավրիժեցուն, որը նույնպես Մովսես Տաթևացու մահվան տարեթիվը 1633-ի փոխարեն նշում է 1632 — *Ա. Հ.*:

[48] Նույն տեղում, էջ 333:

[49] **Մատթէոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, Բ. տպագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 50, 52, 67–74 և այլն:

[50] **Առաքել Դաւրիժեցի,** Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ՝ **Լ. Խանլարյանի,** Երևան, 1990, էջ 258 (այսուհետ՝ Առաքել Դաւրիժեցի):

[51] Երևանի Կոզեռն թաղամասի ներկայումս չպահպանված գերեզմանոցի տապանագրերը 1934 թ. Երևանի քաղաքային խորհրդի հանձնարարությամբ ընդօրինակել է Կարո Ղաֆադարյանը: Հնագետ-վիմագրագետի ավելի քան 300 արձանագրություն պարունակող աշխատությունը 1935 թ. հրատարակության է հանձնվել այն ժամանակվա Պատմության և գրականության ինստիտուտին: Հետագայում Կ. Ղաֆադարյանը այդ առիթով գրում է հետևյալը. «1936 թվականին ինստիտուտը խմբագրական մի հանձնաժողով նշանակեց այդ ժողովածուն քննելու և տպագրության հանձնելու համար: Հանձնաժողովն ամենից առաջ ժողովածուի միջից դուրս հանեց բոլոր անթվական արձանագրությունները, առանց հաշվի առնելու նրանց կարևորություններն ու հնությունը, որից հետո ժողովածուի մեջ մնաց ընդամենը 86 արձանագրություն, որ և այժմ հրատարակում ենք Հմր 108–193 համարների տակ» (**Կ. Ղաֆադարյան,** Երևան, էջ 108–109): Իր գիրքը հրատարակելիս՝ Կ. Ղաֆադարյանը Կոզեռնից ներառել է ևս 12 արձանագրություն, որոնք պատահաբար գտել էր լուսանկարների տեսքով, այդքանով հանդերձ նա Կոզեռնից հրատարակել ու կորստից փրկել է ընդհանուր հաշվով 98 վիմագիր (նույն տեղում, էջ 109):

Կ. Ղաֆադարյանի հաղորդմամբ՝ արձանագրություններն ընդօրինակելու ժամանակ, այսինքն՝ 1934 թ., թեպետ Կոզեռնի մատուռը կանգուն է եղել, սակայն, այնտեղ տապանաքարեր չկային (նույն տեղում, էջ 109):

[52] **Թ. Հակոբյան,** Երևանի պատմությունը. հնագույն ժամանակներից մինչև 1500 թ., Երևան, 1969, էջ 265:

կարծում է, որ հենց նույն Ս. Անանիա առաքյալի եկեղեցում են թաղվել ինչպես Կոզեռն վարդապետը, այնպես էլ Մովսես Տաթևացի կաթողիկոսը[53]*, այսինքն՝ հեղինակը Կոզեռնի մատուռն ու Ս. Անանիա առաքյալի եկեղեցին անտեղի նույնացնում է:*

Ս. Անանիա առաքյալի անապատի վերաբերյալ մատենագրական սկզբնաղբյուրներում պահպանված վաղագույն ստույգ հիշատակությունը, թերևս, ԺԵ. դարասկզբից է: 1409–1410 թթ. այստեղ է գրվել բուն Երևանում ընդօրինակված ժամանակագրորեն հնագույն՝ ՄՄ Հմր 6405 ձեռագիրը[54]*, որը բովանդակում է Գրիգոր Տաթևացու Քարոզգիրքը: Այն ընդօրինակել են մեկից ավելի գրիչներ՝ Գալուստ վրդ. Վաղադնեցի, Թովմա վրդ. Մեծոփեցի, Սիմեոն կրոնավոր, Ոհաննես, որոնք եղել են Գրիգոր Տաթևացու աշակերտները*[55]*: Ի դեպ, գրիչներից Թովմա վարդապետը պատմագիր Մեծոփեցին է, որի կենսագրականը մեզ է հասել Կիրակոս Բանասեր վարդապետի հեղինակությամբ: Այդ նույն կենսագրականում վկայություն կա այն մասին, որ Տաթևից Մեծոփավանք, ապա Արարատյան երկիր ուղևորվելուց հետո Գրիգոր Տաթևացին Երևանում իր մի քանի աշակերտներին, այդ թվում՝ Թովմա Մեծոփեցուն վարդապետական գավազան է շնորհել. «Եւ մեծ վարդապետն Գրիգոր Որոտնեցին, որ իբրև զջահ վառեալ ի մէջ աշխարհի, եւ գաւազան Թումայ ճգնաւորին ի գեղաքաղաքն*

[53] Նույնի, Երևանի պատմությունը (1801–1879 թթ.), Երևան, 1959. էջ 251:

[54] Արտաշես Մաթևոսյանը Երևանի գրչության դպրոցին է վերագրել նաև ՄՄ Հմր 6253 Ավետարանը՝ գրված 1304 թ., Սարգիս քահանա գրչի ձեռքով: Բանն այն է, որ գրչության հիշատակարանում տեղանունը միտումնավոր ջնջած է, սակայն պահպանված եկեղեցիների անունները գիտնականին թույլ են տվել ենթադրել, որ ջնջած անունը պետք է որ Երևանը լինի, քանի որ հիշատակարանում վկայված եկեղեցիներից Ս. Աստվածածինը Կաթողիկեն է, իսկ Ս. Պողոս-Պետրոսը՝ նրանից ոչ հեռու գտնվող եկեղեցին (**Ա. Մաթևոսյան**, Երևանի գրչության կենտրոնները, «Երևանի հոբելյանը» քաղաքի 2750-ամյակի հոբելյանական տարեգրություն, հեղինակ-կազմող՝ **Ա. Խաչիկյան**, Երևան, 1972, էջ 118): Նշենք, որ Մաշտոցյան Մատենադարանի համառոտ ձեռագրացուցակում այն պայմանականորեն վերագրված է Սսին. ըստ էության, հիմք են ընդունել տեղանունից առաջ առկա «մայրաքաղաք» բառը, քանի որ ԺԴ. դարասկզբին Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաքը Սիսն էր (Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ., կազմեցին՝ **Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան**, Երևան, 1970, այուն 280): Մատենադարանի կրկնագրեր լուսանկարող նոր սարքի միջոցով վերջերս մեզ հաջողվեց այդ անորոշությունը պարզել, ըստ այդմ՝ ջնջած տեղանունը Հռոմն է. «Ցամի Չ.-երորդի, Ծ.-երորդի եւ երրորդի (1304) թուականութեան Հայկազնեան տոմարի կատարեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ Սարգսի յոգնամեղի, ի մայրաքաղաքս ի Հռոմ, առ դրան Սրբուհոյ Աստուածածնիս, ընդ հովանեաւ սրբոց առաքելոցս Պետրոսի եւ Պաւղոսի, ի ստոյգ եւ ի լաւ աւրինակէ» (366ա): Ճշտված տեղանունը նշվեց նաև ԺԴ. դարի հիշատակարանների նոր ժողովածուի առաջին հատորում (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԴ. դար, մասն Ա. (1301–1325 թթ.), կազմողներ՝ **Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան**, Երևան, 2018, էջ 83, Հմր 73):

[55] Հայ մանրանկարիչները ձեռագրերում պատկերել են նաև Գրիգոր Տաթևացուն, որոնցից ուշագրավը Կաֆայում՝ 1449 թ. գրված ՄՄ Հմր 1203 Ժողովածուի մանրանկարն է, որտեղ Գրիգոր Տաթևացին պատկերված է իր աշակերտների հետ՝ դասախոսության ժամանակ (նկ. 53) – տե՛ս Հայկական մանրանկարչություն. Դիմանկար, կազմեց՝ **Ա. Գևորգյանը,** Երևան, 1982, նկ. 58, ծնթ.– էջ 214: Այս նույն մանրանկարի ճշգրիտ ընդօրինակությունը պահպանվել է Բաղեշում գրված ԺԷ. դարի մի Քարոզգրքում (ՄՄ ձեռ. Հմր 5821), որի ծաղկողը Սահակ Վանեցին է (նկ. 54) – տե՛ս Հայկական մանրանկարչություն. Դիմանկար, նկ. 128, ծնթ.– էջ 217: Թովմա Մեծոփեցու պատվերով 1435 թ. Մեծոփավանքում գրված ՄՄ Հմր 1380 «Մեկնութիւն ԺԴ. թղթոց Պօղոսի» ձեռագրում անհայտ ծաղկողը պատկերել է նաև Թովմա րաբունապետին՝ Պողոս առաքյալի առջև ծնրադիր, իսկ նկարի ստորին մասում հետևյալ գրությունն է. «Զերջանիկ րաբունապետն զԹումա, յիշեցէք ի Քրիստոս» (նկ. 55) – տե՛ս Հայկական մանրանկարչություն. Դիմանկար, նկ. 55, ծնթ. – էջ 214:

Երևան, եւ կոչէ զնա ի յաստիճան վարդապետութեան երկոտասան իշխանութեան»[56]: Ուսումնասիրողներից Գարեգին Հովսեփյանի կարծիքով նշված իրադարձության ժամանակը պետք է որ Հայոց ՊՇԹ., այսինքն՝ 1410 թվականը լինի. «...որովհետև Տաթևացին Մեծոփեցիներից բաժանուելուց յետոյ՝ միայն 36 օր ապրեց, ութ օր Տաթև հասնելուց յետոյ. նորա մահը հանդիպեց «յաւուր տօնի Նախավկային Ստեփաննոսի մեծի առաքելոյ»»[57]: Ստացվում է, որ 1409—1410 թթ. Թովմաի Երևանում վարդապետական գավազան է ստացել իր ուսուցչապետ Գրիգոր Տաթևացուց, իսկ այդ թվականներին, ինչպես արդեն գիտենք, նա մասնակցել է Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատից մեզ հասած՝ թվագրությամբ վաղագույն ձեռագրի ընդօրինակմանը, հետևաբար, սխալված չենք լինի, եթե վստահորեն ասենք, որ հենց նույն անապատում է տեղի ունեցել հիշյալ ուշագրավ իրադարձությունը[58]: Հայ գրչության կենտրոնների ուսումնասիրության ընթացքում այդ մասին ակնարկում է նաև ձեռագրագետ Արփենիկ Ղազարոսյանը. «Մեծոփավանքից տունդարձի ճանապարհին՝ 1409 թ., Գրիգոր Տաթևացին Երևանի Անանիա առաքյալի անապատում վարդապետական աստիճան է շնորհել քաջբերունիքից իր հետ բերած 10 աշակերտների, որոնց թվում էր նաև Թովմա Մեծոփեցին»[59]:

1410 թ. Թովմա Մեծոփեցին, արդեն Մեծոփավանքում[60] Հովհաննես կրոնավոր և Հակոբ դպիր գրիչների հետ իրականացնում է Քարոզգրքի մեկ այլ ընդօրինակություն (ՄՄ ձեռ. Հ՝ 2065), որի ծավալուն հիշատակարանում ակնարկում է իրենց ուսուցչապետ Գրիգոր Տաթևացու՝ Արարատյան երկրում (Ս. Անանիայի անապատում) առանձնանալու, Մեծոփավանք չվերադառնալու և վարդապետության իրավունք շնորհելու մասին. «Եւ մեք ելեալ գնացուք զկնի նորա՝ հանդերձ վարդապետաւք եւ եպիսկոպոսաւք եւ գրոց աշակերտաւք, եւ հասաք նմա յերկիրն Արայրատեան, լալով, ողբով, արտասուօք եւ աղիողորմ կսկծանօք, եւ ոչ կարացաք դարձուցանել զնա: Եւ անդ ետ մեզ հրաման վարդապետութեան»[61]:

Ժէ. դարի ժամանակագիր Դավիթ Բաղիշեցին, սկզբնաղբյուր ունենալով Թովմա Մեծոփեցու կենսագրականը, թվարկում է Երևանում՝ Գրիգոր Տաթևացուց վարդապետական գավազան ստացած հոգևորականների անունները: Նկարագրելով 1441 թ. հայրապետական աթոռի՝ Սսից Վաղարշապատ տեղափոխման պատմությունն ու Խոր Վիրապի վանքում 32 տարի ճգնակյաց կյանք վարած Կիրակոս Վիրապեցուն կաթողիկոս ընտրելը՝ ժամանակագիրը նշում է նաև նույն թվականին Վաղարշապատում գումարված եկեղեցական ժողովի մասնակից նշանավոր հոգևորականների անունները. «Եւ ի կողմանէ Վասպուրականի Թումա

---

[56] **Թովմա Մեծոփեցի,** Պատմագրություն, աշխատասիրությամբ՝ **Լ. Խաչիկյանի,** Երևան, 1999, էջ 287—288: Հմմտ. Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, կազմեց՝ **Յ. Թօփճեան,** Վիեննա, 1962, էջ 352, ձեռ. 190:

[57] **Գարեգին վրդ. Յովսէփեան,** Թովմա Մեծոփեցու կեանքը (կենսագրական նոր նիւթերով), Վաղարշապատ, 1914, էջ ԺԲ.:

[58] **Ս. Վարդանյան,** Հայաստանի մայրաքաղաքները, Երևան, 1995, էջ 208:

[59] **Ա. Ղազարոսյան,** Հայ գրչության կենտրոնները XV—XVIII դարերում, «Սուրբ Հայաստան» ցուցահանդեսի կատալոգ, Երևան, 2007, էջ 426:

[60] Արտաշես Մաթևոսյանի բնորոշմամբ. «1410 թ. Թովմա վարդապետը վերադառնում է Մեծոփա վանքը (Երևանի Ս. Անանիա անապատից — *Ա. Հ.*), ստանձնում բարձրագույն դպրոցի րաբունապետությունը և այն տանում է Գրիգոր Տաթևացու սահմանած և Գրիգոր Խլաթեցու արդեն սկսած ուղղությամբ» (**Ա. Մաթևոսյան,** Մեծոփավանքի գրչության կենտրոնը (ԺԲ—ԺԵ. դդ.), Ս. Էջմիածին, 1997, էջ 65):

[61] Մայր ցուցակ ՄՄ, Ջ., խմբագրութեամբ՝ **Գ. Տէր-Վարդանեանի,** Երևան, 2012, սյուն 1310:

վարդապետ Քաջբերունեաց Յաղիովտոյ, կացեալ առ ոտս Յոհաննէս վարդապետի Մեծոփայ եւ ժամանակ ինչ առ Սարգիս վարդապետ ի խառաբաստ եւ ընկալաւ գաւազան իշխանութեան ի Գրիգորէ Տաթեւացոյ, ի յԵրեւան քաղաքի հանդերձ ընկերաւք՝ Մկրտիչ, կարապետ, Մկրտիչ միւս Ողբեկենց, Մկրտիչ Հողեցի, Սարգիս եւ այլք»[62]:

Մեծոփավանքի գրչության կենտրոնին նվիրված ուսումնասիրությյան էջերում ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանը Թովմա Մեծոփեցու՝ Գրիգոր Տաթևացուց վարդապետական գավազան ստանալու տարեթիվը համարում է 1409-ը. «Այդ տեղի է ունենում 1409 թ. Երևանի Անանիա առաքյալի անապատում, որը գտնվում էր քաղաքի հյուսիսում՝ այգիների մեջ, Հրազդանի ձախ ափին, Կոզեռն բլուրի ստորոտում (այժմ Թումանյան և Մոսկովյան փողոցների խաչմերուկում, Ջորավոր եկեղեցու տեղում)»[63]: *Ա. Մաթևոսյանը, ըստ էության, հիմք է ընդունել նաև վերոնշյալ ՄՄ Հմր 6405 ձեռագրի վաղագույն՝ 1409 թվակիր հիշատակարանները, քանի որ նշված թվականի նոյեմբեր ամսին՝ Տաթև վերադառնալուց հետո, Գրիգոր Տաթևացին ապրեց միայն հաշված օրեր և վախճանվեց դեկտեմբերի 27-ին*[64]:

Ս. Անանիա առաքյալի անապատի անվան հիշատակմամբ մատենագրական հաջորդ վկայությունը 1450 թվականից է՝ դարձյալ ձեռագրի ստեղծման առնչությամբ, որը թեպետ մեզ չի հասել, սակայն նկարագրված է Մշո Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի և շրջակայքի ձեռագրացուցակի Բ. հատորում (ձեռ. Հմր 20)[65]: *Հովհաննես գրիչը Գանձարանն ընդօրինակել է «ի փոքրիկ անապատիս Երևանայ, ընդ հովանեաւ ամենազօր ս. առաքելոց գերեզմանիս»՝ հայր և որդի Մարգար և Ներսես քահանաների պատվերով:*

Ա. ՄԱՆԱՊԱՏԻ ՎԵՐԱՋԱՐԹՈՆՔԸ ԵՎ Ս. ՄՈՎՍԵՍ Գ. ՏԱԹԵՎԱՑՈՒ ԱՎԱՆԴԸ

Իբրև գրչօջախ՝ Ս. Անանիա առաքյալի անապատը տևական դադարից հետո շարունակել է վերստին գործել և

---

[62] **Դավիթ Բաղիշեցու** ժամանակագրությունը (XVII դ.), «Մանր ժամանակագրություններ (XIII–XVIII դդ.)», հ. Բ., կազմեց՝ **Վ. Հակոբյան,** Երևան, 1956, էջ 353:

[63] **Ա. Մաթևոսյան,** Մեծոփավանքի գրչության կենտրոնը (ԺԲ–ԺԵ. դդ.), էջ 67:

[64] Գրիգոր Տաթևացու մահվան 1409, թե 1410 թվականի ընդունման վերաբերյալ հայագիտության մեջ կան իրարամերժ կարծիքներ (Գ. Հովսեփյան, Ա. Մաթևոսյան, Լ. Խաչիկյան և այլք): Ակադ. Լ. Խաչիկյանը ԺԵ. դարի ձեռագրերի հիշատակարանների ժողովածուի Ա. հատորում հատուկ անդրադարձել է այս խնդրին և տվել համոզիչ բացատրություն, մասնավորապես՝ ճիշտ համարելով 1409-ը՝ նա հակասական չի համարում նաև 1410-ը, քանի որ. «...դեկտեմբերի 27-ը, տարին հունվարի 1-ից սկսելու դեպքում՝ 1409 թվականի վերջին օրերից է, իսկ տարին, ըստ հայկական տոմարի, օգոստոսի 11-ից սկսելու դեպքում՝ ընկնում է արդեն 1410 թվականի տակ» (ԺԵ. դ. հիշ-ք, Ա., էջ 103, ծնթ.*): Սրանից բացի, Լ. Խաչիկյանը վկայաբերում է ՄՄ Հմր 6607 ձեռագրում՝ ենթադրաբար Մատթեոս Ջուղայեցուն վերագրվող վարքաբանական գրվածքը, որտեղ հետաքրքիր և մանրամասն բնութագրվում է մեծ երանելու վարքը և վախճանը: Լ. Խաչիկյանի կողմից ամբողջովին հրատարակված այդ գրվածքից մենք հիշատակում ենք միայն վախճանին վերաբերող հատվածները. «Ի սմին աւուր՝ ի դեկտեմբերի ԻԷ. (27), ննջումն և հանգիստ երիցս երանեալ քաջ րաբունապետին Գրիգորի, աշակերտի Յովհաննու Որոտնեցոյ... Հանգեաւ (Գրիգոր Տաթևացին – *Ա. Հ.*) երանելի մահուամբ ի վանքն Տաթևոյ, ի դեկտեմբերի ԻԷ. (27), և թաղեցաւ ի տօնի մեծ առաքելոյն Պետրոսի և Պօղոսի, և եղև դասակից և պատուակից նորին, ի թվին ՊԾՀ. (1409). ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ օրհնելոյն, յաւիտեանս. ամէն, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. ամէն» (տե՛ս նույն տեղում, էջ 103–104, ծնթ. *):

[65] Յուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից, [կազմեցին]՝ **Ս. Մուրատեան, Ն. Մարտիրոսեան,** հ. Բ., Երուսաղէմ, 1967, էջ 113:

աղբյուրներում հիշատակվել ԺԷ. դարի 20-ական թթ., երբ Մովսես Տաթևացի վարդապետի ջանքերով բարեկարգվեց, համալրվեց նոր շինություններով և տեղում հաստատվեց դպրոց ու միաբանություն: Ակներև է, որ անապատի գոյության ուշմիջնադարյան պատմությունը լավագույնս արտացոլված է այստեղից մեզ հասած ձեռագրերի հիշատակարաններում, որոնց մանրամասն քննությունը փորձել ենք իրականացնել աշխատության «Ս. Անանիա առաքյալի անապատում ընդօրինակված ձեռագրերը» գլխում:

Մովսես Տաթևացի վարդապետի՝ Երևանի անապատում հաստատվելու, վանք ու միաբանություն ստեղծելու և, առհասարակ, անապատի մասին պատմող վաղագույն հիշատակություններից մեկը, թերևս, ժամանակագիր Գրիգոր Դարանաղցունն է (Կամախեցի, 1576—1643): 1634—1640 թթ. գրված ժամանակագրության մեջ Գրիգոր վարդապետը Մովսես Տաթևացու կրած չարչարանքների և Երևան գալու առնչությամբ հետևյալն է հաղորդում. «Եւ Տէր Մօսէս վարդապետն բնակութիւն արար ի Սահաթի-փոսին (Արարատյան երկրում — Ա. Հ.) եւ շատ վիշտս կրեաց ի չար կաթողիկոսացն եւ ի սուտանուն եպիսկոպոսացն. շատ անգամ գուբ փորեցին եւ հնարեցին ի գուբ արկանել, նա իւրեանքն անկան յիւրեանց փորեալ գուբն, ըստ այնմ՝ գուբն զոր փորեցին եւ այլն: Եւ էջմիածինն եւ յԵրևանայ կշտին, որ Անանիա առաքելոյն գերեզմանն է, անդ սահմանեաց միաբանակաց վանս, եւ տնօրէնութեամբն Աստուծոյ՝ պատճառանօք փրկութիւն գործել մարդկան ազգի, որպէս Յովսէփայ, Դանիէլի եւ Ջօրաբաբելի՝ նոյնպէս եւ սորայն»[66]: Արատյան երկիրը, նրա կազմում նաև Երևանը թուրքմեն տիրակալ Ամիր-Սաադի (մահ. 1411 թ.) անունով «Սահաթի փոս» (հայտնի նաև՝ «Չուխուր-Սաադ», «Երկիրն Սահաթու» անուններով) կոչելու մասին է վկայում միևնույն Գրիգոր Դարանաղցու՝ Բաբերդում ընդօրինակած ձեռագրերից մեկի հիշատակարանը (Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանի ձեռ. Հ՝ր 124), որտեղ կարդում ենք. «Եւ յայսմ թվոյս, զոր վերոյ գրեցի, որ էր ՌԾԲ.-ին (1603), որ յայսմ ամի եկի յերկիրէն Արարաթեանայ, զոր Սահաթի փոս կոչեն եւ այժմ Երևան ասեն...»[67]:

Ինչ վերաբերում է Մովսեսին ուղղված դավադրություններին, ապա դրանց հիմնական պատճառը Մելքիսեդեկ Գառնեցու (աթոռակից Դավիթ Դ. Վաղարշապատցու, 1590—1629 թթ.) անբարեհաճ վերաբերմունքն էր վարդապետի հանդեպ: Ուրախալի է, որ Երևանում Մովսես վարդապետին մեծարում ու բարձր են գնահատում ինչպես

[66] Ժամանակագրութիւն **Գրիգոր վրդ. Կամախեցւոյ** կամ **Դարանաղցւոյ**, հրատարակեց՝ **Մեսրոպ վրդ. Նշանեան**, Երուսաղէմ, 1915, էջ 291—292 (այսուհետ՝ Գրիգոր Դարանաղցի):

[67] Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ, հ. Ա. (1601—1620 թթ.), կազմեցին՝ **Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան**, Երևան, 1974, էջ 724, Հ՝ր 1070/ա (այսուհետ՝ ԺԷ. դ. հիշ-ք, Ա., նաև նույնի հ. Բ. (1621—1640 թթ.), կազմեցին՝ **Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան**, Երևան, 1978, հ. Գ. (1641—1660 թթ.), կազմեց՝ **Վ. Հակոբյան**, Երևան, 1984): Արգավանդի Ամիր-Սաադի թուրքմենական դամբարանի (կառուցված 1413 թ. Սաադի որդի Փիր-Հուսեինի կողմից) պատմությունն ուսումնասիրած Ա. Ասատրյանը գրում է, որ ԺԴ. դարավերջին Ամիր-Սաադին հաջողվում է իր իշխանության ներքո միավորել մի շարք թուրքմենական ցեղեր, որոնք կոչվեցին սաադլուներ, իսկ Սուրմալիի դաշտն ու Երասխաձորը՝ «Չուխուր-Սաադ», այսինքն՝ Սաադի փոս: Հետագայում, հավանաբար Փիր-Հուսեինի ամիրության տարիներին, ընդարձակվել են նրանց տիրույթներն ու իրենց սահմաններում ներառել նաև ողջ Արարատյան դաշտը, որը ևս աղբյուրներում հաճախ «Սահաթի փոս» է կոչվում (**Ա. Ասատրյան,** Արգավանդի թուրքմենական Ամիր-Սաադի դամբարանը, Երևան, 2015, էջ 9—10):

*ժողովուրդը, այնպես էլ Երևանի կառավարիչ (կուսակալ) Ամիրգունա խանը, որին բնութագրում են իբրև «մի քաջ, խելօք, նոյնիսկ հայասէր իշխան, մի հպարտ և արդարակորով ասպետ»[68], որի կինը հայուհի էր: Խանի բարյացակամ վերաբերմունքը Մովսես վարդապետի նկատմամբ ներքոնշյալ միջադեպով է պայմանավորում Զաքարիա Քանաքեռցին իր Պատմագրության Լ. (30) «Պատմութիւն Մովսէս կաթուղիկոսին՝ սակաւիկ» գլխում, որն ունի հետևյալ բովանդակությունը. Երևան քաղաքում Հովհաննես անունով մի մարդ է ապրում, որն Աջաբխան անունով մի կին է ունենում, վերջինս Ամիրգունա խանի կին Հուսմիխանի քույրն էր: Աջաբխանի և Հովհաննեսի հարաբերությունները լարվում են, կինը սկսում է ամուսնուն ատել ու շարունակ արհամարհել՝ չլսելով քահանաների, մինչև անգամ Ամիրգունա խանի խրատները: Այդ ընթացքում Զորագյուղում քարոզչություն էր անում Երևան ժամանած Մովսես վարդապետ Տաթևացին, որին լսելու բախտ է ունենում նաև Աջաբխանը: Վարդապետն, ըստ քարոզի կարգի, ժողովրդին ասում է, թե այն կինը, որը հեռանում է ամուսնուց, շնանում է: Այդ լսելով՝ Աջաբխանն անմիջապես ցնցվում ու զղջում է իր գործածի համար, իսկ Մովսեսն այդ պատմությունն իմանալով՝ իսկույն ամուսիններին հաշտեցնում է: Լուրը հասնում է Ամիրգունա խանին, որը Մովսեսին տեսնելու ցանկություն է հայտնում, իսկ տեսնելուց հետո շատ է հավանում, որով սկիզբ է դրվում նրանց բարեկամական հարաբերություններին[69]:

*Հավատավոր ժողովրդի և Ամիրգունա խանի միջնորդությամբ Մովսես վարդապետի՝ Երևանում մնալու առնչությամբ վկայություն ունի նաև Գրիգոր Դարանաղցին. «Եւ զՄօսէս վարդապետն խնդրեցին յԵրևանու տօլվաթաւորքն ի խանէն՝ չթողուցու գնալ յանապատին, այլ կալով առ նոսա՝ օրինակ բարեաց լինելով նոցա, տեսականաւն եւ գործնականաւն մխիթարել զնոսա. եւ հրամայեաց նորա ամիրայն զխնդիրս ժողովրդոցն կատարել եւ մնալ. եւ այն եղեւ սկիզբն մեծանալոյն Մօսէսի մեծի տեառն»[70]:

Այդուհանդերձ, Մովսես Տաթևացու վարդապետության և, հատկապես, «երևանյան» գործունեության մանրամասն նկարագրությունը Առաքել Դավրիժեցունն է, որն իր երկասիրությունը շարադրելիս մեծապես օգտվել է Հովհաննավանքի երբեմնի վանահայր և դպրապետ Ղուկաս վարդապետի 1631 թվակիր հիշատակարանից[71]:

---

[68] **Մ. Խոսրիկեան,** ԺԷ. դարու Հայոց վերանորոգիչ կաթուղիկոսները. գլուխ Ա. Հարանց անապատ եւ Մովսէս կաթուղիկոս, «Արարատ», 1902, մայիս-յունիս, էջ 431:

[69] **Զաքարիա Քանաքեռցի,** Պատմագրություն, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ **Վ. Առաքելյանի,** Երևան, 2013, էջ 51–52:

[70] **Գրիգոր Դարանաղցի,** էջ 290:

[71] Այս ծավալուն հիշատակարանը տեղ է գտել ՄՄ Ձ^{մր} 2381 ձեռագրի 247ա-258ա էջերում՝ գրված արհեստավարժ գրչի ձեռքով: Ձեռագիրը քերականական տարաբնույթ նյութերի ժողովածու է, որը գրվել է 1631 թ. Հովհաննավանքում՝ կաթողիկոս Մովսես Տաթևացու պատվերով: Գրիչներն են Ստեփանոս քահանան և Մարտիրոս ջահընկալը, ծաղկողը՝ Սիմեոն ավագ սարկավագը: Ձեռագրի գիտական ընդարձակ նկարագրությունը վերջերս է հրատարակվել (Մայր ցուցակ ՄՄ, Է., խմբագրութեամբ **Գ. Տէր-Վարդանեանի**, Երևան, 2012, յուն 1143–1158): Կարծում ենք՝ Ղուկասը հեղինակն ու գրիչն է տվյալ ծավալուն հիշատակարանի, որից հատվածական մեջբերումներ կարվեն ուսումնասիրության էջերում: Հովհաննավանքի վանահայրերի շարքում Զաքարիա Քանաքեռցին, որը նույնպես սպասավորել և ուսուցչությամբ է զբաղվել Հովհաննավանքում, հիշատակում է նաև Ղուկաս վարդապետի անունը. «Թուին ՌՁ. (1631) եղեւ Հայր եւ դպրապետ Ղուկաս բազմահանճար վարդապետ՝ հրամանաւ Մովսէս կաթուղիկոսին: Զայս ուսաք յաշակերտաց նորա» (**Զաքարիա Քանաքեռցի,** Պատմութիւն. Կոնդակ Սուրբ ուխտին Յօհաննու վանից, աշխատ.՝ **Ա. Վիրաբյանի,** Երևան, 2015, էջ 195 (այսուհետ՝ Զաքարիա Քանաքեռցի),

Դավրիժեցու պատմագրության էջերում, մասնավորապես՝ ԻԴ. (24) գլխում Ս. էջմիածնի պատմագիր-միաբանը մանրամասն տեղեկություններ է հաղորդում Մովսես Տաթևացու վարդապետության, ապա կաթողիկոսության վերաբերյալ՝ անդրադառնալով նաև վերջինիս իրականացրած շինարարական ու բարեկարգչական աշխատանքներին Ս. էջմիածնում և, հատկապես, Ս. Անանիա առաքյալի անապատում, որն ըստ նրա՝ գոյություն ուներ «ի վաղեմի ժամանակաց»[72]: Ծնունդով Սյունյաց Բաղաբ-Աճանան գավառի Խոտանան գյուղից Մովսեսը 15 տարեկանում կուսակրոն աբեղա ձեռնադրվելուց հետո աշակերտել է «տիեզերալուսյս» վարդապետ Սրապիոն Ուռհայեցուն (հայտնի նաև Եղեսացի մականվամբ, աթոռակից կաթողիկոս 1603–1606 թթ.), իսկ վերջինիս մահից հետո՝ նրա աշակերտ Գրիգոր Կեսարացուն, որը ժամանակի անվանի եկեղեցական գործիչներից էր: Կրոնավորական կյանքն ուսումնասիրելու մղումով Մովսեսն ուխտագնացության է մեկնում նախ Երուսաղեմ, որտեղ լուսարարի պաշտոնն է զբաղեցնում Ս. Հարության տաճարում, զուգահեռ սովորում նաև մոմ սպիտակեցնելու արհեստը, որը հետագայում գրավում է հատկապես շահ Աբասի ուշադրությունը: Մովսեսին վիճակված էր դառնալու Սյունյաց Մեծ անապատի հիմնադիրներից մեկը, քանի որ Երուսաղեմում եղած ժամանակ նա պատահաբար հանդիպում է անապատական կյանքի «ջահակիրներ» Սաղմոսավանքի եպիսկոպոս Սարգիս պարոնտերին և Տրապիզոնից ժամանած Տ. Կիրակոս քհն. Պոնտացուն: Հենց Մովսեսն է նրանց հուշում անապատ հիմնելու համար նպաստավոր Սյունյաց աշխարհը, որտեղ նաև բնակվելու պատրաստակամություն է հայտնում. «Զայդպիսի տեղի, զոր խնդրէք՝ յարևելեան յաշխարհին բազումք գոն, և մանաւանդ երկրին Սիւնեաց, որոց ես ականատես իսկ եմ, և յաշխարհին յայնմիկ կարի առաւել պատշաճ է շինել անապատ... Մովսէս յանձն էառ... առ նոսա ժամանեսցէ և ընդ նոսին բնակեսցի միաբանութեամբ»[73]:

Կ. Պոլիս վերադառնալուց հետո Մովսեսն իր ուսուցիչ Գրիգոր Կեսարացուց ստանում է վարդապետական գավազան և քարոզչություն անելու իրավունք, ապա ուղևորվում նախ Ամիդ-Տիգրանակերտ, որտեղ հանգչում էր իր ուսուցիչ Սրապիոն վարդապետը, ապա Վան, Թավրիզ, Սյունյաց գավառ, Տաթև, որտեղ էլ անմիջապես նախաձեռնում է բարեկարգչական աշխատանքներ իրականացնել: Հայկազ Բ. իշխանի աջակցությամբ հիմնված Հարանց Մեծ անապատը Տաթևի վանքից հեռու չէր, ուստի պայմանավորվածության համաձայն՝ Մովսես վարդապետը հանդիպում է անապատականներ Սարգիս եպիսկոպոսին և Կիրակոս քահանային, հաստատվում այստեղ ու վանական դպրոց հիմնում, որտեղ դասավանդում են երևելի վարդապետներ Պողոս Մոկացին, Ներսես Մոկացին,

---

տե՛ս նաև **Յովհաննէս եպս. Շահխաթունեանց,** Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, աշխատ.՝ **Ա. Տեր-Ստեփանյանի,** Ս. Էջմիածին, 2014, էջ 282 (վերահրատարակություն, [այսուհետ՝ Շահխաթունեանց]): Զաքարիա պատմագրի հաղորդմամբ՝ Հովհաննավանքում Ղուկաս վարդապետը հոգևոր ծառայության է անցել Մովսես Տաթևացի կաթողիկոսի հրամանով, որտեղ էլ, ըստ էության, հենց նույն թվականին շարադրել է իր ուսուցչի համառոտ կենսագրականը, որից էլ իր Պատմագրությունը շարադրելիս հետագայում օգտվել է Առաքել Դավրիժեցին:

[72] **Առաքել Դաւրիժեցի,** էջ 245, տե՛ս նաև **Հ. Սուքիաս Էփրիկեան,** Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա., էջ 671:

Մովսես Տաթևացու վարքը տե՛ս **Շնորհք արք. Գալուստեան,** Հայազգի սուրբեր, Երևան, 1997, էջ 355–364:

[73] **Առաքել Դաւրիժեցի,** էջ 239:

*Արիստակես Շամբեցին, Դավիթ Շամքորեցին և ուրիշներ: Մովսեսին, սակայն, հատուկ չէր առանձնացած ու ճգնակյաց կյանք վարելը: Իրենից ավելի վաղ Սյունիք ժամանած Պողոս Մոկացի վարդապետի հետ նա շրջում է Արևելից Կողմանց գրեթե բոլոր բնակավայրերում, քարոզչություն անում, կառուցում եկեղեցիներ ու դպրոցներ: Նրանց գործակիցն ու պաշտպանն էր ջուղայեցի Հախնազարի որդի Հայկազն իշխանը, որը նրանց մեծապես սատարում էր իրենց առաքելությունն իրականացնելիս: Այս ամենը, սակայն, խավարամիտ մարդկանց շրջանակներում դժգոհությունների ալիք է բարձրացնում, ինչի արդյունքում այս «լուսավոր» այրերին ամբաստանում ու լուրը Մելքիսեդեկ Գառնեցի կաթողիկոսին են հասցնում: Վերջինիս տևական նենգությունների ու ճնշումների արդյունքում է, որ Մովսեսը հետևում է Սուրբ Գրքի հետևյալ տողերին. «կհալածեն ձեզ այս քաղաքից, փախեք մյուսը» (Մատթ. ժ. 23): Թողնելով Հայոց Արևելյան աշխարհը՝ Մովսես վարդապետը կարին ուղևորվելու մտադրությամբ գալիս է Երևան և, ինչպես վերը նշեցինք, հանդիպում Ամիրգունա խանին, որն ըստ Առաքել պատմագրի՝ «...վասն պարկեշտ վարուց նորա սիրեաց զնա խանն, վասն որոյ պահեաց զնա զամս երիս»[74]: Նկատելով վարդապետի խոհեմությունը՝ Ամիրգունա խանը նրան խորհուրդ է տալիս մնալ Երևանում և հոգևոր ծառայություն մատուցել քրիստոնյաներին: Նա նախ առաջարկում է ժամասացություն անցկացնել ու պատարագ մատուցել Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցում, որտեղ էլ, ըստ Առաքել Դավրիժեցու հաղորդման՝ երեք տարի հոգևոր ծառայություն է անում Մովսես վարդապետը, որի կարգապահության մշտական հետևորդներից մեկն էլ միևնույն Ամիրգունա խանն էր: Տեսնելով վարդապետի պարկեշտ վարքն ու Աստծու շնորհներով օժտված լինելը՝ խանը վարդապետին ուղղորդում է դեպի Ս. Անանիա առաքյալի հինավուրց անապատը, որը գտնվում էր Երևան քաղաքի հյուսիսային կողմում՝ այգիների մեջ: Այստեղ է, որ Առաքել պատմագիրն առաջին անգամ հիշատակում է Ս. Անանիայի անապատը, որն «... էր աւերակ և անմարդաբնակ, որոյ վասն ասաց խանն առ վարդապետն. «Տեսանես զայս եկեղեցիս, որ ամայի կայ. արդ, լո՛ւր ինձ, և մի՛ գնար յայլ աշխարհ, այլ արա՛ զսա քեզ բնակութիւն և դադարեա՛ աստէն...»»[75]: Պատմագրի վկայությունը պարզում է, որ գոնե ԺԷ. դարասկզբին անապատը լքված ու անշուք վիճակում է եղել, ուստի Մովսես վարդապետի մուտքը ինչպես Ս. Էջմիածնի, այնպես էլ վանական այս համակառույցի համար շրջադարձային եղավ:

Առաքել պատմագրի հաղորդմամբ՝ Մովսես վարդապետը ընդառաջում է ինչպես խանի, այնպես էլ բազմաթիվ քրիստոնյաների խնդրանքին և շատ արագ նախաձեռնում ժողովրդի օգնությամբ ու միջոցներով բարեկարգել, կառուցապատել ողջ համալիրն ու միաբանություն ստեղծել: Այս ընթացքում են կառուցվում «...շուրջանակի պարիսպ և խցեր և ժամատուն, և սարաւութ (վանատուն — Ա. Հ.), և այլ տներ յոլով. և կատարեալ զամենայն շինուածոն, բնակեցաւ անդէն վարդապետն իւրովք միաբանօքն, կարգաւն և սահմանաւն այն, զոր կարգեցին ի Մեծ անապատն»[76]: Անապատի վերազարթոնքն, անտարակույս, Մովսես վարդապետի ապրած ժամանակաշրջանին ու նրա եռանդուն ջանքերին պետք է վերագրել, քանի որ նա ոչ միայն բարեկարգեց ու նոր կառույցներով համալրեց

[74] Նույն տեղում, էջ 245:

[75] Նույն տեղում:

[76] Նույն տեղում:

այս հոգևոր կենտրոնը, այլև Սյունյաց Մեծ անապատի կանոնադրության հիմամբ՝ միաբանություն ստեղծեց. «Առ որ ժողովեցան միաբանք բազումք, միայնակեացք և գրոց աշակերտք՝ իմաստունք և սրբակեացք. կային ի միասին մեծք և փոքերք սիրով հանդարտեալք ի խցի, հանապազօր կանխեալ յաղօթս և յընթերցումն սուրբ գրոց»[77]:

Հ. Միքայել Չամչյանցը ևս, անդրադառնալով Մովսես Տաթևացու լուսավոր գործունեությանը, հիշատակում է նաև նրա ջանքերով Երևանի անապատում վանք ու միաբանություն հաստատելու պատմությունը՝ Մովսես Տաթևացին «հրամանաւ նախարարին շինեաց վանս ի տեղւոջ մատռան միոյ, յորում էր գերեզման Անանիայ առաքելոյ յեօթանասնից անտի, ի հիւսիսակողմն քաղաքին, ի մէջ այգեստանեայց. և ժողովեալ անդր զբազում անձինս կրթեաց զնոսա ի բարի վարս այնոքիւք կանոնօք՝ որովք վարէին միաբանք անապատին Սիւնեաց»[78]: Արդ, որո՞նք էին Սարգիս եպիսկոպոսի և Կիրակոս քահանայի սահմանած Սյունյաց կամ Տաթևի Մեծ անապատի ճգնակյացների կանոնները, որոնք իբրև անապատական շարժման նոր չափանիշներ կիրառվեցին նաև նորահիմն այլ անապատներում. Առաքել Դավրիժեցու պատմագրությունից քաղում և մեր խմբագրմամբ հաջորդաբար ներկայացնում ենք այդ կանոնների աշխարհաբար թարգմանությունը.

ա. Անապատականները պարտավոր են ապրել խցերում՝ իրենց միտքն ու խոսքը սրբորեն վեհ պահելով հոգևոր և մարմնավոր պղծությունից,

բ. մոռանալ սեփական ցանկությունները և հնազանդ կատարել առաջնորդի կամքը,

գ. չպետք է ունենալ սեփական ինչք, քանի որ ամեն ինչ ընդհանուր պիտի լինի, իսկ առաջնորդը պետք է հոգա միաբանների կարիքներն ըստ անհրաժեշտության,

դ. չպետք է խցում որևէ բան ունենալ կամ ուտել, քանզի տարին միշտ պահքով պետք է անցկացնել, բացի շաբաթ, կիրակի և տերունական տոն օրերից,

ե. խպատ պետք է հրաժարվել գինուց ու մսից և ամեն առավոտ և երեկո խոստովանել օրվա իրադարձություններն ու մտորումները,

զ. ամեն շաբաթ, կիրակի և տերունական տոն օրերին ողջ գիշեր աղոթքով պիտի անցկացնել, իսկ առավոտյան պատարագ մատուցել,

է. բոլորն անխտիր՝ մեծ թե փոքր, միասին պիտի գան մարդեղության կանչին, դեպի մարդեղության Սեղանը և աղոթատեղին, յուրաքանչյուրին առանձին պիտի մատուցել մարդեղության կերակուրը՝ մեծից փոքր միաչափ, նույնպես և՝ մրգերի բաժանումը,

ը. գրվածքներից պարզեցին զգեստների որպիսությունն ու ձևը. քուսիթան, որը գլխի ծածկոցն է՝ վեղարը, քառակուսին, որը չորեքկուսի թիկնոցն է[79], սքեմը և բրդե քուրձը, որը հագնում են զգեստի տակ՝ մերկ մարմնին,

թ. առհասարակ, բոլորի զգեստներն ամբողջովին բրդից, այլ ոչ բամբակից պետք է լինեն,

ժ. բրդե շապիկը պետք է երկար լինի՝ մինչև կրունկները, իսկ գոտին՝ կաշվից,

ժա. հաստատեցին, որ յուրաքանչյուր ոք իր զգեստով պետք է շրջի. եթե միայնակյաց է՝ վեղարով և չորեքկուսի թիկնոցով, եթե քահանա է՝ փիլոնով, եթե աբեղա է՝ փիլոնով ու վեղարով: Զգեստների ճիշտ

[77] Նույն տեղում:

[78] **Միքայել Չամչյանց,** Հայոց պատմություն, Գ. հատոր, Երևան, 1984, էջ 567:

[79] **Անահիտ Աբդ. Ծատուրյան,** Վանականների հանդերձներն ըստ «Մաշտոց» ծիսամատյանի, «Էջմիածին», 2015, ԺԱ., էջ 35:

կրումը վաղուց մոռացվել էր, և թեպետ վեղարն ու փիլոնը կիրառելի էին, բայց միայն պատարագի ժամանակ, որից հետո հոգևորականը դրանք հանում ու աշխարհականի պես էր շրջում,

ժբ. նաև ժամատեղիների կարգը սահմանեցին. տերունի (կիրակի) օրերին գիշերը պաշտամունքային արարողակարգ կատարել՝ «Յիշեսցուք»-ի եղանակով, Սաղմոսի երկու կանոնով, վերջում՝ կանոնական երգերով, ապա Հանգստի շարական և Ավետարան կարդալ ննջեցյալների համար, ապա օրհնության կարգ՝ ըստ օրվա խորհրդի, ինչի առթիվ ընթերցվում են քաղվածքներ շարականներից՝ «Թագաւորք» և «Ալէլուք» երգերով,

ժգ. այնուհետ ընթերցել Հայսմավուրք և Շարական՝ ընթերցվող գլխին համապատասխան, ևս երկու կանոն Սաղմոսից, որին զուգահեռ՝ «Հարցն» աղոթքը,

ժդ. արևելքի ժամին կատարել Սաղմոսի համապատասխան կանոնը,

ժե. առավոտյան և երեկոյան կարգերից հետո ամեն օր կարդալ խրատական գիրը,

ժզ. ցերեկվա երրորդ, ապա վեցերորդ և իններորդ ժամերը կատարել համապատասխան Սաղմոսով՝ իրարից անջատ ու յուրաքանչյուրի համար նշված ժամին, հետո սուրբ պատարագ մատուցել՝ արարողակարգը դպիրներով, սարկավագներով և յուրաքանչյուրն իրեն հատուկ զգեստով: Ամենքը խոստովանում և զգեստավորվում են, ահով ու դողով կանգնում պատարագի Սուրբ Սեղանի առջև, մտքով սրտառուչ աղոթում՝ սրտով իմանալով, թե ինչ են աղոթում պատարագի սկզբից մինչև ավարտը, և կարծես Ավետարանը «ճաշելով» անդադար արտասուք էին թափում եկեղեցում, ինչպես աղբյուրի բխումը,

ժէ. պատարագից հետո անմիջապես կերակուր չեն ուտում, այլ եկեղեցուց լռելյայն ելնելով՝ յուրաքանչյուր ոք գնում էր իր հյուղը (խուցը), որպեսզի ընկալած շնորհը և մտքի լուսավորությունը, որ ընդունեցին սուրբ պատարագից, միգուցե փարատեն նրանց մտքերը,

ժը. խցում ևս մեկ ժամ առանձին աղոթում էին, մինչև հանդարտվեր նրանց սրտի բորբոքը: Եվ երբ սեղանի կոչնակը զարկում էին, բոլորը հավաքվում էին սեղանատունը, միաժամանակ սեղան նստում և ուտում լռելյայն,

ժթ. ամբողջ տարվա ընթացքում օրական մեկ անգամ էին կերակուր ուտում, և որոշեցին ուտելիս Սուրբ Գիրք կարդալ, որպեսզի քիմքերը համը ճաշակեն, իսկ մտքերն Աստծու խոսքը քննեն[80]:

Հատկանշելի է այն, որ Մովսես Տաթևացին եպիսկոպոսական աստիճան է ստացել իր իսկ ջանքերով վերահիմնած Ս. Անանիա առաքյալի անապատում, այն էլ՝ Մելքիսեդեկ Գառնեցի կաթողիկոսից: Մանրամասներ հաղորդողը դարձյալ Առաքել Դավրիժեցին է, ըստ որի՝ Մովսես Տաթևացու համբավն այնքան էր տարածվել աշխարհի տարբեր երկրներում, որ կաթողիկոսն ու նրա համախոհները որոշում են առաջիկա մյուռոնօրհնության կարգը նրա ձեռամբ իրականացնել, որպեսզի մեծաթիվ հյուրեր գան նրան լսելու և առատ նվիրատվություններ անեն Մայր Աթոռին, որից պետք է օգտվեր, բնականաբար, փառասեր Մելքիսեդեկը: Մովսես վարդապետը, իհարկե, նենգ հոգևորականների այս որոշմանը բացասական պատասխան է տալիս՝ հիմնավորելով, թե ինքը եպիսկոպոսի աստիճան չունի, հետևաբար, դա իր անելիքը չէ: Շատ չանցած՝ Մելքիսեդեկ կաթողիկոսը հարմար է գտնում եպիսկոպոս ձեռնադրել

---

[80] **Առաքել Դավրիժեցի,** Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Վ. Առաքելյանի,** Երևան, 1988, էջ էջ 203–205 (խմբագրված – *Ա. Հ.*): Կանոնադրության գրաբար տարբերակը տե՛ս **Առաքել Դաւրիժեցի,** էջ 219–221:

Մովսես վարդապետին, որը տեղի է ունենում Ս. Անանիա առաքյալի անապատում՝ հավանութ֊յամբ Մովսեսի մեծաթիվ աշակերտների ու հավատավոր ժողովրդի. «Ապա Մելիքիսէթ կաթուղիկոսն եկեալ ի դամբարանս սրբոյ առաքելոյն Անանիայի, ուր էր բնակութիւն Մովսէս վարդապետին, զոր անուանեցին զտեղին անապատ. եւ անդ օրհնեաց զնա եպիսկոպոս յաւագ երկուշաբաթ աւուրն»[81]:

Ձեռնադրութ֊յունից օրեր անց տեղի է ունենում մյուռոնօրհնութ֊յան արարողութ֊յունը՝ ձեռամբ Մովսես եպիսկոպոս Տաթևացու, որին ներկա էին բազմաթիվ հյուրեր, վաճառականներ: Տպավորված լինելով Մովսես սրբազանի քարոզից՝ ջուղայեցի վաճառականները նրան հրավիրում են Նոր Ջուղա: Հրավերն ընդունելով՝ Մովսես եպիսկոպոսը մեկնում է Նոր Ջուղա (Սպահան), շրջում հայ գաղթավայրերում և Աստծու ճշմարիտ խոսքը տարածում ժողովրդի մեջ: Տեղին է նկատում Հ. Ներսես Ակինյանը, երբ ՄՄ Հ՝ր 960 Մաշտոցի հիշատակարանի հիմամբ Մովսեսի այցը Նոր Ջուղա թվագրում է 1624 թ.[82]: Համաձայն այդ հիշատակարանի՝ ջուղայեցի Շապանը և իր որդիներն ու թոռները «...սուրբ Մաշթոցս տվաք յիշատակ ի ձեռն հոգևոր հաւրն մերոյ՝ Մովսէս վարդապետին, եւ որք հանդիպիք... Աստուած ողորմի ասացէք... թվականիս Հայոց ՌՀԳ. (1624) ամին»[83]: Մեկ այլ՝ ՄՄ Հ՝ր 4004 ձեռագրի հետագայի հիշատակարանը լիովին հիմնավորում է Մովսես Տաթևացու այցը Սպահան 1624 թ. «Թվին ՌՀԳ. (1624) Մովսէս վարդապետն գնաց Ասպահան, բազում բարութիւնս հաստատեաց: Եւ ես՝ նուաստ Ռբստակէս, անապատին սեղանատունն շինեցի եւ գիրքս աւրինակել տուի»[84]: Հիշատակված է Տաթևի նախկին Մեծ անապատի սեղանատան կառուցումը Ռստակես (Արիստակես) Շամբեցի վարդապետի օրոք, 1624 թ.:

Սպահանից վերադառնալուց հետո, սակայն, Մովսես Տաթևացուն սպասում էր Մելքիսեդեկի նախաձեռնած հերթական դավադրութ֊յունը, այն է՝ կեղծ պարտամուրհակի համաձայն՝ նա պետք է 100 թուման վճարեր Մելքիսեդեկին: Դավը, իհարկե, պարզվում է, Մովսեսն արդար է ճանաչվում, որից հետո Մելքիսեդեկը գաղտնի հեռանում է Լվով ու այնտեղ վախճանվում 1627 թ.: Հայրապետական գահը հանձնվում է նրա եղբորորդի Սահակ Գառնեցուն, որը Մելքիսեդեկից բնավ չէր տարբերվում, իսկ Մովսեսին, որը մոմ սպիտակեցնելու արհեստով արդեն իսկ արժանացել էր շահի բարեհաճ վերաբերմունքին, Նոր Ջուղայի երևելիներից խոջա Նազարի միջնորդութ֊յամբ և շահ Աբասի հրովարտակով հանձնվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարի պաշտոնը, որից հետո «Մովսէս վարդապետն ելեալ ի Ֆահրապատու մեծաւ փառօք եւ անպատում ցնծութ֊եամբ, ոչ միայն իւր, այլ եւ ամենայն քրիստոնէից, եկեալ եհաս յերևան քաղաք, որ եւ ի Սուրբ Էջմիածինն, եւ առանց յապաղելոյ զձեռն ի գործ էարկ նորոգութ֊եան Սրբոյ Աթոռոյն, ի թուականիս մերում ՌՀՋ. (1627), ի վարդավառի պահոց երկուշաբաթ աւուրն սկիզբն արարին շինութ֊եան եւ նորոգութ֊եան»[85]: Հիջրի 1036 թ. (մեր՝ 1627 թ.) գրված պարսկերեն հրովարտակում հատուկ ընդգծված է Ս. Էջմիածնի լուսարար Մովսես Տաթևացու գործունեութ֊յան բնույթը, համաձայն որի՝ «...քրիստոնյա [Մովսես] վարդապե-

[81] **Առաքել Դաւրիժեցի,** էջ 246:

[82] **Հ. Ներսէս վրդ. Ակինեան,** Մովսէս Գ. Տաթեւացի Հայոց կաթողիկոսն եւ իր ժամանակը, Վիեննա, 1936, էջ 102 (այսուհետ՝ Ն. Ակինեան, Մովսէս Գ. Տաթեւացի):

[83] ԺԷ. դ. հիշ-ք, Բ., էջ 136, Հ՝ր 192:

[84] Նույն տեղում, էջ 141, Հ՝ր 200:

[85] **Առաքել Դաւրիժեցի,** էջ 251:

տը Ուչքիլիսայում քրիստոնեական օրենքի համաձայն զբաղված է այդ [վանքի] բարգավաճման և բարեկարգման գործով և կատարում է լուսարարության և հարակից այլ գործեր: Այս մասին նա սրբազան հրամանագիր խնդրեց, ուստի որոշեցինք, որ ոչ մի մարդ արարած, լինեն դրանք հարգարժան հաքիմներից, թե ուրիշներից, երբեք արգելք չհարուցեն և նեղություն չպատճառեն և ուշադիր լինեն նրա նկատմամբ: Թող այս ընդունեն որպես խիստ կարգադրություն և, երբ հրովարտակս սրբազան կնիքով կնքվի, հավատան նրան»[86]:

Թե ինչպես է Մովսես եպիսկոպոսին հաջողվում վերացնել Մայր Աթոռի վրա ծանրացած տարեկան 100 թուման հարկը[87], *կամ թե ինչպես է նա նոր շունչ հաղորդում Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, բարեզարդում տաճարն ու շրջակայքը և արժանիորեն ժառանգում հայրապետական գահը (1629 թ.*[88], *հունվարի 13), մանրամասն ներկայացված է ինչպես Ղուկաս վարդապետի հիշատակարանում և Առաքել պատմագրի երկում, այնպես էլ հետագա ուսումնասիրողներից Մաղաքիա արք. Օրմանյանի և Հ. Ներսես Ակինյանի աշխատություններում: Նկատառելով այդ՝ ավելորդ ենք համարում մանրամասների մեջ ծավալվել և շարունակում ենք ներկայացնել միայն Ս. Անանիա առաքյալի անապատի հետ կապված «դրվագները»:*

Բ. Ս. ՄՈՎՍԵՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎԱԽՃԱՆԸ, ՏԱՊԱՆԱԳԻՐԸ ԵՎ ԿՈԶԵՌՆԻ ՄԱՏՈՒՌԸ

Յավոք, Մովսես Տաթևացու կաթողիկոսության շրջանը կարճատև էր, հետևաբար Ս. Անանիա առաքյալի անապատի հետ առնչվող նրա գործունեությունը նշանավորվում է կյանքի վերջին օրերն անապատում անցկացնելու և այստեղ էլ վախճանվելու ու Կոզեռնի գերեզմանոցում թաղվելու հանգամանքներով: Աղբյուրներում և մասնագիտական գրականության մեջ հակասական տեսակետներ կան Մովսեսի մահվան տարեթվի և կաթողիկոսության ժամանակահատվածի վերաբերյալ: Ուսումնասիրողներից ոմանք (Մ. Չամչյանց, Հովհ. Շահխաթունյանց, Մ. Օրմանյան) հիմք են ընդունել Առաքել Դավրիժեցու վկայությունը, ըստ որի՝ Մովսես Տաթևացին վախճանվել է Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատում, 1632 թ. մայիսի 14-ին[89]. *«...եկաց սա կաթուղիկոս յերիս ամս եւ ի կէս եւ ի*

[86] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պրակ երկրորդ (1601–1650), կազմեց՝ **Հ. Փափազյան,** Երևան, 1959, էջ 104, վավ. 18:

[87] Պահպանվել է նաև Սեֆյան շահ Սաֆիի 1629 թվակիր հրովարտակն Էջմիածինը տարեկան 100 թուման հարկից (փիշքաշից) ազատելու մասին. տե՛ս նույն տեղում, էջ 104–106, վավ. 19:

[88] Չնայած նրան, որ Մովսես Տաթևացու կաթողիկոսության պաշտոնական օծումը եղավ 1629 թ. սկզբին՝ այդուհանդերձ, 1628 թվակիր մի շարք ձեռագրերի հիշատակարաններում Մովսեսն արդեն Ամենայն Հայոց կաթողիկոս է հիշվում (տե՛ս ԺԷ. դ. հիշ-ք, Բ., էջ 283, ՀՄՌ 428, էջ 286, ՀՄՌ 433, էջ 311, ՀՄՌ 471, էջ 314, ՀՄՌ 477): Ուսումնասիրողներից Շ. Դավթյանի կարծիքով՝ աղբյուրներում պահպանված իրարամերժ հղումներն առաջին հերթին պետք է որ պայմանավորված լինեն մի ամբողջ տարի Մովսեսի կողմից փաստական կաթողիկոսական գործունեության վարման հետ (**Շ. Դավթյան,** Մովսես Գ. Տաթևացի. Ամենայն Հայոց կաթողիկոս, Երևան, 2001, էջ 24):

[89] Մովսես Տաթևացու մահվան տարեթիվն այսօր էլ Հայ առաքելական եկեղեցին համարում է 1632-ը, ըստ այդմ՝ այն տեղ է գտել ինչպես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակած «Ամենայն Հայոց կաթողիկոսներ» հանրագիտարանում (տե՛ս Ամենայն Հայոց կաթողիկոսներ. հանրագիտարան, Ս. Էջմիածին, 2008, էջ 177, տե՛ս նաև Հայ եկեղեցու սուրբ կաթողիկոսները, հրատ. պատրաստեց **Արարատ քհն. Պողոսյանը,** Վաղարշապատ, 2017, էջ 178–191), այնպես էլ Աթոռ հայրապետության Ամենայն Հայոց գ ազանագրքերում ու ցուցակներում (Պաշտոնական օրացույց և այլն):

թուականիս ՌՁԱ. (1632) ամին, ի մայիս ամսոյ ԺԴ. (14) վախճանեցաւ...»[90]*: Հակառակ Դավրիժեցու հաղորդման, այլ կարծիքի է Հ. Ներսես Ակինյանը, ըստ որի՝ Մովսես Տաթեւացին կյանքից հեռացել է 1633 թ. մայիսի 21-ին (նոր տոմարով՝ 31-ին)*[91]*: Ն. Ակինյանն իր այս պնդմանն իբրև ապացույց՝ վկայակոչում է Մովսես կաթողիկոսի նոտար Ղազար քահանայի հետևյալ հաղորդումը. «Յամի մարդեղութեան Տեառն մերոյ կենարարի հազար վեցհարիւր եւ երեսուն եւ վեց*[92] *եւ ըստ մերոյս գրոյ թուի հազար ութսուն եւ երկու (1633), մայիսի ամսոյ Հռովմայեցւոց երկտասան եւ մի (21), եւ Հայոց ամսոյ Արեգի եւթն եւ տասն Յինա[ն]ց Ջատկի հինգ կիւրակէին, պատկեր աւուրն երեքշաբաթ, յորում գիշերն զտիւն զգենոյր, առաջին պահուն եղեւ վախճան մեծ կաթողիկոսին Հայոց տեառն տէր Մովսէսի՝ երկրորդ Լուսաւորչի, ամաց իբրև յիսուն եւ հնգից, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս չորս, էած խաւար հայկազեան տոհմի եւ եթող մեզ սուգ անմխիթարելի, յորոց ծրող սորա նորին նաւտար էի»*[93]*:*

1633 թվականն իբրև Մովսես Տաթևացու մահվան տարեթիվ վկայված է ինչպես Գրիգոր Դարանաղցու ժամանակագրության մեջ[94]*, այնպես էլ մի շարք ձեռագրերի հիշատակարաններում, որոնք ըստ հարկի վկայակոչել է Հ. Ներսես Ակինյանը*[95]*: Ստույգ հիշատակություններ կան նաև այն մասին, որ Մովսես Տաթևացին վախճանվել է վաթսուն տարեկան հասակում. էջմիածնում գրված 1641 թվակիր ձեռագրերից մեկի հիշատակարանում գրիչը հարկ է համարում հիշատակել Փիլիպոս կաթողիկոսից առաջ գահակալած Մովսես հայրապետի շինարար գործունեությունը Մայր Աթոռում և այլ վայրերում. «եւ յետ այնորիկ եղեւ զրաւ կենաց իւրոց, փոխեցաւ աստուստ*

[90] **Առաքել Դաւրիժեցի,** էջ 257:

[91] **Ն. Ակինեան,** Մովսէս Գ. Տաթեւացի, էջ 137, տե՛ս նաև **Շ. Դավթյան,** նշվ. աշխ., էջ 69: Ժամանակագիր Դավիթ Բաղիշեցու վկայությունը, թե Մովսես Տաթևացին կաթողիկոսական գահը ստանձնել է Հայոց ՌՀԳ. (1624) թվականին և գահակալել 6 տարի, այսինքն՝ մինչև 1630 թ., աղբյուրագետ Վազգեն Հակոբյանը ծանոթագրություններում ուղղում և վկայաբերում է ՄՄ Հմր 507 ձեռագրի 1633 թ. հիշատակարանն ու ապացուցում, որ իրականում սխալ է նաև Դավրիժեցին (**Դավիթ Բաղիշեցու** ժամանակագրությունը, «Մանր ժամանակագրություններ», հ. Բ., էջ 358, 376, ծնթ. 266):

[92] Ինչպես ծանոթագրում է Հ. Ներսես Ակինյանը, Փրկչական թվականի սկիզբն ըստ Եվսեբիոսի երեք տարով առաջ է նշված (**Ն. Ակինեան,** նշվ. աշխ., էջ 134, ծնթ. 1):

[93] Մայր ցուցակ ՄՄ, Բ., կազմեցին՝ **Օ. Եգանեան, Ա. Ջէյթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քեօշկերեան,** Երևան, 2004, սյուն 1048—1049, տե՛ս նաև ԺԷ. դ. հիշ-ք, Բ., էջ 504, Հմր 736, **Ն. Ակինեան,** Մովսէս Գ. Տաթեւացի, էջ 134—135, **Շ. Դավթյան,** նշվ. աշխ., էջ 69:

Տարիներ անց Ղազար քահանայի անունը կարդում ենք Տաթևում ընդօրինակված ձեռագրերից մեկի հիշատակարանում (ՄՄ ձեռ. Հմր 1714), որտեղ ձեռագրի ստացող և Ղազար քահանայի աշակերտ Յոհան Կարճավանեցին խնդրում է հիշել «քրիստոսատենչ» Ղազար քահանային. «...գնօտար մեծի հայրապետին Մովսէսի, որ զարտաքնոց բնաբանս մինչեւ ի Պերիարմենասի վերջն գրեալ, եւ ինքն ի թվոյս ՌՁ. եւ Ե. (1636) ամին, ի տիս երիտասարդութեան վաղճանեցաւ, Գ. (3) անգամ պատարագեալ գՔրիստոս ի յանապատն ըՍտաթէի» (Մայր ցուցակ ՄՄ, Ե., սյուն 958, տե՛ս նաև ԺԷ. դ. հիշ-ք, Գ., էջ 864, Հմր 1321):

[94] Գրիգոր Դարանաղցու հաղորդմամբ «...համառոտեցաւ կեանք նորա (Մովսես Տաթևացի կաթողիկոսի — *Ա. Հ.*) ի վերայ երկրի, որ ամս չորս կալաւ զաթոռ սրբոյն Գրիգորի եւ փոխեցաւ ի յոյսն ամենեցուն՝ առ Քրիստոս ի բաղձալին իւր ի թվին ՌՁԲ.ին (1633), ի յելս Պենդակոստէին Հոգոյ Գալուստին...» (**Գրիգոր Դարանաղցի,** էջ 301), այսինքն՝ հունիսի սկիզբը, քանի որ Հոգեգալուստն այդ թվականին մայիսի 30-ին էր:

[95] **Ն. Ակինեան,** Մովսէս Գ. Տաթեւացի, էջ 135—136, տե՛ս նաև ԺԷ. դ. հիշ-ք, Բ., էջ 511, Հմր 749/բ, էջ 531, Հմր 789, էջ 547, Հմր 814, էջ 559, Հմր 833: Աղբյուրներում Մովսես կաթողիկոսի մահը վկայված է նաև 1634 թ., տե՛ս նույն տեղում, էջ 554, Հմր 825/բ:

յանմահական կեանսն ի հազարերորդ ութսուներորդ երկրորդ (1633) թուոյս մերոյ՝ գոլով վաթսուն ամաց: Կացեալ յաթոռն հայրապետութեան ամս չորս եւ ամիսս ըստ ամացն»[96]*: Ավելի ուշ, դարձյալ էջմիածնում՝ 1653 թ. գրված ՄՄ Հ՝ր 981 ճաշոցի հիշատակարանում գրիչ Ստեփանոս քահանան անդրադառնում է նախորդ հայրապետ Մովսես Տաթեւացու ազգանվեր գործին, ապա վախճանին, որը տեղի ունեցավ «... անմահական կեանսն վաթսուն ամաց: Եւ եդաւ պատուական մարմին նորա ի փոքրագոյն բլրին, որ հայի յարեմուտս կոյս՝ ի վերայ Հրաստանի գետոյ եւ ի հարաւակողմն ի կայարանն իւր սեպհական, ուր է շիրիմ առաքելոյն Անանիայի, որ եւ է իսկ մենաստան կրօնաւորաց պատեալ շուրջանակի պարսպաւ ի նորին աշխատանաց վաստակոց»*[97]*: Մովսես հայրապետի հասակի մատնանշումը գրիչների կողմից որոշակիացնում է նաև նրա ծննդյան տարեթվի հարցը, որը ևս աղբյուրներում խիստ հակասական է: Շրջանառվում են 1573, 1577–1578, 1585 թվականները, ուստի ստույգ պետք է համարել առաջինը, քանի որ 1633 թ. վաթսուն տարեկանում վախճանված Մովսես Տաթևացին պետք է ծնված լիներ 1573 թ.*[98]*:*

Դառնալով հայրապետի մահվան տարեթվին՝ հարկ է նշել, որ նրա երբեմնի տապանաքարի չափածո արձանագրության մեջ ևս հիշատակված էր Հայոց ՌՁԲ. (1633) թվականը: Տապանագիրն առաջինը հրատարակել է Հովհաննես Շահխաթունյանցը, որից էլ օգտվել են Հ. Ղևոնդ Ալիշանը, Ե. Շահազիզը և այլ ուսումնասիրողներ: Հետաքրքիր է Հ. Ներսես Ակինյանի վերծանությունը, որն այն ընդօրինակել է ՄՄ Հ՝ր 737 ձեռագրից (նկ. 58)[99]*: Նկատառելով այս վերջին օրինակի վաղեմությունը՝ ստորև ներկայացնում ենք նախ Ն. Ակինյանի վերծանությունը (հիմք՝ ՄՄ ձեռ. Հ՝ր 737, 181ա), ապա՝ Հովհ. Շահխաթունյանցի.*

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԴԱՄԲԱՐԱՆԻ,
ԵԴԵԱԼ ՇԻՐԻՄ ՃԳՆԱՒՈՐԻ,
ՏԵԱՌՆ ՄՈՎՍԷՍ ԴԻՏԱՊԵՏԻ,
ԱՄԷՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ,
ՈՐ Է ՏԵՂԵԱԻ ՏԱԹԵՒԱՑԻ,
ՆՈՐՈԳՕՂ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ,
ԱՅԼ ԵՒ ՇԻՆՕՂ ՍՈՒՐԲ ԿԼՄԲԷԹԻՆ,
ԹՎԻՆ ՌՁԲ.-ԻՆ (1633)[100]:

[96] ԺԷ. դ. հիշ-ք, Գ., էջ 6, Հ՝ր 7/ա:

[97] Նույն տեղում, էջ 648, Հ՝ր 989/ա, տե՛ս նաև Մայր ցուցակ ՄՄ, Գ., պսուն 1593: Հիշատակարանը հրատարակվել է «Արարատ»-ում (1875, Ժ., էջ 370–376), որը վերջերս ընդգրկվել է նաև «Արարատ»-ի բնագրերն ամբողջացնող երկհատորյակում (տե՛ս Արարատի ժառանգութիւնը. Ժ. «Արարատ»ի բնագիրներ, հ. Ա., հրատ. պատրաստեց՝ **Ս. Նահապետեան,** դասակարգումը, խմբագրումը և առաջաբանը՝ **Գ. Տէր-Վարդանեանի,** Ս. Էջմիածին, 2017, էջ 316–320):

[98] Մովսես Տաթևացու ծննդյան ու մահվան տարեթվերի վերաբերյալ ձևավորված տարակարծությունները համառոտ քննության է առել նաև «Սյունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանը, որը ևս մեծանուն հայրապետի երկրային կյանքի տևողությունը սահմանում է 1573–1633 թթ. (**Ս. Ալեքսանյան,** Հայոց Մեծ Մովսեսը, «Սյունյաց երկիր», 2015, Հ՝ր 23 [366], էջ 80):

[99] ՄՄ Հ՝ր 737 ձեռագիրը, որը տարաբնույթ նյութերի ժողովածու է, գրվել է 1680–1730 թթ. միջակայքում՝ Ամրդոլու, Գևակա, Հնձուց վանքերում և մի քանի այլ բնակավայրերում, ըստ պահպանված հիշատակարանների՝ Վարդան վրդ. Բաղիշեցու, Գրիգոր վրդ. Շիրվանցու, Աբրահամ աբեղայի և անանուն այլ գրիչների ձեռքով (Մայր ցուցակ ՄՄ, Գ., պսուն 539–540): Ձեռագրի 178ա-181ա էջերում անարվեստ նոտրգրով (երբեմն՝ շղագրանման) տեղ են գտել բովանդակությամբ տարբեր միավորներ (Երկոտասան ակունքն այսք են եւ քարանց անուանք, Գովանք Վարդան վարդապետին Բաղիշեցոյ ասացեալ յաշըղներուց, տաղք և այլն), որոնց թվում՝ երեք տապանագրի ընդօրինակություն, մեկը՝ Բասիլիոս Աղբակեցի վարդապետի (181ա), երկուսը՝ Հակոբ Ջուղայեցի (180բ) և Մովսես Տաթևացի (181ա) կաթողիկոսների տապանագրերն են:

[100] ՄՄ ձեռ. Հ՝ր 737, 181ա, **Ն. Ակինեան,** Մով-

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԴԱՄԲԱՐԱՆԻ,
ԵԴԵԱԼ ՇԻՐՄԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ,
ՏԵԱՌՆ ՄՈՎՍԷՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ,
ԸՆՏՐԵԱԼ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏԻ,
ՈՐ Է ՏԵՂԵԱՒ ՏԱԹԵՒԱՑԻ,
ՆՈՐՈԳՈՂ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ,
ԲԱՅՈՂ ԵՒ ՇԻՆՈՂ ԳՄԲԷԹԻ,
ԹՈՒԻՆ ՌՁԲ.-ԻՆ (1633)[101]:

Ինչպես փաստում է Հ. Ներսես Ակինյանը՝ տապանագրի երկու տարբեր ընդօրինակությունների համեմատության արդյունքում տարընթերցումներն ակնառու են՝ ՃԳՆԱՒՈՐԻ – ՃԱՆԱՊԱՐՀԻ, ԴԻՏԱՊԵՏԻ – ՎԱՐԴԱՊԵՏԻ, ԱՄԷՆ ՀԱՅՈՑ – ԸՆՏՐԵԱԼ ՍՈՒՐԲ, ԱՅԼ ԵՒ – ԲԱՅՈՂ ԵՒ, ԿԸՄԲԷԹ – ԳՄԲԷԹ: Տապանաքարի տեղը, ցավոք, ներկայումս անհայտ է, ըստ այդմ՝ այն ստուգելու հնարավորություն չունենք և պետք է խուսափենք դատողություններ անելուց: Միայն նշենք, որ Հովհաննես եպս. Շահխաթունյանցն իր նկարագրություններին զուգահեռ մեծապես կարևորեց և առաջին անգամ հրատարակեց իր իսկ ընթերցմամբ բազմաթիվ վիմագրեր: Վաղարշապատի վանքերի վիմագրերի հրատարակության առիթով վերջերս տեղում մեկ առ մեկ ստուգեցինք Շահխաթունյանցի ընդօրինակած վիմագրերը, որոնցից մի քանիսն արդեն չեն պահպանվել (ինչպես այս մեկը Երևանում) և չնայած նրան, որ նա երբեմն չի պահպանում արձանագրությունների բնագրային առանձնահատկությունները, բայց և այնպես նրա վերծանություններն իր ժամանակի պահանջների համեմատ կարելի է համարել ճշգրիտ: Այս հանգամանքը նկատառելով՝ մի փոքր վերապահությամբ պետք է մոտենալ Շահխաթունյանցի և ՄՄ Հ[ին] 737 ձեռագրի գրիչներից մեկի վերծանությունների տարբերություններին՝ վերստին փաստելով, որ Շահխաթունյանցը դժվար թե բառային այդքան մեծ տարբերությամբ կարդար տապանագիրը կամ, առավել ևս, անընդունելի կլինի կարծելը, որ նա ինքն է բառերն այլափոխել ու ըստ այդմ հրատարակել: Նշենք նաև, որ ի տարբերություն Մովսես հայրապետի տապանագրի ձեռագիր և տպագիր օրինակների տարընթերցումների՝ նույն ձեռագրում տեղ գտած մեկ այլ՝ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի տապանագրի և Շահխաթունյանցի տպագրի միջև տարբերություններ գրեթե չկան:

Մովսես Տաթևացի հայրապետի վաղահաս մահվան պատճառները մինչ օրս անհայտ են: Մաղաքիա արք. Օրմանյանի համոզմամբ՝ Մովսեսի մահը պետք է պատահական ծանր հիվանդության պատճառ լիներ, քանի որ այդ է վկայում նրա անխոնջ աշխատասիրությունը. «ախտաւոր մըն ալ եղած չըլլալուն նշան կը սեպենք տոկուն եւ անխոնջ աշխատութիւնը եւ չարքաշ կեանքը մինչև կեանքին վերջը, որով պատահական ծանր հիւանդութիւն մը զայն տապալած պիտի ըլլայ, երբ գործով կամ հանգիստի նպատակով կը գտնուէր Երևան, Ս. Անանիայի վանքը, իր սիրեցեալ եւ նուիրական օթարանը»[102]:

Ս. Անանիա առաքյալի անապատում վախճանված Մովսես Տաթևացի

սէս Գ. Տաթեւացի, էջ 138, **Ա. Տեր-Ստեփանյան,** Վիմագրերը Մատենադարանի ձեռագրերում, «Վարձք», 2016, Հ[մր] 11, էջ 23:

[101] **Շահխաթունեանց,** էջ 311, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, գրեց **Մեսրովբ արք. Սմբատեանց,** Վաղարշապատ, 1895, էջ 15 (այսուհետ՝ Սմբատեանց), **Ալիշան,** էջ 313, **Շահազիզ,** էջ 193, **Թ. Հակոբյան,** Երևանի պատմությունը 1500–1800 թթ., էջ 420, **Կ. Դաֆթադարյան,** էջ 190, արձ. 192, **Կարապետ եպս. Ամատունի,** էջ 87, **Վ. Յարութիւնեան,** Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները, Ս. Էջմիածին, 1996, էջ 11:

[102] **Մաղաքիա արք. Օրմանեան,** Ազգապատում, հ. Բ., Ս. Էջմիածին, 2001, պսուն 2815–2816:

կաթողիկոսի աճյունը ամփոփել են Երևանի Կոզեռնի գերեզմանոցում՝ անապատից ոչ հեռու, Հովհաննես Կոզեռնի և Մելքիսեթ Վժանեցի վարդապետների շիրիմների հարևանությամբ, որոնց վրա մատուռ են կառուցել ու սրբատեղի դարձրել. «Եւ պատահեցաւ լինիլ վախճանի սորա յԵրևան քաղաքի ի վանս դամբարանի սրբոյ առաքելոյն Անանիայի, վասն որոյ եւ տարեալ ի հասարակաց գերեզմանատունս, ի Կոզեռ կոչեցեալ բլուրն, զի վասն գերեզմանի Կոզեռ վարդապետին, որ անդ է, այնպէս կոչեն զբլուրն, եւ յարահուպ գերեզմանի Կոզեռ վարդապետին եւ Մելքիսէթ վարդապետին, ի մէջ երկուցս այսոցիկ պատրաստեցին դիր հանգստեան սրբոյս այսորիկ եւ անդէն ի մէջ երկուց կափուցեալ տապանաց եդին զսրբասնեալ նշխարք մարմնոյ նորա...»[103]:

1679 թ. մեծ երկրաշարժից ավերվել է նաև Կոզեռնի մատուռը, որը միայն 1829 թ. վերականգնել է Սահակ Մելիք-Աղամալյանը՝ դարձնելով ընտանեկան տապանատուն (նկ. 44ա). ինքն էլ հետագայում այդտեղ է թաղվել, որի տապանաքարին հետևյալ արձանագրությունն է եղել. «Աստ հանգչի մարմինն Մելիք Երևանայ հայոց Սահակա Մելիք-Աղամալեանց, որ վերափոխեցաւ ի 1835»[104]: *Մատուռի հետագա ճակատագրի մասին կան միայն մի քանի կցկտուր տեղեկություններ. Հ. Ներսես Ակինյանը գրում է, որ «1927-ին ուզեցի այցելութիւն մը տալ Մովսէս կաթողիկոսի նուիրական շիրմին՝ ընկերակցութեամբ Տ. Յովհաննէս աւագ քահանայ Խաչվանքեանի եւ Պր. Ե. Շահազիզեանի (Երվանդ Շահազիզի — Ա. Հ.). բայց չյաջողեցաւ մեզ վեր հանել տապանաքարը մեզ ցոյց տրուած տեղը, որ կը գտնուէր անխնամ վիճակի մէջ մամուռապատ»*[105]:

Դատելով Ն. Ակինյանի հաղորդումից՝ տապանաքարը տեղում է եղել, պարզապես անխնամ վիճակում լինելու պատճառով տապանագիրը ստուգել չի հաջողվել: Ե. Շահազիզը ևս, արձանագրելով Մովսես Տաթևացու՝ Հովհաննես Կոզեռն և Մելքիսեթ Վժանեցի վարդապետների շիրիմների հարևանությամբ՝ Կոզեռնի մատուռում թաղված լինելու փաստը, նշում է, որ «այդ հին գերեզմանները մինչև այսօր էլ դեռ երևում են կիսաքանդ, անխնամք և ապականության մեջ պահված մատուռում»[106]: *Այլ է հնագետ Կարո Ղաֆադարյանի տեղեկությունը. ինչպես վերը նշեցինք, տարիներ անց՝ 1934 թ., Կոզեռնի գերեզմանոցում հնագիտական ուսումնասիրություններ կատարելիս Կ. Ղաֆադարյանը մատուռի ներսում տապանաքարեր չէր տեսել*[107]: *Պետք է արձանագրել, որ Մովսես Տաթևացու և մյուս սուրբ հայրերի շիրմաքարերը ոչնչացվել կամ տեղափոխվել են 1930-ականների սկզբներին՝ մեր մշակութային արժեքների պահպանման համար ամենից անբարենպաստ ժամանակաշրջանում, երբ միայն Երևան քաղաքում հիմնովին քանդվեցին և այլ շինությունների վերածվեցին մի քանի եկեղեցիներ (Ս. Պողոս-Պետրոս, Ս. Սիմեոն Մերունի, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Գեթսեմանի մատուռ, Մլերի եկեղեցի, Ս. Նիկոլայ ռուսական եկեղեցին և այլն): Կ. Ղաֆադարյանը նշում է, որ 1930-ականների սկզբներին քաղաքի ընդարձակման պատճառով իշխանությունները որոշել են տեղափոխել գերեզմանոցը և նախքան շիրմաքարերի փոխադրումը իրեն հանձնարարվել է ընդօրինակել հնագույնից մինչև 1800 թվականը կրող տապանագրերը*[108]: *Գործն ավարտվել է տապանաքարերի մասնակի*

[103] **Առաքել Դաւրիժեցի,** էջ 258:

[104] **Շահազիզ,** էջ 193, **Կ. Ղաֆադարյան,** Երևան, էջ 190, արձ. 193:

[105] **Ն. Ակինեան,** Մովսէս Գ. Տաթեւացի, էջ 138:

[106] **Շահազիզ,** էջ 193:

[107] **Կ. Ղաֆադարյան,** Երևան, էջ 109:

[108] Նույն տեղում, էջ 46–47:

տեղափոխմամբ (որոնց հարազատները արագ արձագանքել են որոշմանը) և հիմնական մասի ուղղակի ոչնչացմամբ: Տապանաքարերից շատերն օգտագործվել են Երևանի՝ ներկայումս Անդրանիկ Մարգարյանի անվան թ. 29 դպրոցի կառուցման համար, որը հիմնադրվել է 1934 թ.[109]:

Պարզվում է, որ մատուռն այսօր էլ կանգուն է, պարզապես վերափոխվել ու ծառայում է որպես բնակարան՝ Պռոշյան փ., առաջին նրբանցք 62/3 հասցեում: Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու դպիր Աշոտ Արևշատյանի 2002 թ. պրպտումներով բացահայտվել են ուշագրավ մանրամասներ: 1955 թ. Կոզեռն թաղամասում բնակվող, տեղի լիազոր կառլեն Հախվերդյանի բանավոր հաղորդմամբ՝ դեռևս 1960-ականների սկզբներին ինքը մատուռը գնելու ցանկություն է ունեցել, որպեսզի այդտեղ բնակություն հաստատեն իր ազգականները, սակայն, չի ստացվել: 1965-ին այն գնել է Ազիզ Մկրտչյանը (1918–2008) և կից սենյակներ կառուցելով դարձրել բնակարան: Ա. Արևշատյանն իր այցելության ժամանակ պարզել է, որ բնակիչները երբեմնի մատուռի արևմտյան դուռը փակել են, փոխարենը մուտք բացել արևելյան կողմից: Տեսանելի էին շինության պատերի հաստությունն ու տանիքի կամարը և որ հետաքրքիրն է, բնակիչներն ասել են, որ ներսում տապանաքարեր չեն եղել, ըստ այդմ՝ նրանք հատակը բետոնապատել և փայտով ծածկել են[110]: Մնում է լիահույս լինել, որ մեր սուրբ հայրերի նշխարները պետք է պահպանված լինեն իրենց տեղում և մոտ ապագայում նրանց գերեզմանները կրկին սրբատեղ կդառնան հավատավոր ժողովրդի համար, որտեղ նախկինի պես պատարագ կմատուցվի: Կոզեռնի մատուռը նկարագրելիս՝ Հովհ. Շահխաթունյանցն այդ մասին գրում է. «Կոզեռն կոչեցեալ բլրակ ի հիւսիսակողմն քաղաքիս է գերեզմանուտ հայազգի բնակչացն. ուրանօր ի միջին տեղւոջ, ի բարձրաւանդակի է մատուռն տեղի պատարագելոյ ի վերայ գերեզմանի Յովհաննու վարդապետի Կոզեռն անուանելոյ...»[111]:

Կոնդի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն նվիրված փոքրածավալ աշխատության մեջ Կոզեռնի մատուռը քանիցս հիշատակում է գրքի հեղինակ, նորագավիթցի Վարդգես Մարտիրոսյանը, որն իր ուսումնասիրությունների ընթացքում Գարեգին Բ. վեհափառ հայրապետի ցանկությամբ 2013 թ. հուլիսին առիթ է ունեցել լինելու բնակարանի վերածված մատուռում, որի մասին հետևյալն է գրում. «Կոզեռնի մատուռի վիճակը տեսնելով, և իմանալով նաև, որ հարևանի տանը քահանայի մարմարյա տապանաքարի վրա է դրված երեխայի մահճակալը, Վեհափառ Հայրապետը շատ մտահոգվեց»[112]:

Հովհաննես սրկ. Մանուկյանն (Հրանտ քհն.) իր մագիստրոսական թեզում ևս անդրադարձել է այս հարցին և որոշ պարզաբանումներ արել: Աշխատանքը գրելու ընթացքում նա ևս կապ է հաստատել Մկրտչյանների ընտանիքի հետ ու պարզել, որ Երևանի առաջիկայում կատարվելիք կառուցապատման ծրագրում ընդգրկված է նաև այդ տարածքը, սակայն, շինարարական կազմակերպության հետ համաձայնություն կա, որ մատուռը չի քանդվելու և հանձնվելու է եկեղեցու պահպանությանը: Նա նաև նշում է, որ մատուռի պահպանության խնդրով դեռևս 2003 թ. զբաղվել է Արարատյան հայրապետական թեմի

[109] **Հովհաննես սրկ. Մանուկյան (Հրանտ քհն.)**, Երևանի Սուրբ Անանիա առաքյալի անապատը, մագիստրոսական թեզ, էջ 39:

[110] Տաթևացուց մինչև Տաթևացի, աշխատասիրությամբ **Աշոտ դպիր Արևշատյանի**, էջ 74:

[111] **Շահխաթունեանց**, էջ 311:

[112] **Վ. Մարտիրոսյան**, Կոնդի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի, Երևան, 2013, էջ 27:

առաջնորդական փոխանորդ Նավասարդ արք. Կճոյանը, սակայն ցայսօր գործնական քայլեր չեն ձեռնարկվել[113]*:*

Ներկա ուսումնասիրության շրջանակներում մեր պարտքը համարեցինք վերստին հետաքրքրվել մատուռի որպիսությամբ և հետագա ճակատագրով: 2018 թ. մարտի 18-ին այցելեցինք Երևանի Կոզեռն թաղամասում գտնվող այդ տունը, որի սեփականատեր Ֆահրադ Մկրտչյանն (ծնվ. 1957 թ.) ու իր կինը՝ Նարինե Կիրակոսյանը (ծնվ. 1969 թ.), մեզ բավական ջերմ ընդունեցին և թույլատրեցին լուսանկարել տան վերջնամասում գտնվող ննջասենյակի վերածված երբեմնի մատուռը[114] *(նկ. 44բ): Բնակարանը, այդ թվում նաև նրա մաս կազմող մատուռը, բնակիչները հիմնովին նորոգել են 2017-ին, ընդ որում, ըստ մեզ հայտնած տվյալների՝ այդ մասին շինարարական աշխատանքներն սկսելուց առաջ տեղեկացրել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի համապատասխան բաժնին և նորոգումն արտոնելու մասին պատասխան ստացել: Ըստ Ֆ. Մկրտչյանի՝ նորոգման ժամանակ մատուռի հատակին ձեռք չեն տվել, այլ նախկին բետոնե անհարթ մակերեսը հարթեցրել են լրացուցիչ լիցքի միջոցով: Նշենք, որ մատուռի հյուսիսային և արևմտյան պատերն արտաքուստ ծառայում են հարևան տներին՝ իբրև նրանց սենյակների առանձին պատեր: Ավելի ուշ՝ թերևս ԺԹ. դարում, հյուսիսային պատի կենտրոնում բացված փոքր մուտքի խորշը ներկայումս տեսանելի է Ֆ. Մկրտչյանի եղբոր տան ննջասենյակից, որն իբրև զգեստապահարան են օգտագործում, իսկ արևմտյան պատի սկզբնական կամարավոր մուտքը Վազգեն Ջանազյանի տան ննջասենյակում է, որի խորշը ևս գոներով փակել ու պահարան են դարձրել (նկ. 44գ): Նրանց խոսքով այդ պատի վրա մինչև վերջերս տեսանելի են եղել զանազան գրություններ, որոնք նորոգման ժամանակ փակել են: Միայն կարող ենք ցավ հայտնել, որ մայրաքաղաք Երևանի կենտրոնում մեր եկեղեցու նվիրական սուրբ հայրերի շիրիմներն ամփոփող մատուռն այսօր այդ կերպ է պահպանվում:*

Գ. Ս. ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼԻ ԱՆԱՊԱՏԸ ՓԻԼԻՊՈՍ Ա. ԱՂԲԱԿԵՑՈՒ ՕՐՈՔ

Մովսես Տաթևացու վերահիմնած անապատը, ցավոք, երկար կյանք չունեցավ: Այն ավերածության է ենթարկվել 1635–1636 թթ. թուրք-պարսկական ընդհարումների հետևանքով, երբ Կ. Պոլսի սուլթան Մուրադ IV-ի (1612–1640) և պարսից շահ Սեֆիի (1629–1642) գլխավորած բանակների

---

[113] **Հովհաննես սրկ. Մանուկյան (Հրանտ քհն.)**, Երևանի Սուրբ Անանիա առաքյալի անապատը, մագիստրոսական թեզ, էջ 39:

Նշենք, որ այս խնդրով ժամանակին մտահոգ է եղել նաև ՀՀ Սյունիքի նախկին մարզպետ Ս. Խաչատրյանը, որն Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսին հղած 2015 թվակիր գրությամբ առաջարկել է բարեկարգել Մովսես Տաթևացու գերեզմանը և նշխարները վերաթաղել Ս. Էջմիածնում կամ Տաթևի վանքում: Ի պատասխան Ս. Խաչատրյանի գրության՝ վեհափառ հայրապետը իր գոհունակությունն է հայտնել մտահոգության համար և նույն թվականի հուլիսի 20-ի պատասխան նամակում նշել, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը նպատակահարմար է տեսնում վերականգնել Երևանի երբեմնի Կոզեռնի մատուռը, բարեկարգել տարածքը՝ առանց նշխարները տեղափոխելու և վերաթաղելու: Սրբավայրի՝ բնակելի տների տարածքում լինելու պատճառով հետաձգվում է նշված աշխատանքների իրագործումը, ուստի միջոցների առկայության դեպքում, երբ հնարավոր կլինի տեղի սեփականատերերին այլ բնակելի տներով ապահովել, աշխատանքներն ընթացք կստանան (Մայր Աթոռ Ս. Էջմիածնից ստացված պատասխան գրության պատճենը տե՛ս «Սյունյաց երկիր», 2015, ՀՍՊ 23 [366], էջ 107):

[114] Ի դեպ, 2016 թ. Արցախի ապրիլյան քառօրյա պատերազմին հերոսաբար զոհվել է նաև նրանց միակ որդին՝ Սասուն Մկրտչյանը (1989–2016). ցավակցում ու մեր զորակցությունն ենք հայտնում:

միջև անզիջում պայքար էր ծավալվել իրենց սահմանների ընդլայնման, այդ թվում՝ Երևանի բերդի գրավման համար: 1635 թ. գարնանը սուլթան Մուրադ IV-ը Մեհմեդ փաշայի գլխավորած 400.000-անոց բանակով սկսում է ռազմական գործողությունները, որին միանում է նաև ինքը՝ սուլթանը: Հասնելով Էրզրում ու կարս՝ օսմանցիներին հաջողվում է ընդամենը յոթ օրում պաշարել Երևանի բերդը, իսկ օգոստոսի 8-ին՝ գրավել այն: Թահմազ Ղուլի խանը գրեթե առանց դիմադրության հանձնում է բերդն ու գնում Թուրքիա: Ստեղծված իրավիճակը, սակայն, տևական բնույթ չի կրում. շատ շուտով արդեն ուժասպառ օսմանյան բանակը տեղի է տալիս, և 1636 թ. գարնանը տևական դիմադրությունից հետո պարսից զորքերին հաջողվում է անցնել բերդի պարիսպներից ներս ու վերագրավել այն[115]:

Առաքել պատմագրի հաղորդմամբ՝ թուրք-պարսկական բախումներից մեծապես տուժել է նաև Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատը, որտեղ բացի սրբի գերեզմանի վրա կառուցված մատուռից, բոլոր շինությունները փայտակերտ էին: Այդ կառույցները հետագայում քարով է վերաշինել Մովսես Տաթևացու աշակերտ և նրա հաջորդ Փիլիպոս Ա. Աղբակեցի (1633—1655) կաթողիկոսը. «...և սոքա ամենեքեան քանդեալ աւերեցան ի գալ վերոյասացեալ երկուց թագաւորացն (սուլթան Մուրադի և շահ Սեֆիի — Ա. Հ.), որ և զայնս ևս զբովանդակն ամենայն վերստին շինեաց, ոչ թէ փայտիւ, այլ քարիւ և բոով գմբէթեայ՝ զժամատունն, զսեղանատունն, զտնտեսատունն, զխցերն, և զայլ ևս շինուածոն ամենայն»[116]: *Փիլիպոս կաթողիկոսի իրականացրած բարեկարգչական աշխատանքներն ինչպես Ս. Էջմիածնում, այնպես էլ Ս. Անանիա առաքյալի անապատում ավարտին են հասել 1637 թ., որից հետո նա ուղևորվել է Սպահան՝ քրիստոնեության քարոզելու առաքելությամբ:*

Փիլիպոս Աղբակեցու կաթողիկոսության, ինչպես նաև Երևանի Ս. Անանիա առաքյալի վանքում բարեկարգչական աշխատանքներ իրականացնելու մասին տեղեկություններ է հաղորդում նաև Հ. Միքայել Չամչյանցը. «Սա (Փիլիպոս կաթողիկոսը — Ա. Հ.) ի սկզբան անդ կաթողիկոսության իւրոյ շրջեալ յայցելութիւն մերձակայ վանորէից՝ յորդորէր զամենեսին ի զգաստութիւն սրբութեան վարուց. և եթէ ուրեք գտանէր զոք ցոփակեաց, ջանայր յուղղութիւն վերածել խրատուք և սաստիւք... զարդարեաց և զվանս Անանիայ առաքելոյն յԵրևան, որ և ասի անապատ Երևանայ. ուր կային երեսուն կրօնաւորք ընտիրք խստակեաց վարուք. և ինքն իսկ կաթողիկոսն ընդ ժամանակս ժամանակս բազում անգամ երթեալ անդ դադարէր աւուրս քանի մի»[117]: *Մխիթարյան միաբանի*

---

[115] Հայ ժողովրդի պատմություն (այսուհետ՝ ՀԺՊ), հ. IV, Հայ ժողովուրդը ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում XIV—XVIII դդ., Երևան, 1972, էջ 106:

Երևանի բերդի գրավման պատմությունը և, ընդհանրապես, բերդի նկարագրությունը շարադրել է նաև ԺԷ. դարի ազգությամբ թուրք ճանապարհորդ Էվլիյա Չելեբին, որի նկարագրությունից մի հատված ենք մեջբերում. «1045 (1635) թվականից սկսած Երևանը աջեմների (պարսիկների — Ա. Հ.) ձեռքումն է և բարեշինվել ու շենացել է: Սակայն որովհետև բերդը միայն մի պարիսպ ունի, ուժեղ հարձակումների չի կարող դիմանալ: Բերդը գտնվում է Զանգի գետի եզերքին, ձգված է հարավից դեպի հյուսիս և շատ նեղ է: Մինչև հիմա էլ նրա պարիսպների և պատվարների վրա երևում են [սուլթան] Մուրադ IV-ի թնդանոթների հետքերը» (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. 4, Թուրքական աղբյուրներ. հ. Գ., **Էվլիյա Չելեբի,** թարգմանությունը բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ **Ա. Սաֆրաստյանի,** Երևան, 1967, էջ 84—85):

[116] **Առաքել Դաւրիժեցի,** էջ 261:

[117] **Միքայել Չամչյանց,** Հայոց պատմություն, Գ. հատոր, էջ 614:

տեղեկութիւնները կարևոր են հատկապես Մովսեսից հետո վանքում միաբանների առկայության առումով, որոնք ապրում էին անապատականներին հատուկ խստակյաց կյանքով:

1630-ականների թուրք-պարսկական բախումների հետևանքով Արարատյան գավառի երկու խոշոր կենտրոններ Երևանի և Վաղարշապատի կրած վնասների մասին բազմաթիվ վկայություններ են պահպանվել նաև ձեռագրերի հիշատակարաններում: Վատիկանի գրադարանի Հմր 85 Ավետարանի գրչության 1637 թվակիր հիշատակարանում գրիչ Մինասը գրել է. «Եւ յորժամ սկիզբն արարաք սուրբ Աւետարանիս, թվին ՌՁԴ. (1635), զի էլ թագաւորն սուլթան Մուրատն ի յԱյրարատեանն, ի վերայ Երևանու. եւ խաւարեալ պաշարեալ պաշարեաց զնա, եւ յետ Թ. (9) աւուր առեալ զքաղաքն, անց գնաց ի Դաւրէժ. եւ ոչ յամեաց անդ, այլ շուտով դարձաւ յետս, եւ եկն ի քաղաքս Համիթ եւ կեցեալ աւուրս ԺԵ. (15), էլ գնաց դարձեալ ի Կոստանդնուպօլիս, թողեալ զերկրորդն իւր, զի գնասցեն այլվի ի Պարսկաստան»[118]:

ՄՄ Հմր 1004 «Մեկնութիւն Հնգամատենին» ձեռագրի 1636 թվակիր ծավալուն հիշատակարանում հեղինակ և գրիչ Սիմեոն Լեհացին վկայակոչում է ոչ միայն թուրքերի (տաճիկների) կողմից Երևանի բերդի գրավումը, այլև պարսից զորքերի կողմից բերդի վերագրավումը. «Իսկ խօնթքարն (սուլթանը — Ա. Հ.) գնաց մինչև յԵրևան. եւ առ զբերթն եւ զիւր շրջակայ գեղօրայքն, զոր յետ սակաւ աւուրց դարձան զօրքն Պարսից ի վերայ Տաճկաց եւ անխնայ կոտորեցին զանթիւ եւ զանհամարս՝ աւելի քան զԺԵ. (15) բիւրս եւ առին զքաղաքն դարձեալ յետս»[119]: Այսօրինակ է նաև Ս. Էջմիածնի միաբան Ղևոնդ եպս. Փիրղալեմյանի «Նշխարք»-ի Ա. հատորում (ՄՄ ձեռ. Հմր 6332, նաև՝ ՄՄ ձեռ. Հմր 6273, էջ 567ա) պահպանված Մկրտիչ երեցի հիշատակարանը. «...ի թուին ՌՁԵ. (1636), ի դառն եւ ի դիժար ժամանակիս, որ սուլթան Մուրատ թագաւորն ելաւ ի Բիւզանդիոյ քաղաքէն, եկաւ ի վերայ Արարատեան գաւառին յԵրևան քաղաքն էառ, գնաց ի Թավրէզ աւիրեաց, յուլիս ամսոյ ելն քաղաքն էառ եւ դարձաւ: Զաշխարհս վրդովեաց, որ Վանայ երկիրն գարին սոմառն ԺԵ. (15) դուռուշ եղեւ: Դարձեալ Պարսից շահն եկաւ անչափ հեծելաւք ի վերայ երևանայ քաղաքին, դեկտեմբերի ամսոյ ԺԵ. (15) քաղաք ծեծեց մինչև ի մարտի ամսոյն ԺԵ. (15)՝ առաւ զքաղաքն»[120]:

Փիլիպոս Աղբակեցուն հաջորդել է Հայ եկեղեցու շինարար գահակալներից Հակոբ Դ. Ջուղայեցին (1655–1680), որի գործունեությունը թեպետ արդյունավետ, բայց բավական անհարթ է անցել: 1673 թ. Երևան այցելած ճանապարհորդ ժան Շարդենն իր տպավորություններում նշում է նաև իր հանդիպումը Հակոբ կաթողիկոսի հետ, որն այդ ժամանակ գտնվում էր իր համար կալանքի վայր ծառայող Երևանի եպիսկոպոսարանում[121]: Լեոն, առանց որևէ հիմնավորման, Շարդենի հիշատակած Երևանի եպիսկոպոսարանը նույնացնում է Անանիա առաքյալի անապատի հետ[122], մինչ-

[118] ԺԷ. դ. հիշ-ք, Բ., էջ 696, Հմր 1012/բ:

[119] Նույն տեղում, էջ 653, Հմր 957/ա, տե՛ս նաև **Սիմէոն Լեհացի,** էջ 419:

[120] Նույն տեղում, էջ 639, Հմր 944:

[121] Путешествие ***Шардена*** по Закавказью в 1672–1673 гг., с. 278.

[122] **Լեո,** Երկերի ժողովածու, հ. երրորդ, գիրք առաջին, Երևան, 1969, էջ 313: ԺԹ. դարասկզբին հայրապետական գահի համար ծավալված «Դավիթ-Դանիելյան» գավազանակռվի մանրամասները նկարագրելիս՝ Լեոն հիշատակում է գեներալ-մայոր Լազարևի հայտարարությունը իշխան Պավել Ցիցիանովին, թե Դանիել կաթողիկոսը բռնությամբ բանտարկված է Ս. Էջմիածնում, որտեղից տեղափոխել են Երևան ու արգելել

դեռ հենց նույն Շարդենն իր նկարագրություններում եպիսկոպոսարանի եկեղեցի է կոչում Երկուերեսանին, որ նույն Ս. Պողոս-Պետրոսն է:

Դ. ԵՐԵՎԱՆԻ 1679 Թ. ՄԵԾ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսի վերակառուցած Ս. Անանիայի անապատը ևս տևական կյանք չունեցավ. պատճառը Երևանի 1679 թ. հունիսի 4-ի մեծ երկրաշարժն էր[123]: Հին Երևանի աշխարհիկ ու հոգևոր կառույցների զգալի մասը ավերակների վերածած աղետի մասին ժամանակի պատմագիր, Հովհաննավանքի միաբան Զաքարիա սարկավագ Քանաքեռցին հաղորդում է հետևյալը. «ի թուին Ռ և ճի և Ը. (1679), ի յունիս ամսոյ Դ. (4), աստուածասաստ բարկութիւն եղև ի վերայ երկրին Արարատեան... և եկեալ շարժս այս ի կողմանցն Գառնւոյ՝ և փլան ամենայն շինուածք և գեղեցկայարկ բնակութիւնք և վանորայք և եկեղեցիք: Այսոքիկ են աւերեալ եկեղեցիք՝ Աղչոց վանք, Այրիվանք, Հաւուց թառ, զՏրդակերտն և զՄոր-Վիրապն, զՋրվէժ, զՁագավանք: Երեք եկեղեցիք յԵրևան (նկատի ունի՝ կաթողիկեն, Ս. Պողոս-Պետրոս-Երկուերեսանին և Ս. Անանիա առաքյալի անապատի եկեղեցին — Ա. Հ.), զՆորագաւիթ, զՆորագեղ, զՁորագեղ, զՆորք, զԳամրէզ»[124]: Պատմագրի վկայությունը մասնավորեցնում է երկրաշարժի աշխարհագրական սահմանները և այն, որ աղետը մեծ վնաս է հասցրել հատկապես Արարատյան դաշտում գտնվող բնակավայրերին ու տեղի հուշարձաններին: Նմանօրինակ վկայություն է պահպանվել նաև Զաքարիա Ագուլեցու օրագրության էջերում. «1128 (1679), յունիսի Դ.ումն (4) Երևան, օրն Դ. (4) շաբաթ, ե. (5) սհաթումն յանկարծակի քամի վեր կացաւ, դըրթում, որոտումն, այնպէս շարժ եղև, որ ական թօթափելու ամէն փլաւ, որ Նորայգաւթայ մինչի Գոգչէն, Ղէնարէն մինչի էջմիածին ամէն վեր եկաւ»[125]:

Ս. Անանիա առաքյալի վանքում, որի հետ էին Կ. Պոլսի նախկին պատրիարք Գրիգոր Խամսեցին և դեռևս վարդապետ Ներսես Աշտարակեցին (**Լեո,** Երկերի ժողովածու, հ. չորրորդ, գիրք առաջին, Երևան, 1984, էջ 178): Գյուտ ավագ քահ. Աղանյանցն ինչպես Դավիթ, այնպես էլ Դանիել կաթողիկոսների արխիվային վավերագրերը հրատարակելիս Դանիելի՝ Ս. Անանիայի անապատում բանտարկվելու մասին տեղեկություններ չի հաղորդում, փոխարենը հրատարակել է Դանիել կաթողիկոսի 1803 թվակիր նամակներն ուղղված իշխան Պավել Ցիցիանովին, Թիֆլիսի Հովհաննես արքեպիսկոպոսին և կայսր Ալեքսանդր Պավլովիչին, որոնցում Երևանի բերդում բանտարկված վշտաբեկ կաթողիկոսն իր թշվառությունն է հայտնում ու օգնություն աղերսում՝ նամակների վերջում ստորագրելով՝ Դանիել բանտարկյալ կամ կալանավորյալ «ի մէջ բերդին Երևանու ի բանտի իմում» (ԴՀՊ, գիրք Ե., Դանիէլ կաթուղիկոս (1800—1808), հրատ. **Գիւտ ավ. քհնյ Աղանեանց,** Թիֆլիս, 1902, էջ 321): Ակնհայտ է, որ Դանիելի բանտարկության վայրը Երևանի բերդն է եղել, այլ ոչ Ս. Անանիայի անապատը:

[123] Հայկական լեռնաշխարհում տեղի ունեցած երկրաշարժերի պատմությունն ուսումնասիրողներից Լ. Բարսեղյանը հատուկ անդրադարձել է երկրաշարժերի Այրարատյան հանգույցին, որի կենտրոնը Արարատյան դաշտն է, որը դեռևս հնագույն ժամանակներից հայտնի խոշոր երկրաշարժերի գոտի է, ուր երկրաշարժերի մասին հնագույն վկայությունը վերաբերում է մ.թ.ա. VI դարի կեսերին, երբ Մեծ Արարատի հյուսիսարևելյան լանջերին գոյացան ահռելի վիհեր: Գիտնականը առանձնակի նշում է նաև Երևանի 1679 թ. հունիսի 4-ի, 12-ի և սեպտեմբերի 8-ի 8—9 բալանոց երկրաշարժերը, որոնք հիմնովին կործանել են Գառնի և Քանաքեռ գյուղերը, ինչպես նաև Երևան քաղաքի զգալի մասը (**Լ. Բարսեղյան,** Պատմագրական վկայությունները հայկական լեռնաշխարհի երկրաշարժերի մասին (հնագույն ժամանակներից մինչև XIX դարի սկիզբը), Երևան, 1995, էջ 51—53):

[124] **Զաքարիա Քանաքեռցի,** էջ 149:

[125] **Զաքարիա Ագուլեցու** Ո(=Օ)րագրությունը, Յերեւան, 1938, էջ 143 (այսուհետ՝ Զաքարիա Ագուլեցի):

Ի տարբերություն վերոնշյալ աղբյուրների՝ ժամանակի գրիչներից Գրիգոր Երևանցին Էջմիածնում և Նորագավիթում՝ 1687–1689 թթ. ընդօրինակած Հայսմավուրքի (ՄՄ ձեռ. Հ՝թ 1512) ընդարձակ հիշատակարանում (հեղինակ՝ Սուքիաս քհն. Գառնեցի) հատակ տեղեկություններ է հաղորդում երկրաշարժից խոնարհված Ս. Անանիա առաքյալի անապատի եկեղեցու և այնտեղ նահատակված՝ Գեղարդավանքի վանահայր Ստեփանոս եպիսկոպոսի մասին. «Ի թուաբերութեան Հայոց ՌՃԻՀ. (1679), յունիս ամսոյ Դ. (4), յաւուր չորեքշաբաթի մինչ ոչ էր հասարակեալ օրն, հնչեաց երկիր եւ դղրդեցաւ արարածք... Եւ յաւուրս շարժման Ստեփաննոս րաբունին էր ի մայրաքաղաքս Երևան, ի յԱնապատն սուրբ, եւ ի հասարակաց ճաշու աղօթս կատարէին հանդերձ միաբան ուխտիւն: Յայնժամ շարժեաց եւ քակտեցաւ եկեղեցին, էառ զտակ՝ զեպիսկոպոսն զՍտեփաննոս եւ զքաջ հռետորն, եւ անտի փոխեցաւ առ Քրիստոս...»[126]: Գեղարդավանքի առաջնորդներին թվարկելիս՝ Ս. Անանիա առաքյալի անապատում երկրաշարժից նահատակված Ստեփանոս եպիսկոպոսին հիշատակում է նաև Հովհաննես եպս. Շահխաթունյանցը. «Ստեփաննոս եպիսկոպոս՝ եղբայր վերնոյն (Դավիթ եպիսկոպոսի — Ա. Հ.), այր գիտնական՝ եկաց յամս 4, զի ի յերկրաշարժութեանն յամի 1679 եղև ընդ փլատակաւ եկեղեցւոյն անապատին Անանիա առաքելոյ յերևան»[127]: Գեղարդավանքի պատմությանն ու վանահայրերին հետագայում մանրամասն անդրադարձել է նաև կիլիկիո կաթողիկոս Գարեգին Հովսեփյանը, որը չի շրջանցել նաև Ստեփանոսի ողբերգական մահը: Վկայակոչելով Սուքիաս քահանայի հեղինակած վերոնշյալ հիշատակարանը՝ Գ. Հովսեփյանը նշում է, որ այդ հիշատակարանում քահանան բնորոշում է նրան որպես «քաջ փիլիսոփայ եւ աստուածաբան», բայց ոչ շինարար՝ եղբոր՝ Դավթի նման: Ստեփանոսի եպիսկոպոսության շրջանը կարճատև է եղել՝ ընդամենը չորս տարի, քանի որ զոհ է դարձել 1679 թ. մեծ երկրաշարժին՝ մնալով Ս. Անանիա առաքյալի եկեղեցու փլատակների տակ[128]:

Աստվածամուխ Սուրբ Գեղարդի արծաթյա երկփեղկ պահարանին (նկ. 41ա, բ) առկա են Պռոշ իշխանի 1268 թ. նվիրատվական և Գեղարդավանքի վանահայր Դավթի վարդապետի 1687 թ. նորոգման արձանագրությունները. վերջին վկայագրում հիշատակված է նաև հանգուցյալ Ստեփանոս վարդապետը. «Իսկ ի թվին ՌՃԼ. եւ Զ.-ին (1687), ես՝ Դաւիթ վարդապետս, առաջնորդ սուրբ ուխտիս Այրիվանից, յազգէն Խաղբակա եւ Պռոշա որդի Ինանկին, եւտու նորոգել զպահարան սուրբ Գեղարդա առաւել պայծառ քան զառաջինն՝ սակս յուսոյն, զոր առ Քրիստոս, յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց, եւ հօրեղբարց իմոց՝ Դաւիթ եպիսկոպոսին

[126] Մայր ցուցակ ՄՄ, Ե., պուն 155–156: Պակաս ուշագրավ չէ նաև հեղինակի հաղորդումը երկրաշարժից անսասան մնացած մեր երեք նշանավոր վանքերի մասին, որ են՝ Մայր տաճար Ս. Էջմիածինը և նրան հարակից Ս. Գայանե և Ս. Հռիփսիմե վանքերը. «Ի յաւագ լեառն Մասիսէ մինչեւ ի բլուրն Շամիրամայ ի սպառ քակեաց եւ մեծ աւերումն եղեւ, բայց ի գլուխ կաթուղիկեաց հանուրց եկեղեցեաց՝ լուսաւորչաշէն բարձրագումբէթն Էջմիածին միայն մնաց. հանդերձ Գայանաւ եւ Հռիփսիմէիւն, ի պարծանս ազգիս մերոյ» (նույն տեղում, պուն 156): Տե՛ս Արարատի ժառանգութիւնը. Ժ. «Արարատ»ի բնագիրներ, հ. Բ., հրատ. պատրաստեց՝ **Ս. Նահապետեան,** դասակարգումը, խմբագրումը և առաջաբանը՝ **Գ. Տէր-Վարդանեանի,** Ս. Էջմիածին, 2017, էջ 796):

Երկրաշարժի նկարագրությունը տե՛ս նաև նույն գր.ի ընդօրինակած մեկ այլ՝ ՄՄ Հ՝թ 435 Ժամագրքի գրչության հիշատակարանում (Մայր ցուցակ ՄՄ, Բ., պուն 659–660), տե՛ս նաև **Շահազիզ,** էջ 135–138:

[127] **Շահխաթունեանց,** էջ 404:

[128] **Գարեգին կթղ. Յովսէփեան,** Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Բ. հրատարակութիւն, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 137:

եւ Ստեփաննոս վարդապետին՝ հանգուցելոց ի Քրիստոս...»[129]:

Այդուհանդերձ, Գրիգոր Երեւանցու հիշատակարանում ամենից ուշագրավն անապատի եկեղեցու ուղղակի վկայաբերումն է: Երկրաշարժից ավերված այս կառույցի մասին ստույգ որեւէ տեղեկություն մեզ հայտնի չէ, նույնիսկ՝ կառուցման ժամանակն ու ճարտարապետական ձեւը: Այս առումով վերոնշյալ հիշատակարանը աղբյուրագիտական մեծ արժեք ունի, քանի որ որոշակիացնում է մինչ երկրաշարժն անապատում գոյություն ունեցած եկեղեցու մասին տեղեկությունները: Հ. Ղեւոնդ Ալիշանն իր «Այրարատ» տեղագրական աշխատության էջերում, Ս. Անանիա առաքյալի անապատի նկարագրությանը կից հրատարակել է խաչքարերով շրջապատված մի գմբեթավոր եկեղեցու լուսանկար՝ այն վերագրելով Երեւանի անապատին[130]*, մինչդեռ լուսանկարում Հաղբատ գյուղի Կուսանաց անապատի Ս. Տիրամայր եկեղեցին է: Տասնամյակներ անց, Երեւանի Ս. Անանիա առաքյալի անապատին անդրադարձած Երվանդ Շահազիզը եւս լուսանկար է հրատարակել՝ կոչելով Ս. Զորավոր եկեղեցի, բայց իրականում պատկերված է Աշտարակի Ս. Մարիանեն*[131]:

Մեծ երկրաշարժին է նվիրված ԺԷ—ԺԸ. դդ. ծագումով երեւանցի տաղասաց Սաֆարօղլու «Աշըխլամայ ասացեալ ի Սաֆար-օղլու՝ ի վերայ քաղաքին Էրեւանայ» տաղը: Երկրաշարժի նկարագրությունը հեղինակը չափածոյի է վերածել, որից մի հատված ենք մեջբերում.

Շարժ եղաւ ու թռաւ սուն ու գերան,
Ջարդեցաւ մէջք ու պէչքը, աչքն ու բերանը,
Տրջեցաւ պարիսպը, փլաւ խորանը,
Ջարութիւնը բերեց սուրն Երևանայ:

Շատ թագաւոր, թագուհի պէհմուրատ գնաց,
Մեռան սարկաւագները, գրքերն մնաց,
Մեղայ եկան խղճալով, լացին,
Գոյթարը պարպեցաւ մուրն Երևանայ...[132]:

Վկայակոչված հատվածում որոշակի է այն, որ երկրաշարժից Երեւանում եկեղեցիներ են խոնարհվել ու հոգեւորականներ վախճանվել, իսկ «գըրքերն մնաց» բառերը փաստում են, որ աղետը խափանեց նաեւ ծաղկման շրջան թեւակոխած քաղաքի ուսումնական եւ գրչական կյանքը:

Երեւանի Կոզեռնի գերեզմանոցից Կ. Ղաֆադարյանը հրատարակել է 1679 թվակիր մեկ տապանագիր (ներկայումս պահպանված չէ), սակայն, ուշագրավն այն է, որ բնագրում վկայված է ննջեցյալի մահվան պատճառը, որ է՝ մեծ երկրաշարժը. «Այս է տ(ա)պան Ովանէսի որդի Մկրտիչին, որ վաղճանեցաւ մեծ շարժով, յունիսի Դ. (4), թվ(ին) ՌՃԻԸ. (1679)»[133]:

Կոզեռնի գերեզմանոցի առումով ուշագրավ է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի մատենադարանի՝ ԺԹ. դարով թվագրվող Հ^ձր 2060 ձեռագրի բովանդակության միավորներից մեկը՝ «Պատմութիւն

---

[129] **Շահխաթունեանց,** էջ 40:

[130] **Ալիշան,** էջ 312, նկ. 128: Այդ լուսանկարը հետագայում վերատպել են նաեւ Հ. Սուքիաս Էփրիկյանը (Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա., էջ 670, նկ. 287), Ե. Շահազիզը՝ ծանոթագրելով, թե «գտնվել է Զորագյուղում, պահպանված չէ» (**Շահազիզ,** էջ 203):

[131] **Շահազիզ,** էջ 195:

[132] Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանի ձեռագրացուցակում տաղի խորագիրը հիշատակում է Հ. Հակոբոս վրդ. Տաշյանը (Ցուցակ ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց՝ **Հ. Յակովբոս վրդ. Տաշեան**, Վիեննա, 1895, սյուն 863), ապա այն ամբողջությամբ գտնում ենք Հ. Ներսես Ակինյանի (**Հ. Ներսէս վրդ. Ակինեան**, Հին Երևանը, «Հանդէս ամսօրեայ», ԽԸ. տարի, Վիեննա, 1934, թ. 5—7, էջ 336—337), նաեւ՝ Թադեւոս Հակոբյանի աշխատություններում (**Թ. Հակոբյան**, Երևանի պատմություն 1500—1800 թթ., էջ 404—405):

[133] **Կ. Ղաֆադարյան,** Երևան, էջ 185, արձ. 165:

գետնաշարժութեան գրեալ ի յիշատակարանի Յայսմաւուրաց, որ ի գրատան էջմիածնի» խորագրով: Գրիչ Պողոս վրդ. Պետրոսյանը, ինչպես ընկալվում է խորագրից, հիմք է ընդունել էջմիածնի ձեռագրատան հայսմավուրքներից մեկի (կամ, միգուցե, միևնույն Գրիգոր Երևանցու ՄՄ Հմր 435 ժամագրքի[134]) հիշատակարանը, որտեղ մանրամասն նկարագրված է Երևանի 1679 թ. մեծ երկրաշարժն ու նրա պատճառած վնասները: Շարադրանքում հետաքրքիրը վերջին մասն է, ուր նկարագրվում է Կոզեռնի գերեզմանոցը երկրաշարժի օրերին. «Եւ դարձեալ շարժէ ի տուէ եւ ի գիշերի, եւ յաւուր ութերորդի ամսոյն սեպտ[եմբերի] պահեցաք սրբոյ վարդապետին Յովհաննիսի մականուամբ Կոզիւռ կոչեցելոյ ի դիտին ի վերայ Հրաստան գետոյ, որ է հանգստարան ննջեցելոցն Երևանայ քաղաքին: Եւ էր ժամ որպէս թէ երրորդ, յանկարծակի դղրդեալ շարժեցաւ երկիր, եւ ի սաստկութենէ շարժին վիմատաշ գերեզմանացն քարինք հարեալ յիրեարս ճռնչային, եւ հիացեալ ասեմք փառք քեզ Աստուած. եհաս ժամ, զի յարիցեն մեռեալք ի գերեզման իւրեանց. եւ յերկարեալ շարժն մինչև ի գլուխ ամին, եւ այլ աւելի»[135]:

Ուրախալի է, որ մեծ երկրաշարժի արհավիրքը վերապրած հայ ժողովուրդը կարողացել է վերստին շենացնել հայրենի երկիրն ու այն հարստացնել ճարտարապետական նոր կառույցներով: Եկեղեցաշինության այս նոր վերելքի արդյունքն է նաև Երևանի Ջորավոր Ս. Աստվածածինը, որին նվիրված մեր պատմավիմագրագիտական քննությունը շարադրել ենք աշխատության վերջում, իսկ մինչ այդ տեսնենք, թե ինչպիսի վիճակ ուներ Ս. Անանիայի վանք-անապատը ԺԸ. դարում, այսինքն՝ ներկայումս կանգուն եկեղեցու գոյության շրջանում:

Ե. Ս. ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼԻ ԱՆԱՊԱՏԸ ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑՈՒ «ՋԱՄԲՌ»-ՈՒՄ

Սիմեոն Ա. Երևանցի կաթողիկոսի (1763–1780) հայտնի «Ջամբռ» աշխատության էջերում, ի թիվս Մայր Աթոռ Ս. էջմիածնի հարևան մի շարք վանքերի՝ քանիցս հիշատակվում է նաև Ս. Անանիա առաքյալի անապատը: «Ջամբռ»-ի տեղեկություններն, իբրև փաստական վավերագրեր, ուղղակիորեն վկայում են ներկայիս եկեղեցու՝ ԺԸ. դարում Մայր Աթոռի վանքապատկան հոգևոր կենտրոնների կազմում լինելու հանգամանքը: Այն Երևանում ունեցել է հողատարածքներ, այգիներ[136], ջրաղացներ, ազատ է եղել որոշ հարկերից և այլն: Ասվածը հիմնավորենք օրինակներով.

Աստվածատուր Ա. Համադանցի կաթողիկոսի օրոք (1715–1725) Մայր Աթոռ Ս. էջմիածնի մաղաֆության, այսինքն՝ հարկատվությունից ազատ լինելու մասին խոսելիս՝ Սիմեոն կաթողիկոսը թվարկում է ոչ միայն Մայր Աթոռի, այլև մյուս վանքերի էջմիածնապատկան ունեցվածքը (մուլքը), որոնց

---

[134] Մեր գործընկեր բանասիրական գիտ. թեկնածու Խաչիկ Հարությունյանի կարծիքով՝ Պողոս գրիչը նկատի ունի Գրիգոր Երևանցու միևնույն հիշատակարանը (ՄՄ Հմր 435), պարզապես շփոթում է՝ ձեռագիրը Հայսմավուրք կոչելով:

[135] Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. ևօթներորդ, կազմեց՝ **Նորայր արք. Պողարեան,** Երուսաղէմ, 1974, էջ 109:

[136] ԺԷ. դարի առաջին կեսի պարսկերեն հրովարտակներում պահպանվել են բազմաթիվ տեղեկություններ Երևանի այգիների վերաբերյալ: Նվիրատվությունների և այլևայլ գործարքների առիթներով հաճախ զուգահեռ հիշատակված են Ջորագյուղի (Դարաքյանդ) և Երևանի Անապատի այգիները. վերջինս, ակնհայտորեն, միևնույն Ս. Անանիա առաքյալի անապատի այգին էր (տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պրակ երկրորդ, էջ 128, վավ. 34, էջ 134–135, վավ. 36, էջ 138, վավ. 38):

կազմում հիշատակվում է նաև Ս. Անանիայի անապատը, որը Երևանում ուներ երկու այգի. «Անանիա առաքելոյ անապատին, Բ. (2) այգի յԵրևան»[137], ըստ էության՝ խաղողի այգու մասին է խոսքը[138]: Երևանի Ռաջափ փաշայի հրամանով նույն Աստվածատուր կաթողիկոսի կազմած ցուցակում որոշակիացվում ու սահմանափակվում է Մայր Աթոռի՝ հարկատվությունից ազատ լինելու իրավունքը և պայման է դրվում այն գերազանցելու դեպքում հարկ վճարել: Հիշյալ փաշայի կարգադրություններից մեկն էլ վերաբերում է վանքերի միաբաններին: Հետաքրքիր է, որ միաբանություն ունեցող վանքերի շարքում վկայված է նաև Ս. Անանիա առաքյալի անապատը, որի միաբանները պետք է ազատ լինեն խարաջից և այլ հարկերից. «Այլ և գրէ թէ՝ Սրբոյ Աթոռոյս միաբանքն, ընդ սմին և Հռիփսիմէի, Գայիանէի, Շողակաթի վանքն, այլ և Երևանու Անանիա առաքելոյ և Զորագեղոյ անապատքն իւրեանց միաբանիւքն լիցին մաղաֆ ի խարաջից և յայլոց հարկաց»[139]: Վիմագրագետ Սուրեն Ավագյանը խարաջ (խարաճ — արաբ. xaraj = գլխահարկ) հարկային տերմինը տարբեր դարաշրջաններում տարբեր կերպ է մեկնաբանում: Նա համոզված է, որ սելջուկյան և մոնղոլական տիրապետության տարիներին խարաջը հիմնական հողային հարկն է, որը գանձվում էր պետության, արքունի դիվանի կամ կալվածատերերի օգտին[140], մի բան, որն, ըստ էության, վերաբերում է նաև հիշատակված օրինակում առկա խարաջին, որից մաղաֆ, այսինքն՝ ազատ էին նշված վանքերի միաբանները:

Մայր Աթոռի՝ այգիներ, այգեհեղեր ու պարտեզներ ունենալու առումով Սիմեոն կաթողիկոսն առանձնակի հիշատակում է նաև Երևանի էջմիածնապատկան այգիները, որոնց կազմում նաև Ջիմշիդենց այգին, որն Աստվածատուր կաթողիկոսը Սիմեոն վարդապետի ձեռամբ գնել է տասը թումանով՝ Ջիմշիդ անունով տաճկից. «...երկու ձեռք աւեր տամբք, մէկ հնձանաւ, և մէկ սառնատամբ, տասն թումանի ի Ջիմշիտ անուն տաճկէ, որ և Ջիմշիտենց այգի կոչի, ի ՌՃԼԹ. թուին Տաճկաց (1725/6)... որ է կից Անանիայ առաքելոյ անապատին...»[141]:

Այգու գնման ու նվիրաբերման մասին է վկայում մի կալվածագիր, որտեղ նշված է, թե խոջա-վաճառականներ Մաթևոսն ու Թադևոսը այգու մի մասն են վաճառել Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսին, որն էլ այն գնելուց հետո վախմ է արել, այսինքն՝ իբրև անձեռնմխելի գույք շնորհել է Ս. Անանիա առաքյալի անապատին. «...խօճա Մատթէոսն և խօճա Թաթէոսն զսոյն յիշեալ այգուսյս կից կէս այգի ևս ծախեն նոյն Փիլիպպոս կաթուղիկոսին՝ տասն և հինգ թումանի՝ ի սոյն թուոջս Տաճկաց ՌԾԴ (1643/4): Եւ նոյն կաթուղիկոսն զայս այգիս ևս վախմ տայ նոյն Անանիայ առաքելոյ անապատին: Որոյ կողմունքն են վերոյիշեալ այգին, Հաճիղարի այգին և Կոզռան բլուրն»[142]:

Այգիներից բացի՝ Ս. Անանիա առաքյալի անապատը Փիլիպոս կաթողիկոսի օրոք իբրև սեփականություն ստացել է նաև ջրաղացներ ու դինգեր (դանկ) հարևան Զորագյուղում: «Ջամբռ»-ում տեղ գտած

[137] **Սիմէոն կթղ. Երեւանցի,** Ջամբռ գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն, Վաղարշապատ, 1873, էջ 141 (այսուհետ՝ Սիմէոն Երեւանցի):

[138] **Սիմեոն կթղ. Երևանցի,** Ջամբռ, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Վ. Համբարձումյանի,** Երևան, 2003, էջ 196:

[139] **Սիմէոն Երեւանցի**, էջ 142

[140] **Ս. Ավագյան,** Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էջ 120:

[141] **Սիմէոն Երեւանցի,** էջ 181:

[142] Նույն տեղում, էջ 182: Այս և նախորդ այգիների ձեռքբերման կալվածագրերի մասին տե՛ս նույն տեղում էջ 268:

տեղեկությունների համաձայն՝ Զորագյուղի մի ջրաղացի չորս դինգը (դանկ), որ պատկանելիս է եղել երևանցի խոջա Գրիգորի դուստրեր Մարգարիտին և Յուղիտային, 1643 թ. Փիլիպոս կաթողիկոսի միջնորդությամբ իբրև վախմ (սեփականություն) հատկացրել են Ս. Աննանիայի անապատին. «Երևանցի խօճայ Գրիգորի դստերք Մարգարիտն և Յողիտայն ի Զորագիւղ Դ. (4) դանկն ջրաղացի միոյ (որ լեալ է իւրեանց բաժին) վախմ տան Անանիայ առաքելոյ անապատին, որ յԵրևան...»[143]: Նույն թվականին միևնույն Գրիգորի դուստր Շահզամանից Փիլիպոս կաթողիկոսը ջրաղացի ևս երկու դինգ (դանկ)[144] է գնել և վախմ տվել Ս. Աննանիայի անապատին, նաև մի ջրաղաց Զորագյուղից, որ դարձյալ գնել ու հատկացրել է Ս. Աննանիայի անապատին[145]:

«Ջամբռ»-ի վերջին մասն ամփոփում է Երևանի նահանգում գտնվող վանքերի որպիսության ընդհանուր նկարագիրը՝ թեմերում կամ վիճակներում ընդգրկված լինելը, ունեցած մուլքերն ու կալվածքները: Հետաքրքիր է ԺԷ–ԺԸ. դդ. Երևանի եպիսկոպոսանիստ կենտրոն Հավուց թառի Ս. Ամենափրկիչ վանքի որպիսության նկարագրությունը, որտեղ վանքապատկան այգիների շարքում հիշատակվում է նաև կոնդեցի Կոնկորենց Հակոբի՝ վանքին նվիրաբերած այգին, որի եկամուտներից օգտվում է նաև Ս. Աննանիա առաքյալի անապատը. «Զայգի մի ևս ունի կից սոյն այգեացս՝ մէկ մեծ տախտակ[146], զոր Կոնտեցի Կոնկորենց Յակովբն տայ սոյն վանքիս: Այժմ Անանիայ առաքեալն ուտէ»[147]:

Վանքերի վիճակային նկարագրությունների վերջում մի քանի տողով շարադրված է նաև Ս. Աննանիա առաքյալի անապատի որպիսությունը, ըստ որի՝ Երևանում գտնվող այս վանք-անապատը պատկանում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, որի հիմնադրման տարեթիվը բաց է թողնված (նշված չէ): Վանքապատկան վիճակներից հատկանշվում է Առինջը, ինչպես նաև բոշաների ողջ կազմը. «Ունի զվիճակս զԱռինջ, և զամենայն Բոշայից ազգն»[148]:

Բանասեր Վազգեն Համբարձումյանը «Ջամբռ»-ի աշխարհաբար թարգմանության ծանոթագրություններում անդրադարձել է նաև Ս. Աննանիա առաքյալի անապատին՝ նշելով, որ վանքն ունեցել է իր փոքր թեմը, որին մասնակիորեն պատկանել են Կոտայքի Առինջ գյուղը (մի մասը պատկանել է Կարենիսի Ս. Անդրեաս և Ս. Մատթեոս առաքյալների վանքին) և հարևանությամբ գտնվող Կոնդ թաղամասի մի մասը, որտեղ սկսած ԺԸ. դարասկզբից բնակություն էին հաստատել մեծ թվով հայացած բոշաներ[149]: Վերջիններիս առումով վկայություն ունի նաև պատմագիր Աբրահամ Երևանցին. նկարագրելով 1724 թ. Երևանի արվարձանում տեղի ունեցած հայ-թուրքական ընդհարումները՝ պատմագիրը հատուկ շեշտում է Երևանի Զորագյուղ թաղամասի Ս. Սարգիս եկեղեցում (իմա՝ առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցի)՝ Գրիգոր վարդապետի

---

[143] Նույն տեղում, էջ 188:

[144] Դանգ (դինգ)-ը երկրագործական մշակույթում կիրառվող սարածն է, որով հացահատիկների վրայի մաշկը հանում, թեփահան են անում, օրինակ՝ ցորենը նախապես խաշում, չորացնում, հետո ջրաղաց են տանում, դինգով ծեծում ու ծեծածը քամուն տալով՝ թեփահան անում ու ձավար ստանում (տե՛ս Հայերէն բացատրական բառարան, հ. առաջին, կազմեց՝ **Ստ. Մալխասեանց,** Երևան, 1944, էջ 520):

[145] **Սիմէոն Երեւանցի,** էջ 188–189:

[146] Տախտակ բառն իր բուն իմաստից բացի մեկնաբանվում է իբրև այգիների առանձին բաժանմունք՝ բաղկացած 25–30 թմբից (Հայերէն բացատրական բառարան, հ. չորրորդ, կազմեց՝ **Ստ. Մալխասեանց,** Երևան, 1945, էջ 363):

[147] **Սիմէոն Երեւանցի,** էջ 280:

[148] Նույն տեղում, էջ 293:

[149] Նույն տեղում, էջ 543:

կազմակերպած խորհրդաժողովը հանրության հետ, որի արդյունքում որոշվում է զենք վերցնել ու պաշտպանել բնակիչներին: Հետաքրքիր է, որ Գրիգոր վարդապետի շուրջը հավաքվածների մեջ էին նաև Կոնդ թաղամասի բնակիչները, որոնք «... էին քրիստոնեայք փոշայք, Ճ. (100) տուն, մեծատունք և քաջասիրտք, վարժք զինու պատերազմի»[150]:

Ամենայն Հայոց կաթողիկոսության թեմական կառույցները վերափոխվել ու հաստատվել են Սիմեոն Երևանցի կաթողիկոսի գահակալման ժամանակաշրջանում: Նրա օրոք է կանոնակարգվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նվիրակության թեմերն ու վիճակներն ամբողջացնող մատյանը, որի կազմումը Սիմեոն կաթողիկոսի նախաձեռնությամբ իրականացրել է Ս. Էջմիածնի միաբան, նոտար Երեմիա արք. Օշականցին: Վերջինս Մայր Աթոռի բազմաշնորհ հոգևորականներից է եղել, որը նաև ձեռագրեր է ընդօրինակել ու նկարազարդել[151]: Երեմիա Օշականցու՝ 1765 թ. կազմած «Աստուածակառոյց մեծի Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի համայն նուիրակաց յաղագս նուիրականաց արդեանց շրջագայելի քաղաքքն հանդերձ գիւղաքաղաքօք նոցին, ըստ յատուկ անուանց մի ըստ միոջէ ստորագրին» խորագրով տեղեկագիրը, որն ամփոփում է Ս. Էջմիածնի նվիրակության թեմերի վիճակագրությունը, նախապես հրատարակել է Գյուտ ավ. քհն. Աղանյանցը[152]: Այն ունի ընդարձակ և բա-

[150] **Աբրահամ Երեւանցի,** Պատմութիւն պատերազմացն 1721—1736 թթ., Երեւան, 1938, էջ 16, տե՛ս նաև **Լեո,** Երկերի ժողովածու, հ. երրորդ, գիրք երկրորդ, Երևան, 1973, էջ 154:

[151] Ս. Էջմիածնի միաբան Երեմիա արք. Օշականցու մատենագրական գործունեության մասին մանրամասն տե՛ս մեր հետևյալ հոդվածը. **Ա. Հարությունյան,** Գրիչ, ծաղկող Երեմիա Օշականցին և նրա տապանագիրը, «Վէմ» համահայկական հանդես, 2014, թ. 3, էջ 114—124:

[152] ԴՀՊ, գիրք Գ., մասն երրորդ. յաւելուած

վական ուշագրավ հիշատակարան: Ջնորանալով մանրամասների մեջ՝ նշենք, որ Մայր Աթոռի թեմերին ժամանակին անդրադարձել է նաև հայագետ Պիոն Հակոբյանը, որը Սիմեոն կաթողիկոսի հաստատած թեմական համակարգում տարբերակում է նվիրակական, տերունի, առաջնորդական և վանական թեմեր: Նշվածներից վերջինը ԺՀ. դարի 60—70-ական թթ. ուներ ավելի քան քսան թեմ, որոնցից մեկն էլ Երևանի Ս. Անանիա առաքյալի վանքի թեմն էր[153]: Երեմիա Օշականցու կազմած ուղեցույց-տեղեկագրում ի շարս այլ թեմերի՝ այն ներկայացված է այսպես. «Անանիայ Առաքելոյ վանից թեմն. Առինջ, բոլոր բօշայքն»[154]:

1778 թ. մի վավերագրի համաձայն՝ Սիմեոն Երևանցին առաջնորդական կոնդակ է ստորագրել Պետրոս վարդապետին Ս. Անանիա առաքյալի վանքի և նրա թեմի առաջնորդ կարգելու մասին՝ հետևյալ բովանդակությամբ. «առաջնորդական կոնդակ ետ սրբազան վեհն Պետրոս վարդապետին, որ ի Քրստոնեու կողմանցն էր, եւ արար զնա առաջնորդ Սրբոյ Անանեայի վանից, եւ նորին վիճակացն, որք էին Առինջ գիւղն, եւ բոլոր բօշայքն: Ապրիլ ԺԳ. (13)»[155]:

Կոնդի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հարավարևելյան այսօրվա արևմտյան նիստին պահպանված՝ ԺՀ. դարին բնորոշ վիմագիրը բովանդակում է եկեղեցու սուրբ դասի ֆարշը, այսինքն՝ սալահատակի իրագործումն ի հիշատակ մաղագործ Բայրամի

եւ ծանոթագրութիւններ, հրատ. **Գիւտ քհնյ. Աղանեանց,** Թիֆլիս, 1894, էջ 797—806:

[153] **Պ. Հակոբյան,** Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2003, էջ 119:

[154] ԴՀՊ, գիրք Գ., էջ 804, **Պ. Հակոբյան,** Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 184:

[155] ԴՀՊ, գիրք ԺԱ., Սիմէոն կաթուղիկոսի յիշատակարանը, մասն III-վերջին, յաւելուածներով եւ ծանօթութիւններով հրատ. **Գիւտ աւ. քհնյ. Աղանեանց,** Թիֆլիս, 1913, էջ 252:

որդի Հարութին և նրա բաժին, այսինքն՝ կողակից Եղիսաբեթին: Հրատարակիչներից Կ. Ղաֆադարյանը ծանոթագրում է, որ հայ բոշաներին գավառներում հաճախ կոչում էին իրենց արհեստի անունով, ինչպես այս դեպքում՝ մաղագործ, այսինքն՝ մաղ գործող[156]: Երվանդ Լալայանն իր «Ջավախք» պատմաազգագրական աշխատության մեջ հատուկ անդրադարձել է նաև հայ բոշաների կացությանն ու ունեցած ավանդություններին: Ազգագրագետը նշում է, որ հատկապես այր բոշաները հիմնականում զբաղվել են մաղագործությամբ և հայերի կողմից կոչվել մաղագործներ[157]: Ըստ Երեմիա Օշականցու Տեղեկագրի՝ գոնե ԺԸ. դարում Երևանում բոշաները զգալի թիվ են կազմել և ենթադրելի է, որ նրանք որոշակի հարկ են վճարել՝ ընդգրկված լինելով Ս. Անանիա առաքյալի վանքի թեմում:

Զ. Ս. ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼԻ ԱՆԱՊԱՏԻ ՎԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Ս. Անանիա առաքյալի անապատը նաև գիտակրթական խոշոր կենտրոն էր, որտեղից մեզ հասած մատենագրական սկզբնաղբյուրները փաստում են, որ դեռևս զարգացած միջնադարից այստեղ են գործել հայտնի աստվածաբաններ, փիլիսոփաներ, նշանավոր հոգևորականներ: Սկսած Հովհաննես Կոզեռնից մինչև Գալուստ Վաղադնեցի ու Թովմա Մեծոփեցի, Մովսես Տաթևացուց մինչև Մելքիսեթ Վժանեցի ու Ոսկան Երևանցի. անուններ, որոնք տարբեր հանգամանքներով կապված են անապատում գործած վանական դպրոցի ու այստեղ ընդօրինակված ձեռագրերի հետ: Հատկապես ԺԷ. դարասկզբից, ի դեմս մեր երկրորդ Լուսավորիչ[158] և մեծ րաբունապետ Մովսես Տաթևացու նախաձեռնությունների՝ անապատում հաստատվել է միաբանություն, ստեղծվել վանական դպրոց, որտեղ մեծ տեղ է հատկացվել նաև գրչարվեստին: Պատահական չէ Առաքել Դավրիժեցու բնորոշումը, թե Մովսես Տաթևացու հիմնած դպրոցի համբավը «...հռչակեցաւ ընդ ծագս աշխարհի, ի Հոռոմաստան, ի Քրդաստան, ի Վրաստան, ի Պարսկաստան. զի յամենայն աշխարհաց վաճառականք գային անդր եւ տեսանէին, եւ զհամբաւն տանէին»[159]: Հետագայում տեղին են նկատել նաև ուսումնասիրողները, որոնցից Թ. Հակոբյանը գրում է, որ Երևան քաղաքի մշակութային կյանքի զարգացմանը մեծապես նպաստել են Մովսես Տաթևացու կողմից՝ ԺԷ. դարի 20-ական թթ. ստեղծված Ս. Անանիա առաքյալի անապատի դպրոցն ու տեղի միաբանությունը: Այստեղից մեզ հասած ձեռագրերից շատերն ընդօրինակվել են հենց հիշյալ ժամանակաշրջանում[160]:

Անապատում գործած նշանավոր հոգևորականների մասին հնարավոր տեղեկությունները քաղում ենք հիմնականում Առաքել Դավրիժեցու Պատմությունից, որոնք մեծ մասամբ վերաբերում են Մովսես Տաթևացու գործունեությանը, Երևանի անապատում դպրոց ու միաբանություն ստեղծելուն:

---

[156] **Կ. Ղաֆադարյան,** Երևան, էջ 174, արձ. 105:

[157] **Ե. Լալայեան,** Ջաւախք. նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, «Ազգագրական հանդէս», գիրք Ա., Շուշի, 1895[1896], էջ 182: Հմմտ. **Վ. Փափազեան,** Հայ բոշաներ (ազգագրական ուսումնասիրութիւն), «Ազգագրական հանդէս», գի.րք Գ., Հմր 1–2, Թիֆլիս, 1898, էջ 74–90, Հայերէն բացատրական բառարան, հ. երրորդ, կազմեց՝ **Ստ. Մալխասեանց,** Երևան, 1944, էջ 243:

[158] Մատենագրությունից հայտնի է, որ մեր միջնադարյան երևելիներից շատերին են բնորոշել իբրև «երկրորդ Լուսավորիչ», այսինքն՝ Ս. Գրիգոր Լուսավորչի արժանի հետնորդ:

[159] **Առաքել Դաւրիժեցի,** էջ 246:

[160] **Թ. Հակոբյան,** Երևանի պատմությունը 1500–1800 թթ., էջ 378, 383:

Ինչպես վերը նշեցինք, անապատի մասին վաղագույն հիշատակությունները կապված են ԺԸ–ԺԱ դդ. տոմարագետ Հովհաննես Կոզեռն վարդապատի՝ Երևանում մի որոշ ժամանակ գործելու և Ս. Անանիա առաքյալի անապատի հարևանությամբ գտնվող գերեզմանոցում թաղվելու հետ: Այս հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ Հովհաննես վարդապետը գոնե մի որոշ ժամանակ հենց այստեղ է ստեղծագործել: Ավելի ուշ՝ ԺԵ. դարասկզբին, Ս. Անանիա առաքյալի անապատում ոչ միայն ձեռագրեր են ընդօրինակվել, այլև 1409 թ. Մեծոփավանքից այստեղ է եկել մեր մեծ րաբունապետ Գրիգոր Տաթևացին, որն ի թիվս իր մի շարք աշակերտների՝ այստեղ վարդապետական գավազան է շնորհել նաև պատմագիր Թովմա Մեծոփեցուն: Նշված անձանց ներկայությունը վանք-անապատում ինքնին վկայում է վերջինիս ունեցած բարձր դիրքը ժամանակի հոգևոր ու մշակութային կյանքում: Մեծ երախտավորների նվիրական գործը արժանիորեն շարունակել են ԺԶ–ԺԷ. դդ. ոչ պակաս ականավոր գործիչներ Մելքիսեթ Վժանեցին և Մովսես Տաթևացին: Վերջինիս անվան հետ է կապված Ս. Անանիա առաքյալի անապատի վերածնունդը, քանի որ Մովսեսը ոչ միայն նոր հիմքերի վրա դրեց Սյունյաց Մեծ անապատն ու «ի հիմանց» նորոգեց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, այլև նոր շունչ հաղորդեց անապատական շարժմանը՝ այս կերպ կարևորելով նախ և առաջ ուսումնառության և գիտության զարգացումը: Բանիմաց հոգևոր գործիչները պետք է կրթեն արժանի սերունդներ, նոր զարկ տան գիտական մտքին. սրանք էին այն առաջնային նախապայմանները, որոնք մեծապես արժևորեցին ժամանակի հոգևոր այրերը՝ ի դեմս Մովսես Տաթևացու և նրա հաջորդների:

Ս. ՄՈՎՍԵՍ Գ. ՏԱԹԵՎԱՑԻ

Մեծավաստակ Մովսես Տաթևացու կյանքի ու գործունեության մասին բազմաթիվ վկայություններ են պահպանվել ինչպես պատմագիրների, ժամանակագիրների ու մեծ րաբունապետի աշակերտների երկասիրություններում ու հիշատակարաններում (Գրիգոր Դարանաղցի, Առաքել Դավրիժեցի, Զաքարիա Քանաքեռցի, Դավիթ Բաղիշեցի, Հակոբ Կարնեցի, Եսայի Կարճավանեցի, Նոտար Ղազար քահանա, Զաքարիա Վաղարշապատցի, Խաչատուր, Առաքել, Մինաս գրիչներ և այլք), այնպես էլ Հայ եկեղեցու պատմությամբ զբաղվող մասնագետների աշխատություններում (Հ. Միքայել Չամչյանց, Մաղաքիա արք. Օրմանյան, Հ. Ներսես Ակինյան, Միսաք Խոստիկյան, կարապետ եպս. Ամատունի և այլք)[161]: Նշված աղբյուրների հիմամբ Մով-

[161] «Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմը 2015 թ. մի ամբողջ համար նվիրել է Մովսես Գ. Տաթևացի կաթողիկոսի կյանքի ու գործունեության ամենատարբեր ոլորտների լուսաբանմանը: Համարում տեղ են գտել ինչպես նախկինում հրատարակված աշխատություններից ու ձեռագրերի հիշատակարաններից առանձին հատվածներ (Զաքարիա Քանաքեռցի, Գրիգոր Դարանաղցի, Առաքել Դավրիժեցի, Սիմեոն Երևանցի, Մաղաքիա Օրմանյան և այլք), այնպես էլ նոր հոդվածներ՝ խմբագիր Սամվել Ալեքսանյանի, Լիլիթ Առաքելյանի, Ռոբերտ Էջանանցու հեղինակությամբ (տե՛ս «Սյունյաց երկիր», ուրբաթ, 11 սեպտեմբերի, 2015, Հմ 23 [366]):

Հատկանշելի է համարում ներառված Տ. Արարատ քհն. Պողոսյանի կազմած մատենագիտական ցանկը, որն ինչպես կազմողն է նշում, ներկայացնում է Մովսես Տաթևացուն վերաբերող երկերի շարքը (195 միավոր), որը նրա կյանքով և գործունեությամբ զբաղվողներին մեծապես օգտակար կլինի (**Արարատ քհն. Պողոսյան,** Մովսես Գ. Տաթևացի. մատենագիտական ակնարկ, «Սյունյաց երկիր», 2015, Հմ 23 [366], էջ 113–118):

Հայ եկեղեցու պատմության ուսումնասիրության համատեքստում Մովսես Տաթևացու գործունեու-

սես Տաթևացու կյանքի և գործունեության բուն նկարագիրը վերն արդեն շարադրվեց, ըստ այդմ այստեղ կփորձենք հիմնականում ձեռագրերի հիշատակարանների միջոցով ներկայացնել Մովսես Տաթևացուն իբրև վանական դպրոցների ու գրչօջախների հիմնադիր, որից հետո կդառնանք նրանից մեզ հասած մատենագրական ժառանգության քննությանը:

ՄՄ Հ^{մր} 4215 ձեռագրի 1613 թ. հիշատակարաններից մեկում Մինաս գրիչը Մովսես վարդապետին արդեն իսկ բնութագրում է իբրև «կրկին լուսատու հոգւոց մերոց» և «բազմապատիկ լուսաւորիչ աշխարհիս Հայոց»[162]: Աղբյուրագիտական ուշագրավ այս տեղեկությունը փաստում է, որ Մովսես վարդապետն իր լուսավորյալ վարք ու բարքով աչքի էր ընկել դեռևս Սյունյաց աշխարհում, որի բազմաթիվ բնակավայրերում ևս եկեղեցիներ ու դպրոցներ է կառուցել: Այն, որ մեծանուն հայրապետն ի դեմս դպրոցաշինական լայնածավալ աշխատանքների՝ իրեն նույն կերպ դրսևորեց նաև Արարատյան երկրում, վկայում է Գրիգոր Դարանաղցին: Սյունյաց Մեծ անապատի հիմնադիրներից Սարգիս եպս. Սաղմոսավանցու (Արենեցի, մահ. 1620 թ.) օրոք՝ 1600–1603 թթ. Սաղմոսավանքում գործած Գրիգոր Դարանաղցի ժամանակագիրն ի շարս Մովսեսի՝ տարբեր վայրերում իրականացրած բարեկործական աշխատանքների՝ նկարագրում է նաև նրա այցը վանական նշանավոր կենտրոններ Սաղմոսավանք և Հովհաննավանք. «Եւ գնացեալ ի Սաղմոսավանսն եւ Յոհաննավանն, որ հրաշալիք եւ հռչակաւորք են ի մէջ ամենայն վանորէիցն, զնոսա կամեցաւ դպրատունս առնել եւ կարգել մանկունս ուշիմս ի դպրոց, որպէս յետոյ կատարեաց իսկ արդեամբք, զամենայն զոր ինչ կամեցաւ եւ արար Աստուծոյ աջողելովն»[163]: Փաստորեն, դեռևս Վաչուտյանների օրոք՝ ԺԹ. դ. կեսերին հիմնված Սաղմոսավանքի դպրոցը, որի համար 1255 թ. կառուցվել էր նաև առանձին գրատուն-մատենադարան, վերագործել է Մովսես Տաթևացու եռանդուն ջանքերով՝ 1620-ական թթ.: Մեծանուն վարդապետի այցը Սաղմոսավանք և այդտեղ պահվող կոնդակը նորոգել հանձնարարելու մասին է վկայում Մինաս գրչի՝ 1623 թվակիր հիշատակարանը. «...ի թվին ՌՀԲ. (1623) նորոգեցաւ կոնտակս հրամանաւ քաջ րաբունապետին մերոյ Մովսէս վարդապետին, որ իբր զԱրուսեակ փայլեաց ի մէջ հայկազան սեռիս: Ի սոյն աւուրս ուխտ արարեալ՝ մեծաւ փափագմամբ շրջեցաւ ի վանորայս նահանգիս եւ ըստ կարգի եկն ի սուրբ ուխտս Սաղմոսավանք, եւ տեսեալ զկոնտակս հնացեալ եւ աւերեալ, հրամայեաց նոր նորոգել ի վերա մագաղաթի ըստ հին աւրինակին, ոչ յաւելուլ ի բանս նորա եւ ոչ պակասեցուցանել, զի մի վնաս լիցի անձին...»[164]: Գրիչն ուշագրավ մանրամասներ է հաղորդում նաև երկրի քաղաքական ծանր իրավիճակի մասին՝ Ամիրգունա խանին բնութագրելով իբրև տեղի բռնակալ, որի ծանր լծի տակ

թյանն անդրադարձել է նաև պատմաբան Ալեքսանդր Աննինսկին. տե՛ս **А. Аннинский,** История Армянской церкви, Кишиневъ, 1900, с. 269–281.

[162] ԺԷ. դ. հիշ-ք, Ա., էջ 484, Հ^{մր} 609/ա:

[163] **Գրիգոր Դարանաղցի,** էջ 295–296, տե՛ս նաև **Ա. Մանուչարյան,** Սաղմոսավանք, Երևան, 2015, էջ 56:

[164] ՄՄ ձեռ. Հ^{մր} 8061, տե՛ս նաև ԺԷ. դ. հիշ-ք, Բ., էջ 97, Հ^{մր} 144: Կոնդակն այսպես է սկսվում. «Ի սուրբ եւ ի գերահռչակ ուխտեացս ի սուրբ նշանից եւ ի Սուրբ Յակոբա աջոյն եւ ի սուրբ անապատի մենաստանից դրանցէս եւ յականատես Սուրբ Գրիգոր վարդապետի գերեզմանէս եւ այլ բազմահաւաք սրբոցս, որ աստ կան հաւաքեալ եւ կառուցեալ, որ գեղջուկ անուն Սաղմոսավանք վերաձայնի, նաեւ ի սոցին սպասաւորացս ի նուաստ եւ ի մեղսամած յանձնէ ի Գրիգոր պիտակ անուամբ միայն վարդապետէ»: Վերջում՝ լուսանցում, առկա է հետևյալ երկտող գրությունը. «Գրեալ է եւ այլ պատճէն ի թվին ՌՃԼԲ. (1683), հրամանաւ Եղիազար կաթողիկոսին եւ պահպանի ընդ ամին»:

ժողովուրդը մեծապես տառապեց, բայց չնայած սրան «...մարդասիրութիւն գտեալ վարդապետն մեր Մովսէս, յոյժ պատուեցաւ յաչս բռնաւորիս, զի ի կամս ապաստան արար զսա: Որ եւ զայս համարձակութիւն գտեալ վարդապետս մեր ըստ բնածին բարուցն իւր, նորոգէր զեկեղեցիս եւ ուղղէր զխանգարեալ կարգս նորա ըստ կարի իւրոյ, ոչ պակաս քան զաւուրս քրիստոնեութեան»[165]: Վերջում գրիչը հիշատակում է նաև կոնդակը ծաղկող Սահակ դպիրի անունը. «Գրեցաւ ձեռամբ Մինաս գրչի եւ ծաղկեցաւ ի Սահակ դպրէ, ի փառս Սուրբ Լուսաւորչին եւ ի գովեստ ամենասուրբ Երրորդութեանն...»[166]: Կոնդակի սկզբում և վերջում առկա է Մովսես Տաթևացու անվանակիր սև թանաքով շրջանաձև կնքադրոշմը (նկ. 57ա, բ), որի վերնամասում Քրիստոսի պատկերն է՝ հետևյալ գրությամբ.

ՅԼԻՍՈՒՍԻ ՔԼՐԻՍՏՈՍԻ ԾԼԱՌԱՅ
ՄՈՎՍԼԷՍ ՎԼԱՐԴԼԱՊԵՏ՝ Ի
ՎԻՃԼԱԿ ՍՏԱԹԷԻ[167]:

Նույն ժամանակաշրջանի երևելի կրթօջախներից մեկն էլ Հովհաննավանքի դպրոցն էր, որը ևս գործել է Մովսես Տաթևացու անմիջական ջանքերով: Ի տարբերություն Սաղմոսավանքի՝ այս դպրոցը կատարելության հասնելով՝ 1637 թ. տեղափոխվում է Էջմիածին, իսկ տեղի նշանավոր գործիչներից Հովհաննես եպս. Կարբեցին գալիս է Սաղմոսավանք, նորոգում Քասաղի կիրճում գտնվող Ս. Գրիգոր Լուսավորչի անապատն ու միաբանություն հաստատում՝ ստանձնելով ինչպես Սաղմոսավանքի, այնպես էլ անապատի առաջնորդությունը[168]:

Ժէ. դարի առաջին կեսի մի շարք ձեռագրերի հիշատակարաններում գրիչներն առանձնակի են անդրադարձել մեծ րաբունապետ Մովսես Տաթևացու անձին ու գործունեության լուսաբանմանը: Հատկապես Արարատյան երկրում նույն դարի 20-ական թթ. մինչև Մովսեսի մահն ընկած ժամանակահատվածում (1633 թ.) ընդօրինակված ձեռագրերի հիշատակարանների գրեթե անբաժանելի մասն էր դարձել րաբունապետի ազգանվեր գործի փառաբանումը: Տեղին է նկատել Շ. Դավթյանը, երբ նշում է, որ Սյունյաց աշխարհում գրված ձեռագրերի հիշատակարաններում հաճախ վկայակոչվում է Տաթևի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի անունը, սակայն ներբողական տողերն ուղղված են միմիայն Մովսես վարդապետին: Նույնը նաև Արարատյան դաշտի վանքերում գրված մատյաններում է, երբ գրիչը չի մտաբերում անգամ կաթողիկոսի անունը, քանի որ նշված է Մովսեսի անունը, որի հեղինակությունն այնքան մեծ էր ու պատկառելի[169]: Մեր երկրի քաղաքականապես ու տնտեսապես դժվարին պայմաններում Մովսեսի մուտքը ինչպես Սյունյաց, այնպես էլ Արարատյան աշխարհ շրջադարձային եղավ: Նրա ջանքերով են կառուցվել ու նորոգվել բազմաթիվ անապատներ ու

---

[165] Նույն տեղում:

[166] Նույն տեղում: Շուրջ 2,50 մ երկարություն և 0,21 մ լայնություն ունեցող ժապավենաձև մագաղաթե Կոնդակի սկիզբը հարդարված է խորանաձև մեծադիր գլխազարդով, թռչնագիր սկզբնատառով, վերջը՝ հիշատակարանից առաջ, բուսազարդերով համակցված ուղղանկյուն գլխազարդով:

[167] ՄՄ ձեռ. Հ^{մր} 8061:

[168] **Ա. Ասատրյան,** Սաղմոսավանքի միջնադարյան դպրոցը, «Շողակն Արարատյան», 2016, նոյեմբեր Բ. (2), թ. 20 (390), էջ 7: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում են հանգչում Ս. Գրիգոր Լուսավորչի անապատի վանահայրերից մի քանիսը՝ Մարութ մահտեսի Ղափանցին (մահ. 1734 թ.), հանդերձապան Գրիգոր վրդ. Բջնեցին (մահ. 1760 թ.), Անտոն վրդ. (մահ. 1771 թ.) — տե՛ս **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 2016, էջ 158, արձ. 251, էջ 175, արձ. 308, էջ 181, արձ. 329:

[169] **Շ. Դավթյան,** Մովսես Գ. Տաթևացի, էջ 38:

եկեղեցիներ, որոնցից շատերին կից գործում էին նաև վանական դպրոցներ: Այդ հոգևոր կենտրոններն էին՝ Սյունյաց (Տաթևի) նախկին Մեծ անապատը, Ագուլիսի Ս. Թովմա առաքյալի վանքը, Շոռոթի եկեղեցիներն ու տեղի դպրոցը, Աստապատի կարմիր վանքը, Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատը, Շինուհայրի ու Կարբիի կուսանաց անապատները, Հովհաննավանքի և Սաղմոսավանքի բարձրակարգ դպրոցները և այլն: Շնորհաշատ վարդապետի այս լուսավորյալ գործունեության լավագույն վկաներն ինչպես մատենագրության մեջ պահպանված տեղեկություններն են, այնպես էլ նրա աշակերտների ձեռքով գրված մատյանների հիշատակարանները, որոնցից շատերը մեզ են հասել: Ասվածի վառ օրինակներից է ՄՄ Հմր 7700 Ավետարանի (գրված 1237 թ., Սսում) նորոգման 1625 թվակիր հիշատակարանը, որտեղ գրիչ Մելքիսեթ երեցը ներկայացնում է Մովսես Տաթևացու առաքելության ողջ նկարագիրը՝ Մովսես Տաթևացին «պատարագէր եւ զայլսն ուսուցանէր, շինեաց եկեղեցիս եւ կարգէր քահանայս եւ սարկաւագունս, այլ դպիրս եւ սաղմոսերգոյս, շինեաց բազում վանորայս եւ անապատս եւ կրաւնաւորս, որք ի յարանց եւ որք ի կանանց հաստատեաց ի նոսայ բիւրոց՝ Ռ.-ից (1000), Ճ.-ից (100), Ծ.-ից (50), այլ եւ զարդարեաց զեկեղեցիս Հայոց ի յոսկոյ եւ յարծաթոյ, որ ամենայն անաւթ խամ ոչ գոյր, զոր Տէր Աստուած զինքն ջահ անշիջանելի պահեսցէ աստ եւ ի հանդերձեալսն. ամէն»[170]: Ենթադրելի է, որ հիշատակարանը գրվել է Երևանի հենց Ս. Անանիա առաքյալի անապատում, Մովսես Տաթևացու վարդապետության ծաղկուն շրջանում, ինչը թույլ է տվել գրչին սեղմ տողերում հրաշալի կերպով արտացոլել մեծ բարեբունապետի նվիրումի ողջ էությունը:

Մովսես Տաթևացու առաքելության հիմնական նպատակն, ըստ էության, անապատական շարժմանը զարկ տալով՝ երկրում լուսավորություն տարածելն էր, ինչի հետևանքով էլ ժամանակակիցները նրան իրավամբ բնորոշեցին որպես մեր «երկրորդ Լուսավորիչ»: Անապատների կառուցումը Մովսես Տաթևացու համար զուտ ճգնակյաց կյանքը զարգացնելը չէր, այլ սրանց միջոցով ուսյալ հոգևորականներ կերտելն ու գիտության ջահը վառելը, ինչի ապացույցը վանական դպրոցների ստեղծման մասսայականությունն էր: Սրանցից շատերը դարձան նաև գրչության կենտրոններ, որոնցից մեզ են հասել բազմաթիվ ձեռագիր մատյաններ. շատերը պահվում են Մաշտոցյան Մատենադարանում:

ՄՄ Հմր 1099 ձեռագրի 1631 թվակիր հիշատակարանում գրիչը թվարկում է կաթողիկոս Մովսես Տաթևացու իրականացրած աստվածահաճո գործերը, որոնց միջոցով նա «...պայծառացոյց զազգս Հայոց եւ զարդարեաց զեկեղեցիս՝ նորոգելով բազում եւ յոլով վանորայս եւ մենաստանս..., զդաշտս եւ զանտառս ծաղկեցոյց կուսակրօն ճգնաւորօք եւ սուրբ միանձնացելովք, մաքուր կուսանօք եւ աստուածահաճոյ անապատաւորօք, որովք հաստատեցան կարգք եւ սահմանք ժամատեղաց, դ[պ]րատունք եւ ժամակարգութիւնք...»[171]: Նույն թվականի մեկ այլ ձեռագրի հիշատակարանում գրիչ Սիմեոն տիրացուն առավել գունեղ է ներկայացնում Մովսես Տաթևացու գործը՝ այն համեմատելով եգիպտոսի անապատի հետ. «...լուսափայլ բանիւն իւրով եւ յորդառատ քարոզիւն ոչ միայն զքաղաքս եւ զշէնս, այլ եւ զանապատս, եւ զդաշտս՝ հանդերձ անտառօք, ծաղկեցոյց եւ վայելչացոյց, իբրև զանապատն Եգիպտոսի..., այլ եւ արար

[170] ԺԷ. դ. հիշ-ք, Բ., էջ 184–185, Հմր 268:

[171] Նույն տեղում, էջ 408, Հմր 597, տե՛ս նաև Մայր ցուցակ ՄՄ, Դ., կազմեցին՝ **Ա. Քեօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսէեան,** Երևան, 2008, այուն 306:

դպրատունս եւ գրատունս առ ի վարժումն մանկանց որդոց Սիոնի»[172]*: Այս հիշատակարանում հատակ տարբերակված են դպրատունն ու գրատունը. Առաջինը՝ դպրոց, երկրորդը՝ ձեռագրեր ընդօրինակելու վայր կամ մատենադարան իմաստներով:*

Վաղարշապատում ընդօրինակված ՄՄ Հմր 75 ժողովածուի 1631 թ. հիշատակարանը ևս տեղեկություններ է հաղորդում Մովսես Տաթևացու իրագործած բարենորոգչական աշխատանքների մասին, որոնց թվում՝ «արար բազում անապատս եւ կարգեաց դպրոցս»[173]*, կամ ՄՄ Հմր 778 ձեռագրում Մկրտիչ գրիչը թվարկում է Մովսեսի իրականացրած աշխատանքները, ի շարս որոնց «...բազմացոյց զժառանգաւորս եկեղեցոյ, եւ կարգեաց դպրատունս, եւ այլ եւս բազում ուղղութիւնս...»*[174]*, իսկ Հովհաննավանքում գրված ՄՄ Հմր 2381 ձեռագրի հիշատակարանի գրիչ Ղուկաս վարդապետը մանրամասն շարադրում է գրչագրի պատվիրատու-ստացող Մովսես Տաթևացու գործունեությունը և ձեռագրի գրչության վայրը նկարագրելիս՝ հավելում. «...որ է այժմ դպրոց, եւ ժողովեալ կան յոլով համբակատիպ մանկունք ի յուսումն եւ ի վերծանութիւն աստուածաշունչ գրոց, հրամանաւ եւ ծախիւք տեառն Մովսէսի սրբազան կաթուղիկոսի...»*[175]*: Հայտնի է, որ Հովհաննավանքի դպրոցը Մովսես Տաթևացու ցանկությամբ հետագայում տնօրինել է նրա աշակերտ ու անձնական քարտուղար Զաքարիա Վաղարշապատցին, որի ընդօրինակած ձեռագրերին դեռ կանդրադառնանք:*

Ուշագրավն այն է, որ Ղուկաս գրչի ծավալուն հիշատակարանում վկայված է նաև Ս. Անանիայի անապատի դպրոցը, որտեղ «...ժողովեցան առ ոտս սորայ բազում կրաւնաւորք եւ գրոց աշակերտեալ մանկունք: Եւ սայ (Մովսես Տաթևացին – Ա. Հ.) յոլով քան թէ սակաւ տքնութեամբ զբանս օրինաց ուսուցանէր, մանաւանդ թէ եւ գործով կատարելով զանձն տայր օրինակ ամենեցուն...»[176]*: Հիշատակարանի վերջում Ղուկաս գրիչը ընթերցողներից խնդրում է վերստին հիշել ձեռագրի պատվիրատու և մեր երկրորդ լուսավորիչ Մովսես Տաթևացուն, նրա աշակերտներին ու համշիրակ, այսինքն՝ կաթնակից եղբայրներին, որոնք են. «...զյոգնահանճար եւ բազմարուեստ վեհաշատուր վարդապետն Կեսարացի եւ զմաքրասնունդ, զշահողն ամենայնի՝ զՓիլիպպոս վարդապետն, որ յոլով եւ բազմադիմի երկ եւ աշխատանք ունին ընդ անարժանութիւնս մեր՝ ուսմամբ եւ ոգեշահ խրատով..., զխարազնազգեացն զԹումայ վարդապետն, եւ զԱրիստակէս վարդապետն, եւ զքաջ տելետինն զՄելքիսէթ վարդապետն, եւ Զաքարիա վարդապետն, եւ զմիւս հաշատուր վարդապետն, եւ զՅակոբ վարդապետն, եւ զկայծակնամաքուրն զտէր Յեսային, որ յոլով աշխատի ի վերա միաբանից եղբարցս, եւ զաղօթասէր եւ զբաղձալին բնաւից զհամշիրաքն իմ՝ զտէր Ղազարն, եւ զտէր Յակոբն, եւ զտէր Գրիգորն, եւ զտէր Սիմոնն, եւ զայլ համաշունչ եւ զմիախորհուրդ եղբարքս եւ զաշակերտեալ մանկունքս, որ կան կաճառեալ եւ ժողովեալ ի համալսարանի կաթողիկոսարանիս...»*[177]*:*

Մովսես Տաթևացու աշակերտների ու միաբան եղբայրների անունները կարդում

---

[172] Նույն տեղում, էջ 409, Հմր 598:

[173] Նույն տեղում, էջ 419, Հմր 617, տե՛ս նաև Մայր ցուցակ ՄՄ, Ա., կազմեցին՝ **Օ. Եգանյան, Ա. Չեյթունյան, Փ. Անթաբյան,** Երևան, 1984, այուն 306:

[174] Նույն տեղում, էջ 603, Հմր 887, տե՛ս նաև Մայր ցուցակ ՄՄ, Գ., այուն 694:

[175] Նույն տեղում, էջ 424, Հմր 624/ա, տե՛ս նաև Մայր ցուցակ ՄՄ, Է., այուն 1148:

[176] Նույն տեղում, էջ 424–425, Հմր 624/ա, տե՛ս նաև Մայր ցուցակ ՄՄ, Է., այուն 1148:

[177] Նույն տեղում, էջ 430–431, Հմր 624/ա, տե՛ս նաև Մայր ցուցակ ՄՄ, Է., այուն 1155:

ենք նաև այլ ձեռագրերի հիշատակարաններում (ՄՄ Հ՞թ 2654, 7120 և այլն), բայց Գրիգոր երեց Ջուղայեցու ընդօրինակած ՄՄ Հ՞թ 5397 ժամագրքի 1634 թվակիր հիշատակարանը ավելի քան ուշագրավ է, քանի որ գրիչն այստեղ ոչ միայն թվարկում է Մովսես Տաթևացու հոգևոր եղբայրների անունները, այլև մասնավորեցնում նրանցից շատերի պաշտոնն ու գործունեության ոլորտը: Հիշատակելով Մովսես Տաթևացու՝ էջմիածնում իրականացրած նորոգչական աշխատանքները՝ գրիչն այնուհետ շարունակում է. «Եւ կարգեաց Յոհաննավանքն դպրատուն, եւ ունէր գաւազանաւոր վարդապետ Խաչատուրն, եւ է պայծառացեալ Հսպայհան՝ դպրատներօք, դասատնօք եւ ժե. (15) եկեղեցօք եւ Բ. (2) անապատիւք՝ մարդկաց եւ կուսանաց: Եւ միւս վարդապետ Թովմա, որ է պայծառացեալ նա Շըրվան ու Շամախի, նման Խաչատուր վարդապետին: Եւ միւս վարդապետ Ղուկա[ս] ագէս, որ է առաջնորդ եւ հայր Ըստաթևոյ անապատին: Եւ միւս վարդապետք Զաքարիայն, Եսային, Պողոսն, Ղուկասն, Մինասն, Գր[ի]գորն, Խաչատուրն, Յակոբն, Սիմէոնն, Ղազարն եւ Յակոբն. եւ է գլուխ վարդապետ տէր Փիլիպոսն, որ յայսմ ամի՝ ՌՁ. եւ Գ.իս (1634) Մովսէսն փոխեցաւ բարի մահուամբ առ Քրիստոս, եւ Փիլիպոսն նստաւ յաթոռ հայրապետութեան փոխանակ տէր Մովսէսին»[178]: Ինչպես տեսնում ենք, Մովսես Տաթևացու մահվան թվականը աղբյուրներում հակասական է, սակայն, վերը պարզեցինք, որ ստույգ պետք է համարել 1633-ը: Հիշատակված վարդապետներից Խաչատուրը Մովսեսի աշակերտներից միևնույն կեսարացին է, որի անունը հիշատակարաններում քանիցս վկայակոչեցինք: Հետաքրքիր է, որ ուսուցչի համառոտ կենսագրությունը շարադրած գրիչներից մեկն էլ հենց Խաչատուր վարդապետն է, որն ի թիվս Մովսես Տաթևացու իրագործած բազում շահեկան աշխատանքների՝ 1638 թ. տպագրված Սաղմոսարանի հիշատակարանում հատուկ շեշտում է նաև նրա ներդրումը դպրոցաշինության ոլորտում. «յամենայն տեղիս դասատունս եւ դպրոցս կարգեաց եւ լուսաւորեաց զազգս Հայոց, եւ յարաժամ ցանկայր տպագրութեանս, զի յառաւոտենէ գրոց ամենեքեան դիւրաւ վարժեսցին, սակայն չեղև ձեռնհաս, զի փոխեցաւ աստի յանանց կեանսն՝ առ ցանկալին իւր...»[179]: Խաչատուր գրիչն այնուհետ նշում է, որ Մովսեսի հաջորդ և նրա «ձեռնասուն» աշակերտ Փիլիպոս Աղբակեցու օրոք «...եղեւ տպագրութիւնս ի քաղաքն Շօշ, յանապատն Ջուղայոյ, ի թվին ՌՁ. եւ է. (1638), ձեռամբ նուաստ Խաչատուր վարդապետի կեսարացւոյ»[180]: Այսինքն, 1638 թ. Սաղմոսարանը տպագրվել է Նոր Ջուղայում, ուր «Ձիշատակարան գրոցս» խորագրի ներքո տեղ է գտել նաև Մովսես Տաթևացու կյանքն ու գործը հակիրճ ներկայացնող նշված հիշատակարանը[181]: Առաքել Դավրիժեցու Պատմության քննական բնագիրը կազմած Լենա Խանլարյանը ծանոթագրում է, որ Խաչատուր վրդ. Կեսարացին (1590–1646) Մովսես Տաթևացու ավագ աշակերտն էր, որը մի որոշ ժամանակ աշակերտել է նաև Գրիգոր Դարանաղցուն: 1620–1646 թթ. եղել է Նոր Ջուղայի հայկական համայնքի հոգևոր առաջնորդը, այստեղ դպրոց բացել, տպարան հիմնել, որը համարվել է առաջինը Միջին Արևելքում[182]:

[178] Նույն տեղում, էջ 554, Հ՞թ 825/բ:

[179] Նույն տեղում, էջ 865, Հ՞թ 1267:

[180] Նույն տեղում:

[181] Հիշատակարանն ամբողջությամբ տե՛ս Հայ գիրքը 1512–1800 թվականներին, կազմեցին՝ **Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավալյան**, Երևան, 1988, էջ 22ա:

[182] **Առաքել Դաւրիժեցի**, էջ 515, ծնթ. 135:

Բերված օրինակները պարզորոշ բնութագրում են Մովսես Տաթևացու իրականացրած բազմատեսակ աշխատանքների կազմում նաև դպրոցաշինությանն ու գրչարվեստի զարգացմանն ուղղված անխոնջ ջանքերը: Ներկայացված օրինակներն էլ բավական են դրանցում համոզվելու համար, առավել ևս, որ այս ոլորտն արտացոլված է նաև Մովսես Տաթևացու վերահիմնած Ս. Անանիա առաքյալի անապատի գրչության դպրոցից մեզ հասած ձեռագրերի հիշատակարաններում, որոնք նախորդների պես գրված են հենց նրա աշակերտների ձեռքով:

Ուրախալին այն է, որ Մովսեսի օրինակին հետևեցին նաև նրա աշակերտները, և նրանցից յուրաքանչյուրը ոչ միայն համալրեց ժէ. դարի մեր շնորհաշատ գրիչների շարքը, այլև ջանք ու եռանդ չխնայեց նոր անապատների ու գրչօջախների հիմնադրման ուղղությամբ: Այս հարցում անուրանալի վաստակ ունեն Մովսես Տաթևացու աշակերտներից Զաքարիա վրդ. Վաղարշապատցին՝ Հովհաննավանքի դպրոցում, Հովհաննես եպս. Կարբեցին՝ Սաղմոսավանքում և Ս. Գրիգոր Լուսավորչի անապատում, Արիստակես վրդ. Շամբեցին՝ Տաթևի (Սյունյաց) ու Բեխի (Տանձափարախի) անապատներում, Խաչատուր վրդ. Կեսարացին՝ Նոր Ջուղայում, Վարդան քահանան՝ Շոռոթի անապատում, Ներսես Մոկացին՝ Լիմում, Կարապետ եպիսկոպոսը՝ Սևանավանքում, Կիրակոս Տրապիզոնցին և Թոմաս Տաթևացին՝ Հոշանց անապատում, Դավիթ Շամքորեցին՝ Զարեհավանքի անապատում և այլք:

Նշենք Մովսես Տաթևացու անվան հետ կապված մի հետաքրքիր հիշատակություն ևս, բայց այս մեկը՝ վիմագրական: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում է թաղված Մովսես Տաթևացու եղբորորդին՝ դարձյալ Մովսես վարդապետ Տաթևացին (մահ. 1696 թ.), որի եռատող տապանագիրն ունի հետևյալ բովանդակությունը. «Այս է տապան Մովսէս վարդապետին Տաթևացոն, որ էր եղբօրորդի տեառն Մովսէսի հայրապետին, որ էր նորոգող Սուրբ Աթոռոյս Էջմիածնիս, թվիս ՌՃԽԵ. (1696)»[183]: Տապանագրում ուշագրավը Մովսես Տաթևացի հայրապետին «իբրև նորոգող Ս. Էջմիածնի» ձևով հիշատակումն է:

* * *

Դառնալով Մովսես Տաթևացու մատենագրական ժառանգությանը՝ պետք է նշենք, որ ուսումնասիրողներից նրա այդօրինակ գործունեությանն առավել ընդգրկուն անդրադարձել է Հ. Ներսես Ակինյանը, որն իրավամբ գրում է. «Ձենք կըրնար անձնաւորութենէ մը, որ բովանդակ կեանքը քարոզչական, ուսուցչական, շինարարական եւ վարչական գործունէութեան ասպարէզի վրայ մաշեց, պահանջել, որ նաեւ մատենագրութեան ընծայէր իւր տրիտուրը: Իր գրքերն են իր աշակերտները, իր շինարարական գործերը, ամբողջ հայ կեանքի վերազարթնումն եւ հայ Եկեղեցւոյ կազմակերպութիւնը»[184]: Այդուհանդերձ, Ն. Ակինյանն իր աշխատության էջերում տարբեր առիթներով վկայակոչում է նախ Մովսես Տաթևացու՝ դեռևս երիտասարդ գրչին պատկանող «Ողբ ի մահն Սրապիոն վարդապետին» աշխատությունը[185], որտեղ Մովսես վարդապետը

[183] **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, էջ 146, արձ. 193:

[184] **Ն. Ակինեան,** Մովսէս Գ. Տաթեւացի, էջ 406:

[185] Այս չափածո ստեղծագործությունը «Ողբ ի մահն Սրապիոն կաթողիկոսի, Մովսէսի միոյ, որ է տեղեաւ Տաթեւացի, սակաւ բան» խորագրով հրատարակվել է նաև հետևյալ ժողովածուի երկրորդ հատորում. Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI–XVII դդ.), հ. երկրորդ, աշխատ.՝ **Հ. Սահակյանի,** Երևան, 1987, էջ 71–77, ընդ. 832:

մասամբ արձակ, մասամբ չափածո ոճով սգում է իր մեծ ուսուցչի մահը, ինչպես նաև անդրադառնում է «Օրհնութիւնք եւ քաղուածք տօնից եւ տէրունականաց եւ ամենայն սրբոց» գրվածքին[186] ու թղթակցություններին՝ ուղղված իր ուսուցիչ, Կ. Պոլսի երբեմնի պատրիարք Գրիգոր Կեսարացուն (1601–1608, 1611–1621, 1623–1626), Նախիջևանի առաջնորդ Օգոստինոս Բաջենցին, Լեհաց Վլադիսլավ Դ. (Ը.) թագավորին (1632–1648), Հռոմի Ուրբանոս Ը. պապին (1623–1644), ժամանակագիր Գրիգոր Դարանաղցուն: Նրա գրչի է պատկանում նաև Մաղարդա Ս. Ստեփանոս Նախավկա վանքի հոգևոր դասին և Ջուղայի ու Աստապատի աշխարհիկ ու հոգևոր համայնքներին ուղղված 1631 թվակիր կոնդակը[187]:

Ինչ վերաբերում է Մովսես Տաթևացու մատենագրական ժառանգության մաս կազմող փաստաթղթերին, ապա դրանց ստեղծումը հիմնականում պայմանավորված է արտաքին եկեղեցական հարցերով, մասնավորապես՝ կաթողիկոսական աթոռների միջև ծագած խմորումներով և, հատկապես, լեհահայոց խնդիրներով: Մովսեսի նամակագրությունից քիչ բան է պահպանվել, սակայն, եղածներն էլ պարզորոշ

բնութագրում են Հայ եկեղեցու և նրա հավատավոր ժողովրդի հոգսերով ապրող ու մաքառող հայրապետի հետևողականությունը հայկական արժեքների պահպանման ու ժողովուրդների բարեկեցության նկատմամբ: Ինչպես Սիմեոն Լեհացին[188] և Առաքել Դավրիժեցի պատմագիրը[189], այնպես էլ ուսումնասիրողներից Մաղաքիա արք. Օրմանյանը, հետագայում նաև Հ. Ներսես Ակինյանն անդրադարձել են Մովսեսի՝ լեհահայոց խնդիրներն արծարծած թղթերի բովանդակությանը և, մասնավորապես, Մելքիսեդեկ կաթողիկոսի կողմից կաշառքով եպիսկոպոս ձեռնադրված լեհահայոց առաջնորդ Նիկոլ Թորոսովիչի հակաքրիստոնեական գործունեությանը, որի օրոք լայն ծավալ է ստացել հայերի բռնի կաթոլիկացումը: Պատահական չէ, որ «իւրովքիք բացարձակապէս դէմ դարձած էին Նիկոլի, եւ ոչ միայն իրմէ կը խորշէին, այլ եւ խորհէին դատաւորքն դնել զնա ի բանտի, եւ հանել ի նմանէ զաստիճան արքեպիսկոպոսութեան»[190]: Հիշյալ հանգամանքների ծնունդ են Մովսեսի և Գրիգոր վարդապետ Կեսարացու թղթակցությունները, քանի որ վերջինս իր երբեմնի աշակերտ Մովսես Տաթևացի կաթողիկոսին խնդրել էր բանադրել Նիկոլին, որը կարողացել էր բռնի տիրանալ տեղի վանքերին ու եկեղեցիներին, բայց ոչ ժողովրդին: Հետևելով Գրիգոր վարդապետին՝ Մովսես կաթողիկոսը Նիկոլ եպիսկոպոսի դեմ բա-

---

[186] Ն. Ակինյանի հաղորդմամբ՝ այս գործը օրհնությունների և նրանց կից երգելիք քաղվածքների ցուցակ է, որի սկզբնապատճառն, անշուշտ, Մովսես Տաթևացին չէ, այլ ինչպես նրա աշակերտներից Խաչատուր Կեսարացին է նկատել, իր մեծ վարդապետը տասը շարականներ կանոնավորեց ու սահմանեց ասել օրհնության կարգերի ընթացքում (**Ն. Ակինեան,** նշվ. աշխ., էջ 171–173):

[187] Նույն տեղում, էջ 407–408: Մաշտոցյան Մատենադարանի արխիվում են պահվում նաև Մովսես Տաթևացու անվանակիր 1628–1633 թթ. մի քանի կոնդակներ՝ ուղղված Աստապատի հոգևոր դասին, տեղի Հակոբ վարդապետին, Հավուց թառի վիճակի բնակչությանը և այլն (ՄՄ անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, Հմր 29բ, էջ 56ա, 57ա):

[188] **Սիմէոն Լեհացի,** էջ 399–405, 410–417:

[189] Առաքել Դավրիժեցին իր Պատմագրության մեջ մի առանձին գլուխ է նվիրել լեհահայերի կրած զրկանքներին, որտեղ մանրամասն շարադրել է այդ նեղությունների հանգամանքներն ու Մովսես Տաթևացու առաքելությունը՝ օգտվելով կաթողիկոսական դիվանի վավերագրերից ու երթևեկող հոգևորականների հաղորդագրություններից (**Առաքել Դաւրիժեցի,** էջ 293–311, գլ. ԻԸ.):

[190] **Մաղաքիա արք. Օրմանեան,** Ազգապատում, հ. Բ., սյուն 2807:

նադրական է գրել[191]: Այնուհետ, Նիկոլ Թորոսովիչի տմարդի արարքները կաթողիկոսին ներկայացնելու նպատակով էջմիածին է ժամանել լեհահայոց պատվիրակությունը՝ Սիմեոն քահանայի գլխավորությամբ: Այս հանգամանքներում է կաթողիկոսը որոշում կայացրել նամակներ հղել ինչպես Լեհաց Վլադիսլավ Թագավորին, այնպես էլ Հռոմի Ուրբանոս Ը. պապին. «Փութաց Մովսէս կաթողիկոս դարման մը խորհիլ յանկարծական մրրիկը փարատելու եւ խաղաղ պայմանները վերահաստատելու համար: Խորհեցաւ դիմել թղթերով Ուրբանոս Ը. քահանայապետին եւ Վլատիսլաւ թագաւորին, հայցելու անոնց միջնորդութիւնը ի զգաստութիւն յորդորելու համար Նիկոլ եպիսկոպոսը, իսկ հայ ժողովրդեան գրել մխիթարական եւ խրատական թուղթեր»[192]:

Մովսես Տաթեւացի կաթողիկոսը կանխաւ միջնորդագիր է հղել նաև 1630 թ. Հռոմի պապից Նախիջևանում արքեպիսկոպոս ձեռնադրված Օգոստինոս Բաջենցին, որին ևս մեծ վշտով ներկայացնում է լեհահայոց ծանր վիճակն ու Թորոս եպիսկոպոսի ոտնձգությունները: Թղթի բովանդակությունը հանգամանորեն մեկնել է Հ. Ներսես Ակինյանը՝ «Թուղթ Մովսէս կաթողիկոսի առ արքեպիսկոպոսն Նախիջևանի» խորագրով[193]: Նա մանրամասն տեղեկություններ է հաղորդում նաև 1631 թ. մայիսից Հռոմի Ուրբանոս Ը. պապի հրամանով Հայաստան ժամանած լատին կրոնավոր Պողոս Փիրոմալլիի մասին, որը ստանձնել էր Նախիջևանում բացված դպրատան վարիչի պաշտոնը և շատ չանցած մեղադրական գրել տեղի առաջնորդ Օգոստինոս Բաջենցի հասցեին: Սրանից հետո արքեպիսկոպոսը պատժել է Փիրոմալլիին և բանտարկել նրան: Հետաքրքիր է, որ ազատվելով բանտից, Փիրոմալլին Նախիջևանից հասկանալի պատճառներով հեռանում է, գալիս Երևան, ըստ էության՝ Ս. Անանիա առաքյալի անապատ, հանդիպում կաթողիկոսական տեղապահ Փիլիպոս վարդապետին և հյուրասիրության արժանանում[194]:

Ինչ վերաբերում է Լեհաց Վլադիսլավ Դ. (Ը.) թագավորին ուղղված թղթին (տե՛ս վավ. 1), որը գրվել է 1632 թ. օգոստոսին Մովսես Տաթևացու ձեռքով[195], ապա սրա հայերեն բնօրինակն ըստ Ն. Ակինյանի հաղորդման՝ պահվում է Վարշավայում[196]: Առաջին անգամ այն հրատարակել է Մ. Մսերյանցը[197], ապա՝ Դ. Ալիշանը[198]: Հայտնի է, որ չնայած Վլադիսլավ թագավորի ցանկությանը, իբրև աշխարհական՝ նա ի զորու չի եղել հարթել ստեղծված իրավիճակը[199]: Այլ են հանգամանքները Հռոմի

---

[191] **Առաքել Դաւրիժեցի,** էջ 297:

[192] **Ն. Ակինեան,** Մովսէս Գ. Տաթեւացի, էջ 275:

[193] Նույն տեղում, էջ 276–279:

[194] Նույն տեղում, էջ 376–378:

[195] Կոնդակի վերջին տողը, որ է՝ «Գրեցաւ գիրս ի դուռն Սբ. Էջմիածնայ, ի թվին ՌՁԱ. (1632) աւգոստոս ամս», ապա հաջորդող երկտող գրությունը՝ «Ես՝ Մովսէս կաթողիկոս, գրեցի ձեռամբ իմով», հաստատում է թղթի՝ Մովսես Տաթևացու ինքնագիրը լինելու հանգամանքը, ըստ այդմ՝ այն ուշագրավ փաստ է նաև Մովսես Տաթևացու մահվան թվականի հստակեցման առումով, այսինքն՝ լիովին հավանական կարելի է համարել մահվան ոչ թե 1632 թ., այլ 1633 թ. իսկությունը:

[196] **Ն. Ակինեան,** Մովսէս Գ. Տաթեւացի, էջ 279:

[197] **[Մ. Մսերեանց],** Մովսիսի Ե. (=Գ.) կաթողիկոսի Թուղթ գրեալ առ Վլատիշլաւ արքայ Լեհաց ի թուին Հայոց ՌՁԱ. (յամի Տեառն 1632) յԱւգոստոս ամսոյ 30, «Ճռաքաղ», 1860, Բ. հատոր, Ե. տետրակ, էջ 72–76:

[198] **Հ. Դևոնդ Ալիշան,** Կամենից. տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ հաւաստչեայ յաւելուածովք, Վենետիկ, 1896, էջ 241–243:

[199] Մովսես Տաթևացու կյանքն ու գործը ուսումնասիրողներից Կարապետ եպս. Ամատունին գրում է, որ Լեհաց Վլադիսլավ թագավորը «...զիջող քաղաքականութիւն որդեգրած էր իր Տէրութեան Օրթոտոքս համայնքներուն հանդէպ, 28

Ուրբանոս Ը. պապի դիրքորոշման հարցում, որին Սիմեոն քահանան հանձնել էր Մովսես Տաթեւացի կաթողիկոսի 1632 թվակիր երկրորդ թուղթը (Քաղուածք էջմիածնի Մովսէս կաթողիկոսի 19 օգոստոս, 1633 (Թերեւս՝ 1632) առ Ուրբանոս Ը. քահանայապետ գրած նամակէն[200]): Մովսես կաթողիկոսի ջանքերն ապարդյուն անցան, փոխարենը կաթոլիկ եկեղեցու քահանայապետը ոչ միայն չմիջամտեց լեհահայոց խնդիրներին, այլև իր մոտ ժամանած Նիկոլ եպիսկոպոսին արժանացրեց արքունյան պատվի և այդ հաստատեց համապատասխան կոնդակով[201]: Կարելի է ասել, որ Մովսես Տաթեւացու կաթողիկոսության ժամանակաշրջանը լիովին համընկավ Լվովի հայոց թեմի դեմ պապականության և տեղի կաթոլիկների աննախադեպ ճնշումներին:

Հռոմեականները հաճախ Մովսեսին անտեղի հռոմեադավան են կարծել, մինչդեռ Մ. Օրմանյան պատրիարքը հստակ նշում է, որ «Մովսեսի նամակներուն նպատակը ոչ հպատակութիւն յայտնել էր, եւ ոչ հռոմէադաւան սկզբունքներու հաւանութիւն տալ, ինչպէս հռոմէականներ կը սիրեն մեկնել, այլ նա ողոք լեզուով եւ շահեցողական ոճով կը խնդրէր, ողորմեցարուք դառնացեալ ժողովրդեանն, եւ շնորհեցէք զեկեղեցին յինքեանս»[202]: Մովսես Տաթեւացու նամակներում պահանջը մեկն էր. Լեհաստանի հայադավաններին չնեղել և գոնե մի եկեղեցի թողնել նրանց հոգևոր պահանջմունքները բավարարելու համար: Մովսես Տաթեւացու խնդրանքը լեհաց թագավորից և Հռոմի պապից Մ. Օրմանյանը մեկնում է իբրև իր ազգակիցների և դավանակիցների պաշտպանություն. «...որպէսզի անոնց վրայ ստիպում եւ բռնութիւն չգործուի դաւանութիւննին փոխելու, եւ հռոմէականութիւն կամ լատինականութիւն կամ քաղկեդոնականութիւն ընդունելու, այլ ազատ թողուին իրենց հայրենական դաւանութեան մէջ, որ կատարելապէս ուղղափառ եւ ճշմարիտ է»[203]:

Գալով Մովսես Տաթեւացու մատենագրական ժառանգության այլ բնույթի աշխատություններին՝ հարկ է նշել նախ նրան վերագրվող՝ ժամակարգության մեջ առկա փոփոխությունը: Դեռևս Առաքել պատմագիրն ակնարկում է, որ եկեղեցական բարեկարգությունների շարքում Մովսես Տաթեւացին պայծառացրել և հաստատուն հիմքերի վրա է դրել նաև ժամակարգությունը, ինչից Մ. Օրմանյանը ենթադրում է, որ Մովսեսը եթե նոր կարգեր չի հաստատել, ապա գոնե եղածներում շտկումներ է արել[204]: Այլ է «Օրհնութիւն շարականներուն» քաղվածքը, որը նրա ավագ աշակերտ և գործակից Խաչատուր Կեսարացու հաղորդմամբ՝ Մովսեսի սահմանածն է: Այս հարցում ևս Մ. Օրմանյանը թերակարծիք է, քանի որ Սարգիս եպս. Սաղմոսավանցին դեռևս Սյունյաց Մեծ անապատում սահմանել էր նմանօրինակ կարգ, որը հետագայում միայն Մովսես Տաթեւացին ընդարձակել և ձևափոխել է[205]: Ն. Ակինյանի հաղորդմամբ՝ այս գործը օրհնությունների և նրանց կից երգելիք քաղվածքների ցուցակ է, որ կզբնապատ-

Սեպտեմբեր 1632 թուակիրով՝ Նիկողայոս Արքեպ.-ը չափաւորութեան կը հրաւիրէ, իսկ 15 Մայիս 1633-ին, իր թագադրութեան առիթով, կը հաստատէ նուիրակներու քննիչ Յանձնախումբ մը, լուծելու համար հայ թեմին մէջ ծագած խնդիրները» (**Կարապետ եպս. Ամատունի,** Մովսէս Գ. Տաթեւացի կաթողիկոս Էջմիածնի, էջ 71–72):

[200] **Ն. Ակինեան,** Մովսէս Գ. Տաթեւացի, էջ 281:

[201] **Հ. Ղեւոնդ Ալիշան,** Կամենից, էջ 139: **Ն. Ակինեան,** նշվ. աշխ., էջ 284:

[202] **Մաղաքիա արք. Օրմանեան,** Ազգապատում, հ. Բ., սյուն 2812:

[203] Նույն տեղում, սյուն 2814:

[204] **Մաղաքիա արք. Օրմանեան,** Ազգապատում, հ. Բ., սյուն 2802:

[205] Նույն տեղում, սյուն 2803:

ճառն, անշուշտ, Մովսես Տաթևացին չէ, այլ ինչպես նրա աշակերտներից Խաչատուր Կեսարացին է նկատել, իր մեծ վարդապետը տասը շարականներ կանոնավորեց ու սահմանեց ասել օրհնության կարգերի ընթացքում[206]:

Թղթակցությունների շարքում հայտնի են նաև Մովսեսի գրչին պատկանող ևս երկու նամակ՝ ուղղված Գրիգոր Դարանաղցուն. այս մասին վկայող սկզբնաղբյուրը հենց Գրիգոր Դարանաղցին է, որի հաղորդմամբ «...Տէր Մովսէս կաթողիկոսն լուսահոգին երկու նամակ սիրով ողջունիւ եւ յորդորական բանիւք բազմօք առ ինձ ուղարկել՝ եթէ կարողութիւն ունիս գալոյ, ես, որ մարմնաւոր աչօք տեսանեմք զիրեարս»[207]:

Առանց որևէ աղբյուր վկայակոչելու՝ Հր. Աճառյանը Մովսես Տաթևացու գրչին է վերագրում ևս մեկական գանձ և տաղ[208]:

ՓԻԼԻՊՈՍ Ա. ԱՂԲԱԿԵՑԻ

Ինչպես վերը նշեցինք, հայրապետական գահին Մովսես Տաթևացուն հաջորդեց նրա աշակերտներից Փիլիպոս եպս. Աղբակեցին, որը ոչ միայն աչքի ընկավ առաքինի վարքով ու շինարարական գործունեությամբ, այլև դարձավ իր ուսուցչի արժանի շարունակողը՝ կրելով Սքանչելագործ պատվանունը: Նրա կյանքի ու գործունեության ամփոփ նկարագրությունը հաղորդում է Առաքել Դավրիժեցի պատմագիրը, որից էլ՝ Սիմեոն Երևանցին, Հ. Միքայել Չամչյանցը, Մաղաքիա արք. Օրմանյանը և այլք: Սակայն, պետք է հավելենք, որ Մովսես Տաթևացու սիրասուն աշակերտ Փիլիպոս վարդապետի անունը քանիցս հիշատակվում է նաև ժամանակի ձեռագրերի հիշատակարաններում. ՄՄ Հ՝ր 2654 ձեռագրի գրիչ Գրիգորը նշում է, որ այն ընդօրինակել է 1631 թ. «...ի կաթողիկոսութեանն սրբազան եւ քաջ հռետորի Մովսէսի եւ աշակերտաց նորա՝ Փիլիպոս վարդապետի եւ Խաչատուրի»[209]: Բացի այն, որ իր կաթողիկոսության օրոք գրված ձեռագրերում գրեթե ամենուր է Փիլիպոսի անվան հիշատակությունը, հետաքրքիր են նրան բնութագրող հատվածները. օրինակ՝ երզմ. Հ՝ր 2426 ձեռագրի գրիչ Աբրահամ դպիրը նշում է, որ ձեռագիրը 1636 թ. ընդօրինակել է Շաքեցի Խուբիարի որդի Ոհաննես դպիրի խնդրանքով. «...ի կաթողիկոսութեան տեառն Փիլիպպոսի, աշակերտաց տեառն Մովսէսի, որ կրկին լուսաւորեաց զա[զ]գս Հայոց...»[210]:

Վերն արդեն նշվեց, որ Փիլիպոս Աղբակեցու օրոք իրականացված լայնածավալ շինարարական աշխատանքների թվում նաև Ս. Անանիա առաքյալի անապատի վերակառուցումն էր: Փիլիպոսը ևս, որպես իր ուսուցչի երևելի աշակերտներից մեկը, մի որոշ ժամանակ կենցաղավարել էր նաև Ս. Անանիայի անապատում, և բնական է, որ 1635—1636 թթ. թուրք-պարսկական բախումներից մեծապես տուժած անապատը, որը նոր կյանք էր առել իր ուսուցչի ջանքերով, պետք է վերականգնվեր, բայց ոչ դարձյալ փայտաշեն, այլ քարով և շաղախով:

Փիլիպոս կաթողիկոսի իրականացրած հիշարժան աշխատանքներից է նաև Հովհաննավանքի բարձրագույն դպրոցը կատարելության հասցնելն ու էջմիածին տեղափոխելը, որով հիմք դրվեց նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կանոնավոր ու բազմամարդ միաբանությանը: Առաքել

---

206 **Ն. Ակինեան,** Մովսէս Գ. Տաթեւացի, էջ 171—173:

207 **Գրիգոր Դարանաղցի,** էջ 471:

208 **Հր. Աճառյան,** Հայոց անձնանունների բառարան, հ. Գ., Երևան, 1946, էջ 448 (այսուհետ՝ Անձնանունների բառարան):

209 ԺԷ. դ. հիշ-ք, Բ., էջ 406, Հ՝ր 595:

210 Նույն տեղում, էջ 860, Հ՝ր 1259:

Դավրիժեցի պատմագիրն այդ մասին հետևյալն է հաղորդում. «Եւ զդպրատունն, զոր ի Յոհաննավանք հաստատեցին, սա եւս կարի հաստատեաց եւ ուսմամբ, եւ առաքինութեամբ վարժեալ հասոյց ի կատարելութիւն, եւ չետ ամաց ինչ փոխեաց ի Յոհաննավանից եւ եբեր ի Սուրբ Էջմիածին, եւ անդ կարգեաց զդպրոցն, որ եւ ամենեքեան ուսան եւ եղեն արք պիտանիք, վարդապետք, եւ եպիսկոպոսք, եւ քահանայք»[211]:

Փիլիպոս կաթողիկոսի եկեղեցաշինական ու դպրոցաշինական բուռն գործունեության պսակը, սակայն, Վաղարշապատի մեր նշանավոր հոգևոր կենտրոնների՝ Մայր տաճար Ս. Էջմիածնի զանգակատան մասնակի կառուցումն է (ավարտը՝ Հակոբ Դ. Ջուղայեցու օրոք՝ 1657 թ.), ինչպես նաև Ս. Հռիփսիմե և Ս. Գայանե վանքերի նորոգումն ու բարեզարդումը: Այս աշխատանքների մասին մանրամասն հաղորդում են ինչպես Առաքել պատմագիրը[212], այնպես էլ տեղի վիմագրերը[213]:

Բազմարդյուն հայրապետը վախճանվել է 1655 թ. մարտի 25-ին և ամփոփվել Ս. Հռիփսիմե տաճարի հյուսիսային խորանում: Նրա գերեզմանի մարմարյա տապանաքարը տեղադրվել է Եփրեմ Ա. Ջորագեղցի կաթողիկոսի (1809–1830) օրոք, որի վրա փորագրվել է հետևյալ արձանագրությունը (նկ. 59).

ՀԱՋԱՐ ՀԱՐԻՒՐ ԶՈՐՍ ԹՈՒԻՆ /
ՄԱՐՏԻ ՔՍԱՆ ԵՒ ՀՆԳԻՆ /
ՎԱԽՃԱՆԵՑԱՒ ՀԱՒՐԱԿՅԻ /
ՏԷՐ ՓԻԼԻՊՊՈՍ ՍՔԱՆ/ՉԵԼԱԳՈՐԾ
ԿԱԹՈՒՂԻԿՈՍ / ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԵՒ / ԵԴԱՒ ՈՒԲ ՆՇԽԱՐՔ / ՆԼՈՅԲԼԱՅ
ՅԱՅՍՄ ՇԻՐՄԻ, / ՈՐՈՅ ՅԻՇԱՏԱԿՆ /
ՕՐՀՆՈՒԼԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ[214]:

ՄԵԼՔԻՍԵԹ ՎԺԱՆԵՑԻ ԵՎ ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ

Եթե սուրբ վարքով օժտված Մովսես Տաթևացի և Փիլիպոս Աղբակեցի հայրապետներն աչքի էին ընկել իբրև Հայ եկեղեցու շինարար գահակալներ, ապա նրանց ժամանակակից Մելքիսեթ Վժանեցի (հայտնի նաև Երևանցի մականվամբ) վարդապետը եղավ փիլիսոփայական մտքի կարկառուն ներկայացուցիչներից մեկը, որն արտաքին գիտությունների իրապես բարդ շտեմարանը կարողացավ ուսուցանել ինչպես Ս. Անանիայի, այնպես էլ Հովհաննավանքի ու էջմիածնի դպրոցների սաներին ու միաբաններին: Ուսյալ այս հոգևորականի մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Առաքել Դավրիժեցի պատմագիրը, համաձայն որի՝ ծագումով Արարատյան երկրի Վժան[215] գյուղից Մելքիսեթը Սյունյաց Մեծ անապատից հայտնի Ներսես վարդապետ Մոկացու (մականվամբ՝ Բեղլու) աշակերտն ու հետևորդն էր, որն իր ուսուցչի հետ մեկնեց Լիմ կղզի ու մասնակցեց տեղի անապատի կազմավորման գործին: Առաքել պատմագրի հաղորդմամբ՝ Սյունյաց կամ Տաթևի նախկին Մեծ անապատում ուսուցչություն արած Ներսես վարդապետի աշակերտներից աչքի ընկավ այն ժամանակ դեռևս աբեղա Մելքիսեթը, որը «...ոչ թուլացաւ յընթերցմանէ արտաքին գրոց, եւ ոչ մեկնեցաւ ի Ներսէս վարդապետէն...»[216]: Նույն կերպ շարունակեց նաև Լիմ անապատում. «Բայց տէր Մելքիսէթ՝ ոչ եթող զարտաքին գիրքն,

[211] **Առաքել Դաւրիժեցի,** էջ 266:

[212] Նույն տեղում, գլ. ԻԵ. (25):

[213] **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, էջ 54–55, արձ. 9–10, էջ 253, արձ. 511:

[214] Նույն տեղում, էջ 280, արձ. 551:

[215] Ներկայիս ՀՀ Արագածոտնի մարզի Ուջան գյուղն է – *Ա. Հ.*:

[216] **Առաքել Դաւրիժեցի,** էջ 314:

եւ ոչ թուլացաւ ի նորին ընթերցմանէ, այլ անդադար տքնութեամբ զցայգ եւ զցերեկ ընթեռնոյր եւ մտածէր, եւ բերեալ առ Ներսէս վարդապետն ցուցանէր, եւ հարցանէր թերեւս ուղիղ իցէ գտեալն բան»[217]*: Այսպես մեծանուն վարդապետն արագորեն տիրապետեց «արտաքին գրոց» առաջադեմ ներկայացուցիչների՝ Պորփյուրի, Արիստոտելի, Դավիթ Անհաղթի աշխատություններին, ինչպիսիք են՝ «Սահմանք», «Մտորագրութիւն», «Յաղագս մեկնութեան», «Յաղագս աշխարհաց», «Յաղագս առաքինութեանց», «Վերլուծականք» և այլն: Բազմաշնորհ աշակերտի ունակությունները տեսնելով՝ Ներսես Մոկացին իր կամքով ու լիմ անապատի միաբանության ցանկությամբ Մելքիսեթ աբեղային վարդապետական գավազան է շնորհել:*

Մելքիսեթ վրդ. Վժանեցու գործունեության հաջորդ փուլը սերտորեն կապված է Մովսես Տաթևացու կաթողիկոսության հետ, երբ նորընտիր հայրապետին տեսնելու ցանկությամբ աշխարհի տարբեր երկրներից Մայր Աթոռ Ս. էջմիածին էին ժամանում բազմաթիվ հոգևոր ու աշխարհիկ այրեր: Լիմ անապատից Ս. էջմիածին է գալիս նաև Մելքիսեթ վարդապետը, որը Միածնաէջ տաճարը երկրպագելուց հետո հանդիպում է Մովսես հայրապետին ու նրա աշակերտներին և ուրախություն պատճառում բոլորին: Առաքել պատմագրի հաղորդմամբ՝ այստեղ ևս Մելքիսեթ վարդապետը զբաղվում է ուսուցչությամբ, շատերին հիացնում իր գիտելիքներով: Բացի Ս. էջմիածնի միաբաններից՝ նրան լսելու էին գալիս նաև տարբեր վայրերից, քանզի իրապես համոզված էին, որ «... պարտ է նոցա զարտաքին գիրքն կարդալ եւ անդէն ի մտի եդեալ են հաստատութեամբ, թէ գնամք յէջմիածին առ Մելքիսեթ վարդապետն, զայլ ամենայն ինչ թողեալ՝ արտաքին գիրքն կարդամք ի նմանէ»[218]*: Պատահական չէ, որ Հովհաննավանքում գրված ՄՄ Հ՝թ 2381 ձեռագրի հիշատակարանի գրիչ Ղուկաս վարդապետը Մովսես Տաթևացու աշակերտների ու համշիրակ (կաթնակից) եղբայրների թվում հիշատակում է նաև Մելքիսեթ վարդապետին՝ բնորոշելով նրան իբրև «քաջ տելետին»*[219]*, այսինքն՝ իմաստասերների, հռետորների գլուխ:*

Մեծանուն վարդապետը վախճանվել է Երևանում՝ Ս. Անանիա առաքյալի անապատում, 1631 թ. և ամփոփվել է Կոզեռնի գերեզմանոցում՝ Հովհաննես Կոզեռն վարդապետի շիրմին կից: Մանրամասների հաղորդողը դարձյալ Առաքել պատմագիրն է. «Եւ եղեւ վախճան բազմաշխատ վարդապետիս Մելքիսէթի յԵրևան քաղաքի, ի վանս դամբարանի Սրբոյ առաքելոյն Անանիայի, եւ տարեալ զնա ի հանգիստն հասարակաց՝ ի բլուրն, զոր անուանեն Կոզեռ, զի վասն գերեզմանի Կոզեռ վարդապետին, որ անդ է՝ այնպէս կոչեն զբլուրն, եւ անդ մերձ գերեզմանի Կոզեռ վարդապետին պատրաստեցին հանգիստ, եւ անդ հանգուցին զպատուական եւ զարբասնունդ նշխարս մարմնոյ նորա, և գրեցին զանունն ի վերայ տապանին. եւ եղեւ վախճան սորին ի ՌՁ. (1631) թուականիս մերում»[220]*: Ինչպես վերը նշել ենք, հետագայում Հովհաննես Կոզեռն և Մելքիսեթ Վժանեցի վարդապետների կողքին են թաղել նաև Մովսես Տաթևացի հայրապետին, որոնց շիրիմների վրա ուղղանկյունաձև մատուռ է կառուցվել: Ցավոք, կորստյան է մատնվել նաև Մելքիսեթ վարդապետի տապանաքարը, որն, ըստ պատմագրի, արձանագիր է եղել:*

Առաքել Դավրիժեցու Պատմության Ծէ. (57) գլուխը շարադրվել է հետագայում՝

---

[217] Նույն տեղում:

[218] Նույն տեղում, էջ 317:

[219] ԺԷ. դ. հիշ-ք, Բ., էջ 430, Հ՝թ 624/ա:

[220] **Առաքել Դաւրիժեցի**, էջ 318:

իբրև պատմագրի նկարագրած դեպքերի հավելագրություն: Հեղինակը Հայ եկեղեցու մեկ այլ շնորհաշատ վարդապետ Ոսկան Երևանցին է[221]: «Պատմութիւն կենաց Ոսկանայ վարդապետի Երևանցւոյ՝ տպագրողի գրոյս...» խորագրով ինքնակենսագրական բնույթի այս հատվածը Ոսկան Երևանցին կցել է Պատմության առաջին հրատարակության վերջին (Ամստերդամ, 1669 թ.), որը հետագա՝ 1884, 1896, 1988, 1990 թթ. հրատարակություններում չի ներառվել: Միայն վերջերս նշված հավելվածին անդրադարձել է Խաչիկ Սամվելյանը[222]: Կարևորելով աշխատության աղբյուրագիտական նշանակությունը՝ հեղինակը նշում է, որ նախորդ տպագրություններից և ոչ մեկում տեղ չի հատկացվել այս կենսագրականին, մինչդեռ այն պետք է ըստ արժանվույն գնահատել, քանի որ իբրև վավերագիր պարունակում է մեր մշակութային կյանքին վերաբերող արժեքավոր ճշտումներ և լրացումներ: Ի թիվս ուսումնասիրողի բերած ուշագրավ նման օրինակների՝ հետաքրքիր է նաև Մելքիսեթ Վժանեցուն նվիրված հատվածը, որն Առաքել Դավրիժեցու վկայությունների համեմատության արդյունքում հակադրություն է առաջացնում: Վերը նկատեցինք, որ Մելքիսեթի կյանքն ու գործը նկարագրելիս Դավրիժեցին նրան նախ Սյունյաց Մեծ անապատում, ապա Լիմում ու Էջմիածնում է ներկայացնում և միայն վախճանը՝ Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատում, մինչդեռ Ոսկան Երևանցու վկայությունները պարզում են, որ կյանքի վերջին շրջանում Մելքիսեթ վարդապետը գործել է նաև Երևանում, որտեղ դպրոց է բացել և ուսուցչություն արել:

Ինչպես վերը նշեցինք, Լիմից Ս. Էջմիածին գալով՝ Մելքիսեթ վարդապետը ջերմ ընդունելության է արժանանում Մայր Աթոռում, որտեղ զբաղվում է սիրելի գործով և իր գիտելիքները տարածում ուսումնատենչ միաբանների շրջանում: Հակառակ սրան՝ Ոսկան Երևանցու «Կենսագրական»-ում պատկերն այլ է. Սպահանից Ս. Էջմիածին վերադառնալով՝ դեռևս պատանի Ոսկանը հանդիպում է «կորովի և խոսքով զորավոր» Մելքիսեթ վարդապետին, բայց «...ոչ մի ջանք չարեց աշակերտելու նրան, մանավանդ որ հայերի մեջ ոչ մեկն այդ գիտությունը չուներ: Երևելի այրերը, որոնք կարծում էին, թե գիտություն ունեն, ամենքը պարսավում էին այդ գիտությունը, նաև ատող էին գիտության և ստորացնող, ծանրացնող այդ մեծարգո այրին, իրենք այդ գիտությանը խելահաս չլինելու պատճառով: Առավել ևս, որ նույնիսկ չէին էլ կարող հասկանալ»[223]: Մելքիսեթը Ս. Էջմիածնից մեկնել է Ատրպատականի կողմերը, ապա վերադարձել Երևան և, ըստ էության, հենց այստեղ էլ դպրոց հիմնել կամ, որ ավելի հավանական է, գործել է Մովսես Տաթևացու հիմնած դպրոցում: Այս շրջանում Լեհաստանից Ս. Էջմիածին էին ժամանել Ոսկանի ուսուցիչ Խաչատուր վրդ. Կեսարացին և Սիմեոն աբեղա Ջուղայեցին, որոնք լսելով Մելքիսեթ վարդապետի համբավը, իսկույն խնդրեցին Մովսես Տաթևացի հայրապետին, որ նրան դարձյալ Ս. Էջմիածին հրավիրի, այսինքն՝ Երևանում բացած դպրոցն այնտեղ տեղափոխի. «կա՛մ մեզ ևս հրաման տուր գնալ Երևան՝ Մելքիսեթից դասեր առնելու, կա՛մ նրան

[221] Ոսկան Երևանցու անձը և ապրած ժամանակաշրջանը, այլև՝ զանազան թղթակցությունները «Վաւերաթուղթեր» խորագրով մի գրքում է ժողովել Կարապետ եպս. Ամատունին՝ ներառելով նաև Մովսես Տաթևացի հայրապետի թղթերից մի քանիսը: Մանրամասն տե՛ս **Կարապետ եպս. Ամատունի,** Ոսկան վրդ. Երեւանցի եւ իր ժամանակը, Վենետիկ, 1975:

[222] **Խ. Սամվելյան,** Առաքել Դավրիժեցու «Պատմութիւն» երկի ԾԷ. գլուխը, «Էջմիածին», 2000, Է., էջ 66–75:

[223] Նույն տեղում, էջ 71–72:

բեր այստեղ, որ էջմիածնում դասավանդի»[224]*: Այսպես, Մելքիսեթն ընդառաջում է սիրելի կաթողիկոսի խնդրանքին և տեղափոխվում Ս. Էջմիածին՝ նրա հետ նաև իր աշակերտ Սիմեոն Ջուղայեցին*[225]*, իսկ Խաչատուր Կեսարացին և Ոսկան Երևանցին մնում են Երևանի վանքում, որն, ըստ էության, Ս. Անանիա առաքյալի անապատն էր, քանի որ արդեն մահվան մահճում՝ 1631 թ., Առաքել Դավրիժեցին Մելքիսեթին հիշատակում է Երևանի անապատում, որտեղ էլ վերջինս վախճանվում է: Խ. Սամվելյանը կարծում է, որ Առաքել Դավրիժեցին միտումնավոր է շրջանցել Մելքիսեթ Վժանեցու՝ Երևանում ապրելու ու գործելու փաստը և նրա կյանքի ուսուցչության ողջ շրջանը կապել միայն Էջմիածնի հետ, ինչն ըստ նրա՝ հենց Մելքիսեթ վարդապետի ցանկությունն է եղել*[226]*: Իհարկե, բարդ է նման հարցում Մելքիսեթի կողմից դիտավորություն տեսնելը: Պատմագիրը գուցե հարկ չի համարել մանրամասնել նրա գործունեության այդ շրջանը կամ ուղղակի վրիպել է՝ առանց որևէ ճնշման: Սրանով էլ պետք է պայմանավորել Ոսկան Երևանցու հետագա միջամտությունը, որն Առաքել Դավրիժեցու «Գրիք պատմութեանց»-ը 1668 թ. Ամստերդամում հրատարակության պատրաստելիս նկատել է Մելքիսեթ Վժանեցու գործունեության խիստ մասնակի հիշատակումը և լրացրել այն իր «Ինքնակենսագրական»-ի հավելման միջոցով:*

Դժվար է ասել, թե Երևանում, ըստ ամենայնի, 1631 թ. բացված Մելքիսեթ վարդապետի դպրոցը որքան ժամանակ է գործել: Միայն կարելի է ենթադրել, որ այն պետք է գոյություն ունեցած լիներ ընդամենը մի քանի ամիս, քանի որ Առաքել պատմագրի հաղորդմամբ նա Հայոց ՌՁ. (1631) թվականին վախճանվել է Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատում և բացի դրանից՝ իր աշակերտներին ուղղված պատգամում այդ մասին ակնարկում է նաև ինքը՝ Մելքիսեթ վարդապետը, որն ավելի քան տասնհինգ տարվա ընթացքում մեծ դժվարությամբ կարողացել է ձեռք բերել այդ գիտելիքները և ութ ամսվա ընթացքում հեշտությամբ հրամցրել իր սաներին. «...եւ զոր ինչ ես յամս հնգետասան եւ այլ աւելի, մեծաւ տաժանմամբ հազիվ թէ կարացի գտանել, արդ՝ հեշտ եւ դիւրին յամիս ութ ձեզ ընձեռեցի»[227]*: Պատգամի մեջ ուշագրավ է նաև վարդապետի խնդրանքն իր աշակերտներից. «Բայց խնդրեմ ի ձենջ, եղբա՛րք իմ՝ սիրեցեալք ի Տէր... մի՛ թուլանայցէք եւ մի՛ տայցէք հանգիստ աչաց կամ նինջ արտևանաց, այլ բուռն առեալ զշաւիղս իմաստութեանս այսմիկ, եւ յաւուրս կենաց ձերոց անդուլ եւ անդադար աշխատեցէ՛ք ի վերայ սորին մինչև ցօր վախճանի ձերոյ: Եւ ես յուսամ ի Սուրբ Հոգին Աստուած՝ յաննախանձ պարգևատուն, զի բազմապատիկ առաւելեալ արդիւնաւորեսցէ զձեզ շնորհօք քան զմեզ, եւ զօր ինչ պարգևեսցէ ձեզ, աննախանձաբար ուսուցէ՛ք այլոց խնդրողաց՝ ով ոք եւ իցէ»*[228]*: Վարդապետի այս խոսքերից դատելով՝ Խ. Սամվելյանը ենթադրում է, որ հիշատակված ութ ամսի մի մասը նա անցկացրել է Երևանում, մյու-*

[224] Նույն տեղում, էջ 72:

[225] ՄՄ Հմր 5996 ժողովածուում, ուր տեղ է գտել նաև Սիմեոն Ջուղայեցու «Քերականության» հետագա ընդօրինակություններից մեկը, Հովհաննես Ծաղկողը պատկերել է նաև Մելքիսեթ Վժանեցու դիմանկարը (1բ), որի տակ գրված է՝ «Մելքսէթ վարժապէտ» (նկ. 56, տե՛ս Հայկական մանրանկարչություն. Դիմանկար, նկ. 81, ծնթ.— էջ 215):

[226] **Խ. Սամվելյան,** Ոսկան վարդապետի ուսումնառությունը Երևանում, «Էջմիածին», 1997, Ժ., էջ 109, ծանոթ. 10:

[227] **Առաքել Դաւրիժեցի,** էջ 317:

[228] Նույն տեղում, էջ 317—318:

սը՝ Ս. Էջմիածնում[229] և, ըստ էության, առողջության վատթարացման պատճառով կրկին տեղափոխվել է Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատ ու այնտեղ էլ կնքել մահկանացուն:

Ինչ վերաբերում է ծնունդով Սպահանի «Երևանցոց» թաղից Ոսկան Երևանցուն, ապա փաստելի է, որ Լվովից վերադառնալուց հետո նա շուրջ հինգ ամիս ուսանել է Մելքիսեթ Վժանեցու «երևանյան» դպրոցում: Ակներև է, որ Մելքիսեթ Վժանեցին և իր սանները եղան Մովսես Տաթևացու հիմնած Երևանի անապատի դպրոցի գոյատևման կարճ, բայց բավական արդյունավետ ժամանակաշրջանի ջահակիրները, քանի որ 1635–1636 թթ. թուրք-պարսկական բախումները, ինչպես վերը նկատեցինք, ավերեցին ու այրեցին գիտության «կաճառ» հանդիսացող «մովսեսաշեն» անապատը, որը, բարեբախտաբար, վերստին ծնունդ առավ Մովսեսի հաջորդ Փիլիպոս Աղբակեցու օրոք:

229

Ս. ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼԻ ԱՆԱՊԱՏՈՒՄ ԸՆԴՕՐԻՆԱԿՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԸ



Ս. Անանիա առաքյալի անապատում գրված ՄՄ Հ՝ր 1538 ձեռագիրը

Գիրս այս գրեցաւ յԱրարատին՝
լայնաւիտ մեծ նահանգին...
ի Կոտայինըն գաւառին,
ի յերևան նուազ բաղաքին...
ընդ հովանեաւ մենաստանին
առաքելոյ սրբոյ շիրմին,
ուր կան նշխարք սուրբ ոսկերաց
Դամասկացւոյն Անանիային։

Գրիգոր Երևանցի գրիչ
ՄՄ ձեռ. 2[թվ] 3502, 443ա

Ս. Անանիա առաքյալի անապատում, ինչպես վերը նշեցինք, վանական կյանքին զուգահեռ նաև դպրոց է գործել, որտեղ նաև ձեռագրեր են ընդօրինակվել: Այստեղից մեզ հայտնի վաղագույն երկու գրչագրերը թվագրվում են ԺԵ. դարի առաջին կեսով: Դրանցից մեկը ՄՄ 2[թվ] 6405 ձեռագիրն է՝ գրված 1409–1410 թթ. և բովանդակում է Գրիգոր Տաթևացու Քարոզգիրքը, իսկ մյուսը, որը մեզ չի հասել, Մշո Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի և շրջակայքի ձեռագրացուցակի Բ. հատորում նկարագրված 2[թվ] 20 Գանձարանն է՝ 1450 թ.[230]: Այնուհետև մինչև ԺԷ. դարի առաջին երկու տասնամյակները Ս. Անանիա առաքյալի անապատի գրչության դպրոցն այլուստ չի հիշատակվում. գուցե մի որոշ ժամանակ այն դադարել է գործել, կամ այդ ընթացքում ընդօրինակված ձեռագրեր մեզ չեն հասել:

ԺԷ. դարի 20-ական թթ., երբ անապատում հաստատվեց Ս. Էջմիածինն «ի հիմանց» նորոգող և հայրապետական աթոռի ապագա գահակալ Մովսես Տաթևացի վարդապետը, ի թիվս մի շարք կառուցողական ու նորոգչական աշխատանքների՝ վերագործեց նաև Ս. Անանիա առաքյալի անապատի գրչության դպրոցը, ինչի մասին վկայում են Երևանում գրված ձեռագրերի հիշատակարաններում հանդիպող՝ անապատն իբրև գրչության վայր հիշատակումները: Գրչօջախի վերելքը, ըստ էության, պետք է պայմանավորել Մովսես Տաթևացու «երևանյան» գործունեությամբ և պատահական չէ, որ այստեղից հայտնի ձեռագրերի կեսից ավելին թվագրված են 1620-ական թթ.: Հատկանշելի է, որ Մովսես վարդապետի եռանդուն ջանքերով տեղում նաև ուսումնական կենտրոն է ձևավորվել, որտեղ սովորում էին ոչ միայն գրչության արվեստ (բոլորգիր և նոտրգիր տառատեսակներով), այլև զանազան առարկաներ՝ հիմնականում աստվածաբանություն ու քերականություն: Այստեղ ուսանելու են եկել ոչ միայն Հայաստանի տարբեր բնակավայրերից, այլև հարևան երկրներից: Մովսեսի աշակերտներից շատերի անունները կարելի է կարդալ անապատում ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններում, որոնք հիմնականում գրիչներ են եղել: Այդ նույն հիշատակարաններում Ս. Անանիայի անապատի անվանը զուգահեռ հաճախ կարելի է կարդալ նաև Երևանի մյուս նշանավոր հոգևոր կենտրոնների անունները, ինչպիսիք են՝ կաթողիկե Ս. Աստվածածին, Ս. Պողոս-Պետրոս — Երկուերեսանի, Ս. Սարգիս և այլն, որոնք ևս Երևանի գրավոր մշակույթի օջախներից են եղել:

Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրացուցակներից, հիշատակարանների ժողովածուներից և անվանի ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանի կազմած գրչության տեղանունների այբբենական քարտարանից մեզ հաջողվել է առանձնացնել Երևանում և միջնադարում երևանամերձ բնակավայրերում (Նորք, Նորագավիթ, Քանաքեռ, Առինջ) գրված շուրջ 90 ձեռագիր, որոնցից 12-ը գրվել է Ս. Անանիա առաքյալի անապատում (որոշները զուգահեռ նաև՝ Երևանի մյուս եկեղեցիների հովանու ներքո), ըստ այդմ՝ Մաշտոցյան Մատենադարանում

[230] Յուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից, հ. Բ., էջ 113:

է պահվում այստեղ գրված 10 ձեռագիր (ՄՄ ձեռ. Հմր 507, 1538, 3502, 4058, 5243, 6322, 6405, 7939, 8337, 9147), ևս մեկը տեղ է գտել Մշո Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի և շրջակայքի վերոնշյալ ձեռագրացուցակում (հտ. Բ., ձեռ Հմր 20), մեկը՝ Ռումինիայի Գեռլա հայաքաղաքի թանգարանի ձեռագրացուցակում (Հմր 45), իսկ կեսարիայի Ս. Կարապետ և Ս. Դանիել վանքերի ձեռագրացուցակի Հմր 8 «Քարոզգիրք»-ը 1658 թ. նորոգվել է Ս. Անանիա առաքյալի անապատում (գրված 1407 թ. Տաթևի վանքում, գրիչ՝ Գրիգոր)[231]: Ժամանակագրական տեսանկյունից, ինչպես վերը նշվեց, վաղագույնները ԺԵ. դարի առաջին կեսից են, 1-ը՝ ԺՀ. դարի երկրորդ կես (ՄՄ ձեռ. Հմր 7939), 1-ը՝ 1896 թ. գրվել է Զնջռլու գյուղում և 1916 թ. շարունակվել Երևանի Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցում (ՄՄ ձեռ. Հմր 8337), իսկ մնացած 8 գրչագրերը թվագրված են 1620—1660-ական թթ.[232]:

Ս. Անանիա առաքյալի անապատի գրչության դպրոցին և այստեղ գրված որոշ ձեռագրերին տարբեր առիթներով անդրադարձել են դեռևս Հ. Ներսես վրդ. Ակինյանը[233], Թադևոս Հակոբյանը[234], Արտաշես Մաթևոսյանը[235] և այլք: Վերջերս նախորդ ուսումնասիրողների տեղեկությունների հիման վրա՝ Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու պատմությանը զուգահեռ, այս գրչակենտրոնին մի առաձին մաս են հատկացրել Բելլա Ավետիսյանն ու Տ. Մամբրե քհն. Քեսաբյանը[236], որը գրեթե նույնությամբ վերահրատարակվել է Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու դպիր Աշոտ Արևշատյանի գրքում[237]: Գնահատելով մեր նախորդների գիտական վաստակը՝ այդուհանդերձ, փաստելի են ուսումնասիրություններում առկա անճշտությունները թե՛ ձեռագրերի քանակի ու տարբերակման, թե՛ նրանց գրիչների ու ստացողների ինքնության հարցում: Ստորև փորձ է արվում հստակեցնել սկզբնաղբյուրներում պահպանված վկայությունները ու կազմել Երևանի նշված գրչակենտրոնից մեզ հայտնի ձեռագրերի հնարավոր ամբողջական ցուցակը:

Նկատառելով այն, որ ներկա ուսումնասիրությունն առաջինն է Ս. Անանիա առաքյալի անապատում գրված ձեռագրերն այսպես համահավաք ներկայացնելու

---

231 Ցուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի եւ Ս. Դանիէլի ի Կեսարիա, կազմեց՝ **Տրդատ եպս. Պալեան,** Վիեննա, 1963, էջ 17—20:

232 Որոշ ուսումնասիրողներ Ս. Անանիա առաքյալի անապատի գրչության դպրոցին են վերագրել նաև ՄՄ Հմր 6221 Հայսմավուրքը՝ գրված Եփրեմ գրչի ձեռքով՝ 1664 թ. Երևանում «ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս եւ Սուրբ Երկու երեսիս եւ Սուրբ Յակոբիս եւ Սուրբ Կաթուղիկէիս եւ այլ բազում սրբոցն, որ պահպանեն քաղաքիս...» (ՄՄ ձեռ. Հմր 6221, 538ա): Պատճառը հիշատակարանում Ս. Աստվածածին և Ս. Կաթողիկե եկեղեցիների առանձնակի վկայակոչումն է, որի հիմամբ Ս. Աստվածածինը նույնացրել են Ս. Անանիայի անապատի եկեղեցու հետ (**Բ. Ավետիսյան, Մամբրե քհն. Քեսաբյան,** Պատմություն Ս. Ջորավոր եկեղեցու, էջ 17—18, Տաթևացուց մինչև Տաթևացի, աշխատ. **Աշոտ դպիր Արևշատյանի,** էջ 65—66), մինչդեռ ձեռագրի գրչության 1664 թվականին ներկայիս Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցին դեռ կառուցված չէր (կառուցվել է 1693 թ.):

233 **Ն. Ակինեան,** Հին Երեւանը, էջ 333—339:

234 **Թ. Հակոբյան,** Երևանի պատմությունը 1500—1800 թթ., էջ 383—399:

235 **Ա. Մաթևոսյան,** Երևանի գրչության կենտրոնները, էջ 117—118:

236 **Բ. Ավետիսյան, Մամբրե քհն. Քեսաբյան,** Պատմություն Ս. Ջորավոր եկեղեցու, էջ 16—21:

237 Տաթևացուց մինչև Տաթևացի, էջ 64: Ս. Անանիա առաքյալի անապատի գրչակենտրոնին իր մագիստրոսական թեզում անդրադարձել է նաև Հովհաննես սրկ. Մանուկյանը՝ առանձնացնելով այստեղ ընդօրինակված 6 ձեռագիր, որոնցից հինգը՝ Մաշտոցյան Մատենադարանում (ՄՄ ձեռ. Հմր 507, 1538, 5243, 6405, 7939) — տե՛ս **Հովհաննես սրկ. Մանուկյան (Հրանտ քհն.),** Երևանի Սուրբ Անանիա առաքյալի անապատը, մագիստրոսական թեզ, էջ 44—51:

առումով, նպատակահարմար գտանք ստորև ժամանակագրորեն շարադրել նրանց համառոտ նկարագրությունը, պատմողական ձևով մեկնաբանել մանրանկարչական արվեստը[238]*, վկայակոչել ամբողջական և մասնակի հատվածներ առանձնակի կարևորություն ունեցող հիշատակարաններից (գրչության և հետագայի), ապա, իբրև ծանոթագրություն, քննել վերջիններիս բովանդակությունը: Մեր հնարավորության սահմաններում փորձել ենք պարզել նաև ձեռագրերի անցած «ճանապարհն» ու ձեռագրապահոցներում հաշվառվելու պատմությունը:*

Ա. ՄՄ ձեռ. Հ՝մ 6405, ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ, ՔԱՐՈԶԳԻՐՔ:

ՊԺԸ—ՊԺԹ.—1409—1410 թթ., Երևան (առ դուռն սուրբ տաճարիս Անանիայ առաքելոյ):

Գրիչ՝ Գալուստ վրդ. [Վաղադնեցի] (Ա), Թովմա վրդ. [Մեծոփեցի] (Բ), Սիմեոն կրն. (Գ), Ոհաննես (Դ): Ստացող՝ Գալուստ վրդ. [Վաղադնեցի], Թովմա վրդ. [Մեծոփեցի], Սիմեոն կրն. (գրիչները):

Կաշեկազմ (վերակազմված 1962 թ.՝ հին և նոր կաշիների միացումով, նկ. 60), միջուկը՝ տախտակ, աստառը՝ մանուշակագույն հենքով կետազարդ մետաքս (Ա. փեղկի կազմաստառին փակցված է նաև հատված նախկին կարմիր հենքով ծաղկազարդ գործվածքից), 429+1 թերթ, թուղթ, 24,5 x 16, երկսյուն, միասյուն, բոլորգիր, 39—49 տող: Լուսանցակողերը՝ կարմիր:

Մանրանկարչություն չունի՝ բացառությամբ միավորների սկզբնատառերի՝ կարմրով (երբեմն սևով՝ 180բ) և գծանկարային եղանակով արված հանգուցագրերի և թռչնագրերի (46բ, 86բ, 99բ, 125բ, 227բ, 378բ և այլն):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

ա. Գրիչ և ստացող Գալուստ վարդապետ Վաղադնեցու հիշատակարանները.

1. 59բ Եւ ես՝ անարհեստ եւ մեղաւք մածեալ գրչակ՝ Գալուստ (համառոտագրված՝ Գլա(=ս)տ), սպասաւոր Բանի, գոչեմ ընդ անառակին՝ խնդրելով յԱրարչէն ամենից, զի եւ ինձ շնորհեսցէ զբազմութիւն պարտուց յանցանաց, եւ որք զամէնն ասասցեն, ՊԺԸ. (1409) գրեցաւ[239]*:*

2. 81բ Ջբազում մեղաւք զառածեալս եւ ի հոգոց աշխարհի տատանեալս՝ զԳալուստ անարհեստ գրիչ եւ զանպիտան սպասաւոր Բանի, որ գրեցի զսա՝ ի վայելումն անձին իմոյ տառապելոյ եւ յիշատակ ոգւոյ իմոյ...[240]*:*

3. 92բ Ջտառապեալ գծագրաւղ յիշել մաղթեմ, ի թվին ՊԺԸ. (1409) գրեցաւ:

բ. Գրիչ և ստացող Թովմա վարդապետ Մեծոփեցու հիշատակարանները.

1. 213բ Ջնուաստ եւ զմեղուցեալ պիտակ անուն վարդապետս Թովմա, աղաչեմ

[238] Հիշատակվող ձեռագրերից և ոչ մեկի ծաղկողի անունը հայտնի չէ, նրանք ներառված չեն նաև արվեստաբան Աստղիկ Գևորգյանի՝ հայ մանրանկարիչներին նվիրված երկհատոր մատենագիտական ժողովածուներում: Ձեռագրերի հիմնական մասը, որը գրվել է ԺԷ. դարի առաջին կեսին, հենց տվյալ ժամանակաշրջանի պարզ ու ինքնուրույն մանրանկարչական արվեստի կրողն են: Հավանական ենք համարում, որ քննվող ձեռագրերի նկարազարդման հեղինակները մեծ մասամբ գրիչներն են, որոնք Մովսես Տաթևացու հիմնած դպրոցի աշակերտներն ու հետևորդներն էին: Չնայած նրան, որ գրիչները մեզ են ավանդել բավական հետաքրքիր, երբեմն գեղարվեստական առանձնահատկություններով օժտված հիշատակարաններ՝ այնուամենայնիվ ձեռագրերի նկարազարդմանը վերաբերող որևէ մեկնաբանություն կամ անուն չեն հաղորդում, ինչը, թերևս, պետք է պայմանավորել նրանց համեստությամբ:

[239] ԺԵ. դ. հիշ-ք, Ա., էջ 105—107, Հ՝մ 104/զ:

[240] Նույն տեղում, էջ 107, Հ՝մ 104/է:

յիշել ի Տէր, որ սակաւ ինչ աշխատեցայ եւ զպակասութիւն քարոզիս լցի ի հոգելից վարդապետաց բանից, որ էր թերի մնացեալ ի սուրբ հօրէն մերմէ[241] *(նկ. 61ա)։*

2. 416ա Այլև զատացուղ գրոցս՝ զպիտակ անուն վարդապետս Թովմա, որ բազում աշխատութեամբ գրել ետու զգիր վարդապետութեան հօր մերոյ՝ մեծ վարժապետին Գրիգորի՝ ի հալալ արդեանց ծնաւղաց իմոց, հոգևոր եղբօր իմոյ Սիմէոն կրօնաւորի, որ ի չաւարտ գրոյս վճարեցաւ ի սուտ կենցաղոյս[242]*։*

3. 429բ [Փա՛ռք... Շնորհօք բարերարին Աստուծոյ, ես՝ մե]ղապարտ ի մանկունս [ե]կեղեցւոյ [պիտակ անուն Թովմա, ստ]ացայ զերկրորդ հատոր Քարոզագրոցս [աստուածապատիւ եւ երանաշնորհ քաջ] հռետոր[ին] եւ անյաղթ փիլիսոփայ[ին՝ սուրբ հօրն մերոյ մեծին Գրի]գորի, յամի թվականութեան մերս տումարի [ՊԾԹ. երորդի (1410), բ]ազում աշխատութեամբ եւ չարչարանաւք, ի [դառն եւ ի չար ժամանակի, ի] գաւառիս Արայրատեան, յանապատիս Ե[րևանայ, առ դուռն սուրբ] տաճարիս Անանիայ առաքելոյ, ձեռամբ երախտաւորի [եւ մեր ըստ հոգոյ] եւ ըստ մարմնոյ բարեկամի՝ քրիստոսասիրի առն Աստուծոյ Գալուստ վարդապետի եւ [հոգևոր] եղբաւր մերոյ եւ ընկերակցի՝ Սիմէոն կրօնաւորի, եւ մա[ն ինչ, ես՝ տկարս] հոգով եւ մարմնով գծագրեցի՝ ի յուսումն վարդապետաց եկեղ[եցւոյ եւ ի գ]իտութիւն մանկանց Սիոնի, մանաւանդ յիշատակ հոգւոյ իմոյ եւ հոգևոր ծնողաց իմոց եւ ուսուցչաց՝ Մաթէոս կրօնաւորի եւ վարժապետացն մերոց՝ երկրորդ Լուսաւորչի մեծին Գրիգորի՝ հաւաքողի եւ արարողի այսմ սոփերի, որ ի սոյն ամի փոխեցաւ ի Քրիստոս եւ եթող մեզ սուգ անմխիթարելի, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի, եւ հեզահոգի բաբունապետացն՝ Սարգիս վարդապետի եւ Վարդան վարդապետի եւ Յովհաննէս վարդապետի՝ բազմաչարչար նահատակի, որ ի սոյն ամի աւարտեաց զսուրբ եկեղեցի՛՛՛[243] *(ընդհատվում է ընկած թերթի պատճառով)։*

4. 111բ Զվերջինս ի ծնունդս եկեղեցւոյ զպիտակ անուն վարդապետս եկեղեցւոյ Թովմա, աղաչեմ յիշել ի Տէր՝ հանդերձ ծնողօք եւ ամենայն արեան մերձաւորօք, եւ Աստուած զձեզ յիշէ. ամէն։

5. 147բ Զստացօղ գրոյս զվարդապետս Թովմա, յիշեցէ՛ք։

6. 202ա Զնուաստ վարդապետս Թովմա եւ զհոգևոր եւ զմարմնաւոր հարքն մեր, աղաչեմ յիշել ի Տէր՝ հանդերձ աշակերտօք, քահանայիւք եւ ամենայն արեան մերձաւորօք. եւ Աստուած զձեզ յիշէ. ամէն։

7. 205ա Ջտարագիծ գրիչ՝ տգեղութեամբ ախտիւ պարուրեալ ի կերպարն է վեհին կրկին տուչութեան զԹովմա՝ պիտակ անուամբ սպասաւոր Բանի, եւ զաստուածամերձ զհայրն մեր՝ զմեծ վարդապետն Գրիգորիոս, որ ի սոյն ամի՝ ի թվականիս Հայոց ՊԾԹ. (1410) փոխեցաւ ի Քրիստոս, եւ զուսուցիչն իմ՝ զՄատթէոս քահանայ, մաղթեմ պատահողացդ սմին յիշել բարեմիտ կամօք, ի մեղաց թողութիւն, ի բարին Քրիստոս՝ հանդերձ ծնողօք եւ ամենայն արեան մերձաւորօք, զի մի՛ լինիցիք իբր բազումիս առօղ եւ սակաւ ինչ տուօղ, զի եւ դուք ի վերջմէ եկելոցն ձեզ զնոյն ընկալջիք զայն եւ կամ եթէ զայս. ամէն։

գ. Գրիչ և ստացող Սիմեոն կրոնավորի հիշատակարանները.

1. 225ա Զստացօղ գրոցս զհոգևոր հայր մեր՝ զվարդապետն Թովմա եւ զՍիմէոն գրիչս [յիշեցէ՛ք], եւ Աստուած զձեզ յիշէ. ամէն[244]*։*

---

[241] Նույն տեղում, էջ 106, ՀՄՄ 104/բ:

[242] Նույն տեղում, էջ 106, ՀՄՄ 104/գ:

[243] Նույն տեղում, էջ 105–106, ՀՄՄ 104/ա:

[244] Նույն տեղում, էջ 107, ՀՄՄ 104/ե:

2. 306բ Աղաչանաւք սրբոց առաքելոց, եւ մարգարէից, եւ վարդապետաց, եւ ամենայն սրբոց քոց, Քրիստո՛ս Աստուած, ողորմեա՛ ստացողի գրոյս եւ ինձ՝ բազմամեղ գծողիս Սիմէոնի եւ ամենայն հաւատացելոց, եւ որոց զամէնն ասեն. ամէն (նկ. 61բ):

3. 339բ Ձմեղուցեալ գրիչս աղաչեմ յիշել ի Տէր, եւ Աստուած զձեզ յիշեսցէ Աստուածածին կուսին բարեխաւսութեամբն. ամէն:

դ. Ոհանես գրչի հիշատակարանը.

1. 313բ Որք հանդիպիք այսմ վայրի, / զՈհանէս՝ մեղաւք ի լի, / յիշեցէ՛ք դուք ի բարի[245]:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. 51ա (ԺՀ. դար, նոտրգիր) Ով ոք, որ այս գրքումս կամ կարդայ կամ գրածն կատարէ, նայ ըստուկքն վարպետ կոչի, քարոզատու:

2. 308բ (1703 թ., նոտրգիր) Յաջորդքն մեր Սուրբ ուխտիս՝ Յոհան եւ Պետրոս վարդապետքն փոխեցան առ Քրիստոս, թվին ՌՃԾԲ. (1703) երկոքեանն մէջ մի ամի:

Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատից մեզ հասած ժամանակագրորեն վաղագույն այս ձեռագիրը Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքի անտիպ ձեռագրացուցակում Հմր 113/1-ն է: Հիշյալ ձեռագրացուցակը նախորդ դարասկզբին կազմել է հայագետ Սմբատ Տեր-Ավետիսյանը, որից ձեռագրի հիշատակարանները հրատարակելիս օգտվել է ակադ. Լևոն Խաչիկյանը, քանի որ վերջին ընդարձակ հիշատակարանը բավականաչափ վնասված է: Այդ մասին Լ. Խաչիկյանը ծանոթագրում է. «Անընթեռնելի հատվածները վերականգնում ենք Ս. Տեր-Ավետիսյանի Նախավկայի վանքի ձեռագրերի անտիպ ցուցակի հիման վրա, որը կազմված է 1904 թվականին, երբ ձեռագիրը (այն ժամանակ Հմր 113 ձեռագիր Նախավկայի վանքի) եղել է համեմատաբար լավ վիճակում»[246]:

Անվանի ձեռագրագետ Օննիկ Եգանյանի հաղորդմամբ՝ 1922–1925 թթ. Ս. Էջմիածնի նախկին գրատան ձեռագրական հավաքածուն համալրվել է ևս 234 միավոր ձեռագրով՝ ստացված Թավրիզի առաջնորդարանից, Երևանի, Գյումրիի, Աշտարակի եկեղեցիներից, Բաքվից և անհատ նվիրատուներից: Ձեռագրերի այս նոր հավաքածուն, որտեղ ընդգրկված է եղել նաև ՄՄ Հմր 6405 գրչագիրը, հայտնի է «Խառն ժողովածու» անունով, իսկ խնդրո առարկա ձեռագիրն էջմիածին էր հասել Թավրիզի առաջնորդարանից[247]:

Ձեռագրի հիշատակարաններից դատելով՝ այն գրվել է հենց նույն գրիչների անձնական օգտագործման համար: Հիմնական մասն, ըստ էության, պատկանում է Գալուստ վարդապետի գրչին, որի անվանակիր հիշատակարանները (ա/1–3), որ գրչի անունից ի Տեր ուղղված աղերսներ են, 1409 թվականից են:

Առավել պատկերավոր և ընդգրկուն են մատենագիր Թովմա վարդապետ Մեծոփեցու հիշատակարանները (բ/1–7), որոնք գրված պետք է լինեն ձեռագիրը համեմատաբար ամբողջացնելուց հետո՝ Ամենայն Հայոց բարեբունապետ Գրիգոր Տաթևացու մահից հետո, քանի որ դրանք կրում են 1410 թ. և, բացի դրանից՝ Թովման հիշատակարաններից մեկում վկայաբերում է Գալուստ և Սիմեոն գրիչների անուններն ու հավելում. «...եւ մա[ն ինչ, ես՝ տկարս], հոգով եւ մարմնով

[245] Նույն տեղում, էջ 107, Հմր 104/ը:

[246] Նույն տեղում, էջ 105–106, ծնթ. ***:

[247] **Օ. Եգանյան,** Մատենադարանի ձեռագրական հավաքածուները. տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա., կազմեցին՝ **Օ. Եգանյան, Ա. Չեյթունյան, Փ. Անթաբյան,** Երևան, 1965, սյուն 118–120 (այսուհետ՝ **Օ. Եգանյան,** Մատենադարանի ձեռագրական հավաքածուները):

գծագրեցի...»: Թե ինչ է ձեռագրում լրացրել Թովման, պարզում է նրա անվանակիր առաջին հիշատակարանը, համաձայն որի՝ Գրիգոր Տաթևացու մահից հետո քարոզներից մեկի պակասավոր մասն ինքն է լրացրել: Հիշատակարաններում Թովմա Մեծոփեցին երկիցս փաստում է իր վարժապետ Գրիգոր Տաթևացու մահը. «...փոխեցաւ ի Քրիստոս եւ եթող մեզ սուգ անմխիթարելի, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի...»: Աշխատության նախորդ մասում նշեցինք, որ այս նույն ձեռագրի գրչության ժամանակաշրջանում Տաթևից Մեծոփավանք, ապա Երևան էր ժամանել նաև Գրիգոր Տաթևացին, որն ըստ Թովմա Մեծոփեցու «կենսագրական»-ի հեղինակ Կիրակոս Բանասերի հաղորդման՝ այստեղ ի թիվս իր մի քանի աշակերտների՝ վարդապետական գավազան է շնորհել նաև Թովմա Մեծոփեցուն[248]:

Գրիչ Թովմա Մեծոփեցին հիշատակարանում վկայակոչում է նաև իր հանգուցյալ ուսուցիչ Մատթեոսի և րաբունապետներ Սարգիս, Վարդան և Հովհաննես վարդապետների անունները: Ընդ որում, վերջինիս մասին Թովման լրացուցիչ հավելում է, որ 1410 թ. նա ավարտեց սուրբ եկեղեցին: Ցավոք, հիշատակարանի շարունակությունը չի պահպանվել, բայց ենթադրելի է, որ վկայված պետք է լինի Մեծոփավանքի եկեղեցին, որի նավակատիքին ներկա էին Տաթևից ժամանած Գրիգոր Տաթևացին և նրա աշակերտներից մի քանիսը:

Ինչ վերաբերում է Սիմեոն կրոնավոր գրչի հիշատակարաններին (գ/1–3), ապա դրանք հիմնականում համառոտ հիշատակագրություններ են, որոնցում շեշտված է Սիմեոնի՝ ձեռագրի գրիչ և ստացող լինելու հանգամանքը: Ձեռագիրն ավարտելուց հետո Սիմեոն գրիչը մահացել է, իսկ Գալուստ վարդապետը՝ ուղևորվել Տաթև:

Ձեռագրում կարդում ենք նաև ոմն Ոհանեսի անունը, որին իբրև գրիչ համարելու հիմքը ԺԵ. դարի ձեռագրերի հիշատակարանների ժողովածուի համապատասխան հատորում Լ. Խաչիկյանի ծանոթագրությունն է, ըստ որի՝ «Ոհանէսը ձեռագրի մի քանի թերթերի գրիչն է»[249]:

1703 թվակիր հետագայի հիշատակարանը հաղորդում է Սուրբ ուխտի հաջորդներ, այսինքն՝ առաջնորդներ Յոհան և Պետրոս վարդապետների մահը, որոնք վախճանվել են միևնույն տարվա ընթացքում, սակայն անորոշ է մնում, թե նրանք ստույգ ո՞ր վանքում են սպասավորել:

Բ. Մուշ քաղաքի և շրջակայքի ձեռ. Հ^{մր} 20, ԳԱՆՁԱՐԱՆ:

ՊՂԹ.—1450 թ., Երևան (ընդ հովանեաւ ամենազօր ս. առաքելոց գերեզմանիս):

Գրիչ՝ Հովհաննես: Ստացող՝ Մարգար երեց:

* Այլ տեղեկություններ ձեռագրացուցակում չկան:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. Փա՛ռք Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն [Սրբոյ]..., որ ետ կարողութիւն տկարագոյնիս հասանել յաւարտ սորին, յամին ՊՂԹ. (1450) թուականիս մերում...

Ես՝ տրուպս կարգաւորաց եւ յետինս ի գրչաց՝ անուամբ Յովանէս... մեծաւ տաժանմամբ գրեցի ի սփոփանս բանասիրաց եւ տաւնասէր անձանց...:

Եւ արդ, աւարտեցաւ սա ի փոքրիկ անապատիս Երևանայ, ընդ հովանեաւ ամենազօր ս. առաքելոց գերեզմանիս, ի խնդրոյ բարեմիտ եւ սրբասէր քահանային՝ Մարգարայ երիցուն, եւ իւր որդւոյն՝ Ներսէս քահանային, որ մեծաւ բաղձանաւք

[248] **Թովմա Մեծոփեցի,** Պատմագրություն, էջ 287–288:

[249] ԺԵ. դ. հիշ-ք, Ա., էջ 107, ծնթ. *:

ստացաւ զսա՝ ի վայելումն անձին իւրոյ ասի կենացս... եւ յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնողաց իւրոց, Սիմաւոն քահանային եւ Թորոս քահանային... ընդ նմին Սարգիս, որ մոթ մի ցորեն ետ ի գին դորա...:

2. Զայս եկեղեցիս իմ ձեռաւք եմ շինել՝ յիշատակ ինձ եւ ծնաւղաց իմոց, իմ հօրն՝ Սիմաւօն քահանային, եւ իմ մօրն՝ Խութլումէլիքին, եւ իմ զաւակին՝ Ներսէս քահանային, եւ իւր որդւոցն՝ կարապետ սարկաւագին եւ Աւետիսին. մի՛ ոք իշխեսցէ հանել զսա ի դրանէ Ս. Սարգսին:

3. Այս գանձատետրս Ս. Սարգիսինն է Մշոյ քաղաքիս, ի Տարաւն գաւառիս[250]*:*

Ձեռագիրը, ցավոք, մեզ չի հասել: Յուցակի ծանոթագրության համաձայն՝ այն պահվել է Մուշ քաղաքի Բրտի թաղի Ս. Սարգիս եկեղեցում[251]*: Փաստելի է, որ այն գրվել է Երևանում՝ Ս. Անանիա առաքյալի անապատի գրչության դպրոցում, ապա տեղափոխվել Մշո Ս. Սարգիս: Մարգար երեցը ձեռագիրը պատվիրել է ի վայելումն իր որդի Ներսես քահանայի: Գրիչը հիշատակում է նաև ոմն Սարգսի, որը մի մոթ ցորեն է տվել ձեռագրի արժեքի դիմաց: Հիշատակարանի՝ հատվածական ձևով տպագրված լինելու պատճառով անորոշ է մնում Սարգսի ինքնության հարցը, և թե ստույգ ինչ գործարքի մասին է վկայությունը: Այդուհանդերձ, նշենք, որ ձեռագրի դիմաց գրչին վճարել են բնամթերքով, այն է՝ «մոթ մի ցորեն»: Չափուկշռային համակարգում եբրայական փոքր մոթը (մոդ) կշռում է 6 կգ 528 գ, սրբության մոդը, որը նույն հռոմեական ու պոնտական մեծ մոդն է՝ 9 կգ 792 գ, իսկ տարողություններն առաջինի դեպքում ըստ Դեկուրդեմանշի ցորենաչափերի՝ կազմում է 8,16 լիտր, մեծ մոդինը՝ 12,24 լիտր*[252]*:*

Երկրորդ հիշատակարանը բավականին ուշագրավ է, որին անդրադարձել է դեռևս Արտաշես Մաթևոսյանը: Վկայագրի համաձայն՝ ձեռագրի պատվիրատու-ստացող Մարգար երեցը նաև հիշյալ եկեղեցու կառուցողն է, որն իրականացրել է իր և իր հարազատների հիշատակի և բարեխոսության համար: Ձեռագրի պատվիրումն, ըստ էության, հաջորդել է եկեղեցու շինարարությանը, որն ըստ ձեռագրագետի՝ Երևանի Ս. Սարգիսն է, որի կառուցող-ճարտարապետը, փաստորեն, Մարգարն է[253]*: Մենք այս հարցին մի փոքր վերապահումով ենք մոտենում, քանի որ վերը նշվեց, որ ձեռագիրը պահվել է Մշո Ս. Սարգիս եկեղեցում, և բացառված չէ, որ ընդօրինակվելուց անմիջապես հետո ձեռագիրն ի սկզբանե գտնվել է հենց այդ եկեղեցում, այլ ոչ Երևանի Ս. Սարգսում:*

Գ. ՄՄ ձեռ. Հ^{մր} 5243, ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ, ՔԱՐՈԶԳԻՐՔ:

ՌՀԲ.—1623 թ., Երևան (ընդ հովանեաւ մատուռի Սրբոյն Անանիայի առաքելոյն):

Գրիչ՝ Պողոս Տիվրիկցի: Ստացող՝ Մովսես րաբունապետ [Տաթևացի]:

Կաշեկազմ՝ ծաղկավոր մետաքսե կրկնակազմով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ թուղթ, 287+1 թերթ, մագաղաթ, 16,5 x 12, միասյուն, բոլորգիր, 21 տող: Լուսանցակողերը՝ կարմիր:

Մանրանկարներն արված են վարդագույնով՝ գծանկարային եղանակով: Բովանդակության առաջին էջը հարդարված է կիսախորանով (5ա), այնուհետ աչքի են ընկնում միավորների սկզբնատառ հանգուցագիր և թռչնագիր զարդագրերը (43ա, 53ա, 95բ, 116բ, 176բ, 198ա և այլն):

[250] Ցուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից, հ. Բ., էջ 113—114:

[251] Նույն տեղում, էջ 114:

[252] **Հ. Մանանդյան,** Կշիռները յեվ չափերը հնագույն հայ աղբյուրներում, Երեվան, 1930, էջ 132—133:

[253] **Ա. Մաթևոսյան,** Երևանի գրչության կենտրոնները, էջ 116:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 284ա Փա՛ռք համագոյ եւ միասնական Սուրբ Երրորդութեանն եւ մի աստուածութեանն՝ Հօր եւ Որդո եւ Հոգւոյն Սրբոյ...[254]:

|285ա| Շնորհիւ ամենակալին Աստուծոյ եւ գործակցութեամբ Հոգոյն Սրբոյ, յանկեալ աւարտեցաւ աստուածահրահանգ եւ հոգելից տառս, ի թուաբերութեանս Հայոց ՌՀԲ. (1623), ի կողմն Արեւելից, ի սահմանս Հայաստանեայց, ի յաւանն էրիվան, ընդ հովանեաւ մատուռի Սրբոյն Անանիայի առաքելոյն՝ ձեռամբն յոգնամեղ եւ խաւարամած ոգոյ Պօղոս[ի]՝ ի վայելումն տեառն Մովսէսի սրբասնունդ եւ ճգնազգեաց տիեզերալոյս րաբունապետի:

Արդ, որք հանդիպիք այսըմ հոգիակազմ եւ լուսազարդ մատենիս, կարդալով կամ օրինակելով, եղբա՛րք, աղաչեմ վասն Աստուծոյ, մի՛ զըմբռստնուլ ի վերայ անիմաստ գրչութեանս եւ լրբաբար համարձակութեանս մերոյ, զի կար մեր այս էր: Այլ առ ոտս աննկեալ աղաչեմ զամենեսեանսդ, զի զբիւրապատիկ քանքարոյ պարտապանս արժանի համարիցիք միով Աստուած ողորմի ասելոյ, եւ որք յիշէքդ՝ միոյն Ճ.(100)ապատիկ առնուցուք յանհատ պարգեւատուէն՝ Քրիստոսէ: Դարձեալ աղաչեմ, եղբա՛րք, յիշել ի Տէր զհոգեւոր վարժապետն իմ, եւ զծնօղսն իմ, եւ զեղբարսն իմ, եւ զամենայն արեան մերձաւորսն իմ: Եւ ձեզ՝ յիշողացդ, եւ մեզ՝ յիշեցելոցս եւ ամենայն հաւատացելոց, առհասարակ, ողորմեացի Քրիստոս Աստուածն մեր ի միւսանգամ գալստեանն իւրոյ եւ նըմա փառք՝ ընդ |285բ| Հաւր իւրում եւ ամենասուրբ Հոգոյն յաւիտեանս յաւիտենից. ամէն: Հայր մեր, որ յերկինս"[255]:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱՊԱՅԻ

1. 287ա (1771 թ., նոտրգիր) Թվին ՌՄԻ.-ին (1771), ես՝ անպիտան Աւետիս՝ լոկ անուամբ աբեղայս, որ եմ վիճակէն Սուրբ Հոգոյ վանքին, այս Սուրբ Գիրքս ըստացայ, բազում գիր եղծեալ կայր ի մէջն, վերստին նորոգեցի եւ գրեցի, որք ընթեռնուք, լի բերանով ողորմի ասացէք, Աստուած պարտական է ձեզ ողորմեսցի. ամէն:

2. 1բ (1884 թ., շղագիր, մանուշակագույն թանաքով) Սոյն Քարոզգիրքս, որ անխնամ մնալով աստ-անդ, վեհ Խաչատուր կաթուղիկոս Ոշականցին գետեղել տուաւ իր շինած թանգարանին մէջ՝ անվնաս պահուելու համար: Յամի Տեառն 1884-ին:

3. 287բ (1900 թ., շղագիր, մանուշակագույն թանաքով) 1900-ին սեպ. 17—22 մնացի Ախթամար եւ աչքէ անցուցի բոլոր ձեռագրերը՝ օրինակելով անոնցմէ պատմական կտորները ձեռագրած գործերիս համար, որ ի իւր պատմութիւն Ախթամարայ կաթողիկոսաց եւ պատմութիւն անցից անցելոց ի վասպուրական եւ այլուր անհշխանութեան ժամանակէն մինչև մեր օրեր: 1900, սեպ. 22, Ախթամար:

4. 16ա (ԺԹ. դ.) Մատթէոս վարդապետ Խիզանցի:

Գաղտնիք չէ, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի եղերական բախտին արժանացավ նաև Արևմտյան Հայաստանի հոգևոր մշակույթը, ավերվեցին ու կողոպտվեցին վանքերն ու եկեղեցիները, կրթօջախներն

[254] Հիշատակարանի «Փառք»-ի հատվածը շարունակվում է երկսյուն, յուրաքանչյուրը 12 տողից չափածո բանաստեղծությամբ. առաջին սյունակի սկզբնատողերից՝ ներքևից վերև կարդացվում է. «ՊԱՒՂՈՍԸՆ ԱՍԱՑ», նույն տողերի վերջին տառերից՝ «ՉԱՑՍ ԲԱՆՍ Ի ԳՇԻ», երկրորդ սյունակի սկզբնատողերից՝ վերից վար. «ՄՈՆՈԶՈՆ ՏՄԱՐԹ», նույն տողերի վերջին տառերից՝ «ՏԻՒՐԻԿՑՈ ՈՐԴԻ» (ԺԷ. դ. հիշ-ք, Բ., էջ 94—95, ծնթ. 22):

[255] Նույն տեղում:

ու գրապահոցները[256]: Ժամանակի իրադարձությունների թելադրանքով և Գևորգ Ե. Սուրենյանց (1911—1930) կաթողիկոսի հետևողական ջանքերով, սկսած 1915 թվականից, Վասպուրականի տարբեր հոգևոր կենտրոններից՝ Աղթամարից, Լիմից, Կտուցից, Վանից և նրա շրջակայքից բազմաթիվ ձեռագրեր են ուղարկվել էջմիածին, որոնց հիմամբ ձևավորվել է Ս. Էջմիածնի գրատան Վասպուրականի հավաքածուն: Ներկա ձեռագիրն այդ հավաքածուի մաս է կազմել, որն էջմիածին է հասել Աղթամարից[257]: Պահպանված հետագայի հիշատակարանները ևս ձեռագրի՝ Աղթամարում երբեմնի հանգրվան ունենալու մասին են վկայում: Մինչ այդ հիշատակարանների մասին խոսելը՝ նախ վերհիշենք գրչագրի ընդօրինակման վայրի և ժամանակաշրջանի հետ կապված որոշ մանրամասներ:

Վերը նշվեց, որ Ս. Անանիա առաքյալի անապատում վանական ու գիտակրթական կյանքը վերսին աշխուժացել է ԺԷ. դարի 20-ական թթ.՝ պայմանավորված րաբունապետ Մովսես Տաթևացու՝ Տաթևի Հարանց Մեծ անապատից Երևան գալու, ապա Ս. Անանիայի հինավուրց անապատում հոգևոր ու մտավոր կենտրոն հիմնելու հանգամանքներով: Սույն հիշատակարանի համաձայն՝ ձեռագիրն ընդօրինակվել է Մովսեսի աշակերտներից Պողոս Տիվրիկացու ձեռքով՝ իր իսկ վարժապետի՝ Մովսես Տաթևացու պատվերով: Ուսումնասիրողներից Թադևոս Հակոբյանը, վկայակոչելով միևնույն ձեռագիրը, այն համարում է երկու տարբեր գրչագրեր, մեկը գրված Մովսես Տաթևացու ձեռքով, մյուսը՝ Պողոս Տիվրիկացու[258]: Պատճառը ձեռագրի գրչության հիշատակարանի սկզբնական մեջբերման ժամանակ պակասավոր ընթերցումն է, որի արդյունքում ձեռագրի գրիչ է ընկալվում իրականում պատվիրատու-ստացող Մովսես Տաթևացին: Այս վրիպակը հետագայում տեղ է գտել նաև Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցուն նվիրված գրականության էջերում[259]:

Ձեռագրի՝ ԺԸ—ԺԹ. դդ. վերոնշյալ հիշատակարանները վերաբերում են մագաղաթյա մատյանի հետագա «ճակատագրին» և որոշակիորեն լուսաբանում այն: Դրանցից վաղագույն՝ 1771 թվակիր հիշատակարանի գրիչն, ըստ էության, Ավետիս աբեղան է, որը ստացել է ձեռագիրը, ապա՝ նորոգել: Նրա հաղորդմամբ՝ այդ ժամանակ արդեն գիրը տեղ-տեղ եղծված էր: Ավետիսը Ս. Հոգոց կամ Հոգյաց վանքի վիճակից է, հետևաբար, ձեռագիրն այդ տարիներին պետք է որ հանգրվանած լինի Վասպուրականի Անձևացիք (Անձևացյաց) գավառի նշյալ վանքում: Տեղանվանական բառարանում կարդում ենք, որ ԺԷ. դարում այս վանքը ձեռագրերի նկարագարդման մեծ կենտրոն էր և ուներ ձեռագրերի հարուստ գրադարան: Այն հիմնական վերակառուցման է ենթարկվել 1730—1765 թթ.[260]:

[256] Մեծ եղեռնի ընթացքում (1895—1923) թուրքական բարբարոսության հետևանքով մեր ձեռագրերի կորուստների, այլև՝ ջանադիր հայորդիների կողմից դրանց փրկությունների ընդհանուր պատկերը տե՛ս հետևյալ ժողովածուում. **Սուրէն Գօլանճեան, Յովհաննէս վրդ. Հիւսեան, Բաբգէն աթոռակից կթղ. Կիւլէսէրեան, Գէորգ Տէր-Վարդանեան,** Եղեռնը եւ մեր ձեռագրերի կորուստներն ու փրկութիւնները, հրատարակութեան պատրաստեց **Գ. Տէր-Վարդանեան,** Ս. Էջմիածին, 2015:

[257] **Օ. Եգանյան,** Մատենադարանի ձեռագրական հավաքածուները, պուն 93—102:

[258] **Թ. Հակոբյան,** Երևանի պատմություն 1500—1800 թթ., էջ 383, 388:

[259] **Բ. Ավետիսյան, Մամբրե քհն. Քեսաբյան,** Պատմություն Սուրբ Զորավոր եկեղեցու, էջ 16, Տաթևացուց մինչև Տաթևացի, աշխատ.՝ **Աշոտ դպիր Արևշատյանի,** էջ 64:

[260] **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան,** Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետ՝ Տեղանունների բա-

Ձեռագրի մեկ այլ՝ 1884 թվակիր հիշատակարանի համաձայն՝ Աղթամարի Խաչատուր Ռշտունցի (Խաչատուր Բ. Շիրոյան — 1864—1895 թթ.) կաթողիկոսի նախաձեռնությամբ այս գրչագիրը տեղ է գտել իր իսկ կառուցած թանգարանում՝ անվնաս պահելու նպատակով: Պատմաբան Վրեժ Վարդանյանն Աղթամարի կաթողիկոսության պատմությունը շարադրելիս մի առանձին ենթագլուխ է նվիրել այս կաթողիկոսի աթոռակալության շրջափուլին՝ նշելով, որ նա իր «ճկուն ու շրջահայաց գործելակերպով կարողացավ ձեռք բերել Վանի ու Աղթամարի թեմերի բոլոր գյուղերի հայ և քուրդ բնակչության հարգանքն ու համակրանքը»[261]: Կաթողիկոսության թեմերում իրականացրած բարեներոգչական աշխատանքների կազմում Վ. Վարդանյանը հիշատակում է նաև Խաչատուր կաթողիկոսի կառուցած թանգարանը Աղթամարի Ս. Խաչ վանքում, որտեղ կաթողիկոսն ի պահ է տվել բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր[262]: Վերոնշյալ հիշատակարանի համաձայն՝ այդօրինակ ձեռագրերից մեկն էլ հենց խնդրո առարկա Քարոզգիրքն է:

Այն, որ ձեռագիրը գտնվել է Աղթամարում, վերստին վկայում է 1900 թվակիր հիշատակարանը, որի գրիչը թեև իր անունն ուղղակիորեն չի հիշատակում, սակայն, կարևոր տեղեկություններ է հաղորդում Աղթամարի ձեռագրատանն իր կատարած աշխատանքների մասին, ըստ այդմ՝ նա շուրջ 5 օր եղել է Աղթամարում, աչքի անցկացրել բոլոր ձեռագրերը, նրանցից դուրս գրել Աղթամարի կաթողիկոսների և վասպուրականում տեղի ունեցած իրադարձությունների մասին վկայող գրությունները, որոնք պետք է իբրև սկզբնաղբյուր օգտագործվեին իր աշխատության համար: Ձեռագրում պահպանվել է ոմն Մատթեոս վարդապետ Խիզանցու անունը, որը, միգուցե, վերոնշյալ հիշատակարանի գրիչն է:

Դ. ՄՄ ձեռ. Հ^{մր} 9147, ԺՈՂՈՎԱԾՈՒ:

ՌՀԲ.—1623 թ., Երևան (ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս եւ Անանիայի Սուրբ առաքելոյս):

Գրիչ՝ Զաքարիա [Վաղարշապատցի]:

Կազմը՝ լաթապատ ստվարաթուղթ (մեջքը՝ սև մոմլաթ), 14 թերթ, թուղթ, 10,5 x 7,4, միասյուն, բոլորգիր, 17 տող:

Մանրանկարչություն չունի: Կարմրով, երբեմն նաև՝ կապույտով նշուած են միավորների սկզբնատողերն ու պարբերությունների սկզբնատառերը:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 12բ Փա՛ռք քեզ ամենասուրբ Երրորդութիւն եւ մի աստուածութիւն, որ եղկելի գրիչ Զաքարիայս ժամանեցեր ի վերջ ծրիս. շապաշ, շապաշ, շապաշ:

2. 13ա Փա՛ռք...: Ի թվականութեանս Հայոց տասմարի ՌՀԲ. (1623) գրեցաւ աստուածախաւս մատեանս աստուածահարսն Դաւթ[իւ], որ կոչի Սաղմոսարան, ի թագաւորութեան Պարսից շահ Ապասին, ի յերկիրս Արարատեան, ի քաղաքս Էրևան, ի տեղապահութեան Ամիրգօնայ /13բ/ խանին, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս եւ Անանիայի Սուրբ առաքելոյս, ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս տիեզերալոյս եւ համակ բարի, մեծափառ եւ հեզայհոգի, ճշմարիտ էկլէսիաստէս, երիցս երանեալ հայրս հանուրց իշխաւղ եւ իշխեցող, պատուական եւ արբայսնունդ հայրապետ եւ քաջ րայբունապետ տէր Մովսէս վարդապետի...:

Այս հո[գևոր] հայրս իմ՝ պարոնտէր Մովսէս՝ վարդապետս էր սա ի սուրբ

ռարան), հ. 3, Երևան, 1991, էջ 428:

261 **Վ. Վարդանյան,** Աղթամարի կաթողիկոսության պատմություն, Ս. Էջմիածին, 2017, էջ 244:

262 Նույն տեղում, էջ 263:

եւ հռչակաւոր ուխտէն Տաթեւու: Կամօք ամենի/14ա/այսուրբ երրորդութեամբն զաւրացեալ մինչ զի ի յետնեալ ժամանակիս, որ խանգարեալ կայր կարգ, կանոնք եւ կրաւնք սուրբ հարցն: ...Եւ դարձեալ տղայն, որ չէր արժան շրջիլ գետնամիջի իբր զխրծի, զարդարեալ կայր նա ի բեմի, եւս առաւել ես՝ մեղաւք զառածեալ Զաքարիայս:

/14բ/ Սուրբ հայրս մեր Մովսէս վարդապետ, սայ կարգեաց անապատաւորս ի մերում ժամանակիս, սայ բաժանեաց զկրօնաւորս ի յաշխարհական ձեւէ եւ հանդերձէ: Սայ զկանոնս նախահարցն հաստատեաց՝ զեպիսկոպոսունս, զերիցունս եւ զսարկաւագունս, եւ զայլ եւթն խորհուրդ եկեղեցոյ մի ըստ միոջէ ուսուցանէր...[263]:

Ձեռագրի վերջում՝ կազմաստառի մաս կազմող պահպանակին, Լևոն Խաչիկյանը հետևյալ գրությունն է թողել. «Սույն ձեռագիրը, որ նախկինում գրանցված էր պատահիկների ֆոնդի Հմր 1436-ի տակ, կազմվեց և մուծվեց ձեռագրերի ֆոնդ 1944 թվի հոկտեմբեր ամսին: Լ. Խաչիկյան»: Գրեթե միևնույն տեղեկությունն է հաղորդում նաև Օննիկ Եգանյանը, որը նախ նշում է ձեռագրի՝ Մատենադարանի 1941—1962 թթ. հավաքածուում ընդգրկված լինելու հանգամանքը, ապա մանրամասնում, որ նշված ժամանակաշրջանում հավաքված 1101 ձեռագրերից 125-ը ձեռք է բերվել 1944 թ., որոնցից 91-ն «առանձնացվել են ձեռագրատան պատահիկների հավաքածուի ավելի ամբողջական, ստվարածավալ և արժեքավոր հատակտորներից: Վերոհիշյալներից շատերը միևնույն ձեռագրերից անջատված և կոտորակված թերթեր լինելով, իրար մոտ են բերվել, ամբողջացվել և դարձել առանձին ձեռագրեր»[264]:

[263] ԺԷ. դ. հիշ-ք, Բ., էջ 99, Հմր 147, տե՛ս նաև **Շ. Դավթյան,** Մովսես Գ. Տաթևացի, էջ 35—36:

[264] **Օ. Եգանյան,** Մատենադարանի ձեռագրական հավաքածուները, այուն 167:

Ձափերով փոքր այս ձեռագիրն, ինչպես նշվեց, մեզ է հասել պակասավոր և հիմնականում իրարից անջատ թերթերով: Բովանդակում է Սաղմոսարանի հավելվածային մաս կազմող «Գովք Սաղմոսին» հատվածը, «Վասն Սաղմոսի և ժամատեղեաց» չափածո բանաստեղծությունը, Ներսես Շնորհալու հանելուկները, «Հաւատով խոստովանիմ» աղոթքը, Հովսեփ Աղթամարցու տաղերից: Բարեբախտաբար, պահպանվել է ընդարձակ հիշատակարանը, որտեղ մանրամասն տեղեկություններ կան ձեռագրի գրչության վերաբերյալ: Այն ընդհատվում է վերջից ընկած թերթի պատճառով: Պահպանված հատվածը բովանդակում է բազմաշխատ Մովսես Տաթևացու գործունեությունը՝ վերստին հաստատելով ու փառաբանելով մեծանուն րաբունապետի վաստակը: Գրիչ Զաքարիան, ամենայն հավանականությամբ, Մովսես Տաթևացու աշակերտ, քարտուղար, հետագայում Հովհաննավանքի առաջնորդ Զաքարիա Վաղարշապատցին է, որը նաև հաջորդիվ ներկայացվող ձեռագրի գրիչն ու ստացողն է: Նրա գործունեությունը հարուստ ու բազմաբովանդակ է, որի մասին առավել մանրամասն՝ ստորև:

Ե. ՄՄ ձեռ. Հմր 507, ԺԱՄԱԳԻՐՔ ԱՏԵՆԻ:

ՌՀԴ.—1625 թ., Երևան (ի դրունս Սուրբ Առաքելոյն Անանիայի):

Գրիչ, ստացող՝ Զաքարիա աբղ. էջմիածնեցի (Վաղարշապատցի): Թուղթ կոկող՝ Հայրապետ միայնավոր: Տող խազող՝ Մկրտիչ: Կազմող՝ Զաքարիա սրկ. Քանաքեռցի (1680 թ.):

Կաշեկազմ՝ դռնակով, երեք կապիչներով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ ծաղկադրոշմ շերտավոր կտավ, 325—1 թերթ, թուղթ, 25,5 x 20, երկսյուն, բոլորգիր, 25 տող:

Մանրանկարներից ուշագրավ է ամբողջ էջի վրա պատկերված ծիսակատա-

րութեան տեսարանը, որտեղ խորանի առջև դեմ դիմաց կանգնած են հոգևորականի զգեստով երկու սուրբ, կենտրոնում՝ Սուրբ Հոգու էջքը (13բ, նկ. 70), ինչպես նաև Դավիթ մարգարեին պատկերող մանրանկարը, որը ներկայացված է աղոթողի դիրքով, թագակիր, իսկ ներքևի աջ անկյունում պատկերված է տավիղը (142բ, նկ. 72)։ Երկու մանրանկարներն էլ ներառված են զարդաշրջանակի մեջ։ Հավելենք, որ բովանդակության միավորների սկզբնաթերթը հարդարված է կիսախորանով, ենթամիավորները՝ հիմնականում փոքր ճակատազարդերով, լուսանցազարդերով և զարդագրերով։ Գույներից գերիշխող են կապույտը, մանուշակագույնը, շագանակագույնն ու նարնջագույնը։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 322ա Փա՛ռք... Եւ արդ, ես՝ վերջինս ի ծնունդս եկեղեցւոյ, ի վերջին դարուս վերջացեալս յամենայն գործս բարութեան Զաքարիայ, յուսալով յողորմութիւնն Աստուծոյ |322բ| եւ յանչափ գթութիւնն եւ ի սէրն, ստացայ աստուածազարդ գիրքս զայս, որ յորջորջեալ կոչի ժամագիրք... եւ ընծայեցաք մաւր մերոյ վերնոյ Սիովնի՝ անմահ քաղաքի Աստուծոյ մերոյ... Արդ, աղաչեմ զքեզ, ողորմա՛ծ, գթա՛ծ... Սուրբ Երրորդութիւն... ողորմեա՛ ինձ՝ ամենաթշուառ, վտանգաւորիս Զաքարիայի, եւ թո՛ղ զամենայն յանցանս իմ, եւ փրկեա՛ յաւիտենական տանջանացն, եւ արժանաւորեա՛ զիս անմահական կենացդ, եւ երկնից արքայութեանդ, եւ քեզ փառք, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

|323ա| Շնորհիւ Տեառն սկսա եւ ողորմութեամբ նորին չանկ հանեալ աւարտեցի ի թվաբերութեան Հայկազեան տոմարի ՌՀԴ. (1625), ի յերկիրս Արարատեան, որ է Սարարատան, ի մայրաքաղաքս էրէվան, ի դրունս Սուրբ առաքելոյն Անանիայի, ի առաջնորդութեան սուրբ ուխտիս հեզահոգի եւ տիեզերալոյս մեծ վարդապետին՝ տէր Մով[ս]էս քաջ րայբունապետին։ Զի էր սա յերկրէն Սիւնեաց, ի գաւառէն Աջանանու, ի բնիկ եւ ի հայրենի գևղէն Խոտանանու, սնեալ եւ վարժեալ առ ոտս տեառն արթուն եւ զբւարթուն տէր Գրիգոր կաթողիկոսին էջմիածնա եղեսացւոյ, քանզի ամս քսան դեքերեալ ի դրունս նորա, մինչև հասեալ ի կէտ ուսման, ապա առեալ իշխանութիւն վարդապետական, եկեալ լուսաւորեաց զաշխարհս մեր, որ տարամերժեալ կայինք յազգէն պարսից՝ ցիր եւ ցան եղեալ ի յերկիրն Արաղա, ոմն ի Հսպահան, ոմն ի Քաշան, եւ այլ յերկիրս Պարսից։ Եւ սա ի ժամանակս ծերութեան իւրոյ ի բաց ընկէց զակարութիւն մարմնոյն, գնաց ի Պարսկաստան եւ քարոզեալ զազգս քրիստոնէից եւ ուղղեաց զամենայն կարգ եւ սահմանք եկեղեցւոյ։ Եւ նստոյց անդ մի ի պատուականն աշակերտաց իւրոց տէր Խաչատուր կեսարացին հովիւ եւ վարդապետ, եւ ինքն դարձեալ եկն երկիրս մեր էրէվան՝ ի սուրբ ուխտս առաքելոյն Անանիայի։ Ո՛վ եղբայրք, քանզի բազում մանկունս ի փառս էած հոգէլից ճշմարիտ էկլէսիաստ տէր Մովսէս րաբունապետս, եւ աշակերտեալ աւրիորդք սորա՝ զտէր Ռըստակէս վարդապետն, զտէր Իսրաէլն՝ փոխեցեալն առ Քրիստոս, զտէր Խաչատուր վարդապետն, զտէր Փիլիպոս վարդապետն, զծերունիքն, քեռին իմ՝ կարապետ եպիսկոպոս, զտէր Մինաս՝ արարաւղ աւրինակի գրոցս, զտէր Յովսէփն, զտէր Փիլիպոսն (տողամիջում՝ տէր Պօղոսն), եւ մանկագոյն աշակերտքս, որ պատուաստեալ եմք առ ոտ|323բ|ս սորա՝ զտէր Յովանէսն, եւ ես՝ նուաստ Զաքարիայս էջմիածնեցի, զտէր Խաչատուրն, զտէր Յակոբն, Առաքելն, որ կարի տակար է մարմնով. Տէր Աստուած ի թիկունս հասանէ, սարկաւագ Եսային, լուսարար

Զաքարիայն եւ ջահընկալ մանկունքն՝ Ղուկասն եւ Ղազարն, եւ խա(=ո)հարար Կարապետն եւ այլ միաբանք սուրբ ուխտիս, որ կամք առ ոտս սուրբ վարդապետիս տէր Մովսէսի...:

Արդ, որք հանդիպիք սուրբ գրոցս, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զմարմնաւոր ծնաւղքն իմ՝ զծերունի տէր Յովանէսն, եւ զմայրն իմ՝ Բէկխաւլթան, եւ եղբաւրորդին իմ՝ Գրիգոր, եւ որդի նորա, եւ հաւրեղբաւրորդին իմ՝ զտէր Սարգիս, եւ որդի նորա...:

Եւ արդ, բանք իմ առ ձեզ էն, ո՜վ փակակալք, լուսարարք եւ ջահընկալք, աղաչեմ, աղաչեմ՝ սեռն սիրով եւ անկարծիք հաւատով խնդրեմ ի ձէնջ, յորժամ զկանթեղի լոյսն նորոգէք, ծուլութիւն ի բաց ձգէք, խփէք, ապա զկանթեղն նորոգէք, զի ամէն մի գրի զաչքս եմ սպետակացուցեր, մինչև աւարտեր եմ... |324ա| Եւ դարձեալ, թէ զԺամագիրքս ի գերութենէ կամ ի գրաւէ կամ յայլ ինչ պատահարից որ լինի ազատէք, զձեր անունդ այլ ի մէջն գրեցէք եւ զիմ սակաւ յիշատակարանս չկտրէք... ամէն...:

Յիշեցէք զթղթիս կոկողն՝ զՀայրապետ միայնաւորն, եւ զՄկրտիչ՝ տողի խազողն: Տէր Աստուած վարձահատոյց լիցի նոցա. ամէն[265]:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. 324ա (1633 թ., բոլորգիր) Յամի մարդեղութեան Տեառն մերոյ կենարարի հազար վեց հարիւր եւ երեսուն եւ վեց եւ ըստ մերոյս գրոյ թուի հազար ութսուն եւ երկու (1633), մայիսի ամսոյ Հռովմայեցւոց երկտասան եւ մի (21), եւ Հայոց ամսոյ Արեգի եւթն եւ տասն, Յինա[ն]ց Զատկի հինգ կիւրակէին, պատկեր աւուրն երեքշաբաթ, յորում գիշերն զտիւն զգենոյր, առաջին պահուն եղեւ վախճան մեծ կաթողիկոսին Հայոց տեառն տէր Մովսէսի՝ երկրորդ լուսաւորչի, ամաց իբրև յիսուն եւ հնգից, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս չորս, էած խաւար հայկազեան տոհմի եւ եթող մեզ սուգ անմխիթարելի, յորոյ ծրող սորա նորին նաւտար էի[266]:

2. 324բ (1651 թ., նոտրգիր) Ես՝ Զաքարիա վարդապետ, առաջնորդ սուրբ ուխտիս Յոհաննուվանից, ընդ բազում արդեանց իմոց, զոր արարի, ետու եւ զձեռագիր Ժամագիրքս յիշատակ ի Սուրբ Կարապետս, յամի որում նորոգեցի զեկեղեցիք ի թուին Ռ. եւ Ճ. (1651): Արդ, մի ոք հանցէ զսա ի դրանէ Սուրբ Կարապետիս, վասն Աստուծոյ աղաչեմ[267]:

3. 324բ (1680 թ., խոշոր նոտրգիր) Շնորհօք եւ ողորմութեամբ ամենազօր մարդասիրին Աստուծոյ եղեւ նորոգումն այսմ Ժամագրքի երկիրս Արարատու, ի գաւառս Անբերդու, ի հրաշափառ եւ գերահռչակ սուրբ մենաստանս ի Սիւղի վանաց, որ ստուգաբանի Յոհաննուվանք, ի յոտին Արագածու, հանդէպ Արայի, ի վերա կարկաճահոս եւ արագածաւալ գետոյն, որ կոչի Քասաղ, ի դրունս մեծի Ամլորդւոյն եւ երանեալ ամէնօրհնեալ բերանոյն Քրիստոսի՝ Սրբոյն Յովաննու Կարապետին եւ սուրբ Աջոյն Մատթէոսի աւետարանչի, եւ Սուրբ Լուսաւորչին, եւ Պարսամայ ճգնաւորի, եւ Պանդալէոնի բժշկի, եւ այլ միաեղէն սրբոցս, որք կան աստ հաւաքեալ, ի թագաւորութեանն Պարսից շահ [Ի]սմայլի (Սուլեյմանի — Ա. Հ.) եւ յիշխանութեան |325ա| տանս Արարատեան Զալ խանի եւ առաջնորդութեան սուրբ ուխտիս հեզահոգի եւ սրբազան Յոհաննէս վարդապետի, եւ աթոռակալութեան Սուրբ

[265] Մայր ցուցակ ՄՄ, Բ., սյուն 1046—1048, տե՛ս նաև ԺԷ. դ. հիշ-ք, Բ., էջ 175—177, Հմր 256ա:

[266] Մայր ցուցակ ՄՄ, Բ., սյուն 1048—1049, տե՛ս նաև ԺԷ. դ. հիշ-ք, Բ., էջ 504, Հմր 736, **Ն. Ակինեան**, Մովսէս Գ. Տաթեւացի, էջ 134—135:

[267] Մայր ցուցակ ՄՄ, Բ., սյուն 1049, տե՛ս նաև ԺԷ. դ. հիշ-ք, Գ., էջ 428, Հմր 681:

էջմիածնի Ստեփաննոսի Իլովացւոյ: Քանզի մեծ կաթողիկոսն Հայոց Յակոբ գնաց ի Կոստանդնուպօլիս վասն հոգալոյ իրաց ինչ յաղագս Սուրբ Աթոռին եւ ի թուին Ռ. եւ Ճ. ի Ի. եւ Թ. (1680), օգոստոս ամսոյ Բ. (2), յաւուր երկուշաբաթի վաղճանեցաւ, եւ եղեւ սուգ անհնարին ի վերայ ազգիս, եւ Դ. (4) ի նոյն ամսոյն բարձին զնա եւ տարեալ ի Կորնթոս, որ այժմ ասի Ղալաթայ, եւ եդին զնա ի հանգստի:

Սակայն, ժողովեցան ամենայն վարդապետք եւ եպիսկոպոսք, եւ վանականք, եւ մեծամեծք ի հայոց յերևանայ եւ նախչուանայ ի Սուրբ Աթոռն էջմիածին եւ սգացին զսուգ կաթողիկոսին, եւ հաստատեցին զՍտեփաննոսն տեղապահ, եւ ինքեանք ընտրեցին զոմն վարդապետ Պետրոս անուն՝ այր գիտուն եւ ճարտարախօս, որ էր եպիսկոպոս Գողթան գաւառին, եւ առաքեցին զնա հրաւիրակ առ եղիազար, որ երբեմն եղեւ կաթուղիկոս եւ այժմ կայ նստեալ պատրիարգ ի սուրբ Երուսաղէմ, զի եկեսցէ ի բարձրագահ Աթոռն ի Սուրբ էջմիածին եւ նստցի Աթոռ կաթուղիկոսութեան, եւ կամ թէ ո՞ ոք եւ կամիցի, նստուցանէ, սակայն ինչ եւ իցէ առանց հրամանաց նորա ոչ ոք լինի կաթողիկոս:

Եւ ահա ՌՃԻԹ. (1680) թուի եւ նոյեմբեր ամսոյ Ա. (1), որում գրեցի զայս, այսպէս է, զոր գրեցաք, եւ յետագայն Աստուած գիտէ, որում ժամանակի կազմեցաւ գիրքս ձեռամբ վատաշուէր եւ չարահամբաւ Ջաքարի[ա] սարկաւագի Քանաքեռցւոյ, որ Խ. (40) ամ անհաճոյ վարուք ծառայեցի առ դրան Սուրբ Կարապետիս եւ ի ծերութեան իմում կազմեցի զայս, զի մնասցէ ի դրան |325բ| Սուրբ Կարապետիս: Եւ որք վայելեն զսայ, յիշեսցեն զաշխատաւորն, որք ունին երախտիք առ դրան Սուրբ Կարապետիս՝ զՋաքարիա քաջ րաբունապետն՝ զառաջնորդ ուխտիս, որ զգիրքս գրեալ՝ եդ յիշատակ աստ, եւ Յօհաննէս վարդապետ՝ փոխանորդ նորա, եւ այլ միաղէն միաբանք ուխտիս, եւ զիս՝ փանաքի եւ մեղապարտ Ջաքարիա կազմօղս, եւ որք յիշեն, յիշեալ լիցին ի Քրիստոսէ՝ օրհնելոյն յաւիտեանս. ամէն[268]:

Ձեռագիրը Ս. էջմիածնի նախկին գրատան հիմնական հավաքածուում է եղել (հին Հ[մր] 549): Գրչության ընդարձակ հիշատակարանը Մովսես Տաթևացի վարդապետի՝ Ս. Անանիա առաքյալի անապատում հիմնած դպրոցի ու միաբանության մասին պատմող յուրօրինակ վկայագիր է, երբ գրիչը՝ Հովհաննավանքի արդյունաշատ վանահայր և տեղի դպրոցի հիմնադիր Ջաքարիա Վաղարշապատցին, մատյանի գրչագրման մանրամասներից զատ, կարևոր տեղեկություններ է հաղորդում նաև Մովսեսի անձի, անապատի միաբանության անդամների և երկրում տիրող քաղաքական ծանր իրավիճակի մասին: Նկատառելով այդօրինակ վկայությունների կարևորությունը՝ հիշատակարանը մեջբերել ենք գրեթե ամբողջությամբ՝ զանց առնելով միայն փառատրական հատվածները: Հատկանշելի է այն, որ Ջաքարիան չի զլացել և անվանապես թվարկել է Մովսես վարդապետի հիմնած սուրբ ուխտի, այսինքն՝ Ս. Անանիա առաքյալի անապատի մի շարք միաբանների անունները՝ երբեմն նշելով նաև նրանց զբաղեցրած պաշտոնները[269]: *Հիշատակարանում վկայված միաբանների անվանացանկը հետևյալն է.*

Տ. Ռստակես վարդապետ [Շամբեցի]
Տ. Իսրայել (ննջեցյալ) [Մեղրեցի]
Տ. Խաչատուր վարդապետ [Կեսարացի]
Տ. Փիլիպոս վարդապետ [Աղբակեցի]
Կարապետ եպիսկոպոս (գրչի մորեղբայրը)
Տ. Մինաս (գրիչ)

---

[268] Մայր ցուցակ ՄՄ, Բ., պուն 1049–1050:

[269] **Մ. Խոսափկեան,** ԺԷ. դարու Հայոց վերաւորոգիչ կաթուղիկոսները. գլուխ Ա. Հարանց անապատ եւ Մովսէս կաթուղիկոս, էջ 443–444:

Տ. Հովսեփ
Տ. Փիլիպոս
Տ. Պողոս
Տ. Հովհաննես
Զաքարիա էջմիածնեցի (գրիչը)
Տ. Խաչատուր [Երնջակեցի]
Տ. Հակոբ [Աստապատեցի]
Առաքել (մարմնով տկար)
Եսայի սարկավագ [Կարճավանեցի]
Զաքարիա լուսարար
Ղուկաս ջահրնկալ
Ղազար ջահրնկալ
Կարապետ խոհարար

Դատելով նշված անուններից՝ միաբանության անդամների թվում էին նաև տեղի գրչության դպրոցի գրիչները, ինչպես օրինակ՝ Զաքարիան, Մինասը, Եսային, Խաչատուրը, Առաքելը, որոնց անունները վկայված են նաև Ս. Անանիա առաքյալի անապատից մեզ հասած այլ ձեռագրերում (ՄՄ ձեռ. Հ՝թ 1538, 4058, 6322, 9147):

Գրիչ Զաքարիա էջմիածնեցու կամ Վաղարշապատցու մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում պատմագիր Զաքարիա սարկավագ Քանաքեռցին: «Պատմութիւն եւ վարք Զաքարիա վարդապետին» խորագրով գլխում, ի թիվս նրա կյանքին ու գործունեությանը վերաբերող մի շարք տվյալների, պատմագիրը Զաքարիային նոտար ու քարտուղար է կոչում: Շահ Աբասի իրագործած բռնագաղթի հետևանքով Սպահանում հաստատված և արդեն ուսման մեջ հաջողությունների հասած Զաքարիային էջմիածնի Դավիթ Դ. Վաղարշապատցի (1590–1629) կաթողիկոսը նոտար (գրագիր) է կարգում և կարճ ժամանակում քահանա ձեռնադրում: Տարիներ անց Զաքարիա Վաղարշապատցին հիշվում է իբրև Մովսես Տաթևացու քարտուղար, որի հիմնած դպրոցում ևս ձեռք է բերել բազում գիտելիքներ: Պատմագրի հաղորդմամբ «... եկեալ անդ (թերևս Ս. Անանիա առաքյալի անապատ – Ա. Հ.) կրկին լուսաւորիչն Մովսէս վարդապետն Տաթեւացի՝ բազում աշակերտօք: Եւ Զաքարիայն, լուեալ զբարի համբաւ նորա, գնացեալ առ նա եւ աշակերտեցաւ նմա եւ շրջէր միշտ ընդ նմա: Եւ էր քաջ քարտուղար նմա...»[270]:

1660 թ. Սպահանում (Նոր Ջուղա, Ասպահան) Աստվածատուր քահանայի ընդօրինակած ՄՄ Հ՝թ 201 Աստվածաշնչի պատվիրատու-ստացողը միևնույն Զաքարիա Վաղարշապատցին է, որը ձեռագրի հիշատակարանում իրեն բնութագրում է իբրև աշակերտ «...մեծի եւ տիեզերահռչակ, երկրորդ լուսատուին Հայոց եւ վերստին նոր նորոգողի Սբ. էջմիածնի՝ տեառն տէր Մովսիսի կաթուղիկոսի...»[271]: Ստացողի ընդարձակ հիշատակարանում Զաքարիան անվանապես թվարկում է Մովսես Տաթևացու և Սրապիոն Եդեսացու (աթոռակից Դավիթ Վաղարշապատցու) առավել հայտնի աշակերտների անունները, որոնց թվում նաև ինքն է. Տաթևի Հարանց Մեծ անապատի առաջնորդ Արիստակես Շամբեցի, Իսրայել վրդ. Մեղրեցի, Նոր Ջուղայի առաջնորդ Խաչատուր վրդ. Կեսարացի, Մովսես Տաթևացու հաջորդ Փիլիպոս վրդ. Աղբակեցի, Ագուլիսի Ս. Թովմա առաքյալի առաջնորդ Խաչատուր վրդ. Երնջակեցի, Աստապատի առաջնորդ Հակոբ վրդ. Աստապատեցի, Երնջակի Ս. Կարապետի առաջնորդ Եսայի վրդ. Մեղրեցի և, վերջապես, Ամատունյաց Ս. Կարապետի կամ Հովհաննավանքի առաջնորդ Զաքարիա վրդ. Վաղարշապատցի: Վերջինս այսպես է բնութագրված. «չնչին ես եւ եղուկ եղկելիս եւ ամենամեղ պարտականս բիւրոց, եւ Ռ.աց (1000) քանքարաց Զաքարիայ, ի տանէս Արարատեան, ի Վաղարշապատ, շողակաթիկ Սուրբ Աթոռոյս էջմիածնի, առաջնորդ Ամատունեաց

[270] **Զաքարիա Քանաքեռցի**, էջ 196:

[271] Մայր ցուցակ ՄՄ, Ա., պահ 876, տե՛ս նաև ԺԷ. դ. հիշ-ք, Գ., էջ 920, Հ՝թ 1399/ա:

Սրբոյ Կարապետիս, որ ի ստորոտս Արագածու եւ ի գաւառիս Կարբոյ եւ յԱնբերդոյ... յուսացեալ ի յուսալին ամենից յամենասուրբ Երրորդութիւնն, որ ետ կարողութիւն նորոգել զսուրբ տաճարքս զայսոսիկ աստուածաբնակք: Որ եւ ամենայն զարդիւք շնորհօքն Քրիստոսի զարդարեցի զսուրբ եկեղեցիքս...»[272]: Հիշատակարանը աղբյուրագիտական ուշագրավ մանրամասներ է հաղորդում ոչ միայն Մովսես Տաթևացու աշակերտների, այլև Զաքարիա Վաղարշապատցու՝ Հովհաննավանքի առաջնորդ լինելու և այստեղ բարենորոգչական աշխատանքներ ծավալելու առումով:

Հետաքրքիրն այն է, որ Զաքարիայի անունը վկայված է նույն Հովհաննավանքի կաթողիկե եկեղեցու 1639 թվակիր նվիրատվական վիմագրում, որտեղ նա հիշվում է իբրև վանքի առաջնորդ, որն իր մոտ էր համախմբել վաթսուն միաբան: Արձանագրության համաձայն՝ Հայոց ՌՁՀ. (1639) թվականին երևանցի Ավագի որդի Աղաբաբը և իր ամուսին Դաստագուլը, միաբանելով սուրբ ուխտին, գնել են Փարպիից կալվածք (Ա. (1) ստակ մուլք) ու նվիրել Ս. Կարապետ եկեղեցուն, որի դիմաց «...առաջնորդ սորա Զաքարիա վարդապետ՝ հանդերձ Կ. (60) միաբանօք, խոստացան պատարագել զՔրիստոս, վասն մեր ոտն Մեծահրաշին յամենայն ամի...»[273]: *Ի դեպ, վիմագիրն ավարտվում է պայմանագրերին հատուկ ձևակերպմամբ, որի դրժողը պարտավոր է վճարել Ճ. (100) ոսկի տուգանք:*

Նշենք, որ մինչև վերջերս անհայտ էր Զաքարիա Վաղարշապատցու գերեզմանի տեղը, որն ըստ Առաքել Դավրիժեցու և Զաքարիա Քանաքեռցու հաղորդման՝ գտնվելիս է եղել Մայր տաճարի նորակառույց զանգակատան դիմաց, ուր մինչ մահանալն իր համար քարատապան էր պատրաստել. «նախ քան զվախճանն իւր ինքն փորեաց զիւր գերեզման և պատրաստեաց քար տապանի... զոր յիւրում պատրաստեալ գերեզմանին թաղեցին իւրով տապանաւն»[274]: *Վարդապետը վախճանվել է Հայոց ՌՃՀ. (1659) թվականի հուլիսի 10-ին, Վարդավառի տոնին: Չնայած Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսը նրան եպիսկոպոս էր ձեռնադրել, բայց իբրև հարգական տիտղոս Զաքարիային շարունակում էին նաև վարդապետ կոչել: Մայր տաճարի և զանգակատան նորոգման աշխատանքների ընթացքում 2019 թ. դեկտեմբերի 23-ին շինարարները զանգակատան մուտքի առանցքով 8,85 մ դեպի արևմուտք հայտնաբերել են ուղղանկյունաձև քարատապան (սարկոֆագ)՝ վրան երեսնիվայր դրված ծածկասալ-տապանաքարով: Նորահայտ հուշարձանը փաստագրել ու չափագրել է Մայր տաճարի վերականգնման նախագծի գլխավոր ճարտարապետ Ամիրան Բադիշյանը: Եռատող տապանագիրն ուղղակիորեն հայտնում է 1659 թ. վախճանված Զաքարիա վրդ. Վաղարշապատցու անունը.*

ԱՅՍ Է ՏԼԱՅ ՊԼԱՆ ՋԼԱՅ ՔԱՐԻԱՅ
ՎԼԱՅ ՐԴԱՊԼԵՅ ՏԻՆ, ԹՎԻՆ ՌՃՀ. (1659)[275]:

Այն, որ Զաքարիան հիշվում է 1660 թ. ընդօրինակված ձեռագրի պատվիրատու, պետք է բացատրել գրչագրումն ավելի վաղ

[272] Մայր ցուցակ ՄՄ, Ա., պյուն 877, տե՛ս նաև ԺԷ. դ. հիշ-ք, Գ., էջ 920, Հմխ 1399/ա:

[273] **Կ. Ղաֆադարյան,** Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 80—81, արձ. 12:

[274] **Առաքել Դաւրիժեցի,** էջ 283, հմմտ. **Շահխաթունեանց,** էջ 24:

[275] **Ա. Հարությունյան, Ա. Բադիշյան,** Զաքարիա վարդապետ Վաղարշապատցին և նրա նորահայտ դամբարանը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, «Էջմիածին», 2020, Ա., էջ 45:

սկսվելու և իր մահից հետո ավարտվելու հանգամանքով, որի մասին գրիչը հարկ չի համարել հիշատակարանում նշել:

Պակաս ուշագրավ չեն նաև ձեռագրի հետագայի հիշատակարանները, որոնցից վաղագույնը 1633 թվականից է և բովանդակում է Հայոց երկրորդ Լուսավորիչ Մովսես Տաթևացի կաթողիկոսի մահը:

1651 թվակիր հետագայի հիշատակարանում դարձյալ կարդում ենք Ջաքարիա վարդապետի անունը՝ հիշատակված իբրև Հովհաննավանքի առաջնորդ, որը ժամագիրքը նվիրել է վանքի Ս. Կարապետ եկեղեցուն և նույն թվականին նորոգել եկեղեցիները: Ըստ էության, պետք է նկատի առնել նույն Հովհաննավանքի հուշարձանախումբը, որի տարբեր կառույցները Ջաքարիայի առաջնորդության օրոք նորոգվել են: Հայերեն ձեռագրերի հիշատակարանների ժողովածուի համապատասխան հատորի կազմող Վ. Հակոբյանը ծանոթագրում է, որ այս հիշատակարանը Ջաքարիա վարդապետի ինքնագիրն է (նկ. 68), իսկ նման բովանդակության հիշատակագրություններ հանդիպում են նաև ՄՄ Հմր 503, 659 ձեռագրերում[276]:

1680 թվակիր հետագայի հիշատակարաններից մեկն էլ, որը ներկայացրել ենք ամբողջությամբ, վերաբերում է ձեռագրի նորոգմանն ու կազմմանը, որն իրականացրել է ավելի քան քառասուն տարի Հովհաննավանքում գործած Ջաքարիա սարկավագ Քանաքեռցին (պատմագիրը), ինչի մասին թողել է ինքնագիր հիշատակարան (նկ. 69): Բացի ձեռագրի նորոգման ու կազմման հանգամանքները ներկայացնելուց՝ հիշատակարանի գրիչ Ջաքարիա Քանաքեռցին մանրամասներ է հաղորդում նաև ժամանակի կրոնական անցքերի, Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի մահվան ու թաղման, ապա նրան հաջորդած եղիազար Այնթապցու՝ հայրապետական գահին բազմելու, Ստեփանոս Լեհացու աթոռակալության, ապա տեղապահության, Հովհաննավանքի երբեմնի առաջնորդ և ձեռագրի գրիչ Ջաքարիա Վաղարշապատցու և նրա փոխանորդ Հովհաննես վարդապետի և այլ հարցերի վերաբերյալ:

Ժամանակագրորեն վերջին՝ 1779 թվակիր հիշատակարանի համաձայն՝ դեռևս 1776 թ.՝ Սիմեոն Երևանցու կաթողիկոսության և Հուսեին-Ալի խանի իշխանության օրոք Հովհաննավանքի առաջնորդն էր Սահակ վարդապետ Մեղրեցին, երբ Վրաց Հերակլ արքան «...եկն Երևան բերդի վերայ, բերդն չէառ, երկրին շատ ավերս արար, մինչ զի էլն ամէն քշել յետ տարաւ յերկիրն Վրացտուն»[277]: Ձեռագրում քանիցս պահպանվել է հիշյալ Սահակ վարդապետի անվանակիր ութանկյուն կնքադրոշմը (321բ, 324բ):

Ջ. ՄՄ ձեռ. Հմր 1538, ԺՈՂՈՎԱԾՈՒ:

ՌՀԴ.—1625 թ., Երևան (ի դուռն Սուրբ ուխտին Անանիայ կոչեցեալ):

Գրիչ՝ Եսայի սրկ. (վրդ.) [Կարճավանեցի]:

Կաշեկազմ՝ դռնակով (զույգ կապիչներն ընկած, նկ. 74ա, բ), միջուկը՝ տախտակ, աստառը՝ Ա. դրոշմազարդ կարմիր, Բ.՝ վանդակավոր կտավ, 321 թերթ, թուղթ. լուսագծերով, 15,5 x 10,7, միասյուն, նոտրգիր, 19 տող: Լուսանցակողերը՝ կարմիր:

Մանրանկարներից ուշագրավ են ամբողջ էջի վրա ներկայացված գահակալ Քրիստոսի (2բ, նկ. 75) և Ս. Ներսես Շնորհալու (194բ, նկ. 76) պատկերները: Բովանդակության միավորների սկսվածքները հիմնականում հարդարված են ճակատազարդերի և լուսանցազարդերի տեսքով, ունի նաև զարդագրեր (հանգուցագիր, թռչնագիր), գույներից գերիշխող են

[276] ԺԷ. դ. հիշ-ք, Գ., էջ 428, ծնթ. 25:

[277] Մայր ցուցակ ՄՄ, Բ., այուն 1050:

կապույտը, վառ ծիրանին, դեղինը, կանաչը, մանուշակագույնը (նկ. 77, 78)։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 240ա Գրեցաւ ձեռամբ Եսայեայ վարդապետի՝
Աշակերտի տեառն Մովսէս կաթուղիկոսի՝
Հանուրց Հայաստանեայց երկրորդ Լուսաւորչի,
Ի թվահաշուութեան Արամեանս ազգի՝
ՌՀ. քառ աւելի (1625)[278]։

2. 317բ ...Արդ, գրեցաւ սուրբ տառս ի դառն եւ ի նեղ ժամանակի, յորում փայլէ վարդապետս մեր տէր Մովսէս քաջ րաբունին, ի աշխարհէն Սիւսակայ, յերկրէն, որ կոչի Աճանան, ի գեղջէն Խոտանանու եւ յաթոռոյն Ստաթէի, որ այժմ կոչի Տաթև, որ լուսաւորէ զազգս Հայկազեան։ Եւ ժողովեալ կրօնաւորական դասս եւ նորոգեաց զվանորայս եւ յանապատս կրկին հաստատեալ պայծառացոյց։ Եւ ապա բազում աշակերտաւք գնացեալ Այրարատեանն գաւառ, որ եւ անդ տիրեալ էր իշխան ոմն ազգաւ պարսիկ՝ Ամիրգօնայ անուն կոչեցեալ քաջ եւ արի, հմուտ ի պատերազմ, մինչ զի յահէ նորայ սարսէին ազգն իսմաելական, որ չկայր նման նմայ։ |318ա| Թէպէտ կրօնիւք այլազգի էր, սակայն բարեպաշտ եւ յերկիւղած էր եւ քրիստոնէասէր, մինչ զի հանդիպել սրբոյս անդ, յոյժ փափաքանաւք ընկալեալ եւ բազում սիրելիութիւնս ցուցեալ եւ տուեալ տեղի մի, որ կոչի Անանիայ առաքեալ, գեղեցիկ եւ վայելուչ ի մէջ այգաստանեաց։ Եւ գնացեալ անդ վարդապետս, նորոգեաց, եւ ժողովեալ բազում աշակերտս եւ կրօնաւորս եւ միայնակեացս, եւ կարգեաց դպրոցս, այլև բազում կարգս եւ կրաւնս հաստատեաց։ Յորում ժամանակի էր թագաւորն Պարսից Աբաս կոչեցեալ, որ տիրեալ էր յԱրևելից կողմա[ն]է Հրմիզն կոչեցեալ կղզի, անդի մինչև ի Բաբելոն եւ Հայաստան եւ Վրացտունն մինչև ի ծովն Կազբից։ Եւ էր թվականն Հայոց ՌՀԴ. (1625)...։

|318բ| Գրեցաւ գիրքս ձեռամբ յԵսայեայ սարկաւագի, յերկիրն Արարատեան, ի գաւառն Կոտայ, ի մայրաքաղաքն Երևան, ի դուռն Սուրբ ուխտին Անանիայ կոչեցեալ, առ ոտս քաջ րաբունոյն Մովսէսի, որ եւ ծառայ եւ տրուպ աշակերտաց իսկ եմ, աշխարհէն Սիւսակա, յերկրէն Գուրհամու, գեղջէն, որ կոչի Կարճաւան։ Արդ, աղաչեմ զամենեսեանսդ, որք հանդիպիք սմայ կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր յԵսայիաս՝ հանդերձ ծնօղօքս իմ, եւս առաւել զրաբունին իմ՝ զտէր Մովսէս, եւ դուք յիշեալք լիջի՛ք առաջի ատենին Քրիստոսի հանդերձ ննջեցելովք ձերովք. ամէն։ Թողութիւն արարէ՛ք, եղբա՛րք, սխալութեան գրոյս, խիստ շատ աւրինակ բերի մէկ տեղ եւ ապայ գրեցի. կար, որ կարգին է, կայ, որ լուսանցն է[279]։

---

[278] ԺԷ. դ. հիշ-ք, Բ., էջ 99, Հմր 258/գ: Ձեռագրում կան այսօրինակ ևս մի քանի գրչության հիշատակարաններ՝ հետևյալ էջերում. 1ա, 105ա, 150ա, 287ա:

[279] Հիշատակարանից մի ընդարձակ հատված հրատարակվել է դեռևս «Արարատ» ամսագրում՝ «Ս. Էջմիածնի գրադարան» խորագրի ներքո, որտեղ անանուն հեղինակը վերլուծել է նաև հրատարակված հատվածի բովանդակությունը, մասնավորապես՝ շահ Աբասի կազմակերպած գաղթը Պարսկաստան, Մովսես Տաթևացի վարդապետը Երևանում և նրա հարաբերությունները Ամիրգունա խանի հետ, Մովսեսի ջանքերով Երևանի անապատի վերահիմնումը, դպրոց ու միաբանություն ստեղծելը և այլն ([Խմբագրական] Ս. Էջմիածնի գրադարանը, «Արարատ», 1888, Է., էջ 407–409, տե՛ս նաև Արարատի ժառանգութիւնը. Ժ. «Արարատ»ի բնագիրներ, հ. Բ., էջ 781–783): Հիշատակարանը տե՛ս նաև **Ն. Ակինեան,** Մովսէս Գ. Տաթեւացի, էջ 97–98: Մայր ցուցակ ՄՄ, Ե., սյուն 410–412: ԺԷ. դ. հիշ-ք, Բ., էջ 99, Հմր 258/ա:

Նախորդի պես այս ձեռագիրը ևս Ս. Էջմիածնի գրատան հիմնական հավաքածուի կազմում է եղել (հին Հմր 1513), որի 3բ էջում պահպանված է «Գիրքս Սուրբ Էջմիածնա է» մակագրությամբ ութանկյուն կնքադրոշմը: Այն չափաբերական նյութերի ժողովածու է (հեղինակներ՝ Ներսես Շնորհալի, Ստեփանոս Օրբելյան, Առաքել Բաղիշեցի, Առաքել Սյունեցի և այլք), որը կարելի է դասել այն մատյանների շարքին, որոնց մեկ կամ ավելի հիշատակարաններում մանրամասն ներկայացվում-բնութագրվում է դեռևս Տաթևի վանքի ու անապատի բազմաշնորհ վարդապետ Մովսես Տաթևացու գործունեությունը: Հիշատակարանը բառացիորեն հայտնում է այն կարևոր տեղեկությունները, որոնք հետագայում գտնում ենք նաև Առաքել Դավրիժեցի պատմագրի երկասիրության էջերում: Սակայն, ամենից ուշագրավն այս վկայագրում Երևանի կառավարիչ Ամիրգունա խանի առաջարկով Մովսեսի՝ Երևանի այգիներում գտնվող Ս. Անանիա առաքյալի անապատում հաստատվելը, շինություններ կառուցելն ու նորոգելը, իր շուրջն աշակերտներ ու կրոնավորներ (նաև՝ ճգնավորներ) համախմբելն ու տեղում դպրոց հիմնելն է: Այդ նորաստեղծ դպրոցի հիմնական առաքելություններից մեկն էլ հայ գրչարվեստը զարգացնելն ու պահպանելն էր, որի առհավատչյան այսօրինակ մատյաններն են: Խնդրո առարկա ձեռագիրը Մովսես Տաթևացու աշակերտներից Եսայի սարկավագ Կարճավանեցի վարդապետի (երկրորդը, թերևս, ուսուցիչ իմաստով) գրչին է պատկանում, որն այն ավարտել է 1625 թ. Ս. Անանիա առաքյալի անապատի դպրոցի հիմնադրման սկզբնական փուլում: Ավելի ուշ՝ 1662 թ. Երնջակի Ս. Կարապետ վանքում ընդօրինակված Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի հիշատակարանում Ալեքսիան գրիչը Եսայի վրդ. Կարճավանեցուն հիշատակում է դարձյալ իբրև աշակերտ Մովսես Տաթևացու և տվյալ ձեռագրի պատվիրատու, որը 1637 թ. «...Նստաւ յաթոռս Երնջակայ եւ զպարիսպն եւ զեկեղեցին, նաեւ զբովանդակ շինուածսն, նոր նորոգեալ շքեղացոյց...» և «ի թվականիս հայկական ազգիս մերոյ ի ՌՃԺԱ. (1662), հրամանաւ եւ ծախիւք մեծի վարդապետին Եսայեայ Կարճաւանցոյ, զոր եա գրել սակս Սրբոյ Կարապետիս Երնջակայ, զոր ինքն էր շինեալ զեկեղեցին հոյակապ եւ մեծափառ՝ հանդերձ պարսպաւն եւ ամենայն շինուածքովն»[280]:

Ինքնին ուշագրավ է 1բ էջի սևով և խոշոր տառերով, թերևս, ձեռագրի գրչությունից ավելի ուշ արված փակագիրը, որը վերծանվում է. ՅՈՎԱՆԷՍ ԱԲԵՂԱՅ[281]:

Է. ՄՄ ձեռ. Հմր 4058, ԺԱՄԱԳԻՐՔ, ՍԱՂՄՈՍԱՐԱՆ, ՏՈՆԱՑՈՒՅՑ:

ՌՀԵ.—1626 թ., Երևան (ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս եւ Անանիայ Սուրբ առաքելոյս եւ Սուրբ Էջմիածնայ լուսակառուց եկեղեցեացն):

Գրիչ՝ Մինաս: Ստացող՝ Դավիթ եպս. [Վիրապեցի]:

Կազմը՝ լաթապատ ստվարաթուղթ (կարմիր լաթ, մեջքը՝ սև կաշի), Ա. փեղկի կազմաստառին փակցված է կարմիր հենքով ծաղկազարդ հին աստառը, 256 թերթ +

---

280 Ցուցակ ձեռագրաց **Խաչիկ վրդ. Դադեանի**, մասն Ա., կազմեց՝ **Յ. Թօփճեան**, Վաղարշապատ, 1898, էջ 69, Հմր 62:

Իր ուղեգրության էջերում այս ձեռագիրը հիշատակում է դեռևս Հայկունին, որն իր ժամանակին ձեռագիրը տեսել է Խաչիկ վարդապետ Դադյանի մոտ, միայն թե սխալմամբ ձեռագիրն ընդօրինակված է համարում Եսայի Կարճավանեցու ձեռքով (տե՛ս **Հայկունի (Եղիշե [Հովակիմ] ավ. քհն. Գեղամյանց)**, Ուղեգնացական ակնարկներ, Գիրք ԺԳ., Երևան, 2010, էջ 94):

281 Մայր ցուցակ ՄՄ, Ե., սյուն 412:

4 թ. տպագիր, Թուղթ, 24 x 18, երկսյուն, բոլորգիր, 24 տող:

Մանրանկարներից ուշագրավ են 100բ էջին պատկերված խորանն ու հանդիպակաց էջի կիսախորանը (նկ. 83, 84), միավորների սկիզբը հիմնականում հարդարում են ճակատազարդերն ու լուսանցազարդերը (բուսական, Թռչուն, տաճար), հանգուցագիր և Թռչնագիր զարդագրերը (նկ. 85, 86), հիմնական գույներն են կապույտը, կարմիրը, կանաչն ու մանուշակագույնը:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 219բ Փա՛ռք...: Ի Թուականութեանս Հայոց տումարի ՌՀԵ. (1626) գրեցաւ աստուածախաւս մատեանս աստուածահաւրն Դաւթի, որ կոչի Սաղմոս, ի Թագաւորութեան Պարսից շահ Ապազին, երկիրս Արա[րա]տեան, ի քաղաքս Երևան, ի տեղապահութեան Թահմազ Ղուլի խանին, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս եւ Անանիայ Սուրբ առաքելոյս եւ Սուրբ էջմիածնա լուսակառուց եկեղեցեացն, որ յայսմ ամի նորոգեցաւ եւ բազում ծախիւք սպիտակեալ զարդարեցաւ ի ձեռն մեծ րաբունապետի Մովսէս վարդապետի, որ եւ առաջնորդ եղեւ սուրբ ուխտեացս շնորհաւքն Քրիստոսի: Այլ եւ պատճառ եղեւ ամենայն բարեաց եւ մանաւանդ աւրինակ կրաւնից, որ յայսմ խանգարեալ եւ վերջացեալ ժամանակիս նորոգեաց եւ լուսաւորեաց զեկեղեցիս Հայաստանեաց, նաեւ կարգս, եւ սահմանս, եւ յանապատաւորս արանց եւ կանանց հաստատեաց ամենայն տեղիս ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ աւրհնելոյն յաւիտեանս. ամէն:

|220ա| Աղաչեմ երեսս անկեալ... անմեղադիր լերո՛ւք պակասութեան գրոյս, զի ծերոց արուեստ է, եւ լի է պակասութեան տեսութեան աչաց եւ զաւրութիւն բազկաց. յաղագս սոցա մի՛ արհամարհէք, աղաչեմ, եղբա՛րք եւ սիրելի՛ք, եւ արգելուք զողորմի ասելն Մինաս անարժան գրչի...[282]*:*

2. 260ա (Ստացողի) Ես՝ Դաւիթ եպիսկոպոս, գրել ետու զՍաղմոսարանս փափագանաւք սրտի՝ յիշատակ ինձ եւ ծնաւղաց իմոց, հաւրն իմոյ՝ Սարգսին, եւ մաւր իմոյ՝ Շահսալթանին, եւ եղբարցն իմոց՝ Ջալալին, Հայկազին, Գրիգորին, քուերն իմոյ՝ Ղլլարին, եղբաւրորդոյն իմոյ՝ տէր Սարգիսին, եւ այլ ամենայն մերձաւորաց իմոց...[283]*:*

Ս. Էջմիածնի գրատան ձեռագրական հավաքածուն էապես հարստացել է նաև 1910–1915 թթ. միջակայքում՝ Մայր Աթոռի բազմաշխատ միաբաններ Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյանի (Մագիստրոս) և Հուսիկ արք. Տեր-Մովսիսյանի մատենադարանապետության տարիներին: Այդ կարճատև շրջանում տարբեր աղբյուրներից Էջմիածնի Մատենադարան է մուծվել ավելի քան 900 ձեռագիր, որոնց շարքում նաև խնդրո առարկա գրչագիրը: Ցավոք, նրա պահպանման նախկին վայրն անհայտ է, ինչը ստիպել է Օ. Եգանյանին ձեռագիրը ներկայացնել հիշյալ հավաքածուի՝ նախկին պատկանելությունն անորոշ 183 ձեռագրերի շարքում[284]*:*

Հիշատակարանում դարձյալ կարդում ենք Մովսես վարդապետ Տաթևացու անունը, որն առաջնորդն ու նորոգողն է Ս. Աստվածածին (Թերևս Երևանի Կաթողիկե Ս. Աստվածածինն է, իմա՝ Կաթողիկե-Ս. Աննա եկեղեցական համալիր), Ս. Անանիա առաքյալ և Ս. Էջմիածին սրբավայրերի: Հիրավի, նրա դպրոցի երևելիներից է նաև Մինաս գրիչը, որն ընթերցողներին խնդրում է ներողամիտ գտնվել գրի պակասավոր լինելու համար,

282 ԺԷ. դ. հիշ-ք, Բ., էջ 209, Հմր 318/ա:

283 Նույն տեղում, էջ 210, Հմր 318/բ:

284 **Օ. Եգանյան,** Մատենադարանի ձեռագրական հավաքածուները, սյուն 90:

քանի որ ինքը ծեր է, աչքերի տեսողությունը՝ թույլ, բազուկներն՝ անզոր: Մինաս գրչին անդրադարձել է Թ. Հակոբյանը, որի կարծիքով նա Երևանից չէր, բայց տևական ժամանակ ապրել է Երևանում, աշակերտել է Մովսես Տաթևացուն և ծերության հասակում նույնիսկ զբաղվել գրչարվեստով[285]:

Ձեռագրի պատվիրատու-ստացողը Դավիթ եպիսկոպոսն է, ժէ. դարի առաջին կեսի նշանավոր հոգևորականներից նույնանուն Վիրապեցին, որը պատվիրատուն է նաև Հալիձորի Հարանց կամ Տաթևի նախկին Մեծ անապատում՝ 1619—1621 թթ. ընդօրինակված ժամագրքի (Երսղմ. ձեռ. Հմր 2000): Նշված ձեռագրի գրիչ և ծաղկող Ղուկաս դպիրը խնդրում է աղոթքներում հիշել Դավիթ եպիսկոպոսի անունը՝ «...որ է Սբ. էջմիածնայ եւ Խոր Վիրապին, որ ետ գրել լուսայգարդ եւ աստուածախօս սուրբ տառս, որ կոչի ժամայգիրք»[286], *այսինքն՝ հիշատակարանում Դավիթն անուղղակիորեն վկայված է իբրև առաջնորդ Ս. էջմիածնի և Խոր Վիրապի: Հիշատակարանի հիմամբ՝ նրա անունը տեղ է գտել Խոր Վիրապի առաջնորդ-վանահայրերի գավազանագրքում*[287]:

75բ էջի արտաքին լուսանցում պահպանվել է ոճավոր եզրերով ձվածիր կնքադրոշմ՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՋԱՔԱՐԻԱ» մակագրությամբ: Թերևս, այն պատկանում է Մովսես Տաթևացու աշակերտ, Ս. Անանիա առաքյալի անապատում գործած, հետագայում Հովհաննավանքի առաջնորդ Զաքարիա Վաղարշապատցուն:

Ը. ՄՄ ձեռ. Հմր 6322, ՎԱՐՔ ՍՐԲՈՑ «ԺՈՂՈՎԵԱԼ Ի ՄՈՎՍԻՍԷ ՏԱԹԵԻԱՑԻՈՑ»:

ՌՀԵ.—1626 թ., Երևան (ընդ հովանեաւ սուրբ եւ մաքուր տաճարի Երկուերեսի եւ ի Ս. Անանիա, Սուրբ Կաթողիկէ սուրբ եկեղեցոյ):

Գրիչ՝ Առաքել, Խաչատուր: Ստացող՝ Մովսես վրդ. Տաթևացի, Աթանաս ապաշխարող եւ քույրը՝ Սանդուխտ:

Կաշեկազմ, 245 թերթ, թուղթ, 25,5 x 20, երկսյուն, բոլորգիր, 25 տող: Լուսանցակողերը՝ կարմիր:

Հատկանշելի է Ավետման համառոտ տարբերակը ներկայացնող լուսանցային մանրանկարը, որտեղ Աստվածամայրը պատկերված է տան առջև (104ա, նկ. 87): Ձեռագրի բովանդակության միավորները հարդարված են սակավ՝ ճակատազարդերով (1ա, 161ա, 209ա, 223ա), առավելապես՝ հանգուցագիր և թռչնագիր զարդագրերով, կից լուսանցազարդերով (բուսական, թռչուն) (նկ. 88—90): Ներկապնակում գերիշխող են կարմիրը, կապույտն ու շագանակագույնը:

ՀԻՉԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 20բ Քրիստո՛ս Աստուած, բարեխաւսութեամբ սրբոյն Յովակիմայ եւ Աննայի՝ ծնողացն Մարիամու, եւ սուրբ Աստուածածնի՝ մօր քո եւ կուսի, ողորմեա՛ ստացողի սուրբ գրոցս՝ Աթանասին եւ Սանդուխտին. ամէն:

2. 26բ Քրիստո՛ս Աստուած, բարեխաւսութեամբ Սրբուհոյն Թէոդորայ, ողորմեա՛ ամենայն հաւատացելոց, նաեւ ստացողի սուրբ գրոցս՝ Աթանաս ապաշխարողին, եւ քըւերն իւրոյ՝ Սանդուխտին, եւ յոգնիմաստ արիւնափայլ րաբունոյն մեծին Մովսէսի, որ զայս հրաշալի Սուրբ Գիրքս ժողովեաց եւ յաւրինակել հրամայեաց հիքոյս՝ Առաքել

---

[285] **Թ. Հակոբյան,** Երևանի պատմություն 1500—1800 թթ., էջ 389—390:

[286] Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. վեցերորդ, կազմեց՝ **Նորայր եպս. Պողարեան,** Երուսաղէմ, 1972, էջ 598, տե՛ս նաև ԺԷ. դ. հիշ-ք, Բ., էջ 32, Հմր 49/դ:

[287] **Ա. Հարությունյան,** Խոր Վիրապ. պատմությունը, ձեռագրական և վիմագրական ժառանգությունը, էջ 138, 141:

գրչիս, վասն կուսանաց եւ ապաշխարողաց ի փառս[288]:

3. 37բ Քրիստո՛ս Աստուած, բարեխաւսութեամբ սրբոց Հռիփսիմանց կուսանաց, ողորմեա՛ ստացողի սուրբ գրոցս՝ Աթանաս ապաշխարողին, եւ քուերն՝ Սանդուխտին, նաեւ յոգնիմաստ արփիափայլ բաբունոյն՝ մեծի եւ հանճարամիտ վարդապետին Մովսէսի, եւ հիքոյս՝ Առաքել գրչի. ամէն[289]:

4. 41ա Պսակի՛չ Քրիստո՛ս Աստուած, բարեխաւսութեամբ սրբոց Գայիանաց կուսանաց, ողորմեա՛ ամենայն հաւատացելոց քրիստոնէից, նաեւ զստացողի սուրբ գրոցս՝ Աթանասին, եւ Սանդուխտին, եւ եղկելի գրչիս. ամէն:

5. 167բ Սոցին աղաչանաւք, Քրիստո՛ս, ողորմեա՛ Աթանաս ապաշխարողին եւ Սանդուխտին եւ ինձ՝ մեղաւոր, սևերես խաչատուր գրչի:

6. 171բ Տէ՛ր Յիսո՛ւս Քրիստոս, նոյն ողորմութեամբն ողորմեա՛ ստացողի գրոցս՝ Աթանաս ապաշխարհողին, եւ Սանդուխտին, եւ ինձ՝ մեղապարտ սուտանուն Խաչատուր գրչի:

7. 245բ Յիշատակա[րա]նս այս գրոց: Փ[ա]ռք ամենասուրբ Երրորդութեան՝ Հաւր եւ Որդ[ո]յ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտ՛, որ ետ կարողութիւն ինձ՝ տրխմար եւ տատամսելի, տարտամ ոգի, սուտանուն, սևերես ամաւթով [Խ]աչ[ատ]ուր գրչի՝ ի հա[ս]ան[ել յա]ւարտ [սուր]բ [տա] ռ[ի]ս, ի քաղաքս Եր[եւ]ան, [ը]ն[դ] հո[վ] անեաւ սուրբ եւ [մա]քո[ւր] տաճարիս Եր[կ]ու[եր]եսի, Սուրբն Անանիա, Սուրբ [Կա]թողիկէ սուրբ եկեղեցոյս, ի թվականութ[եանս Հայոց] ՌՀԵ. (1626) [էր]. ամէն:

Արդ, աղաչեմ զձեզ, ո՛վ լուսերամ դասք քահանայից, յորժամ ընթեռնուք զգիրքս զայս, յիշեցէ[ք] ի մաքրափայլ աղաւթս ձեր՝ զտէր Առաքելն, որ Ժ. (10) տեարն նա գրեց եւ առ Աստուած փոխեցաւ, յիշեցէք եւ լի բերան Աստուած ողորմի ասացէք յիրն. ամէն[290]:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1. 168բ (1737 թ., անարվեստ նոտրգիր, ստորին լուսանցում) Ի Քրիստոսի Աստուծոյ նուաստագունեղ ծառայ՝ Արիստակէս իբր աբեղայս, որ այսմ վշտաշատ ամանակիս հանդիպեցա ի կուսանաց յանապատն Շամբայ, որ յանուն Սուրբ Յովաննու Կարապետին, եւ ես ունէի տկարութիւն յոյժ եւ կայր յերկիրս մեր տարաժամ մահ սաստիկ վասն մեղաց իմոց, որ կոտորէր Տէր անխնայ բազումս |169ա| հաւատացելոց եւ անհաւատից սուր եւ սովն եւս վասն ծովացեալ մեղաց իմոց, զոր Տէր ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան իւրում, ի թվականիս մերում ՌՃՁԶ. (1737), յուլիս ամսոյ Ժ. (10) տասն: Աղաչեմ ընթերձողքդ, որ միով Հայր մեղաւ զիս՝ զտառապեալ եւ եղկելի Արիստակէս իբր վարդապետս անուամբ եւ ոչ գործով յիշեսջիք, որ եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ՝ յոյսոյն մերմէ. ամէն: Հայր մեր՛:

Ս. Էջմիածնի գրատան 1922—1925 թթ. հավաքածուի ձեռագրերից մեկն էլ այս վարքագրական ժողովածուն է, որն Էջմիածնի գրապահոց է մուծվել Թավրիզի առաջնորդարանից[291]: Ձեռագրի բովանդակության գրեթե յուրաքանչյուր վարքագրությունից հետո, որպես կանոն, գրիչները ստացող Աթանաս ապաշխարողի, երբեմն նաև՝ նրա քույր Սանդուխտի և Մովսես վարդապետի (Մովսես Տաթևացին է) համար Աստծուց ողորմություն ու բարեխոսություն հայցող հիշատակագրություններ են թողել (էջ 10բ, 17ա, 20բ, 23ա, 26բ, 28ա և այլուր): Հետաքրքիր է, որ այդ տողերն ուղեկցվում

[288] ԺԷ. դ. հիշ-ք, Բ., էջ 220, Հմր 331/զ:

[289] Նույն տեղում, էջ 220, Հմր 331/դ:

[290] Նույն տեղում, էջ 220—221, Հմր 331/զ:

[291] **Օ. Եգանյան**, Մատենադարանի ձեռագրական հավաքածուները, սյուն 118:

են հիմնականում այսպես կոչված միջնորդ-բարեխոս սրբերի անվանակոչմամբ (Ս. Հովակիմ և Ս. Աննա, Ս. Թեոդորա, Ս. Իրիտա, Ս. Արիդանա, Ս. Թեկղե, Հոիփսիմյանց և Գայանյանց կույսեր, Ս. Մարիամ Աստվածածին, Ս. Կատարինե և այլք), որոնցից մի քանիսը վերը հիշատակեցինք:

Հիշատակարաններից դատելով՝ գրիչները երկուսն են՝ Առաքելը և Խաչատուրը, ընդ որում՝ ձեռագրի սկզբնամասը (10 տետր, այսինքն՝ պրակ) գրվել է Առաքելի ձեռքով, որի վախճանվելուց հետո այն շարունակել է Խաչատուրը: Երկուսն էլ Մովսես Տաթևացու աշակերտներն են, որոնց անունները վկայակոչված են նաև ՄՄ Հ՝ր 507 ձեռագրի գրչության՝ 1625 թ. հիշատակարանում, որտեղ գրիչ Զաքարիա Վաղարշապատցին շեշտում է Առաքելի՝ հիվանդ լինելու հանգամանքը (կարի տակար է մարմնով [Տէր Աստուած ի թիկունս հասանէ]) (տե՛ս մեր շարքի ձեռ. Հ՝ր ե.):

Ձեռագրի վերջին թերթն ընկած է, սակայն, ինչպես ծանոթագրել են հիշատակարանների համապատասխան ժողովածուն կազմողները՝ այն պահպանվել է նաև Սմբատ Տեր-Ավետիսյանի՝ 1904 թ. կազմած «Ձեռագիրք Նախավկայի վանաց Դարաշամբի Ս. Ստեփաննոսի, որ ի Գողթն» ցուցակում (Հ՝ր 58, էջ 115), ինչպես նաև ՄՄ Հ՝ր 671 պատառիկում: Վերջինիս հիմամբ էլ հրատարակվել է:

Այժմ դառնանք ձեռագրի բովանդակությանը: Նախ նկատենք, որ գրչության հիշատակարաններից մեկում Առաքել գրիչը, վկայակոչելով պատվիրատու-ստացողների անունները, հիշատակում է նաև բուն պատվիրատուի՝ Մովսես րաբունու, այսինքն՝ Մովսես Տաթևացի վարդապետի անունը, որն ըստ հիշատակարանի՝ այս հրաշալի Սուրբ Գիրքը կազմել և Առաքել գրչին հանձնարարել է ընդօրինակել՝ «վասն կուսանաց եւ ապաշխարողաց ի փառս»: Կարծում ենք՝ մյուս ստացողներ Աթանասն ու նրա քույր Սանդուխտը զուգահեռաբար նաև ձեռագրի ստեղծման մեկենասներն են, իսկ Մովսես Տաթևացին՝ բովանդակության կազմման հեղինակն ու գրչության պատվիրատուն:

Ինչ վերաբերում է ներկա ձեռագրի բովանդակությանը, ապա չնայած նրան, որ այն Մովսեսի գրչագրածը չէ, այդուհանդերձ, հիմքեր ունենք այն ևս դասելու Մովսես Տաթևացու մատենագրական հետաքրքրությունների շրջանակին՝ իբրև սրբոց վարք-վկայաբանական նյութեր ժողովելու լավագույն օրինակ: Ուսումնասիրության նախորդ գլխում համառոտ անդրադարձանք Մովսես Տաթևացու մատենագրական ժառանգությանը և այդ ուղղությամբ ուսումնասիրողների տեսակետներին:

Ձեռագրի հետագայի հիշատակարաններից ընտրել ենք միայն 1737 թվակիրը (ձեռագրում հետագայի հիշատակարաններ կան նաև 243բ, 245բ էջերում):

Մեր ձեռագիր մատյաններում հաճախ են հանդիպում հիմնականում գրիչների ձեռքով, թանաքի օգտագործման հետ կապված գրչության ժամանակի կամ հետագայի զանազան գրչափորձ օրինակներ: Ներկա ձեռագրում ուշագրավն այն է, որ հետագայի գրիչն ինքն է ասում իր կողմից գրչափորձ անելու մասին. «Քրիստոսի ծառայ, Յիսուսի ծառայ Գրիգորս, գրեցի գրչափորձ...» (236բ):

Թ. ՄՄ ձեռ. Հ՝ր 3502, ԺՈՂՈՎԱԾՈՒ:

Ռճէ—Ռճիհ.—1658—1663 թթ., Երևան (ընդ հովանեաւ մենաստանին առաքելոյ սրբոյ շիրմին, ուր կան նշխարք սուրբ ոսկերաց Դամասկացւոյն Անանիային):

Գրիչ՝ Գրիգոր [Երևանցի]: Ստացող՝ Մատաթիա վրդ.:

Կաշեկազմ՝ դռնակով (զույգ կապիչներն ընկած), աստառը՝ ծաղկազարդ

կտավ, 443 թերթ, թուղթ, 18,5 x 12, միասյուն, նոտրգիր, 23 տող:

Մանրանկարչությունը բավական վարպետորեն է արված՝ գծագրված սևով, գունազարդված կարմրի ու վարդագույնի երանգներով (նկ. 91—93): Միավորներից մեկի սկզբնաթերթը հարդարված է կիսախորանով՝ կից բուսական լուսանցազարդով ու զույգ ձկներով արտահայտված զարդագիր «Ո»-ով (222ա, նկ. 94):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 220բ Գրեցաւ ի թուականիս Հայոց հազար հարիւր եւ եօթն (1658), ձեռամբ յոգնամեղ եւ սուտանուն Գրիգորի: Աղաչեմ զձեզ, ո՛վ հայրք եւ եղբարք, որք հանդիպիք յայսմ տառիս, յիշեցէ՛ք զմեղապարտս:

2. 353ա ...Արդ, աղաչեմ, մի՛ անփոյթ առներ, եւ Տէր հատուսցէ քեզ զվարձս քո: Ընդ նմին եւ ես՝ յետինս յամենեսեան եւ քան զբնաւս յանցաւորս եւ անթիւ մեղօք ծանրաբեռնեալս եւ արժանիս բազում մահուց եւ ոչ մի եւ ոչ մի կենաց, խաւարամածս ոգւով Գրիգոր գրիչ, ոչ չեմ յիշելոյ, աղաչեմ յիշել յաղօթս առաջի Քրիստոսի զիս եւ զծնօղսն իմ՝ զՄուրատան եւ զխանբէկին, եւ զեղբայրսն իմ՝ զկարապետն եւ զՄարգարէն, որ փոխեցան առ Քրիստոս, որպեսզի աղօթիւք ձեր գտցուք ողորմութիւն ի Քրիստոսէ: Եւ Տէր տացէ զտըրիտուր ձեզ բազումս ամենէն:

3. 442բ Փա՛ռք...

Մատռուակ է ըստ արժանին,
Բանականաց մարդկան ջոկին:
Յոգունց ըմպեալ ու խոց շնորհին,
Գետահեռեալք մեզ արբուցին,
Յորոց եւ մի հայկազնէին,
Մովսէս Քերթօղն Խորենացին՝
Ճըշգրտահաս վիպասանին,
Յոլով ամաց մատենագրին,
Եռահատոր շարադրողին,
Ընդ Աբուդիմայն եւ զՄարաբին,
Ըստ որում եւ զնոյն երկրորդողին,
Եդեալ են բանք ըմՏեփաննոսին՝
Տարօնեցւոյ պատմաբանին,
Եռատրոհեալ սարաս նմին,
Ընդ որս պատմիչ սըգացողին՝
Արիստակեայ մեծ գուժկանին:
Զջնջումն Հայոց /443ա/ յերկրին,
Յազգին ըստ Երեմիայ ողբերգակին:
Յանկացողի գրոց սոցին,
Ծախիւք ստացօղ տենչմամբ սրտին,
Մատաթեայ օթճող բանին,
Բիւր քանքարոյ պարտապանին:
Հեղգացելոյ ի գործ կարգին,
Անուամբ եւեթ վարդապետին:
յԱրարածոց թուականին ԻԶԶ.—ին (7086),
ի Ծնընդենէ մերոյ Փրկչին ՌՈԿ. եւ եռին (1663),
Տոհմիս Ար[ա]մեան թուականին ԻԲ. Յոբելինին,
Կրկին եւ զհինգ վերաբարդին (5500),
Զգրիչ գրոցս աւարտ հանին:
Յաւուրս հանուրց հայրապետին,
Տեառն Յակոբայ սրբազանին,
Յարքայութեան պարսկականին,
Որ շահ Ապազն առձայնէին,
Թոռն մեծի շահ Ապազին՝
Աւանդապահք լեալ Մահմետին:
Գիրքս այս գրեցան յԱրարատին՝
Լայնաովիտ մեծ նահանգին,
Հանդեպ ծերոյ բարձր լերին,
Քսեսուսթրեայ հանգըրվանին,
Կալուած Կըլմի Աբեթոստին,
Լաստին ձօնեալ Հայաստանին,
Ի Կոտայինըն գաւառին,
Ի յԵրևան նուազ քաղաքին,
Յերկուց ուխոց միջամխին,
Քառասնակնեան եւ Հուրաստանին,
Ընդ հովանեաւ մենաստանին
Առաքելոյ սրբոյ շիրմին,

Ուր կան նշխարք սուրբ ոսկերաց
Դամասկացւոյն Անանիային։
Արդ, աղաչեմ զամենեսին,
Հարց եւ եղբարց, /443բ/ որք հանդիպին
ի յընթեռնուլն գրոցս օգտին,
Թէ ի ներկայս կամ յապառնին,
Գաղափարօղք թէ լինիցին
Կամ սեփհական յիւրեանս կալցին,
Վասն Աստուծոյ յիշել պարտին,
Միջնորդ կանխել զենլոյն գառին,
Ջնջել զգիրս անհուն պարտին,
Մատաթեայի ապիրատին։
Մու հոգոցիւ աշխատ լիցին,
Սակս ծնօղաց իմոց կրկին,
Իմ ըստ մարմնոյ նիւթոյ առթին,
Աստուածատուր միայնակեցին
Եւ ըստ հոգւոյ դաստիարակին,
Աստուածապետ յանձանձողին,
Բարեհամբաւ սրբբահոգին,
Յակոբ տէլէտն յԱստապատցին,
Հեղինակին Սրբոյ ուխտին՝
Նախավկայ Ստեփաննոսին,
Որք տեառնուսոյց «Հայր մեղայ»-ին,
Յօժարամիտ աւօղ լինին,
Ջարիտուրն փոխարինին,
Ինքեանք ի Տեառնէ ընդունիցին։

Ս. Անանիա առաքյալի անապատից մեզ հասած միակ ձեռագիրն է, որը Մատենադարանի ներկա ձեռագրատուն է մուծվել Ս. Էջմիածնի գրատան «Գևորգյան» հավաքածուից (հին Հմր 248)։ Այն պատմագրքերի ժողովածու է, որն ամփոփում է Մովսես Խորենացու («Պատմութիւն Հայոց», «Յաղագս աշխարհագրութեանց»), Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի («Պատմութիւն ժամանակաց»), Արիստակես Լաստիվերցու («Վասն անցից անցելոց ի յայլասեռ ազգաց, որ շուրջ մեօք են անց ընդ աշխարհս Հայոց») երկերը։ Համաձայն հիշատակարանների՝ գրվել է 1658–1663 թթ. միջակայքում, Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի օրոք, Գրիգոր գրչի ձեռքով, Մատաթիա վարդապետի պատվերով։ Այս ձեռագրին անդրադառնալիս՝ Թ. Հակոբյանն այն համարում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» լավագույն օրինակներից մեկը՝ անտեսելով ձեռագրի բովանդակության մաս կազմող պատմագրական մյուս միավորները, ապա ձեռագիրն ընդօրինակված է համարում Մատաթիայի ձեռքով՝ 1663 թ.[292], մինչդեռ հիշատակարանը պարզում է, որ Մատաթիան ձեռագրի միայն պատվիրատուն է, իսկ գրիչը՝ Գրիգորը[293]։ Թ. Հակոբյանին հետևելով՝ ձեռագիրը սխալ է մեկնաբանվել նաև Ս. Անանիա առաքյալի գրչության դպրոցին նվիրված այլ աշխատություններում[294]։

Մաշտոցյան Մատենադարանի համառոտ ձեռագրացուցակում իբրև երկրորդ գրիչ է հիշատակվում Աստվածատուր միայնակյացը[295], որի անունը մեկ անգամ կարդում ենք ձեռագրի ստացողի չափածո հիշատակարանում։ Գրի ուշադիր ընթերցումը պարզում է, որ հիշատակված Աստվածատուրը Մատաթիա ստացողի մարմնավոր, իսկ Հակոբ Աստապատցին՝ հոգևոր հայրն է, հետևաբար, գրիչը կա՛մ միևնույն Գրիգորն է, կա՛մ Մատաթիա ստացողը։

---

[292] **Թ. Հակոբյան,** Երևանի պատմություն 1500–1800 թթ., էջ 392–393։

[293] Գրիչ Գրիգորը ԺԷ. դարի երկրորդ կեսին գործած նշանավոր Գրիգոր Երևանցին է, որի ընդօրինակմամբ մեզ են հասել մոտ երեք տասնյակ ձեռագրեր։ Այս մասին մեզ տեղեկացրեց մեր գործընկեր Խաչիկ Հարությունյանը, որը հրատարակության է պատրաստել Գրիգոր Երևանցու ձեռագրական ժառանգությանը նվիրված հոդված։

[294] **Բ. Ավետիսյան, Մամբրե քհն. Քեսաբյան,** Պատմություն Սուրբ Հռիփսիմյանց եկեղեցու, էջ 17, Տաթևացուց մինչև Տաթևացի, աշխատ.՝ **Աշոտ դպիր Արևշատյանի,** էջ 65։

[295] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա., կազմեցին՝ **Օ. Եգանյան, Ա. Չեյթունյան, Փ. Անթաբյան,** Երևան, 1965, այուն 1027։

Հիշատակարանում վկայված են ձեռագրի բովանդակության հետ կապված մանրամասներ, որոնց շարքում նշվում են պատմիչներ Մովսես Խորենացու, Ստեփանոս Տարոնեցու և Արիստակես Լաստիվերցու անունները՝ վերջինիս բնութագրելով իբրև «պատմիչ սգացող» և «մեծ գուժկան»: Հետաքրքիր է ձեռագրի գրչության վայրը նկարագրող հատվածը, այն է՝ Երևան քաղաքի Ս. Անանիա առաքյալի մենաստանը, որտեղ ամփոփված են «նշխարք սուրբ ոսկերաց Դամասկացւոյն Անանիային»: Ս. Անանիա առաքյալի վարքն ու վկայաբանությունը ներկայացնելիս՝ հիշատակեցինք նրա՝ ծագումով Դամասկոսից լինելու հանգամանքը, ըստ այդմ ներկա հիշատակարանը կարևոր է նաև սրբին բնութագրելու առումով:

Ժ. ԳՀ ձեռ. Հմր 45 [Ս. Քոլանջյանի ցուցակ Հմր 12 (24)], ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅՈՑ:

Ռճէ.—1658 թ., Երևանի անապատ:

Գրիչ՝ Վարդան Համբակ (աշակերտ):

Կաշեկազմ, 244 թերթ, թուղթ, 14,9 X 10, երկսյուն, նոտրգիր, 12—17 տող:

Մանրանկարչություն չունի, պարբերությունների սկզբնատառերը երբեմն ոճավորված են, խորագրերը՝ կարմիր:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 1ա (տիտղոսաթերթին) Բառարան հայոց, գրեցեալ ի թվին Հայոց Ռճէ. (1658), յԱնապատին Երևանայ, ի Վարդանայ Համբակէ:

Ռումինիայի նշանավոր Գեղա քաղաքի (Արմենոպոլիս, Հայաքաղաք) Ս. Երրորդություն Մայր տաճարի մատենադարանի (ներկայումս՝ Գեղայի պատմական շրջանային թանգարանի) հայերեն ձեռագրերի հավաքածուն ավելի քան հինգ ցուցակագրություն է ունեցել, որոնցից առաջին երկուսի կազմողներն անհայտ են, իսկ մյուսներն են՝ Հ. Գրիգոր Գովրիկյանը, Հ. Սրապիոն Եղիայանը, Հ. Պետրոս Ֆերհատյանը: Առավել ամբողջականը, սակայն, անվանի ձեռագրագետ Սուրեն Քոլանջյանի, ապա՝ Հ. Օգոստինոս վրդ. Սեքուլյանի կազմած ցուցակներն են: Նշվածներից առաջինը կազմվել է 1960 թ., որտեղ կազմողը ներկայացրել է յուրաքանչյուր ձեռագրի արտաքին համառոտ նկարագրությունը և նրանցում եղած հիշատակարանները: Դասակարգել ու համարակալել է ժամանակագրական կարգով՝ 1—115 ձեռագիր՝ գրված 1306—1933 թթ.[296]: Ինչ վերաբերում է Հ. Օգոստինոս վրդ. Սեքուլյանի կազմած-համադրած ցուցակին, ապա այն հրատարակվել է 1976 թ. «Ցուցակ հայերէն ձեռագրաց, որ ի Հանդէս ամսօրեայ»-ի էջերում, ստեղծվել սկզբնական հինգ ցուցակագրությունների հիման վրա, որտեղ ներառվել է 1—53 ձեռագրի ընդարձակ նկարագրություն[297]: Այդուհանդերձ, քանակական առումով ցարդ ամբողջական ցուցակը Քոլանջյանինն է, որը հավաստում է նաև Հ. Օգոստինոսը. «Քոլանջեանի Ցուցակը որքան կերևի 1914էն եառք կազմուած, նոր յաւելումներով ճոխացած ցանկն է»[298]: Նշված 1914 թվակիր հրատարակության հեղինակը «Ա. Բ.» ստորագրությամբ Հ. Գրիգոր վրդ. Գովրիկյանն է, որը ցուցակագ-

[296] **Ս. Քոլանջյան,** Համառոտ ցուցակ հայերեն ձեռագրաց Գեղա հայաքաղաքի, «Բանբեր Մատենադարանի», հ. 9, Երևան, 1969, էջ 433—485:

[297] Հայերէն ձեռագիրներ Կեղա հայաքաղաքի, համադրեց **Հ. Օգոստինոս վրդ. Սեքուլեան,** «Ցուցակ ձեռագրաց, որ ի Հանդէս ամսօրեայ», խմբագրութեամբ՝ **Հ. Համազասպ Ոսկեան,** Վիեննա, 1976, էջ 192—295:

[298] Նույն տեղում, էջ 193:

րել է 32 ձեռագիր, որոնցից միայն 7-ն են հրատարակվել «Հանդէս ամսօրեայ»-ի 1913–1914 թթ. համարներում[299]*:*

Իր հոդվածներից մեկում Սուրեն Քոլանջյանը մանրամասն նկարագրում է 1960 թ. Գեղա կատարած իր այցելության ընթացքում իրականացրած ձեռագրագիտական ուսումնասիրությունները: Այն ժամանակ դեռևս նոր թանգարան տեղափոխված շուրջ 100 ձեռագրերը գիտնականն ուսումնասիրել է 3 օրում՝ դեկտեմբերի 18–21-ը՝ ցուցակագրելով ու որոշ բացատրություններ տալով: Մեր խնդրո առարկա ձեռագիրն ըստ նրա՝ Երեմիա Մեղրեցու բառարանն է. «Բառարաններից պետք է հիշել 1658 թ. «ՅԱնապատին Երևանայ ի Վարդանայ Համբակէ» ընդօրինակված հայերեն լեզվի բառարանը, որը ամենայն հավանականությամբ Երեմիա Մեղրեցու հեղինակությունն է»[300]*: Ս. Էջմիածնի միաբան, ժամօրհնող (պատարագիչ քահանա) Երեմիա վարդապետ Մեղրեցին ապրել ու գործել է ԺԷ. դարում, վախճանվել 1689 թ. և թաղվել է Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում: Նրա օրորոցաձև շիրմաքարի չափածո տապանագրում կարդում ենք. «Այս է շիրիմ Երեմիայի, բազմաշխատ վարդապետի, այլև օրհնող ժամ Սբ. Էջմիածնի եւ բառալոյծ Աստուածաշնչի, որ էր տեղեաւ Մեղրեցի...»*[301]*:*

Ձեռագրի գրչությունն անվերապահորեն վերագրել ենք Ս. Անանիայի անապատին, քանի որ տվյալ ժամանակաշրջանում «Երևանի անապատ» անունով հայտնի էր հենց այս համալիրը: Գրիչ Վարդանն ակնհայտորեն տեղի դպրոցի սաներից է, որը նաև գրչարվեստով է զբաղվել: Այդ է վկայում նրան բնորոշող համբակ մականունը, որն ի շարս այլ բացատրությունների՝ մեկնաբանվում է իբրև երիտասարդ, աշակերտ, սովորող իմաստներով[302]*:*

ԺԱ. ՄՄ ձեռ. Հմր 7939, ԺՈՂՈՎԱԾՈՒ:

ՌՄԻԲ–ՌՄԻԵ.–1773–1776 թթ., Երևան (առ դրան Սուրբ Անանեայի առաքելոյս):

Գրիչ՝ Պետրոս երեց: Ստացող՝ Ավետիք վրդ. Կարբեցի:

Կաշեկազմ, 157 թերթ, թուղթ, 22 x 15,5, երկսյուն, նոտրգիր, բոլորգիր, 25 տող: Լուսանցակողերը՝ կարմիր:

Մանրանկարչություն գրեթե չունի, բացառությամբ՝ սևով գծանկարված և կարմրով գունազարդված մի ճակատազարդի և «Ա» թռչնագրի (61ա, նկ. 82): «Գիրք քարոզութեան» տիտղոսաթերթին ունի խորանաձև հարդարանք՝ դարձյալ արված սևով և գունազարդված կարմրով ու դեղինով (7ա, նկ. 81):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 7ա (տիտղոսաթերթին) Գիրք քարոզութեան՝ արտահանեցեալ ի գրոց սրբոց, ի հոգելից սրբազանից վարդապետաց

---

[299] **Հ. Գրիգոր վրդ. Գովրիկեան** (ստորագրված՝ Ա. Բ.), Կերլայ հայաքաղաքին Մայր եկեղեցւոյն հայերէն ձեռագրաց ցուցակը, «Հանդէս ամսօրեայ», ԻԷ. տարի, Վիեննա, 1913, թ. 11, նոյեմբեր, էջ 690–697, շարունակությունը տե՛ս «Հանդէս ամսօրեայ», ԻԸ. տարի, Վիեննա, 1914, թ. 4, ապրիլ, էջ 219–228, թ. 11, նոյեմբեր, էջ 667–674:

[300] **Ս. Քոլանջյան,** Գեղա հայաքաղաքը և նրա հայերեն ձեռագրերի ժողովածուն, «Բանբեր Մատենադարանի», հ. 6, Երևան, 1962, էջ 518:

Կարևոր ենք համարում նշել, որ Ս. Քոլանջյանի միջոցով Գեղայի թանգարանը Մաշտոցյան Մատենադարանին է նվիրել չորս ձեռագիր և մեկ պատառիկ. դրանք են ՄՄ Հմր 10050–10053 ձեռագրերը և Հմր 1635 պատառիկը (այս մասին մանրամասն տե՛ս նշվ. աշխ., էջ 521–528):

[301] **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, էջ 143, արձ. 186 (ընդգծումը մերն է – *Ա. Հ.*):

[302] Հայերէն բացատրական բառարան, հ. երրորդ, էջ 30:

եկեղեցւոյ, ի փառս շնորհատուողին իւրեանց եւ ամենայն սրբոց նորա:

Գաղափարեցեալ եղեւ ի հայրապետութեան (տեառն Սիմէոնի) սրբազան կաթուղիկոսի Ամենայն Հայոց, ի թուականութեան Արամազեան ցեղի 1222 (1773), մարտի 9:

2. 157ա Ի ՌՄԻԵ. (1776) թվոյս առ դրան Սուրբ Անանեայի առաքելոյս, ձեռամբ յոգնամեղ Պետրոս իրիցոյ յիշել հայցեմ վասն Աստուծոյ:

3. 157բ Փա՛ռք համագոյ եւ միաւնական Սուրբ Երրորդութեանն՝ Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն սրբոյ, այժմ եւ անզրաւ յաւիտենիս, որ ետ կարողութիւն ինձ՝ կիրակոս քահանայի որդի Աւետիս վարդապետիս կարպեցոյ, որոյ եղեւ արտահանեցեալ գիրքս քարոզութեան եւ կամ ստացեալ ի հալալ արդեանց եւ տուեալ ծրագրել ի վայելումն անձին իւրոյ եւ ետ իւրն վայելողք սորին պարտին յիշատակել միշտ զվերոյ յիշեալ Աւետիք ծերունազարդ վարդապետն՝ հանդերձ համայն ննջեցելովք, եւ յիշօղք նորին յիշեալք լիցին առաջի Աստուծոյ: Եւ եղեւ աւարտ հասանել գրոյս ի քաղաքն Երևան՝ առ դրան Սուրբ Անանեայի առաքելոյն, որոյ էր առաջնորդ նոյն վերոյ յիշեալ Աւետիք վարդապետն:

Այլև իշխանութեան Երևանու Հուսեին Ալի խանին, ի տէրութեանն Պարսից վաքիլ Քարիմ խանին, ի դառն եւ ի դժվար ժամանակին, որում յոյժ տառապեալ կային խղճալի ազգն հայոց, անճար եւ անտէրունջ մնացեալ ի ներքոյ լծոյ այլասեռից, որ եւ բարերարն եւ ողորմածն Աստուած իւր ամենառատ եւ անհուն ողորմութեամբն ազատութիւն տացէ եւ ի յերկիրս արևելեան իշխանութեան եւ տէրութեան քրիստոնէից Յերակլի արքային Վրաց, որ եւ գթածն ամենայնի՝ Քրիստոս Աստուածն մեր տացէ երկար կեանս խաղաղականս իւրն եւ որդոց նորին, եւ իշխանութիւն որդւոց որդի մի պակասեսցի ի տանէ նորին, վասն զի ի ժամանակիս յայսմիկ յոյժ զօրացեալ էր լազկին Տաղստանայ, ոչ թէ Աստուծով, այլ ինքնին կատաղեալ եւ բազմացեալ էր վասն մեր մեղացն, որ եւ աւերեցին յերկիրս Արարատեան եւ Փայտակարան եւ այլս բազումս, եւ մնացեալն եւս աւերել, այրել եւ գերեվարել կամէին եւ ոչ շատանային: Յայնժամ զօրացեալն Աստուծով վերոյ յիշեալն արքայն Յերակլէս, յորժամ յիմանայր զգալ զօրաց նոցին, յիշէր զԱստուած կենդանին եւ գնայր ընդառաջ նոցին, վանէր, հալածէր եւ կոտորէր զզօրս նոցա ոչ թէ բազում զօրօք, այլ ըստ բանի մարգարէին, միով զՌ.ս (1000) հալածելով եւ երկոքումբք զբիւրս շարժելով, վասն որոյ էր պարծանք ազգիս քրիստոնէից, որպէս հնումն Մովսէս կամ Յեսու, վասն որոյ ասեմք՝ Աստուած զնորին վարձն հատուսցէ եւ ինձ՝ անիմաստ եւ անարդիւն Ա[ւ]ետիք վարդապետիս, եւ իմ ծնողացն, եւ համայն ննջեցելոցն ողորմեացի եւ այլ աշխատողաց գրոյս վարձահատոյցն Տէր եղիցի. ամէն:

Գրեցաւ եւ եհաս աւարտ ի ՌՄԻԵ. (1776) թուիս Հայոց եւ մարտի յամսոյ ութն. վերջ:

(այլ ձեռքով) Հանդիպողք մէկ ողորմայիւ յիշեցէ՛ք (ստորագրութիւն):

4. Ա. փեղկի կազմաստառին (սևով եւ անարվեստ նոտրգրով) Բ. (2) քաղոցգիրք, Ա. (1) Դրախտ ցանկալի, Ա. (1) արծաթապատ Աւետարան բասմայ, Ա. (1) Հայր Մաշտոց, Ա. (1) Գաւազանի Մաշտոց, Ա. (1) Գործ առաքելոց, առանց Աւետարանի, Ա. (1) Դ[ա]վիթ, Ա. (1) չախու, Ա. (1) ծալօվի, Ա. (1) չարքազի դանակ, Գ. (3) արծաթի մեծ խնծոր, Ա. (1) տիփար նշխարի, Ա. (1) աւեր սհաթ, Բ. (2) Տէր ողորմեայ, Ա. (1) սաղաւարթի խաչ, Ա. (1) մեծ բոլոր արծաթէ խաչ ոսկեջրած, Խե. (45) մսխալ սրմայ ջուրս արծաթ, Ա. (1) շամտանի միչում Աստուծոյ ամանաթ դրի Ղուկասի տունն, ես՝ կարբ[ե]ցի տէր Կիրակոսի որդ[ի] Աւետիկ

վարդապետաս, թվին ՌՃՀԵ.ին (1776), օգոստոսի ԺԵ. (15) օրն։

Ա. համայիլ, Զ. մարհամայքաթ, Ա. կլապիտոնօվ, Ա. արծաթէ գոտի ղօլանօվ, պատկերօվ, Ա. չանկալ։

Անտիպաս Հայրապետ ատամացաւի տեղ։

7ա (1857 թ., շղագիր, ստ. լս.) Ի մատենից Օրբէլեանց ընծայեցաւ յօգուտ ազգի յԱնտրէասէ Օրբէլեանց, 18 6 16 57, ի հինն Նախիջևան։

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ 1922 թ. հիմնվել է Երևանի Գրական (նախկինում՝ Կուլտուրպատմական) թանգարանը, որտեղ 1922–1938 թթ. ձեռագրերի հարուստ հավաքածու է ստեղծվել (1347 միավոր), որը հետագայում հանձնվել է Երևանի Մաշտոցյան Մատենադարանին։ Տարբեր վարժարանների ու գրադարանների ձեռագրերից կազմված հավաքածուն համալրվել է նաև անհատ նվիրատուների կողմից, ինչպես օրինակ մեր խնդրո առարկա ձեռագիրը, որը մեկ այլ գրչագրի հետ (ՄՄ Հմր 8121) թանգարանին է նվիրել աշտարակաբնակ, ծագումով նորնախիջևանցի Նունե Պռոշյանը[303]։

Ձեռագիրը հիմնականում կրոնական նյութերի ժողովածու է (քարոզներ, քաղվածք կանոնագրքից, աստվածաբանական հարց ու պատասխան, առակներ և այլն) և, դատելով գրչարվեստից, թերևս ոչ թե մեկ, այլ երկու գրիչների ձեռքով է գրվել։ Պետրոս երեցը, որն իր անունը ստորագրել է վերջին միավորներից մեկի ստորին մասում, նոտրգրով գրված նյութերի գրիչն է, որը նաև հիշատակարանների հեղինակն է։ Նկատառելով վերջիններիս՝ ցարդ անտիպ լինելու հանգամանքը, այստեղ վկայակոչեցինք ամբողջությամբ, ուստի այժմ անդրադառնանք նրանց բովանդակային մանրամասներին։

Տիտղոսային 7ա էջի խորագրին հաջորդող հիշատակարանային մասը բովանդակում է անարվեստ բոլորգրով շարադրված տվյալ միավորի՝ Սիմեոն Երևանցի (1763–1780) կաթողիկոսի օրոք՝ 1773 թ. գրված լինելու մասին տեղեկությունը, որտեղ հետաքրքիր է Հայոց Մեծ թվականը այբուբենի համարժեք տառերով արտահայտելու փոխարեն արաբական թվերով արձանագրելու եղանակը։ Այս երևույթը սակավ, բայց հանդիպում է նաև վիմագրերում. Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ Ղազար Ա. Ջահկեցի (1737–1751) կաթողիկոսի կառուցած հին վեհարանի շենքը, որը վիմագրում պատրիարքարան է կոչվում, կառուցվել է Հայոց 1190, այսինքն՝ Փրկչական 1741 թվականին[304]։

Ձեռագիր ժողովածուն ամբողջացվել է միայն 1776 թ., ինչի մասին է վկայում վերջում առկա համեմատաբար ընդարձակ հիշատակարանը։ Ուշագրավ է, որ Երևան տեղանվանը կից հիշատակարաններում երկիցս վկայաբերվում է Ս. Աննանիայի եկեղեցին. «առ դրան Սուրբ Աննանեայի առաքելոյս», ինչը վկայում է, որ Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումից հետո (1693 թ.) ևս համալիրը հռչակված է եղել Ս. Աննանիայի անունով։ Հետաքրքիր է, որ ժամանակի ընթացքում և արդեն մեր օրերում մի տեսակ մոռացության է մատնվել համալիրին տրված Ս. Աննանիայի վանքանապատ անունը, փոխարենն այն իր տեղը զիջել է այստեղ տևական ժամանակ պահված սուրբ Ավետարանին, որը հայտնի է եղել իր բուժական զորությամբ, որից էլ՝ Ջորավոր Ավետարան-Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցի։ Յավոք, ԺՀ–ԺԹ. դարերից այս անապատում գրված այլ ձեռագրեր

[303] **Օ. Եգանյան,** Մատենադարանի ձեռագրական հավաքածուները, այուն 147–148, 162:

[304] **Ա. Հարությունյան,** Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, էջ 68, արձ. 41:

մեզ հայտնի չեն. հնարավոր է, որ հետագայում գրիչներն իբրև սովորություն հիշատակել են միայն Երևանը՝ առանց մասնավորեցնելու գրչօջախի բուն անունը:

1776 թվակիր երեք հիշատակարաններից ծավալունը մանրամասն տեղեկություններ է հայտնում նաև պատվիրատու-ստացող Ավետիս վարդապետի, այլև՝ երկրում տիրող քաղաքական ծանր իրավիճակի մասին: Ծագումով Կարբեցի Կիրակոս քահանայի որդի Ավետիս վարդապետը, որը նաև Ս. Անանիայի անապատի առաջնորդն էր, պատվիրել է ձեռագիրն ընդօրինակել նախ իր անձնական օգտագործման, ապա իր գործը շարունակողների համար, որոնք պետք է իրենց աղոթքներում մշտապես հիշատակեին տեր Ավետիս «ծերունազարդ» վարդապետին: ԺՀ. դարի նշանավոր կարբեցիների շարքում աղբյուրագետ Արմեն Ասատրյանը հիշատակում է Երևանում գործած տեր Ավետիս վարդապետին, որը Կիրակոս քհն. Կարբեցու որդին է՝ ծնված ԺՀ. դարակեսին: Ա. Ասատրյանը տարբեր աղբյուրներ հղելով՝ խնդրո առարկա ձեռագիրը երկիցս վերագրում է Ավետիս վարդապետին՝ նախ գրիչ, ապա՝ ստացող, միայն թե այն համարելով երկու տարբեր գրչագրեր՝ «Գիրք քարոզության» և «Ժողովածու». «1776 թ. տեր Ավետիս վարդապետը Երևանի Ս. Ջորավոր (Ս. Անանիա անապատ) եկեղեցում, որի առաջնորդն էր, ընդօրինակել է «Գիրք քարոզության» ձեռագիրը: ...Ավետիք վարդապետ Կարբեցին 1773, 1776 թթ. Երևանում, գրիչ Պետրոս երեցի գրած «Ժողովածուի» ստացողն է եղել»[305]: Թյուրիմացության հիմնական պատճառը ձեռագրի հիշատակարաններում 1773 և 1776 թվականների գործածումն է, որոնք պարզապես վերաբերում են միևնույն գրչագրի ընդօրինակման սկզբին ու ավարտին: Արդեն նշեցինք, որ գրչարվեստից դատելով՝ ձեռագրի վրա երկու գրիչ է աշխատել, ուստի բացառված չէ, որ տեր Ավետիսը ոչ միայն պատվիրատու-ստացողն է, այլև բոլորգիր տառատեսակով գրված մասի գրիչը: Տեր Ավետիսը հիշատակված է նաև եկեղեցու 1781 թվակիր շինարարական վիմագրում, որին կանդրադառնանք իր տեղում (արձ. 7):

Հաջորդիվ գրիչը նկարագրում է Հուսեին Ալի խանի և Պարսից տերության վաքիլ (լիազոր, հավատարմատար) Քարիմ խանի իշխանության օրոք երկրի անփառունակ վիճակը, հայոց ազգի խեղճ ու կեղեքված կացությունը, երբ անօրեն լեզգիները զորանալով ավերել են Արարատյան երկիրն ու Փայտակարանը՝ ցանկանալով ընդլայնել ավերածությունների սահմանները, այրել, կողոպտել ու գերեվարել ժողովրդին: Դառն իրականությունը, սակայն, փոխարինվում է վրաց Հերակլ արքայի գլխավորությամբ՝ թշնամուն ընդառաջ գնալու ու կոտորելու, ինչպես նաև քրիստոնյաներին այլասեռ ազգերի ոտնձգություններից ազատելու ու խաղաղություն հաստատելու գոհունակության տողերով. այդ նպատակով էլ գրիչն Աստծուց նրա համար վարձքի հատուցում է աղերսում:

ԺԲ. ՄՄ ձեռ. Հմր 8337, ԺՈՂՈՎԱԾՈՒ:

Ռ-Յհե.—1896 թ., Ռ-Յկե.—1916 թ., Երևանի Ս. Ջորավոր եկեղեցի (Բ):

Գրիչ, ստացող՝ Խաչատուր Բարսեղի Մարտիրոսեանց (Ա, Բ):

Մոմլաթապատ ստվարաթուղթ, 237 թերթ, թուղթ, 17 x 10,3, միասյուն, նոտրգիր, շղագիր, 17—23 տող:

Մանրանկարչական հարդարանքը պարզունակ է: Ա. մասի միավորներն ունեն ուղղանկյունաձև գլխազարդեր, որոնք հագեցած են սևով և մանուշակագույնով արված երկրաչափական պատկերներով (9բ,

[305] **Ա. Ասատրյան,** Կարբի. պատմություն, հուշարձաններ, ազգագրություն, Երևան, 2010, էջ 97:

40բ, 49բ և այլն), միավորներն իրարից բաժանված են ոճավորված գծազարդերով։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. 1ա Տօներ եւ կիւրակիներ. Պատկանում է գիրքս Խաչատուր Մարտիրոսեանին։

2. 49ա Գրեցիմ Խաչատուր Մարտիրոսեանց (նման՝ 97ա)։

3. 64ա Գրեցիմ Խաչատուր Բարսեղեան եւ Մարտիրոսեանց։ Աստուած բարի վայելումն տացէ կարդացողացն. ամէն։ Եւ միով «Հայր մեղայ»իւ յիշեցէ՛ք զանարժան գրողս սորա, 1900 թուին, ի փետրվարի 21-ին։

4. 189ա Գրեցիմ Զանջրլու գիւղի բնակօղ Խաչատուր Բարսեղով Մարտիրոսեանց։ Աստուած բարի վայելումն տայ։

5. Վերջացաւ քրիստոնէական գրքոյկիս եւ սկսաւ արարչութեան գրքից արտագրել, այսինքն՝ եօթն օրւա ստեղծագործութիւնը Յայսմաւուր գրքից արտագրեցի Երևան քաղաքում՝ Սուրբ Զօրաւոր եկեղեցւոյ խցում, Խաչատուր Մարտիրոսեանց, 1916 թիւ, 25-ն յուլիսին։

6. 234բ Փա՛ռք եւ գոհութիւն, փա՛ռք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ Աստուծոյ մերոյ. ամէն։ Գրքոյկս այս գրուեցաւ Ա. մասն Զանջրլու գիւղում, 1896 թ., իսկ երկրորդ մասն արտագրուեց Յայսմաւուրքից, 1916 թուին, Երևան քաղաքն, ձեռամբ Խաչատուր Մարտիրոսեանցին, որոյ յիշեսցէք զանարժան գրողս։

Ինչպես վերն արդեն նշել ենք, 1922 թ. հիմնված Երևանի Գրական (նախկինում՝ Կուլտուր-պատմական) թանգարանն ունեցել է ձեռագրերի հարուստ հավաքածու (1347 միավոր), որը հետագայում հանձնվել է Մաշտոցյան Մատենադարանին։ Այդ հավաքածուի ձեռագրերից 76-ն այսպես կոչված «Ամերկոմ»-ի, այսինքն՝ Մերձավոր Արևելքի երկրներից ամերիկյան բարեգործական կոմիտեի նախաձեռնությամբ ու միջոցներով փրկված ձեռագրերն են, որոնք ըստ Օ. Եգանյանի՝ հայտնի չեն, թե որտեղից են հավաքվել և նախկինում ում են պատկանել[306]։ Ահա այս շարքի ձեռագրերից մեկ է ներկայումս ՄՄ 8337 համարը կրող ձեռագիր Ժողովածուն, որն, ըստ ամենայնի, Երևանի եկեղեցիներից, ի մասնավորի՝ Զորավոր Ս. Աստվածածնից տեղափոխված ձեռագրերից մեկն է։

Ժամանակային և տեղագրական առումներով երկմաս ձեռագրի վերոհիշյալ գրչության հիշատակարանները հստակ պարզում են, որ այն ընդօրինակվել է ծագումով Վեդիի Ենթաշրջանի Զանջրլու (Զնջռլու) գյուղից Խաչատուր Բարսեղյան-Մարտիրոսյան գրչի ձեռքով, իր իսկ անձնական օգտագործման համար։ Գրչությունը սկսվել է 1896 թ., ներկայումս լքված Զանջրլու գյուղում, շարունակվել 1900 թ. և լրացվել 1916-ին, Երևանի Զորավոր Ս. Աստվածածին «եկեղեցւոյ խցում», այսինքն՝ ավանդատանը։ Ձեռագրի Հաբ էջերում նշված է գրչի ամուսնության և զավակներ ունենալու տարեգրությունը, ինչը ցավալիորեն պարզում է, որ Խաչատուր Բարսեղյան-Մարտիրոսյանի զավակներից շատերը կյանքից հեռացել են վաղաժամ։ Այսպես՝ նա ամուսնացել է 1897 թ. համագյուղացի Մարգարիտ Հարությունյանի հետ։ 1899 թ. հուլիսի 27-ին ծնվել է առաջնեկը՝ Լուսիկը։ 1901 թ. հոկտեմբերի 18-ին՝ Վարսենիկը, որը վախճանվել է 1905 թ. մարտի 3-ին։ 1903 թ. սեպտեմբերի 15-ին ծնվել է Համազասպը, որը վախճանվել է 1905 թ. մարտի 5-ին, այնուհետ՝ 1906 թ. նոյեմբերի 15-ին ծնվել է Թագուհին և վախճանվել 1908-ին։ Նույն 1908 թ. նոյեմբերի 13-ին արդեն Երևան քաղաքում է ծնվել որդիներից Առաքելը, որը մահացել է 1918 թ. հունիսի 10-ին։

[306] **Օ. Եգանյան,** Մատենադարանի ձեռագրական հավաքածուները, պրակ 153։

1912 թ. հուլիսի 1-ին գյուղում են ծնվել թեր-ևս երկվորյակներ Վարդիկն ու Նվարդը: 1914 թ. մարտի 28-ին դարձյալ Երևանում է ծնվել որդիներից Անանիան, որը վախճանվել է 1919 թ. սեպտեմբերի 11-ին: Հիշատակագրված վերջին որդին՝ Հիպարիտը, ծնվել է 1916 թ. սեպտեմբերի 12-ին և վախճանվել 1919 թ. դեկտեմբերի 17-ին:

Ձեռագրի Ա. մասը բովանդակում է քրիստոնեական վարդապետությանն առնչվող զանազան հարցեր ու պատասխաններ (4ա—189ա), իսկ Երևանում գրված երկրորդ մասն ըստ գրչի՝ արտագրվել է Հայսմավուրքից և վերաբերում է աստվածածային արարչության յոթօրյա պատմությանը (190ա—234բ):

ԺԳ. Կեսարիայի ձեռ. Հմր 8, ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ, ՔԱՐՈԶԳԻՐՔ:

ՊԾՋ.—1407 թ., Տաթև (ընդ հովանեաւ դրան Սուրբ առաքելոյս Եւստադէի):

Գրիչ՝ Գրիգոր: Ստացող՝ միգուցե գրիչը: Նորոգող՝ Գրիգոր Կեսարացի (Ռճէ.—1658 թ., ի յանապատս Երևանայ, առ շիրմի նշխարաց մեծի առաքելոյն Անանիայի):

Կաշեկազմ, 313 թերթ, թուղթ, 27 X 17,5, երկսյուն, բոլորգիր, 47—50 տող:

Մանրանկարչությունն ըստ ձեռագրացուցակի տվյալների՝ ունի մեկական խորան և կիսախորան, թռչնագիր գլխատառեր ու կարմիր խորագրեր:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

312բ Ի թուականութեանս մերոյս տոհմի եւ Ասքանազեանս համարի, եւ ի Թորգոմեանս սեռի, հազարերորդի հարիւրերորդի ի չեօթներորդի (1658), ես՝ Գրիգոր պիտակ անուամբ եւեթ բանի սպասաւոր յերկրաւ եւ աշխարհաւ Կապադովկացի, ի քաղաքէն կեսարիու, որ ի հինսն Մաժաք ասի, ըստ մերոյն նախնոյն Արամայ կոչեցելոյ: Ի տես մանկութեան, եւ ի հասակս տղայութեան եկեալ դիպեցայ ի լուսակազմ յաթոռս մեծ, յորում էջմիածին ասի ըստ սրբութեանն յորջորջելոյ, հանդերձ երկոքումբ ընկերակցօք, եւ երիցագունօք քան զիս, որ մինն Սարգիս ասիւր, որ ի տես գեղուղէշ տղայութեան, ես ի նորանուէրս քահանայութեան փոխեցեալ, եղեւ առ կուսագլուխն սրբութեան, ըստ իւրոյն կուսութեան մարմնոյ ասեմ եւս հոգւոյ: Եւ միւսոյն Ղազար պարզամիտն զուարճատես պաշտօնեայ բանից եւ առաքինաջան... եւ հեքս ես ընդ սոսին զարգացեալ, եւ հասեալ ի յարբունս քահանայգործութեան սնեալ առ Փիլիպոսիւ, եւ ձեռնադրեալ քահանայութեամբ եւ բանից իշխանութեամբ առ ի Յակոբայ՝ տեառն ամենայն Հայոց կաթողիկոսի, որով երկասիրեալ ի յաւուրս սորա եւ ի ժամանակս վերստին նոր նորոգեցի զքարոզս զայս եւ զվարժիչս դեռաբոյս մանկանց, եւ զուղղիչս զարտուղի գնացողաց, որ ասի Ամառան հատոր, որ էր հնացեալ իսկ եւ բնաւին քայքայեալ, վերստին նորոգեցի նորացուցի, ըստ իմում չափու գեղեցկացուցի, տխեղծ եւ փանաքի ձեռօքս, էր որ յառաջն, էր որ ի վերջն եւ էր ուրեք, որ ի մէջն, թղթովք միովք եւ երկոքումբ եւ եւս առաւելութեամբ եւ արարի իբրև ի գեղեցկատպաց...:

Բայց արդ, եղեւ նորոգութիւն այսմ գրոցս քարոզութեան ի յանապատս Երևանայ, առ շիրմի նշխարաց մեծի առաքելոյն Անանիայի, ի կաճառս բազմակոյտ եղբարց սրբազանից, յերրորդում ամի հայրապետութեան տեառն Յակոբայ աստուածազարդի: Եւ իշխանութիւնս մահմետականաց՝ երկուց թագաւորացն ինքնակալաց, որովք ի մէջ ճիրանաց պետութեանցն ունին զերկուս մասունս աշխարհի՝ զԱսիացոց զորս այ[ժ]մս ունի մերս թագաւոր, որ անուանեալ կոչի շահ Ապազ, որ նստեալ ի Շօշ, որ այժմ ասի՝ Ասպահան:

Եւ միւսն Կոստանդինուպօլիս, որ ասի օսման Մահմատ, ի ժամանակի աստի, որում ոգորի սա ընդդէմ արիականացն, որ կոչին ֆրանքգ...:

Սակայն, ողորմութեամբ փրկչին մերոյ՝ Քրիստոսի, գաւազան իշխանութեան հայրապետութեան իբրև զջահ մի վառեալ ի մէջ խոր գիշերոյ բորբոքի, եւս առաւել վարդապետք ժրաջանք, որ ամենեքեան ըստ իւրեանց չափու կարողութեան՝ որքան եւ կարէ, նորոգեալ վայելչացուցանեն զվանօրայս աւերեալս եւ զկարգս ի վաղնջուց խանգարեալս: Եւ հոգևոր կաթամբ զբազում տղամիտս եւ զտհաս դիեցուցեալ՝ յարբունս կատարելութեան հասուցանեն: Յորոց եւ մինն ի բազմաց թարմատարս եւ ես՝ Գրիգորս, պիտակ անուամբ վարդապետ, վասն այսորիկ՝ կրկնակի մաղթանօք հայցեմ, յիշատակել զստածիչս եւ զուսուցիչս իմոյ անձին՝ զՅոհան վարդապետն... նաեւ համախոհ եւ համշիրակ, սակաւ աշխատող վերջին կազմութեան գրքիս զՄանուէլ վարդապետն...[307]:

Տաթևի գրչության դպրոցի ծնունդ ձեռագրից, ցավոք, մեզ են հասել միայն ընդարձակ նկարագրությունն ու հիշատակարանների հրատարակությունը (բուն ձեռագիրը պահպանված չէ)[308]: Ներկա ուսումնասիրության շրջանակներում մեզ առավելապես հետաքրքրում է ձեռագրի նորոգմանը վերաբերող հիշատակարանը, համաձայն որի՝ ԺԷ. դարում արդեն քայքայված վիճակում գտնվող քարոզգիրքը Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատում նորոգել է (հավանաբար նաև վերակազմել է) ծագումով Կեսարիայից Գրիգոր վարդապետը[309], որը երիտասարդ հասակում իր երկու ընկերների՝ Սարգսի և Ղազարի հետ եկել է Ս. Էջմիածին և Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի կողմից վարդապետական գավազան ստացել: Ուշագրավ է Ս. Անանիա առաքյալի անապատն իբրև բազում սրբազան եղբայրների «կաճառ» որակելը, որն ինքնին Մովսես Տաթևացուց հետո այստեղ գործած բազմամարդ ու նշանավոր միաբանության գոյության վերաբերյալ բացառիկ սկզբնաղբյուր է:

Հիշատակարանում Գրիգոր Կեսարացին մանրամասնում է ձեռագրի նորոգման հանգամանքները, որը նորացրել ու գեղեցկացրել է այլ թղթերի լրացմամբ, քանի որ այն պակասավոր էր թե՛ առջևից, թե՛ վերջից և թե՛ միջնամասերից: Այս գործում իրեն օգնել է Մանուել վարդապետը, որի համար ևս ընթերցողներից իրենց աղոթքներում բարեխոսություն է խնդրում Աստծուց: Հիշատակարանի գրիչը, որը նույն Գրիգոր Կեսարացին է, ցավով արձանագրում է նաև տվյալ ժամանակաշրջանում երկրում տիրող քաղաքական իրավիճակը, երբ Հայաստանը կառավարում էին մի կողմից Պարսից շահ Աբասը, որը նստում էր Սպահանում, մյուս կողմից՝ օսման Մահմատ խանը՝ Կ. Պոլսում:

* * *

Ներկայացնել Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատի ձեռագրական

[307] Ցուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի եւ Ս. Դանիէլի ի Կեսարիա, կազմեց՝ **Տրդատ եպս. Պալեան**, էջ 18–20, տե՛ս նաև ԺԷ. դ. հիշ-ք, Գ., էջ 838–840, Հմր 1275:

[308] Գրչության 1407 թվակիր հիշատակարանը տե՛ս Ցուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի եւ Ս. Դանիէլի ի Կեսարիա, էջ 18:

[309] Դառնալով այս ձեռագրին՝ Թ. Հակոբյանն այն սխալմամբ վերագրում է գրեթե միևնույն ժամանակաշրջանում Երևանում գործած Մկրտիչ քահանա գրչին, որից մեզ են հասել նաև այլ ձեռագրեր [Բեռլինի արքայական գրադարանի ձեռ. Հմր 35, ՄՄ ձեռ. Հմր 2056] (**Թ. Հակոբյան**, Երևանի պատմություն 1500–1800 թթ., էջ 391, տե՛ս նաև **Բ. Ավետիսյան, Մամբրե քհն. Քեսաբյան**, Պատմություն Սուրբ Զորավոր եկեղեցու, էջ 17, Տաթևացուց մինչև Տաթևացի, աշխատ.՝ **Աշոտ դպիր Արևշատյանի**, էջ 65):

ժառանգությունը և չանդրադառնալ այս նույն վանք-անապատում տևական ժամանակ հանգրվանած «Ջորավոր» անունով հռչակված Ավետարանին, սխալ կլինի: Նկատառելով այն, որ վերջերս առիթ ենք ունեցել հանգամանորեն ներկայացնել այս գրչագրի ստեղծման ու հետագա «դեգերումների» ամփոփ նկարագիրը[310], տեղին ենք համարում այստեղ հիշատակել միայն ձեռագրի հետ կապված որոշ տեղեկություններ:

Կիլիկյան գրչության և մանրանկարչության դպրոցին հարազատ «Ջորավոր» Ավետարանը, որը Ս. Էջմիածնի նախկին գրատան 1910—1915 թթ. ստեղծված հարուստ հավաքածուի մաս է կազմել, ներկայիս ՄՄ Հ՞ր 4060 ձեռագիրն է: Օ. Եգանյանի հաղորդմամբ՝ ձեռագիրը 1911 թ. Էջմիածին է հասել Արտազի Ս. Թադևոս առաքյալի վանքից, որն ի թիվս այլ 72 ձեռագրերի՝ դեռևս կաթողիկոսական տեղապահ Գևորգ Սուրենյանցի կարգադրությամբ տեղափոխվել է նախ Խոյ, ապա Ջուլֆա, որտեղից էլ՝ Էջմիածին և հանձնվել մատենադարանապետ Մեսրոպ Տեր-Մովսիսյանին[311]: «Արարատ»-ում հրատարակվել է կաթողիկոսական տեղապահի 1911 թ. հուլիսի 4-ի Հ՞ր 1708 կարգադրությունը, ըստ որի՝ Մեսրոպ Տեր-Մովսիսյանը պետք է ընդունի Ռուբեն Մկրտչյանի և Հակոբ Գուշակյանի կողմից ուղարկված Ս. Թադևոս առաքյալի վանքի ձեռագրերը և դրանց դիմաց ստացական տրամադրի[312]:

«Ջորավոր» Ավետարանն այն բացառիկ մագաղաթյա հուշարձանն է, որն իր անունով է օժտել Երևանի Ս. Աստվածածին եկեղեցուն՝ հանրությանը հայտնի Ս. Ջորավոր կամ Ջորավոր Ս. Աստվածածին անվանաձևերով: Ձեռագրի գրչությունը բնորոշ է ԺԳ. դարին, ունի 243 մագաղաթյա և 2 թղթյա թերթ, գրությունը երկսյուն է, գիրը՝ բոլորգիր, 23 տող: Ձեռագրի կազմը շագանակագույն դրոշմազարդ կաշի է՝ դռնակով (երեք կապիչներն ընկած), հարդարված կոստղ-գամերով և փլաքներով (որոշներն ընկած) (նկ. 95): Կազմի Ա. փեղկին ունի հետագայում ամրացված մետաղյա խաչ՝ հետևյալ արձանագրությամբ. «Յիշատակ է սուրբ խաչս Առաքելին եւ կողակցին՝ Ուղուրսօղլեանին եւ զատերացն՝ Սէվէրխանին, Օղլանփաշին, Մարիամին»[313]:

Ձեռագրի մանրանկարչական հարդարանքը ևս բավական արժեքավոր է, որն ըստ արվեստաբան Արփինե Սիմոնյանի՝ բնորոշ է ինչպես Բարձր Հայքի, այնպես էլ կիլիկյան մանրանկարչության ավանդույթներին: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ ձեռագրի նկարազարդումներն արվել են ոչ թե մեկ, այլ, ըստ էության, երկու տարբեր ծաղկողների կողմից, որոնցից առաջինը հեղինակն է խորանների, ավետարանիչների պատկերների (որոնցից միայն Մատթեոսի մանրանկարն է պահպանվել [նկ. 96, 97]), մյուսները կարած-հանված են), անվանաթերթերի, որոշ լուսանցազարդերի, իսկ երկրորդը՝ կարմրի տարբեր երանգներով արված լուսանցազարդերի մեծ մասի, լուսանցային մանրանկարների և զարդագրերի[314]:

Ձեռագիրը գրչության հիշատակարան չունի, կամ չի պահպանվել, փոխարենը

---

310 **Ա. Հարությունյան, Ա. Սիմոնյան,** Ջորավոր Ավետարանը. պատկերագիրք-ուսումնասիրություն, Երևան, 2016:

311 **Օ. Եգանյան,** Մատենադարանի ձեռագրական հավաքածուները, յուն 77—78:

312 Պաշտօնական. Կաթողիկոսական ամենապատիւ Տ. տեղակալի տնօրէնութիւնները, «Արարատ», 1911, Ը., էջ 617:

313 **Ա. Հարությունյան, Ա. Սիմոնյան,** Ջորավոր Ավետարանը, էջ 17: Սէվէրխան համառոտագրված անձնանունը նախապես վերծանել ենք Սէվարխան, մինչդեռ Խաչիկ Հարությունյանի խորհրդով ընդունելի ենք համարում առաջին տարբերակը:

314 Նույն տեղում, էջ 25:

վերջից ավելացված թղթյա էջերին պահպանվել է Այրարատի և Բջնիի առաջնորդ, գրիչ տեր Մանուելի՝ ձեռագրի գնման և ընծայման պատմությունը բովանդակող ԺԵ. դարասկզբին բնորոշ հիշատակարանը, համաձայն որի՝ Երևան քաղաքից Վիշապի ու Ջանանի որդի Հակոբն այն պատահականորեն տեսել է վաճառականների ձեռքին, գնել իր «հալալ արդեանց» և զոքանչ Խուգանի նյութական աջակցությամբ. «որ աւգնական եղեւ ի գին սուրբ Աւետարանիս», ապա արծաթյա սկիհի և մեկ ձեռք զգեստի հետ ընծայել է Երևանի նշանավոր Երկուերեսնի եկեղեցուն, որ յուրաքանչյուր տարվա Հայտնության, Ս. Ջատկի և Հոգեգալստյան տոներին մատուցվող պատարագների ժամանակ եկեղեցու սպասավորներն իրենց աղոթքներում հիշատակեն Հակոբին և նրա հարազատներին. «...ես՝ Յակոբս, զաստուածախաւս սուրբ Աւետարանս եւ մէկ ձեռն սգեստ եւ սկիհ արծաթի, որ ստացա ի հալալ արդեանց իմոց, ընձայեցի էրևանո հրաշալի եւ յորդոր ժամատեղացս, որ յամենայն ամի Յայտնութեանն եւ Ջատկին եւ Հոգոյ գալստեանն պատարագաւ եւ Քրիստոս Որդի ասելով յիշատակեն զմեզ եւ զվերասացեալ ծնողքն մեր եւ զայլ արեան մերձաւորս, որք կան շարագրեալ յիշատակարանիս»[315]:

Ամենից ուշագրավը, սակայն, ձեռագրի նորոգմանը վերաբերող Ներսես Մոկացու՝ դարձյալ ԺԵ. դարին բնորոշ հիշատակարանն է, որը գալով Մոկսի Սուրայ գյուղից՝ սպասավորության է անցնում Երևանի՝ մականվամբ Երկուերեսնի կոչվող եկեղեցում (Ս. Պողոս-Պետրոս) և, տեսնելով Ավետարանի անմխիթար վիճակը, իր «հալալ վաստակոց» հանձնարարում է Զաքարիա երեցին այն նորոգել ու վերակազմել, քանի որ Երկուերեսնի եկեղեցում Ավետարանն արդեն հռչակված էր իր գորությամբ. «Ժամանակ ինչ ժամահար եղէ եւ տեսի զօրութիւն սուրբ Աւետարանիս, որ բազմաց ականատես իսկ են եղեալ բժշկութիւն սորա, որ կոչի Վիշապակենց Աւետարան»[316]:

Անհայտ պատճառներով «Ջորավոր» Ավետարանը հետագայում հանգրվանում է Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատի տեղում կառուցված Ս. Աստվածածին եկեղեցում, որի համար էլ տեղի մարաղացիները նորակառույցը կոչել են Ջորավոր Ս. Աստվածածին:

Թե երբ և ում միջոցով է ձեռագիրը հետագայում տեղափոխվել Արտազի Ս. Թադևոս առաքյալի վանք, դժվար է ասել: Միայն հատակ է, որ այն 1911 թ. հուլիսին Արտազից էջմիածին հասած 73 ձեռագրերից մեկն էր:

* * *

Հարկ է նկատել, որ գրչության կենտրոններ լինելուց զատ, Երևանի եկեղեցիները որոշ իմաստով նաև մատենադարանի դեր են կատարել՝ ունենալով սեփական գրապահոցներ: Այս առումով ուշագրավ է Երվանդ Շահազիզի հիշատակությունն այն մասին, որ Ս. էջմիածնի գրատան համալրման ընթացքում՝ 1923 թ. Երևանի եկեղեցիներից հավաքվել ու հանձնվել է 78 ձեռագիր, որոնցից 25-ը՝ Կաթողիկե եկեղեցուց, 20-ը՝ Ս. Պողոս-Պետրոսից, 7-ը՝ Ս. Սարգսից, 21-ը՝ Ս. Հովհաննեսից, 2-ը՝ Ջորավոր Ս. Աստվածածնից, 3-ը՝ Նորքի եկեղեցիներից: Հավաքված ձեռագրերից 38-ն ավետարաններ են, որոնցից հնագույնը՝ գրված Հայոց ՊԻԱ. (1372) թվականին, Դարանաղյաց գավառի Ավագ անապատում, Ստեփանոս կրոնավորի ձեռքով (ՄՄ ձեռ. Հ՞ 6364), նորագույնը՝ Հայոց ՌՃԼԷ. (1688)

315 ԺԵ. դ. հիշ-ք, Ա., էջ 49, Հ՞ 51/ա, տե՛ս նաև **Ա. Հարությունյան, Ա. Սիմոնյան,** Ջորավոր Ավետարանը, էջ 28:

316 Նույն տեղում, էջ 51, Հ՞ 51բ, **Ա. Հարությունյան, Ա. Սիմոնյան,** նշվ. աշխ., էջ 29:

թվին՝ գրված Մարիամ մայրապետի պատվերով (ՄՄ ձեռ. Հ՝թ 6549), ևս մի Աստվածաշունչ՝ գրված Հայոց ՉԿԳ. (1314) թվականին՝ Կիլիկիայում, Կոստանդին երեցի պատվերով, Մարտիրոս գրչի ձեռքով (ՄՄ ձեռ. Հ՝թ 6230)։ Մնացած ձեռագրերը բովանդակությամբ ժամագրքեր են, շարականոցներ, մաշտոցներ, հայսմավուրքներ, խորհրդատետրեր և այլն[317]։

Երևանի եկեղեցիներից հավաքված ձեռագրերի մասին առավել մանրամասն տեղեկություններ է հաղորդում Օ. Եգանյանը. 1922—1925 թթ. ստացված Ս. Էջմիածնի գրատան նոր հավաքածուի մեջ էին ընդգրկված նաև Երևանի եկեղեցիների 78 (ըստ ցուցակի՝ 79) ձեռագրերը, որոնց հավաքագրումն իրականացվել է Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի նախաձեռնությամբ՝ 1923 թ. դեկտեմբերի 14-ին[318]։ Նույն խորհրդի կողմից կազմվել է հավաքված ձեռագրերի ընդհանուր ցուցակ[319], որտեղ, ինչպես Օ. Եգանյանն է ցավով արձանագրում, նշված չեն, թե ո՞ր ձեռագիրը ստույգ ո՞ր եկեղեցուց է վերցված։ Մատենադարանի ձեռագրական հավաքածուների ստեղծման հետագա տարիների տվյալները վկայում են, որ բացի նշված 78-ից Երևանի եկեղեցիներից Մատենադարան են մուծվել նաև այլ ձեռագրեր, այսպես՝ Ս. Պողոս-Պետրոսից՝ 1 (ՄՄ ձեռ. Հ՝թ 7781), Ջորավոր Ս. Աստվածածնից՝ 2 (ՄՄ ձեռ. Հ՝թ 4622, 4644), Ս. Հովհաննես Մկրտչից՝ 2 (ՄՄ ձեռ. Հ՝թ 7618, 7953), Սարդարի բերդի պարսպից՝ 1 (ՄՄ ձեռ. Հ՝թ 8731), ևս 1-ը Երևանի անհայտ եկեղեցուց (ՄՄ ձեռ. Հ՝թ 7236)։ Հավելենք, որ Ս. Ջորավոր եկեղեցու սեփականությունը եղած նշված երկու ձեռագրերը Ս. Էջմիածնի գրատան 1910—1915 թթ. հավաքածու են մուծվել եկեղեցու հոգևոր հովիվ Վրթանես քհն. Մարգարյանի անվամբ[320]։ Վերջինիս անունով մի ձեռագիր էլ ընդգրկված է եղել «Գևորգյան» հավաքածուում, որը ներկայիս ՄՄ Հ՝թ 3273-ն է։ Տ. Վրթանեսի գործունեությանը կանդրադառնանք եկեղեցու հոգևոր հայրերի մասին խոսելիս։

Ս. Էջմիածնից մատենադարանը Երևան է տեղափոխվել 1939 թ., սկզբնական շրջանում տեղակայվել Հանրային գրադարանում։ 1957 թ. ավարտվել էր ճարտարապետ Մարկ Գրիգորյանի նախագծով Մաշտոցյան Մատենադարանի շենքի շինարարությունը, ըստ այդմ էլ՝ 1959 թվականից մատենադարանը հաստատվեց նորակառույցում, որի ձեռագրատանն իրենց վերջին հանգրվանն են գտել նաև Երևանում գրված և տեղի եկեղեցիներում պահված 150-ից ավելի ձեռագրերը։

---

317 **Շահազիզ,** էջ 226, տե՛ս նաև **Թ. Հակոբյան,** Երևանի պատմությունը 1500—1800 թթ., էջ 382, **Ա. Մաթևոսյան,** Երևանի գրչության կենտրոնները, էջ 116։ Երևանի եկեղեցիներից Մաշտոցյան Մատենադարան փոխադրված ձեռագրերի ցուցակը (մեքենագիր) պահվում է Մատենադարանի անտիպ ձեռագրացուցակների ֆոնդում, Հ՝թ 29բ, էջ 1ա—2ա։

ԺԹ. դարի ռուս պատմաբան Ի. Շոպենը տեղեկություններ է հաղորդում նաև Երևանի մզկիթների մասին, որոնցից երկուսը գտնվել են բերդում։ Նրա հաղորդմամբ՝ մուսուլմանների մոտ ձեռագրերի պահպանությունն այլ կերպ էր։ Դուրաններ և բազմաթիվ այլ արժեքավոր ձեռագիր գրքեր կարելի է տեսնել նրանց տներում, այն էլ՝ մի քանի օրինակներով։ Պատմական և նման այլ բովանդակության ձեռագրերը վաճառվում են բավական թանկ, առասպելական գներով (Исторический памятник армянской области, сочинение **И. Шопена,** Санкт-Петербург, 1852, այուն 687, 917)։

318 **Օ. Եգանյան,** Մատենադարանի ձեռագրական հավաքածուները, այուն 120։ Նշված 78 ձեռագրերի ցանկն ըստ արդի համարների տե՛ս նույն տեղում, այուն 122—123, ցանկ Է.։

319 Ցուցակ ձեռագրաց Երևան քաղաքի, ՄՄ անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, Հ՝թ 29բ — տե՛ս **Օ. Եգանյան,** Մատենադարանի ձեռագրական հավաքածուները, այուն 120, ծնթ. 213։

320 Նույն տեղում, այուն 88։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ՝ Ս. ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼԻ ԱՆԱՊԱՏԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ

Ձեռագրի համարը	Բովանդակությունը	Ժամանակը, վայրը	Գրիչ	Ստացող	Կազմող
ՄՄ 6405	*Գրիգոր Տաթևացի, Քարոզգիրք*	*ՊԾՐ—ՊԾԹ.—1409—1410 թթ., Երևան (առ դուռն սուրբ տաճարիս Անանիայ առաքելոյ)*	*Գալուստ վրդ. Վաղադնեցի, Թովմա վրդ. Մեծոփեցի, Սիմեոն կրն., Ոհաննես*	*գրիչները*	
Մուշ քաղաքի և շրջակայքի ձեռ. 20	*Գանձարան*	*ՊՂԹ.—1450 թ., Երևան (ընդ հովանեաւ ամենազօր ս. առաքելոց գերեզմանիս)*	*Հովհաննես*	*Մարգար երեց*	
ՄՄ 5243	*Գրիգոր Տաթևացի, Քարոզգիրք*	*ՌՀԲ.—1623 թ., Երևան (ընդ հովանեաւ մատուռի Սրբոյն Անանիայի առաքելոյն)*	*Պողոս Տիվրիկցի*	*Մովսես րաբունապետ [Տաթևացի]*	
ՄՄ 9147	*Ժողովածու*	*ՌՀԲ.—1623 թ., Երևան (ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս եւ Անանիայի Սուրբ առաքելոյս)*	*Զաքարիա Վաղարշապատցի*		
ՄՄ 507	*Ժամագիրք Աւենի*	*ՌՀԴ.—1625 թ., Երևան (ի դրունս Սուրբ Առաքելոյն Անանիայի)*	*Զաքարիա աբղ. Վաղարշապատցի*		*Զաքարիա սրկ. Քանաքեռցի (1680 թ.)*
ՄՄ 1538	*Ժողովածու*	*ՌՀԴ.—1625 թ., Երևան (ի դուռն Սուրբ ուխտին Անանիայ կոչեցեալ)*	*Եսայի սրկ. [Կարճավանեցի]*		
ՄՄ 4058	*Ժամագիրք, Սաղմոսարան, Տոնացույց*	*ՌՀԵ.—1626 թ., Երևան (ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս եւ Անանիայ Սուրբ առաքելոյս եւ Սուրբ Էջմիածնայ լուսակառուց եկեղեցեացն)*	*Մինաս*	*Դավիթ եպս. [Վիրապեցի]*	
ՄՄ 6322	*Վարք սրբոց «ժողովեալ ի Մովսիսէ Տաթևացւոյ»*	*ՌՀԵ.—1626 թ., Երևան (ընդ հովանեաւ սուրբ եւ մաքուր տաճարի երկուերեսի եւ ի Ս. Աննա, Սուրբ Կաթողիկէ սուրբ եկեղեցւոյ)*	*Առաքել, Խաչատուր*	*Մովսես վրդ. Տաթևացի, Աթանաս ապաշխարող, Սանդուխտ*	

ՄՄ 3502	*Ժողովածու*	*ՌՃԿ–ՌՃԻԲ.–1658–1663 թթ., Երևան (ընդ հովանեաւ մենաստանին առաքելոյ սրբոյ շիրմին, ուր կան նշխարք սուրբ ոսկերաց Դամասկացւոյն Անանիային)*	*Գրիգոր [Երևանցի]*	*Մատաթիա վրդ.*	
ԳՀ ձեռ. 45	*Բառարան հայոց*	*ՌՃԿ.–1658 թ., Երևանի անապատ*	*Վարդան Համբակ (աշակերտ)*		
ՄՄ 7939	*Ժողովածու*	*ՌՄԻԲ-ՌՄԻԵ.–1773–1776 թթ., Երևան (առ դրան Սուրբ Անանեայի առաքելոյս)*	*Պետրոս երեց*	*Ավետիք վրդ. Կարբեցի*	
ՄՄ 8337	*Ժողովածու*	*ՌՆԿԵ.–1916 թ., Երևանի Ս. Ջորավոր եկեղեցի*	*Խաչատուր Բարսեղի Մարտիրոսյանց*	*գրիչը*	
Կես. ձեռ. 8	*Գրիգոր Տաթևացի, Քարոզգիրք*	*ՊՇՋ.–1407 թ., Տաթև, նորոգումը՝ ՌՃԿ.–1658 թ., Երևանի անապատ (առ շիրմի նշխարաց մեծի առաքելոյն Անանիայի)*	*Գրիգոր*	*գրիչը (՞)*	*Գրիգոր Կեսարացի*

ՋՈՐԱՎՈՐ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ



Ս. Անանիա առաքյալի մատուռ-դամբարանը
և Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցին հյուսիս-արևմուտքից

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

/ *Տողատման կամ շեղ գծով նշված են բնագրի տողերի սահմանները։*

... *Կետերով նշված են եղծված կամ ջարդված գրերը՝ անկախ քանակից։*

⌊ ⌋ *Փակագծով նշված են փորագրողի բաց թողած, «պատիվ» նշանով կամ առանց դրա հապավված տառերի կամ տառակապակցությունների վերականգնումները. չեն բացվում «տերունական» յոթ բառերը։*

⌜ ⌝ *Փակագծով նշված են եղծված կամ ջարդված տառերի վերականգնումները։*

[ ] *Փակագծով նշված են ակներև ավելորդ տառերը։*

«Գրի անմահությունը և զորությունը խորհրդանշող հուշարձան է Երևանի Ջորավոր եկեղեցին: Այն մի բանի անգամ հիմնահատակ լինելուց և որպես Սուրբ Աստվածածին վերակառուցվելուց հետո շարունակում է կոչվել Ջորավոր: Այդպես էր կոչվում նա նույնիսկ այն ժամանակ, երբ «Ջորավոր» ձեռագիրը բացակա էր Ս. Ջորավոր եկեղեցուց: Այդպես է կոչվում եկեղեցին նաև այսօր»

Արտաշես Մաթևոսյան
(«Երևանի գրչության կենտրոնները», էջ 115)

Ա. ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՆԱՀԱՊԵՏ Ա. ԵԴԵՍԱՑՈՒ ՕՐՈՔ

Երևանի 1679 թ. հզոր երկրաշարժից հետո Հայաստանում մեծ թափ ստացավ եկեղեցաշինությունը: Աղետից վնասված և հիմնովին ավերված հուշարձաններն Ամենայն Հայոց հայրապետների օրհնությամբ և խոջա-վաճառականների մեկենասությամբ նորոգվում կամ վերակառուցվում էին[321]: Վերը նշեցինք, որ գրիչ Գրիգոր Երևանցու ընդօրինակած ձեռագրերից մեկի (ՄՄ ձեռ. Հմր 1512) հիշատակարանում մանրամասն նկարագրված են Երևանի երկրաշարժն ու պատճառած վնասները, ի շարս որոնց՝ ականատես հեղինակ Տ. Սուքիաս քհն. Գառնեցին տեղեկություններ է հաղորդում նաև Ս. Աննանիա առաքյալի անապատի եկեղեցու խոնարհման և մի քանի միաբանների հետ ներսում նահատակված Գեղարդավանքի վանահայր Ստեփաննոս եպիսկոպոսի մասին[322]:

Երկրաշարժի հետևանքով է, որ Արարատյան դաշտում պահպանված հուշարձաններից շատերը թվագրվում են ԺԷ—ԺՀ. դարերով[323]: Շինարարության այս նոր վերելքը հատկանշվեց նաև ճարտարապետական, քանդակագործական և արվեստի այլ ոլորտների որոշ նորամուծություններով, որոնք չնայած հեռու էին վաղ և զարգացած միջնադարի հայտնի գլուխգործոցներից, այդուհանդերձ յուրօրինակ են տվյալ պատմաշրջանին հատուկ մշակութային առանձնահատկություններն ուսումնասիրելու առումով: Ահա հենց այս ժամանակաշրջանի ծնունդ է նաև Երևանի կենտրոնում գտնվող Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցին, որը կառուցվել է Նահապետ Ա. Եդեսացի (1691—1705) կաթողիկոսի օրոք՝ 1693 թ., խոջա Փանոսի մեկենասությամբ: ՄՄ Հմր 1534 Հայսմավուրքի գրչության 1695 թվակիր հիշատակարանում գրիչ Գրիգոր Երևանցին ձեռագրի ստեղծման շարժառիթներից զատ մանրամասն նկարագրում է նաև պատվիրատու-ստացող Նահապետ կաթողիկոսի շահեկան գործունեությունը ինչպես Ս. էջմիածնի, այնպես

[321] ԺԷ. դարում լայն տարածում էր ստացել Լեոյի բնորոշմամբ «խոջայական կապիտալը», որի կենտրոնը Նոր Ջուղան էր՝ բազմաթիվ հայ վաճառականների ու գործարարների հիմնական օջախը՝ խոջա Նազարի գլխավորությամբ: Խոջայական կապիտալի կուտակումը Նոր Ջուղայում (հետագայում՝ Հնդկաստանում) նույն դարի կեսերից նախադրյալներ է ստեղծում «մեկենասության» դպրոցի ձևավորման համար, ինչի արդյունքում խոջաներից շատերը մեծապես կարևորում են իրենց միջոցների ներդրումը հայրենիքում եկեղեցի, դպրոց, տպարան և հոգևոր ու մշակութային այլ կենտրոններ կառուցելու կամ նորոգելու ուղղությամբ: Խոջայական կապիտալի մասին մանրամասն տե՛ս **Լեո,** Խոջայական կապիտալը յեվ նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, Յերևան, 1934, էջ 63—172:

[322] Մայր ցուցակ ՄՄ, Ե., այուն 155—156:

[323] Նշված ժամանակաշրջանի հուշարձանները կենտրոնացված էին հիմնականում բուն Երևանում և մերձակա բնակավայրերում, ինչպես օրինակ՝ Ջորավոր Ս. Աստվածածին, Կոնդի Ս. Հովհաննես, Նորագավիթի Ս. Գևորգ, Քանաքեռի Ս. Հակոբ, Ս. Աստվածածին, Վաղարշապատի Ս. Շողակաթ, Մուղնիի Ս. Գևորգ, Կարբիի Ս. Աստվածածին, Խոր Վիրապի Ս. Աստվածածին և այլն:

էլ այլ վանքերի ու եկեղեցիների վերակառուցման ու բարեզարդման ուղղությամբ: Նահապետ Եղեսացին 1691 թ. հաջորդել է Եղիազար Այնթապցուն (1681—1691) և անմիջապես աչքի ընկել իր եկեղեցաշեն գործունեությամբ. «Իսկ ի թուին ՌՃԽ. (1691) վաղճանեցաւ սուրբ հայրն հոգևոր Եղիազար կաթողիկոսն եւ յաջորդեաց զԱթոռոն հայրապետական երջանկամեծար եւ սրբազան հայրապետս տէր Նահապետ կաթողիկոս, որ եւ ջանք ի վերայ եդեալ՝ արար աշխատանս եւ շինուածս բազումս ի վերայ առաջնոց շինուածոցն՝ թէ՛ Սրբոյ Աթոռոյս, եւ թէ՛ ամենայն եկեղեցեաց Քրիստոսի»[324]: Թվարկելով Նահապետ կաթողիկոսի գահակալման օրոք կատարված հիշարժան գործերը՝ գրիչն առանձնակի նշում է Ս. Էջմիածնի շրջակա տարածքը սալարկելը, Վաղարշապատի Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումը. «Այլև զտաճարն անապատին Անանիայի առաքելոյն, որ ի միջի այգեացն Երևանայ քաղաքին, նոր վերստին ի հիմանէ կառոյց ամենայն շինուածօքն, որ ի նմա»[325]: Նահապետ կաթողիկոսի իրականացրած շինարարական աշխատանքներն այսքանով չեն սահմանափակվել, սրանց թվում են «նաեւ զերկու եկեղեցիսն քաղաքին Երևանայ, այսինքն՝ զերկու երեսին կոչեցեալ եւ զկաթուղիկէ անուանեալ, որք ի շարժմանէն ի հիմանէն խափան բլեալք էին, վերստին ի հիմանէ կառոյց գեղեցիկ շինուածօք: Այլև շինեաց յուշականայ կարմունջն եւ վերստին կառոյց ի հիմանէ: Իսկ թուականիս Հայոց ՌՃԽԴ. (1695), նոր ի հիմանէ վերստին նորոգեալ կառոյց գեղեցկատիպ յօրինուածովք զտաճարն Շողակաթին բազում շինուածօք եւ կարգեալ հաստատեաց ի նմա միաբանս ի փառաբանութիւն Աստուծոյ»[326]:

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի մատենադարանի Հ՝ր 1918 Հայսմավուրքի գրչության 1698 թվակիր հիշատակարանում դարձյալ միևնույն գրիչ Գրիգոր Երևանցին գրեթե բառացի թվարկում է պատվիրատուստացող Նահապետ կաթողիկոսի նախաձեռնությամբ իրականացված շինարարական ու բարեկործչական աշխատանքները: Այստեղ ևս հատուկ շեշտվում է Ս. Անանիայի եկեղեցու (իմա՝ Ջորավոր Ս. Աստվածածնի) կառուցումը հիշյալ կաթողիկոսի օրոք. «Այլև զեղեցկաշէն տաճարն Անանիայի առաքելոյն, որ ի միջի այգեստանեացն Երևանայ քաղաքին, վերստին նոր ի հիմանէ կառոյց ամենայն շինուածովքն, որ ի նմա»[327]: Երուսաղեմյան ձեռագրի հիշատակարանում գրիչն ի թիվս այլ կառույցների՝ վկայակոչում է նաև Քանաքեռի երկու եկեղեցիների՝ Ս. Հակոբ և Ս. Աստվածածին եռանավ բազիլիկների կառուցումը նույն կաթողիկոսի օրոք՝ 1695 թ. «Նոյնգունակ եւ զերկու եկեղեցիսն գիւղաքաղաքին Քանաքեռն կոչեցեալ՝ նոր ի հիմանէ վերստին շինեալ կառոյց»[328]: Քանաքեռի նշված եկեղեցիների վերակառուցումը 1695 թ. փաստվում է նաև նրանց որմերի վիմագրերով[329]: Նշենք նաև, որ ձե-

[324] Մայր ցուցակ ՄՄ, Ե., պուն 394:

[325] Նույն տեղում, էջ 394—395: Վաղարշապատի Ս. Աստվածածին եկեղեցին կամ, ինչպես տեղացիներն են ասում՝ «Գյուղի ժամ»-ն ըստ պահպանված շինարարական արձանագրության՝ կառուցվել է Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրոք՝ 1767 թ. (**Ա. Հարությունյան,** Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, էջ 357, արձ. 699), ուստի մատենագրական այս վկայությունը ավելի քան ուշագրավ է, քանի որ եկեղեցու կառուցումը մի քանի տասնամյակ ետ է տանում: Եթե այստեղ գրչական վրիպակ չկա, ուրեմն Սիմեոն Երևանցին ևնի տեղում նորն է կառուցել ու վիմագրում նշել ՇԻՆԵՑԱՒ, այլ ոչ ՆՈՐՈԳԵՑԱՒ կամ ՎԵՐՍՏԻՆ ԿԱՌՈՒՑԱՒ:

[326] Մայր ցուցակ ՄՄ, Ե., պուն 395:

[327] Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. վեցերորդ, էջ 367—368:

[328] Նույն տեղում, էջ 368:

[329] **Կ. Ղաֆադարյան,** Երևան, էջ 212, արձ. 244, էջ 214, արձ. 248:

ռագիրը նկարագարդվել է 1700 թ. Եվդոկիայում (Թոխաթ), Բարղամի որդի Միքայելի ձեռքով[330]*: Ծաղկման աշխատանքները ևս նախաձեռնել է Նահապետ կաթողիկոսը, որից հետո միայն նվիրաբերել Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքին. «Նոյնգունակ եւ զայս հոգելի բուրաստանս ընծայեաց ի դրունս մեծի աթոռոյն եւ սրբոյ վանիցն գլխադրի Սրբոյ առաքելոյն Յակոբայ, եւ առաջի լուսաբուղխ գերեզմանին Քրիստոսի, ի սուրբ քաղաքն յերուսաղէմ...»*[331]*:*

Ինչ վերաբերում է Ս. Անանիայի եկեղեցուն, ապա նրա գտնվելու վայրը նկարագրելուց բացի, Գրիգոր գրիչը նշված երկու հիշատակարաններում հատուկ շեշտում է եկեղեցու «վերստին նոր ի հիմանէ» կառուցված լինելու հանգամանքը, որը բացի եկեղեցու պահպանված շինարարական վիմագրից՝ մատենագրական կարևոր սկզբնաղբյուր է:

Նահապետ կաթողիկոսի գործունեության, այլև՝ Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման մասին անուղղակի վկայություններ կան նաև Սիմեոն Երևանցի կաթողիկոսի «Ջամբռ»-ում: Մովսես Տաթևացուց մինչև նույն Սիմեոն կաթողիկոսի ժամանակները գահակալած Հայոց հայրապետների շարքում համառոտ բնութագրված են նաև Նահապետ Եղեսացի կաթողիկոսի անձն ու կատարած շինարարական աշխատանքները, որոնց թվում նաև հետևյալը. «շինեաց (Նահապետ կաթողիկոսը — Ա. Հ.) զերևանու երկու եկեղեցիսն (Թերևս նկատի ունի կաթողիկեի եռանավ սրահը և Ս. Պողոս-Պետրոսը — Ա. Հ.), քանաքեռու, զկոնտին... գրէթէ յերկիրս երևանու որքան քարաշէն եկեղեցիք կան՝ ըստ մեծի մասին ի սմանէ են շինեցեալք»[332]*: Ակներև է, որ Կոնդի եկեղեցի ասելով Սիմեոն Երևանցին նկատի է առել Ս. Անանիայի անապատի եկեղեցին, քանի որ Կոնդի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին կառուցվել է ավելի ուշ՝ 1710 թ., երբ Նահապետ կաթողիկոսն արդեն վախճանվել էր:*

Բ. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ ճարտարապետական հորինվածքի՝ Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցին մեկ զույգ մույթով եռանավ բազիլիկ կառույց է[333] *(ներքին չափերը՝ 9,3 x 11,6 մ), որի ավագ խորանին երկու կողմից կից են ուղղանկյունաձև ավանդատեներ (գծանկ. 1ա—բ): Ունի երկու մուտք՝ արևմուտքից և հարավից. վերջինս ԺԹ. դարավերջին է բացվել: Արևմտյան մուտքը եկեղեցու՝ տվյալ պատի ողջ լայնությամբ կառուցված կամարակապ նախասրահի ներսից է, որի կենտրոնում վեր է խոյանում զանգակատան ութսյունանի ռոտոնդան*[334]*: Ակադ. Վարազդատ Հարությունյանի բնորոշմամբ՝ ուշմիջնադարյան որոշ եկեղեցիների նախասրահները կառուցվել են եկեղեցու հետ միաժամանակ, ինչպես օրինակ՝ Մուղնիի Ս. Գևորգ, Երևանի Ջորավոր Ս. Աստվածածին, Վաղարշապատի Ս. Շողակաթ և այլ հուշարձաններում: Ճարտարապետի խոսքով՝ Ջորավոր Ս. Աստվածածնի կամարակապ նախասրահը եկեղեցուն կից է արևմուտքից և իր եռակի կամարներով ուղղված է դեպի արևմուտք: Առանց շինարարական վիմագիրը հիշատակելու՝ այս ողջ համալիրի կառուցումը Վ. Հարությունյանը վերագրում է Նահապետ Եղեսացու*

[330] **Խ. Հարությունյան,** Միքայել անվամբ ԺԲ. դարի երկու գրիչ, Երևան, 2016, էջ 209:

[331] Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. վեցերորդ, էջ 368:

[332] **Սիմէոն Երեւանցի,** էջ 26:

[333] **Մ. Հասրաթյան,** Սյունիքի XVII—XVIII դարերի ճարտարապետական համալիրները, էջ 82:

[334] **Վ. Հարությունյան,** Երևանի եկեղեցիները (հանրամատչելի տեղեկագիր), Երևան, 1997, էջ 13:



Գծանկ. 1ա, բ. Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու հատակագիծը և երկայնական կտրվածքը (չափագրությունը՝ Կորյուն Ղաֆադարյանի) (արտատպված Կ. Գ. Ղաֆադարյանի «Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները» (Եր., 1975) գրքից)



Գծանկ. 2ա, բ. Ս. Անանիա առաքյալի մատուռ-դամբարանի հատակագիծը և երկայնական կտրվածքը (չափագրությունը՝ Կորյուն Ղաֆադարյանի, արտատպված վերոնշյալ գրքից)

գահակալման ժամանակաշրջանին, այն է՝ 1691–1705 թթ.[335]։

Սեֆյան Իրանի տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանի պատմաճարտարապետական հուշարձանները վերականգնելու հրամանը, բնականաբար, պետք է արտոնվեր շահական համապատասխան հրովարտակով։ Մաշտոցյան Մատենադարանի ԺԷ–ԺՀ. դդ. պարսկերեն հրովարտակներն ուսումնասիրող, աղբյուրագետ Քրիստինե Կոստիկյանը հավաստում է, որ շահ Աբաս Բ.-ի (1642–1666) և շահ Սուլեյմանի (Սեֆյան կամ Սաֆի Բ.–1666–1694) կողմից զանազան եկեղեցիների նորոգման ու վերակառուցման առթիվ տրված հրովարտակներն ուղղակիորեն արտացոլում են այն իրողությունը, որ ԺԷ. դարի երկրորդ կեսին մեծ ծավալների էր հասել եկեղեցաշինությունը։ Այս շրջանում են նորոգվել Ագուլիսի Ս. Հովհաննես եկեղեցին, Խոր Վիրապի վանքը, Կապանի շրջանի Մուղնիի Ս. Գևորգ եկեղեցին, Ս. Թադևոս առաքյալի վանքը, Գեղարդավանքը և այլ հոգևոր կենտրոններ[336]։ Այսօրինակ աշխատանքների մասին վկայող լավագույն օրինակ է

[335] Նույնի՝ Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 377, 380, տես նաև՝ **В. Арутюнян, М. Асратян, А. Меликян,** Ереван, М., 1968, с. 30, рис. 20–21.

[336] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պրակ երրորդ, կազմեց՝ **Ք. Կոստիկյանը,** Երևան, 2005, էջ 12:

Աբաս Բ.-ի 1661 թվակիր հրովարտակը, համաձայն որի՝ շահը հայաբնակ շրջանների իշխանություններին կոչ է անում որևէ կերպ չխոչընդոտել հայերին՝ եկեղեցիների ավելի բարձր կառուցման ու նորոգման հարցում. «...թող այսուհետև վերոհիշյալ եկեղեցիների պատճառով, որոնք ավելի ընդարձակ կամ այլ կերպ կառուցված կլինեն, վերոհիշյալ հայերին անօրինական պահանջներ չներկայացնեն: Ընդհանրապես չպետք է նրանց նեղեն, այլ պետք է թողնեն որպեսզի հանգիստ զբաղվեն հաղթական պետության հարատևմանն ուղղված աղոթքներով: Թող այս ընդունեն որպես խիստ կարգադրություն ու ամեն տարի նոր հրամանագիր չպահանջեն: Գրվեց 1071 թ. (1661 թ.) օրհնյալ ռամազան ամսին»[337]:

Այս և Պարսից շահերից մեզ հասած մյուս հրովարտակներն ուղղակիորեն փաստում են մեզանում՝ ժէ. դարակեսից սկզբնավորված մշակութային վերելքը, որի հիմքում նախ և առաջ մեր պատմաճարտարապետական հուշարձանների վերականգնումն ու բարեկարգումն էր՝ իշարս որոնց անմասն չմնաց նաև Երևանն իր հուշարձաններով: Ասվածի վկաներն են հիշյալ դարաշրջանի ծնունդ Ս. Կաթողիկեի՝ 1930-ականներին ոչնչացված եռանավ սրահը, դարձյալ նույն ժամանակաշրջանում ոչնչացված Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին (գտնվել է «Մոսկվա» կինոթատրոնի տեղում), Ջորավոր Ս. Աստվածածին, ավելի ուշ՝ Կոնդի Ս. Հովհաննես եկեղեցիները, Նորագավիթի Ս. Գևորգ, Քանաքեռի Ս. Հակոբ, Ս. Աստվածածին բազիլիկ հորինվածքով եկեղեցիները և այլ հուշարձաններ:

Գ. ՈՐՄՆԱՆԿԱՐԸ

Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու նախասրահը հարդարված է եկեղեցու մուտքի բարավորի՝ Հովնաթանյանների դպրոցին վերագրվող որմնանկարով (նկ. 27–29), աջ և ձախ կողմում ագուցված ԺՉ–ԺԷ. դդ. բարձրարվեստ խաչքարերով (տես արձ. 16–17) և ընդարձակ զույգ արձանագրություններով. վերջիններս ևս, փաստական նյութ հաղորդելուց բացի, նաև գեղազարդման միջոց էին: Արվեստաբան Գարեգին Լևոնյանը տեղին է նկատում, որ Հովնաթանյան նաղաշների (նկարիչ, ծաղկող) նահապետը՝ Նաղաշ Հովնաթանը (1661–1722), 1680-ականների վերջերից տևական ժամանակ գտնվել է Երևանում: Իր՝ «Գովասանութիւն Երևանայ քաղաքին» տաղում այդ մասին վկայում է նաև ինքը՝ հեղինակը.

...Նաղաշն Երևան շատ կացաւ,
Ջիկարն այրեց, հիւանդացաւ,
Սպիտակ սառուցին զարմացաւ,
Խմեց՝ սրտիկն հովացաւ[338]:

Նաղաշ Հովնաթանի՝ Երևանում գտնվելու հիմնական պատճառը Գ. Լևոնյանը

[337] Նույն տեղում, էջ 43–44, վավ. 11: Հիշյալ շահերի օրոք եկեղեցիների ու վանքերի նորոգման մասին վկայող և Մատենադարանում պահվող հրովարտակներն ամփոփված են նշված աշխատության հետևյալ համարների վավերագրերում՝ ^{վմր} 15 — Նախիջևանի Ագուլիս, Շոռոթ և Բիստ բնակավայրերի վանքերի նորոգման մասին, ^{վմր} 16 — Քոչիզի Հիրեր գյուղի Ս. Գրիգորիս վանքը նորոգելու մասին, ^{վմր} 19 — Կապանի շրջանի Մուղնիի Ս. Գևորգ վանքը նորոգելու մասին, ^{վմր} 20 — Ագուլիսի Ս. Թովմա առաքյալի վանքը նորոգելու մասին, ^{վմր} 28 — Հայերից ապօրինի գումարներ գանձելը կանխելու մասին, ^{վմր} 29 — Շատիկ անապատը նորոգելու մասին, ^{վմր} 32 — Սյունյաց Մեղրի, Դարաբաս, Անգեղակոթ, Բռնակոթ և այլ գյուղերի վանքերը նորոգելու մասին, ^{վմր} 33 — Դափանաթում, Գանձակում և Ատրպատականի այլ շրջաններում գտնվող հայոց վանքերը նորոգելու մասին, ^{վմր} 35 — Հայ վաճառականներին մահմեդականացնելու արգելքի և հայոց վանքերի նորոգման մասին:

[338] **Նաղաշ Հովնաթան,** Բանաստեղծություններ, ժողովածուն պատրաստեցին՝ **Ա. Մնացականյան** և **Շ. Նազարյան,** Երևան, 1951, էջ 100:

պայմանավորում է Երևանի՝ 1679 թ. ավերիչ երկրաշարժից հետո սկիզբ առած եկեղեցաշինությամբ. «1679 թվականի մեծ երկրաշարժին կանծանվել էին կամ մեծ չափով վնասվել Յերևանի յեկեղեցիները: Պատմական վկայություններ կան, վոր Սուլեյման շահի հրամանագրով Յերևանի հայերին իրավունք է «շնորհված» իրենց կործանված յեկեղեցիները վերաշինելու: Ընդունելով, վոր այդ վերաշինությունների քարի գործերը կտեվեյին մի քանի տարի, ու ապա միայն հերթը կհասներ ներքին բարեզարդության, մենք հիմք ունենք կարծելու, վոր Հովնաթանը կանչված է յեղել Յերևան՝ հատուկ այդ վերանորոգված յեկեղեցիների ներքին պատերը զարդանկարելու: Յեվ իրոք, այդ թվերին են վերջացած նորոգություններ Պողոս-Պետրոս, Ս. Անանիա (Զորավոր) և Կաթուղիկե յեկեղեցիներում, վորոնք գրեթե միևնույն վոճի և բնույթի վորմնանկար, զարդարանքներ և պատկերներ ունեյին»[339]: Գ. Լևոնյանի այս տեսությունը հետագայում ընդունել են նաև մյուս ուսումնասիրողները, ինչպես օրինակ՝ Մ. Մկրտչյանը[340], Թ. Հակոբյանը[341] և այլք:

Հ. Ներսես Ակինյանն ավելի վաղ անդրադառնալով նկարիչ (նաղաշ) և աշուղ Հովնաթանի գործունեությանը՝ նշում է, որ նրա բանաստեղծական տողերից հստակ երևում է, որ շատ է շրջել ու գործել տարբեր քաղաքներում, հատկապես՝ Թիֆլիսում (Տփղիս) և Երևանում, իսկ այն հարցին, թե որտեղ պետք է փնտրել մեծ նկարչի վրձնած արվեստի գլուխգործոցները, Ն. Ակինյանը պատասխանում է. «Անշուշտ, փնտռելու է Երնջակայ (Շոռոթ եւ շրջակայքը), Երևան, Տփղիս եւն քաղաքներու եկեղեցեաց եւ ապարանքներու մէջ»[342]:

Այն, որ Նաղաշ Հովնաթանն իր նկարչական վարպետությունը գործի է դրել հատկապես եկեղեցիներ նկարազարդելու ուղղությամբ, վկայում է նաև նրա որդու՝ Հակոբ Հովնաթանյանի բանաստեղծական Ողբը՝ հոր մահվան առթիվ.

Գործովըն Նաղաշ եւ գիտուն բանի,
Այր հաղցրատեսիլ եւ յոյժ պիտանի.
Քո մահ լըսողըն լայ, հոգոց հանի.
Կասեն վա՛խ, աւա՛ղ, վարպետ Յովնաթան:
Ո՞ւր է շնորհալից վարպետն իմաստուն,
Որ միշտ զարդարեր բազում սրբոց տուն...[343]:

Ինչ վերաբերում է Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի բարավորի՝ Նաղաշ Հովնաթանին վերագրվող որմնանկարին, ապա այն բովանդակում է միաժամանակ երկու պատկերագրություն. բարավորի վերնամասում «Քրիստոսի աղոթքը Գեթսեմանիի այգում» տեսարանն է, իսկ ստորին հատվածում՝ Աստվածամոր պատկերը՝ մանուկ Հիսուսը գրկին, որի երկու կողմում՝ Ս. Ստեփանոս Նախավկան և, հավանաբար, Ս. Լավրենտիոսը: Բարավորի կենտրոնում ագուցված եկեղեցուն ժամանակակից խաչքարը «Աղոթք Գեթսեմանիում» տեսարանը բաժանում է երկու մասի, որտեղ առկա են տվյալ պատկերագրությանը բնորոշ կերպարները՝ ծնրադիր Քրիստոսը, գլխավերևում՝ աղավնակերպ Սուրբ Հոգին, հրեշտակը, վերևում՝ Հայր Աստծու պատկերը՝ ձեռքին հաղորդության

339 **Գ. Լևոնյան,** Հովնաթանյան նաղաշները հայ նկարչության պատմության մեջ (պատմա—բանասիրական տեսություն), «Խորհրդային արվեստ», 1938, Հմր 2, մայիս, էջ 25:

340 **Մ. Մկրտչյան,** Նաղաշ Հովնաթան, Երևան, 1957, էջ 41—42:

341 **Թ. Հակոբյան,** Երևանի պատմությունը 1500—1800 թթ., էջ 403:

342 **Հ. Ներսէս վրդ. Ակինեան,** Յովնաթան Նաղաշ եւ Նաղաշ Յովնաթանեանք եւ իրենց բանաստեղծական եւ նկարչական աշխատութիւնք, Վիեննա, 1911, էջ 85:

343 Նույն տեղում, էջ 84:

սկիհը, ետնախորքում՝ այգու բնապատկերը: Արվեստաբան Աշխեն Ենոքյանի կարծիքով՝ այս տեսարանում Քրիստոսի առջև կարող էր պատկերվել Հայր Աստված կամ հրեշտակը, իսկ աղավնակերպ Սուրբ Հոգու առկայությունը որևէ տեղ չի հիշատակվում, մինչդեռ ուսումնասիրվող որմնանկարում երեք կերպարներն առկա են, ինչը կարելի է պայմանավորել նախօրինակով կամ համարել նկարչի անհատական մոտեցման արդյունք, համաձայն որի՝ ձևավորվել է Ս. Երրորդության մի յուրօրինակ պատկեր[344]:

Որմնանկարի ստորին հատվածը, որն ըստ Ա. Ենոքյանի՝ հավանաբար վերանկարվել է հետագայում, հիշեցնում է նախ և առաջ «Զարչարանաց Աստվածածին» պատկերագրական տարբերակի ոչ լիարժեք ընդօրինակություն, որի համար, ըստ էության, նախատիպ է եղել «Սևանի Աստվածամայրը» սրբապատկերը: Ընդհանրությունները հիշյալ սրբապատկերի հետ ակնառու են հատկապես հորինվածքային առումներով. Տիրամայրը նստած է ոճավոր թիկնաթոռին՝ մանուկ Հիսուսը գրկին, որն ամուր պահել է իրենից կրկնակի մեծ չափեր ունեցող խաչափայտը: Որմնանկարում, սակայն, բացակայում են չարչարանքի գործիքները, որոնք չարչարանաց պատկերների անքակտելի մասն են[345]:

Տիրամոր աջ կողմում պատկերված է Ս. Ստեփանոս Նախավկան՝ եպիսկոպոսական հանդերձանքով, որը ձախ ձեռքով պահել է խաչակիր տիրագունդը, իսկ աջով՝ բուրվառը: Ընդունված տեսակետ կա, որ Ս. Ստեփանոսին հոգևորականի հագուստով պատկերելու դեպքում նրա հետ միաժամանակ պատկերել են նաև համաքրիստոնեական սուրբ Լավրենտիոսին[346], ուստի Ա. Ենոքյանը չի բացառում, որ Տիրամոր ձախակողմում պատկերված է հենց Ս. Լավրենտիոսը, որն առաքյալի կերպարով է՝ լուսապսակով, խաչվառը ձեռքին[347]:

Նկարիչը վարպետությամբ է կերտել կերպարների դիմապատկերները՝ շեշտելով նրանց անհատականությունը, իսկ հանդերձանքն ու միջավայրը համեմատաբար զուրկ են հեռանկարային, ծավալային և լուսաստվերային մշակումներից: Որմնանկարի այս հատվածում ևս կերպարները ներկայացված են բնապատկերի բլրապատ տարածության ետնախորքին, իսկ Տիրամոր և Մանկան պատկերը ներառված է ոլորահյուս շրջանակի մեջ, որը կարծես արվել է իբրև համադրություն՝ վերնամասում ագուցված խաչքարին զուգահեռ: Ինչ վերաբերում է որմնանկարի ստեղծման ժամանակաշրջանին, ապա նախորդ ուսումնասիրողի կարծիքով «Աղոթք Գեթսեմանիում» տեսարանը հեղինակել է Նաղաշ Հովնաթանը, իսկ Տիրամորն ու Մանկանը պատկերող հատվածը, թերևս, վերանկարվել է ԺԹ. դարում, ինչի առհավատչյան պատկերները երիզող ոլորահյուս շրջանակներն են[348]:

---

[344] **Ա. Ենոքյան,** Երևանի Ձորավոր Ս. Աստվածածին եկեղեցու որմնանկարը, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ **Կ. Մաթևոսյան,** Երևան, 2019, էջ 227:

[345] Նույն տեղում, էջ 228–229:

[346] **Дж. Холл,** Словарь сюжетов и символов в искусстве, с. 531–534. Չնայած սրան՝ ԺԸ. դարի առաջին կեսով թվագրվող Ս. Էջմիածնի Մայր տաճարի և Ս. Հռիփսիմե եկեղեցու բեմառէջքների՝ Քրիստոսի աշակերտներին ներկայացնող որմնանկարաշարի սկզբում դարձյալ պատկերված է հոգևորականի հագուստով Ս. Ստեփանոս Նախավկան, ձախ ձեռքին՝ եկեղեցակերպ տիրագունդը, աջին՝ բուրվառը, որին զուգահեռ՝ պատկերաշարի վերջում ներկայացված է Ս. Փիլիպպոսը՝ դարձյալ հոգևորականի հագուստով, ձեռքերին՝ նույն առարկաները:

[347] **Ա. Ենոքյան,** էջ 229–230:

[348] Նույն տեղում, էջ 230.:

Դ. ՔԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՐԴԱՐԱՏԱՐՐԵՐԸ

Դառնալով եկեղեցու նախասրահի նկարագրությանը՝ նշենք, որ տանիքին՝ ռոտոնդայի դիմաց, տեղադրված է գմբեթավոր եկեղեցու մանրակերտ (նկ. 30): Ճարտարապետության դոկտոր Մուրադ Հասրաթյանի համոզմամբ՝ «միջնադարում տարածուած մանրակերտային նախագծումը աւելի ուշ չի կիրառուել. ԺԵ–ԺՀ. դարերի եկեղեցիների քարէ սակաւաթիւ մանրակերտները սոսկ ճակատնազարդ են, շէնքի յօրինուածքի հետ առընչութիւն չունենալով»[349]: Որպես օրինակ Մ. Հասրաթյանը վկայակոչում է Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու նախասրահի մանրակերտը: Պետք է փաստել, որ այն իսկապես որևէ առնչություն չունի եկեղեցու ճարտարապետական հորինվածքի հետ, բայց միևնույն ժամանակ կարծում ենք, որ այն իրականում խորհրդանշում է հարևանությամբ գտնվող Ս. Անանիա առաքյալի գմբեթավոր մատուռը և հետագայում տեղադրվել է նախասրահի վրա՝ ի նշանավորումն Ս. Անանիա առաքյալի նշխարների ներքո եկեղեցու կառուցման:

Միևնույն նախասրահի մուտքի վերնամասում առկա է Քրիստոսի խաչելությունը խորհրդանշող սև քարից մի յուրօրինակ վերադիր պատկերաքանդակ (գծանկ. 3, նկ. 31), որի կենտրոնում հավասարաթև խաչն է (ոչ հայկական ոճով, այն է՝ կամարաձև վերջավորությամբ խաչաթևեր՝ ոճավորված զույգ ելուստներով, բացառությամբ՝ ստորին խաչաթևի): Այն հավերժություն խորհրդանշող հինգ փոքր վարդյակներով հարդարված երկաստիճան պատվանդանի վրա է: Վերին ուղղահայաց խաչաթևի ստորին մասում Քրիստոսի գլուխն է՝ վերևում Յ.Ն.Թ.Հ. համառոտագրությամբ, որը վերծանվում է. ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ: Հորիզոնական խաչաթևերի տակ ևս մեկական գլուխ է պատկերված, որոնք, ըստ Խաչելության հայտնի տեսարանի՝ պետք է լինեն Տիրամայրը և Հովհաննես ավետարանիչը: Վերջիններս կրում են լուսապսակներ (Քրիստոսի լուսապսակը կարծես բացակայում է, փոխարենը նկատելի են նրա երկար վարսերը): Ընդհանուր տեսարանը համալրում են նաև Խաչելության պատկերագրությանը հատուկ երկնային լուսատուները, որոնք ներկայացված են խաչահիմքի երկու կողմում՝ մահիկաձև պատվանդանների վրա: Ձախ կողմում՝ շրջանաձև հենքի վրա, ութաթև աստղն է (ստացված քառաթև երկու աստղերի համակցմամբ, որոնցից մեկի թևերին փոքր խաչեր են պատկերված), իսկ աջ կողմում՝ դարձյալ շրջանաձև հենքով մարդակերպ արևը: Խաչելության այսօրինակ պատկերագրությունն այլուստ մեզ չի հանդիպել և, ըստ էության, դեռ կարոտ է հատուկ մասնագիտական քննության: Ինչ վերաբերում է թվագրությանը, ապա դատելով քանդակային որոշ առանձնահատկություններից, այլև՝ տառերի հնագրությունից, կարելի է թվագրել ԺԸ–ԺԹ. դդ.:



Գծանկ. 3. Խաչելության պատկերաքանդակ՝ Ս. Աստվածածին եկեղեցու նախասրահի արևմտյան պատին (գրչանկարը մերն է)

[349] **Մ. Հասրաթեան,** Հայաստանում ուշ միջնադարում շինարարական գործի կազմակերպումը, «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. ԺԷ., Պէյրութ, 1997, էջ 209:

Եկեղեցու որմերի արտաքին հարդարանքն աչքի է ընկնում իր պարզությամբ և գրեթե զուրկ է քանդակային հարդարատարրերից: Բացառություն են կազմում պատերի անկյունային հատվածների գալարաձև մշակումները, նախասրահի կամարների և մույթերի արտաքին ու ներքին մակերեսների հյուսածո զարդաքանդակներն ու խաչաքանդակները (կամարակիր մույթերից երկուսի արևմտյան նիստերի խաչաքանդակներին կից են «ՍԲ» և «ՍԲ Խ Ա Զ» գրություններ [նկ. 21, 22]), ինչպես նաև արևելյան պատի վերնամասը: Այն հարդարված է իրար կողք աստիճանաձև ագուցված հինգ խաչքարերով (նկ. 32), կենտրոնում բացված կրկնախաչ լուսամուտով (նման Մոմիկ Ճարտարապետի՝ Արենիի Ս. Աստվածածին, Տաթևի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիների, ժէ. դարում՝ Տաթև գյուղի Ս. Մինաս, Քանաքեռի Ս. Հակոբ եկեղեցիների և այլ կառույցների նմանօրինակ լուծումներին [նկ. 33–36])՝ ներառված ելնդավոր զարդախաչ շրջանակի մեջ. խաչաթևերի միջնամասերում առկա են նաև վերադիր վարդյակաձև զարդաքանդակներ: Այս պատի երկու կողմում կան նաև ուղղանկյունաձև նեղ լուսամուտներ, որոնք բացվում են ավանդասենյակների միջից:

Ե· Ս· ՄԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼԻ ՄԱՏՈՒՌ-ԴԱՄԲԱՐԱՆԸ ԵՎ ՏԱՊԱՆԱՔԱՐԸ

Այն, որ Տիրամորը նվիրված եկեղեցին կառուցվել է Ս. Անանիա առաքյալի անապատի տեղում, հավաստում են հարևանությամբ գտնվող սրբի ստորգետնյա դամբարանը և նրա վրա՝ 1900 թ. կառուցված քառամույթ գմբեթավոր մատուռը (տե՛ս արձ. 11): Երևանի մեծահարուստ Աֆրիկյան եղբայրների միջոցներով կառուցված մատուռը քառակուսի հատակագծով, երկհարկ շինություն է (գծանկ. 3ա, բ), որի առաջին՝ ստորգետնյա հարկում սրբի դամբարանն է՝ նշխարներն ամփոփող ուղղանկյունաձև տապանաքարով: Դամբարանի մուտքը սկզբնապես արևելյան կողմից է եղել, ուստի ժէ. դարավերջին այդ մասում Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումից հետո դամբարան կարելի էր մտնել եկեղեցու հյուսիսարևմտյան անկյունից բացված կամարակապ մուտքից, որը փակվել է ԺԹ. դարավերջին, երբ դամբարանի վրա նոր մատուռ է կառուցվել և մուտքը բացվել արևմտյան կողմից: Այսօր էլ եկեղեցու նշված հատվածում տեսանելի է դամբարան մտնող նախկին մուտքի կամարակապ խորշը (նկ. 11): Այս գետնափոր շինությունն իր տեղագրության էջերում նկարագրել է նաև Հովհաննես եպս. Շահխաթունյանցը. «Մուտ գետնափոր դամբարանի հռչակելոյ յանուն Անանիա առաքելոյ է ի մէջ եկեղեցւոյն մերձ ի սիւնն արևմտեան հիւսիսոյ, ընդ որ մտեալ և իջեալ ընդ աստիճանս ինչ յարևմուտս կոյս. և ապա իբրև քայլս հինգ՝ է փոքրիկ կամարայարկ և ի նմա դամբարանն սրբոյն, որ անկանի ուղղակի ի ներքոյ հիւսիսային բաժնի գաւթին. յանուն այսր սրբոյ յաճախեն ուխտաւորք ի բնակչաց քաղաքիս յայս եկեղեցի և յանուն հրաշագործ Աւետարանի միոյ՝ յորոյ անուն կոչի երբեմն այս եկեղեցի և Ջօրաւոր»[350]:

Դամբարանի նկարագրությանը վերաբերող հետաքրքիր տեղեկություն է հաղորդում ռուս ճանապարհորդ Ա. Մուրավյովը: Ուսումնասիրության առաջաբանում արդեն նշվեց, որ Մուրավյովն անդրադարձել էր նաև կառույցի ճարտարապետական հորինվածքին՝ այն նմանեցնելով

[350] Շահխաթունեանց, էջ 304:

Վաղարշապատի Ս. Հռիփսիմե և Ս. Գայանե վանքերի ստորգետնյա դամբարաններին: Ճանապարհորդի տպավորություններն այսքանով չեն սահմանափակվում. նա հավելում է, որ իր այցելության ժամանակ սրբի տապանաքարին կից եղել է ևս մի գերեզման, որը չի կարողացել ճշտել թե ում է պատկանում. «Ս. Անանիայի տապանաքարի կողքին կա մի ուրիշ գերեզման՝ հենց նույն ստորգետնյա դամբարանում»[351]: Ակնհայտ է, որ դամբարանի այդ «երկրորդ» գերեզմանը հետագայում տեղափոխվել կամ նորոգման ժամանակ մնացել է սալահատակի տակ, սակայն մեզ ևս հետաքրքիր է, թե ո՞վ կարող էր թաղված լինել այստեղ: Մեր պրպտումների արդյունքում հաջողվեց գտնել մատենագրական մի վկայություն, որը հաղորդում է Զաքարիա Քանաքեռցին: Պատմագրության Ի. (20) գլխում՝ վերնագրված «Նահատակութիւն Գալուստ երիցուն», նկարագրված է Կոտայքի Արամուս (բնագրում՝ Արախուս) գյուղի եկեղեցու հոգևոր հովիվ Գալուստ երեցի սպանության պատմությունը, որը տեղի է ունեցել Բասենից այս գյուղ տեղափոխված հայազգի մի ամուսնական զույգի դավադրության պատճառով՝ կապված քահանայի կողմից նրանց որդուն քրիստոնյա մկրտելու հետ, որի մասին վերջիններս իրազեկել էին Երևանի Ջաղաթա-Քոթուկ-Մահմադ խանին: Ջմանրամասնելով միայն նշենք, որ քահանան դավադրության զոհ է դառնում, կրում բազում տանջանքներ ու հանուն Քրիստոսի նահատակվում Հայոց ՌՁԹ. (1640) թվականին: Խանի կարգադրություններն իրականացնող զինվորները բանտից դուրս են բերում Գալուստ քահանային ու անարգելով տանում սպանության վայրը: Բազում տանջանքների ենթարկելուց հետո դահիճները հարձակվում ու քարկոծում են քահանային ինչպես «մարդ հոշոտող գայլեր» ու այդպես տանջամահ անում նրան: Այս դաժան պատմության վերջում Զաքարիա պատմագիրը նշում է, որ «...բազում քահանայք և ժողովուրդք բարձին զմարմինն և զքարինս և զհողն արենաշաղախ, և տարեալ թաղեցին յանապատն Երևանայ՝ մերձ Անանիա առաքելոյն: Կատարեցաւ սուրբ քահանայն Գալուստ ի թուին ՌՁԹ. (1640)՝ յաւուրս Քառասնորդաց պահոցն, յաւուրս տեառն Փիլիպոսի կաթուղիկոսի Հայոց»[352]: Այս ուշագրավ, միաժամանակ, սահմռկեցուցիչ դեպքը և հանուն հավատի նահատակված քահանայի թաղումը «մերձ», այսինքն՝ հարևանությամբ Ս. Անանիա առաքյալի, ավելի քան որոշակի է դարձնում ռուս ճանապարհորդի նկարագրությունը՝ կապված դամբարանում երկրորդ գերեզմանի առկայության հետ: Կարծում ենք, որ դամբարանում եղած մյուս գեղեզմանը միևնույն Գալուստ քահանայինն է, որը նահատակվել է ճիշտ այնպես, ինչպես Ս. Անանիան՝ հանուն հավատի և մարդասիրության:

Դամբարանը նորոգվել է նաև նախորդ դարի երկրորդ կեսին, որի արդյունքում որոշակի փոփոխություններ են արվել: Տապանաքարի տեղադրությունն ըստ Տարագրոսի 1907 թ. մի լուսանկարի՝ նախկինում եղել է արևելյան պատին կից (նկ. 7), սակայն սուրբ Սեղանի կառուցման և տեղադրման ժամանակ այն տեղաշարժել են քիչ արևմուտք՝ փոխելով նաև դիրքը (նկ. 8)[353]: Հին լուսանկարում քարի կոտրված, ապա հարթեցված մասը հյուսիսային անկյունում

[351] **А. Муравьев**, Грузия и Армения, часть II, с. 108 (թարգմանությունը մերն է — *Ա. Հ.*).

[352] **Զաքարիա Քանաքեռցի**, էջ 108:

[353] Հայաստանի ազգային արխիվի ֆոնդերում են պահվում Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու 1907 թվակիր տասը լուսանկարները (որոշները հրապարակում ենք գրքի լուսանկարների բաժնում), որոնց հեղինակը նկարիչ, ճարտարապետ Տարագրոս Տեր-Վարդանյանն է (1878—1953) (ՀԱԱ, ֆ. 57, ց. 4, գ. 9):

է, այժմ՝ հարավային: Սա ակնհայտ է նաև տապանաքարին առկա խաչի ուղղությունից, որի ստորին ուղղահայաց թևը հնում դեպի արևելք է, այժմ՝ արևմուտք: Նշենք, որ 2018 թ. Անդրանիկ Բաբոյանի միջոցներով նորոգվեցին և տեղադրվեցին Ս. Աննա նիա առաքյալի մատուռ-դամբարանի նախկին դարբնագործ դռները:

Ինչ վերաբերում է տապանաքարին, ապա այն 1,25 x 0,38 x 0,15 մ չափերով մշակված տուֆ է՝ կենտրոնում խաչաքանդակով (խաչի չափերն են՝ 0,98 x 0,32 մ) (գծանկ. 4, նկ. 16ա, բ): Բացառված չէ, որ այս քարը սկզբնապես իբրև խաչքար է եղել (չնայած, որ խաչահիմքը բացակայում է), հետագայում միայն ծառայել իբրև շիրմաքար: Դատելով խաչի համաչափություններից, այն է՝ ուղղանկյուն սալաքարի լայնությամբ ձգվող հորիզոնական թևեր, մյուսներից ավելի երկար ստորին ուղղահայաց թև, նաև երկբլթակ խաչաթևերից և խաչի պարզ ու հարթ գալարաձև երիզներից՝ կոթողը բնորոշ է Ժ–ԺԱ. դդ. կամ մի փոքր ավելի վաղ, և որոշակիորեն աղերսվում է գրեթե նույն ժամանակաշրջանի այլ խաչաքանդակների հետ, ինչպիսիք հայտնի են Գառնիից (Կատրանիդե Թագուհու խաչքարը՝ 879 թ.), Դաշտադեմից (Սուսեի խաչքարը՝ 882 թ.), Կեչառիսից (քանդված մատուռի արևելյան պատին ագուցված խաչքարը՝ Ժ. դար), Արզնիի Ս. Կիրակի և Մանկանոցի Ս. Սիոն եկեղեցիներից (մուտքի ճակատակալ քարերի խաչաքանդակները) և այլ հուշարձաններից: Ամենից բնորոշը, սակայն, Հավուց թառի վանքից հայտնի «Ամենափրկիչ» խաչափայտն է[354], ուր պատկերված է «խաչից իջեցման» տեսարանը (նկ. 42). Թ–Ժ. դդ. թվագրվող սրբությունը ներկայումս պահվում է Ս. Էջմիածին Մայր տաճարի «Ավանդատուն» թանգարանում[355]: Խաչն իր փորագրման մի շարք առանձնահատկություններով հար և նման է Ս. Աննա նիա առաքյալի տապանաքարի խաչաքանդակի հորինվածքին, հետևապես այն ևս կարող է կռվան հանդիսանալ տապանաքարի թվագրման հարցում:



Գծանկ. 4. Ս. Աննա նիա առաքյալի նշխարներն ամփոփող տապանաքարը (Ժ–ԺԱ. դդ.), (չափագրությունը՝ Սոսե Աղայանի)

Տապանաքարի թվագրման մեր այս մոտեցումը էական նշանակություն ունի նաև սրբավայրի գոյության ժամանակագրությունը որոշակիացնելու առումով: Առաքել Դավրիժեցի պատմագրի հիշատակած Ս. Աննա նիա առաքյալի «վայելուչ» մատուռը, որն, ըստ նրա, գոյություն ուներ «ի վաղեմի ժամանակաց», պետք է որ բնորոշ

[354] Միջնադարում մեծ հռչակ վայելած սրբություններից Հավուց թառի «Ամենափրկիչ» խաչափայտին շատերն են անդրադարձել (Գարեգին Հովսեփյան, Սիրարփի Տեր-Ներսեսյան և այլք): Վանքին նվիրված մենագրության էջերում վերջերս այս սրբությանը անդրադարձել է նաև պատմաբան Կարեն Մաթևոսյանը (**Կ. Մաթևոսյան,** Հավուց թառի վանքը, Երևան, 2012, էջ 20–22):

[355] Մաշտոցյան Մատենադարանի պարսկերեն հրովարտակներից մեկը բովանդակում է շահ Սուլեյմանի 1675 թվակիր հրամանագիրը, որով Չուխուր Սաադի բեկլարբեկին հրահանգվում է պարզել Ս. Ամենափրկիչ խաչի պատկանելությունը Հավուց թառի Ամենափրկիչ վանքին և հաստատվելու դեպքում արգելել այլոց հավակնությունները նրա նկատմամբ (տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պրակ երրորդ, էջ 100–101, վավ. 41):

լինի միջնադարի եթե ոչ վաղ, ապա գոնե զարգացած շրջափուլի սկզբնական դարերին:

Ս. Անանիա առաքյալի վանք-անապատի գոյության սկզբնական շրջանի վերաբերյալ մի ուշագրավ ենթադրություն է արել նաև Պիոն Հակոբյանը: Խոսելով 607 թ. Աբրահամ Ա. Աղբաթանեցի (607–615) կաթողիկոսի ընտրության կապակցությամբ Դվինում գումարված ժողովի մասին՝ գիտնականը, հիմք ընդունելով «Գիրք թղթոց»-ի «Ձեռնարկ՝ զոր ետուն Աբրահամու Հայոց կաթուղիկոսի ի միաբանութեանն աշխարհիս հայոց, այնոքիկ, որք էին ընդ իշխանութեամբ Հոռոմոց, ի թագաւորութեանն Մաւրկան» վավերագիրը[356], վկայակոչում է հիշյալ ժողովում կաթողիկոսին հավատարմության երդում տված վանաց երեցների ու վանահայրերի անվանացանկը, քանի որ ինչպես հեղինակն է գրում, այս կարևոր վավերագրի շնորհիվ «...հնարավոր է դառնում վերականգնել 7-րդ դ. առաջին տասնամյակների Հայոց եկեղեցու գլխավոր վանքերի գեթ փոքր մասի անունները, որոնք գործում էին Հայաստանի հատկապես հյուսիսարևելյան գավառներում»[357]: Նշված ցանկում կարդում ենք նաև «Դաւիթ Երևանայ» վանահոր անունը. ի դեպ, հայ մատենագրության մեջ սա Երևանի վաղագույն հիշատակություններից մեկն է: Ցավոք, պարզ չէ, թե Երևանի որ վանքի վանահայրն է Դավիթը, ինչի առնչությամբ էլ Պ. Հակոբյանը հետևյալն է հայտնում. «Մեր ենթադրությամբ՝ այն հեռու չպիտի լիներ այժմյան Սուրբ Սարգիս եկեղեցուց, որն իր շրջակայքով հնում կոչվում էր Անապատ (նկատի ունի Ջորագյուղի անապատը — Ա. Հ.), այսինքն՝ ճգնավորների մենաստան: Կարող է նաև խոսքը վերաբերել ավելի ուշ դարերում գոյություն ունեցող և Կոզեռն բլրի ստորոտում ընկած Անանիա առաքյալի վանքին, որը քանդվել ու վերաշինվել է ոչ մեկ անգամ (այժմյան Ջորավոր եկեղեցու տեղում)»[358]: Գիտնականի ենթադրության երկրորդ տարբերակը, կարծում ենք, առավել տրամաբանական է, քանի որ սրբի դամբարանի մասին մատենագրական վկայությունները, տապանաքարի քանդակային առանձնահատկությունները և որոշ այլ հիմքեր վկայում են այս սրբավայրի վաղեմության մասին:

Ջ. ԵԿԵՂԵՑԻՆ ՏԵՂԱՊՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԵՐԵՎԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Երևանի միջնադարյան հուշարձանների[359] կողքին իր յուրօրինակ տեղն ունե-

[356] Գիրք թղթոց, երկրորդ հրատարակութիւն, Երուսաղէմ, 1994, էջ 298–299, գլ. ԿԷ. (67):

[357] **Պ. Հակոբյան,** Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 49:

[358] Նույն տեղում, էջ 50, ծնթ. 20:

[359] ԺԶ. դարի անգլիացի վաճառական, ճանապարհորդ Ջոն Նիուբերին, 1581–1582 թթ. լինելով Հայաստանում, Երևանից միայն մեկ կանգուն եկեղեցի է հիշատակում՝ առանց անունը նշելու, ապա նկարագրում է քաղաքի հյուսիսային կողմում գտնվող կամուրջը՝ կառուցված Զանգու գետի վրա: Հետաքրքիր է նրա նկարագրությունը նաև Վաղարշապատի վանքերի առնչությամբ, որտեղ հիշատակում է հինգ հին եկեղեցի, որոնցից մեկը՝ կործանված (թերևս Զվարթնոցը): Ուշագրավն այն է, որ իբրև եկեղեցու կործանման պատճառ ճանապարհորդը տուրք է տալիս ավանդազրույցին, թե իբր այդ եկեղեցում մի եղբայր ու քույր են ամուսնացել (**Հովհ. Հակոբյան,** Ուղեգրություններ, հ. Ա., ԺԳ–ԺՋ. դար (1253–1582), Երեւան, 1932, էջ 455):

Պատմաբան, կովկասագետ, ազգությամբ հայ Ստեփան Զելինսկին, որը Երևանի վարժարանում ուսուցիչ էր և զուգահեռ նաև տնօրենի պարտականություններն էր կատարում, Երևանին նվիրված դարձյալ տեղագրական բնույթի աշխատության մեջ քաղաքի հնություններին անդրադարձել է խիստ համառոտ՝ նրանցից հատկանշել հայկական եկե-

ցող Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու մասին փաստական տեղեկություններ են պահպանվել նաև որոշ տեղագրություններում ու վիճակագրական բնույթի աշխատություններում: Ռուս պատմաբան Իվան Շոպենի՝ Հայկական մարզի՝ Ռուսական կայսրությանը միանալու ժամանակաշրջանի վիճակագրական տվյալներն ամբողջացնող աշխատության մեջ Երևանից հայկական վեց եկեղեցի է հատկանշված, որոնց թվում՝ Ս. Պողոս-Պետրոսը, Ս. Հովհաննեսը, Ս. Սարգիսը, Ս. Անանիա առաքյալը[360]: Հեղինակի խոսքով՝ Երևանը Հայկական մարզի գլխավոր քաղաքն է, որը չնայած մեծապես տուժել էր 1679 թ. երկրաշարժից, բայց արագորեն վերականգնվել է[361]:

Հին Երևանի Շահար (Շհար) թաղի հյուսիսային կողմում՝ «խանդղ» (խանդու) այգում, ապա Նոր թաղում է գործել

ղեցիները, որոնցից շատերը վերակառուցվել են 1679 թ. երկրաշարժից հետո, գլխավոր մզկիթը՝ կառուցված Հուսեին-Ալի խանի օրոք, 1764 թ., Սարդարի պալատը՝ կառուցված Մահմեդ խանի օրոք, 1791 թ., ռուսական եկեղեցին՝ կառուցված Ռաջաբ փաշայի օրոք, 1725 թ. և Զանգու գետի վրա կառուցված կամուրջը (մանրամասն տե՛ս **Ст. Зелинский**, Городь Эривань, «Сборникь материаловь для описания местностей и племень Кавказа», вып. I, Тифлись, 1881, с. 7–8). Ռուս պատմաբան Դանիիլ Մորդովցևը 1882 թ. ամռանը եղել է Երևանում, տեսակցել Ստ. Զելինսկուն, որի հետ պատրաստվել են իրականացնել իրենց ճանապարհորդությունը դեպի Արարատ: Մորդովցևի՝ քաղաքից ստացած տպավորությունները հիմնականում վերաբերում են նրա բնակլիմայական պայմաններին (На Арарать. Наброски путевыхь впечатлений **Д. Мордовцева**, С. Петербург, 1883, с. 86–98):

[360] Исторический памятник армянской области в эпоху ея присоединения к Российской империи, сочинение **И. Шопена**, այուն 687. Երևանի թաղերի ու եկեղեցիների մասին տե՛ս նաև **Ս. Վարդանյան**, Հայաստանի մայրաքաղաքները, էջ 222:

[361] Նույն տեղում, այուն 54, 260:

երևանցիներից շատերին անհայտ Ս. Անանիա առաքյալի վանք-անապատը (այժմ՝ Երևանի կենտրոն վարչական շրջան, Զազար Փարպեցի փ., 9բ): ԺԹ. դարի հայ նշանավոր լուսավորիչ, մանկավարժ Մեսրոպ Թաղիադյանն իր ճանապարհորդական տպավորություններում նկարագրելով Երևանի թաղերը՝ նշում է, որ Ջորագյուղի անապատի, Կոնդի և Շհար թաղերի միջև «...անկանի Նոր թաղ, որ ի հնումն գոլով այգի մեծի խանին Երևանայ, անուանեալ կոչէր Խանդղ բաղ, իսկ այժմ Նոր թաղ կոչի ի սակս գաղթականաց Հայոց Մարաղայ և Խոյայ անդր բնակելոյ, ուրանոր շինեցին նոքա եկեղեցի հոյակապ»[362]: Մ. Թաղիադյանի հիշատակած եկեղեցին հենց Ջորավոր Ս. Աստվածածինն է, միայն թե այն ոչ թե կառուցվել է այդ ժամանակաշրջանում, այլ մարաղացիների գաղթով պայմանավորված՝ հանձնվել է վերջիններիս ու ծառայել որպես ծխական եկեղեցի: Սրբի դամբարանին կից կառուցված լինելու պատճառով եկեղեցին տևական ժամանակ կոչվել է նաև Ս. Անանիա առաքյալի անունով. «Ջօրաւոր՝ առընթեր առաջնոյն ի հիւսիսոյ յարևմտից՝ ունի եկեղեցի յանուն Անանիա Առաքելոյն, և տունս և պարտէզս ջրարբիս: Ի վերուստ սորա է լեառն գերեզմանաց, կոզեռն անուանեալ, ի պատճառս կոզեռ վարդապետի ուրումն անդր թաղեալ լինելոյ»[363]:

Ս. Էջմիածնի միաբան Հովհաննես եպս. Շահխաթունյանցի երկհատոր աշխատության էջերում հաջողությամբ մեկտեղվել են Ս. Էջմիածնի և Արարատյան հինգ գավառների հուշարձաններից շատերի

[362] **Մ. Թաղիադյան**, Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, Երևան, 1975, էջ 86, տե՛ս նաև **Հ. Սուքիաս Էփրիկեան**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա., Վենետիկ, 1902, էջ 671:

[363] **Մ. Թաղիադյան**, Ուղեգրություններ..., էջ 85:

նկարագրությունները: Երևանի հնություններից Շահխաթունյանցն առանձնացնում է նաև 1828 թ. Ատրպատականի նահանգից գաղթած հայերով բնակեցված Նոր թաղի եկեղեցին, որի տեղում «... եղեալ է յառաջագոյն փոքրիկ մատուռն մի քայքայեալ, յանուն Անանիա առաքելոյ՝ միոյն յեօթանասնից»[364]: Վկայակոչելով Առաքել պատմագրին՝ Շահխաթունյանցը վերաշարադրում է այս սրբավայրում Մովսես Տաթևացի վարդապետի հոգածությամբ իրականացված մեծածավալ աշխատանքներն ու անապատի հիմնումը, ապա 1635–1636 թթ. բոլոր փայտաշեն կառույցների հրկիզումն ու ավերումը պարսկաթուրքական ասպատակությունների հետևանքով և քար ու կրով նորոգումը Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսի կողմից: Հաջորդիվ Շահխաթունյանցը հիշատակում է ներկայիս եկեղեցու կառուցումը, որի մասին գրում է հետևյալը. «...ի ժամանակս Նահապետ կաթուղիկոսի Ուրհայեցւոյ խոջայ Փանոս անուն ոմն հայ ազգաւ քակեալ զայն փոքրիկ մատուռն՝ տայ կառուցանել տաճար գեղեցիկ միջակ մեծութեամբ ի վերայ չորից սեանց ի խարտեալ քարանց, որ ունի զմի սեղան և զերկուս աւանդատունս և զմի դուռն ընդ արևմուտս և գաւիթ վայելուչ ի վերայ այսր դրան ընդ լայնութիւն տաճարին երկայնեալ՝ սիւնազարդ, որ ունի զանգակատուն ի միջին բաժնի, որ ի վերայ դրանն և անուն եկեղեցւոյն ըստ արձանագրութեանն Սուրբ Աստուածածին»[365]: Հետաքրքիր է, որ Շահխաթունյանցը շրջանցում է 1679 թ. երկրաշարժը և Փիլիպոս կաթողիկոսի նորոգած մատուռ-եկեղեցին քանդված համարում խոջա Փանոսի կողմից: Գրիչ Գրիգոր Երևանցու վերոնշյալ հիշատակարանը փաստական տեղեկություններ է հաղորդում երկրաշարժից խոնարհված եկեղեցու մասին, հետևաբար, անապատի եկեղեցին հերթական անգամ զոհ է դարձել, բայց այս դեպքում ոչ թե մարդկային գործոնի, այլ՝ բնական աղետի: Իրականում անստույգ է նաև Փանոսի կառուցած եկեղեցու՝ Շահխաթունյանցի նկարագրած ճարտարապետական ոճը, այն է՝ «ի վերայ չորից սեանց», մինչդեռ եկեղեցին մեկ զույգ մույթերով անգմբեթ եռանավ բազիլիկ է:

Քննություն ռուսական կայսրության ռազմա-վիճակագրության մատենաշարի՝ Երևանի նահանգին նվիրված 16-րդ պրակի 6-րդ մասում համառոտ նկարագրված է նաև Երևանի Ջորավոր Ս. Աստվածածինը: Երևան քաղաքի բնակչությունն ու պատմաճարտարապետական հուշարձանները նկարագրելիս՝ ժողովածուն կազմողը գրում է. «Քաղաքի մեկ այլ ծայրամասում է գտնվում հայկական հինավուրց «Ջորավար» (հրաշագործ սուրբ) եկեղեցին, որի ստորգետնյա հարկում են ամփոփված Սավուղին քրիստոնյա մկրտած Անանիա առաքյալի մասունքները»[366]:

Եկեղեցու վերաբերյալ հաջորդ հիշատակությունը հաղորդում է Ս. Էջմիածնի մեկ այլ միաբան Մեսրոպ արք. Սմբատյանցը, որը Գեղարքունյաց գավառի տեղագրության մեծադիր հատորում մանրամասն նկարագրում է 1862 թ. ամռանը Ս. Էջմիածնից Փարաքար, ապա Երևան կատարած իր այցելությունը: Երևանի նկարագրությունը Սմբատյանցը շարադրում է այսպես. «Այս քաղաքը (Երևանը – Ա. Հ.) գտնուում է Էջմիածնից 18 վերստ հեռի յարևելս մի գոգաւոր տափարակ տեղում, որոյ առաջի

[364] **Շահխաթունեանց**, էջ 302:

[365] Նույն տեղում, էջ 303:

[366] Военно-статистическое обозрение Российской империи, том XVI, часть VI, Эриванская губерния, составлял Генерального Штаба капитан Услар, Санкт-Петербург, 1853, с. 255–256.

կողմն դէպի հարաւ ընդարձակ է և հանդէպը կանգնած է փառահեղ սպիտակագլուխ ծերունին Մասիս՝ Հայաստանի նախնի փառաց անսուտ վկայն»[367]: Թվարկելով քաղաքի պատմության մասին վկայող վաղագույն հիշատակությունները, ապա խոսելով տեղի բնակլիմայական պայմանների, ջրային պաշարների, քաղաքի ներքին կառուցվածքի ու թաղերի մասին՝ տեղագիրն անմիջապես անցնում է քաղաքի հոգևոր կենտրոնների նկարագրությանը, որոնց շարքում նաև Ջորավոր Ս. Աստվածածինն է, որն ըստ նրա՝ կառուցվել է Ս. Անանիա առաքյալի անվամբ, հետո միայն կոչվել Ջորավոր. «*Ապա գնացինք Ս. Անանիա առաքելոյ անուամբ շինած եկեղեցին, որ այժմ Ջօրաւոր անուանի, սրբատաշ քարով և փոքր դրութեամբ...»*[368]: Եկեղեցու կառուցման թվականը համարելով 1691-ը՝ Սմբատյանցն այն նորոգված է համարում 1793-ին՝ Երևանի երևելի իշխան, Պարսից տերության հարյուրապետ Գաբրիել Գեղամյանցի միջոցներով ու հոգածությամբ: Վերջինիս մասին լրացուցիչ ծանոթագրում է, որ նա Երևանի իշխան Արսեն սուլթան Գեղամյանցի (մահ. 1885 թ.) պապն է[369]: Ի դեպ, 1861 թ. արխիվային մի վավերագրի համաձայն՝ Ս. էջմիածնի Սինոդը, հիմք ընդունելով երևանաբնակ Աբրահամ Գեղամյանցի խնդրագիրը, արգելել է Ջորավոր եկեղեցուն կից այգու հարևանությամբ Արսեն սուլթանի կողմից բնակելի տան կառուցումը, քանզի դա «*տայ խափանումն քաղաքական կանոնաւոր շինութեանց*»[370]: Հետագա այլ վավերագրերի ուսումնասիրությունից տեղեկանում ենք Արսեն սուլթան Գեղամյանցի՝ Ջորավոր եկեղեցուն վճարելիք 1010 ռուբլի պարտքի մասին, որի առթիվ Ս. էջմիածնի Սինոդը 1867 թ. նոյեմբերի 27-ին հայտարարություն է տարածել և պահանջել նշված գումարը՝ տոկոսով հանդերձ, տալ Սինոդի հաշվարարական բաժին[371]: Հավելենք, որ 1879 թ. մի վավերագրում դարձյալ հիշատակված է Արսեն սուլթանի՝ այս անգամ Ջորավոր եկեղեցուն հանձնելիք 1500 ռուբլու մասին, որի մուրհակագիրը գտնվում է եկեղեցու երեցփոխան Հարություն Գասպարյանի մոտ[372]: Ըստ ամենայնի, պարտքը վերադարձվել է հաջորդ երեցփոխ Մկրտիչ Տեր-Սարգսյանցի օրոք՝ 1882 թ., որի մասին վկայող 1883 թվակիր վավերագիրը, որը Ս. էջմիածնի Սինոդի *Հմր* 1841 հրամանն է, նույնպես մեզ է հասել. «*Արսէն սուլթանն Գեղամենաց վճարեալ է զմի հազար եւ հինգ հարիւր ռուբլի պարտս իւր Սուրբ Ջօրաւոր եկեղեցւոյ տեղւոյս, զոր գումար հանդերձ տոկոսեօքն ստացեալ է երեսփոխան այնր եկեղեցւոյ աստիճանաւոր Մկրտիչն Տէր-Սարգսեանց, արդէն յամսեանն նոյեմբերի անցեալ 1882 ամի*»[373]:

Դառնալով Մեսրոպ Սմբատյանցին՝ նշենք, որ նա նկարագրում է Ս. Անանիայի մատուռ-դամբարանը և մի քանի մանրամասներ հաղորդում եկեղեցուն տրված «Ջորավոր» անվան, տեղի վանահայրերի, նաև՝ Մարաղայից եկած գաղթականների մասին. «*Այս եկեղեցւոյ միջից արևմտեան դրան մօտից սանդուխներով ուխտաւորներն իջնում են 10 աստիճան գետնի տակը ուխտ անելոյ Անանիա Առաքելոյ գերեզմանին, որ մի փոքրիկ թաղակապ մատրան մէջ է, ուր և մենք իջնելով խունկ ու մոմ նուիրեցինք Անանիա առաքելոյն, և հայցեցինք նորա բարեխօսութիւնն*

[367] **Սմբատեանց,** էջ 4–5:

[368] Նույն տեղում, էջ 9:

[369] Նույն տեղում, էջ 10, ծնթ. 1:

[370] ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 53, վավ. 303, թ. 523:

[371] ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 2093, թ. 1աբ, հմմտ. ֆ. 56, ց. 1, գ. 4904, թ. 22–24:

[372] ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 2093, թ. 12աբ:

[373] ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 2093, թ. 14:

ամենայն ճանապարհորդաց համար»[374]*: Սմբատյանցն իրավամբ եկեղեցու «Ջորավոր» անվան ծագումը պայմանավորում է մի հրաշագործ Ավետարանի համբավով, իսկ տեղի վանատան գոյությունը բացատրում վանահայր-վարդապետների պարբերական այցերով, ինչի արդյունքն է նաև այն, որ Ջորավորի այգին պատկանում է Ս. Էջմիածնին*[375]*:*

Երևանի եկեղեցիներից Ս. Ջորավորը հիշատակում է նաև ԺԹ. դարի ռուս ճանապարհորդ կոմսուհի Ուվարովան, որը 1880 թ. Թիֆլիսից գալով Երևան՝ նախ նկարագրում է քաղաքի աշխարհագրական դիրքը, պտղատու այգիներով շրջապատված լինելը, Սարդարի ապարանքը, ապա Երևանի հայկական եկեղեցիներից Ս. Ջորավորն ու Ս. Պողոս-Պետրոսը, որոնք կառուցված են կարմրավուն տուֆից և արևմտյան մուտքերին կից ունեն զանգաշտարակներով պսակված սրահներ[376]*:*

ԺԹ. դարի երկրորդ կեսի բրիտանացի ճանապարհորդ, հայագետ Հենրի Լինչը 1893–1894 թթ. և 1898 թ. Հայաստան կատարած ուղևորությունների ընթացքում հավաքած նյութերի հիման վրա գրել է «Հայաստան» կոթողային աշխատությունը, որտեղ Երևանի եկեղեցիներից Ջորավոր Ս. Աստվածածինն այսպես է նկարագրում. «Շատ աւելի ցուցամոլական կերտուածք մը ունի Սուրբ Ջօրաւարը, արևելեան կողմը քիչ մը հեռուն հաստատուած, բայց տակաւին հիւսիսակողմի այս բարձր դարվերներուն գօտիին մէջ: Անիկա շրջապատուած է հին պարտէզներով, և ընկուզենիի ծառեր շուքերնին ձգած են վրան: Եկեղեցիին մարմինը շատ պարզունակ է. չորս պատեր կան և ցած գմբէթով տանիք մը, բայց խնամքով պատրաստուած դուռ մը, որուն վրայ կը կանգնի զանգակատունը՝ չորս հաստաշէն կամարակալներով բռնուած կը գտնուի արևմտեան ճակատի ամբողջ երկայնքին: Կեդրոնական մասին մէջ երկու կամարակալներ կան, խիստ նուրբ քանդակներով բանուած: Հարաւային կողմը կայ շատ հին դուռ մը գալարաձև ցցազարդերով, իսկ գլխաւոր դրան վրայի զարդաքանդակները՝ հազուադէպ երևոյթ, լաւ գծուած են և ցոյց կուտան գոյնի մասին լաւ հասկացողութիւն: Ինծի ըսին, թէ ներկայ եկեղեցին աւելի հին շէնքի մը տեղը կը բռնէ, բայց չեմ երաշխաւորեր այն հաւաստումը, թէ մայր դուռը շինողն է Մովսէս Կաթողիկոս, ինչպէս ըսաւ ինծի տարէց և տգէտ քահանայ մը: Այդ եկեղեցականը զանգակատան կոչնակին երկար ղօղանջը լսելէ ետք եկաւ վերջապէս, աշխարհական ընկերակցի մը օժանդակութեամբը դողդոջագին քալելով: Երևանի կղերական դասը Թրքահայաստանի հեռաւոր գաւառներուն ամենէն տգէտ եկեղեցական դասակարգէն աւելի զարգացած չէ»[377]*: Նկարագրությունից դատելով՝ ճանապարհորդը ճիշտ է կողմնորոշվում ներկա եկեղեցու կառուցումը Մովսես Տաթևացուն չվերագրելու հարցում, քանի որ այն կառուցվեց 1679 թ. մեծ երկրաշարժից հետո՝ Մովսես Տաթևացու վերահիմնած անապատի տեղում:*

Հ. Ղևոնդ Ալիշանի՝ Այրարատ նահանգի բնակավայրերին ու հուշարձաններին նվիրված տեղագրության էջերում ամփոփվել է նաև Երևանի պատմաճարտարապետական

[374] **Սմբատեանց,** էջ 11:

[375] Նույն տեղում:

[376] Кавказъ. Путевыя заметки Гр. Уваровой, Москва, 1887, с. 195. Ճանապարհորդը նշում է նաև Ս. Պողոս-Պետրոս եկեղեցում գործող երկսեռ դպրոցի գոյության մասին:

[377] **Հ. Ֆ. Պ. Լինչ,** Հայաստան. ուղևորութիւններ եւ ուսումնասիրութիւններ, թարգմ. **Լ. Լարենց,** Ա. հատոր, Կ. Պոլիս, 1913, էջ 140–141: Ռուսերեն թարգմանությունը տե՛ս Армения. путевые очерки и этюды Х. Ф. Б. Линча, перевод с английского Е. Джунковской, том I, Тифлис, 1910, с. 277.

կոթողների նկարագրությունը, որը հիմնականում շարադրված է Հովհաննես Շահխաթունյանցի վերոհիշյալ աշխատության հիմամբ: Այդուհանդերձ, մեծանուն Ալիշանի հետազոտությունը պարունակում է մեզ հետաքրքրող մի քանի ուշագրավ վկայություններ: Ժէ. դարասկզբին Մովսես Տաթևացու ջանքերով հիմնված անապատի պատմությանը զուգահեռ՝ Հ. Ալիշանը վկայակոչում է Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման և նորոգման չափածո արձանագրությունները՝ հարազատ մնալով Հովհաննես Շահխաթունյանցի վերծանություններին: Դառնալով Ս. Անանիայի դամբարանում գտնվող տապանաքարի նկարագրությանը՝ Ալիշանը գրում է. «Տապան նշխարաց սրբոյ Առաքելոյն է ի փոքու խորանայարկի ընդ եկեղեցեաւն, յոր իջանեն աստիճանօք. և է անուանի ուխտատեղի, զոր ընդ համանմանսն յիշէ և Վանանդեցին Թովմա յամի 1655. կոչի եկեղեցին և Ջօրաւոր՝ յանուն աւետարանի միոյ հրաշագործ համարելոյ»[378]: Թովմա Վանանդեցու չափածո նկարագրությունը հետևյալն է.

> «Յերևանու նահանգ անցեալ՝
> ՅԱնապատին զտեղի առեալ,
> զԱռաքելոյն շիրիմ տեսեալ
> Անանիայն անուանադրեալ,
> Եկեղեցիքն փայլեցեալ,
> Կաթուղիկէ, երկերես լեալ...»[379]:

Ի տարբերություն նախորդ հետազոտողների՝ Երվանդ Շահազիզն իր «Հին Երևան» գրքում Ջորավոր Ս. Աստվածածնին առավել ընդգրկուն է անդրադարձել՝ հրատարակելով նաև մինչ այդ անտիպ ԺՀ–ԺԹ. դդ. երեք վիմագիր: Ինչպես նախորդ ուսումնասիրողների, այնպես էլ Շահազիզի բուն սկզբնաղբյուրը Առաքել Դավրիժեցու Պատմությունն է: Դառնալով Նահապետ Եղեսացի կաթողիկոսի օրոք կառուցված ներկայիս եկեղեցուն՝ Շահազիզը, հետևելով Շահխաթունյանցին, այն կառուցված է համարում նախկին խարխուլ եկեղեցու փոխարեն, որը քանդել է խոջա Փանոս անունով մեծատունը՝ առանց որևէ տեղեկություն հաղորդելու նախկին եկեղեցու՝ 1679 թ. երկրաշարժից ավերվելու մասին: Հետազոտողը հաջորդիվ նկարագրում է շինության ճարտարապետական ընդհանուր ոճը, այն է՝ «չորս պատ եւ զառիվայր տանիք» և այլն՝ թյուրիմացաբար այն կոչելով «Մովսիսաշեն եւ Փիլիպպոսաշեն» եկեղեցի[380]:

Երևանի պատմաճարտարապետական հուշարձանները նկարագրելիս՝ Ս. Անանիայի վանք-անապատին հատուկ անդրադարձել է նաև պատմաբան Թադևոս Հակոբյանը: Նա գրում է, որ Ս. Անանիայի անապատում երբեմնի գոյություն ունեցած մատուռի կառուցման ու ավերման ստույգ ժամանակը դժվար է որոշել, սակայն, Առաքել Դավրիժեցու տեղեկություններից դատելով՝ Թ. Հակոբյանն այն համոզմունքն է հայտնում, որ մատուռը պետք է որ կառուցված լինի պարսկական տիրապետությունից շատ առաջ, հավանաբար, ԺԲ–ԺԳ. դդ.[381]: Ըստ էության, հետագայում Թ. Հակոբյանը վերանայել է իր տեսակետը և դարձյալ Առաքել պատմագրին վկայակոչելով՝ գրում է. «...Ս. Անանիայի մատուռը պետք է կառուցված լիներ ոչ ուշ, քան IX–XIII դարերում, հայկական եկեղեցական բարձրարվեստ ճարտարապետության այդ նշանավոր ժամանակաշրջանում»[382]: Չնայած ժամանակաշրջանի նման

[378] **Հ. Ղեւոնդ Ալիշան,** Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց (այսուհետ՝ Ալիշան), Վենետիկ, 1890, էջ 315:

[379] Նույն տեղում, էջ 315, ծանոթ. 2:

[380] **Շահազիզ,** էջ 196, 198:

[381] **Թ. Հակոբյան,** Երևանի պատմությունը. հնագույն ժամանակներից մինչև 1500 թ., էջ 273:

[382] Նույնի Երևանի պատմությունը 1500—1800 թթ.,

ընդարձակ սահմաններին՝ մատուռ-դամբարանի ստեղծման ժամանակը պետք է հիշյալ շրջանը լինի, ինչպես վերը նշեցինք՝ ժ—ԺԱ. դդ.: Անապատի տեղում Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման թվականը Թ. Հակոբյանը ևս համարում է 1691-ը, երբ «...խոջա Փանոս անունով մեկն այդ անապատն ընդարձակում է՝ կառուցելով չորս սյուների վրա հանգող սրբատաշ քարով շինված մի բավական մեծ շինություն, որն ուներ սյունազարդ ժամատուն, երկու ավանդատներ, գեղեցիկ զանգակատուն՝ կառուցված միջին դռան վրա»[383]: Հետաքրքիրն այն է, որ ուսումնասիրողները շարունակում են սխալվել եկեղեցու ճարտարապետության նկարագրության հարցում: Այս դեպքում այն չորս սյուների վրա հանգչող ընդարձակ մի կառույց է, թերևս, ընդարձակ մատուռ-դամբարանի նկատմամբ:

Է· ԵԿԵՂԵՑՈՒՆ ԿԻՑ ԳՈՐԾԱԾ ԴՊՐՈՑՆԵՐԸ

ԺԹ. դարում Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու դերի և հատկապես կրթական ոլորտում ունեցած նշանակության մասին են վկայում կից գործած արական և իգական ծխական դպրոցների գործունեության մասին պահպանված տեղեկությունները: Դրանք հիմնականում արխիվային վավերագրեր և «Արարատ» ամսագրում տեղ գտած նյութեր են, որոնք հետագայում առանձին գրքով հրատարակել է վաստակավոր մանկավարժ Սուրեն Խուդոյանը: Վերջինս գրքի առաջաբանում գրում է, որ 1828 թ. Ռուսաստանի կազմի մեջ մտնելով «արևելահայերը ձեռք բերեցին տնտեսական, մշակութային ու ազգային զարգացման զգալի հնարավորություններ, չնայած այն բանին, որ ցարիզմը վարում էր իրեն հպատակ ժողովուրդների գաղութացման և ձուլման քաղաքականություն»[384]: Ստեղծված տնտեսական ու մշակութային ոլորտների զարգացման բարենպաստ պայմաններում, փաստորեն, ծաղկում ապրեց նաև հայ դպրոցն ու մանկավարժական միտքը, որի արդյունքում բացվեցին հայկական միդասյան և երկդասյան եկեղեցական-ծխական դպրոցներ, որոնք գործում էին ինչպես Երևանի, այնպես էլ Վրաստանի, Աստրախանի, Նոր Նախիջևանի ու Բեսարաբիայի, Ղարաբաղի ու Շամախու թեմերում: Երևանի թեմի Երևան գավառում գործած դպրոցների ցանկում մեծաթիվ են բուն Երևան քաղաքի եկեղեցիներին կից գործած ծխական դպրոցները, որպիսիք գոյություն են ունեցել Ս. Պողոս-Պետրոս[385], Ջորավոր

[383] **Թ. Հակոբյան,** Երևանի պատմությունը 1500—1800 թթ., էջ 359—360:

[384] **Ս. Խուդոյան,** Արևելահայ դպրոցները 1830—1920 թվականներին. ժամանակագրությունը հավելյալ մանրամասներով, Երևան, 1987, էջ 3:

[385] Բացի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցուն կից գործած դպրոցից, որը համարվում է քաղաքի հնագույն հայկական դպրոցներից մեկը՝ հիմնված 1860-ականներին, եկեղեցու գավթում գործել է նաև Գայանյան օրիորդաց միջնակարգ դպրոցը՝ հիմնված 1866 թ., որը գործել է մինչև եկեղեցու քանդումը, այն է՝ 1931 թ. (նույն տեղում, էջ 87, 94):

Երևանի թեմական հոգևոր դպրոցի պատմության ուսումնասիրության ընթացքում Լեոն անդրադարձել է նաև քաղաքի ծխական եկեղեցիներին, որոնք դպրոցի հոգաբարձության 1876 թվակիր խնդրագրի համաձայն՝ անցնում էին թեմական դպրոցի իրավասության տակ: Հիշատակված դպրոցների ցանկում պատմաբանը Ջորավոր Ս. Աստվածածնի դպրոցը չի հիշատակում, փոխարենը նշում է Ս. Պողոս-Պետրոս, Ս. Հովհաննես եկեղեցիների և Նորքի արական ու իգական ծխական դպրոցները՝ հավելելով, որ Երևանի Գայանյան օրիորդաց դպրոցը Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու ծխականների ցանկությամբ չենթարկվեց թեմական դպրոցին և մնաց անկախ (**Լէօ,** Պատմութիւն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի. 1837—1912, Թիֆլիս, 1914, էջ 290):

էջ 359, տե՛ս նաև **Գ. Օրբելյան,** Հին ու նոր Երևան. գիրք-ուղեցույց, Երևան, 2009, էջ 40:

Ս. Աստվածածին, կաթողիկե Ս. Աստվածածին, Կոնդի Ս. Հովհաննես Մկրտիչ, Ս. Սարգիս եկեղեցիներին կից, ինչպես նաև արվարձաններում՝ Նորքում, Ավանում, Առինջում, Նորագավիթում, Քանաքեռում և այլն: Մեզ հետաքրքրող նյութի շրջանակներում, բնականաբար, պետք է առավելապես ծավալվենք Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցուն կից գործած արական և իգական ծխական դպրոցների մասին պահպանված տեղեկությունների շուրջ: Այսպես՝ աղբյուրների հաղորդմամբ՝ Երևանի Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցուն կից գործել են ինչպես արական, այնպես էլ իգական ծխական դպրոցներ: Առաջինի հիմնադրման թվականն անհայտ է, բայց 1869-ին գործել է, քանի որ «Արարատ»-ում վկայված է այդ դպրոցում անցկացված հարցաքննությունների մասին, իսկ 1871-ին ունեցել է 1 ուսուցիչ և 30 աշակերտ: Դպրոցի հետագա ճակատագիրն անհայտ է[386]:

1892 թվակիր մի վավերագրի համաձայն՝ ժողովուրդը ցանկություն է հայտնել Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու բակում օրիորդաց դպրոց բացել, որպեսզի Կոնդ և խանլղբաղ թաղամասերում ապրող աշակերտուհիները ստիպված չլինեն ձմեռվա ցրտին հասնել քաղաքի կենտրոնում գտնվող Գայանյան դպրոց[387], *որն, ինչպես վերը նշեցինք, գործում էր Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու նախասրահում: Ընդամենը երեք տարի անց՝ 1895-ի կեսերին, Մկրտիչ Ա. Վանեցի Խրիմյան Հայրիկի (1892–1907)՝ Երևանի փոխթեմակալ գերաշնորհ Անանիա եպիսկոպոսին ուղղված կոնդակի համաձայն՝ Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու նախասրահում թույլատրվել է բացել նաև օրիորդաց դպրոց՝ իբրև պատրաստական մաս (նախադպրոցական) Գայանյան դպրոցի*[388]:

1896 թ. ապրիլի 26 թվակիր մի վավերագրի համաձայն՝ էջմիածնի Սինոդն արտոնել է Երևանի վիճակային կոնսիստորիային (այսուհետ՝ հոգևոր ատյան — Ա. Հ.) թույլատրել Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու բակում դպրոցի համար նախատեսված շենք կառուցելու ծխականների խնդրանքը, որը ներկայացվել էր գլխավորապես «տիտուլեարնի սովետնիկ», երեսփոխան Մկրտիչ Տեր-Սարգսյանի անունից: Դպրոցը նախատեսված էր լինելու մեկդասյան և կոչվելու էր Ս. Մարիամյան օրիորդաց ուսումնարան: Այն կառուցվելու էր եկեղեցու բակում, որը պետք է ունենար երկու ընդարձակ սենյակ՝ դասերի համար, մեկ ուսուցչանոց, նախասրահ և փայտե պատշգամբ: Շինության ծախսերը հատկացվելու էր եկեղեցապատկան գումարներից, որը կազմելու էր առավելագույնը 1500 ռուբլի: Աշխատանքների իրականացման ընթացքում երեսփոխան Մկրտիչ Տեր-Սարգսյանին իբրև օգնական-վերակացուներ պիտի նշանակվեին

[386] Նույն տեղում, էջ 88:

[387] Քրոնիկոն Երևանից, «Նոր դար», 1892, շաբաթ, 11 ապրիլի, իններորդ տարի, Հմր 59, էջ 2:

Անհայտ հեղինակի հաղորդմամբ՝ միևնույն 1892 թ. մարտի 3-ին, Ավագ ուրբաթ երեկոյան, մի պարոն մտնում է Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու խորան (նկատի ունի Ս. Անանիա առաքյալի ստորգետնյա դամբարանը), որտեղ ամփոփված են Ս. Անանիա առաքյալի նշխարները, նստում տապանաքարի մոտ, հարևանությամբ դրված գանձանակի փայտյա արկղը իր իսկ բանալիով բացում ու դրամները հափշտակում: Լսելով ժամկոչի ոտնաձայները՝ նա ետ է քաշվում և ձևացնում, թե գերեզմանից հող է ուզում վերցնել: Ժամկոչը չի արձագանքում, իսկ պարոնի հեռանալուց հետո պարզում է, որ արկղը դատարկ է: Անմիջապես դիմում է քահանային և պարոնի հետևից հասնելով՝ բռնում նրան ու գրպանից հանում 4–5 ռուբլու չափ մանրադրամներ (տե՛ս նույն տեղում):

[388] Քաղուածք կոնդակաց վեհափառ հայրապետի, «Արարատ», 1895, Թ., էջ 365:

էմին Տեր-Գրիգորյանը, Արամ Գալստյանը և Սիրական Տեր-Մարտիրոսյանը[389]:

1896 թվակիր մեկ այլ գրության մեջ, որտեղ ցուցակագրված են վերջին տարիներին բացված Հայ Գրիգորյան եկեղեցական ծխական դպրոցները, տեղ է գտել նաև Ջորավոր Ս. Աստվածածնի իգական ծխական դպրոցը: Այն տևական կյանք չի ունեցել. վերաբացվել է 1905 թ.՝ իբրև Մարիամյան օրիորդաց երկդասյան դպրոց, որը 1907—1908 թթ. ուսումնական տարում ունեցել է 6 ուսուցիչ, 165 աշակերտուհի[390], 1911—1912 թթ. ուսումնական տարում՝ 5 դասարանյան կազմ, 7 ուսուցիչ և 214 աշակերտուհի, իսկ 1913—1914 թթ. ուսումնական տարում՝ 208 աշակերտուհի, 1914-ին՝ 7 ուսուցիչ, 211 աշակերտուհի, 1917-ին՝ 8 ուսուցիչ, 161 աշակերտուհի: Գործել է մինչև 1919 թ.[391]: Դպրոցի հետագա գործունեության մասին ուշագրավ է Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու երեսփոխան Սարգիս Տեր-Գաբրիելյանի՝ նույն 1919 թ. Երևանի փոխթեմակալին ուղղված հայտարարությունն առ այն, որ պարոն Աֆրիկյանը Երևանի Դոկտորսկի (ներկայիս Աբովյան) փողոցի թ. 66 հասցեում գտնվող տունը նվիրել է Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցուն այն պայմանով, որ այդտեղ պիտի գործի Մարիամյան դպրոցը: Եվ իրավ, դպրոցը շարունակում էր գործել, երբ 1914 թ. հուլիսի 19-ին պատերազմ սկսվեց և ռուսական կողմն այն դարձրեց զորանոց: Շենքն առանց որևէ վարձավճարի այդ կարգավիճակում է մնացել մինչև 1917 թ. նոյեմբերի 1-ը, երբ ռուսական զորքը հեռացել է Երևանից՝ այն հանձնելով հայկական գնդին:

Ս. Տեր-Գաբրիելյանը ցավով է նշում, որ դպրոցի համար ստիպված են եղել մասնավոր շենք վարձել, ինչի առթիվ խնդրում է թեմակալ առաջնորդի միջամտությունը նախկին շենքը նորից վերադարձնելու պահանջով[392]:

Երևանի թեմական դպրանոցը և եկեղեցիները հիշատակված են նաև ծագումով նախիջևանցի, բայց երևանաբնակ Սարգիս Ոսկանի Ավետիսյանի՝ 1912 թ. հոկտեմբերի 13-ին նոտարական կարգով կազմված կտակում, ըստ որի՝ հանգուցյալը Երևանի թեմական դպրանոցին է կտակել 4000 ռուբլի, իսկ Ս. Սարգիս, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ջորավոր Ս. Աստվածածին, Ս. Պողոս-Պետրոս, Ս. Հովհաննես Մկրտիչ, Կաթողիկե եկեղեցիների երեսփոխաններից յուրաքանչյուրին 200-ական ռուբլի: Ենթադրելի է, որ եկեղեցիներին կտակած գումարն առաջին հերթին ուղղվելու էր ի նպաստ նրանց կից գործող դպրոցների բարգավաճման[393]:

Ը. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

ԺԹ. դարի 30-ականներից ի վեր Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու գույքի, այգիների, կատարված բարեկարգչական աշխատանքների, հոգևոր սպասավորների գործունեության և այլ հարցերի վերաբերյալ լավագույնս վկայում են մեզ հասած հարյուրավոր արխիվային վավերագրերը: Հայաստանի ազգային արխիվի հավաքածուի՝ Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցուն վերաբերող ժամանակագրորեն վաղագույն՝ 1837 թվակիր ամենայն ռուսաց կայսերական մեծության մի հրամանագրի

---

389 ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3778, թ. 3աբ:

390 **Լէօ,** Պատմութիւն Երեւանի հայոց թեմական հոգեւոր դպրոցի. 1837—1912, էջ 532:

391 **Ս. Խուդոյան,** Արևելահայ դպրոցները 1830—1920 թվականներին, էջ 88—89:

392 ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 437, թ. 5աբ:

393 ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 258, թ. 1, 5աբ:

համաձայն, որն ուղղված է էջմիածնի Սինոդի աթոռապատկան կալվածքների վերատեսուչ Շամխարովին, տեղեկացվում է, որ Ս. Անանիա առաքյալի վանքը դարձել է ժողովրդական-քաղաքական եկեղեցի. «վասն որոյ զաթոռապատկան այգին Ջօրավարու ընկալնուլ չիշխանութիւն աթոռոցդ, զորմէ ծանուցեալ Ձերդ պատուելութեան հրամայել ձեզ զինամարկութիւն ունել ի վերայ այնորիկ, հաւասար միւս աթոռապատկան այգեացն արտաքոյ Վաղարշապատայ եւ յիւրում ժամանակի զվերահասութիւն արդեանց այնորիկ...»[394], այսինքն՝ ակնկալվում էր այգու նկատմամբ հավասար հոգածություն, ինչպես Վաղարշապատի այգիներն են խնամվում:

Երևանի վիճակի առաջնորդական փոխանորդ Տ. Ստեփանոս արք. Արղությանի՝ Ս. էջմիածնի Սինոդին ուղղված 1837 թ. օգոստոսի 28-ի հայտարարագրից պարզվում է, որ Ջորավոր եկեղեցու այգին վարձակալության է տրվել երևանաբնակներ Գևորգ Սարգիսովին և Մովսես Գաբրիելովին՝ 50 թուման Երևանի դրամով, մի մասը՝ կանխիկ, մյուսը՝ բերքը հավաքելուց հետո: Ստացված կանխիկ 25 թումանն ուղարկվել է Սինոդի գանձանակ, որի համար ստացական է տրվել: Վավերագրի ստորին լուսանցում պահպանվել է Սինոդի անդամ Հովսեփ արքեպիսկոպոսի ստորագրությամբ հետևյալ երկտողը. «Ի 29 օգոստոսի ստացայ նշանակեալ կէս գումարն. Վեհապետեան Յովսէփ արքեպիսկոպոս»[395]:

Աթոռապատկան կալվածքների վերատեսուչ Գրիգոր վրդ. Ամիրյանցի՝ Ս. էջմիածնի Սինոդին հղած 1838 թ. ապրիլի 2-ի հայտարարագրում մասնավորեցվում է Նորագյուղի և Ջորավոր եկեղեցու այգիների շուտափույթ էտման և մշակման հարցը, քանի որ «մի ի ներքոյ հողոյ կրեսցէ որթն յոչնչութիւն»[396]: Թերևս գործին ընթացք չի տրվել, քանի որ 1841 թվակիր մեկ այլ վավերագրի համաձայն, ինչպես հաղորդում է Ջորավոր եկեղեցու այգու կապալառու (վարձակալող) Մկրտիչ Ավագյանը[397], մի շարք ծառեր չորացել են և հարկավոր է դրանք կտրել, ավելին՝ մեծապես վնասվել է այգու պարսպապատը (25 գազ երկարությամբ, այսինքն՝ 28 մ), ուստի հայցում է Սինոդի միջնորդությունն այգին հսկողության ներքո պահելու խնդրանքով[398]: Նամակի պատասխան գրությունը թույլ է տալիս ընդհանուր պատկերացում կազմել Ջորավոր եկեղեցու աթոռապատկան այգու մասին: Պարզվում է, որ չորացել էին երեք ծիրանի, տասներկու դեղձի, երկու խնձորի, երեք փշատի ծառեր, որոնց փոխարեն որոշվել է նորերը տնկել և հսկողություն սահմանել: Նույնպես նաև պարսպապատի նորոգումը, որի համար Սինոդը գումար է հատկացրել և որմնադիր վարպետ կարգել՝ վճարելով անհրաժեշտ ծախսերը[399]: էջմիածնի Սինոդին ուղղված «կօլլեժսկի րեգիստրատոր» (կոլեգիական մատենավար) Գրիգոր Մալինցովի 1843 թ. գրությունից պարզվում է, որ այգու կապալառու Մկրտիչ Ավագյանից առաջին վարձն է գանձվել.

394 ՀԱԱ, ֆ. 56, ց. 9, գ. 37, թ. 1:

395 ՀԱԱ, ֆ. 56, ց. 9, գ. 129, թ. 1:

396 ՀԱԱ, ֆ. 56, ց. 9, գ. 178, թ. 1:

397 Երևանաբնակ Մկրտիչ Ավագյանը Ջորավորի այգին վարձակալել է դեռևս 1838 թ.՝ 6 տարի ժամկետով, մինչև 1844 թ.: Այդ մասին է վկայում մեզ հասած վավերագրերից մեկը, որը 1838 թ. հունիսի 17 թվակիր մի զեկուցագիր է: Հետաքրքիրն այն է, որ սկզբնապես այգին ցանկացել են վարձակալել Երևանի բնակիչներ ոմն Արազյանը, Հովհաննես Գալստյանն ու Մկրտիչ Ավագյանը: Միայն վերջինս է, որ հանձն է առել տարեկան 46 թուման վճարել և այգում նախատեսված երկու բաժինը տնօրինել 6 տարի, իսկ «Գալստեանն եւ Արազեանն ի բաց կացին յունելոյ զայն կապալաւ» (ՀԱԱ, ֆ. 56, ց. 9, գ. 211, թ. 4):

398 ՀԱԱ, ֆ. 56, ց. 9, գ. 235, թ. 1:

399 ՀԱԱ, ֆ. 56, ց. 9, գ. 235, թ. 2աբ:

«ընդ այսմ առաջի առնեմ զտրէտն աթոռապատկան Ջօրաւարի այգւոյ ստացեալս ի կապալառուէ նորին Մկրտչէ Ավագեան...»[400]: Վավերագրում հստակ նշված է նաև Մկրտիչ Ավագյանի՝ գանձապետին հանձնած դրամի չափը, որ է՝ «տասներկու թուման, ութն մինալթուն եւ վեց շահի, երեք սեւ փող Երևանու...», որի դիմաց նաև ստացական է տրվել[401]:

Ս. Էջմիածնի Սինոդի տնտեսական բաժնից՝ աթոռապատկան կալվածքների կառավարիչ Մալինցովին ուղղված 1845 թվակիր գրությունից տեղեկանում ենք, որ հետագայում ևս խախտվել-քանդվել է Ջորավոր եկեղեցու աթոռապատկան այգու որմը, այսինքն՝ պարիսպը, որի նորոգման համար կայսերական մեծության հրամանով կարգադրվել է նախատեսվող ծախսերի նոր ցուցակ կազմել: Վավերագրում միաժամանակ նշվում է, որ 1844 թ. մայիսի 1-ից վեց տարի ժամանակով և տարեկան 53 թուման 5 մինալ վճարով այգին կրկին վարձակալության է տրվել Երևանի բնակիչ Մկրտիչ Ավագյանին՝ պայմանով, որ վնասի դեպքում մի մասը (71 մանեթ 50 կոպեկ) հոգում է կապալառուն, մնացածը՝ Մայր Աթոռը[402]:

Հայտնի է նաև, որ դեռևս 1830-ականների սկզբներից երևանաբնակ տաճիկ ոմն հաջի Աբդուլ Հասանի և Ջորավոր եկեղեցու հոգևոր դասի միջև վեճ է ընթացել, քանի որ Աբդուլ Հասանը ցանկացել է Ջորավոր եկեղեցու աթոռապատկան այգին սեփականեցնել, որի պատճառով Երևանի վիճակային հոգևոր ատյանը դատական գործ է հարուցել, իսկ նիստերին ներկա գտնվելու համար «դեպուտատ» է կարգել Գրիգոր քհն. Սահակյանցին: Գործի առնչությամբ կառավարության 1841 թ. օգոստոսի 23-ի վճռի պատճենն անստորագիր և աղճատված է եղել, որից անհնար էր հասկանալ վճռի բուն էությունը: Այդ իսկ պատճառով Երևանի գավառական կառավարությունը դիմել է Վրաստանի և Իմերեթիայի քրեական և քաղաքական պալատին՝ գործի մասին ունեցած տեղեկությունների դեպքում վճռի պատճենն ուղարկել Ս. Էջմիածնի Սինոդին: Վրացական կողմի ծանուցման համաձայն՝ Երևանի այգու վեճն ի օգուտ եկեղեցու սկսել է երևանաբնակ ոմն Բարսեղ աղան, իսկ դատական վճռի պատճենը պարզում է, որ այգու վիճելի կեսը հատկացվել է Մայր Աթոռին. «զի վանքն այն կամ հոգևոր իշխանութիւնն հատուսցէ վերոյիշեալ տաճկին (Աբդուլ Հասանին — Ա. Հ.) ոչ միայն զայն գումարն, զոր նա հատուցեալ է վասն այնր այգւոյ տաճիկ Ահմադ Մահմադ օղլին կիւզալի, այլև զհասանելի վասն այնր գումարի տօկոսիս...»[403]: Գործի ընդհանուր քննությունը պարզում է այլ մանրամասներ ևս, որոնց չենք անդրադառնում՝ մեր բուն խնդրից դուրս լինելու պատճառով: Փոխարենը հավելենք, որ այս վեճի առնչությամբ պահպանվել է նաև Ներսես Աշտարակեցի Ամենայն Հայոց կաթողիկոսի՝ 1852 թ. դեկտեմբերի 27-ի Ս. Էջմիածնի Սինոդին ուղղված գրությունը՝ Երևանի նահանգական դատարանի ատենապետի բողոք-դիմումի առթիվ, ըստ որի՝ Սինոդը չի առաքել հաջի Աբդուլ Հասանի ժառանգներին հասանելիք դրամը, ավելին՝ դատարանի՝ Սինոդին ուղղված անընդմեջ դիմումները մնացել են անպատասխան: Ահա այս հարցերի վերաբերյալ կաթողիկոսը ծանուցում է պահանջում Սինոդից՝ հասկանալու խնդրահարույց այգու հետ կապված ողջ եղելությունը*[404]:

---

400 ՀԱԱ, ֆ. 56, ց. 9, գ. 375, թ. 1ա:

401 ՀԱԱ, ֆ. 56, ց. 9, գ. 375, թ. 2ա:

402 ՀԱԱ, ֆ. 56, ց. 9, գ. 566, թ. 4աբ:

403 ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 845, թ. 1բ:

404 ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 845, թ. 42: Ջորավոր եկեղեցու այգին կապալով, այսինքն՝ վարձակալության տալու, տարեկան վճարի չափը սահմանելու, այգու

Երևանի վիճակային հոգևոր ատյանի՝ Սինոդին հղած 1895 թ. մի հայտարարագրում առաջարկվում է կապալառուների համար նոր կանոններ սահմանել, օրինակ՝ կապալադրամի մի մասը գրավ է դրվում պայմանագրով նախատեսված վերջին ամսվա համար, վարձավճարը գանձվում է երկու մասից՝ կեսը սկզբում, մյուս կեսը՝ վեց ամիս հետո, այգու ներքին բարեկարգումը, պարսպի նորոգումը հոգում է կապալառուն, այգին հանձնում է այնպես, ինչպես ընդունել է, կապալառուն ծառեր կտրելու իրավունք չունի, իսկ չորացած ծառերը՝ միայն հոգևոր ատյանի գիտությամբ ու Ս. Էջմիածնի օգտին, վարձակալության ինը տարվա ընթացքում պարտավոր է այգին առնվազն երեք անգամ փորել և այլն[405]*:*

Իբրև Երևանի աթոռապատկան կալվածք՝ Ջորավոր եկեղեցու այգին հիշատակված է նաև 1910 թ. մի վարձակալական

պտղատու ծառերը խնամելու, դուռը տեղափոխելու և այլ հարցերի վերաբերյալ վավերագրեր են պահպանվել նաև 1860–70-ական թթ., օրինակ՝ 1866 թ. արդեն հանգուցյալ Հովհաննես արք. Արշարունին 6 տարի ժամկետով և տարեկան 100 ռուբլի վճարով այգին պայմանագրով վարձակալության էր հանձնել աստիճանավոր Ղազարոս Արաղյանցին, որը վարձի կես մասը 1871-ից ի վեր ըստ նոր պայմանագրի՝ պիտի հանձներ Սինոդին, կամ 1872 թ. նույն այգին վարձակալում է երևանաբնակ Պետրոս Բեգլարյանցը՝ տարեկան 205 ռուբլի 50 կոպեկ վարձավճարով (ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 2502, թ. 1, 3աբ, 9աբ): Վարձակալությունից զատ, հայտարարագրեր են պահպանվել նաև այգու պարիսպն ու հնձանը նորոգելու մասին, որպիսին կարդում ենք 1872 թ. Երևանի վիճակային հոգևոր ատյանի՝ Սինոդին հղած վավերագրում (ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 2502, թ. 8), կամ կապալառուն իր իսկ միջոցներից 20 ռուբլի է ծախսել այգու դուռը տեղափոխելու համար, որի դիմաց պահանջում է Սինոդից փոխհատուցում, որն էլ մերժվում է՝ կանխավ Սինոդի հետ չհամաձայնեցնելու պատճառով (ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 2502, թ. 31աբ):

[405] ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 3693, թ. 5աբ:

ցուցակում, ըստ որի՝ հիշյալ այգին 1906 թ. մարտի 1-ից 1911 թ. մարտի 1-ը վարձակալության է տրվել ոմն Գևորգ Նուգզարյանցին, տարեկան 306 ռուբլի վարձավճարով[406]*: Առավել ուշագրավ է Ջորավոր եկեղեցուն պատկանող և վարձակալության տրված անշարժ գույքին վերաբերող 1914 թ. տեղեկագիրը՝ կազմված 1906 թ. եկեղեցու երեսփոխան ընտրված վերոհիշյալ Սարգիս Տեր-Գաբրիելյանի կողմից*[407]*: Ցուցակում նշված է տվյալ ժամանակաշրջանի եկեղեցապատկան անշարժ գույքը (կամ դրա մի մասը), որպիսիք են՝ Երևանի Ալափխանայում (ընդեղենի վաճառատեղ) մի խանութ, որը վարձակալել է Աշոտ Տեր-Մարտիրոսյանցը 1500 ռուբլի վարձավճարով, քաղաքի Սադովայա փողոցում (ներկայիս Հին Երևանցու փ.)՝ չորս սենյակից բաղկացած տուն (վարձակալել է Կարապետ Անանյանը, վճարը՝ 1600 ռուբլի), Ղրբուլաղի Եոլղովան, ներկայիս՝ Աբովյանի տարածաշրջանի Կոտայք գյուղում 15 լիտրանոց, այսինքն՝ 75 կգ բերք տվող հող (եթե հաշվենք երևանյան լիտրին համարժեք՝ 1 լ. = 5 կգ), որը վարձակալել է Կոնստանդին Գեղամյանը 50 ռուբլի վճարով, նաև՝ Ջորավոր եկեղեցու բակում (բնագրում՝ գավթում) երկու սենյականոց տուն (վարձակալել է ոմն Ա. Գալստյան, 300 ռուբլիով), ինչպես նաև Էջմիածնի Քյուչուկքենդ (Քիչիքիեանդ) գյուղից 3 մստիլ (՞), որը, սակայն, տերությունը վերցրել ու տարեկան 81 ռուբլի տոկոս է վճարում*[408]*:*

[406] ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 1077, թ. 9:

[407] Պահպանվել է Սարգիս Տեր-Գաբրիելյանի երեսփոխանական պաշտոնավարությանը վերաբերող գործը՝ եկեղեցու ծխատեր քահանա Կորյուն Պանճուլազյանի և այլ միաբանների ստորագրությամբ: Այն բովանդակում է Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու գործունեությանը վերաբերող տարբեր հարցեր՝ 1906 և հետագա մի քանի տարիներից (ՀԱԱ, ֆ. 47, ց. 1, գ. 565, թ. 1–9):

[408] ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 248, թ. 9աբ:

Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու երեսփոխան Սարգիս Տեր-Գաբրիելյանի՝ Երևանի վիճակային հոգևոր ատյանին հղած 1916 թ. օգոստոսի 5-ի նամակում դարձյալ նշված է Եոլղովան գյուղում 15 լիտրանոց հող ունենալու մասին: Նույն գրության մեջ կարդում ենք, որ եկեղեցին հողեր ունի նաև Եոլղովանին մերձակա Թազագյուղում (ներկայիս՝ Նոր Գեղի)[409]:

Մեզ են հասել վավերագրեր, որոնցում արձանագրված է Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու գույքը: Սրա վաղագույն օրինակը 1843 թվականից է և ունի «Պիտանի անօթեղէնք Ջօրաւար անուանեալ եկեղեցւոյ, ի 30 օգոստոսի» խորագիրը: Նկատառելով ցուցակիս կարևորությունը և այն, որ գույքացանկից բացի ընդգրկում է նաև տեղեկություններ եկեղեցու որպիսության մասին՝ հարկ ենք համարում այն ներկայացնել ամբողջությամբ՝ անհրաժեշտության դեպքում բացատրություններ տալով ուղղանկյուն փակագծերում.

«2 հատ սկիհ արծաթեայ իւրեանց մաղզմանովն [սկավառակ],

2 հատ արծաթեայ գօտի ժամարարի,

2 հատ շուրջառ հասարակ գործածելի,

2 հատ ժամաշապիք կարմիր զանաւուզից [ապրեշումից գործած կտոր],

1 հատ ժամաշապիք դեղին զանաւուզից,

6 հատ ժամաշապիք զանազան չթից,

2 հատ հասարակ վակաս [օձիք],

6 հատ արծաթեայ խաչք,

1 հատ գօտի սատաֆի արծաթապատ,

1 հատ բուրվառ արծաթեայ,

1 հատ մանանաւուի արծաթի,

Հարկաւոր են նորոգ պատրաստել վանն Ջօրավորի եկեղեցւոյն, հրամայեցաւ երեցփոխին՝ ի ներքոյ գրեալքս,

1 հատ զառ ճոթից [ոսկեթել] շուրջառ,

1 հատ զառ ճոթից փորուրար ժամարարի,

2 զոյգ թևնոց ժամարարի,

1 հատ շապիք դեղին զանաւուզից,

3 հատ ժամաշապիք ֆռանկի չթից,

2 հատ ուրար սարկաւագի զառ ճոթից,

1 հատ գրակալի շապիք խաս [ընտիր] ճոթից,

2 հատ գրակալի շապիք ֆռանկի չթից:

Զմի խախտեալ արծաթի սկիհն, զ1 գօտին, 2 կոտրեալ խաչքն և այլ արծաթի կտորոցն, որք ընդամէնն են երկու հարիւր ութսուն և հինգ մսխալ, տացես հալել և շինել զմի արծաթի սաղաւարդ և զմի վակաս արծաթի:

1 ասխանի [ասեղնագործ] պատկերով վակասն նորոգել տաս իւր պարագայիւքն,

1 որմայով հին վակասն կարել տալ զմի զոյգ ժամարարի թևնոց,

Աւելորդ պղնձեղէն և թճեղէն [երկաթեղէն] կոտրատեալ, շամատանքն վաճառել և զգիւնն կցել ընդ եկեղեցական արդեանցն,

յԵկեղեցւոյ միջի խախտեալ տեղիսն և սիւնքն բոլոր շրջապատիւքն գաճել տալ,

յԵկեղեցւոյ առաջի սալայատակն հաւասարացուցանել ընդ գետնին,

Պարսպի խախտեալ դուռն և այլ տեղիսն նորոգել տալ,

Շամատանքն, բուրվառն և եղրուխ լականն լաւ սրբել տալ»[410]:

Վավերագրի այս վերջին տեղեկությունների հիմամբ կարելի է փաստել, որ 1840-ականներին եկեղեցին ու պարիսպը արդեն կարիք են ունեցել նորոգման, իսկ շրջապատը՝ բարեկարգման, ըստ այդմ՝ որոշում է կայացվել գաջել եկեղեցու ներսի որմերը, հավասարեցնել շրջակա սալահատակը և այլն:

---

[409] ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 1048, թ. 17:

[410] ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 701, թ. 6աբ:

Առավել ուշագրավ է 1844 թվակիր գույքացուցակը (տե՛ս վավ. 2ա–ե), որում տեղ է գտել նաև եկեղեցում պահվող ձեռագիր ու տպագիր գրքերի ցանկը, ուր հիշատակված է նաև «Ջորավոր» կոչվող Ավետարանը (Հմր 42)։ 113 միավորից բաղկացած ցուցակի վերջում ստորագրել են Տ. Ստեփան Մարգարյանն ու նորընծա Տ. Ստեփանոս քահանա Տեր-Ստեփանոսյանցը։ Այն ևս վկայակոչում ենք առանց կրճատումների.

«Ի Ջօրաւորայ Սուրբ Աննանեայ կոչեցեալ եկեղեցւոջ.

1. Երկու ճաճանջաւոր արծաթեայ ձեռաց խաչ,

2. Երկու ճաճանջաւոր արծաթեայ մուշաբաղ [մետաղալարերից հյուսված] խաչ,

3. Մէկ շաբաքայ [ցանցենի] արծաթեայ խաչ,

4. Երկու խաչ հասարակ արծաթեայ — կոտրած,

5. Մէկ խաչ արծաթեայ հասարակ — կոտրած,

6. Մէկ արծաթեայ սկիհ մաղզմանաւն,

8. Մէկ հասարակ արծաթեայ քամար [գոտի],

9. Մէկ փոքր արծաթեայ քամար,

10. Մէկ սատաֆի քամար արծաթապատ,

11. Երկու հատ հին զառ փորուրար — մաշուած,

12. Երկու հատ հասարակ փորուրար — հնոտի,

13. Մէկ ուրար հին զառ — մաշուած,

14. Մէկ բանաւուշ շուրջառ շուրջար,

15. Երեք չիթ շուրջար,

16. Մէկ հին ասղարուր [ասեղնագործ] թևնոց,

17. Մէկ զոյգ հնոտի զառ թևնոց,

18. Մէկ հին շուրջ թևնոց — մաշուած,

19. Երկու հին խաթայի թևնոց — մաշուած,

20. Մէկ հին սև քօղ սկհուոյ — մաշուած,

21. Երկու փէշկիր [սրբիչ] ժամարարի,

22. Հինգ փոքր աղլուխ Աւետարանի և խաչի,

23. Երկու կարմիր ղանաւուզ շաբիկ,

24. Մէկ տեղին ղանաւուզ շաբիկ,

25. Մէկ չիթ շաբիկ (3 հատ շաբիկ չիթ ուռուսի արդեամբ եկեղեցւոյ),

26. Երեք սփռոց սեղանի (2-եան քէչա խօյեցի Զաքար աղայի յիշատակ),

27. Մէկ, տեղին սեղանի ծածկոց,

28. Մէկ մեծ վարագուր, չիթ, պատկերազարդ, աւագ խորանին,

29. Մէկ փարտայ աւազանի,

30. Մէկ դարայի սեղանի ծածկոց — մաշուած (1 խալիչա, 1 կարպետ մարաղտցի Աստուածատուրի յիշատակ),

31. Երկու գրքակալի շաբիկ՝ քաթան և միւսն շիլայ [կարմիր կտավ],

32. Մէկ հին սեղան ծածկոց կարմիր,

33. Մէկ հին երկար խալիչայ (մաշեալ է),

34. Մէկ Աստուածածնի պատկեր խաչկալի,

35. Մէկ փոքր, հին պատկեր Աստուածածնի (1 խալիչայ սալմաստեցի Աւէտին յիշատակ),

36. Երկու Աստուածածնի պատկեր մեծ և փոքր,

37. Մէկ Սուրբ Լուսաւորչի չարչարանաց պատկեր՝ նկարեալ ի վերայ պղնձի,

38. Մէկ փոքրիկ խաչվառ — հին (մէկ ջառ [ջահ] մարղեցի Սարգսի յիշատակ),

39. Երկու պատկեր դրանս՝ Պօղոս և Պետրոսի առաքելոցն,

40. Մէկ փոքրիկ պատկեր խաչելութեան,

41. Մէկ Ամենափրկչի պատկեր,

42. Մէկ Ջօրաւոր անուանեալ Աւետարան գրչեայ, խաչազարդ,

43. Եօթն տեսակ-տեսակ կերպասեայ և զօր շուշփայիւ,

44. Երեք գրչեայ Աւետարան արծաթապատ խաչիւ զարդարեալ,
45. Մէկ գրչեայ հին Աւետարան,
46. Մէկ Խորհուրդատետր տպագիր,
47. Մէկ Յայսմաւուր տպագիր,
48. Մէկ Ճաշոց գիրք տիպ,
49. Երկու ձայնքաղ Շարական,
50. Մէկ Մայր Մաշտոց,
51. Մէկ փոքր տպագիր ձեռաց Աւետարան,
52. Մէկ հատ հին ձայնաքաղ Շարական,
53. Մէկ հատ փոքր Տաղարան,
54. Երկու քշոց,
55. Մէկ ժամարարի իբրուղ [ջրաման] և լական,
56. Տասն հատ փոքր շամատան (երկու սպիտակ շամատան Արսէն սուլթանի յիշատակ),
57. Մէկ մեծ շամատան,
58. Մէկ հատ բելորազարդ ջահ,
59. Մէկ հասարակ պղնձէ ջահ,
60. Մէկ փոքրիկ իբրուղ ձիթոյ,
61. Մէկ շիշ սրբալոյս միւռոնաւ,
62. Չորս հատ գրքակալ,
63. Մէկ փոքրիկ մասանց,
64. Մէկ մեծ նարդիւան,
65. Մէկ տակաղ,
66. Մէկ սեղան եկեղեցապանի [հոգևոր հովիվ, առաջնորդ],
67. Մէկ երկաթեայ սաջ իւր պարակայիւք (նոյն Չօրաւոր կոչեցեալ եկեղեցւոջ բերեալն ի մարաղեցւոյս սգեստ),
68. Չորս արծաթեայ ճաճանչաւոր խաչ մեծ և փոքր (կոտրած),
69. Մէկ սկիհ արծաթեայ առանց մաղզմանի (կոտրած),
70. Մէկ արծաթեայ սկիհ մաղզմանով,
71. Մէկ արծաթեայ քամար,
72. Երկու մասանց խաչ՝ ի մէջ փայտեայ տփոց ոսկեզօծ,
73. Երկու հասարակ հին սաղաւարտ (մաշուած),
74. Մէկ հին սաղաւարտ (մաշուած),
75. Երկու հատ հին վակազ (մաշուած),
76. Երկու հասարակ չիթ փորուրար,
77. Երկու ևս հին փորուրար (մաշուած),
78. Երկու ջուխտ հին թևնոց (մաշուած),
79. Երեք շուրջառ, մէկն՝ ղանաւուզ, երկուքն՝ հին (մաշուած),
80. Մէկ հասարակ քամար,
81. Երկու սկհոյ քօղ փուլազարդ (մաշուած),
82. Չորս չիթ շաբիք (հին),
83. Երկու, սպիտակ կրաւի շաբիք (հնոտի), (կոտրած խաչեր և սկիհ, 1 շինեալին, 1 արծաթապատ սաղաւարդ և մէկ արծաթեայ վակաս),
84. Մէկ փոքր սփռոց,
85. Ութն հատ ուրար սեղանի (մաշեալ),
86. Հինգ վարագուր պատուհանաց (մաշուած),
87. Մէկ ևս վարագուր,
88. Մէկ գրքակալի շաբիք (1 շուրջառ ուռուսի զառ, մէկ զոյգ թևնոց),
89. Մէկ հին սեղան ծածկոց (մաշուած),
90. Երեք հին խալիչայ,
91. Մէկ հատ մեծ կարպետ (1 փորուրար, 2 սարկաւագի ուրար ուռուսի զառ),
92. Մէկ Աստուածածնի մեծ պատկեր,
93. Մէկ ևս մկրտութեան պատկեր (հնոտի),
94. Մէկ միջակ պատկեր Աստուածածնի Յովհաննու Մկրտչի և Սրբոյն Ստեփաննոսի (2 հատ գրքակալի շաբիկ չիթ՝ արդեամբ եկեղեցւոյ),
95. Երկու հին պատկեր Պետրոս և Պօղոսի (մաշուած),
96. Մէկ Աւետարան գրչեայ՝ կարմիր կոչեցեալ,
97. Ութն տեսակ կերպասեայ շուշփայիւ,

98. Երկու խորհուրդատետր պատարագի,

99. Մէկ Յայսմաւուր տպագիր,

100. Մէկ Ճաշոց տպագիր,

101. Մէկ Առենի ժամագիրք,

102. Երկու քշոց սատաֆեայ ձօղեօք,

103. Մէկ նշխարքի թաբաղ [մետաղյա ծանծաղ պնակ],

104. Երկու հատ պղնձի պատկեր,

105. Մէկ խաչ,

106. Երկու փոքրիկ իբրուղ և լական ժամարարի (մէկն ծակեալ է),

107. Քսան և երեք փոքր շամատան,

108. Մէկ հատ պղնձէ խաչ,

109. Մէկ պղնձէ ջահ,

110. Երկու պղնձեայ բուրվառ (մէկ կոտրած),

111. Մէկ գրքակալ,

112. Չորս իւղաբեր փայտեայ,

113. Մէկ հատ սնդուկ»[411]:

Վերոբերյալ ցուցակում հիշատակված եկեղեցական սպասքից ու հանդերձանքից զատ՝ ուշագրավ է ձեռագիր ու տպագիր գրականության մասին տեղեկությունը, համաձայն որի՝ 1844 թ. Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու սեփականություն են հանդիսացել 5 ձեռագիր Ավետարան և 14 հնատիպ գիրք՝ 1 Ավետարան, 3 Խորհրդատետր, 2 Հայսմավուրք, 2 Ճաշոց, 1 Ժամագիրք, 1 Մայր Մաշտոց, 3 Շարակնոց, 1 Տաղարան: Ինչպես վերը նկատեցինք, ձեռագրերից մեկը «Ջորավոր» կոչվող խաչազարդ կազմով Ավետարանն է, որն արդեն 1844 թ. պահվելիս է եղել իր անունով օժտված եկեղեցում: Ակներև է, որ ձեռագիրն այստեղ է բերվել Երևանի՝ մականվամբ երկուբեռանի (Ս. Պողոս-Պետրոս) կոչվող եկեղեցուց, քանի որ ձեռագրի ավելի վաղ՝ 15-րդ դարավերջի հիշատակարանում նույն երկուբեռանիի սպասավոր Ներսես Մոկացին հիշատակում է եկեղեցում գտնվող այս ձեռագիրն ու նրա զորությանն ականատես լինելու հանգամանքը[412]:

Պահպանվել է Երևանի վիճակային հոգևոր ատյանի ենթակայության տակ գտնվող եկեղեցիների ունեցվածքի՝ 1847 թվակիր ցուցակը՝ կազմված 1848 թ. նոյեմբերի 12-ին: Ցուցակի սկզբում Երևանի վեց եկեղեցիների անուններն են՝ Ս. Սարգիս, Ս. Հովհաննես Մկրտիչ, Ս. Պողոս-Պետրոս, Կաթողիկե Ս. Աստվածածին, Ս. Անանիա առաքյալ (Ջորավոր) և Նորքի Ս. Սիմեոն ծերունի: Ս. Անանիա առաքյալի եկեղեցուց նախ հիշատակված են չորս խցեր գավթում, այնուհետ դրամական միջոցները՝ 100 արծաթե դրամ՝ իբրև կալվածք, ապա 1847 թ. տարեսկզբի գումարը, որը կազմել է 262 մանեթ 50 կոպեկ, տարվա ընթացքում գոյացած գումարը՝ 110 մանեթ 10 կոպեկ և ծախսը՝ 47 մանեթ 50 կոպեկ: Ցուցակի լուսանցում հետևյալ մանրատառ գրությունն է. «արդիւնքն գոյանայ ի տրոց ժողովրդականաց և ի կալուածոց, և ծախսն առնի վասն եկեղեցւոյն»[413]:

Ավելի ուշ՝ 1865 թ. ընթացքում Երևանի եկեղեցիներին ընծայված և եկեղեցու միջոցներով գնված գույքացուցակում Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցուց հիշատակված է մեկ մեծ վարագույր, որը եկեղեցուն է ընծայել երևանցի Մկրտիչ Սողոմոնյանն ի հիշատակ հանգուցյալ կնոջ՝ Թամամ Սիմոնյանի, և շուրջառներ, որոնք գնվել են եկեղեցու միջոցներով: Ցուցակը կազմել է բարեկարգող Տ. Մինաս քհն. Հովբյանցը[414]:

Երևանի թեմի ենթակայության տակ գտնվող եկեղեցիների մուտքի և ելքի հաշիվներին է վերաբերում նաև 1879 թ.

[411] ՀԱԱ, ֆ. 47, ց. 1, գ. 36, թ. 299–301:

[412] **Ա. Հարությունյան, Ա. Սիմոնյան,** Ջորավոր Ավետարանը, էջ 9:

[413] ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 1188, թ. 22–23:

[414] ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 1985, թ. 46:

ցուցակը, որտեղ նախ նշված է Ջորավոր եկեղեցու սեփականությունը հանդիսացող տունն իր այգիով, այնուհետև հիշյալ թվականին եկեղեցու ֆինանսական մուտքի և ելքի տվյալները՝ 3619 ռուբլի 64 կոպեկ՝ իբրև կալվածք, 506 ռուբլի 60 կոպեկ եկամուտ և ծախսը՝ 44 ռուբլի 22 կոպեկ հաշվետու տարվա ընթացքում: Վավերագրի վերջում պահպանվել են հոգևոր ատյանի ներկայացուցիչ Գևորգ եպս. Սուրենյանցի և անդամներ՝ Գևորգ քհն. Թաղիանոսյանցի, Ստեփանոս քհն. Տեր-Գրիգորյանցի և Պողոս քհն. Այվազյանցի անունները[415]:

Հարուստ գույք ու կալվածքներ ունեցող եկեղեցին ԺԹ. դարում քանիցս կողոպտվել է: Արխիվային վավերագրերի ուսումնասիրությունը պարզում է, որ Տ. Ստեփան քհն. Մարգարյանի հովվության օրոք՝ 1847 թ. մայիսի 13-ին չարագործները վաղ առավոտյան, բացելով եկեղեցու դուռը, առևանգել են եկեղեցական սպասք, զարդեր, մինչև անգամ գույքացուցակն են տարել և, որ աղետալին է, հափշտակել են նաև «Ջորավոր» կոչվող հայտնի Ավետարանը[416]: Այդ մասին վկայված է գողացված իրերի՝ 24 միավորից բաղկացած ցուցակում. «Մէկ Ջօրաւոր անուանեալ Աւետարան արծաթապատ կոստղած, տասն զանազան գունիւ շուշպայիւք»[417] (տե՛ս վավ. 3ա—բ): Գործի քննությունը, որով հիմնականում զբաղվել է Ս. Էջմիածնի Սինոդն ու Երևանի քաղաքային ոստիկանությունը, պարզել է հանցագործներին՝ Հաջիմի Քարիմի Նիազ օղլիին և Աբաջալու Քեալբալա Մամադ Հուսեին օղլիին, որոնցից առգրավվել են գողացված իրերն ու հանձնվել Երևան քաղաքի եկեղեցիների բարեկարգող Տ. Իսահակ քհն. Շահնազարյանցին[418]:

Երևանի վիճակային հոգևոր ատյանի անդամ Տ. Աստվածատուր ավ. քհն. Իսահակյանի՝ Ս. Էջմիածնի Սինոդի դատախազին ուղղած 1863 թ. փետրվարի 6-ի հայտարարագրում ևս խոսվում է Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցուց գողության անելու մասին: Դժմաշենից Երևան տեղափոխված և եկեղեցու պարսպի հարևանությամբ բնակություն հաստատած ոմն Վարդան Կիրակոսյան, երեկոյան ժամերգությունից հետո թաքնվելով եկեղեցու խորանում, հաջողում է երեսփոխանի գանձանակի արկղից հափշտակել 43 մանեթ 85 կոպեկ արծաթե դրամ, 25 մանեթ 19 կոպեկ պղնձե դրամ և այլ միջոցներ[419]: Ավելի ուշ՝ 1889 թ. օգոստոսի 31-ին, 25 ռուբլի արժողությամբ երեսփոխանական արկղը հրկիզվել է, որի արդյունքում ոնչնչացվել են նաև 25 ֆոնտ մոմ, հաշվեմատյաններ, թանաքամանի պարագաներ, 27 ռուբլի գումար և այլն: Ս. Էջմիածնի Սինոդին՝ Երևանի վիճակային հոգևոր ատյանի հղած գրությունում նշված է, որ ոստիկանությունը զբաղվում է հրդեհի պատճառները պարզելու ուղղությամբ[420]:

Ս. Էջմիածնի Սինոդին՝ Երևանի վիճակային հոգևոր ատյանի հղած 1874 թ.

---

[415] ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 2987, թ. 151, 177: Այսօրինակ է նաև 1892 թ. ցուցակը, որը դարձյալ ամփոփում է Երևանի վեց եկեղեցիների տարեկան մուտքի ու ելքի ընդհանուր պատկերը: Ջորավոր եկեղեցու ֆինանսական կարողությունը հետևյալն է՝ 3247 ռուբլի 39 կոպեկ՝ իբրև կալվածք, եկամուտը՝ 1320 ռուբլի 76 կոպեկ և ծախսը՝ 647 ռուբլի 61 կոպեկ (ՀԱԱ, ֆ. 47, ց. 1, գ. 328, թ. 1—2):

[416] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2170, թ. 1—2:

[417] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2170, թ. 3ա:

[418] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2170, թ. 32աբ: Միևնույն կողոպուտին է վերաբերում Երևանի վիճակային հոգևոր ատյանի անդամներ Հովհաննես քհն. Ղամեքյանի և Զաքարիա քհն. Կարապետյանի 1847 թ. հայտարարագիրը Ս. Էջմիածնի Սինոդի դատախազի (պրոկուրոր) պաշտոնակատար, կոլեգիական խորհրդական (կոլեժսկի սովետնիկ) Միրզային (ՀԱԱ, ֆ. 56, ց. 2, գ. 463, թ. 1աբ):

[419] ՀԱԱ, ֆ. 56, ց. 2, գ. 839, թ. 1աբ:

[420] ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 1985, թ. 1:

հունիսի 10-ի հայտարարագրով ասվում է, որ Երևան քաղաքի Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու երեսփոխանի և անդամների նույն թվականի մայիսի 10-ի խնդրագրով տեղեկացվել է, որ եկեղեցու տանիքի հարավկողմյան ծածկասալերը խախտված են, որի հետևանքով ձյան հալոցքն ու անձրևաջրերը ներթափանցելով որմերի մեջ՝ խոնավություն են առաջացնում շինության ներսում, ուստի հարկավոր է որմնադիր վարպետի միջամտությունը, որի աշխատանքի ծախսը կազմում է մինչև 600 մանեթ՝ տանիքի և պարսպի վնասված ծածկասալերը նորոգելու, նախասրահի ներսը սրբատաշ քարով սալարկելու համար: Այս խնդրով պահանջում են հոգևոր ատյանի թույլատրությունը, վերջինս էլ դիմում է Սինոդին՝ լուծում գտնելու նշված աշխատանքների իրագործման համար: Փաստաթուղթը ստորագրել են՝ Երևանի թեմակալի փոխանորդ եղիազար արքեպիսկոպոս, հոգևոր ատյանի անդամներ՝ Իսահակ ավ. քհն. Տեր-Ղազարյանց, Խաչատուր քհն. Բաբախանյան, Գևորգ քհն. Թաղիանոսյանց, ատենադպիր՝ Յ. Խաչատրյանց[421] (տես վավ. 4):

Երևանի վիճակային հոգևոր ատյանի՝ Ս. էջմիածնի Սինոդին հղած 1886 թ. հունիսի 8-ի մեկ այլ հայտարարագրով տեղեկացվում է, որ նույն թվականի ապրիլի 21-ին Երևանի Ս. Անանիա առաքյալ (Ջորավոր) եկեղեցու երեսփոխան Մկրտիչ Տեր-Սարգսյանից զեկուցում են ստացել, որով երեսփոխանը թեմական ատյանին ծանուցում է, որ եկեղեցու ծխական համայնքը վճռել է նորոգել եկեղեցին, ինչպես նաև գնել անհրաժեշտ զարդ և անոթ, որոնց ծախսը կազմում է 3000 ռուբլի, ուստի այսօրինակ որոշման համար խնդրում է համապատասխան թույլատրություն աշխատանքներն սկսելու համար: Նույն տարվա մայիսի 7-ին թեմական ատյանը երեսփոխան Մկրտիչ Տեր-Սարգսյանին առաջարկել էր նախ ճարտարապետից ստանալ նորոգության նախագիծը, ապա նաև կազմել նորոգումների և գնվելիք սպասքի ծախսերի հաշվեցուցակը: Երեսփոխան Մկրտիչ Տեր-Սարգսյանը ներկայացրել է ճարտարապետ Հեջուբյանցի կազմած նորոգման աշխատանքների և անհրաժեշտ սպասքի ծախսերի հաշվեցուցակը, ըստ որի՝ նորոգման համար հարկավոր է 2310 ռուբլի և ևս 581 ռուբլի գնվելիք զարդերի և անոթների համար: Սրանից բացի ճարտարապետը խնդրում է նորոգումների ընթացքում իրեն իրավունք տալ եկեղեցու աջակողմում գտնվող ննջեցյալների գերեզմանաքարերը ըստ անհրաժեշտության իրենց իսկ տեղում խորացնել և հավասարեցնել, քանի որ դրանք խոչընդոտում են անձրևաջրերին, որոնք լցվելով եկեղեցու հիմքերի տակ՝ օր օրի վնասում են այն: Հիշյալ հաշվեցուցակի հիմամբ՝ Երևանի վիճակային հոգևոր ատյանը միջնորդում է Ս. էջմիածնի Սինոդին թույլատրելու նորոգել Երևանի Ս. Անանիա առաքյալ (Ջորավոր) եկեղեցին սեփական դրամագլխից և իրենց իսկ տեղում իջեցնել նաև անձրևաջրերի համար արգելք հանդիսացող հարավկողմյան տապանաքարերը: Փաստաթուղթը ստորագրել են՝ ատենապետ Գևորգ եպս. Սուրենյանց (հետագայում՝ կաթողիկոս Գևորգ Ե.), անդամներ՝ Գևորգ քհն. Թաղիանոսյանց, Ստեփանոս քհն. Տեր-Գրիգորյանց, Պողոս քհն. Այվազյանց, ատենադպիր՝ Զ. Տեր-Զաքարյանց[422] (տես վավ. 5ա–բ):

Ս. էջմիածնի Սինոդի՝ Երևանի վիճակային հոգևոր ատյանին հղած նույն թվականի օգոստոսի 20-ի Հ՝ր 2265 հրամանագրում ներկայացված են Երևանի Ս. Անանիա առաքյալ (Ջորավոր) եկեղեցու նորոգման

[421] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 6489, թ. 1:

[422] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8097, թ. 1աբ:

և եկեղեցական պարագաների գնման վերաբերյալ ամիսներ առաջ ստացված զեկուցագրերի համառոտ տարբերակները և Սինոդի որոշումը, համաձայն որի՝ Սինոդը Երևանի վիճակային հոգևոր ատյանին միջնորդում է թույլատրել իրականացնել եկեղեցու նորոգման աշխատանքները, իրենց եկեղեցական գումարից (որը 7000 ռուբլի է) ծախսել անհրաժեշտ 2891 ռուբլին, իրավունք տալ նաև եկեղեցու հարավկողմյան տապանաքարերն ըստ կարգի իջեցնել իրենց տեղում՝ անձրևաջրերին չխոչընդոտելու նպատակով: Աշխատանքների վերջում հոգևոր ատյանին հանձնել նորոգումների և գնվելիք առարկաների հաշվեցուցակները[423]:

Բացի նշված ուշագրավ արխիվային փաստաթղթերից՝ եկեղեցու երեսփոխան Մկրտիչ Տեր-Սարգսյանի օրոք կատարված աշխատանքների մասին է վկայում նաև եկեղեցու հարավային մուտքի վերնամասում առկա արձանագրությունը, ըստ որի՝ աշխատանքներն ավարտվել են 1889 թ.: Վիմագրի մանրամասն քննությունը ներկայացված է իր տեղում (տե՛ս արձ. 10):

Թ. ԵԿԵՂԵՑԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ԲՌՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏԱՊԱՏ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1930–40-ական թթ. Հայաստանի բազմաթիվ վանքերի ու եկեղեցիների ճակատագիրը չի շրջանցել նաև Երևանի Ջորավոր Ս. Աստվածածինը: Այն ևս ստալինյան բռնապետության տարիներին փակվել ու ծառայել է այլ նպատակների: Կենտկոմի քարտուղար Լազար Կագանովիչի՝ 1929 թ. ստորագրած հրահանգում հստակ նշված էր եկեղեցիների՝ միակ հակահեղափոխական գործող կառույցներ լինելու հանգամանքը, ուստի եկեղեցու դեմ պայքարի սաստկացումը բռնատիրական քաղաքականության առաջնային պլանի անքակտելի մասն էր դարձել[424]: Խորեն Ա. Մուրադբեկյան (1932–1938) կաթողիկոսի գահակալման ժամանակաշրջանն այս առումով ամենածանրն էր: Պատմաբան Վլադիմիր Ղազախեցյանի դիպուկ բնորոշմամբ «նոր կաթողիկոսը գործեց պատմական ծանր ժամանակաշրջանում... դաժան ձևով շարունակվում էին հալածանքներն ու բռնաճնշումները կրոնի, եկեղեցու և նրա սպասավորների նկատմամբ, զանգվածորեն փակվում էին եկեղեցիներն ու վանքերը, իսկ կրոնի սպասավորները, ինչպես հասարակության մյուս խավերի ներկայացուցիչները, զանգվածորեն բանտարկվում ու աքսորվում: Երևանում քանդման ենթարկվեց նշանավոր Պողոս-Պետրոս եկեղեցին... Կաթողիկե եկեղեցին վերցվեց էջմիածնի իրավասությունից ընդդիմադիր «Ազատ եկեղեցական եղբայրության» հանձնելու համար, իսկ այնուհետև դարձյալ քանդվեց: Եկեղեցիներ ավերվեցին նաև այլ քաղաքներում ու բնակավայրերում: 1937 թ. վերջի դրությամբ Հայաստանում փակվել էր 800 եկեղեցի»[425]:

Պատմաբան Ստեփան Ստեփանյանցը նշում է, որ ստալինյան բռնապետության տարիներին հակակրոնական պայքարը մեծ ծավալների էր հասել Երևանում, մասնավորապես՝ 1930 թ. քանդեցին Նորքի Ս. Սիմեոն Ծերունի եկեղեցին, ավելի ուշ՝ քաղաքի կենտրոնում գտնվող Ս. Պողոս-Պետրոսը, Գեթսեմանի մատուռը, Կաթողիկեի եռանավ սրահը, Ս. Նիկոլայ ռուսական եկեղեցին, ապա՝ Ս. Գրիգոր Լուսավորիչը[426] և Նորքի Ս. Աստվածածինը

[423] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8097, թ. 4աբ:

[424] **Վլ. Ղազախեցյան,** Հայաստանը 1920–1940 թթ., Երևան, 2006, էջ 526:

[425] Նույն տեղում, էջ 531:

[426] Երևանում բոլշևիկների հակակրոնական

(1948–1949 թթ.)։ Փակ էր երբեմնի Զորագյուղի անապատի Ս. Սարգիս եկեղեցին, բռնագրավված էր Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու գույքը, իսկ 1940-ականների սկզբին փակվեց նաև Ս. Զորավորը[427]։ Ինչ վերաբերում է հոգևորականներին, ապա 1930–1938 թթ. բռնությունների է ենթարկվել 160 հոգևորական, որոնք տարբեր պատճառներով բռնադատվել, աքսորվել կամ գնդակահարվել են[428]։ Եթե 1930–1936 թթ. հոգևորականության դեմ հալածանքներն արտահայտված էին հիմնականում գյուղերում բնակվող քահանաների զանգվածային բռնաճնշումներով, ապա 1937–1938 թթ. համընդհանուր քաղաքական ահաբեկչությանը զոհ է դարձել բնակչության ընտրանին (աշխարհիկ և հոգևորական), որոնց շարքում 21 հոգևորական միայն Երևանից[429]։

Հայ եկեղեցու և պետության գոյապայքարը հիշյալ ժամանակաշրջանում լավագույնս արտահայտված է ժամանակի Ամենայն Հայոց հայրապետների և նշանավոր եկեղեցական գործիչների արխիվային վավերագրերում, որոնց օգնությամբ փորձենք ներկայացնել Երևանի՝ հատկապես Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու որպիսությունը։ Այն, որ Երևանի և նրա թեմում ընդգրկված եկեղեցիներն ու ծխական դպրոցները գտնվում էին անմխիթար վիճակում, պարզում է դեռևս Երևանի փոխթեմակալ Խորեն եպս. Մուրադբեկյանի 1918 թ. գրությունը Գևորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսին, ըստ որի՝ սրբազան հայրը ցավով է արձանագրում, որ Երևանի թեմի եկեղեցիների մեծագույն մասն ավերված ու թալանված է, շատերի ավագ խորանների վեմ քարերը նույնիսկ տեղահանված են, վերածված մզկիթի կամ գոմի[430]։ Սրա

արշավը շարունակվել է նաև 1940-ականների վերջերին, որն առավելապես արտահայտվել է քաղաքի կենտրոնում գտնվող ևս մեկ եկեղեցու ոչնչացմամբ։ 1869–1900 թթ. երևանցիների միջոցներով կառուցված Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին 1920-ականներին վերածվել է «Անաստված» կինո և տիկնիկային թատրոնների (**Ստ. Ստեփանեանց,** Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երևան, 1994, էջ 217)։

[427] Հակառակ սրան՝ առանց որևէ աղբյուր հիշատակելու Անատոլի Պետրոսյանը նշում է, որ 1939 թ. մարտի 28-ին Երևանի քաղխորհուրդը որոշում է կայացրել Ս. Զորավոր եկեղեցին իբրև ճարտարապետական կոթող հուշարձանների պահպանության պետական կոմիտեին, իսկ եկեղեցում առկա պատմական արժեք ներկայացնող առարկաները Հայաստանի պատմության պետական թանգարանին հանձնելու մասին (**А. Петросян**, Ереванская церковь Зоравор, «Азатамарт», 1994, №22 (104), с. 8)։Մենք փորձեցինք ճշտել, թե Հայաստանի կամ Երևան քաղաքի պատմության թանգարաններում արդյո՞ք պահպանվել են Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցուց տեղափոխված առարկաներ, սակայն, այդօրինակ որևէ նմուշ գտնել չհաջողվեց։ Փոխարենը Հայաստանի ազգային արխիվում հաջողվեց գտնել 1939 թ. մայիսի 10-ին կազմված մի արձանագրություն, ըստ որի՝ Կիրովյան շրջխորհուրդը հանձնաժողով է ստեղծել Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցին Երևանի պատմական հուշարձանների պահպանության կոմիտեին հանձնելու համար։ Հանձնաժողովն իր հերթին արձանագրել է, որ եկեղեցին գտնվում է բարվոք վիճակում և միայն 3500 ռուբլի է անհրաժեշտ նկատված թերությունները շտկելու համար։ Հանձնաժողովի կազմն է՝ ճարտարապետ Մնացական Իֆեկչյան, շրջխորհրդի տեխնիկ Վրույր Գյուլգոյան և հուշարձանների պահպանության կոմիտեի ճարտարապետ Վարդան Գրիգորյան (ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 350, թ. 2–3)։

[428] **Ստ. Ստեփանեանց,** Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, էջ 133, տե՛ս նաև **Դոկտ. Հ. Չաւէն Արզումանեան,** Ազգապատում, Դ. հատոր, Բ. գիրք (1930–1955), Նիւ Եորք, 1997, էջ 4–7։

[429] **Ա. Մանուկյան,** Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920–1953 թթ., Երևան, 1999, էջ 128–129։

[430] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Բ., Խորեն Ա. Մուրադբեկյան կաթողիկոս Ամենայն Հայոց (հոգևոր գործունեությունը 1901*1938 թթ.), կազմեց՝ **Ս. Քեհրուդյան,** Երևան,

ապացույցը պետք է համարել նաև Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու ծխականների 1923 թ. խնդրագիրը՝ ուղղված արդեն Երևանի թեմական առաջնորդ Խորեն Մուրադբեկյանին՝ եկեղեցին երիտմիության ակումբ դարձնելու քաղդործկոմի որոշումը կասեցնելու խնդրանքով, քանզի «եկեղեցին կրոնական կարիքները հոգալու համար է շինած, ունի հնագոյն տաճարների ճարտարապետութիւն և ձև և թանգարժեք հնութիւն է միայն այն ժամանակ, երբ նա եկեղեցի է»: Դիմում-խնդրագրի տակ ստորագրել է Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու ծխականների դասը՝ 572 անձ[431]:

Անտարբերության մատնված հոգևոր կենտրոնների վիճակն ավելի վատթարացավ 1930-ականների սկզբներին՝ պետական հատուկ օրենսդրության հաստատմամբ: Ըստ նոր կարգի՝ եկեղեցու շենքը համարվում էր պետության սեփականությունը և որոշ ժամանակ չգործելու դեպքում՝ փակվում: Այսինքն՝ հիշյալ բռնակարգի զոհը դարձած եկեղեցիները ոչ միայն ոչնչացվեցին, այլև՝ փակվեցին ու վերածվեցին հիմնականում պահեստների, ակումբների կամ ախոռի:

Բռնակարգի ծանր լծից անմասն չի մնացել նաև Երևանի Ս. Ջորավորը: 1930-ականների սկզբին բանտերում և աքսորում չարքաշ կյանք վարած հոգևորականների շարքում հիշատակվում է նաև այս եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Խորեն քհն. Շուշանյանը, որը Երևանից աքսորվել էր Տաշքենդ[432]: ՀՀ Ազգային անվտանգության արխիվային փաստաթղթերի հիմամբ պատմաբան Արմենակ Մանուկյանը մի առանձին ուսումնասիրություն է նվիրել 1930–1938 թթ. բռնադատված հոգևորականներին, որոնց կազմում տեղեկություններ է հաղորդում նաև Տ. Խորեն քհն. Շուշանյանի մասին: Ըստ համապատասխան վավերագրի՝ Խորեն Պետրոսի Շուշանյանը ծնվել է 1872 թ. Վանում, բնակություն հաստատել Երևանում: Առաջին անգամ ձերբակալվել է 1931 թ. ապրիլի 24-ին և մեղադրվել Խորհրդային իշխանության մասին վարկաբեկիչ լուրեր տարածելու, հավատացյալներին անաստվածների դեմ լարելու, հակահեղափոխական գործունեություն ծավալելու մեջ և դատապարտվել 5 տարվա ազատազրկման համակենտրոնացման ճամբարում: Այնուհետև ձերբակալվել է 1936 թ. հուլիսի 5-ին, սակայն գործը կարճվել է նույն տարում: Նա հետմահու արդարացվել է 1989 թ. ապրիլի 16-ին՝ ԽՍՀՄ Գհ նախագահության 1989 թ. հունվարի 16-ի հրամանագրով[433]:

Այլ աղբյուրների հաղորդմամբ՝ 1936 թ. մայիսի 8-ին Երևանի Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Խորեն քհն. Շուշանյանը ձերբակալվել է, խուզարկվել են նրա և կոնդի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու երեսփոխաններ Խաչիկ Մալանչյանի և Հովհաննես Հովհաննիսյանի բնակարանները, բռնագրավվել են գույք և փաստաթղթեր[434]: Դեպքերին հաջորդել է Խորեն Մուրադբեկյան կաթողիկոսի՝

1996, էջ 59, վավ. 37:

[431] ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 990, թ. 1–6:

[432] **Ստ. Ստեփանեանց,** Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, էջ 100:

[433] **Ա. Մանուկյան,** Հայ առաքելական եկեղեցու բռնադատված հոգևորականները 1930–1938 թթ. (ըստ ՊԱԿ-ի փաստաթղթերի), Երևան, 1997, էջ 118: Տ. Խորեն ավ. քհն. Շուշանյանը վախճանվել է 1956 թ. և թաղվել Ս. Գայանե վանքի բակում՝ եկեղեցու հյուսիսային կողմում: Ուղղանկյուն օրորոցաձև տապանաքարին կարդում ենք. «Խորեն ավագ քահանա Շուշանյան (Վանեցի), 1872–1956, Միաբան Ս. Էջմիածնի» (նկ. 158):

[434] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Գ., Արտակ եպիսկոպոս Սմբատեանց (Տաուշեցի). հոգևոր, գրական, պատմաբանասիրական գործունեությունը և գնդակահարությունը (1876–1937 թթ.), կազմեց՝ **Ս. Քեհրուդյան,** Երևան, 1997, էջ 575, վավ. 359:

1936 թ. օգոստոսի 26-ի հանձնարարականը Երևանի փոխթեմակալ Արտակ եպիսկոպոս Սմբատյանցին, ըստ որի՝ նկատառելով Երևանի եկեղեցիների՝ կառավարության համար անցանկալի վիճակը, հսկողություն սահմանել քաղաքի երեք եկեղեցիների՝ Ս. Սարգսի, Ս. Ջորավորի և Ս. Հովհաննես Մկրտչի աշխատանքների կարգավորմանը, քանի որ ինչպես վեհափառ հայրապետն է նշում. «Ս. Ջօրաւար եւ Ս. Յովհաննէս եկեղեցիների երեսփոխանները թէեւ ամենայն հաւատարմութեամբ վարում են իրենց պաշտօնները եւ ջանք չեն խնայում իրենց հոգատարութեան յանձնուած եկեղեցիների կարգաւորման եւ պայծառութեան համար, սակայն չունին կանոնաւոր հաշուեմատեաններ եւ կարօտում են հրահանգների՝ թերութիւններից զերծ մնալու համար»[435]: Կաթողիկոսի հանձնարարականը պարունակում է մի շարք հրահանգներ ու նորմեր: Ի պատասխան վեհափառ հայրապետի գրության՝ Երևանի փոխթեմակալ Արտակ սրբազանը հանդես է եկել քահանաների պարտականությունների մասին 1936 թ. նոյեմբերի 8-ի շրջաբերական-հրահանգով, որի սկզբում նշում է, որ ինքն իբրև Նորին սրբության ներկայացուցիչ շարունակ հաճախել է Երևանի Ս. Սարգիս, Ս. Ջորավոր և Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցիները և նշել այն թերությունները, որոնք առաջացել են պատերազմական իրավիճակի հետևանքով և մեծապես խանգարում են եկեղեցու ներքին կարգ ու կանոնին: Արտակ սրբազանը հիշյալ երեք եկեղեցիների քահանաների պարտականություններին ուղղված հետևյալ հիմնական դրույթներն է նշում՝ ի գիտություն և ի կատարումն: Նախ մի շարք դրույթներ վերաբերում են քահանաների՝ իրենց և հավատացյալների հետ ունեցած հարաբերություններին, նրանց պարկեշտությանն ու խոնարհությանը, ոխակալությունից ու չարանենգությունից զերծ լինելուն: Քահանան պարտավոր է առավոտյան և երեկոյան ժամերգությունները, սուրբ պատարագի արարողությունը և այլ ծիսակատարություններ իրականացնել ըստ եկեղեցական կարգի, պատշաճ մակարդակով: Որոշ դրույթներ էլ բնութագրում են եկեղեցիների երեսփոխանների գործառույթն ու պարտականությունները. «եկեղեցու բոլոր կարիքները հոգացող, եկեղեցու բարեզարդութեան վերայ հսկող դարերից ի վեր եղել է ժողովրդից ընտրուած հոգաբարձութիւնը, որին անդամ է եղել երեսփոխը, և այժմ երեսփոխի վերայ է մնացել եկեղեցու հոգատարութիւնը և կառավարելը: Ապա ուրեմն երեսփոխը լոկ գործակատար չէ, նա եկեղեցու մաքրութեան, պայծառութեան վերայ հսկողն է, եկեղեցու ժամերգութեան իւր ժամանակին կատարուելուն և եկեղեցում, առհասարակ, կարգ ու կանոնը պահպանելուն հսկողն է: Այս դէպքում նորան օգնող է հանդիսանում եկեղեցու աւագ երէցը, որ ի պաշտօնէ պարտաւոր է նախանձախնդիր լինել Աստուծոյ Տաճարի փառքի և վեհութեան բարձր պահելուն յաչս հաւատացեալ աղօթողների»[436]: Վավերագրի վերջում նշված են ինչպես Արտակ եպիսկոպոսի, այնպես էլ նշված երեք եկեղեցիների միաբանության անդամների անունները, ըստ այդմ՝ Ս. Ջորավոր եկեղեցու միաբաններն են՝ Նաթան ավ. քահանան, Խորեն ավ. քհն. Շուշանյանը և երեսփոխ Հովհաննես Հովհաննիսյանը[437]:

Ժամանակի այս խառնակ իրավիճակում մեծապես կարևորվում են Ջորավոր եկեղեցու ունեցած և նոր ստացված գույքացուցակները, որոնցից մեկը, որն առաքված է Ս. Էջմիածնից, ստացել է Ջորավոր

[435] Նույն տեղում, էջ 580, վավ. 367:

[436] Նույն տեղում, էջ 582–584, վավ. 370:

[437] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2364, թ. 1–3:

եկեղեցու երեսփոխան վերոհիշյալ պարոն Հովհաննես Հովհաննիսյանը՝ 1936 թ. սեպտեմբերի 9-ին: Յուցակում հատկանշված են Մայր տաճարի զգեստների խորանից Երևանի Ս. Զորավոր եկեղեցուն տրված հետևյալ առարկաները.

1. Մի մետաքսյա սպիտակ շուրջառ իւղաբերից,

2. Վարագա վանքի Անդրէի առաքելոյ սուրբ մասունքը, որ և մասունք պահպանի բժշկող,

3. Մի արծաթյա կանթեղ չորս շղթայով, որ ունի արձանագրություն. «Ընծայեցի այս բուրվառս, ես՝ Ալեքսի Աբրահամովս, ի դուռն Սուրբ Մողնիս եկեղեցւոյն»[438]:

Արձանագրությունից դատելով՝ բուրվառը նվիրաբերված է եղել Մուղնիի Ս. Գևորգ վանքին:

Երևանի թեմի հայրապետական ներկայացուցիչ Արտակ եպիսկոպոսին՝ նույն թվականի դեկտեմբերի 13-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն Մուրդաբեկյանի հղած հանձնարարագրում հատակ նշված է Ս. Զորավոր եկեղեցու միաբան Տ. Խորեն քհն. Շուշանյանին նույն եկեղեցու երեսփոխան կարգելու և հաշիվներն ու գույքը նրան հանձնելու մասին: Այս առումով ուշագրավ է 1936 թվակիր մեկ այլ գույքացուցակը՝ հետևյալ խորագրով. «Յուցակ Երևանի Ս. Զօրաւոր եկեղեցու զարդ-անօթեղէնի և շարժական գույքի, կազմված է 19-ին դեկտեմբերի, 1936 ամի», որն իրապես ընդունել է եկեղեցու երեսփոխան Խորեն քհն. Շուշանյանը: 120 միավորից բաղկացած ցուցակում մանրամասնորեն նշված են ինչպես եկեղեցական սպասքն ու այլ պարագաները (կանթեղ, սկիհ, բուրվառ, արծաթե խաչեր, աշտանակներ, թաս, քշոց), այնպես էլ հանդերձանք (շուրջառ, վակաս, շապիկ, ուրար, թևնոց, հողաթափ), հնատիպ գրականություն (ավետարաններ (մեկը ձեռագիր՝ «Քոլախան» անունով), Շարակնոց, ժամագիրք, Ճաշոց գիրք, Մայր Մաշտոց, Խորհրդատետր), գորգեր[439], անգամ երկու դագաղ գործածական և մեկ դիակառք[440]: Սրանցից զատ՝ պահպանվել է նաև Տ. Խորեն քհն. Շուշանյանի գրության հիման վրա կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանի հանձնարարագիրը Տ. Արտակ եպիսկոպոսին, որտեղ ներման է արժանացնում Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու քահանա Տ. Վարդան Գրիգորյանին և հրամայում թույլ տալ շարունակել իր պաշտոնավարումը հիշյալ եկեղեցում[441], քանզի 1936 թ. հունիսի 18-ի գրությամբ եկեղեցու ծխականները դիմել էին Արտակ սրբազանին՝ պահանջելով եկեղեցուց հեռացնել և կարգալույծ անել Տ. Վարդան քահանային, որը գործակցելով տիրացու Ռուբենի հետ՝ մշտապես զբաղված է խարդախությամբ, կարգ ու կանոն խախտելով ու դավաճանությամբ[442]:

Կաթողիկոսական տեղապահ Տ. Գևորգ արքեպիսկոպոսին՝ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու միաբան Տ. Խորեն ավ. քհն. Շուշանյանի հղած 1938 թ. ապրիլի 28-ի գրությունը վերաբերում է Զորավոր

---

[438] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 1750, թ. 3:

[439] 1940 թ. մի ցուցակի համաձայն՝ 1939 թ. եկեղեցին ունեցել է 14 գորգ և 1 կարպետ (ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 380, թ. 9):

[440] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2365, թ. 1, 2—5:

[441] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2365, թ. 7:

[442] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2358, թ. 2աբ: Տ. Վարդան քհն. Գրիգորյանի՝ Խորեն Մուրադբեկյան Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղղված 1937 թ. փետրվարի 2-ի գրությունը վերաբերում է իր նյութական ծանր վիճակին, ամիսներ շարունակ աշխատավարձ չստանալուն, եկամտահարկին և այլն (ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2367, թ. 5): Նույն թվականի նոյեմբերի 7-ի մեկ այլ գրությամբ գերագույն հոգևոր խորհուրդը դիմում է Երևանի եկեղեցիների բարեկարգող Տ. Խորեն ավ. քհն. Շուշանյանին՝ կարգադրելով, որ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու քահանաներն իրենք են վճարելու իրենց հարկերը (ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2367, թ. 13):

Ս. Աստվածածին և Ս. Հովհաննես եկեղեցիների՝ փակման վտանգի տակ լինելու հանգամանքին, քանի որ իրեն և Տ. Մանուելին ընտանիքներով քաղաքից վտարում են, իսկ եկեղեցիներում այլ քահանաներ չկան, Տ. Պսակ քհն. Իսրայելյանն էլ տեղափոխվում է Ս. Սարգիս եկեղեցի, որն անբուժելի հիվանդ է և ավելի վաղ տեղապահից քահանայությունից հրաժարման դիմում էր գրել: Նույն թվականի մայիսի 14-ի գրությամբ Տ. Խորենը հրաժարվում է Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու քահանայությունից և խնդրում կաթողիկոսական տեղապահից համապատասխան վկայական՝ տուրքից ազատվելու համար: Նույնօրինակ գրություն է պահպանվել նաև Տ. Մանուել քահանայից, որը ևս հրաժարվել է քահանայությունից և խնդրել տուրքերից ազատման վկայական: Սրան հետևում է եկեղեցու հավատացյալների համայնքի դիմում-բողոքը տեղապահ Գևորգ արք. Ջորեքչյանին՝ Տ. Խորեն քահանայի կողմից եկեղեցին փակելու և ոչ մի հաշիվ չներկայացնելու հարցով[443]*:*

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին խորհրդային իշխանությունները սկզբում թեկուզ ձևականորեն, բայց որոշակիորեն փոխում են իրենց վերաբերմունքը եկեղեցու և կրոնի հանդեպ: Սակայն այս տարիները դեռ շարունակում են ծանր մնալ հոգևորականների համար: 1942 թ. Ս. Ջորավոր եկեղեցու երբեմնի հոգևոր հովիվ Խորեն ավագ քհն. Շուշանյանը հիշատակվում է իբրև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դասապետ (կառավարիչ, խմբապետ), որն իր պաշտոնակից Նիկողայոս ավագ քհն. Բովեյանի հետ խնդրագիր են ուղարկում Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդին՝ հետևյալ բովանդակությամբ. «Մեր երկուսիս վրա պետական հարկ է դրված, այն է՝ ռազմական, եկամտային և կուլտտուրք 2084 ռուբլի 80 կոպեկ: Ներկա ծանր պայմաններում շատ դժվար է մեզ համար վճարել այդ գումարը, ուստի խնդրում եմ Գերագույն խորհրդից ձեռք առեք ազատելու մեզ հիշյալ գումարը վճարելուց»[444]*:*

Հայ եկեղեցու և կրոնի վերազարթոնքն աստիճանաբար, բայց նկատելի քայլերով առաջընթաց ապրեց 1940-ականների կեսերից, իսկ 1945 թ. մայիսից մինչև տարեվերջ՝ Գևորգ Զ. Ջորեքչյան (1945—1954) կաթողիկոսի գահակալման սկզբնական շրջանում, բազմաթիվ եկեղեցիների հետ վերաբացվեց նաև Երևանի Ջորավոր Ս. Աստվածածինը[445]*: Սովետական Հայաստանի պատմական հուշարձանների 1947 թ. ցուցակում ընդգրկված է նաև Երևանի Ջորավոր Ս. Աստվածածինը՝ Հմր 1375*[446]*: Եկեղեցին հիշատակված է նաև 1948 թ. պետական պահպանության ենթակա պատմաճարտարապետական*

[443] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2368, թ. 8—10, 12—15:

[444] **Ստ. Ստեփանեանց,** Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, էջ 138—139:

[445] Նույն տեղում, էջ 164: Հակառակ այս փաստի՝ վկայություն կա նաև այն մասին, որ 1946 թ. Գևորգ Զ. Ջորեքչյան կաթողիկոսին են դիմել Երևանի այն ժամանակվա Սպանդարյանի շրջանի 106 հավատացյալներ՝ Ս. Ջորավոր եկեղեցին վերաբացելու խնդրանքով (տե՛ս նույն տեղում, էջ 187, բնագիրը՝ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 338, թ. 5աբ):

Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու նախկին հոգևոր հովիվ Տ. Տիրայր ավ. քհն. Սահրադյանի բանավոր հաղորդմամբ (2018 թ.)՝ եկեղեցին վերաբացվել ու գործել է 1948-ից, իսկ մինչ այդ մի որոշ ժամանակ ծառայել է որպես հակաֆաշիստական թանգարան: Այդ տեղեկությունն իրեն հայտնել է Վազգեն Ա. վեհափառ հայրապետը, որը 1948 թ. Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցում պատարագ է մատուցել: Տեր հոր այս հաղորդումը, թերևս, վերաբերում է Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր համայնքի բացակայության արդյունքում՝ 1939 թ. կազմավորված հակակրոնական թանգարանին, որին հանձնվել է նաև Ս. Պողոս-Պետրոս եկեղեցուց հանված որմնանկարներից մեկը (ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 272):

[446] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 413, թ. 26բ:

հուշարձանների ցանկում՝ Հմր 540[447]: Այնուհետ եկեղեցին վկայված է Երևանի աշխույժ ու մարդաշատ հոգևոր կենտրոնների շարքում. օրինակ՝ պահպանվել է եկեղեցու այսպես կոչված 1950 թվակիր «անձնագիրը»՝ Խորհրդային Հայաստանի Ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեին հանձնելու առիթով[448] (տե՛ս վավ. 6ա—գ), կամ 1951 թ. մի տեղեկության համաձայն. «Երևանի բոլոր երեք եկեղեցիներում (նկատի ունի՝ Ս. Սարգիս, Ս. Ջորավոր և Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցիները — Ա. Հ.) Զատիկի տոներն անցան շատ աշխույժ: Եկեղեցիներում կային 2—3 հազար հավատացյալներ, հիմնականում ծեր տղամարդիկ և կանայք, միջին տարիքի կանայք: Սակայն քիչ չէին նաև երիտասարդները, պիոներները, դպրոցականները, երիտասարդ աղջիկները»[449]: Եվ, վերջապես, 1953 թ. Խորհրդային Հայաստանի տարածքում գործել է 18 եկեղեցի, որի կազմում՝ Երևանի Ջորավոր Ս. Աստվածածինը: Վերջինս համարվել է մեծ թվով այցելուներ ունեցող եկեղեցիներից մեկը, որտեղ միայն կիրակի օրերին այցելել է 200—250 հավատացյալ[450]: Նույն թվականի արխիվային մի քանի վավերագրերի համաձայն՝ եկեղեցու ծխականների խորհուրդը դիմել է կաթողիկոսի տեղապահ Վահան արքեպիսկոպոսին՝ հոգևորականներին նոր զգեստ, վակաս և պատարագելու այլ պարագաներ շնորհելու խնդրանքով: Ավելին, նույն ծխականների խորհուրդը հունիսի 15-ի գրությամբ խնդրում է Վազգեն եպիսկոպոսին (հետագայում՝ կաթողիկոս) շնորհ բերի և հունիսի 21-ին պատարագ մատուցի եկեղեցու ջերմեռանդ հավատացյալների համար (տե՛ս վավ. 7): Պահպանված մյուս գրությունները վերաբերում են եկեղեցու նորոգման հարցերին ու նյութական ծախսերին[451]:

1954 թ. մի համառոտ զեկուցագրում, որը Գևորգ վարդապետի անունից ուղղված է Գևորգ Ջ. Ամենայն Հայոց կաթողիկոսին, նկարագրված են Երևանի երեք՝ Ս. Սարգիս, Ս. Հովհաննես Մկրտիչ, Ջորավոր Ս. Աստվածածին և Գյումրիի (քնագրում՝ Լենինականի) Ս. Աստվածածին եկեղեցիները: Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցին, որտեղ վեհափառ հայրապետի բարեհաճ տնօրինությամբ Գևորգ վարդապետն առիթ է ունեցել պատարագելու և քարոզելու, գտնվելիս է եղել լավ ու մաքուր վիճակում, իսկ Ս. Սեղանը՝ անմաքուր ու խառնված, ինչն ըստ Գևորգ վարդապետի՝ պետք է կապել տեղի հոգևորականության անփույթ ու ծույլ վարքի հետ: Միաբանություն գրեթե չկա, եղածներն էլ անկարգապահ ու կրթությունից հեռու են[452]: Այդուհանդերձ, ըստ նույն թվականի մի գույքացուցակի՝ եկեղեցու ինչքը բավական հարուստ է. 15 գորգ, 5 կարպետ, 16 սրբապատկեր, հնատիպ գրքեր (այդ թվում՝ 1733 թ. Վենետիկում հրատարակված Աստվածաշունչ), արծաթապատ աշտանակներ, կանթեղներ, սկիհներ, հանդերձանք, գրասեղաններ, դիասեղան և այլն[453]:

Ըստ ամենայնի՝ Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցին կանոնավոր գործել է սկսած 1948 թվականից: Պահպանվել է եկեղեցու ավագերեց Տ. Տաճատ ավագ քհն. Տեր-Վարդանյանի՝ Գևորգ Ջ. Ջորեքչյան Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղղված 1949 թ. հունիսի 6-ի գրությունը, որտեղ ներկայացվում է այն անձանց անվանացանկը, ովքեր

---

447 ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 419, թ. 21:

448 ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 1557, թ. 10ա:

449 **Ստ. Ստեփանեանց,** Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, էջ 222:

450 Նույն տեղում, էջ 229:

451 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2397, թ. 1—3:

452 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2399, թ. 3—4:

453 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2401, թ. 1—8:

համաձայնել են աշխատել եկեղեցու հանձնախմբում՝ որպես խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամներ[454] (տե՛ս վավ. 8)։ Նույն թվականի հունիսի 24-ի պատասխան նամակում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդը հաստատում է Երևանի Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու նորընտիր խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամներին.

Եկեղեցական խորհրդի անդամներ՝
Մովսեսյան Մամբրե Քերոբի,
Բարսեղյան Լևոն Հովհաննեսի,
Մարտիրոսյան Վլաս Ներսեսի։

Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ՝
Ազատյան Լյուբա Խաչատուրի,
Տեր-Նշանյան Գարեգին Նշանի,
Ջաքարյան Հակոբ Հարությունի[455]։

Գերագույն հոգևոր խորհրդի՝ 1950 թ. Տ. Տաճատ քհն. Տեր-Վարդանյանին հղած մի քանի նամակներում տրվում են եկեղեցում տեղի ունեցած անկարգապահություններ վերացնելու վերաբերյալ հրահանգներ. նախ տեղի քահանաներից Տ. Հուսիկ քհն. Տեր-Աստվածատրյանի՝ իր երիտասարդ կնոջ հետ չապրելու պատճառների մասին, որին Տ. Հուսիկը բացատրագրով պատասխանել և ներկայացրել է իր անմեղությունը, այնուհետ պատարագների ժամանակ կարգ ու կանոն պահպանելու, երգչախմբին պատշաճ ներկայանալու և եկեղեցու նախկին խորհրդի նախագահ Մինասյանի կողմից Հայսմավուրքը տուն տանելու և չվերադարձնելու հարցերով[456]։

1954 թվականից ի վեր Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցում ծառայած հոգևորականների անվանացանկը կազմելիս օգտվել ենք եկեղեցու պաշտոնական կայքէջից, ինչպես նաև հիմք ենք ընդունել տեղի նախկին սպասավորներից Տ. Տիրայր ավ. քհն. Սահրադյանի՝ մեզ հայտնած տեղեկությունները[457]։ Մինչ այդ անդրադառնանք եկեղեցու որպիսությանը ինչպես Վազգեն Ա. (1955–1994) և Գարեգին Ա. (1995–1999) վեհափառ հայրապետների գահակալման տարիներին, այնպես էլ մեր օրերում։

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանի օրոք՝ 1970-ականներին, Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցին հիմնովին նորոգվել է, մասնավորապես՝

---

[454] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 419, թ. 3։

[455] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 419, թ. 1։

[456] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 1119, թ. 38–40, 46։

[457] **Տիրայր, ավ. քհն. Սահրադյան**, Բանավոր հաղորդում (2018 թ.)։ Մայր Աթոռի «Էջմիածին» պաշտոնական ամսագրի տարբեր տարիների համարներում տեղ են գտել քարոզներ՝ խոսված Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցում։ Այսպես, Քրիստոսի Պայծառակերպության տոնին իր անդրանիկ պատարագը Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցում է մատուցել **Աբգար արբ. Հովակիմյանը** («Էջմիածին», 1996, Ե–Զ., էջ 115–117), Ս. Հարության տոնին՝ **Հ. Փիլիպ Սթորր-Վենթըրին** («Էջմիածին», 1998, Ա., էջ 49–51), Պողոս առաքյալի՝ Փիլիպեցիներին ուղղված նամակի մեկնությունը եկեղեցում քարոզել է **Միքայել ծ. վրդ. Աջապահյանը** [իմա՝ Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արք.] («Էջմիածին», 1998, Ժ–ԺԱ., էջ 34–37), ավելի ուշ իրենց անդրանիկ պատարագն այս եկեղեցում են մատուցել նաև **Գնել արբ. Սողոմոնյանն** ու **Պետրոս քհն. Եզեկյանը** («Էջմիածին», 2002, Զ–Է., էջ 41–43, Ժ., էջ 50–53)։ Վերջերս առանձին գրքով հրատարակվեց եկեղեցու ներկայիս հոգևոր հովիվ Տ. Գրիգոր քհն. Գրիգորյանի՝ Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցում՝ 2014–2019 թթ. խոսված քարոզների ժողովածուն (**Գրիգոր քհն. Գրիգորյան**, Քարոզներ, Երևան, 2019)։ Գրքում տեղ է գտել նաև Տ. Գրիգոր քհն. Գրիգորյանի՝ 2017 թ. հոկտեմբերի 17-ի քարոզը՝ խոսված Քրիստոսի 72 աշակերտներից Ս. Անանիայի, Մատաթիա և Փիլիպպոս առաքյալների և մյուս սրբերի հիշատակության օրը (տե՛ս նշվ. աշխ., էջ 419–422)։

ամրացվել են պատերի խարխլված հատվածները, ծեփից մաքրվել է որմերի ներքին շարվածքը, փոխվել են տանիքի ծածկասալերը, եկեղեցու ներսում վերակառուցվել է երգչախմբի համար նախատեսված վերնատունը, ապա նորոգվել է Ս. Անանիա առաքյալի մատուռն ու գմբեթի թիթեղը փոխարինվել քարով, բակի հյուսիսարևմտյան կողմում կառուցվել է նոր երիցատուն, շրջակայքը մաքրվել կիսավեր կառույցներից, սալարկվել են հարավարևմտյան հարթակները և այլն: Նշված աշխատանքներն իրականացվել են Մայր Աթոռի ֆրանսահայ բարերար Սարգիս Պետրոսյանի նվիրատվությամբ[458]:

1984 թ. մարտի 30-ին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանի (իմա՝ Գարեգին Բ. կաթողիկոս Ամենայն Հայոց) հրավերով հերթական անգամ Երևանի Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցի է այցելել Վազգեն վեհափառը՝ երեկոյան ժամերգությանը մասնակցելու նպատակով: Հայրապետական իր օրհնություններն ու բարեմաղթանքները եկեղեցու հոգևոր դասին և հավատացյալներին հղելիս՝ Վազգեն վեհափառը նշել է, որ 1951 թ. Ս. Էջմիածին Մայր տաճարում Գևորգ Ջ. Ջորեքչյան կաթողիկոսի կողմից եպիսկոպոս ձեռնադրվելով՝ բախտ է ունեցել առաջին սուրբ պատարագը մատուցել հենց Ս. Ջորավոր եկեղեցում, որի համար իր գոհունակությունն է հայտնում. «Գոհություն Աստուծո, որ ձեր առաջնորդական փոխանորդ Գարեգին եպիսկոպոսի հրավերով այսօր առիթն ունեցանք այս գեղեցիկ եկեղեցում միասին աղոթելու: Այս եկեղեցին խոսում է Մեր սրտին, և եթե չենք սխալվում, այստեղ այցելել ենք 1951 թ., երբ Մայր Աթոռ հրավիրվելով՝ եպիսկոպոս ձեռնադրվեցինք և այս եկեղեցում մատուցեցինք եպիսկոպոսական մեր անդրանիկ սուրբ պատարագը: Փառք Աստծո, ահա դարձյալ կանգուն է այս աղոթքի տունը, բարեզարդված և լեցուն հավատացյալներով»[459]: Վեհափառ հայրապետի այս տողերում հստակորեն ուրվագծվում է նաև եկեղեցու վիճակը, որն այդ տարիներին արդեն բարեկարգ ու մարդաշատ է եղել:

Ուրախալի է, որ Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու բարեկարգմանն ուղղված աշխատանքները բուռն կերպով շարունակվում են նաև Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրոք: 2006 թ. ճարտարապետ Ա. Նանուշյանի նախագծով մեծածավալ շինարարական աշխատանքներ են իրականացվել կառույցների նորոգման, տանիքների թիթեղածածկերի փոխման, 1970-ականներին ավելացված մատուռը եկեղեցուն կապող միջանցքի հեռացման, նախասրահի՝ պատով և նեղ լուսամուտներով փակված կամարավոր բացվածքները նոր, ընդարձակ և շագանակագույն ապակիներով լուսամուտներով փոխարինելու և բարեկարգման այլ աշխատանքների ուղղությամբ[460]:

Եկեղեցին բարեզարդվում է նաև մեր օրերում՝ շնորհիվ եկեղեցու ջանադիր հոգևոր հովիվ Տ. Գրիգոր քհն. Գրիգորյանի աստվածահաճո գործունեության: Ճարտարապետ Գալուստ Աշճյանի նախագծով, Ռազմիկ Քարտաշյանի և համայնքի մեկենասության 2017 թ. եկեղեցու բակը պարսպապատվել է մետաղյա ճաղավանդակներով հարդարված պարսպով (նկ. 40ա, բ), տարածքը կանաչապատվել է, տնկվել են եղևնիներ, տեղադրվել են ինչպես

[458] **Վ. Յարութիւնեան,** Եկայք շինեսցուք, Ս. Էջմիածին, [1988], էջ 98–99, տե՛ս նաև նույնի Երևանի եկեղեցիները, էջ 13–14:

[459] [Հաղորդագրություն] Վեհափառ հայրապետի այցը Նորագավթի Ս. Գևորգ և Երևանի Ս. Ջորավոր եկեղեցիներ, «Էջմիածին», 1984, Գ., էջ 25–26:

[460] Հիմք՝ Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու 2006 թ. մասնակի նորոգման նախագիծ:

եկեղեցու, այնպես էլ Ս. Անանիա առաքյալի մատուռ-դամբարանի պատմությանը վերաբերող եռալեզու ցուցատախտակներ, եկեղեցին հարստացել է արծաթյա առարկաներով (կանթեղ, ձեռաց խաչ, ճաճանչ և այլն), սրբապատկերներով, հոգևոր գրականությամբ, ունի պաշտոնական կայքէջ, բազմաթիվ մեկենասների միջոցների ներդրմամբ իրականացվում են նոր գրքերի հրատարակություններ[461], կազմակերպվում են միջոցառումներ և ուխտագնացություններ: Եկեղեցին ունի ծխական խորհուրդ, կից գործում են տիկնանց և երիտասարդաց միությունները:

Ժ. ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍԸ 1830-ԱԿԱՆՆԵՐԻՑ Ի ՎԵՐ

1830-ականներից իբրև ծխական եկեղեցի գործած Ջորավոր Ս. Աստվածածնի հոգևոր հովիվների, խնդրակատար քահանաների, երեսփոխանների մասին ընդհանուր պատկերացում ենք կազմում դարձյալ հիմնականում արխիվային վավերագրերի միջոցով: Վաղագույն հիշատակությունները 1837 թվականից են, դժբախտաբար, տեղի քահանաների՝ Տ. Մովսես քհն. Տեր-Խաչատրյանի և Տ. Ստեփան քհն. Մարաղեցու միջև ծագած վեճի առնչությամբ, երբ վերջինս անպարկեշտ վարք էր դրսևորել իրեն օգնական կարգված Տ. Մովսես քահանայի նկատմամբ: Ինչպես կարդում ենք Երևանի վիճակային հոգևոր ատյանի՝ Ս. Էջմիածնի Սինոդին ուղղված հայտարարագրում, քահանաների հաշտությամբ գործի քննությունը կարճվել է, սակայն վճռագրում հստակ նշված է, որ Ս. Էջմիածնի Սինոդը, նկատառելով Տ. Ստեփան քահանայի անխոհեմ արարքները, նրան ենթարկում է եկեղեցական ապաշխարության կարգի և ուղարկում ծառայության Բեկջիղազլու (ներկայիս գ. Ոստան՝ ՀՀ Արարատի մարզում), իսկ Տ. Մովսես քահանային՝ Ջրվեժ գյուղերի եկեղեցիներում[462]:

Մեզ է հասել Երևանի վիճակային հոգևոր ատյանի 1847 թ. հայտարարությունն ուղղված Սինոդին՝ 1828 թվականից եկեղեցում սպասավորած տիրացու Խաչատուր Տեր-Ստեփանոսյանին նույն եկեղեցու քահանա կարգելու հարցով, քանի որ վախճանվել էր եկեղեցու ծխատեր քահանա Տ. Ստեփան Մարգարյանը և եկեղեցական արարողություններն իրականացնելու հարցը խնդիր էր դարձել: Վավերագրում նշված է, որ Խաչատուր Տեր-Ստեփանոսյանը բարի վարքի տեր անձնավորություն է, որը ջահրնկալության (դպրության) չորրորդ աստիճանն ստացել է 1832 թ.՝ Երևանի կաթողիկե եկեղեցու արդեն հանգուցյալ Տ. Բարսեղ

---

[461] Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արք. Կճոյանի օրհնությամբ և Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Գրիգոր քհն. Գրիգորյանի նախաձեռնությամբ 2016–2020 թթ. հրատարակվել են տողերիս հեղինակի և Արփինե Սիմոնյանի «Ջորավոր Ավետարանը» պատկերագիրք-ուսումնասիրությունը (մեկենասներ՝ Գեղամ և Արամ Ղուկասյաններ), Տ. Պողոս եպս. Աղրիանապոլսեցու «Հինգ դարերի զանազանությունը» եռահատորյակի աշխարհաբար թարգմանությունը (մեկենաս՝ Արամ Փրանկյան), Գրիգոր Սկևռացու «Աղոթագրքի» աշխարհաբար թարգմանությունը (մեկենաս՝ Արամ Փրանկյան), Տ. Գրիգոր քհն. Գրիգորյանի աշխատասիրությամբ կազմված «Աղոթագիրքը» (մեկենաս՝ Սոնա Աբեյան), Ս. Ներսես Շնորհալու «Հավատով խոստովանիմ» աղոթագրքի աշխարհաբար թարգմանությունը (մեկենաս՝ Ալեքսանդր Աբրահամյան), Տ. Գրիգոր քհն. Գրիգորյանի «Քարոզներ» ժողովածուն (մեկենաս՝ Նարինե Հակոբյան), Գրիգոր Մարաշեցու «Վայեր, ողբեր, մեղաներ» աղոթագրի աշխարհաբար թարգմանությունը (մեկենաս՝ Անահիտ Սիմոնյան): Առաջիկայում աշխարհաբար կթարգմանվեն ու կհրատարակվեն նաև մեկնողական որոշ աշխատություններ:

[462] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 171, թ. 1–2, 8:

արքեպիսկոպոսից: Ուշագրավ է նաև այն, որ գրության վերջում Սինոդից հայցում են ընդառաջել Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու և Երևան քաղաքի հավատավոր ժողովրդի ցանկությունը, մանավանդ այժմյան դժվարին ու ցավալի վիճակում, երբ օր օրի ժողովրդին պատուհասում է արագորեն տարածվող խոլերան. «որ օր յաւուր ոչ սակաւք ի նոցանէ ճարակ լինին շուտափույթ մահացուցիչ ցաւոյն խօլերայ անուանելոյ»[463]:

Պահպանվել է նաև Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու ծխատեր քահանա Հովակիմ Տեր-Գրիգորյանի ծառայողական կամ պաշտաման ցուցակը՝ կազմված 1854 թ. ապրիլի 25-ին, ըստ որի՝ 1847–1848 թթ. նա մանկավարժությամբ է զբաղվել հոգևոր դպրանոցում, իսկ 1849 թ. քահանայության աստիճան ստացել և թերևս հենց նույն տարվանից էլ ծառայության անցել նշված եկեղեցում[464]: Ս. Էջմիածնի Սինոդին ուղղված 1857 թ. հունվարի 20-ի խնդրագրում միևնույն Տ. Հովակիմ քահանան հայտնում է իր այրիացած լինելու և կուսակրոնություն ընդունելու ցանկության մասին, ուստի դիմում է լուսավորչական Սինոդին՝ արժանի համարել իր որոշումը և դասել իրեն Ս. Էջմիածնի միաբանության շարքերը: Նույն թվականի մարտի 18-ի գրությունը պարզում է, որ Սինոդը բավարարել է Տ. Հովակիմի ցանկությունն ու ընդունել միաբանությանը շարքերը[465]:

Երևանի վիճակային հոգևոր ատյանի՝ Սինոդին ուղղած 1858 թ. նոյեմբերի 8-ի գրությունից տեղեկանում ենք, որ չնայած ժողովրդի ցանկությանը, այն է՝ Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցում քահանա կարգել երևանաբնակ Մարգար Աստվածատրյանին (ազատելով նաև հարկերից), նույն հոգևոր ատյանը եկեղեցու հոգևոր հովիվ է կարգել Տ. Խաչատուր քհն. Բաբախանյանին[466]: Վերջինիս անունից է գրված 1880 թ. հոկտեմբերի 26-ի գրությունն ուղղված Երևան քաղաքի եկեղեցիների բարեկարգող Տ. Աստվածատուր ավ. քհն. Իսահակյանին՝ կապված եկեղեցու չափաբերական (նոր ծնվածների) մատյաններում առկա որոշ անճշտությունների հետ[467]: Հավելենք, որ 1877–1879 թթ. նույն մատյաններում առկա թերությունների մասին գրություններ են պահպանվել նաև եկեղեցու երկարամյա ծխատեր քահանա Տ. Պողոս քհն. Այվազյանից (1880 թ.)[468]:

1860-ականների սկզբին Ջորավոր Ս. Աստվածածնի ծխատեր քահանա է հիշվում Տ. Պետրոս քհն. Հովբյանը, որն ըստ Սինոդի 1861 թ. մայիսի 24-ի հրամանագրի՝ իր անպարկեշտ պահվածքի և քահանային ոչ հատուկ վարքի պատճառով կալանավորվել և տեղափոխվել էր Սևանի անապատ: Այստեղ էլ Պետրոս քահանան

---

463 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2205, թ. 1աբ, 4:

464 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3129, թ. 53–54:

465 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3521, թ. 1, 2աբ:

466 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3642, թ. 23աբ:

467 ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 1033, թ. 194:

468 ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 1033, թ. 193, 195: Երևանի փոխթեմակալ Սուքիաս եպիսկոպոսի՝ Մակար Ա. Թեղուտցի (1885–1891) Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղղված 1890 թ. մարտի 3-ի գրությունը հանգամանալից կերպով բնորոշում է Տ. Պողոս քահանային՝ իբրև կարգապահ և ջերմեռանդ սպասավոր Ս. Անանիա առաքյալի եկեղեցու, որտեղ սպասավորում է 1871-ից՝ քահանայական ձեռնադրությունից հետո: Իր արժանապատիվ ծառայության դիմաց երկիցս արժանացել է կերպասյա կապույտ փիլոն և լանջախաչ կրելու պատվին, ինչն էլ ավելի է ոգեշնչել նվիրյալ հոգևորականին իր ծառայության մեջ: Ըստ այդմ՝ հավատավոր ժողովրդի և հոգևոր ատյանի անունից դիմում է վեհափառ հայրապետին՝ Տ. Պողոս քահանային ավագ քահանայության պատվին արժանացնելու խնդրանքով: Նույն՝ 1890 թ. մարտի 25-ի պատասխան նամակով հաստատվում է Տ. Պողոս քահանային ավագության պատվին արժանացնելու կաթողիկոսի որոշումը (ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 66, թ. 95–96):

մեղայական նամակներ է հղում Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթեոս Ա.-ին (1858–1865), որից հետո միայն ըստ կաթողիկոսի համապատասխան կոնդակի՝ նա կարգվում է շտեմարանապետ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում[469]:

Բազմարդյուն Տ. Պողոս ավագ քհն. Այվազյանի մահից հետո (1896 թ.) Երևանի փոխթեմակալ Անանիա եպիսկոպոսի՝ Սինոդին հղած գրությամբ առաջարկվում է եկեղեցում երկրորդ քահանա կարգել ծագումով Ղզլարից, երևանաբնակ, բազմաշնորհ պարոն Մինաս Պանճուլազյանին, իսկ առաջին քահանան բարեկրոն Տ. Հակոբ Տեր-Գրիգորյանն էր, որի մասին ևս վավերագրում դրվատանքի խոսքեր են ասվում. վերջինիս շիրիմն արձանագիր տապանաքարով պահպանվել է եկեղեցու հարավային կողմում (տես արձ. 13): Սինոդի՝ նույն թվականի մայիսի 18-ի պատասխան գրությամբ թույլատրվում է փոխթեմակալ Անանիա եպիսկոպոսին Մինաս Պանճուլազյանին քահանա ձեռնադրել և հովվության կարգել Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցում: Նորընծա քահանա Կորյուն Պանճուլազյանը, սակայն, շուտով հրավեր է ստանում իր հայրենի Ղզլարում հովվություն անելու, ուստի հայցում են վեհափառ հայրապետի թույլատրությունը Երևանից Ղզլար տեղափոխվելու հարցում[470]: Պահպանվել է Աստրախանի Հայոց թեմի առաջնորդ Արիստակես արքեպս.-ի խնդրագիրը Ս. Էջմիածնի Սինոդին, որը մեջբերում ենք ամբողջությամբ. «Պատիւ ունեմ խնդրելոյ վերատին, զոր արդէն խնդրեալ եմ յայտարարութեամբ ի 21 մայիսի տարւոյս ընդ համար 145, զի տացի հրաման գալոյ Կորիւն քահանայի Պանճուլազեանց յԵրևանայ ի Ղզլար, ի հովուութիւն ժողովրդականաց, փափագողաց և խնդրողաց զնա: Առաջնորդ թեմի Հայոց Աստրախանի՝ Արիստակէս արքեպիսկոպոս: Թ. 335, ի 6 նոյեմբերի 1897, յԱստրախան»[471]:

1911 թ. հոկտեմբերին կաթողիկոսական թեմական պատգամավորի ընտրությունների կազմակերպման շրջանակներում ժողովներ են անցկացվել նաև Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցում՝ նախագահությամբ Տ. Կորյուն քհն. Պանճուլազյանի: Երևանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոսին հղած նամակում Կորյուն քահանան մանրամասն նկարագրում է 1911 թ. հոկտեմբերի 16-ին անցկացրած ընտրությունը, որի ընթացքում ծխականների գաղտնի քվեարկությամբ ընտրվել է երեք պատվիրակ՝ Սարգիս Տեր-Գաբրիելյանը՝ 28 ձայնով, Սիրական Տեր-Մարտիրոսյանը՝ 26 ձայնով, և Պողոս Պողոսյանը՝ 18 ձայնով[472]:

Եկեղեցու հոգևորականների շարքում բավական ազդեցիկ է եղել նախորդ դարասկզբին գործած Տ. Վրթանես քհն. Մարգարյանը, որն ըստ Երևանի թեմակալ առաջնորդի փոխանորդ Հուսիկ եպիսկոպոսի կոնդակի՝ եկեղեցում ծառայության է կարգվել 1906 թ. մարտի 4-ից: Ըստ անձնական պաշտաման (ծառայողական) ցուցակի՝ Վրթանես Մարգարյանը սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում, ավարտել երկրորդ լսարանը, մտել է հոգևոր ծառայության և ստացել ջահրնկալության չորս աստիճան: 1902 թ. մարտի 30-ին Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու քահանա է ձեռնադրվել՝ հաջորդելով Տ. Կորյուն քհն. Պանճուլազյանին (իբր թե առանց ծխականների ցանկության)[473]՝ ձեռամբ Սուքիաս

[469] ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 53, վավ. 108, թ. 174–175:

[470] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9140, թ. 1–2, 11աբ, 12ա:

[471] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9140, թ. 18:

[472] ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 835, թ. 118աբ, 119:

[473] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10004, թ. 2աբ: Գրեթե այս նույն ժամանակաշրջանի մեկ այլ վավերագրում կարդում ենք Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու սպասավորներ Զաքարիա Տեր-Զաքարյանցի և

եպիսկոպոսի, այնուհետ կարգվել կրոնի ուսուցիչ Երևանի քաղաքային վարժարանում: 1904 թ. դեկտեմբերի 29-ին Երևանի վիճակային հոգևոր ատյանում ստանձնել է անդամության, ապա գանձապահի (մինչև 1905 թ.) պաշտոնները: 1901 թ. մայիսի 11-ին Երևանի փոխթեմակալ Տ. Կարապետ վարդապետի կողմից արժանացել է ծաղկյա փիլոնի, իսկ 1906-ին՝ կրոնի և մայրենի լեզվի ուսուցման գործում ունեցած ավանդի համար ոսկեզօծ լանջախաչ (առանց Տիրոջ փորագիր պատկերի) կրելու պատվին[474]: Երևանի վիճակային հոգևոր ատյանի՝ Սինոդին ուղղված 1903 թ. սեպտեմբերի 13-ի հայտարարագրից պարզվում է, որ ժողովրդի ցանկությամբ առաջարկվում է ծագումով Ալափարս գյուղից Արիստակես Գալստյանին (ծնվ. 1869 թ.) արժանացնել ջահրնկալության չորրորդ աստիճանի և կարգել սպասավոր Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցում: Սինոդի՝ 1904 թ. փետրվարի 18-ի և հունիսի 23-ի պատասխան գրություններից դատելով՝ Սինոդը թույլատրել է հոգևոր ատյանին՝ ալափարսցի Արիստակես Գալստյանին ընդունել հոգևոր կոչման և վստահել Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու քահանայի պաշտոնը[475]:

Դառնալով Հայաստանի խորհրդայնացումից հետո եկեղեցում ծառայած հոգևորականներին՝ պետք է վերստին նշենք 1930-ականների խառնակ իրադարձությունների հետևանքով Հայ եկեղեցու կրած անդառնալի կորուստների մասին, որոնցից անմասն չմնաց նաև Երևանի Ս. Ջորավորը՝ ի դեմս նրա հոգևոր հովիվ Տ. Խորեն ավ. քհն. Շուշանյանի, որը ձերբակալվել ու զրկանքների էր ենթարկվել: 1949 թ. եկեղեցու ավագերեցն էր Տ. Տաճատ ավ. քհն. Տեր-Վարդանյանը, որի օրոք հաստատվեց նաև տեղի եկեղեցական խորհրդի և վերատուգիչ հանձնաժողովի անդամների ցանկը: 1954–1970 թթ. եկեղեցու հոգևոր հովիվն է եղել Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանի երբեմնի սան Տ. Հովհաննես քհն. Կարապետյանը: 1954 թ. փետրվարի 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տ. Սահակ եպս. Տեր-Հովհաննիսյանի ձեռամբ Հովհաննես սարկավագը ձեռնադրվել է քահանա ու ծառայության անցել Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցում[476]: Նրան հաջորդած հոգևորականների գործունեության տարիները երբեմն անորոշ են, ուստի նրանց ծառայության ժամանակաշրջանը մոտավոր ենք նշում: Այսպիսով, Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր սպասավորների հնարավոր ժամանակագրական անվանացանկը ժթ. դարակեսից մինչև մեր օրեր հետևյալն է.

Տ. Ստեփան քհն. Մարգարյան – 1844–1847 թ.,

Տ. Ստեփանոս քհն. Տեր-Ստեփանոսյան – 1844 թ.,

Տ. Մովսես քհն. Տեր-Խաչատրյան – 1847 թ.,

Տ. Խաչատուր քհն. Տեր-Ստեփանոսյան – 1847–1849 թթ.,

Տ. Հովակիմ քհն. Տեր-Գրիգորյան – 1849–1857 թթ.,

Տ. Խաչատուր քհն. Բաբախանյան – 1858–1880 (՞),

Տ. Պետրոս քհն. Հովբյան – 1860-ականներ),

Տ. Պողոս ավ. քհն. Այվազյան – 1871–1896 թթ.,

Տ. Հակոբ քհն. Տեր-Գրիգորյան – 1890-ականներ–1897 թ.,

Տ. Կորյուն քհն. Պանճուլազյան – 1896–1902 թթ., 1911 թ.,

Անդրանիկ Դավթյանցի անունները (ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 299, թ. 2):

474 ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 227, թ. 3–5, 47:

475 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10137, թ. 1, 2աբ, 6աբ:

476 [Հաղորդագրություն] Մայր Աթոռում, «Էջմիածին», 1954, Բ., էջ 14:

Տ. Վրթանես քհն. Մարգարյան — 1902—1903, 1910—1915 թթ.,

Տ. Արիստակես քհն. Գալստյան — 1904 թ.,

Տ. Խորեն ավ. քհն. Շուշանյան — 1930-ական թթ.—1938 թ.,

Տ. Նաթան ավ. քհն. — 1930-ական թթ.,

Տ. Վարդան քհն. Գրիգորյան — 1930-ական թթ.,

Տ. Մանուել քհն. — 1930-ականներ,

Տ. Տաճատ ավ. քհն. Տեր-Վարդանյան — 1949—1954 թթ.,

Տ. Հուսիկ քհն. Տեր-Աստվածատրյան — 1950-ականներ,

Տ. Հովհաննես ավ. քհն. Կարապետյան — 1954—1970 թթ.,

Տ. Աբրահամ ավ. քհն. Մարգարյան (խորհրդակատար քհն.) — 1974—1981 թթ.,

Տ. Գալուստ քհն. Քեթլիկյան — 1980-ականներ,

Տ. Սարգիս քհն. Ջափարյան — 1980-ականներ,

Տ. Պողոս քհն. — 1980-ականներ,

Տ. Արամ ավ. քհն. Բոյաջյան — 1980-ականներ,

Տ. Տիրայր ավ. քհն. Սահրադյան — 1982—1993 թթ.,

Տ. Մամբրե ավ. քհն. Քեսաբյան — 1990-ականներ,

Տ. Նորայր ավ. քհն. Բաղդասարյան — 1999—2000 թթ.,

Տ. Սերովբե ավ. քհն. Պետրոսյան — 1986—2005 թթ.,

Տ. Տիրան ավ. քհն. Առուշանյան — 1991—2000 թթ.,

Տ. Հարություն ավ. քհն. Մարկոսյան — 1990-ականներ,

Տ. Վարդան քհն. Գափոյան — 2002—2013 թթ.,

Տ. Անուշավան քհն. Կոշեցյան — 2006—2013 թթ.,

Տ. Մյուռոն ավ. քհն. Ադամյան — 2001—2013 թթ.,

Տ. Վարդան ավ. քհն. Մկրտչյան — 1999—2013 թթ.,

Տ. Ջենոն քհն. Բարսեղյան (խորհրդակատար քհն.) — 2013—2015 թթ.,

Տ. Կորյուն քհն. Մարտիրոսյան (խորհրդակատար քհն.) — 2013—2015 թթ.,

Տ. Զգոն քհն. Աբրահամյան (խորհրդակատար քհն.) — 2013—2015 թթ.,

Տ. Վահան քհն. Առաքելյան (խորհրդակատար քհն.) — 2003 թ., 2015-ից,

Տ. Հայկազուն քհն. Մկրտչյան (խորհրդակատար քհն.) — 2015-ից,

Տ. Գրիգոր քհն. Գրիգորյան — 2013 թ. օգոստոսի 20-ից մինչ օրս:

Ինչ վերաբերում է մինչ ծխական եկեղեցի դառնալն այս հոգևոր կենտրոնում գործած առաջնորդ-վանահայրերին, ապա ըստ վիմագրերի՝ նրանցից միայն մի քանիսի անուններն են հայտնի. նրանք են՝

Տ. Մեսրոպ վրդ. (1693 թ.),

Տ. Պետրոս վրդ. (1778 թ.),

Տ. Ավետիս վրդ. Կարբեցի (1781 թ.),

Անանիա վրդ. (1786 թ.),

Աթանաս վրդ. (1798 թ.),

Մինաս վրդ. (1798-ից հետո):

Նշված վանահայրերին անդրադարձ կլինի վիմագրերը ներկայացնելիս:

* * *

Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման և հետագա «ճակատագրի» մասին լավագույնս վկայում են նրա որմերին պահպանված վիմագրերը: Նախքան արձանագրություններին անցնելը նշենք, որ նախորդ ուսումնասիրողները եկեղեցուն վերաբերող տեղեկություններին կից նաև որոշ վիմագրեր են հրատարակել: Առաջին հրատարակիչն, ըստ էության, Հովհաննես եպս. Շահխաթունյանցն է, որն իբրև եկեղեցու կառուցման ու նորոգման փաստական

վավերագրեր՝ վկայաբերում է բնույթով շինարարական 2 արձանագրություն: Շահխաթունյանցի հրատարակած վիմագրերն ավելի ուշ գտնում ենք նաև Մեսրոպ արք. Սմբատյանցի «Տեղագիր Գեղարքունի...», ապա՝ Հ. Ղևոնդ Ալիշանի «Այրարատ» աշխատություններում:

Հիշյալ վիմագրերը կարապետ Կոստանյանցը հետագայում վերահրատարակել է իր կազմած «Վիմական տարեգիր» ժողովածուում: Ավելի ուշ, հին Երևանի պատմությանը նվիրված գրքում Երվանդ Շահազիզը, ինչպես վերը նշեցինք, ևս հատուկ անդրադարձել է Ջորավոր Ս. Աստվածածնին՝ հրատարակելով նաև մինչ այդ անտիպ վիմագրեր: Երևանի պատմաճարտարապետական հուշարձանների կազմում եկեղեցու շինարարական զույգ արձանագրությունները վկայակոչել է նաև Թադևոս Հակոբյանը, ևս երկուսը՝ Վարազդատ Հարությունյանը (մեկը՝ մասնակի): Սակայն, ցարդ առավել ամբողջական ու վիմագրագիտության պահանջներին հարիր հրատարակությունը կարո Ղաֆադարյանի՝ Երևանի միջնադարյան հուշարձաններին ու նրանց վիմագրերին նվիրված գիրքն է, որտեղ գիտնականը Ջորավոր եկեղեցուց ներկայացրել է 9 արձանագրություն, որոնցից 5-ն առաջին անգամ: Այդ արձանագրությունների հրատարակման առթիվ Կ. Ղաֆադարյանը գրում է. «Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու արձանագրությունները ևս հին չեն: Տեղում եղել է մի հին մատուռ և այլ շինություններ, որոնք չեն պահպանվել: Այժմ մեր ձեռքը հասած բոլոր արձանագրությունները գրված են մեծ երկրաշարժից հետո վերակառուցման և հետագա նորոգությունների ժամանակ: Ջորավորն ունի վերակառուցման ընդարձակ արձանագրություն: Ունի նաև մի քանի հիշատակագրեր՝ նվիրված տաճարը կառուցող Խոճա Փանոսի և նրա ընտանիքի անդամների հիշատակին: Մի քանի արձանագրություններ վերաբերում են XVIII դարում կատարված նորոգություններին, մեկն էլ՝ XIX դարում եկեղեցու դռներն ու լուսամուտները ձևափոխելուն և վերնատան կառուցմանը: Վերջինս գրված է բոլորագրով: Այս ուշ ժամանակի արձանագրությունը մեջ ենք բերել դռները և լուսամուտները ձևափոխելու ժամանակը պարզելու նպատակով: Ջորավոր եկեղեցին մեր ժողովածուում ունի ընդամենը 9 արձանագրություն»[477]:

Այսպիսով, եկեղեցու վիմագրական ժառանգությունն ըստ մեզ հայտնի տվյալների՝ ամփոփված է հետևյալ աշխատություններում.

ա. Շահխաթունյանց Հովհաննես եպս., «Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ» (Ս. Կաթուղիկէ էջմիածին, 1842, վերահրատարակություն՝ Ս. էջմիածին, 2014) — 2 արձ.:

բ. Սմբատյանց Մեսրոպ արք., «Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառին, որ այժմ Նոր-Բայազիտ գավառ» (Վաղարշապատ, 1885) — 2 արձ.:

գ. Ալիշան Ղևոնդ, «Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց» (Վենետիկ, 1890) — 2 արձ.:

դ. Կոստանյանց Կարապետ, «Վիմական տարեգիր [ՎՏ]. ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց» (Ս. Պետերբուրգ, 1913) — 2 արձ.:

ե. Շահազիզ Երվանդ, «Հին Երևանը» (Երևան, 1931, վերահրատարակություն՝ Երևան, 2003) — 5 արձ.:

զ. Հակոբյան Թադևոս, «Երևանի պատմությունը 1500—1800 թթ.» (Երևան, 1971) — 2 արձ.:

է. Հարությունյան Վարազդատ, Սուրբ էջմիածնի շինարար գահակալները, Ս. էջմիածին, 1996 — 1 արձ., նույնի, «Երևանի եկեղեցիները» (Երևան, 1997) — 2 արձ.:

---

[477] **Կ. Ղաֆադարյան**, Երևան, էջ 107—108:

ը. Դաֆադարյան Կարո, «Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները» (Երևան, 1975) — 9 արձ.։

Նախորդ հրատարակիչներից քաղված վիմագրերի հատվածական ընդօրինակություններ կան նաև հետագա ուսումնասիրողներից Լ. Սողոմոնյանի[478], Գ. Օրբելյանի[479] և ուրիշների աշխատություններում։

Մեր ներկա ուսումնասիրությամբ հրատարակում ենք ընդհանուր հաշվով 31 վիմագիր, որից 18-ն առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ։ Նպատակը ոչ միայն Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու վիմագրերը մեկ գրքում ամբողջացնելն է, այլև, ինչպես վերը նշեցինք, բոլոր արձանագրությունների վերծանությունները վիմագրագիտության արդի պահանջներին համապատասխանեցնելն ու նախորդ հրատարակություններում վերընթերցումներ անելը։

Ստորև ընթերցողին է ներկայացվում Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու վիմագրերի հնարավոր լիարժեք հավաքածուն՝ նորովի արված գրչանկարներով ու լուսանկարներով՝ անհրաժեշտ ծանոթագրություններով, նախորդ հրատարակությունների մատենագիտությամբ։ Նյութի ներկայացման ձևից ելնելով՝ կատարել ենք բովանդակային բաժանում, այն է՝ ժամանակագրորեն նախ տրվում են կառույցի շինարարական արձանագրություններն ու խաչքարային հիշատակագրությունները, ապա տապանագրերն ու տարաբնույթ մանր արձանագրությունները։ Նորօրյա վիմագրերը ներկայացրել ենք միայն վերծանությամբ՝ առանց գրչանկարի, վերջում կցել ենք նաև լուսանկարը։

ԺԱ. ՎԻՄԱԳՐԵՐԸ. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԽԱՉՔԱՐԱՅԻՆ ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԺԷ—ԺԸ. դդ. հայկական ճարտարապետական հուշարձանները հիմնականում արձանագիր են, սովորաբար ունեն շինարարական բնույթի մեկ ընդարձակ և մի քանի համառոտ հիշատակագրություններ։ Գլխավոր արձանագրությունը, որը հայտնում է շինության կառուցման ժամանակը, Ամենայն Հայոց կաթողիկոսի, մեկենասի ու նրա հարազատների անունները, ամփոփվում էր եկեղեցու գլխավոր մուտքի բարավորին կամ ճակատակալ քարին (Քանաքեռի Ս. Աստվածածին, Մուղնիի Ս. Գևորգ, Վաղարշապատի Ս. Շողակաթ և այլն), իսկ համառոտ հիշատակագրություններով առանձին փոքրաչափ խաչքարերը ագուցվում էին կառույցի որմերի տարբեր մասերում։ Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու վաղագույն վիմագրերը մեր այս բնութագրականի տիպիկ դրսևորումներից են, այսինքն՝ շինարարական ընդարձակ վիմագրում վկայված են եկեղեցու կառուցման թվականը, Հայոց հայրապետի, մեկենասի, վերակացուի, հոգևոր առաջնորդի անունները, իսկ մեկենասի և նրա հարազատների անուններով նաև առանձին խաչքարեր են կերտվել ու ագուցվել կառույցի արևելյան պատին՝ ի հիշատակ և ի բարեխոսություն։ Ստորև, ժամանակագրական կարգով, անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին.

1. Եկեղեցու արևմտյան պատին՝ նախասրահի մեջ, մուտքից աջ, 12 տող.

---

[478] **Լ. Սողոմոնյան,** Հին և նոր Երևան, Կալիֆորնիա, 1999, էջ 58—59: Լ. Սողոմոնյանի (գրական անունը՝ Նովել) գրքում տեղ են գտել նաև Երևանի մասին պատմող արխիվային վավերագրեր, որոնցից մեզ հետաքրքրեց ԺԹ. դարում Երևանի եկեղեցիների մասին տեղեկությունները, որոնք վերաբերում են դրանց թվաքանակին, այն է՝ 5—6, և որ բոլորն էլ քարաշեն են (տես նույնի, էջ 238, 259—260, աղ. VI—VII):

[479] **Գ. Օրբելյան,** Հին ու նոր Երևան, էջ 40—41:



Ի ԹՎԱԿԱՆԻՍ ՀԱՅԿ/ԱՋՈՒՆԻՆ
:ՌՃ: (1100) Բ ԼԱՅ ՌՍ, ՈՐ ԱՍՏ ՇԱՐԱ/ԳՐԻ,
Ի Ք ԼԱՅ ՌԵ ԼԱՅ Կ Ժ.-ԵՐ ԼՈՐ ԴԻ (40),
ԵՐԿԵԱԿ ԹՎՈՎ Յ ԼԱՅ Ր/ԱԲ ԼԱՅ ՐԴԻ (1693)։
Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս ԼՐ ԲԱՋԱՆԻ,
Տ ԼԵԱՒՆ ՆԱՀ/ԱՊԵՏ Կ ԼԱՅ Թ ԼՈՅ Ղ ԼԻՅ ԿՈՍԻ,
ԱՐԻ ԵԻ ՔԱՋ ՀՈՎ ԼՈՒՅ ԱՊԵՏԻ,
ԼՈՒՍԱ ԼԻՅ ՈՐԻՋ Հ/ԱՅՈՑ ԱՋԳԻ,
ՄԵՇ ԵԻ ԱՋՆԻՒ ԲԱՐԵՊԱՇՏԻ,
Ա ԼՍՏՈՒԱ ՅԱՍԵՐ ԵՐ/ԿՈՒՂԱՅԻ,
ԽՕՃ ԼԱՅ Յ ՓԱՆՈՍ ՎԵՐ ԼԱՅ ՅՁԱՅՆԻ,
ՍԲ Ա ԼՍՏՈՒԱ ՅԱՅԻՆՍ ՇԻՆ/ՈՂԻ,
Յ ԼԻՅ Շ ԼԱՅ Տ ԼԱՅ Կ ՈՒՐՆ ԵԻ ՆԱԽՆԻ
ՅՆՕՂԱՅ ՈՒՐ ԼՈՅ Յ, ՀԱ ԼՐ ՅՆ ԱՒ ԼԱՅ ՋԻ,
ՈՐԴՈՑ ՈՒՐ ԼՈՅ ՅՆ՝ / ԷԼԻԱՋԻ
ԵԻ ՄՈՎՍԷՍԻ ՔԱՂՅՐ ՈՂԿՈ ԼՅ ՋԻ,
Թ ԼՈՅ ՌԱՆ ՈՒՐՈՅ՝ ԱՀԱՐՈՆԻ,
Ջ/ԱՆԿԱԿԱՏՆՕՔ ՍԱ ՋԱՐԴԱՐԻ,
ՍԲ ԱՆԱՊ ԼԱՅ ՏՍ ԱՆԱՆԵԱՅԻ,
ՄԵՍՐՈԲ ԱՆՈՒԱՄԲ ՀԵՋ/ԱՀՈԳԻ,
ՈՐ ԵԻՍ ԼՅԱՅ ՋՈՐԴ Է ՍԲ ՏԵՂԻՍ,
ՎԵՐ ԼԱՅ ՅԿ ԼԱՅ ՅՈՒ ՅԱՄԱԳՈՐՋԻ,
ԴԱԻԻԹ ԱՆՈՒ/ԱՄԲ ՎԵՐ ԼԱՅ ՅՁԱՅՆԻ։

Հրատ. Շահխաթունեանց, 303, Սմբատեանց, 10, Ալիշան, 313, ՎՏ, 201–202, Շահազիզ, 196–197, Հակոբյան, 360, Հարությունյան [1996], 48–49, Հարությունյան [1997], 11–13 (մասնակի), Ղաֆադարյան, 165–166, առն. 81։

Կ. Ղաֆադարյանը ծանոթագրում է, որ չափածո վիմագրում ամենուրեք իւր, իւրոց, իւրոյ բառերը գրված են ուր, ուրոց, ուրոյ։ Ի դեպ, այս երևույթը նախորդ հրատարակիչները կարծես չեն նկատել և վերծանել են նշված բառերի առաջին ձևերով։ Կ. Ղաֆադարյանը նշում է նաև, որ վիմագրի առաջին հրատարակիչ Հովհաննես Շահխաթունյանցը երկրորդ տողի ՌՃ ԲԱՌՍ հատվածը չի ընդօրինակել, որից էլ

օգտվել են Դ. Ալիշանը, Կ. Կոստանյանցը, Ե. Շահազիզը և արձանագրությունն անթվական է մնացել[480]: Ինչ վերաբերում է հրատարակիչներից Մեսրոպ արք. Սմբատյանցի վերծանությանը, ապա նա արձանագրության չորրորդ տողն ընդհանրապես բաց է թողել, ըստ այդմ էլ թվականը կարդացել է 1691, այսինքն՝ 1100+4 X 10+551: Այս կերպ է նաև Թադեոս Հակոբյանի վերծանությունը:

Կ. Դաֆադարյանը թվականը կարդում է 1694՝ այսպես. Ռճ. (1100)... Ի ՔԱՌԵԱԿ Ժ-ԵՐՈՐԴԻ (40), ԵՐԵԱԿ (3) ԹՎՈՎ ՅԱՐԱԲԱՐԴԻ...: Տառերի թվային համարժեքով, մասամբ նաև բառերով հարաբարդված, այսինքն՝ մի քանի բառերից կազմված թվականի մեկ տարով ավելի ընթերցումն արդյունք է այն բանի, որ Կ. Դաֆադարյանը միավորի ԵՐԿԵԱԿ բառը կարդացել է ԵՐԵԱԿ, այն դեպքում, երբ նախորդ հրատարակիչների մոտ ևս ԵՐԿԵԱԿ է: Բացի այս, եկեղեցու արևելյան պատը հարդարված է 1693 թվակիր արձանագիր խաչքարերով, որոնց հիշատակագրություններում վկայված են կառուցման մեկենաս խոջա Փանոսի, նրա հարազատների և վերակացուի անունները, այսինքն՝ կասկածից վեր է, որ եկեղեցու շինարարության ստույգ թվականը պետք է համարել 1693 թ.:

Վիմագիրը եկեղեցու կառուցման ժամանակի և նախաձեռնողների մասին վկայող մի ամբողջ վավերագիր է, որտեղ վկայված փաստերն ու անունները ևս արժանի են հատուկ ուշադրության: Նախ հիշատակված է Նահապետ Եղեսացի կաթողիկոսի անունը, որը բնութագրվում է իբրև «քաջ և արի հովվապետ», «Հայոց ազգի լուսավորիչ», իսկ շինարարությունը նախաձեռնող խոջա Փանոսն իբրև «աստվածասեր ու բարեպաշտ», որը կառուցեց Ս. Աստվածածին եկեղեցին և զանգակատնով զարդարեց Ս. Անանիայի անապատը՝ իր, որդիների՝ էլիազի և Մովսեսի, թոռան՝ Ահարոնի հիշատակին: Վիմագրի՝ «...զանկակատնօք սա զարդարի Սբ. անապատս Անանեայի...» հատվածը վկայում է, որ խոջա Փանոսը միջոցներ է տրամադրել նաև եկեղեցու արևմտյան պատին կից կառուցված կամարակապ նախասրահի համար: Այն աչքի է ընկնում յուրօրինակ հարդարատարրերով, որոնցից ուշագրավ են հատկապես կամարակիր մույթերի զարդաքանդակները:

Հայ վիմագիր բանաստեղծության շինարարական վկայագրերի կազմում Սերգո Գևորգյանը հատվածաբար քննության է առել նաև հիշյալ վիմագիրը և խոջա Փանոսի կառուցած Ս. Աստվածածինն ու Ս. Անանիա անապատի զանգակատունը համարել տարբեր հուշարձաններ. «ակնհայտ է դառնում, որ այդ նույն անձնավորությունը (խոջա Փանոսը — Ա. Հ.) կառուցել է նաև զանգակատուն մեկ այլ հուշարձանի»[481]: Ս. Գևորգյանը հաշվի չի առել այն, որ Ս. Աստվածածին եկեղեցին խոջա Փանոսն ի վերջո կառուցեց Ս. Անանիա առաքյալի անապատի տեղում, որտեղ մինչ օրս պահպանվել է նաև սրբի ստորգետնյա դամբարանը:

Վիմագիրն ավարտվում է տեղի առաջնորդ «հեզահոգի» Մեսրոպի, որի անվանը հաջորդող ԱՆՈՒԱՄԲ բառը նախորդ հրատարակիչները հիմնականում ԱՅՐ ՍՈՒՐԲ են կարդացել, ինչպես նաև կատարված աշխատանքների վերակացու (վերահսկիչ) Դավթի անունների հիշատակմամբ: Մուրադ Հասրաթյանի բնորոշմամբ՝ ուշ միջնադարում շինարարական գործի կազմակերպման համար կաթողիկոսները, առաջնորդները, գյուղի տանուտերերը

[480] **Կ. Դաֆադարյան,** Երևան, էջ 166:

[481] **Ս. Գևորգյան,** Հայ վիմագիր բանաստեղծությունը (XVIII—XIX դդ.), Երևան, 1989, էջ 279:

կամ այդ գործի մեկենասները նաև «վերակացու» էին նշանակում, բայց ոչ տեղի քարգործ վարպետներից, այլ համայնքի հեղինակավոր մարդկանցից կամ վանքի միաբանությունից: Իբրև օրինակ հեղինակը վկայակոչում է նաև Ջորավոր Ս. Աստվածածնի կառուցումը, որի վերակացուն ոմն Դավիթն էր (նաև՝ Հովհաննեսը, որի անվանակիր խաչքարն ագուցված է եկեղեցու արևելյան պատի կենտրոնում, արձ. 6), իսկ 1793 թ. նորոգման ժամանակ՝ պարոն Գրիգորը[482]: Ո՞րն էր վերակացուների հիմնական գործառույթը. Մ. Հասրաթյանն այս կերպ է մեկնաբանում. «Վերակացուները պատասխանատու էին շինարարութեան ողջ ընթացքի, միջոցների ճիշտ ծախսման համար եւ հրաւիրում էին Ճարտարապետի կողմից ղեկավարուող շինարարների խմբերին, որոնք ուշ միջնադարում շրջիկ էին եւ եկեղեցիներ ու աշխարհիկ խոշոր շէնքեր էին կառուցում իրենց հայրենի բնակավայրերից բաւական հեռու»[483]: Պարզվում է, որ վերակացուներ Դավիթը, Հովհաննեսը, հետագայում նաև՝ Գրիգորը, որոնց անունները հիշատակվում են միայն տեղի վիմագրերում, տնօրինել են եկեղեցու կառուցման ընթացքը, վերահսկել վարպետներին, զբաղվել ֆինանսական միջոցների ճիշտ բաշխմամբ:

Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու արևելյան պատն արտաքուստ հարդարված է մեկենաս խոջա Փանոսի և նրա հարազատների հիշատակին նվիրված խաչքարերի համաչափ դասավորությամբ: Մ. Հասրաթյանը նշում է, որ «ԺԷ. դարում նոր եկեղեցիներ կառուցելիս կամ հները հիմնովին վերակառուցելիս՝ շարուածքում օգտագործում էին խաչքարեր եւ տապանաքարեր»[484]: Ճարտարապետի այս վկայությունը, իհարկե, առավելապես վերաբերում է եկեղեցիների շարվածքում առկա կրկնակի օգտագործված կոթողներին, որպիսիք հայտնի են ինչպես զարգացած (Դադիվանք, Հայրավանք և այլն), այնպես էլ ուշ միջնադարում (Տաթև, Հավուց թառ, Վաղարշապատի Ս. Աստվածածին և այլն), մինչդեռ Ջորավոր Ս. Աստվածածնի արևելյան պատին ագուցված խաչքարերը եկեղեցուն ժամանակակից են, ավելին՝ նրանցից երեքը թվական ունեն, որ նույն 1693-ն է: Վերստին նշենք, որ այդ խաչքարերի հիշատակագրությունները հիշյալ արձանագրության տրամաբանական շարունակությունն ու լրացումն են: Խաչքարերը թվով հինգն են, որոնցից մեկը կերտվել է ի հիշատակ խոջա Փանոսի, մեկը՝ նրա կողակից Հուրիխանի, երկուսը՝ Փանոսի որդիներ Էլիազի և Մովսեսի, մեկն էլ շինարարական աշխատանքների վերակացու Հովհաննեսի հիշատակին: Խաչքարերը պատի վրա դասավորված են այսպես. կենտրոնում վերակացու Հովհաննեսի հիշատակին նվիրված խաչքարն է, որի տակ պատկերված են սափորում ծաղիկներ և զույգ թռչուններ (թերևս՝ քրիստոնյաներին խորհրդանշող), սրանից աջ և ձախ Փանոսի և Հուրիխանի անվանակիր խաչքարերն են, նրանցից էլ աջ և ձախ որդիներին՝ Էլիազին և Մովսեսին նվիրված փոքրաչափ խաչքարերը: Հիշատակագրությունները հաջորդաբար վկայակոչում ենք ստորև.

2. ԽԱՉՔԱՐ. ագուցված եկեղեցու արևելյան պատին, ձախից չորրորդն է, գիրը՝ ստորին մասում, 2 տող.

[482] **Մ. Հասրաթեան,** Հայաստանում ուշ միջնադարում շինարարական գործի կազմակերպումը, էջ 207–208:

[483] Նույն տեղում, էջ 208:

[484] Նույն տեղում, էջ 212:



Յ Լ Ի Շ Լ Ա Տ Լ Ա Կ Է ՈՐ Ե Խ Լ Ա Ջ Ս
Ս Լ Ա Տ Ի Պ Է Կ Ի Ո Ր Դ Լ Ի
Խ Լ Օ Ճ Լ Ա Յ Փ Ա Ն Ո Ս Ի Ն,
Թ Վ Լ Ի Ն Ռ Ճ Խ Ե. (1693)։

Հրատ. Ղաֆադարյան, 165, առձ. 79։

Այս և ստորև վկայակոչվող չորս խաչքարային հիշատակագրությունները նախկինում հրատարակվել են միայն Կ. Ղաֆադարյանի ընթերցմամբ։ Փանոսի հայրանունը նա կարդացել է Սատխբէկ և համարել կասկածելի։ Նկատառելով որոշ տառաձևերի անհամաձայնությունը այդ կերպ ընթերցման համար (հատկապես խ, բ)՝ կարծում ենք, որ վիմագրում վկայված է ոչ թե Սատխբէկ, այլ Սաթիբէկ արական անձնանվան Սատիպէկ տառադարձված տարբերակը (հնարավոր է նաև Ատիպէկ ընթերցումը)։ Հր. Աճառյանին անհայտ է Սաթիբէկ անձնանվան ծագումը։ Այս անունով նա վկայաբերում է պղնձագործ Հռուզբեկի թոռանը, որը Կուքի գյուղում 1478 թ. Մանուել քահանային պատվիրել է գրել մի Գանձարան[485]։ Ավետարանի ստացող ոմն Վարդանեսի եղբայր Սատիբէկ հիշատակված է նաև 1622 թվակիր մի հիշատակարանում. «Դարձեալ յիշեցէք Վարդանէսն եւ եղբարք իւր հանգուցեալ առ Քրիստոս Յովանէս, Կիրակոս, Մարտիրոս, Սատիբէկ, Ամիր եւ քիւրն՝ Մարեամն, Խոսրով յիշեցէք...»[486]։

3. ԽԱՉՔԱՐ. ագուցված եկեղեցու արևելյան պատին, ձախից երկրորդն է, գիրը՝ ստորին մասում, 2 տող.



Յ Լ Ի Շ Լ Ա Տ Լ Ա Կ Է ՈՐ Ե Խ Լ Ա Ջ Ս Փ Ա Ն Ո Լ Ս Ի
Կ Ո Ղ Լ Ա Կ Ի/Յ Հ Ո Ւ Ր Ի Խ Ա Ն Ի Ն,
Թ Վ Լ Ի Ն Ռ Ճ Խ Ե. (1693)։

Հրատ. Ղաֆադարյան, 164, առձ. 77։

Խաչքարը ձոնված է մեկենաս Փանոսի կնոջ՝ Հուրիխանի հիշատակին։ Հուրիխան անձնանունը հաճախադեպ է հատկապես ԺՋ–ԺԸ. դդ. ձեռագրերի հիշատակարաններում[487]։ Վիմագրի նախորդ հրատարակիչը ծանոթագրում է, որ Փանոսի անունն, իբրև հանրածանոթ, համառոտել են և վերծանության մեջ, բացի առաջին և վերջին տառերից, մնացածը վերականգնում է։ Ջնայած սրան՝ հեղինակի վերծանությունը չի համընկնում նաև իր իսկ գրքում զետեղված վիմագրի գրչանկարի հետ, որտեղ Փանոս անձնանունը փակագրով է ներկայացված[488]։ Արձանագրության վերընթերցումը

[485] **Հր. Աճառյան,** Հայոց անձնանունների բառարան, հ. Դ., Երևան, 1948, էջ 343։

[486] ԺԷ. դ. հիշ-ք, Բ., էջ 77։

[487] Անձնանունների բառարան, հ. Գ., էջ 99։

[488] **Կ. Ղաֆադարյան,** Երևան, էջ 120, գրչ. 77։

պարզեց, որ վերծանության մեջ կարելի է վերականգնել միայն Ս տառը, մնացած գրերը կցված են դժվարությամբ նկատվող Ա տառամայրին, որի աջակողմյան ստեղնին կցագրված են Ո և Ի տառերը։

4. ԽԱՉՔԱՐ. *ագուցված եկեղեցու արևելյան պատին, աջից առաջինն է, գիրը՝ ստորին մասում, 2 տող.*



ՅԼԻՇԼԱՅՏԼԱՅԿ Է ՍԲ ԽԼԱՅՁՍ ԽՕՃԼԱՅՅ
ՓԱՆՈԼՍԻ ՈՐԴԻ ԷԼԻԱՋԻՆ։

Հրատ. Ղաֆադարյան, 165, առձ. 80։

5. ԽԱՉՔԱՐ. *ագուցված եկեղեցու արևելյան պատին, ձախից առաջինն է, գիրը՝ ստորին մասում, 2 տող.*



ՍԲ ԽԼԱՅՁՍ ԲԱՐԼԵՅԽՕ/Ս Է
ՓԱՆՈԼՍԻ ՈՐԴԻ ՄՈՎՍԷՍԻՆ։

Հրատ. Ղաֆադարյան, 164, առձ. 78։

Ակներև է, որ ինչպես այս, այնպես էլ նախորդ արձանագրությունները ժամանակակից են մյուսներին և կերտված են Փանոսի որդիների հիշատակին։ Երկու դեպքում էլ Կ. Ղաֆադարյանը Փանոս անձնանունը վերծանում է բառավերջի ՈՍ գրերը վերականգնելով։

6. ԽԱՉՔԱՐ. *ագուցված եկեղեցու արևելյան պատին, ձախից երրորդն է, գիրը՝ ստորին մասում՝ 2, տակի քանդակազարդ քարին՝ 3 տող.*



ՅԼԻՇԼԱՅՏԼԱՅԿ Է ՍԲ ԽԼԱՅՁՍ
ԱԼԷՔՍԱՆԻ ՈՐ/ԴԻ ՅՈՎԱՆԷՍԻՆ, ԹՎԼԻՆ
ՌՃԽԲ. (1693), / ՈՐ ՎԵՐԼԱՅ ՅԿԱՅՈՒ ԷՐ /
ՍԲ ԵԿԵՂԵ/ՑՈՒՍ։

Հրատ. Ղաֆադարյան, 163–164, առձ. 76։

Կ. Ղաֆադարյանը ծանոթագրում է, որ թվականը փորագրված է երկրորդ տողի շարունակության վրա, իսկ 3–5 տողերը գրված են տակի խաչքարի շուրջը։ Հետաքրքիր է, որ խաչքարի ստորին մասում առկա զույգ թռչուններով և ծաղիկներով համակցված պատկերաքանդակը Ղաֆադարյանն իբրև խաչքար է դիտում։

Խաչքարը կերտվել ու ձոնվել է եկեղեցու վերակացու Ալեքսանի որդի Հովհաննեսի հիշատակին: Այս նույն թվականին եկեղեցու վերակացու էր հիշվում նաև Դավիթը (արձ. 1), ըստ այդմ՝ վիմագրական նյութը հնարավորություն է տալիս տարբերակել միևնույն ժամանակաշրջանում եկեղեցու շինարարական գործը վերահսկած Դավթին և Հովհաննեսին:

Ժամանակագրորեն շինարարական բնույթի հաջորդ արձանագրությունը վերաբերում է եկեղեցու խաչկալի կառուցմանը:

7. Եկեղեցու ներսում՝ ձախակողմյան կամարակիր մույթի արևմտյան նիստին, 5 տող.



ՀԱՍՏԻՋՆ ՀԱՆՈՒՐՅ ՋՄԵՋ ՍԻՐԵԱՅ,
ՋՏԼԷՐ ԱԻԵՏԼԻՍ ՎԼԱՐԴԱՊԵՏՆ
ԱՌԱՋՆԴՐՈՇՆՈՐՀԵԱՑ,/
ՆԱ ՋՈՐ ԵԿԵՂԵՑՈՅՍ ԽԱՉԿԱԼՆ ՇԻՆԵԱՑ,
ԱՌ Ի ՊԱՏԻՒ ՎԱՅԵԼՁՈՒԹԵԱՆ ՄՕՐՍ
ՓԱՌԱՑ,/ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՂՈՒԿԱՍՈՒ ԵԼԻ /
Ի ՋՅԼ. (900+300+30=1230+551=1781)
ԹՎԻՆ ԳՐԵԱՑ:

Հրատ. Շահազիզ, 198,
Ղաֆադարյան, 167, արձ. 83:

Վիմագիրը հայտնում է եկեղեցու առաջնորդ-վարդապետներից տեր Ավետիսի անունը, որն ըստ Ե. Շահազիզի՝ կիրակոս Կարբեցի քահանայի որդին է եղել[489] և աչքի ընկել բարեներոգչական աշխատանքներով: Անապատի գրչության դպրոցից հայտնի ձեռագրերի քննությամբ պարզվեց նաև միևնույն Ավետիս վարդապետի՝ ձեռագրի պատվիրատու-ստացող լինելու հանգամանքը (ՄՄ ձեռ. Հ՝ր 7939): Ի դեպ, այդ ձեռագիրը գրվել է 1773–1776 թթ., այսինքն՝ բազմարդյուն հոգևորականի առաջնորդության օրոք ևս շարունակել է գործել Ս. Անանիայի անապատի գրչության դպրոցը (տե՛ս մեր շարքի ձեռ. Հ՝ր ԺԱ.):

Ըստ հիշյալ վիմագրի՝ Ավետիս վարդապետին առաջնորդ շնորհեց ամենակալ Աստված, քանզի ՀԱՍՏԻՋՆ ՀԱՆՈՒՐՅ, որ նույն Ստեղծողն է ամենայնի, սիրեց իր ժողովրդին: Տեր Ավետիսը եկեղեցու խաչկալի[490] կառուցման նախաձեռնողն է, որն իրագործվել է Ղուկաս Ա. Կարնեցի (1780–1799) կաթողիկոսի օրոք՝ 1781 թ. և դրա վերաբերյալ արձանագրություն կազմվել:

Հետաքրքիր է նաև արձանագրության թվականի ձևակերպումը զույգ հարյուրավորների գումարման և մեկ տասնավորի հավելման միջոցով, որը Կ. Ղաֆադարյանն այսպես է բացատրում. «...պետք է գրված լիներ ՌՄԼ, բայց ՋՅԼ-են գրել չափածո արձանագրության հանգը և ոտքը պահպանելու համար»[491]:

Մաղաքիա արք. Օրմանյանի բնորոշմամբ՝ խաչկալի ծագումը սկիզբ առավ եկեղեցու սուրբ Սեղանի վրա խաչի՝ բարձր ու պատվավոր դիրքում զետեղելու պահանջից, երբ խաչկալը դարձավ պատկերակալ ու սուրբ Սեղանի անբաժան զարդը[492]: Ըստ նրա՝ «այժմ խաչկալ ասելով հասկանում ենք սեղանի ճակատին բարձրացող փայտակերտը, որի ներքևի մասը բազմոցի

[489] **Շահազիզ,** էջ 198:

[490] Ըստ Ստ. Մալխասյանցի՝ սա եկեղեցու շինության այն մասն է, որը զետեղված է վեմ-քարի վրա, այսինքն՝ սուրբ Սեղանը (Հայերէն բացատրական բառարան, հ. երկրորդ, կազմեց՝ **Ստ. Մալխասեանց,** Երևան, 1944, էջ 243):

[491] **Կ. Ղաֆադարյան,** Երևան, էջ 167:

[492] **Մաղաքիա արք. Օրմանյան,** Ծիսական բառարան, Երևան, 1992, էջ 85–86:

աստիճաններն են, մեջտեղում խաչի տեղը և վրան պատկերի շրջանակը, գեղեցիկ ճակատն էլ ավելի վեր»[493]*: Օրմանյանի դիտարկումները պարզում են, որ եկեղեցու բեմի պատարագի վեմ-քարին փոխարինելու է եկել նախ փայտակերտ, ապա քարակերտ սուրբ Սեղանը, որը հիմնված էր աստիճանաձև կամ ուղիղ պատվանդանի վրա, իսկ վերին կենտրոնական մասում տեղադրվում էր խաչը կամ շրջանակի մեջ ներառված խաչապատկերը:*

ԺԹ—ԺԹ. մի շարք եկեղեցիներում (Մուղնիի Ս. Գևորգ, Վաղարշապատի Ս. Աստվածածին և այլն) այսօր էլ կարելի է տեսնել կաթոլիկ եկեղեցիներից ազդված՝ սուրբ սեղանների կառուցման այնպիսի լուծումներ, երբ եկեղեցու բեմի ողջ ծավալն զբաղեցնում է սեղան-պատկերակալը (կենտրոնի սուրբ Սեղանի երկու կողմից բացվում են կամարաձև դռներ, և ողջ մակերեսը հարդարված է որմնանկարներով կամ ոսկեզօծ զարդապատկերներով): Վազգեն Ա. վեհափառ հայրապետի նախաձեռնած հսկայածավալ շինարարական ու բարեկարգչական աշխատանքների արդյունքում բազմաթիվ եկեղեցիներում կառուցվեցին նաև նոր սուրբ սեղաններ՝ հիմնականում մարմարից: Նրանց դիմային խորանաձև մակերեսին մեծ մասամբ պատկերվում էր Տիրամայրը՝ մանուկ Հիսուսը գրկին: Վազգեն Ա. վեհափառի օրոք սկիզբ առած եկեղեցաշինության ու բարեկարգման ծրագրի շրջանակներում նորոգչական աշխատանքներ իրականացվեցին նաև Երևանի Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցում, որի արդյունքում ավագ խորանի վրա տեղադրվեց նոր սուրբ Սեղան՝ Երվանդ Քոչարի վրձնին պատկանող սրբապատկերով (նկ. 37ա—գ): Այս նոր շինարարական աշխատանքների մասին է վկայում սուրբ Սեղանի ետնամասում փակցված սալաքարի 1965 թվակիր արձանագրությունը:

8. եկեղեցու Ս. Սեղանի ետնամասում փակցված մարմարյա սալաքարին (0,69 x 0,50 մ), 10 տող.

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.
ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1965, ԿԱՌՈՒՑԱԻ
Ս. ՍԵՂԱՆՍ ԱՐԴԵԱՄԲ ՀԱԼԷՊԱԲՆԱԿ
ԲԱՐԵՊԱՇՏ ՏԻԿԻՆ ԱԶՆԻՒ ԳԱՆԹԱՐՃԵԱՆԻ,
Ի ՅԻՇԱՏԱԿ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԱՄՈՒՍՆՈՑՆ՝
ԽԱՐԲԵՐԴԻ ԴՈԿՏՈՐ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՆԹԱՐՃԵԱՆԻ,
ՅԻՇԵՑՔ ԶՆՈՒԻՐԱՏՈՒՆ
ԲԱՐԻ ԱՂՕԹԻՔ Ի ՏԷՐ:

Դատելով արձանագրությունից՝ եկեղեցու սուրբ Սեղանի կառուցման ծախսերը հոգացել է հալեպաբնակ տիկին Ազնիվ Գանթարճյանը՝ ի հիշատակ իր հանգուցյալ ամուսնու՝ ծագումով Խարբերդից դոկտոր (բժիշկ) Հովհաննես Գանթարճյանի: Բարեպաշտ ամուսինները հանգչում են Հալեպի Շեխ-Մագսուդ թաղամասի Հայ կաթողիկե գերեզմանատանը: Երկաստիճան պատվանդանի վրա ամրացված ուղղանկյունաձև տապանաքարի եզրի ուղղահայաց սալին հետևյալ երկտող արձանագրությունն է. «Տօքթ(որ) Յովհաննէս Գանթարճեան, ծն(եալ) Խարբերդ, 1890, հ(ա)նգ(եալ) 1957»[494]*, իսկ նույն սալաքարի*

[493] Նույն տեղում, էջ 86:

[494] **Ր. Քորթոշյան,** Հալեպի արձանագրությունները, գիրք ԺՋ, Երևան, 2013, էջ 553, արձ. 19:

արևելահայաց նիստին փակցված մարմարե սալիկին առկա է վեցտողանի արաբերեն

9. Եկեղեցու արևմտյան պատին, նախասրահի մեջ, մուտքից ձախ, 13 տող.



ԹԻՒ ՄԵՐ Ի ՀԱՋԱՐ / ԵՐԿԵՐԻՒՐ ՀԱՍԵԱԼ
ԽԲ. (42) ԸՆԴ ՆՈՅՆ / ՀԱՄԱԹՈՒԵԱԼ (1793),
ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻՆՋ ԷՐ ԳԱ/ՀԱԿԱԼ,
ՂՈՒԿԱՍ Ս[Ր]ԲԱՋԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆՏՐԵԱԼ,
ՅԱ/ՋՈՂՄՈՒՆՔ ՇՆՈՐՀԱՅ Տ[ԵԱՌ]Ն
ԺԱՄԱՆԵԱԼ,
ՏԱՆԻՔ Տ[Ա]ՃԱՐԻՍ / ԵՂԵՒ ՆՈՐՈԳԵԱԼ,
ԾԱԽԻՒՔ ԲԱՐԵՊԱՇՏ ԱՆՁԻՆ ԳՈՎԵԼԻ,
ՊԱՐՈՆ / Գ[ԱԲՐ]ԻԷԼ ՀԱՐԻՒՐԱՊԵՏԻ,
Ի ՊԱՏՃԱՌ ԱՆԵՂԾ ՅԻՇԵՑՄԱՆ ԲԱՐԻ, /

ԻՒՐՆ ԵՒ ԻՒՐԱՅՆՈՑՆ ԱՌ ՀԱՍԱՐԱԿԻ,
ՀՕՐՆ՝ Ա[ԼԼԱ]ՀՎԵՐՏԻ ԻՒՋԲԱՇՈՑ ՄԵԾԻ, /
ԵՒ ՄՕՐՆ՝ ԵՐԿԻՒՂԱԾ ԵՓՐՈՍԻՆԷԻ,
ԵՒ ԵՂԲԱՐՑՆ ԻՒՐՈՑ՝ ՊԱՐՈՆ ՍՏԵՓԱՆԻ,
ԵՒ ՅՕՀԱՆ/ՆԻՍԻ ՔԱՋ ՋԻՆԱՒՈՐԻ,
ԻՍԿ ԵՒ ԿՐՏՍԵՐԻՆ՝ ՊԱՐՈՆ ԳՐԻԳՈՐԻ,
ՍՈՑՆ ԳՈՐԾ/ԱՌՆՈՒԹԵԱՆ ԺԻՐ ՎԵՐԱԿԱՑՈՒԻ,
ՆԱԵՒ ՈՐԴԵԿԱՑՆ ԱՋՆՈՒԱԿԱՆԻ՝ /
ՊԱՐՈՆ ԲԱՐՍԵՂԻ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԻ, /
ՈՐՈՑ ՅԻՇԱՏԱԿՆ ՕՐՀ/ՆՈՒԹԵԱՄԲ ԼԻՑԻ,
Ա[ՅԺՄ] ԵՒ Ի ԳԱԼՈՒՍՏ ՏԵԱՌԸՆ ԿՐԿՆԱԿԻ։

Հրատ. Շահխաթունեանց, 304, Սմբատեանց, 10–11, Ալիշան, 315, ՎՏ, 219, Շահազիզ, 197, Հակոբյան, 360–361, Ղաֆադարյան, 166, առձ. 82, Կարապետյան, 39։

արձանագրություն, որի թարգմանությունը հետևյալն է. «Ազնիվ Գանթարճյան, 1901—1989», Ռոզեթ Գանթարճյան, 1925—1995, Նուպար Գանթարճյան, 1921—1996»[495]։ *Ռոզեթ և Նուպար Գանթարճյանները, թերևս, նրանց զավակներն են։*

Բովանդակությամբ շինարարական երկրորդ ծավալուն արձանագրությունը վերաբերում է եկեղեցու տանիքի՝ 1793 թ. նորոգմանը, այսինքն՝ ճիշտ մեկ դար հետո եկեղեցին նորոգվել է պարոն Գաբրիել Գեղամյանց հարյուրապետի միջոցներով։

Մեսրոպ արք. Սմբատյանցը, չնայած նրան, որ վիմագրի վերծանության մեջ թվականը ճիշտ է կարդացել, այդուհանդերձ գրել է. «նորոգութիւն է ստացել եկեղեցիս 1773 թուին, երևանայ երևելի իշխան՝ Պարսից Տէրութեան Հարիւրապետի արտօնութեամբ ծառայող Գաբրիէլ Գեղամեանցի ծախուքն և հոգացողութեամբն...»[496]։ *Թվականի այս կերպ հիշատակումը, իհարկե, կարող է նաև տպագրական վրիպակ լինել։*

Կ. Ղաֆադարյանը ծանոթագրում է, որ վերջին տողում ԿՐԿՆԱԿԻ բառը ցրիվ

[495] Նույն տեղում։

[496] **Սմբատեանց,** էջ 10։

է գրված՝ արձանագրության մեջ ընկնող տարածությունը բաց չմնալու համար: Ըստ նրա՝ վիմագիրը գրեթե տարընթերցումներ չունի: Նշենք մեր կատարած համեմատության արդյունքում առկա տարընթերցումները. վիմագրի առաջին տողը նախորդ գրեթե բոլոր հրատարակիչները կարդում են ԹԻՒ ՄԵՐ Է ՀԱՋԱՐ..., Շահազիզը՝ ԹԻՒ ՄԵՐ ԵԻ ՀԱՋԱՐ..., 6-րդ տողում՝ ԾԱԽԻԿ բառը Ղաֆադարյանը կարդում է ՃԱԽԻԿ, նախավերջին տողի ՈՐՈՑ-ը յ հնչյունի հավելմամբ՝ ՅՈՐՈՑ և այլն: Ուշագրավն այն է, որ վիմագրի յոթերորդ տողում ԳԱԲՐԻԷԼ անունը թերի է փորագրվել. գրիչը, թերևս անհայտ պատճառով ազատ է թողել բառիս 2–4 տառատեղերը: Չնայած այս հանգամանքին, նախորդ հրատարակիչներն այն ամբողջական են կարդացել՝ առանց նշելու բառիս թերի լինելը:

Այս չափածո վիմագիրը ևս առանձնանում է իր ընդարձակ բովանդակությամբ՝ աղերսվելով եկեղեցու շինարարական ծավալուն արձանագրության հետ: Այն ևս հայտնում է ժամանակի կաթողիկոսի, այս դեպքում՝ Ղուկաս Կարնեցու անունը[497], ապա տեղեկություններ հաղորդում նշանավոր Գեղամյան տոհմից մեկենաս Գաբրիել հարյուրապետի, նրա ծնողների՝ Ալահվերդի յուզբաշու և Եփրոսինեի, եղբայրներ՝ պարոն Ստեփանի, Հովհաննես «քաջ զինվորի», պարոն Գրիգորի, որդիներ՝ պարոն Բարսեղի և Աստվածատուրի մասին: Անձնանուններին նախորդող պարոն հարգական տիտղոսը վկայում է այն, որ նշվածները ժամանակի բավական ազդեցիկ անձինք են, սերում են իշխանական տոհմից և աչքի են ընկել իրենց գործունեությամբ: Հիրավի, Գեղամյանները Երևանի խանության ԺԸ–ԺԹ. դդ. հայ ազնվական նշանավոր տոհմերից են եղել, որոնք հաճախ գրվում էին Գեղամացի, Հազարապետյան ձևերով: Ըստ պատմաբան Վ. Դիլոյանի՝ մելիքության իրավունքով նրանց կառավարմանն էին հանձնված Կըրխբուլաղի (Կոտայքի) և Գյոկչայի (Գեղամա) գավառների մի շարք գյուղեր (Արզնի, Արամուս և այլն): Ի դեմս Գաբրիել հազարապետի՝ նրանք

[497] Ղուկաս Կարնեցու 1786 թվակիր կոնդակներից մեկն ուղղված է, թերևս, միևնույն Ս. Անանիա առաքյալի վանքի առաջնորդ Անանիա վարդապետին, որը հետևյալն է բովանդակում. «Կոնդակ մի փոքր առաջնորդականի, զոր ետ սրբազան Վեհապետն սրբոյ Անանիա առաքելոյ վանից առաջնորդ Անանիա վարդապետին, զի տեսցեն զսա ի ձեռին իւրում, յայն վանից վիճակեալ ժողովուրդքն եւ տացեն նմա զհասս եւ զիրաւունս առաջնորդական յամէ յամ» (ԴՀՊ, Նոր շարք, գիրք առաջին. Ղուկաս Կարնեցի, հ. Բ., աշխատասիրությամբ՝ **Վ. Գրիգորյանի**, Երևան, 2003, էջ 121, վավ. 36): Անանիա վարդապետն իբրև առաջնորդ Ս. Անանիա առաքյալի վանքի հիշատակված է նաև Ղուկաս կաթողիկոսի «Ռուդք կանոնական»-ում, որտեղ առկա է նաև նրա անվանակիր կնիքը: Ղուկաս հայրապետի 1786 թվակիր այս գրությունը վավերացրել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մի շարք միաբաններ՝ 18 եպիսկոպոս, 35 վարդապետ, 3 աբեղա (տե՛ս նույն տեղում, էջ 787–793):

Առավել հետաքրքիր է Ղուկաս կաթողիկոսի մեկ այլ՝ 1798 թվակիր նամակներից մեկը՝ հասցեագրված Ս. Անանիա առաքյալի վանքի ժողովրդին (առինջեցիներին և բոշաներին), որով տեղեկացվում է, որ հանգուցյալ Աթանաս վարդապետի փոխարեն առաջնորդ և հոգևոր հովիվ է նշանակվել Մինաս վարդապետը, ըստ այդմ՝ պահանջում է հնազանդ լինել նոր առաջնորդին և հավաքել ու ժամանակին հանձնել անհրաժեշտ հասույթներն ու տուրքերը (ՄՄ Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 79): Ղուկաս Կարնեցու 1798 թվակիր նամականու համառոտագրություններից մեկում պահպանվել է նաև ուշագրավ հիշատակություն, ըստ որի՝ Ղուկաս հայրապետը օրհնության և շնորհակալության նամակ է հղել Ս. Անանիա առաքյալի վանքի տնտես Պառավին. «զմի հատ ոսկեայ և մարգարտաշար գինտ ականջի տալոյն» (ՄՄ ձեռ. Հմր 4481, 516ա): Նշենք, որ Ղուկաս Կարնեցու նամականու 1793–1799 թթ. հավաքածուն հրատարակության է պատրաստել պատմաբան Վարդան Գրիգորյանը (մահ. 2019 թ.): Այն լրացվում և ծանոթագրվում է նաև մեր աշխատասիրությամբ և շուտով կհրատարակվի «Դիվան հայոց պատմության» մատենաշարի հերթական հատորով:

էին վարում Երևանի խանության հետևակ գնդի մինբաշու (հազարապետի) պաշտոնը և մեծ ազդեցություն ունեին խանական արքունիքում: Նրանց էր հանձնարարված նաև Երևան — Սևանա լիճ — Թիֆլիս առևտրական քարավանային ճանապարհի պաշտպանությունը, որի համար մաքս էին գանձում: Գեղամյանների գործունեության ուշագրավ էջերից մեկն էլ Երևանը խանական լծից ազատագրելու պայքարն էր, որի իրագործման համար դեռևս 1780-ականներից պարբերաբար դիմել են ռուսական իշխանություններին ու օգնություն խնդրել: 1804 թ. ռուսների առաջին ձախողված արշավանքից հետո Գեղամյաններից շատերն անցել են Վրաստան ու ռուս ազնվականի կոչում ստացել: Տարիներ անց նրանք դարձյալ վերադարձել են Երևան ու գրավել իրենց նախկին դիրքը[498]:

Դառնալով վիմագրին՝ նկատենք, որ Գաբրիելի հայր Ալահվերդին հիշատակված է իբրև Մեծ իւզբաշի. այն թուրքերեն փոխառություն է և համարժեք է հարյուրապետին, այսինքն՝ սպա, զինվորների (հարյուրի) պետ, գլխավոր[499]: Հետաքրքիր է, որ միևնույն վիմագրում վկայված է նաև հարյուրապետ զինվորական կոչումը, որի կրողը մեկենաս Գաբրիելն է, իսկ նրա եղբայր Հովհաննեսը պարզապես «քաջ զինվոր» է: Ի դեպ, Գաբրիելի կրտսեր եղբայր պարոն Գրիգորը, ըստ վիմագրի՝ կատարված աշխատանքների «ժիր» վերակացուն է, այսինքն՝ պատասխանատուն, վերահսկիչը:

Ավելորդ չենք համարում այս տոհմի մասին որոշ տեղեկություններ հաղորդել նաև մատենագրությունից և մանրագիտական գրականությունից: Նախ նշենք, որ ԺԸ—ԺԹ. դդ. Երևանի առավել աչքի ընկնող ազնվական տոհմերն էին Մելիք-Աղամալյաններն ու Գեղամյանները, որոնցից առաջիններն ապրում էին Կոնդում և ունեին տոհմական եկեղեցի՝ Ս. Հովհաննես Մկրտիչը՝ վերակառուցված 1710 թ., իսկ Գեղամյաններն իրենց սերված էին համարում Գեղարքունիքի իշխանական տներից, նրանցից շատերը բանակում վարում էին զինվորական պաշտոններ[500], այստեղից էլ՝ վիմագրում հիշատակված յուզբաշի, հարյուրապետ կամ հազարապետ պաշտոնների վկայությունը:

Ալահվերդի յուզբաշու և նրա որդի Գաբրիելի մասին ուշագրավ տեղեկություն է պահպանվել Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրերից մեկում (ՄՄ ձեռ. Հմր 10655), որի հեղինակը 1825 թ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունից Սևանավանք ժամանած Զաքարիա Գուլասպյան-Բեհբուդյան Տփխիսեցին է: Սևանի անապատի վանահայր Սարգիս վարդապետի պատվերով նա շարադրել է Առաքելոց միաբանության պատմությունը՝ դեպքերի ընթացքը հասցնելով մինչև 1825 թ.: «Վէպ ծովակին Գեղամայ եւ երջանիկ կղզւոյն Սեւանայ եւ որոյ բնակչացն» խորագրով նրա ձեռագիր աշխատությունն ունի երկու՝ ընդարձակ և համառոտ խմբագրություն: Վերջինս Մատենադարանի Հմր 8074 ձեռագիրն է: Վերպում մեզ հետաքրքրող հատվածը, որը Սևանի անապատին նվիրված հոդվածում վկայակոչել է նաև Արիփենիկ Ղազարոսյանը[501], պայմանավորված է աֆղան Ազատ խանի՝ 1751 թ. Հայաստան կատարած արշավանքով, որի ժամանակ թշնամուն հա-

---

498 **Վ. Դիլոյան,** Գեղամյաններ, Հայկական սովետական հանրագիտարան (այսուհետ՝ ՀՍՀ), հ. 2, Երևան, 1976, էջ 709:

499 **Հր. Աճառյան,** Թուրքերէնէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ, «Էմինեան ազգագրական ժողովածու», հ. Գ., Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 300:

500 **Ս. Վարդանյան,** Հայաստանի մայրաքաղաքները, էջ 208:

501 **Ա. Ղազարոսյան,** Սևանի անապատը ԺԷ—ԺԹ. դարերում, «Էջմիածին», 1997, Ժ., էջ 125:

ջողվում է հասնել մինչև Սևանա լիճ, իսկ ափամերձ բնակչությունը պատսպարվում է կղզում, որոնց թվում են լինում Ալահվերդի յուզբաշին և այն ժամանակ մանկահասակ որդին՝ Գաբրիելը: Ձեռագրում նշված է, որ բնակիչները դիմեցին դեպի Սևանա կղզի. «...իբր յամրոցի անմատոյց, գոլով պարփակեալ ի ծովակիս ջուրց խորութեամբ, յորս էին և ոմանք յերևելեաց, որպէս մէլիք Սարգիսջանն Գեղա[ր]քունւոյ եւ Ալահվէրդի իւզբաշին, այնինքն է հայր Գաբրիէլ իւզբաշուն, ուր եւ Գաբրիէլն էր մանուկ հասակաւ յայնժամ, շուրջ զամաւ Փրկչին 1755»[502]:

Ժամանակի երևելի իշխանների թվում Սիսական կամ Գեղարքունյաց գավառի տեր Գաբրիել հարյուրապետին հիշատակում է նաև Մեսրոպ Թաղիադյանը: Իր ուսուցիչ Պողոս վարդապետ Ղարադաղցու (Ներսիսյան) հետ էջմիածնից Երևան կատարած ճանապարհորդությունը նկարագրելիս՝ Մ. Թաղիադյանը համառոտ անդրադարձել է Երևանի մելիք Աբրահամ Հայկազուն իշխանի և նրա որդի Սահակի, Սիսական կամ Գեղարքունյաց գավառի տեր Գաբրիել հարյուրապետի, Բարսեղ աղայի և այլ իշխանավորների հանդիպմանը Պողոս վարդապետի հետ, որից հետո Գաբրիել հարյուրապետը վարդապետին իր տուն է հրավիրել, որն ըստ Մ. Թաղիադյանի՝ «...անկանէր առ ոտամբն Կոզեռայ՝ ի հիւսիսոյ Զօրաւորին»[503]: Մ. Թաղիադյանը Գաբրիելի և նրա ընտանիքի մասին ուշագրավ մանրամասներ է հաղորդում, որոնք ևս ավելորդ չենք համարում հիշատակել. «Այս իշխան աստուածասէր, թէպէտև չերևան բնակէր, այլ զտարազ և զլեզու Սիւնի զգենոյր և խօսէր: Յառաջադէմ էր առաջի բդեշխին, և ի կարիս ազգին ատենահաս օգնական: Երթևեկութիւն իմ առ վարդապետն սուրբ՝ նորանոր շնորհաց արժանի արար զիս: Վասն զի միանգամ և երկիցս խօսակից եղեալ ընդ ազատերամ գերդաստանի նորա, այնքան շարժեցի առ իս գթութիւն իշխանիս, մանաւանդ թէ և բարեպաշտուհի տիկնոջ նորա, մինչ հարցուփորձ արարեալ զազգէ և զտակէ իմմէ՝ կոչեաց առ ինքն զմայր իմ, և գրեթէ քեռացեալ ընդ նմա՝ խնդրեաց ընկալաւ զիս ի նմանէ յորդեգիր իւր: Եւ յայնմհետէ գթութիւնք տան նորա ոչ միայն առ իս ինքն ամփոփեցան, այլ և սփռեալ ծաւալեցան առ ամենայն գերդաստան մեր, որոց մեծապէս կարօտէաք ի ժամանակին»[504]: Մ. Թաղիադյանի տպավորություններում հստակ ուրվագծվում է Գաբրիելի՝ եկեղեցու հանդեպ ունեցած ակնածանքը, ըստ որի նաև ընկալելի է դառնում նրա մեկենասությամբ եկեղեցին նորոգելու հանգամանքը:

Երևանը խանական լծից ազատագրելու ընթացքում Գաբրիել հազարապետին քանիցս հիշատակում է նաև Լեոն: Նա Գաբրիելին բնորոշում է իբրև ժամանակի երևելի այրերից մեկը, որն իշխան Գևորգ Խուբյանի (Խուբով) հետ ձեռք էին բերել Երևանի Մահմեդ խանի (1784–1804)

[502] ՄՄ ձեռ. Հմր 10655, 58բ:

[503] **Մ. Թաղիադյան,** Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, էջ 88:

[504] Նույն տեղում:

Գաբրիել հազարապետի (յուզբաշի) մասին ընդարձակ տեղեկություններ կան նաև ժամանակի կաթողիկոսներից Դավիթ Էնեգեթցու և Դանիել Սուրմառեցու արխիվային վավերագրերում, ըստ որոնց՝ Մելիք Աբրահամի, Կ. Պոլսի Գալուստ եպիսկոպոսի, Վրաստանի Հովհաննես արքեպիսկոպոսի և ուրիշների հետ «Դավիթ-Դանիելյան» գավազանակովի հետևանքներով մտահոգված այրերից մեկն էլ Գաբրիել հազարապետն էր, որը ևս պաշտպանում էր Դանիելի կաթողիկոսությունը: Այս ամենի մանրամասն քննությունը մեր խնդրից դուրս համարելով՝ վկայակոչում ենք միայն համապատասխան աղբյուրները. ԴՀՊ, գիրք Ե., Դանիէլ կաթուղիկոս (1800–1808), էջ 154, 162, 203, 267, 463–464, նույնի գիրք Զ., Դաւիթ կաթուղիկոս, մասն առաջին, 1801–2, հրատ. **Գիւտ աւ. քհնյ Աղանեանց,** Թիֆլիս, 1904, էջ 201:

վստահությունը և հեղինակություն էին վայելում նրա ապարանքում՝ միաժամանակ լինելով ռուսական իշխանության գործակատարները: Երևանի բերդի պաշարման գործում ռուսներին օգնություն ու հավատարմություն ցուցաբերած հայերից նշանավորները դարձյալ Գևորգ Խուբյանն ու Գաբրիել հազարապետն էին, որոնք ռուսների առաջին անհաջող արշավանքից հետո ստիպված են եղել հեռանալ Թիֆլիս ու Փամբակ: Հեռանալուց հետո ևս Գաբրիել հազարապետը չի դադարել Երևանի ազատագրման հարցերով մտահոգվելուց և Փամբակից նամակ է գրել ռուսական բանակի հրամանատար իշխան Ցիցիանովին ու տեղեկացրել Երևանի բերդում տիրող անմխիթար վիճակի մասին[505]:

Երևանի պատմության մերօրյա ուսումնասիրողներից Գևորգ Օրբելյանը ևս համառոտ անդրադարձել է Ս. Աննանիա առաքյալի մատուռի և Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու պատմությանը, օգտագործել նաև որոշ վիմագրերի բովանդակությունը: Հիշյալ արձանագրության առնչությամբ նա գրում է, որ «...եկեղեցու արևմտյան դռան ձախ կողմում տեղադրված պատկերազարդ խաչքարի վրա (հավանաբար նկատի ունի խաչքարից վեր, վերնամասում — Ա. Հ.) հիշատակվում է Գեղամյան տոհմի Մեծ-Յուզբաշու երրորդ որդի Գաբրիել հարյուրապետի անունը՝ որպես տոհմի արժանի ժառանգ»[506]: Վիմագրի բովանդակությունից դատելով՝ Գաբրիելը Ալահվերդի յուզբաշու և Եփրոսինեի չորս զավակներից մեկն է, որոնց անունները վերը հիշատակեցինք:

Երևան քաղաքի պատմության թանգարանի հրատարակած «Երևանի նշանավոր ընտանիքները» ժողովածուում տեղ է գտել նաև Գեղամյաններին նվիրված հոդված՝ հեղինակությամբ Արմինե Կարապետյանի: Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու նորոգման վիմագիրը վկայակոչելուց բացի՝ հոդվածագիրը ևս փաստում է այն, որ Գաբրիել Գեղամյանն իրավամբ համարվում է տոհմի ազգաբանության գլխավոր ճյուղը կրողն ու ականավոր գործիչներից մեկը: Հետաքրքիր է, որ հոդվածի վերջում ներկայացված տոհմածառում Գաբրիելի որդիներն են Բարսեղն (ծնվ. 1778 թ.) ու Աղաբաբը, մինչդեռ ըստ վիմագրի՝ երկրորդ որդու անունն Աստվածատուր է[507]:

ԺԹ. դարի երկրորդ կեսին ևս եկեղեցում իրականացվել են բարենորոգչական աշխատանքներ: Ավելի ուշ նորոգվել ու փոփոխվել է նաև բուն եկեղեցին. այդ է վկայում եկեղեցու հարավային մուտքի վերնամասում զետեղված եռատող արձանագրությունը:

10. Հարավային դռան վերնամասում, արտաքուստ, 3 տող:

Կ. Ղաֆադարյանն այս արձանագրությունը ներկայացրել է իբրև նորահայտ՝ ծանոթագրելով հետևյալը. «Այս արձանագրությունը նոր է, բայց զետեղեցինք, որովհետև նորոգություններին է վերաբերում և եկեղեցու կառուցման ու նորոգությունների հետազոտման ժամանակ կարող է պիտանի լինել»[508]: Վիմագրի առաջին հրատարակիչ Ե. Շահազիզն այն մեջբերում ու բացատրում է բովանդակությունը:

---

505 **Լեո,** Երկերի ժողովածու, հ. չորրորդ, էջ 207, 225–227, 280–281: Գաբրիել հազարապետի՝ Երևանը խանական լծից ազատագրելու նախաձեռնությունների մասին տե՛ս նաև **Վ. Գրիգորյան,** Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում, Երևան, 1958:

506 **Գ. Օրբելյան,** Հին ու նոր Երևան, էջ 41:

507 **Ա. Կարապետյան,** Գեղամյաններ, «Երևանի նշանավոր ընտանիքները», Ա. մաս, Երևան, 2009, էջ 39:

508 **Կ. Ղաֆադարյան,** Երևան, էջ 167:



ԲԱՅՑԱՆ ԴՈՒՒՆ ԵԻ ԼՈՒՍԱՄՈՒՏՔ, ՇԻՆԵՑԱՆ ԽԱՉԿԱԼ, ՎԵՐՆԱՏՈՒՆ, ՏԱՆԻՔ, ՊԱՐԻՍՊՔ, / ՎԵՐԱՆՈՐՈԳԵՑԱՆ ՇԻՆՈՒԱԾՔ ԱՐԴԵԼԱՄԲՔ ԵԿԵԶԵՑԻՑԻՈՅ, ՋԼԱՆԼԻԻՔ ԵՐԵՍՓԼՈՒԱՆՅ ՄԼԿՐՏԻՋ ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԼԱՆԻ, / 1889 ԹԼԻԻ։

Հրատ. Շահազիզ, 198, Հարությունյան, 13, Դաֆադարյան, 167, առձ. 84։

Սա ԺԹ. դարի այն բացառիկ վիմագրերից է, որ չնայած համառոտ շարադրանքին, բավական ուշագրավ տեղեկություններ է հաղորդում տեղում իրականացված շինարարական աշխատանքների մասին։ Ինչպես վերը նշեցինք՝ այդ աշխատանքների առնչությամբ պահպանվել են նաև արխիվային մի քանի վավերագրեր։ Դատելով վիմագրից՝ նորոգվել է շինությունը, մուտք ու լուսամուտներ են բացվել հարավային կողմից (լուսամուտները, թերևս, ոչ միայն հարավային կողմից), կառուցվել են նոր խաչկալ, վերնատուն, ինչպես նաև պարսպապատ, որից այսօր պահպանվել է միայն համարավոր մուտքերից մեկը՝ հարավարևմտյան կողմում (նկ. 38, 39)։ Եկեղեցու պարիսպը և դարվազները (դարպաս-մուտքերը) նախատեսված է եղել նորոգել դեռևս 1800-ականների կեսերին։ Երևանի վիճակային հոգևոր ատյանի 1867 թ. հուլիսի 21-ի հայտարարությունը Սինոդին հատակ նշում է եկեղեցու համայքի ցանկությունը պարիսպն ու երկու դարվազները նորոգելու հարցում. «Համաձայն ցանկութեանց ժողովրդականաց մերոյ կամիմք նորոգել քայքայեալ երկու դարուազքս եկեղեցւոյ մերոյ եփած աղիւսիւ, յորոց մինն արևելից կուսէ է և միւսն՝ արևմտից... և զխախտեալ տեղիս որմունս պարսպայ գաւթի եկեղեցւոյն, նոյնպէս տանիք եկեղեցւոյ, յոր բուսեալ է խոտ... ի ներքս եկեղեցւոյ սպիտակացուցանել և ծաղկեցուցանել, առ որ լինի ծախս աւելի քան զհինգ հարիւր մանէթ»[509]։ Նորոգության հրամանը թերևս ավելի ուշ է եղել Սինոդի կողմից, քանի որ վիմագրի համաձայն՝ 1889-ին եկեղեցու միջոցներով է նորոգվել կամ վերակառուցվել պարիսպը (թերևս նաև զույգ դարվազները, որոնցից այժմ մեկն է պահպանվել)։

Փաստորեն, սա եկեղեցու խաչկալի կառուցման (միգուցե՝ նորոգման) երկրորդ արձանագրությունն է, որին վերն անդրադարձանք (արձ. 7)։ Իսկ ի՞նչ է եկեղեցու վերնատունը. Մաղաքիա արք. Օրմանյանը, հետագայում նաև Ստեփան Մալխասյանցն անդրադառնալով բառիս բացատրությանը՝ նշում են, որ վերնատունը եկեղեցու գավթի կամ մուտքի վերնամասում կառուցված հարկաբաժին է՝ նախատեսված կանանց համար։ Նման կառույցների գոյությունը պայմանավորված էր կանանց մուտքը եկեղեցում սահմանափակված լինելու հանգամանքով, որը մեղնում աստիճանաբար վերացվեց[510]։ Մ. Օրմանյանի հաղորդմամբ

[509] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4904, թ. 22աբ։

[510] **Մաղաքիա արք. Օրմանյան,** Ծիսական բառարան, էջ 122, Հայերէն բացատրական բառարան, հ. չորրորդ, էջ 331։

«մի ժամանակ կանայք բոլորովին եկեղեցու տաճարի մեջ տեղ չունեին և բոլորն էլ վերնատանը պիտի մնային. վերնատունն էլ խիտ ու բարձր վանդակներ ուներ, այնպես որ դրսից ներսում եղածներին չէին ճանաչում»[511]: Այս առումով խիստ ուշագրավ է Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի Ամենայն Հայոց կաթողիկոսի 1860 թ. կոնդակը՝ վանքերում կանանց ներկայությունը կտրուկ արգելելու մասին (տե՛ս վավ. 9): Կոնդակը, որն ուղղված է Ս. Էջմիածնի Սինոդին, մեջբերում ենք ամբողջությամբ. «Լուսաւորչական Սինոդի Սրբոյ Էջմիածնի ծանուցանեմք, զի լսելի եղև ինձ, որպեսզի ի վանորայս Հայաստանեաց կանայք տնտես անուամբ և իբր ազգական վանահարց բնակին, որ չէ օրէն և ըստ ամենայնի արգելեալ է ի սրբազան հարց կանոնաց, վասն որոյ հրամայեմք կազմել օրագիրս և օր յառաջ հրատարակել յամենայն վիճակսն՝ պատուիրելով վանահարց գտանելոց ի Ռուսաստան և յայլ տեղիս, առ ի արտաքսիլ զայնպիսիսն, ուր ուրեք գտանին և կան՝ թեև իցէն մարք և քորք վանահարց զկատարմանէն տալ մեզ տեղեկութիւն: Մատթէոս կաթողիկոս Ամենայն Հայոց, ի 19 փետրվարի, 1860 ամի, ի Սբ. Էջմիածին»[512]: Սրանով էլ թերևս պետք է պայմանավորել եկեղեցիներում՝ ԺԹ. դարի երկրորդ կեսին կառուցված վերնատների գոյությունը:

Դառնալով եկեղեցու նորոգմանը՝ նշենք, որ ըստ վիմագրի՝ այն իրագործվել է եկեղեցու միջոցներով, Մկրտիչ Տէր-Սարգսյան երեսփոխանի (երեցփոխի), այսինքն՝ ծխականների կողմից ընտրված անձի ջանասիրությամբ: Վիմագիրը հավաստի սկզբնաղբյուր է նաև նշված ժամանակաշրջանում եկեղեցու ունեցած դերակատարության առումով: 1889 թ. հիմնանորոգումը վկայում է, որ «Զորավոր» Ավետարանի անունով հռչակված այս եկեղեցին հավատացյալների պաշտելի օջախներից է եղել, ինչն էլ խթանել է եկեղեցու շուտափույթ նորոգումը:

Ասվածի վերաբերյալ ուշագրավ մանրամասներ է հաղորդել անձամբ Մկրտիչ Տեր-Սարգսյանը՝ իրեն բնութագրելով իբրև տիտուլյարնի սովետնիկ (տիտղոսավոր խորհրդական), որը 1879 թ. հունիսից զբաղեցնում է Երևանի Ս. Զորավոր եկեղեցու երեսփոխանի պաշտոնը, քանի որ «ժողովուրդը Սբ. Զորաւոր եկեղեցւոյ Երևան քաղաքի ինձ միաբերան ընտրեց երեցփոխան յիշեալ եկեղեցւոյն»[513]: Վերջինիս հաղորդմամբ՝ Ս. Անանիա առաքյալի նշխարներն ամփոփող այս սրբավայրը 1828 թվականից ի վեր Մարաղայից գաղթած ժողովրդի ցանկությամբ և ապագա կաթողիկոս Ներսես Աշտարակեցու հրամանով վերածվել է ծխական եկեղեցու ու ծառայել տեղի ժողովրդին, իսկ սրանից առաջ այստեղ բնակվել է մի վանահայր վարդապետ: Երևան գաղթած մարաղացիները «լինելով մի քանի հարիւր տուն և չունենալով իրենց համար ծխական եկեղեցի և ոչ էլ միջոց նոր եկեղեցի շինելու, դիմում են հանգուցեալ Ներսէս կաթողիկոսին (Աշտարակեցուն, 1843–1857 թթ. – Ա. Հ.)...: Երջանկայիշատակ կաթողիկոսը, տեսնելով մարաղացի ժողովրդականաց եռանդոտ խնդիրը... հրամայում է հարգել դրանց խնդիրը և այդ օրից սուրբ Զորավարը յիշվում է ծխական եկեղեցի»[514]: Մ. Տեր-Սարգսյանը պատմում է նաև Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու՝ մեզ արդեն հայտնի 1847 թ. կողոպուտի մասին (թվականը 1850 է նշում), երբ գողոնի մեջ է եղել նաև «Զորավոր» Ավետարանը, որը

[511] **Մաղաքիա արք. Օրմանյան,** նշվ. աշխ., էջ 122:

[512] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3940, թ. 1ա:

[513] ՀԱԱ, ֆ. 56, ց. 7, գ. 412, թ. 1ա:

[514] **Մ. Տէր-Սարգսեանց,** [Թղթակցութիւն], «Նոր դար», 1886, երեքշաբթի, 15 յուլիսի, երրորդ տարի, Հմր 113, էջ 2:

երեսփոխանի խոսքով ժողովրդի պաշտելի սուրբն է եղել. «շատ մարդիկ կան, որոնք ականատես լինելով սուրբ Զօրաւորի հրաշագործութիւններին, այժմ էլ միտ բերելիս սարսափում են: Որպէս պատմում են, շատերը ուխտելուց յետոյ գտնում էին բժշկութիւն իրենց հիւանդութիւնից ու ջերմից»[515]: Բարեբախտաբար, Ս. Անանիա առաքյալի տոնին ավազակները ձերբակալվել ու պատժվել են, բայց «Զորավոր» Ավետարանի գտնվելու վայրն անհայտ է մնացել: Կարծում ենք՝ Ավետարանը հենց այս ժամանակաշրջանում է տեղափոխվել Արտազի Ս. Թադեոս առաքյալի վանք, որտեղից հետագայում հասել է Ս. Էջմիածին, ապա՝ Երևանի Մաշտոցյան Մատենադարան:

Այնուհետև Մ. Տեր-Սարգսյանը հավելյալ տեղեկություններ է հաղորդում նախ Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցի (1866–1882) Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղղված խնդրագրում՝ եկեղեցու երեսփոխանական հաշիվների, ստացված եկամուտների, 1879 թ. անմխիթար վիճակում լինելու, տանիքի՝ ոչ բարվոք վիճակում գտնվելու, պարիսպն ու ծխական դպրոցի շենքի քանդվելու[516], նաև՝ «Նկատող» ստորագրությամբ անհայտ հեղինակի կողմից՝ 1885 թ. մի հոդվածում[517] իր հասցեին ուղղված մեղադրականների վերաբերյալ: Ուսումնասիրվող նյութի շրջանակներում մեզ առավել հետաքրքիր են եկեղեցու հետ կապված որոշ հարցեր, որոնք երեսփոխանը ներկայացնում է: Պարզվում է, որ 1880-ականների կեսերին Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու համայնքը կազմել է 130–150 տուն, ժողովրդի մեծ մասը արհեստավորներ են եղել, մի չնչին մասն էլ՝ կալվածատեր անձինք, իսկ եկեղեցու միջոցների աղբյուրներն են՝ մոմի վաճառքից ստացված հասույթը և դրամագլխի (մեծ գումարի) տոկոսները[518]:

Ավելի ուշ՝ 1900 թ., Երևանի մեծահարուստ Աֆրիկյան եղբայրների մեկենասությամբ և անվանի ճարտարապետ Վասիլի Միրզոյանի նախագծով Ս. Անանիա առաքյալի դամբարանի վրա մատուռ է կառուցվել: Ինչպես վերը նշեցինք, Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսարևմտյան կողմում գտնվող քառամույթ, գմբեթավոր երկհարկ այս շինությունն իր մեջ է ամփոփում սրբի ամենազոր մասունքները, որոնց մասին է վկայում դամբարանի ուղղանկյունաձև տապանաքարը:

11. Ս. Անանիա առաքյալի ստորգետնյա դամբարանի արևելյան պատին ագուցված մարմարյա քառանկյուն սալաքարին (0,71 x 0,71 մ), 11 տող.



Ի 1900 ԱՄԻ ՓՐԿՉԻՆ ԵՒ Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ՌՅԽԹ. / ՇՆՈՐՀՕՔ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՐԱՐՉԻՆ ՋՔՆԱՂ / ՅՕՐԻՆՄԱՄԲ ԿԱՌՈՒՅԱՒ ՄԱՏՈՒՌՆՍ Ի ՎԵՐԱՅ / ԴԱՄԲԱՐԱՆԻ ՆՇԽԱՐԱՑ Ս. ԱՌԱՔԵԼՈՅՆ ԱՆԱՆԻԱՅ

---

515 Նույն տեղում:

516 ՀԱԱ, ֆ. 56, ց. 7, գ. 412, թ. 1աբ:

517 «Նկատող», [Թղթակցութիւն], «Նոր դար», 1885, ուրբաթ, 12 յուլիսի, երկրորդ տարի, Հմր 116, էջ 2–3:

518 **Մ. Տէր-Սարգսեանց,** [Թղթակցութիւն], էջ 2:

/ ԱՐԴԵԱՄԲՔ ԵԻ ԾԱԽԻՒՔ ՈՂՈՐՄԱԾ ԵՂԲԱՐՑ ԱՓՐԻԿԵԱՆՑ / ՋԵՐՄԵՌԱՆԴՆ ԾԽԱԿԱՆԱՑ Ս. ՋՕՐԱՒՈՐԻ, Ի ՅԻՇԱՏԱԿ / ՀՈԳԻՈՑ ԾՆՈՂԱՑ ԻՒՐԵԱՆՑ, ԲԱՐԵՊԱՇՏ ԵԻ ԱՍՏՈՒԱԾԱՍԷՐ / ՀՕՐՆ՝ ՄԿՐՏՉԻ, ԵՐԿԻՒՂԱԾ ՄՕՐՆ՝ ՄԱՐԻԱՄԻ / ԵԻ ՎԱՂԱԹԱՌԱՄ ՔԵՌՆ ԹԱԳՈՒՀԻՈՑ ԿՈՒՍԻՆ։ / ԲԱՐԵՅՕԺԱՐ ՋԱՆԻՒՔ ԵԻ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՄԲ / ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ Պ[Լ]ԱՐՈՆ[Ց] ՎԱՍ[Ի]ԼԻ Ջ[Լ]ՈՒՐԱԲԻ[Ց] ՄԻՐՋԱՅԵԱՆՑ։

Հրատ. Շահազիզ, 198։

Արձանագրության առաջին և միակ հրատարակիչ Երվանդ Շահազիզն, ի թիվս այլ տարընթերցումների, թվականը կարդացել է ՌՅԻԲ., ըստ այդմ՝ 1873, այն դեպքում, որ եթե նույնիսկ Հայոց թվականի ՌՅԽԹ.-ի վերջին երկու տառը կարդար ԻԲ., միևնույն է՝ Փրկչական 1900-ը հստակ է։ Հնարավոր է, որ այս և նախորդ արձանագրությունները Շահազիզն իր գրքում զետեղել է լուսանկարների կամ այլ վերծանողների միջոցով, քանի որ գրքում ներկայացրել է չակերտավոր։ Այս արձանագրության առնչությամբ նա հետևյալն է հաղորդում. «Առաքյալի գետնափոր դամբարանի մուտքն առաջ եղել է եկեղեցու միջից. սրանից 40 տարի առաջ, 1890 թվին, այդ գետնափոր դամբարանը զատվել է եկեղեցուց, նրա վրա շինվել է մի առանձին սիրուն կաթողիկե, դրսից առանձին մուտք է բացվել եւ այդպիսի վերաշինության արձանագրությունը փորագրվել է դամբարանի ճակատի պատի մեջ հագցրած մարմարյա տախտակի վրա»[519]։ Ակնհայտ է, որ Շահազիզը թվականը շփոթում է։ Նախորդ արձանագրության համաձայն՝ եկեղեցին նորոգվել և ներսում որոշ կառույցներ էին ավելացվել 1889 թ., սակայն այստեղ տեղեկություններ չկան դամբարանային մատուռի կառուցման մասին և անհայտ է, թե Շահազիզը որտեղից է վերցրել իր վկայաբերած 1890 թվականը։ Այդուհանդերձ ուրախալի է, որ սալաքարը պահպանվել է (արևելյան պատի՝ «Տիրամայրը մանուկ Հիսուսը գրկին» սրբապատկերի ետնամասում) և որոշակիացնում է շինության ժամանակը, մեկենասների ու ճարտարապետի անունները։

Վիմագրի համաձայն՝ Ս. Աննանիա առաքյալի ստորգետնյա դամբարանի վրա վեր խոյացած գմբեթավոր մատուռը կառուցվել է 1900 թ., Աֆրիկյան (վիմագրում՝ Ափրիկեանց) եղբայրների միջոցներով՝ ի հիշատակ իրենց ծնողների՝ Մկրտչի և Մարիամի, ինչպես նաև վաղամեռիկ քույր Թագուհու։ Աֆրիկյանները վիմագրում բնութագրվում են իբրև Ս. Ջորավորի ջերմեռանդ ծխականներ։ Այս տոհմը 1829 թ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Հին Բայազետից և Ալաշկերտից գաղթել է Արևելյան Հայաստան ու հաստատվել Սևանի ավազանում գտնվող մի լքված գյուղում, որը կոչել են Նոր Բայազետ (ներկայիս՝ Գավառ)։ Վիմագրում հիշատակված Մկրտիչը տոհմի առաջնորդ, մասնագիտությամբ ներկարար Աբրահամի (ծնվ. 1796 թ.) 11 զավակներից մեկն է՝ ծնված 1837 թ.։ 1842 թ. մի չափաբերական մատյանում Աբրահամի անունը գրվել է Ափրիկով, որից հետո ժառանգները սկսել են գրվել Ափրիկյաններ, ավելի ուշ՝ Աֆրիկյաններ։ Տոհմի ճյուղերից մեկը՝ ի դեմս Մկրտիչ Աֆրիկյանի զավակների, դեռևս ԺԹ. դարի վերջերին հաստատվել է Երևանում ու աչքի ընկել առևտրային ու արդյունաբերական ոլորտում։ Բավական է նշել, որ Մկրտչի որդիներից Կարապետ Աֆրիկյանն է Երևանի գինու, կոնյակի և սպիրտի գործարանի հիմնադիրը, որի արտադրանքի մեծ մասը առաքվում էր արտերկիր։ Երևանում Աֆրիկյաններն ունեցել են Ճոթեղենի (կտորեղենի) խանութ, բամբակամաքրիչ գործարան և այլն։ Աֆրիկյան եղբայրների միջոցներով կառուցվեցին

[519] Շահազիզ, էջ 198։

բազմաթիվ դպրոցներ (Կարբի, Արայի, Դդմաշեն, Ջրառատ, Երևան), Երևանի երբեմնի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, ի վերջո՝ 1910 թ. ստեղծվեց «Երևանի ջրմուղ» ընկերությունը, որի անդամների թվում էին նաև Տիգրան, Առաքել և Կարապետ Աֆրիկյանները, ովքեր մեծապես նպաստեցին Երևանը խմելու ջրով ապահովելու գործին[520]: 1894 թ. երևանաբնակ Աֆրիկյան եղբայրների նյութական օժանդակությամբ է վերաբացվել Կարբի գյուղի ծխական դպրոցը, որը գոյատևել է նրանց հատկացրած ամենամյա միջոցներով և կոչվել «Ափրիկյան դպրոց»[521]: Պատահական չէ նաև Խորեն Մուրադբեկյան կաթողիկոսի՝ նրանց ուղղված բնութագրականը, թե Աֆրիկյանների դերը «հայ ազգի մատաղ սերնդի ուսման գործում այնքան մեծ է, և նրա նպաստներով պահվող ծխական դպրոցների ցուցակն այնքան ընդարձակ, որ թվելն անգամ դժվար է»[522]: Վերհիշենք նաև Մարիամյան դպրոցի համար նրանց նվիրաբերած տունը Երևանում, որի մասին վերն արդեն խոսվեց, իսկ Ս. Անանիայի դամբարանի վրա վեր խոյացած գմբեթավոր մատուռի վիմագիրն ուղղակիորեն լրացնում է անվանի հայորդիների մեկենասությամբ իրականացված շինարարությունների թիվը:

Արձանագրության վերջում վկայված է նաև շինության ճարտարապետի՝ պարոն Վասիլի Միրզայանցի (Միրզոև) անունը, որի ազգանունը Շահազիզը Միրզոյեանց է կարդացել: Նշանավոր ինժեներ-ճարտարապետ Վասիլի Զուրաբի Միրզոյանը ծնվել է 1863 թ. Թիֆլիսում: 1893-ին տեղափոխվել է Երևան և նույն թվականից մինչև 1910 թ. աշխատել Երևանի նահանգային վարչությունում, եղել նահանգային ճարտարապետ: Հեղինակ է ոչ միայն Երևանում, այլև Հայաստանի տարբեր բնակավայրերում կառուցված կամուրջների, դպրոցների, բնակելի տների, եկեղեցիների նախագծման: Նրան է պատկանում նաև 1910 թ. Երևանի առաջին ջրագծի նախագծման գործը, որը հաջողությամբ պսակվեց և մեկ տարի անց՝ 1911 թ. դեկտեմբերի 23-ին Երևանից մոտ 20 կմ հեռավորությամբ գտնվող Քառասուն աղբյուրների ջուրը հասանելի դարձավ երևանցիներին: Վ. Միրզոյանը վախճանվել է 1925 թ. և թաղվել Մլերի գերեզմանատանը[523]: Թերևս, հենց նրա նախագծով է կառուցվել Մլերի գերեզմանոցի երբեմնի եկեղեցին, որը գտնվել է ներկայիս Կոմիտասի անվան պանթեոնի տեղում: Անհայտության մատնված այս գերեզմանոցին և եկեղեցուն վերջերս համառոտ անդրադարձել է Էդուարդ Ավագյանը՝ միաժամանակ փաստելով, որ Երևանի պատմությանը նվիրված գրքերում որևէ հիշատակություն չկա այս եկեղեցու մասին: Հեղինակի խոսքով Մլերի գերեզմանատունը համեմատաբար ավելի նոր էր Կոզեռնի գերեզմանոցից, այն բաժանված է եղել երկու մասի, որոնցից մեկում թաղվում էին քաղաքի ռուս ուղղափառները, մյուսում՝ հայ լուսավորչականները: Հենց այս հայկական մասում էլ ժամանակի նշանավոր ճարտարապետ Վ. Միրզոյանի նախագծով ԺԹ. դարի կեսերին կառուցվել է բավական գեղեցիկ փոքրածավալ գմբեթավոր եկեղեցի, որն աչքի է ընկել որմերի ճակատներն ու թմբուկը հարդարող բարձր ու վերձիգ լուսամուտներով: Տեղացիներն այն կոչել են «Հայկական նոր գերեզմանոցի եկեղեցի»: Էդ. Ավագյանի հաղորդմամբ՝ եկեղեցին քանդել են 1935 թ., որից միայն մի լուսանկար է պահպանվել Երևան քաղաքի պատմության թանգարանում[524]:

[520] **Ա. Աֆրիկյան**, Աֆրիկյաններ, «Երևանի նշանավոր ընտանիքները», Ա. մաս, էջ 88–89, 91–96:

[521] **Ա. Ասատրյան**, Կարբի, էջ 251:

[522] Նույն տեղում:

[523] **Ա. Սարգսյան**, Վասիլի Միրզոև, «Երևանի նշանավոր ընտանիքները», Ա. մաս, էջ 166–168:

[524] **Էդ. Ավագյան**, Երևանյան խճանկար, Երևան, 2004, էջ 167:

ԺԲ. ՏԱՊԱՆԱԳՐԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու շրջակայքում նաև թաղումներ են արվել: Այդ են վկայում հարավային կողմում պահպանված տապանաքարերը, որոնցից երեքն արձանագիր են: Տապանագրերից դատելով՝ դրանք վերաբերում են ԺԹ. դարին և նախորդ դարասկզբին, այսինքն՝ մի ժամանակաշրջանի, երբ համալիրն արդեն չուներ վանական կենտրոնի նշանակություն, այլ ծառայում էր որպես ծխական եկեղեցի:

Վազգեն Ա. վեհափառ հայրապետի օրոք՝ 1974 թ., եկեղեցու և նրա շրջակայքի բարեկարգման աշխատանքների ընթացքում նախատեսվել է նաև սալարկել եկեղեցու շրջակա տարածքը, որի հետևանքով հարավային կողմի տապանաքարերն ու խաչքարերը հանվել են: Ակադ. Վարազդատ Հարությունյանի հավաստմամբ՝ նրանցից արժեք ունեցողները վերստին տեղադրվել են իրենց տեղում, իսկ մնացածներն օգտագործվել են իբրև սալահատակ[525]: Այսօր էլ եկեղեցու հարավային կողմում նկատելի են հարթ ուղղանկյունաձև սալատապաններ, որոնք սալահատակման ժամանակ ակնհայտորեն կրկնակի են օգտագործվել:

Տապանագրերից վաղագույնն ու ուշագրավը եկեղեցու հարավային մուտքի անմիջապես առջևում է, ձևով ուղղանկյուն սալատապանի վրա, որն ունի ընդարձակ չափածո արձանագրություն.

12. ՏԱՊԱՆԱՔԱՐ. *ուղղանկյունաձև (1,55 x 0,60 մ), վերնամասում ունի խաչաքանդակ, գիրը՝ 12 տող.*



ԳԱԲՐԻԷԼ ՀԱՋ[ԼԱ]Յ Ր[Ա]Յ Պ[ԵՏ] ...
ԱՂԱՀՎԷՐԴ[ՈՒ]Ի ՈՐԴԻ ԳՈ[ՉԻ],
ԲԱՋ[ՈՒ]Մ [Տ]ՈՂՄԻՒ ԳԵՂԱՄԵԱՆ[Ի],
ՐԷ (=ԷՐ) ՍԱ ԻՇԽԱՆ ԳԵՂԱԳՈՒՆԻ,
Ի ՀԱ[Լ]Յ ՈՑ ԱՍԿԻՆ ԷՐ ՅԱՒԱԼԻ,
ԻՐ ԸՆԹԷՐՑՕՔ ԱՅՍ ՏԱՊԱՆԻ,
ԼԻ ԲԵՐԱՆՕՔ ՏՈՒՔ ՋՈՂՈՐՄ[Ի],
ԱՄ ԵՒ ՁԵՋ ՈՂՈՐՄԵՍՑԻ,
ԱՆԿԱՐԾ ՄԱՀՈՒ ՊԱՏԱՀԵՑԻ,
ԽՈՐՈՒՍ ՏԱՊԱՆ ԲՆԱԿԵՑԻ,
ԱՅՍՄ ԹՎԻՆ ՎԱԽՃԱՆԵՑԻ,
1811-Ի ԵՒ ՄԱ[Յ]ՍԻ 22-Ի:

Արձանագրությունը ի վերջնահանգով բանաստեղծություն է, ուր առկա են նաև տեղական խոսվածքի ազդեցությամբ պայմանավորված լեզվական առանձնահատկություններ, ինչպես օրինակ՝ ԿՈՉԻ-ԳՈՉԻ, ԱՉԳԻՆ-ԱՍԿԻՆ: Չորրորդ տողի սկզբի ԷՐ-ը տառերի փոխատեղմամբ արձանագրված է ՐԷ, վեցերորդ տողի ՈՐ-ը՝ ԻՐ: Տապանագրի առաջին և երկրորդ տողերի վերջնամասը

[525] **Վ. Յարութիւնեան,** Եկայք շինեցուք, էջ 98–99:

վնասված է, սակայն, երկրորդ տողում տառերը վերականգնելի են:

Ննջեցյալը Գաբրիել հազարապետն է՝ Ալահվերդու որդին: Եկեղեցու նորոգման աշխատանքներին վերաբերող 1793 թվակիր վիմագրում իբրև մեկենաս հիշատակված էր յուզբաշի (հարյուրապետ) Ալահվերդու որդի պարոն Գաբրիել հարյուրապետը (արձ. 9), որին բնութագրելիս վերն անդրադարձանք նաև նրա ակտիվ մասնակցությանը Երևանը խանական լծից ազատագրելու գործում: Փաստելի է, որ եթե նախորդ վիմագրում Գաբրիելը կրում էր հարյուրապետ կոչումը, ապա տարիներ անց նա արդեն հազարապետ է հիշվում, այսինքն՝ զինվորական բարձրաստիճան պաշտոնյա, հրամանատար[526]:

Վերը նշեցինք, որ Երևանում՝ Ս. Ջորավոր եկեղեցուց ոչ հեռու բնակվող Գաբրիել հազարապետը հատուկ վերաբերմունք է ունեցել դեպի հայ եկեղեցին և իր մշտական աջակցությունն է ցուցաբերել եկեղեցու բարեկարգմանը. սրանով է պայմանավորված նաև նրա՝ եկեղեցու բակում թաղվելու հանգամանքը: Հարևանությամբ է գտնվում մեկ այլ ուղղանկյունաձև տապանաքար՝ հյուսածո եզերազարդերով, սակայն, առանց արձանագրության: Ամենայն հավանականությամբ, այն Գաբրիել հազարապետի կնոջ տապանաքարն է:

Բակի հարավարևմտյան անկյունում՝ բարձրադիր պատվանդանի վրա են գտնվում իրար կից զույգ ուղղանկյուն օրորոցաձև տապանաքարեր, որոնք, դատելով եկեղեցու հին լուսանկարներից՝ նախկինում մետաղական ցանկապատ են ունեցել և ներկված եղել (նկ. 1): Ըստ տապանագրերի բովանդակության՝ ննջեցյալները միևնույն Տեր-Գրիգորյան գերդաստանից են, ծագումով՝ Ալափարսից, մեկը՝ հոգևորական, մյուսը՝ աշխարհիկ, վաճառական:

13. ՏԱՊԱՆԱՔԱՐ. *ուղղանկյուն օրորոցաձև (1,32 x 0,65 x 0,40 մ, պատվանդանը՝ 1,58 x 0,90 x 0,20 մ), արձանագիր են քարի երեք նիստերը, վրան ունի շրջանաձև փոսորակ, գիրը՝ հարավային նիստին՝ 3, հյուսիսային նիստին՝ 2, արևմտյան նիստին՝ 2 տող (առաջին տողը՝ կիսաշրջանաձև).*

Հարավային նիստ.



ԱՐԹՈՒՆ ՀՈՎԻՒ ՀՕՏԻՆ ԻՒՐՈՅ
ԵՒ ՔԱՋԱԳՈՐԾ / Ի ՊԱՇՏԱՄԱՆ
ՎԱՅԵԼԷՐ ՋՅԱՐԳԱՆՍ ՍԻՐ/ՈՅ
ԲԱՐԵՊԱՇՏՕՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ:

Հյուսիսային նիստ.



ԾՆԱՒ 1849 Թ., Ի 6 ՄԱՐՏԻ, ՅԱԼԱՓԱՐՍ, /
ՎԱԽՃԱՆԵՑԻ 1897 Թ., Ի 20
ՆՈՅԵՄԲԵՐԻ, ՅԵՐԵՒԱՆ:

Արևմտյան նիստ.



[526] Հայերէն բացատրական բառարան, հ. երրորդ, էջ 9:

ՀԱՆԳԻՍՏ ՅԱԿՈՎՔ ՔԼԱՀԱՆԼԱՅԻ ՏԷՐ-ՄԼԱՐՏԻՐՈՍԵԱՆ / ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ։

Տապանագիրը նախ և առաջ վկայում է, որ ԺԹ. դարավերջին եկեղեցին գործում էր և հոգևոր հովիվ ուներ։ Ննջեցյալը ծագումով Ալափարսից Տ. Հակոբ քհն. Տեր-Գրիգորյանցն է։ Ալափարս գյուղը (հայտնի նաև Ալաբեր, Աղբերց և այլ անվանաձևերով) ներկայիս ՀՀ Կոտայքի մարզի նշանավոր բնակավայրերից է, որտեղ պահպանվել է 901 թ. կառուցված Ս. Վարդան Ջորավար (հայտնի նաև՝ Ծիրանավոր վանք) եկեղեցին[527]։ Տապանագրի համաձայն՝ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Հակոբը վայելել է բարեպաշտ ժողովրդի սերն ու հարգանքը և աչքի ընկել իր «պաշտաման», այսինքն՝ հոգևոր ծառայության մեջ։ Հայաստանի ազգային արխիվում պահպանվել են Տ. Մարտիրոսի որդի Տ. Հակոբ քահանա Տեր-Գրիգորյանի ծառայողական ցուցակը և մի քանի այլ ուշագրավ վավերագրեր։ Պարզվում է, որ Գևորգ Դ. կաթողիկոսի բանավոր հրամանով Աշտարակի Ս. Ամենափրկիչ եկեղեցում Տ. Պետրոս արք. Վեհապետյանի կողմից նա քահանա է ձեռնադրվել և 1879 թ. մայիսի 8-ին սպասավորության կոչվել Ալափարսի Ս. Վարդան եկեղեցում, որը վավերացրել է Ս. Էջմիածնի Սինոդը՝ նույն տարվա սեպտեմբերի 25-ին (Հմր 2563)։ Երևանի թեմական հոգևոր ատյանի 1889 թ. նոյեմբերի 30-ի Հմր 4862 հրամանի համաձայն՝ Տ. Հակոբ քահանան կարգվել է Երևանի Հայոց թեմի հոգևորականների «որբոց եւ այրեաց» հոգաբարձության անդամ ու վարել իր պաշտոնն ամենայն հավատարմությամբ։ 1895/6 թթ. ուսումնական տարում հանձն է առել առանց վարձատրության կրոնի ուսուցչի պաշտոն զբաղեցնել Երևանի դպրոցներից մեկում։ Ունեցել է երկու զավակ՝ Աշխենը և Գեղամը[528]։

Ուշագրավ է, որ Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու հավատավոր ժողովրդի սերն ու համակրանքը վայելող Տ. Հակոբ քահանային Մկրտիչ Խրիմյան Ամենայն Հայոց կաթողիկոսը 1896 թ. հուլիսի 19 թվակիր հրամանագրով միջնորդում է խրախուսել և շնորհել կամիլավկա կոչվող անվանական գլխարկ և լանջախաչ[529]։ Պահպանված մեկ այլ վավերագրի համաձայն՝ շնորհավորական խոսք է հղվում Տ. Հակոբ քահանային, որն այսուհետ կրելու է ոսկեզոծ լանջախաչ՝ իբրև նշան պարծանաց սուրբ Խաչի, որն առաջնորդելու է արժանապատիվ տեր հորն իր բոլոր աստվածահաճո գործերում[530]։

Մեզ է հասել այս անգամ արդեն Տ. Հակոբ քահանայի 1894 թ. հոկտեմբերի 15 թվակիր նամակն ուղղված Երևանի վիճակային հոգևոր ատյանին առ այն, որ յոթանասունութ տարեկան հասակում վախճանվել է Ս. Ջորավոր եկեղեցու ծխատեր Տ. Պողոս ավագ քհն. Այվազյանն ու թաղվել քաղաքի գերեզմանոցում (թերևս Կոզեռնում), ուստի որդին ցանկանում է յոթօրյա կարգ անել, ինչի համար խնդրում է համապատասխան հրաման շնորհել[531]։

14. ՏԱՊԱՆԱԳԻՐ. ուղղանկյուն օրորոցաձև (1,30 x 0,57 x 0,46 մ, պատվանդանը՝ 1,48 x 0,85 x 0,20 մ), նախորդի հարևանությամբ, արձանագիր են հարավային և հյուսիսային նիստերը, արևմտյան նիստին ունի ելնդավոր փառապսակ, քարի երեսին՝ խաչաքանդակ, գիրը՝ Յ-ական տող.

---

[527] **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան,** Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 69։

[528] ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 175, թ. 52, 54։

[529] ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 175, թ. 49։

[530] ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 175, թ. 50։

[531] ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 134, թ. 52։

Հարավային նիստին.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆՆ ԱԼԱՓԱՐՍ ԳԻՒ⸢ԱՅԻ⸣ / ԵՐԵԻԱՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ ՀԱՆԳՈՒ⸢ՅԵԱԼ⸣ / ՆԻԿԱԼԱՅ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ։

Հյուսիսային նիստին.



ՇՆԵԱԼ Է ԱԼԱՓԱՐՍ ԳԻՒՂՈՒՄ 1891 ԹԻՒՆ, ՕԳՈՍՏՈՍԻ 10-ԻՆ, ՎԱԽՃԱՆԵԱԼ Է ԵՐԷԻԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ, 1918 ԹԻՒՆ, ՕԳՈՍՏՈՍԻ 7-ԻՆ։

Ազգանվան և տեղանվան ընդհանրությունները թույլ են տալիս հավաստել, որ ննջեցյալը նախորդ տապանագրում հիշատակված տեր Հակոբի ազգականն է՝ վաղամեռիկ Նիկոլայ Տեր-Գրիգորյանցը։ Վերջինս Երևանում զբաղվել է վաճառականությամբ։ Պետք է ենթադրել, որ նա պարբերաբար միջոցներ է տրամադրել եկեղեցու բարեզարդման և այլ կարիքների համար, ըստ այդմ պատիվ է ունեցել թաղվելու եկեղեցու բակում։

Նշենք, որ Տեր-Գրիգորյանները Երևանի բավական ազդեցիկ գերդաստաններից են եղել։ Նրանք մեծ ավանդ ունեն քաղաքի ջրամատակարարման, ջրաբաշխիչ համակարգերի անցկացման գործում, որում մեծ է հատկապես գրող, հասարակական գործիչ Էմին Տեր-Գրիգորյանի դերը, որը 1912 թ. իր իսկ ջանքերով խողովակներով ջուր է բերել Երևան[532]։ Հավանական է, որ այս նշանավոր գերդաստանի ներկայացուցիչներն են նաև վերոհիշյալ ննջեցյալները, որոնք ևս իրենց գործով խթանել են քաղաքի ու նրա հոգևոր կենտրոնների բարգավաճմանը։

Տապանաքարեր են պահպանվել նաև եկեղեցու նախասրահի աջ կողմում[533]։ Մարմարյա զույգ փոքրաչափ տապանաքարերն արձանագիր են, սակայն մակերեսի խիստ եղծված լինելու պատճառով հնարավոր եղավ ընթերցել միայն որոշ հատվածներ ու առանձին տառեր։ Նկատառելով արձանագրությունների եղծված լինելը՝ նպատակահարմար գտանք հնարավոր վերծանությունից զատ ներկայացնել միայն լուսանկարները։

15ա. ՏԱՊԱՆԱՔԱՐ. *(0,41 × 0,20 մ) ուղղանկյունաձև, մարմարյա սալի մակերեսը վնասված է, գիրը՝ կիսաեղծ, 11 տող.*

1. ...ԱԻՄԱ ՆՈՅՆ Ս⸤Ո⸥ՂՕՄՕՆ
2. ԱՀԱՐ...ՇՕՇՏԱՐԿԱՏԱՐ...
3. Է ԱՄԵՆ...ՆՈՐՕՆԻՆ
4. ՀԱՐԿ ՎԱՐ...Ա...Կ
5. ՆՐՏ...Կ...ԻՆ
6. ՄԱՐՍ...
7. ...
8. ՈՀ ՄԻՎ...ԷՆԴ...
9. ՈՎ ՀԱՆԴԻՊՕՂՔ ՏՈՒՔ ՈՂ⸢ՈՐՄԻ⸣
10. Ա̅Տ̅ ԵԻ ՁԵՋ ՈՂՈՐՄԵՍՑ⸢Ի⸣
11. ⸢18⸣27 ԱՄԻ Տ̅Ն̅, ՕԳ⸤ՈՍՏՈ⸥Ս 12։

15բ. ՏԱՊԱՆԱՔԱՐ. *ուղղանկյունաձև, մարմարյա սալի մակերեսը վնասված է, գիրը՝ կիսաեղծ, 11 տող.*

1. ...ԱՍՏ ՆՈՅՆ Ս⸤Ո⸥ՂՈՄՕ⸢Ն⸣
2. ԱՀԱՐ...ՇՈՇՏԱՐԿԱ...
3. ...ԱՄԵՆ...ՆՈՐՕՆ...

[532] **Ս. Վարդանյան**, Հայաստանի մայրաքաղաքները, էջ 223։

[533] Եկեղեցու հին լուսանկարների զննումը պարզում է, որ սրահում նախկինում տապանաքարեր չեն եղել։ Թերևս, այդ փոքր տապանաքարերը հետագա նորոգումների ժամանակ են բակից տեղափոխվել սրահ՝ օգտագործվելով որպես սալաքար։

4. ՀԱՐԿ ՎԱՐ...Ա...
5. ...Տ...Դ
6. ՄԱՐՍ...
7. ...Ե...Ո,,,
8. ՈՀ ՄԻՎՆ...Ր...Դ...
9. ⌈Ո⌉Վ ՀԱՆԴ⌈ԻՊՕՂՔ ՏՈՒ⌉Ք ՈՂ⌊ՈՐՄԻ⌋
10. ԱՇ ԵՒ ⌈Ջ⌉ԵՋ ՈՂՈՐՄԵՍՑ⌈Ի⌉
11. ⌈1⌉827 ԱՄԻ ՏՆ, ՕԳ⌊ՈՍՏՈ⌋Ս ⌈12⌉:

Ակնհայտ է, որ տապանագրերը նույնաբովանդակ են և յուրաքանչյուր տող կրկնում է նախորդ տապանագրի համապատասխան տողը: Այս հանգամանքը հուշում է, որ մարմարյա սալաքարերը միևնույն գերեզմանական կառույցինն են և նախապես ագուցված են եղել, թերևս, նրա վերադիր (ուղղահայաց) և ստորին (հորիզոնական) մասերին: Դատելով տապանագրի ընթեռնելի տողերից՝ ննջեցյալն, ըստ էության, Սողոմոնն է, որը կյանքից հեռացել է 1827 թ. օգոստոսի 12-ին: Նրա հոգու փրկության համար ընթերցողներից Աստծուց ողորմություն է հայցվում, որն անպայմանորեն պետք է փոխհատուցվի: Տապանագիրը տվյալ դարաշրջանին հատուկ վիմագիր բանաստեղծություն է, որն իր հանգավոր տողերում ննջեցյալին ուղղված այլ մանրամասներ է պարունակում, որոնց մեկնաբանությունից զերծ ենք մնում՝ անհարկի ենթադրություններից խուսափելու պատճառով:

* * *

Ինչպես վերը նշեցինք, Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու գավիթ-նախասրահի ներքին հարդարման համար եկեղեցու արևմտյան պատի շարվածքում՝ մուտքից աջ և ձախ, օգտագործվել են ԺԶ—ԺԷ. դդ. հարթազատ խաչքարեր, որոնց գտնվելու նախնական վայրն անհայտ է: Կոթողներն աչքի են ընկնում նշված դարաշրջաններին հատուկ քանդակային արվեստի կատարելությամբ. հորինվածքի կենտրոնում խորադիր հիմնախաչն է՝ եռաբողբոջ վերջավորությամբ խաչաթևերով, խորանից դուրս ևս մի քանի խաչեր ու բուսաերկրաչափական զարդաքանդակներ են պատկերված, որոնք իրենց ընդհանրության մեջ լրացնում ու հագեցնում են խաչասալի ողջ մակերեսը: Խաչքարերի քիվերը, որոնք հաճախ արձանագիր են լինում, ամենայն հավանականությամբ ագուցման հետևանքով դաժանաբար հատվել են: Խաչախորանների վերնամասում պահպանվել են միատող արձանագրություններ, առաջինը ելնդագիր, երկրորդը՝ փորագիր.

16. ԽԱՉԿԱՐ. *(1,11 x 0,66 մ) ագուցված եկեղեցու արևմտյան պատին՝ նախասրահի մեջ, մուտքից ձախ, հիմնախաչի խորանի վերնամասի երկու կողմում ունի միատող ելնդատառ արձանագրություն.*



ՅՈՎԱ⌈ՆԷ⌉Ս ԿԱՋՄ⌈ՈՂ⌉:

Հիշատակված է խաչքարագործ վարպետի անունը, որը չնայած կիսաեղծ, բայց

ընթեռնելի է: Խաչքարի քանդակային հարդարատարրերից դատելով՝ այն բնորոշ է ԺԶ–ԺԷ. դդ.: Վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը հիշատակում է ԺԶ. դարի առաջին կեսին ստեղծագործած ոմն «շնորհալի վարպետ» Հովհաննես կազմողի, որի կերտած զույգ խաչքարերն ագուցված են ՀՀ Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր գյուղի Ս. Խաչ եկեղեցու արևմտյան պատին՝ մուտքի երկու կողմում: Խաչքարերից մեկը Հայոց ՋՂԱ. (1542) թվականից է և կանգնեցվել է տանուտեր Սարգսի բարեխոսության, իսկ մյուսը ստեղծվել է Հայոց Ռ. (1551) թվականին, Համազիզ աղայի կողմից իր եղբայր Սարգիս աղայի հոգու փրկության համար[534]: Նշված խաչքարերի քանդակային մի շարք մանրամասներ (խաչաթևերի եռաբողբոջ վերջավորություն, մակերեսի բուսաերկրաչափական խիտ հարդարանք, եզրերում ութանկյուն աստղազարդեր և այլն), ինչպես նաև ելնդատառ արձանագրությունների հնագրական ոճը բավական ընդհանրություններ ունեն Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու խնդրո առարկա խաչքարի հետ, ըստ այդմ հակված ենք այն վերագրել միևնույն «Լանջաղբյուրցի» Հովհաննես քարգործին:

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի գյուղի ԺԹ. դարին բնորոշ Ս. Գևորգ (հայտնի նաև Ս. Աստվածածին անունով) եկեղեցու որմերի արտաքին շարվածքում, իբրև շինաքար, օգտագործվել են ԺԵ–ԺԶ. դդ. մի քանի գեղաքանդակ խաչքարեր, որոնցից մեկը ոչ միայն իր քանդակային արվեստի հնչեղությամբ հիշեցնում է Ջորավոր Ս. Աստվածածնի վերոնշյալ խաչքարը, այլև հիմնախորանի վերին երկու կողմում դարձյալ ելնդագրով վավերացնում է Հովհաննես կազմողի (ՅՈՎԱՆԷՍ ԿԱԶՄՈՂՍ) անունը[535]: Նկատի ունենալով նշված ընդհանրությունները՝ կարծում ենք, որ այս խաչքարը ևս միևնույն Հովհաննեսի ձեռակերտն է, որի գործունեության աշխարհագրական սահմաններն, ըստ էության, բավական ընդարձակ են եղել:

17. ԽԱՉՔԱՐ. *(1,02 x 0,60 մ) ագուցված եկեղեցու արևմտյան պատին՝ նախասրահի մեջ, մուտքից աջ, հիմնախաչի վերնամասի երկու կողմում ունի միատող փորագիր արձանագրություն.*



ՐԱՆԲԱԲԻՆ, ՀՈՒԻՄՍԻՄԼԻՆ:

[534] **Ս. Բարխուդարյան,** Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 157, 193, արձ. 59, 60, նկ. 75, 76: Լանջաղբյուրի զույգ խաչքարերի վիմագրերը տե՛ս նաև Դիվան հայ վիմագրության (այսուհետ՝ ԴՀՎ), պրակ IV, Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, կազմեց՝ **Ս. Բարխուդարյան**, Երևան, 1973, էջ 107, արձ. 432, 433: Հովհաննես քարգործի՝ ԺՋ. դարին բնորոշ մի խաչքար էլ ագուցված է Քանաքեռի Ս. Աստվածածին եկեղեցու ներսում՝ մուտքից հյուսիս (տե՛ս **Կ. Դաֆիադարյան,** Երևան, էջ 222, արձ. 274):

[535] **Ս. Կարապետյան,** Նորգյուղ և Մայակովսկի գյուղերի պատմական հուշարձանները, Երևան, 2014, էջ 14, լսնկ. տե՛ս էջ 11:

Խաչքարն, ըստ ամենայնի, կերտվել է նշված անձանց հիշատակին: Ժամանակամերձ է նախորդին: Եթե երկրորդ անձնանունը հստակ ընթեռնելի Հոռոմսիմ (Հռիփսիմե) անվան Հռոմսիմ տարբերակն է, ապա առաջինի սկզբնատառը, որը խանբաբ ընթերցման դեպքում պետք է Խ-ն լինի, պետք է որ խաչքարային հիշատակագրություններին բնորոշ «Սբ. խաչս բարեխաւս է» ձևակերպման հետ մնացած լինի ոչնչացված քիվի վրա: Այդուհանդերձ, չենք բացառում նաև անձնանվանը հաջորդող բաբա (հայր, պապ) բառի հիշատակությունը: Օրինակ, Խոր Վիրապի վանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վիմագրերից մեկում հիշատակված է եկեղեցիների շինարարական աշխատանքների վերակացու, երևանցի Հակոբջանի որդի Օհան բաբան[536]: Վերջինիս երևանցի լինելու փաստը ևս չի բացառում այն, որ քննվող խաչքարի վիմագրում վկայված է միևնույն անձը: Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում է թաղված դարձյալ իբրև բաբայ հիշատակված ոմն մահտեսի Պողոս, որն ըստ 1691 թվակիր տապանագրի՝ ինչ-որ պաշտոն է զբաղեցրել Եղիազար Այնթապցի կաթողիկոսի օրոք[537]:

Եկեղեցու 1974 թ. նորոգման ու բարեկարգման աշխատանքների ընթացքում՝ որմերի ներքին ծեփը հեռացնելիս, պատերի շարվածքում ի հայտ են եկել կրկնակի օգտագործման շինաքարեր, որոշներն՝ արձանագիր: Տառաձևերի հնագրական առանձնահատկություններից դատելով՝ դրանք մերձ են միջնադարի զարգացած և ուշ շրջափուլերին: Շինաքարերը, թերևս, պատկանել են Ս. Անանիա առաքյալի անապատի՝ 1679 թ. մեծ երկրաշարժից խոնարհված եկեղեցուն, որի տեղում հետագայում խոջա Փանոսը նախաձեռնել է ներկայիս եկեղեցու շինարարությունը՝ շարվածքում օգտագործելով հին շինաքարեր: Ստորև վկայակոչում ենք նշված քարերի վիմագրերը, որոնք հրատարակվում են առաջին անգամ.

18. ԱՐՁԱՆԱԳԻՐ ՔԱՐ. *(0,52 x 0,52 մ) հնգատող արձանագրությունը կրող քարը կողաշրջված դիրքով օգտագործված է եկեղեցու արևմտյան պատի շարվածքում՝ ներքուստ, մուտքից ձախ: Ժամանակագրորեն վաղագույն՝ ԺԹ—ԺՒ. դդ. հարազատ վիմագրից քիչ բան է պահպանվել, տառաձևերը ժամանակի դասական վիմագրության օրինակներից են՝ փորագրված հմուտ գրչի ձեռքով:*



... ԵԻ ԵՂԲԱ⸢ՅՐ⸣...
... ⸢Ա⸣ՅԳԻՍ ԲՈԼՈՐ ՀԱՍ ՌՃ...
... ԻՆՁ, ՍՊԱՍԱՒՈՐՔՍ...
...ԱՍԻՆ, ։Ա։ (1) ԽԱՉԷՐ...
...Ս ։Ա։ (1) ՃՈՒՃԻՆ, ։Ա։ (1) Ս...

Վերծանությունից ենթադրելի է, որ արձանագրությունն ունի նվիրատվական բնույթ, ուր, ըստ ամենայնի, վկայված է այգու հաս տերմինը, որը բացատրվում է հասույթ, եկամուտ, բաժին, ինչպես նաև հարկ և տուրք իմաստներով[538]: Հասկանալի է, որ արձանագրված «գործարքը» վերաբերում

[536] **Ա. Հարությունյան,** Խոր Վիրապ, էջ 105, արձ. 11:

[537] Նույնի Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, էջ 143, արձ. 189:

[538] **Ռ. Ղազարյան,** Գրաբարի բառարան, հ. Բ., Երևան, 2000, էջ 41:

է հիշատակված այգու բոլոր, այսինքն՝ ամբողջական հասին կամ հասույթին, որը, թերևս, իբրև տուրք հատկացվել է տվյալ հոգևոր կենտրոնին: Բացառված չէ, որ հան իբրև հարկատեսակ գործածվել է զեղչման կամ ապահարկման իմաստով, ինչը քիչ հավանական ենք համարում: Հարցին առավել հիմնավոր պատասխան տալու համար տեսնենք, թե խնդրի առնչությամբ ինչ դիտարկումներ են կատարել նախորդ ուսումնասիրողները: Հայագետ Թադևոս Ավդալբեգյանը Հայաստանի տնտեսական-հարկային տերմիններից «հաս», «սակ» և «բաժ» բառերի իմաստային պարզաբանմանը նվիրված հոդվածում չի հիմնավորում հաս-ն իբրև հողահարկ նշանակությունն ունենալու ակադ. Հակոբ Մանանդյանի տեսակետը: Վերջինս հաս-ն ուղղակի հողահարկ չի համարում՝ կարծելով, որ այն գործածական է եղել Հայաստանում «...կամ ուղղակի հարկերի ընդհանուր նշանակությամբ կամ, մասնավորապես, հողային հարկի իմաստով»[539] և իբրև օրինակ վկայակոչում է Անիի Ս. Փրկիչ (Աբլղարիբ Պահլավունու) եկեղեցու 1036 թ. Պետրոս Ա. Գետադարձ (1019—1058) կաթողիկոսի նվիրատվական արձանագրությունը[540], որտեղ հաս-ն ընկալվում է այգուց գանձված հարկի իմաստով, ինչպես խնդրո առարկա վիմագրում: Իր երկրորդ տեսակետին, ըստ էության, Հ. Մանանդյանը հանգել է ոչ միայն աղբյուրագիտական քննությամբ, այլ նաև Նիկողայոս Ադոնցի տեսությանը հետևելով, որը հայկական հաս-ը համապատասխանեցնում է պարսկական բաժ-ին՝ այն բացատրելով իբրև հողային հարկ[541]:

Սուրբ Գրքից, Կանոնագրքից և Մխիթար Գոշի Դատաստանագրքից քաղված բազմաթիվ օրինակների հիմամբ՝ Թ. Ավդալբեգյանն այն համոզմունքն է հայտնում, որ հաս-ն ի մասնավորի՝ կրոնական հարկն ու տուրքն է, լայն իմաստով՝ հարկը, որն իր մեջ ներառում է այլ հարկեր ևս[542]: Իբրև օրինակ՝ Թ. Ավդալբեգյանը հիշատակում է Դվինի ժողովի Թ. կանոնը, որը վերաբերում է դեռևս Ս. Գրիգոր Լուսավորչի և Ս. Տրդատ Մեծի ժամանակներից գործած եկեղեցու և հոգևորականների ապահարկությանը: Այն մասամբ վերացվել է միայն մարզպանական շրջանում, քանի որ նրանք ևս պարտավոր էին հարկ տալու, բայց «միայն զհասն տալ յարքունիս»[543]: Կանոնի ահա այս կառույցն է քննության առել Թ. Ավդալբեգյանը, որը Մխիթար Գոշի Դատաստանագրքում վկայված է «միայն զհարկան տային յարքունիսն»[544] ձևով, կարծես բացատրելով բառիս իմաստը, բայց երբեք չմասնավորեցնելով հարկատեսակը:

Խնդրո առարկա վիմագրում, կարծում ենք՝ բառիս իմաստային նշանակությունը ավելի քան պարզ է, քանի որ այն վերաբերում է այգուն, այսինքն՝ նրանից ստացված հասույթին, որն իբրև հարկ, թերևս, նվիրաբերվել է վանքին: Վիմագրի ՀԱՍ բառին հաջորդող Ռճ գրերի առկայությունը թույլ է տալիս կարծել, որ այն վերաբերում է նշված հասի չափին (=1100): Նվիրաբերման

---

[539] **Հ. Մանանդյան,** Երկեր, հ. Դ., Երևան, 1981, էջ 99:

[540] ԴՀՎ, պրակ I, Անի քաղաք, կազմեց՝ **Հ. Ա. Օրբելի,** Երևան, 1966, էջ 48, արձ. 135:

[541] **Ն. Ադոնց,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 539:

[542] **Թ. Ավդալբեգյան,** Հաս, Սակ, Բաժ (Հայաստանի տնտեսական զարգացման պատմության խնդիրների շուրջը), «Հայագիտական հետազոտություններ», Երևան, 1969, էջ 371—375:

[543] Կանոնագիրք Հայոց, հ. Բ., աշխատասիրությամբ **Վ. Հակոբյանի,** Երևան, 1971, էջ 209, գլ. ԼԸ.:

[544] **Մխիթար Գոշ,** Գիրք Դատաստանի, աշխատ.՝ **Խ. Թորոսյանի,** Երևան, 1975, էջ 120, գլ. ՄԸ.: Հաս-ի վերաբերյալ տե՛ս նույնի՝ գլ. ճՁ. Յաղագս դատաստանաց հասից ի ժողովրդենէ քահանայից, էջ 78:

դիմաց վանքի սպասավորները նվիրատուներին պատարագներ են հատկացրել, մեկը՝ Խաչերին, մեկը՝ Ճուճին, իսկ մյուսի կամ մյուսների ստացողների անունները չեն պահպանվել: Ճուճ անձնանվան գործածություն մեզ այլուստ չի հանդիպել: Հր. Աճառյանը հիշատակում է այս անվան Ճուճայ տարբերակը[545], որն, ըստ էության, Ճուճ-ի սեռական հոլովաձևն է:

Կարծում ենք՝ արձանագրությունը կրող քարը պատկանել է Ս. Աննանիա առաքյալի անվանակիր նախկին եկեղեցուն, որը ավերակների վերածեց 1679 թ. մեծ երկրաշարժը: Արձանագրության՝ ԺԹ–ԺԴ. դդ. թվագրումը թույլ է տալիս առնվազն այդ ժամանակաշրջանին վերագրել նաև նախկին եկեղեցու կառուցումը: Ինչ վերաբերում է վիմագրում հիշատակված այգուն, ապա, ըստ ամենայնի, այն գտնվելիս է եղել հենց Երևանում, քանի որ դեռևս Թ–Ժ. դդ. վիմագրերում արդեն իսկ վկայաբերվում են Երևանի այգիներն ու դրանց նվիրատվությունները տարբեր հոգևոր կենտրոններին[546]: Այդօրինակ վաղագույն հիշատակություններից մեկը, որն առաջին անգամ հրատարակել է Լևոն Մելիքսեթ-Բեկը, պահպանվել է Սևանավանքում. Սյունյաց Մարիամ իշխանուհու 874 թվակիր շինարարական-նվիրատվական վիմագրում վկայված է Ս. Առաքելոց եկեղեցու շինարարության փաստը, ապա թվարկվում են Աշոտ իշխանաց իշխանի միաբանությամբ վանքին իբրև վախմ (սեփականություն) արված նվիրատվությունները, որոնց թվում՝ «...այգի ի Գառնի եւ յԵրևան...»[547], կամ Մաքենյաց վանքի Թ. դարավերջի և ներկայումս մասնակի պահպանված վիմագրում գլխավոր Ս. Աստվածածին եկեղեցին կառուցած Սուփան իշխանն այս հոգևոր կենտրոնին արված նվիրատվությունների շարքում վկայակոչում է նաև «...ե. (5) այգի յԵրևան եւ Շ. (500) առու այգի ի գիւղաքաղաքն Գառնի...»[548]: Երևանի այգիների նվիրատվությունները հաճախադեպ են նաև ԺԲ–ԺԳ. դդ. վիմագրերում, որպիսիք հայտնի են Հավուց Թառից, Հառիճավանքից, Կեչառիսից, Հաղարծինից, Ուշիից, Անիի Ս. Գրիգոր կամ մեկենաս Տիգրան Հոնենցի անունով հայտնի եկեղեցուց և այլ հուշարձաններից: Իբրև օրինակ վկայակոչենք Հառիճավանքի վիմագրերից մեկը, համաձայն որի՝ Զաքարե ամիրսպասալարը 1201 թ. նախկին տերերից գնել է վանքը, կառուցել ամրոց ու կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցին, զարդարել ու հարստացրել եկեղեցական սպասքով, սրբություններով և նվիրաբերել

---

[545] Անձնանունների բառարան, հ. Գ., էջ 159:

[546] **Ա. Միրզոյան,** Հին Երևանի պատմությունից (հին ժամանակներից մինչև 16-րդ դարը), Երևան, 1957, էջ 58–60:

[547] Այս արձանագրությունը 1924 թ. հայտնաբերել և 1938 թ. հրատարակել է Լ. Մելիքսեթ-Բեկը՝ նախ ռուսերեն, ապա հայերեն լեզվով (**Л. Меликсет-Беков,** Новооткрытая надпись на Севане от 874 г., «Памяти академика Н. Я. Марра (1864–1934)», М–Л, 1938, с. 413, հայերեն վերահրատարակությունը տե՛ս **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Երևանի հիշատակությունը Սևանի 874 թ. արձանագրության մեջ, Պատմաբանասիրական պրպտումներ, աշխատասիրությամբ **Պ. Մուրադյանի,** Ս. Էջմիածին, 2010, էջ 374): Արձանագրությանը հետագայում անդրադարձել է նաև Կարո Ղաֆադարյանը (**Կ. Ղաֆադարյան,** Հայկական գրի սկզբնական տեսակները, «Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության», Գիտական ժառանգություն, հ. 5, Երևան, 2007, էջ 165, ծան. 2): Արձանագրության բովանդակությունն, ըստ էության, ծանոթ է եղել նաև Սյունյաց պատմագիր Ստեփանոս Օրբելյանին, որն իր Պատմության էջերում հիշատակում է Մարիամ իշխանուհու իրականացրած 874 թ. շինարարական աշխատանքները Սևանա կղզում, ապա վկայաբերում նորակառույց վանքին հատկացրած անշարժ գույքը՝ այդ թվում այգիներ Գառնիից և Երևանից (**Ստեփաննոս Օրբէլեան,** Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 174, գլ. ԼԷ. [37])

[548] ԴՀՎ, պրակ IV, էջ 290, ծան. 1209:

անշարժ գույք, այդ թվում՝ «...այգի մի յԵրևան եւ այգի մի ի Թալին...»[549]*: Վիմական վավերագրերը պարզում են, որ միջնադարում Երևանը հռչակված է եղել իր խաղողի և պտղատու այլ այգիներով, որի շնորհիվ երկրի ունևոր խավը վանքերին արված նվիրատվությունների կազմում շատ հաճախ Երևանից նաև այգիներ է գնել, նվիրաբերել ու դրանց դիմաց պատարագներ ստացել:*

19. ԱՐՁԱՆԱԳԻՐ ԽԱՉԱՔԱՆԴԱԿ ՔԱՐ. (0,48 x 0,31 մ) օգտագործված եկեղեցու հարավային պատի ստորին շարվածքում՝ ներքուստ, աջակողմյան ավանդատան մուտքի մոտ: Մասնակի պահպանված երեք խաչաքանդակների վերնամասում երկտող վիմագիրն է, իսկ առաջին խաչի հորիզոնական թևերի վերևում, թերևս, թվականը:



ՍԲ ⌈Խ⌉ԱՉՍ ԱԿՈՐԻՆ ԵՒ / ԱՄՈՒՍԻՆ ԹՈՒԽԹԱՐ⌈ԻՆ⌉ / ՉԼ. (1281):

Չնայած նրան, որ տառերի հնագրությունն այնքան էլ բնորոշ չէ ԺԳ. դարի վիմագրերին, այդուհանդերձ քարի ձախակողմում պահպանված ՉԼ. գլխատառերի առկայությունը, կարծում ենք, թվականից բացի այլ նպատակով գործածված լինել չէր կարող:

Վիմագրում վկայակոչված անձինք, ըստ էության, այցելու-նվիրատուներ են, որոնց անունով նախկին եկեղեցու պատին խաչեր են քանդակել ու արձանագրություն կազմել: Մ. Հասրաթյանը եկեղեցու պատերին խաչեր քանդակելու երևույթը համարում է շինարարության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուր, երբ խաչեր փորագրելու իրավունքի համար պատվիրատուն եկեղեցուն գումար է վճարել, ինչպես որ Ագուլիսի Ս. Քրիստափոր եկեղեցու դեպքում է[550]*: Թուխթամ կամ Թուխթար (քանի որ Ա և Ր-Մ տառերը կցագիր են) անձնանուն այլուստ մեզ հայտնի չէ: Հր. Աճառյանը հիշատակում է Թուխթան, Թուխթանգ, Թուխթենի պարսկական ծագմամբ իգական անվանաձևերը, որոնց վկայությունները մեզանում հաճախադեպ են ԺԳ–ԺԷ. դդ.*[551]*: ՄՄ Ձ*[մր]* 6322 ձեռագրի ԺԷ. դարին բնորոշ հետագայի հիշատակարաններից մեկում կարդում ենք Թուղթար անվանաձևը*[552]*: Վիմագրերում հիշատակված են հատկապես ԺԳ–ԺԴ. դդ., օրինակ՝ ոմն Գոնցա Շահուռնեցու մերձավոր Թուխթան երկիցս հիշատակված է Վայոց ձորի 1345 թվակիր վիմագրերում. Հերհեր գյուղի Ս. Սիոն վանքի Ս. Աստվածածին եկեղեցու նվիրատվական վիմագրերից մեկում նվիրատվության դիմաց Թուխթան երկու պատարագ է ստացել*[553]*, կամ Նորավանքի գավթի վիմագրերից մեկի համաձայն՝*

[549] ԴՀՎ, պրակ X, Շիրակի մարզ, կազմեց **Ս. Բարխուդարյան,** Երևան, 2017, էջ 45, արձ. 50: Երևանից այգու նվիրաբերման մասին է վկայում միևնույն վանքի 1224 թվակիր ևս մի վիմագիր. տե՛ս նույն տեղում, էջ 53, արձ. 67:

[550] **Մ. Հասրաթեան,** Հայաստանում ուշ միջնադարում շինարարական գործի կազմակերպումը, էջ 213:

[551] Անձնանունների բառարան, հ. Բ., Երևան, 1944, էջ 367:

[552] ՄՄ ձեռ. Ձ[մր] 6322, 245բ:

[553] ԴՀՎ, պրակ III, Վայոց ձոր. Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմեց՝ **Ս. Բարխուդարյան,** Երևան, 1967, էջ 56, արձ. 148:

դարձյալ Հասանի թոռ Գոնցան, միաբանելով սուրբ ուխտին, այգի է նվիրաբերել, որի դիմաց պատարագ է ստացել նաև նրա մերձավոր Թուխթան՝ մեկ պատարագ Հայտնության տոնին[554]: Վիմագրական հիշատակություններից մեկն էլ Թուխթանգ անվանաձևով վկայված է Հաղբատավանքում. գավիթ-ժամատան արևմտյան պատի ԺԹ. դարին բնորոշ մի վիմագրում հիշատակված են վանքի Ս. Նշան եկեղեցուն միաբանած (անդամակցած, ինչ-որ նվիրատվություն արած) Գերգը և իր ծնողները՝ Սարգիսը և Թուխթանգը, ովքեր պատարագ են ստացել Ս. Սարգսի տոնին՝ Բարեկենդանի շաբաթ օրը[555]: Վկայակոչված ԺԹ–ԺԹ. դդ. վիմագրական օրինակներն ինքնին հիմնավորում են խնդրո առարկա արձանագրության՝ ԺԹ. դարին բնորոշ լինելու հանգամանքը:

20. ԱՐՁԱՆԱԳԻՐ ԽԱՉԱՔԱՆԴԱԿ ՔԱՐ. *(0,57 x 0,41 մ) օգտագործված ավագ խորանի աջակողմյան որմի շարվածքում, գիրը՝ վերին ուղղահայաց խաչաթևի երկու կողմում, տեղ-տեղ վնասված, 3 տող.*



ԽԱՉ ԶԻԽԱԹՈՒՆԻՆ, ՓԱՇԱ...ԻՆ:

Ըստ տառաձևերի հնագրական և խաչաքանդակների ոճական առանձնահատկության՝ վիմագիրը բնորոշ է ԺՉ–ԺԷ. դդ.: Ենթադրելի է, որ մինչ մեծ երկրաշարժը կանգուն եկեղեցու պատի քարերից է, որի վրա պահպանված խաչերը ձոնված են եղել եկեղեցու այցելու-նվիրատուներին: Անձնանուններից առաջինը կարդում ենք Զիխաթուն, քանի որ երկրորդ տողում հատակ ընթեռնելի են ԽԱԹ...ՆԻՆ տառերը, որին նախորդում են առաջին տողի վերջին Չ և երկրորդ տողի սկզբնատառ փոքր Ի-ն: ԶԻԽԱԹՈՒՆ իգական անձնանուն Հր. Աճառյանը հիշատակում է ընդամենը մեկ անգամ, որը հանդիպել է Վասպուրականի ձեռագրացուցակի մի անթվական հիշատակարանում[556]:

Անձնանուններից երկրորդի առաջին բաղադրիչը ՓԱՇԱ բառն է: Այսօրինակ սկսվածքով անձնանունները մեզանում հաճախ են հանդիպում: Հր. Աճառյանը հիշատակում է Փաշաբէգ, Փաշախաթուն, Փաշամելիք, Փաշաջան անվանաձևերը[557]: Քննվող վիմագրում պահպանվել են բառիս ՓԱՇԱ և վերջին ԻՆ գրերը, միջանկյալ մոտ երեք տառ եղծված է: Կարծում ենք՝ աղոտ նշմարելի ելուստներից դատելով՝ այս անձնանունը, թերևս, պետք է կարդալ ՓԱՇԱԲԷԳ:

21. ԽԱՉԱՔԱՆԴԱԿ ԱՐՁԱՆԱԳԻՐ ՔԱՐ. *(0,44 x 0,42 մ) դրված եկեղեցու բակում, Ս. Աննանիա առաքյալի մատուռի հյուսիսային կողմում, նախնական տեղն անհայտ է: Խաչաթևերի միջնամասերում առկա է անկանոն գրչությամբ արձանագրություն.*

---

554 Նույն տեղում, էջ 223, արձ. 707:

555 ԴՀՎ, պրակ IX, Լոռու մարզ, կազմեցին՝ **Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան,** Երևան, 2012, էջ 150, արձ. 268:

556 Անձնանունների բառարան, հ. Բ., էջ 208:

557 Նույնի հ. Ե., Երևան, 1962, էջ 187–189:



ՀՋԱ]ԼԱԼԻՆ, ԷՎԱՆ/ԷՍԻՆ։

Քարի ձախակողմյան հատվածը վնասված է, ինչի հետևանքով առաջին անձնանվան սկզբնատառը կորսվել է։ Դատելով քարի արտաքին տվյալներից՝ այն պատի շարվածքում է եղել, իսկ խաչաքանդակները կերտվել են այցելու-նվիրատուների հիշատակին՝ ի բարեխոսություն առ Աստված։ Խաչաքանդակների ոճը՝ ներառված գծագրման եղանակով արված կամարավոր խորաններում, հիշեցնում են Գեթսեմանի մատուռի (գտնվել է Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի տեղում), Կեչառիսի վանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արևելյան պատի և այլ հուշարձաններից հայտնի նմանօրինակ պատկերաքանդակները։ Հորինվածքային և հնագրական տվյալները նկատառելով՝ թվագրում ենք ԺԶ–ԺԷ. դդ.։

Եկեղեցու արևելյան պատին և պարսպից մնացած կամարավոր մուտքին պահպանվել են փոքրաչափ փակագրեր՝ արված, հավանաբար, ԺՐ–ԺԹ. դդ.։

22. ՓԱԿԱԳԻՐ. եկեղեցու արևելյան պատին, արտաքուստ.

ՄԱՂԱՔԻԱ

Եկեղեցու արևելյան պատի զույգ փակագրերի հնարավոր վերծանությունը, կարծում ենք, Մաղաքիա անձնանունն է կամ նրա Մաղաք կրճատ ձևը, որը եբրայերենից թարգմանաբար նշանակում է «հրեշտակ»։ Ըստ Հր. Աճառյանի՝ մեզանում գործածվում է սկսած ԺԳ. դարից[558]։

23. ՓԱԿԱԳԻՐ. նախկին պարսպապատից մնացած կամարավոր մուտքի ձախակողմյան պատի արևելյան նիստին.

ԱԴԱՄ

Փակագրի՝ Ադամ վերծանումը մեր գործընկեր Խաչիկ Հարությունյանինն է։ Ջենք բացառում նաև պարսկական Դարեհ արական անձնանվան հետին՝ Դարա տարբերակը[559]։

* * *

Ինչպես վերը նշեցինք, Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու և նրա շրջակայքի բարեկարգումը շարունակվում է նաև մեր օրերում, որի ընթացքում բակում կառուցվել է աղբյուր-հուշարձան, հյուսիսարևմտյան կողմում տեղադրվել են խաչքարեր (այդ թվում՝ Ջուղայի խաչքարերի չորս կրկնօրինակ)։ Նշված կոթողներն արձանագիր են, վերծանությունները՝ ստորև։

24. ԽԱՉՔԱՐ. (Ջուղայի կրկնօրինակ, նախագիծը՝ Վարազդատ Համբարձումյանի, քանդակագործ՝ Արտակ Համբարձումյան [1,63 x 0,46 x 0,15 մ, պատվանդանը՝ 0,67 x 0,38 x 0,24 մ]). կանգնեցվել է 2014 թ.՝ եկեղեցու հյուսիսային կողմում, պատվանդանի ձախակողմյան գրության համաձայն՝ Սիրանուշ մայրիկի նվիրատվությամբ։

---

[558] Նույնի հ. Գ., էջ 172։

[559] Նույնի հ. Բ., էջ 20։

Արձանագրությունները ելնդատառ են, որոնցից երկուսը, որ հիշատակագրություններ են, զետեղված են վարդյակի շրջագծին և հեծյալ Ս. Գևորգի պատկերաքանդակի աջ կողմում, թվականը դարձյալ Ս. Գևորգի պատկերաքանդակին կից է, իսկ քարգործ վարպետներ Իսրայելի և Գրիգորի ինքնագրերը տեղ են գտել հիմնախաչի կոթունի երկու կողմում.

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ ԱՌ ՔՍ ԽՕՋԱ
ՀԱՐԱ/ՊԷՏԻՆ ՀՈԳՈՒՆ Է։
ՍԲ ԽԱ/ՉՍ Յ ԼԻ Շ ԼԱ Տ/ԼԱ Կ Է ՀԱՐԱ-/
ՊԷՏԻՆ / ԵՒ Կ ԼՈ Ղ ԼԱ ԿՅ/ԻՆ՝ ՄԱՐԻ/ԱՆԷ։
ԹՎ ԼԻՆ Ռ/ԻԱ. (1572)։
ՆԿԱՐՈՂ / ԻՍՐԱ/ԷԼ, ԳՐԻԳ ԼՈՐ։

Հրատ. Այվազյան, 91, արձ. 419։

Այս և մյուս երկու կրկնօրինակների բնագրերը ժամանակին հրատարակել է նախիջևանագետ Արգամ Այվազյանը, որի վերծանությունների միջոցով համեմատել ենք վիմագրերի ներկայիս կրկնօրինակումը՝ դրանք ստուգելով նաև պահպանված հին լուսանկարներով։ Այս եղանակով շտկել ենք հանդիպած վրիպակները։

Ինչպես Ա. Այվազյանն է նշում, այս խաչքարը Իսրայել և Գրիգոր վարպետների համատեղ ստեղծագործությունն է, որն աչքի է ընկնում իր նրբագեղությամբ, քիվի բարձրարվեստ պատկերաքանդակներով[560]։ Այստեղ պատկերված է միագլուխ-երկմարմին սֆինքս՝ վիշապագլուխ պոչերով և երկու կողմում պահապան հրեշտակներով։ Խաչքարն ի սկզբանե կանգնեցվել է խոջա-վաճառական Հարապետի հիշատակին և հոգու փրկության համար։ Ննջեցյալի անունը Ա. Այվազյանը վերականգնել է Հայրապետ, մինչդեռ մենք նախընտրում ենք հարազատ մնալ բնագրային ձևին։

[560] **Ա. Այվազյան,** Նախիջևանի վիմագրական ժառանգությունը, հ. Ա. Ջուղա, Երևան, 2004, էջ 91։

25. ԽԱՉՔԱՐ. *(Ջուղայի կրկնօրինակ, նախագիծը՝ Վարազդատ Համբարձումյանի, քանդակագործ՝ Արտակ Համբարձումյան [1,64 x 0,54 x 0,25 մ, պատվանդանը՝ 0,80 x 0,40 x 0,32 մ]). կանգնեցվել է 2012 թ.՝ եկեղեցու հյուսիսարևմտյան կողմում։ Ի տարբերություն նախորդի՝ այստեղ արձանագրությունները փորագիր են. թվականի տառերը վարդյակի շուրջն են, բուն արձանագրությունը՝ վարդյակի ստորին մասում, պահպանված երկու տող.*

ԹՎ ԼԻՆ Ռ/ԻԴ. (1575)
ՍԲ ԽԱՉՍ Յ ԼԻ Շ ԼԱ Տ ԼԱ Կ Է / ՓԱՇԻՆ ԵՒ
ՈՐԴ⌜ՈՒՆ⌝...

Հրատ. Այվազյան, 70, արձ. 261։

Խաչքարի եզերազարդի ստորին աջակողմում ձեռքերը խաչած ննջեցյալի պատկերաքանդակն է։

26. ԽԱՉՔԱՐ. *(Ջուղայի կրկնօրինակ, նախագծի հեղինակ և քանդակագործ՝ Արմեն Ալեքսանյան [1,62 x 0,49 x 0,17 մ, պատվանդանը՝ 0,70 x 0,40 x 0,28 մ]). կանգնեցվել է 2015 թ.՝ եկեղեցու հյուսիսային կողմում, պատվանդանի ձախակողմյան գրության համաձայն՝ ի հիշատակ վաղամեռիկ Արման Հարությունյանի։ Հիմնախորանի ուղղահայաց եզրերին առկա է միատող ելնդատառ արձանագրություն, թվականը՝ վարդյակի շուրջը, իսկ ստորին մասում առկա է եռատող փորագիր արձանագրություն.*

ՍԲ Խ ԼԱ ՋՍ Յ ԼԻ Շ ԼԱՏԱ Կ ԱՌ ՔՍ
ՓՐԿՈՒԹԵ ԼԱՆ
ԽԱՉԵՐԵՍ, ՄԱՐԿՕՍ ԵՒ ՈՐԴ ԼԻՈՅ ՀՈԳՈՒՆ։
ԹՎ ԼԻՆ ՌԽԸ. (1599)։
Խ ԼԱ ՋՍ Յ ԼԻ Շ ԼԱ Տ ԼԱ Կ Է ԽԱ/ՉԵՐԵՍԻՆ
ՀՈ/ԳՈՒՆ, ԹՎ ԼԻՆ ՌԽԸ. (1599)։

Հրատ. Այվազյան, 85, արձ. 374։

Բակի հյուսիսարևմտյան անկյունում՝ 1989 թ. կառուցված հովվատան հարևանությամբ, 2017 թ. տեղադրվել է Ջուղայի մեկ այլ խաչքարի կրկնօրինակ (քանդակագործ՝ Գրիգոր Գրիգորյան [1,96 x 0,77 x 0,25 մ, պատվանդանը՝ 0,89 x 0,60 x 0,40 մ])՝ մեկենասությամբ տեր և տիկին Արթուր և Աննահիտ Մելքոնյանների: Կոթողն արձանագրություն չունի, փոխարենը վարպետը հիմնախաչի կոթունի երկու կողմում փորագրել է խաչքարի ստեղծման Քրկչական թվականը՝ տառային թվանիշերով՝ ՍԺԷ. (2017):

Ջուղայի խաչքարերի կրկնօրինակներից բացի՝ եկեղեցու բակում կանգնեցվել են նաև ստեղծագործական բնույթի խաչքարեր.

27. ԽԱՉՔԱՐ. *(1,71 x 0,70 x 0,26 մ, պատվանդանը՝ 0,83 x 0,67 x 0,32 մ) կանգնեցած է եկեղեցու հյուսիսային կողմում, թիկունքին ունի 6 տողից հիշատակագրություն.*

Ի ՀԻՇԱՏԱԿ ՄՈՐՍ՝ / ՆՈՅԵՄՋԱՐ
ԳԱՍՊԱՐԻ / ՄՀԵՐՅԱՆԻՆ,
ՄՈՒՐԱԴ / ՍԻՓԱՆԻ ՄՀԵՐՅԱՆԻՑ /
ՍԱՍՈՒՆՑԻ, ԱՄԵՐԻԿԱՅԻՑ, / 2009:

28. ԽԱՉՔԱՐ. *կերտվել է 2012 թ. (քանդակագործ՝ Սուրեն Սարոյան [2,03 x 0,86 x 0,24 մ, պատվանդանը՝ 0,90 x 0,57 x 0,46 մ]): 2015 թ. կանգնեցվել է եկեղեցու հյուսիսային կողմում, ուղղանկյուն սալաքարի փոխարեն ունի խաչաձև տեսք, կենտրոնում առկա հիմնախաչը նման է այսպես կոչված իռլանդական կամ ձողաբարձ խաչերի տիպին: 2015 թ. այն եկեղեցուն են նվիրել Ժենյա և Միքայել Ատոմյանները: Խաչքարի ուղղահայաց զույգ եզրագոտիներին առկա է միատող ելնդատառ արձանագրություն.*

ՈՎ ՀԱՎԱՏՈՒՄ Է ՈՐԴՈՒՆ, ԸՆԴՈՒՆՈՒՄ Է
ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ:

Պատվանդանին՝ ԺԵՆՅԱ ԵՎ ՄԻՔԱՅԵԼ /
ԱՏՈՄՅԱՆՆԵՐԻՑ, / 2015:
Թիկունքին՝ ՍԺԲ. (2012) ԹՎԻՆ:

Խաչքարի նվիրատուները Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու ջերմեռանդ ուխտավորներից են, որոնք եկեղեցուն նվիրաբերել են նաև արծաթյա կանթեղներ. վերջիններիս մակագրությունները ներկայացնում ենք հաջորդ ենթաբաժնում (արձ. 46–48):

29. ԽԱՉՔԱՐ. *(քանդակագործ՝ Վաչագան Պետրոսյան, 2018 թ. [2,25 x 0,80 x 0,23 մ, պատվանդանը՝ 0,90 x 0,60 x 0,55 մ]) կանգնեցած է եկեղեցու հյուսիսային կողմում, պատվանդանին մեկենասներ Աղասի և Դավիթ Մաթևոսյանների անուններն են.*

ԱՂԱՍԻ ԵՎ ԴԱՎԻԹ /
ՄԱԹԵՎՈՍՅԱՆՆԵՐԻՑ, 2018:

30. ԱՂԲՅՈՒՐ-ՀՈՒՇԱՐՁԱՆ. *պատվանդանի կենտրոնում խաչքար (2,10 x 0,87 x 0,24 մ), իսկ ծայրերին բազմանիստ ցայտաղբյուրներով համակցված հուշարձանը տեղադրվել է 2015 թ. (քանդակագործ՝ Տիգրան Հովհաննիսյան)՝ եկեղեցու արևմտյան կողմում, Կառլեն և Սառա Եսայանների մեկենասությամբ: Աղբյուր-հուշարձանի կենտրոնում փորագրվել է Մատթեոսի Ավետարանի հետևյալ տողերը.*

ԵՐԱՆԻ ԱՅՆՈՑԻՔ, ՈՐՔ
ՍՈՒՐԲ ԵՆ ՍՐՏԻՒՔ, ՋԻ
ՆՈՔԱ ՋԱՍՏՈՒԱԾ ՏԵՍՑԵՆ (ՄՏԹ. Ե:8)

Պատվանդանի թիկունքին՝

ԿԱՌՈՒՑՈՂ / ԿԱՌԼԵՆ ԵՎ ՍԱՌԱ
ԵՍԱՅԱՆՆԵՐ, / 2015:

31. ԳԱՎԱԶԱՆ-ՀՈՒՇԱՐՁԱՆ. Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արք. Կճոյանի օրհնությամբ և եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Գրիգոր քհն. Գրիգորյանի նախաձեռնությամբ 2018 թ. հովվատան հարևանությամբ կառուցվել է «Գավազան» հուշարձանը՝ նվիրված մեծ բարեբուսնապետ Մովսես Գ. Տաթևացի Ամենայն Հայոց կաթողիկոսի սուրբ հիշատակին (նկ. 151ա–գ)։ Հուշարձանի ճարտարապետն է Տիգրան Սանդոյանը, շինարարը՝ Ռազմիկ Քարտաշյանը, մեկենասները՝ Գեղամ Ղուկասյանը, Արամ Ֆրանկյանը, Վահե Շամիրյանը, Մանվել Բաբայանը և Համլետ Սարոյանը։ Հուշարձանի կենտրոնական մասը հարդարում է խաչաձև խորքում կանգնեցված հայրապետական բրոնզե գավազանը, որի աջ և ձախ կողմում գտնվող կամարավոր խորշերում արձանագրվել են Ս. Անանիա առաքյալի անապատում ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններից հատվածներ, որոնք բնութագրում են Մովսես Տաթևացուն.

Աջակողմյան խորշում արձանագրվել է ՄՄ Հմր 9147 ձեռագրի 1623 թ. հիշատակարանից հետևյալ հատվածը. «Սուրբ հայրս մեր Մովսէս վարդապետ, սայ կարգեաց անապատաւորս ի մերում ժամանակիս, սայ բաժանեաց գկրօնաւորս ի յաշխարհական ձեւէ եւ հանդերձէ, սայ գկանոնս նախահարցն հաստատեաց՝ զեպիսկոպոսունս, զերիցունս եւ զսարկաւագունս եւ զայլ եւթն խորհուրդ եկեղեցոյ մի ըստ միոջէ ուսուցանէր...»։

Ձախակողմյան խորշում արձանագրված հատվածը ՄՄ Հմր 1099 ձեռագրի 1631 թ. հիշատակարանից է. «Պայծառացոյց զազգս հայոց եւ զարդարեաց զեկեղեցիս՝ նորոգելով բազում եւ յոլով վանորայս եւ մենաստանս, զդաշտս եւ զանտառս ծաղկեցոյց կուսակրօն ճգնաւորօք եւ սուրբ միանձնացելովք, մաքուր կուսանօք եւ աստուածահաճոյ անապատաւորօք, որովք հաստատեցան կարգք եւ սահմանք ժամատեղաց, դպրատունք եւ ժամակարգութիւնք...»։

«Գավազան» հուշարձանի շինարարական արձանագրությունը տեղ է գտել կառույցի կողային՝ արևելյան պատին, 20 տողից.

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ. / ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ / ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ / Տ. ՆԱԻԱՍԱՐԴԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ / ԿՃՈՑԵԱՆԻ ԵՒ Ի ՀՈՎՈՒՈՒԹԵԱՆ / Տ. ԳՐԻԳՈՐԻ ՔԱՀԱՆԱՅԻ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ / Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ՌՆԿԷ. / ԵՒ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 2018 / ՇԻՆԵՑԱՒ ԶԳԱՒԱԶԱՆ-ՅՈՒՇԱՐՁԱՆՍ ԱՅՍ՝ / Ի ՅԻՇԱՏԱԿ ՄՈՎՍԻՍԻ Գ. ՏԱԹԵՒԱՑԻՈՑ / ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝ ԵՐԿՐՈՐԴ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ / ՀԱՅՈՑ, ԱՐԴԵԱՄԲ ԲԱՐԵՊԱՇՏ ՏԵԱՐՑ / ԳԵՂԱՄԱՅ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ, ԱՐԱՄԱՅ / ՖՐԱՆԿԵԱՆԻ, ՎԱՀԷԻ ՇԱՄԻՐԵԱՆԻ, / ՄԱՆՈՒԷԼԻ ԲԱԲԱՅԵԱՆԻ ԵՒ ՀԱՄԼԷՏԻ / ՍԱՐՈՅԵԱՆԻ, Ի ՎԱՅԵԼԻՄՆ ՈՒԽՏԱՒՈՐԱՅ / ՁՕՐԱՒՈՐ ՍԲ. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ / ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ ԱՂԳԻՍ ՀԱՅՈՑ։ / ՃԱՐՏԱՐԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ՍԱՆԴՈՅԱՆ, / ՇԻՆԱՐԱՐ՝ ՌԱԶՄԻԿ ՔԱՐՏԱՇՅԱՆ։

* * *

Այսքանով կարծես թե ամբողջանում է Ձորավոր Ս. Աստվածածին եկեղեցու վիմագրական ժառանգությունը, որի քննությունը պարզում է նախ և առաջ եկեղեցու կառուցման և հետագա նորոգումների ժամանակագրությունը, ինչպես նաև վեր հանում այդ աշխատանքները նախաձեռնողների ու մեկենասների անունները։ Առավել ուշագավ են առաջին անգամ հրատարակվող՝ եկեղեցու որմերի շարվածքում օգտագործված՝ ժամանակագրորեն վաղ թվագրմամբ վիմագրերը, որոնք

որոշակիացնում են դեռևս զարգացած միջնադարում՝ Ս. Անանիայի դամբարանի հարևանությամբ եղած եկեղեցու գոյությունը (արձ. 18, 19)։ Նախկինում հրատարակված 13 վիմագրերին ավելացան ևս 18-ը, որոնց վերծանությամբ, ըստ էության, առաջին անգամ ուրվագծվում է այս եկեղեցական համալիրի անցյալն ու ներկան՝ նոր էջ բացելով նաև Երևան քաղաքի վիմագրական ժառանգության ամբողջացման համար։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ՝ ՁՈՐԱՎՈՐ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՄԱԳՐԵՐԻ

Վիմագրի թվականը կամ մոտավոր ժամանակը	Հմ	Արձանագրության տեղը	Բնույթը
Զլ.—1281 թ.	19	Եկեղեցու ներսի շարվածքում՝ աջ ավանդատան հարևանությամբ	հիշատակագրություն
ԺԹ—ԺԴ. դդ.	18	Եկեղեցու ներսի շարվածքում՝ մուտքից ձախ	նվիրատվական
ՌԻԱ.—1572 թ.	24	Բակ	խաչքարային հիշատակագրություն (կրկնօրինակ)
ՌԻԴ.—1575 թ.	25	Բակ	խաչքարային հիշատակագրություն (կրկնօրինակ)
ՌԽԸ.—1599 թ.	26	Բակ	խաչքարային հիշատակագրություն (կրկնօրինակ)
ԺԶ. դար	16	Եկեղեցու արևմտյան պատին՝ նախասրահի ներսում՝ մուտքից ձախ	խաչքարային հիշատակագրություն
ԺԶ—ԺԷ. դդ.	20	Եկեղեցու ավագ խորանի աջակողմում	հիշատակագրություն
ԺԶ—ԺԷ. դդ.	21	Բակում՝ մատուռ-դամբարանի հյուսիսային կողմում	հիշատակագրություն
ՌՃԽԲ.—1693 թ.	1	Եկեղեցու արևմտյան պատին՝ նախասրահի ներսում՝ մուտքից աջ	շինարարական
ՌՃԽԲ.—1693 թ.	2	Եկեղեցու արևելյան պատին՝ արտաքուստ	խաչքարային հիշատակագրություն
ՌՃԽԲ.—1693 թ.	3	Եկեղեցու արևելյան պատին՝ արտաքուստ	խաչքարային հիշատակագրություն
ՌՃԽԲ.—1693 թ.	6	Եկեղեցու արևելյան պատին՝ արտաքուստ	խաչքարային հիշատակագրություն
ԺԷ. դար	4	Եկեղեցու արևելյան պատին՝ արտաքուստ	խաչքարային հիշատակագրություն
ԺԷ. դար	5	Եկեղեցու արևելյան պատին՝ արտաքուստ	խաչքարային հիշատակագրություն
ԺԷ. դար	17	Եկեղեցու արևմտյան պատին՝ նախասրահի մեջ՝ մուտքից աջ	խաչքարային հիշատակագրություն

ՋՅԼ.–1781 թ.	7	Եկեղեցու ձախակողմյան մույթի արևմտյան նիստին	շինարարական
ՌՄԽՌ.–1793 թ.	9	Եկեղեցու արևմտյան պատին՝ նախասրահի ներսում՝ մուտքից ձախ	շինարարական
ԺԸ–ԺԹ. դդ.	22	Եկեղեցու արևելյան պատին	փակագիր
ԺԸ–ԺԹ. դդ.	23	Պարսպից մնացած կամարավոր մուտքի ձախակողմյան պատի արևելյան նիստին	փակագիր
ՌՄԿ.–1811 թ.	12	Բակ	տապանագիր
ՌՄՀՋ.–1827 թ.	15	Նախասրահի ներսում	տապանագիր
ՌՅԼԸ.–1889 թ.	10	Եկեղեցու հարավային մուտքի վերնամասում	շինարարական
ՌՅԽՋ.–1897 թ.	13	Բակ	տապանագիր
ՌՅԽԹ.–1900 թ.	11	Ս. Անանիայի դամբարանի արևելյան պատին փակցված մարմարյա սալին	շինարարական
ՌՅԿԷ.–1918 թ.	14	Բակ	տապանագիր
ՌՆԺԴ.–1965 թ.	8	Ս. Սեղանի ետնամասում փակցված մարմարյա սալին	շինարարական
ՌՆՇԸ.–2009 թ.	27	Բակ	խաչքարային հիշատակագրություն
ՌՆԿԱ.–2012 թ.	28	Բակ	խաչքարային հիշատակագրություն
ՌՆԿԴ.–2015 թ.	30	Բակ	հիշատակագրություն
ՌՆԿԷ.–2018 թ.	29	Բակ	հիշատակագրություն
ՌՆԿԷ.–2018 թ.	31	Բակ	շինարարական

ԺԳ· ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Գրիգոր քհն. Գրիգորյանի հովվության տարիներին եկեղեցին շրջունակում է համալրվել նաև եկեղեցական առարկաներով (արծաթյա ձեռաց խաչեր, ճաճանչներ, կանթեղներ, սկիհներ և այլն)։ Դրանցից շատերը ստացվել են նվիրատվությունների միջոցով, որոնք հիմնականում արձանագիր են։ Մինչ մեր օրյա արձանագրությունները ներկայացնելը՝ նախ անդրադառնանք եկեղեցում պահվող առավել վաղ, այն է՝ ԺԹ. դարից և նախորդ դարաշրջանից մեզ հասած առարկաներին ու դրանց հիշատակագրություններին։

Ինչպես վերը նշեցինք, 1693 թ. կառուցված Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցին 1830-ականների կեսերից վերածվել է ծխական եկեղեցու՝ ծառայելով Մարաղայից գաղթած ժողովրդին։ Բնականաբար, իբրև այդպիսին այն ունեցել է հարուստ եկեղեցական սպասք, որոնք օգտագործվել են տարաբնույթ ծխական արարողությունների ժամանակ։ Այդ էին վկայում նաև մի շարք արխիվային վավերագրերում պահպանված եկեղեցու գույքացուցակները, որոնք վերը ներկայացրինք։ Ստալինյան բռնապետության տարիներին մի շարք եկեղեցիների պես փակվել, թալանվել ու արգելքի տակ է դրվել նաև Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու գույքը։ Սրանով է պայմանավորված տեղում իբրև ժառանգություն մնացած համեմատաբար

հին առարկաների սակավությունը. սրանք հիմնականում ճաճանչներ, սրբապատկերներ ու սուրբ գրքեր են: Առարկաներից որոշներն ունեն նաև արձանագրություններ, որոնք ևս հարկ համարեցինք ժամանակագրորեն ներառել մեր աշխատանքում.

32. ՃԱՃԱՆԶ. *արծաթյա, շրջանի մեջ ներառված հավասարաթև խաչն ականակուռ է, վերին խաչաթևի ակն՝ ընկած: Շրջանի դարձերեսին առկա է միատող փորագիր արձանագրություն (նկ. 135ա, բ).*



Յ[Ի]Շ[Ա]Դ[Ա]Կ Է ՄԱՅՐԱՄԻՆ ՍԲ ԽԱՉԸ, 1841:

Բարբառի ազդեցություն կարելի է համարել արձանագրության մեջ վկայված յիշադակ, Մայրամ բառերի այսօրինակ ձևով գործածությունը: Փորագրիչը տառերի հիմնականում ուղղահայաց ստեղնները սուր ծայրերով է ավարտում:

33. ԱՐԾԱԹՅԱ ԽԱՉ. *փակցված 1906 թ. տպագիր Ավետարանի կազմին: Սուրբ Գրքի կազմի առաջին փեղկը հարդարված է անկյուններում ձուլածո մետաղյա զարդաքանդակներով, կենտրոնում՝ երկաստիճան պատվանդանով խաչն է՝ վրան խաչված Քրիստոսը: Պատվանդանին առկա է եռատող փորագիր արձանագրություն (նկ. 146ա, բ).*



Յ[Ի]Շ[Ա]Տ[Ա]Կ Է ԱՒ/ԵՏ[Ա]Ր[Ա]Ն[Ս] ԱՅՍ ՄԱՐՔ[Ա]Ր[Ա] Տ[Է]Ր-/ԳՐԻԳ[ՈՐ]ԵԱՆ, 1878:

Դատելով թվականից՝ արձանագիր խաչը սկզբնապես այլ առարկայի մաս է կազմել, որը հետո միայն փակցվել է Վաղարշապատում՝ 1906 թ. տպագրված Ավետարանի կազմին:

34. ՍՐԲԱՊԱՏԿԵՐ. *կտավ, յուղանկար, 1,00 × 0,83 մ, ներկայումս գտնվում է եկեղեցու աջ ավանդատեղյակում, պատկերված է Տիրամայրը Մանկան հետ, որոնց գլուխներին ձեռագործ և սպիտակ հասարակ ակերով հարդարված թագեր են ամրացված, ստորին աջ անկյունում առկա է եռատող մանրատառ գրություն (նկ. 102).*

Պետրոս Սրապեան, / նկարեց
Ս. էջմիածին, / 1896:

Կտավը նշանավոր գեղանկարիչ, մանկավարժ Պետրոս Սրապյանի (1833–1898) վերջին աշխատանքներից է: Վարպետը ծնվել է Կ. Պոլսում, կրթություն ստացել նախ տեղի Սկյուտարի վարժարանում, ապա Հռոմում: Գծագրություն և կերպարվեստ է դասավանդել հայկական տարբեր դպրոցներում: 1893–1896 թթ. Մկրտիչ Խրիմյան Ամենայն Հայոց կաթողիկոսի

հրավերով ձևավորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ժողովարանը և վեհարանի թանգարանը: Հենց այստեղ էլ կյանքի է կոչել ներկայացվող սրբապատկերը: Կյանքի վերջին տարիներն ապրել է Բուլղարիայում և մահկանացուն կնքել Սոֆիայում[561]:

35. ՍՐԲԱՊԱՏԿԵՐ. *կտավ, յուղանկար, 1,31 x 0,92 մ, ներկայումս գտնվում է եկեղեցու աջ ավանդատեղյակում: Պատկերված է Տիրամոր թագադրման տեսարանը, որի ստորին մասում պահպանվել է դեղին ներկով արված մանրատառ երկտող մակագրություն (նկ. 103ա, բ).*

Ընձաեցաւ Սբ պատկերս լիմ անապատ Սբ Գէորգ տաճարին յիշատակ է
Խուտավէրտեան պատկերս նկարիչ Գէորգին և յանգուցեալ ծնօղաց եւուրոյ։ 1915 մայիս 1

Ընձաեցաւ Սբ պատկերս Լիմ անապատ Սբ Գէորգ տաճարին, յիշատակ է / Խուտավէրտեան [պ[ատ]կերս] նկարիչ Գէորգին եւ յանգուցեալ ծնօղաց եւուրոյ: 1915, մայիս 1:

Սրբապատկերի հեղինակն, ըստ էության, Գևորգ Խուդավերդյանն է, որն այն ընծայել է Լիմ անապատի Ս. Գևորգ եկեղեցուն՝ իր և հանգուցյալ ծնողների հիշատակին: Դառնալով պատկերագրությանը՝ հարկ է նկատել, որ Տիրամոր աջակողմում՝ հասակով մեկ պատկերված թագակիր սրբի (թերևս Ստեփանոս Նախավկան է) ձախ ձեռքին զվարթնոցատիպ տաճարի մանրակերտն է, որն առավել բնորոշ է կտիտորական հորինվածքներին, իսկ աջով պահել է բուրվառը: Տիրամոր ձախակողմում՝ թերևս Հովհաննես Մկրտիչն է, իսկ պատկերի վերնամասում թագադրումն իրականացնող զույգ հրեշտակներն են ու աղավնակերպ Սուրբ Հոգին:

36. ՍՐԲԱՊԱՏԿԵՐ. *կտավ, յուղանկար, 1,20 x 0,85 մ, պատկերված է Ս. Գրիգոր Լուսավորիչը՝ կաթողիկոսի հանդերձանքով՝ խաչն ու գավազանը ձեռքին, կտավի հակառակ կողմում հետևյալ եռատող և մանրատառ գրությունն է (նկ. 104).*

Карчикян, / Կարճիկյան, / 1983 թ.:

Անշուշտ, ինչպես այս, այնպես էլ նա-

Ընձաեցաւ Սբ պատկերս լիմ անապատ Սբ Գէորգ տաճարին յիշատակ է Խուտավէրտեան պատկերս նկարիչ Գէորգին և յանգուցեալ ծնօղաց եւուրոյ։ 1915 մայիս 1

Ընձաեցաւ Սբ պատկերս Լիմ անապատ Սբ Գէորգ տաճարին, յիշատակ է / Խուտավէրտեան [պ[ատ]կերս] նկարիչ Գէորգին եւ յանգուցեալ ծնօղաց եւուրոյ: 1915, մայիս 1:

խորդ սրբապատկերի մակագրություններում հիշատակված են նկարիչների անունները:

37. ԱՇՏԱՆԱԿ. *Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու ավագ խորանը վերջին տարիներին զարդարում են նաև արուսյրե զույգ աշտանակները, որոնք սկզբնապես պատկանել են Երևանի երբեմնի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցուն: Այդ են վկայում աշտանակների ստորին շրջանաձև հիմքերի միատող փորագիր և նույնաբովանդակ արձանագրությունները, որոնցից մեկը՝ ստորև (նկ. 144ա—գ).*

Նուէր Ս.Պօղոս–Պետրոս եկեղեցւոյն Հայոց Երեւանայ Մելիք-Մուրադեանց եղբայրներից իւրեանց մօր Քեթեւանի յիշատակին: 30 դեկ.1905թ.

Նուէր Ս. Պողոս-Պետրոս եկեղեցւոյն Հայոց Երեւանայ Մելիք-Մուրադեանց եղբայրներից, իւրեանց մօր՝ Քեթեւանի յիշատակին, 30 դեկտեմբերի, 1905 թ.:

561 **Ա. Առաքելյան,** Պետրոս Սրապյան, ՀՍՀ, հ. 11, Երևան, 1985, էջ 164:

Երևանի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու պատմավիմագրագիտական քննությունն իրականացրել է Կարո Ղաֆադարյանն իր «Երևան» գրքում, որտեղ եկեղեցու մասին համառոտ տեղեկություններ հաղորդելուց բացի, հրատարակել է 16 արձանագրություն, որոնցից 10-ն առաջին անգամ[562]: Չնայած նրան, որ ըստ Կ. Ղաֆադարյանի՝ 1679 թ. մեծ երկրաշարժից խոնարհված եկեղեցին հայտնի չէ, թե որ թվականներին է վերակառուցվել[563], այդուհանդերձ պահպանված խաչքարային համառոտ հիշատակագրությունները հավաստիացնում են, որ Երևանի մի շարք այլ եկեղեցիների պես Ս. Պողոս-Պետրոսը ևս հիմնովին կառուցվել է 1692–1693 թթ.[564]: Խաչքարային հիշատակագրություններում կարդում ենք խոջա Ավագի, մելիք Աղամալի (երկիցս), մելիք Դիլանի դուստր Խանբեկի, մահտեսի Հովհաննեսի և ուրիշների անուններ, որոնք ակնհայտորեն շինարարական աշխատանքների մեկենասներն են, այսինքն՝ նրանց հատկացրած միջոցների դիմաց իրենց իսկ անուններով խաչքարեր են կերտվել ու ագուցվել եկեղեցու որմերի տարբեր հատվածներում, ինչպես արդեն տեսանք Ջորավոր Ս. Աստվածածնի նմանօրինակ հիշատակագրություններում: Նկատենք նաև, որ մեկենասներից մելիք Աղամալը Երևանի նշանավոր Աղամալյանների ընտանիքից է, որի միջոցներով ավելի ուշ՝ 1710 թ., կառուցվել է Կոնդի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին[565], ինչի առնչությամբ պատերի շարվածքում մի քանի արձանագիր խաչքարեր են ագուցվել: Ծառուրի որդի մելիք Աղամալի անվանակիր 1693 թվակիր խաչքար է պահպանվել նաև Երևանի Կաթողիկե եկեղեցու բակում, որը թույլ է տալիս ենթադրել, որ Կաթողիկե եկեղեցու դիմաց հետագայում կառուցված եռանավ սրահը, որը քանդվեց 1936–1937 թթ., նույնպես կառուցվել է նրա միջոցներով և նշված ժամանակաշրջանում:

Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու վիմագրերի ուսումնասիրությունը պարզում է, որ եկեղեցին նորոգվել, նվիրատվություններ է ստացել ու ներքին նոր շինություններով է համալրվել ԺԹ. դարի առաջին կեսին[566], իսկ այն, որ եկեղեցուն նվիրատվություններ են արվել նաև նախաեղեռնյան ժամանակաշրջանում (1905 թ.), վկայում է ոչ միայն այս հոգևոր կենտրոնի ունեցած կարևոր նշանակությունն ու բարձր դիրքը, այլև այն, որ եկեղեցին գործել է: Նվիրատուներ Մելիք-Մուրադյաններն, ըստ Էութ֊յան, ժամանակի ազդեցիկ ընտանիքներից են եղել, ինչպես Աֆրիկյան եղբայրները, որոնք գրեթե նույն ժամանակահատվածում վերակառուցեցին Ս. Անանիա առաքյալի մատուռ-դամբարանը (արձ. 11):

* * *

Այժմ ժամանակագրական կարգով և ըստ տիպաբանական խմբավորման՝ ներկայացնենք վերջին տարիներին եկեղեցուն նվիրաբերված առարկաները՝ սկսելով արծաթյա կանթեղներից (նկ. 119–124). դրանք շղթաներով կախված են եկեղեցու ավագ խորանի գմբեթարդից և մույթերի կամարներից՝ հարդարելով աղոթասրահը[567]: Նշենք նաև, որ այսօրինակ

[562] **Կ. Ղաֆադարյան,** Երևան, էջ 159–163:

[563] Նույն տեղում, էջ 29:

[564] Նույն տեղում, էջ 161–163, արձ. 66–75:

[565] Նույն տեղում, էջ 170–171, արձ. 94, էջ 174–175, արձ. 106:

[566] Նույն տեղում, էջ 159–160, արձ. 61, էջ 160, արձ. 63, էջ 161, արձ. 64–65:

[567] Եկեղեցու աղոթասրահը հարդարված է նաև սրբապատկերներով, որոնցից մի քանիսը՝ Ս. Թադեոս առաքյալ, Ս. Բարդուղիմեոս առաքյալ, Գաբրիել և Միքայել հրեշտակապետներ, Ս. Մովսես Տաթևացի,

առարկաները հետաքրքիր են նաև արվեստաբանական տեսանկյունից. դրվագազարդ են՝ հարդարված բուսական, երբեմն՝ խաչային հորինվածքներով, կրում են հիմնականում փորագիր արձանագրություններ, որոնք կա՛մ գոտևորում են առարկայի շուրթը, կա՛մ տեղ են գտել ստորին հատվածներում: Նկատի ունենալով նման բաղադրիչների գրեթե միօրինակությունը՝ ստորև գլխատառերով վկայակոչում ենք արձանագրությունները (ուղղագրական շեղումներն ընդգծել ենք)՝ կանթեղների դեպքում նշելով միայն առարկայի տեսակը, նյութը, նվիրատու(ներ)ի անուն(ներ)ը և տարեթիվը.

38. ԿԱՆԹԵՂ. *արծաթյա, նվիրատուներ՝ Սոնա և Խորեն Ճորոխյաններ, 2013 թ., թվականը՝ նստուկի տակ՝ վարպետանշան հիշեցնող զարդին կից (նկ. 130).*

ՆՈՒԻՐ Է ԿԱՆԹԵՂՍ ԱՅՍ ՍՈՆԱՅ ԵՒ ԽՈՐԵՆ ՃՈՐՈԽԵԱՆՆԵՐԻՑ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ ՈԳԵԼՈՅՍ ԾՆՈՂԱՅՆ ԻՒՐՈՅ՝ ՍՈՒՐԲՆ ԵՒ ՄԱՐՍԵԼԱ ՃՈՐՈԽԵԱՆՆԵՐԻ, 2013:

39. ԿԱՆԹԵՂ. *արծաթյա, նվիրատու՝ Անահիտ Սիմոնյան, 2015 թ.*

ԿԱՆԹԵՂՍ ՋԱՅՍ ՆՈՒԻՐ Է ՋՕՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՒԱՏԱՒՈՐ ՋԱՒԱԿԷՆ՝ ՏԻԿԻՆ ԱՆԱՀԻՏ ՍԻՄՈՆԵԱՆԷ, Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԵԼՈՅՍ ԱՄՈՒՍՆՈՅ ԻՒՐՈՅ՝ ԿԱՐԷՆ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆԻ, 2015:

40. ԿԱՆԹԵՂ. *արծաթյա, նվիրատուներ՝ Գեղամ և Արամ Ղուկասյաններ, 2015 թ.:*

ԿԱՆԹԵՂՍ ՋԱՅՍ ՆՈՒԻՐ Է ԳԵՂԱՄ ԵՒ ԱՐԱՄ ՂՈՒԿԱՍԵԱՆՆԵՐԻ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԵԼՈՅՍ ՀՕՐՆ ԻՒՐԵԱՆՑ՝ ԷԴԻԿ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ, 2015:

41. ԿԱՆԹԵՂ. *արծաթյա, նվիրատուներ՝ Գեղամ և Արամ Ղուկասյաններ, 2015 թ.:*

ԿԱՆԹԵՂՍ ՋԱՅՍ ՆՈՒԻՐ Է ԳԵՂԱՄ ԵՒ ԱՐԱՄ ՂՈՒԿԱՍԵԱՆՆԵՐԻ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԵԼՈՅՍ ՄՕՐՆ ԻՒՐԵԱՆՑ՝ ՋՈՒԼԻԵՏԱ ԲԵԳԼԱՐԵԱՆԻ, 2015:

Նվիրատու եղբայրներ Գեղամ և Արամ Ղուկասյաններն իրենց նկատելի ներդրումն ունեն Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու բարեկարգման գործում: Նրանց մեկենասությամբ 2016 թ. հրատարակվեց նաև տողերիս հեղինակի և արվեստաբան Արփինե Սիմոնյանի հեղինակած «Ջորավոր Ավետարանը» պատկերագիրքը (ՄՄ ձեռ. Հ՞ր 4060):

42. ԿԱՆԹԵՂ. *արծաթյա, նվիրատու՝ Սիմա Նահապետյան, 2015 թ.*

ԿԱՆԹԵՂՍ ՋԱՅՍ ՆՈՒԻՐ Է ՋՕՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ՝ Ի ՍԻՄԱ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ ՀԱՒԱՏԱՒՈՐ ՋԱՒԱԿԷ, Ի ՆՇԱՆԱԿԱՒՈՐՈՒՄՆ ԲԱՐԵՑԱՋՈՂ ԾՆՆԴԵԱՆ ՍԻՐԱՍՈՒՆ ԴՍՏԵՐՆ ԻՒՐՈՅ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԲՈՅԵԱՆԻ, 2015:

43. ԿԱՆԹԵՂ. *արծաթյա, նվիրատու՝ Սոնա Աբելյան, 2016 թ.:*

ՏԻԿԻՆ ՍՈՆԱ ԱԲԵԼԵԱՆԷ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԵԼՈՅՍ ԾՆՈՂԱՅՆ ԻՒՐՈՅ՝ ԱԲԵԼ ԱԲԵԼԵԱՆԻ ԵՒ ԼԻՆԱ ԻՍՐԱՅԵԼԵԱՆԻ, 2016:

44. ԿԱՆԹԵՂ. *արծաթյա, նվիրատու՝ Սոնա Աբելյան, 2016 թ.*

ՏԻԿԻՆ ՍՈՆԱ ԱԲԵԼԵԱՆԷ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԵԼՈՅՍ ՍՈՒՐԲՆ ԵՒ ՀԵՐՄԻՆԵ ԻՍՐԱՅԵԼԵԱՆՆԵՐԻ, 2016:

նկարիչներ Աշոտ և Անդրանիկ Մկրտչյան եղբայրների աշխատանքներն են, 2014–2015 թթ. (նկ. 100, 105–108): Աջ ավանդատեղյակի մուտքին կից՝ պատի խորշում, Տիրամայրը Մանկան հետ սրբապատկերն է (նկարիչ՝ Լիանա Առաքելյան, 2009 թ.):

45. ԿԱՆԹԵՂ. *արծաթյա, նվիրատու՝ Անդրանիկ Բաբոյան, 2016 թ.*

ԿԱՆԹԵՂՍ ՋԱՅՍ ՆՈՒԷՐ Է ԶՕՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՒԱՏԱՒՈՐ ԶԱՒԱԿԷՆ՝ ՏԻԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ԲԱԲՈՅԱՆԷ, Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԵԼՈՅՍ ՄԵՐՈՒԺԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ, 2016։

46. ԿԱՆԹԵՂ. *արծաթյա, նվիրատու՝ Ժենյա մայրիկ [Ատոմյան], 2017 թ.: Կենտրոնում Հովհաննես Մկրտչի պատկերաքանդակն է՝ «ՍԲ ՅՈՎԱՆԷՍ ՄԿՐՏԻՉ» արձանագրությամբ.*

† ԺԵՆՅԱ ՄԱՅՐԻԿԻՑ ՆՎԵՐ ԶՈՐԱՎՈՐ ՍԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԻՐ ՈՐԴՈՒ՝ / ԳԵՎՈՐԳ ԱՏՈՄՅԱՆԻ ՀՈԳՈՒ ԵՎ ՄԱՐՄՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, 2017։

47. ԿԱՆԹԵՂ. *արծաթյա, նվիրատու՝ Ժենյա մայրիկ [Ատոմյան], 2017 թ.: Կենտրոնում Ս. Հակոբի պատկերաքանդակն է՝ «ՍԲ Յ(Ա)Կ(Ո)Բ» արձանագրությամբ.*

† ԺԵՆՅԱ ՄԱՅՐԻԿԻՑ ՆՎԵՐ ԶՈՐԱՎՈՐ ՍԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԻՐ ՈՐԴՈՒ՝ ՄԻՔԱՅԵԼ / ԱՏՈՄՅԱՆԻ ՀՈԳՈՒ ԵՎ ՄԱՐՄՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, 2017 Թ.:

48. ԿԱՆԹԵՂ. *արծաթյա, նվիրատու՝ Ժենյա մայրիկ [Ատոմյան], 2017 թ.: Ի թիվս այլ սրբապատկերների՝ ներկայացված է նաև Ս. Հովհաննես Մկրտչի պատկերաքանդակը «ՍԲ ՅՈՎԱՆԷՍ ՄԿՐՏԻՉ» արձանագրությամբ.*

† ԺԵՆՅԱ ՄԱՅՐԻԿԻՑ ՆՎԵՐ ԶՈՐԱՎՈՐ ՍԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԻՐ ՈՐԴՈՒ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ / ԱՏՈՄՅԱՆԻ ՀՈԳՈՒ ԵՎ ՄԱՐՄՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, 2017 Թ.:

Այս և նախորդ կանթեղների նվիրատու Ժենյա Ատոմյանն իր որդիներից Միքայելի հետ եկեղեցու բակում կանգնեցված խաչքարերից մեկի նվիրատուն է (արձ. 28):

49. ԿԱՆԹԵՂ. *արծաթյա, նվիրատու՝ Նարինե Հակոբյան, 2017 թ.*

ԿԱՆԹԵՂՍ ՋԱՅՍ ՆՈՒԷՐ Է ԶՕՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՒԱՏԱՒՈՐ ԶԱՒԱԿԷՆ՝ ՏԻԿԻՆ ՆԱՐԻՆԷ ՀԱԿՈԲԵԱՆԷ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԵԼՈՅՍ ԱՄՈՒՍՆՈՅ ԻՒՐՈՅ՝ ՀՐԱՉ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ, 2017։

50. ԿԱՆԹԵՂ. *արծաթյա, նվիրատու՝ Տ. Գրիգոր քհն. Գրիգորյան, 2017 թ.*

ԿԱՆԹԵՂՍ ՋԱՅՍ ՆՈՒԷՐ Է ԶՕՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ՝ Ի Տ. ԳՐԻԳՈՐ ՔՀՆ. ԳՐԻԳՈՐԵԱՆԷ, Ի ՆՇԱՆԱՒՈՐՈՒՄՆ ԲԱՐԵՅԱՋՈՂ ԾՆՆԴԵԱՆ ՍԻՐԱՍՈՒՆ ՈՐԴԻՈՅՆ ԻՒՐՈՅ՝ ՄՈՆԹԷ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ, 2017։

51. ԿԱՆԹԵՂ. *արծաթյա, նվիրատու՝ Անդրանիկ Բաբոյան, 2017 թ.*

ԿԱՆԹԵՂՍ ՋԱՅՍ ՆՈՒԷՐ Է ԶՕՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ՝ Ի ԱՆԴՐԱՆԻԿ ԲԱԲՈԵԱՆԷ, Ի ՆՇԱՆԱՒՈՐՈՒՄՆ ԲԱՐԵՅԱՋՈՂ ԾՆՆԴԵԱՆ ՍԻՐԱՍՈՒՆ ՈՐԴԻՈՅՆ ԻՒՐՈՅ՝ ԼԵՈ ԲԱԲՈԵԱՆԻ, 2017։

52. ԿԱՆԹԵՂ. *արծաթյա, նվիրատուներ՝ Եգոր, Մխիթար, Մկրտիչ Բաղդասարյան եղբայրներ, 2017 թ.*

† ՆՎԵՐ ԶՈՐԱՎՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ՝ ԵԳՈՐ, ՄԽԻԹԱՐ, ՄԿՐՏԻՉ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՑ, 2017 Թ.:

53. ԿԱՆԹԵՂ. *արծաթյա, նվիրատու՝ Երանուհի Մուրադյան.*

ՆՈՒՀԷ Է ԿԱՆԹԵՂՍ ԵՐԱՆՈՒՀԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՑ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԵԼՈՅՍ ԾՆՈՂԱՅՆ ԻՐՈՑ՝ ՎԱՐԴԱՆ ԵՒ ՌՈՋԱ ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐԻ։

54. ԿԱՆԹԵՂ. արծաթյա, նվիրատու՝ Հակոբ Հակոբյան, 2018 թ.

ԿԱՆԹԵՂՍ ՁԱՅՍ ՆՈՒՀԷ Է ՁՕՐԱՒՈՐ ՍԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՒԱՏԱՒՈՐ ՁԱՒԱԿԷՆ՝ ՏԻԱՐ ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԷ, 2018 Թ.

55. ԿԱՆԹԵՂ. արծաթյա, շղթաներով, նվիրատու՝ Արամ Ղուկասյան, 2018 թ.

† ԿԱՆԹԵՂՍ ՁԱՅՍ ՆՈՒՀԷ Է ՁՕՐԱՒՈՐ ՍԲ. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՒԱՏԱՒՈՐ ՁԱՒԱԿԷՆ՝ ԱՐԱՄ ՂՈՒԿԱՍԵԱՆԷ, 2018։

56. ԿԱՆԹԵՂ. արծաթյա, նվիրատուներ՝ տեր և տիկին Արամ և Ռուզաննա Վարդանյաններ, 2018 թ.

† ԿԱՆԹԵՂՍ ՁԱՅՍ ՆՈՒՀԷ Է ՁՕՐԱՒՈՐ ՍԲ. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՒԱՏԱՒՈՐ ՁԱՒԱԿԱՑՆ՝ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԱՐԱՄ ԵՒ ՌՈՒԶԱՆՆԱ ՎԱՐԴԱՆԵԱՆՆԵՐԷ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԵԼՈՅՍ ՁԱՒԱԿԱՑ ԻՐԵԱՆՑ՝ ԱՐՄԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ, 2018։

Միևնույն Արման Հարությունյանի հիշատակին էր կանգնեցվել նաև եկեղեցու բակի 2015 թվակիր Ջուղայի խաչքարի կրկնօրինակը (արձ. 26)։

57. ԿԱՆԹԵՂ. արծաթյա, նվիրատու՝ Սամվել Շահնազարյան, 2018 թ.

† ԿԱՆԹԵՂՍ ՁԱՅՍ ՆՈՒՀԷ Է ՁՕՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՒԱՏԱՒՈՐ ՁԱՒԱԿԷՆ՝ ՍԱՄՈՒԷԼ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆԷ, 2018։

58. ԿԱՆԹԵՂ. արծաթյա, նվիրատու՝ Արամ Ֆրանկյան, 2019 թ.

† ԿԱՆԹԵՂՍ ՁԱՅՍ ՆՈՒՀԷ Է ՁՕՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՒԱՏԱՒՈՐ ՁԱՒԱԿԷՆ՝ ՏԻԱՐ ԱՐԱՄ ՖՐԱՆԿԵԱՆԷ, Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԵԼՈՅՍ ԾՆՈՂԱՅՆ ԻՐՈՑ՝ ՀԱՅԿ ՖՐԱՆԿԵԱՆԻ ԵՒ ՖԵՆԵԱՅ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ, ԵՐԵՒԱՆ, 2019 Թ.

59. ԿԱՆԹԵՂ. արծաթյա, նվիրատու՝ Արամ Ֆրանկյան, 2019 թ.

† ԿԱՆԹԵՂՍ ՁԱՅՍ ՆՈՒՀԷ Է ՁՕՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՒԱՏԱՒՈՐ ՁԱՒԱԿԷՆ՝ ՏԻԱՐ ԱՐԱՄ ՖՐԱՆԿԵԱՆԷ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ ՖՐԱՆԿԵԱՆ ԵՒ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԱՑ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՆՆՋԵՑԵԼՈՅՆ, ԵՐԵՒԱՆ, 2019 Թ.

60. ԿԱՆԹԵՂ. արծաթյա, նվիրատու՝ Արամ Ֆրանկյան, 2019 թ.

† ԿԱՆԹԵՂՍ ՁԱՅՍ ՆՈՒՀԷ Է ՁՕՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՒԱՏԱՒՈՐ ՁԱՒԱԿԷՆ՝ ՏԻԱՐ ԱՐԱՄ ՖՐԱՆԿԵԱՆԷ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ ՎԱՍՆ ՀԱՒԱՏՈՅ ԵՒ ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ Ի ԱՐՑԱԽ ԵՒ Ի ՀԱՅԱՍՏԱՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ ՔԱՋ ՁԻՆՈՒՈՐԱՑՆ, ԵՐԵՒԱՆ, 2019 Թ.

61. ԿԱՆԹԵՂ. արծաթյա, նվիրատու՝ Վահե Շամիրյան, 2019 թ.

† ԿԱՆԹԵՂՍ ՁԱՅՍ ՆՈՒՀԷ Է ՁՕՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՒԱՏԱՒՈՐ ՁԱՒԱԿԷՆ՝ ՏԻԱՐ ՎԱՀԷ ՇԱՄԻՐԵԱՆԷ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԵԼՈՅՍ ՀՕՐՆ ԻՐՈՑ՝ ՌՈԲԵՐՏ ՇԱՄԻՐԵԱՆԻ, 2019 Թ.

62. ԿԱՆԹԵՂ. արծաթյա, նվիրատու՝ Վահե Շամիրյան, 2019 թ.

† ԿԱՆԹԵՂՍ ՋԱՅՍ ՆՈՒՀԷՐ Է ՋՕՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՒԱՏԱՒՈՐ ՋԱՒԱԿԷՆ՝ ՏԻԱՐ ՎԱՀԷ ՇԱՄԻՐԵԱՆԷ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԵԼՈՅՍ ԿՆՈՋՆ ԻՒՐՈՅ՝ ԹԵՐՄԻՆԷ ՋԱՊՈՒԽԵԱՆԻ, 2019 Թ.

63. ԿԱՆԹԵՂ. *արծաթյա, նվիրատուներ՝ Ժենյա Ատոմյան և Հակոբ Մանասարյան, 2019 թ.*

† ԿԱՆԹԵՂՍ ՋԱՅՍ ՆՈՒՀԷՐ Է ՋՕՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՒԱՏԱՒՈՐ ՋԱՒԱԿԱՑՆ՝ ԺԵՆԻԱՅ ԱՏՈՄԵԱՆԷ ԵՒ ՅԱԿՈԲԱՅ ՄԱՆԱՍԱՐԵԱՆԷ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԵԼՈՅՍ ԱՂԱՍԻ ԱՏՈՄԵԱՆԻ, 2019։

64. ՄՅՈՒՌՈՆԱԹԱՓ ԱՂԱՎՆԻ. *արծաթյա, ստորագրված՝ Ա. Բ., 1978 թ., կոնաձև պատվանդանը ներքուստ բոլորում է միատող արձանագրությունը (նկ. 125).*

ԵՐԵՎԱՆԻ Ս. ՋՕՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ, 1978 Թ., ՍԱՐՔԵՑԻ Ա. Բ.

65. ՄՅՈՒՌՈՆԱԹԱՓ ԱՂԱՎՆԻ. *արծաթյա, նվիրատու՝ Մանվել Բաբայան, 2016 թ. (նկ. 126).*

† ՆՈՒՀԷՐ ՋՕՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՏԻԱՐ ՄԱՆՈՒԷԼ ԲԱԲԱԵԱՆԷ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԵԼՈՅՍ ՆԵԼԻ ԲԱԲԱԵԱՆԻ. 2016։ «ՈՐՔ ՀԱՆԴԻՊԻՔ ՏԵՍԼԵԱՄԲ ԵՒ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ, ՏՈՒՔ ՈՂՈՐՄԻ ԵՒ ԴՈՒՔ ՅԻՇԵԱԼ ԼԻՋԻՔ Ի ՏԵԱՌՆԷ ՄԵՐՄԷ՝ ՅԻՍՈՒՍԷ ՔՐԻՍՏՈՍԷ. ԱՄԷՆ»։

66. ՍԿԻՀ-ՄԱՂՋՄԱՅՈՎ. *արծաթյա, գնդաձև իրանի շրջանի մեջ ներառված պատկերներից մեկում Ս. էջմիածին Մայր տաճարն է։ Կոնաձև նստուկի ստորին մասում առկա է ելնդատառ միատող մակագրություն.*

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ. ՌՆԼ. (1981)։

67. ՏԱՊԱՆԱԿ. *արծաթյա, նվիրատու՝ Մանվել Բաբայան, 2015 թ.։ Փորագիր արձանագրությունը՝ կոթունին և նստուկի շուրթին.*

ՆՈՒԻՐԵՑԱԻ ՏԱՊԱՆԱԿՍ ԱՅՍ ՋՕՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ / ԵԿԵՂԵՑԻՈՅՆ՝ Ի ՄԱՆՈՒԷԼ ԲԱԲԱԵԱՆԷ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ / ԲԱՐԵՀՈԳԻ ԾՆՈՂԱՑ, ՀՕՐՆ՝ ԳՈՒՐԳԵՆ ԲԱԲԱԵԱՆԻ ԵՒ ՄՕՐՆ՝ ՍՈՖՅԱ ԲԱԲԱԵԱՆԻ, ՈՐՔ ՀԱՆԴԻՊԻՔ ՏԵՍԼԵԱՄԲ ԵՒ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՏՈՒՔ ՈՂՈՐՄԻ, ԵՒ ԴՈՒՔ ՅԻՇԵԱԼ ԼԻՋԻՔ Ի ՏԵԱՌՆԷ ՄԵՐՄԷ՝ ՀԻՍՈՒՍԷ ՔՐԻՍՏՈՍԷ. ԱՄԷՆ / 2015։

Այս առարկան ուշագրավ է նրանով, որ էլիպսաձև շրջանակի մեջ ամփոփում է նաև պատրաստող վարպետ Մամիկոնի անվան ստորագրությունը։

68. ԲԹՆՈՑ. *արծաթյա, դրվագազարդ, հարդարված կարմիր ակերով, նվիրատու՝ Անահիտ Սիմոնյան, 2018 թ.*

ՆՈՒՀԷՐ ՋՕՐԱՒՈՐ ՍՐ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՒԱՏԱՒՈՐ ՋԱՒԱԿԷՆ՝ ԱՆԱՀԻՏ ՍԻՄՈՆԵԱՆԷ, 2018։

69. ՁԵՌԱՑ ԽԱՉ. *արծաթյա, ականակուռ և հյուսածո զարդերով, ձիթենյաց ծառի մասունքով, նվիրատու՝ Արթուր Բալայան, 2015 թ., կոթունին ունի եռատող փորագիր արձանագրություն.*

2015. ՆՎԵՐ ՋՕՐԱՎՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ՝ ԱՐԹՈՒՐ ԲԱԼԱՅԱՆԻՑ։

70. ՁԵՌԱՑ ԽԱՉ. *արծաթյա, նվիրատու՝ Լիաննա Սուքիասյան, 2018 թ., կոթունին առկա է երկտող արձանագրություն (նկ. 154).*

ՁԵՌԱՑ ԽԱՉՍ ՋԱՅՍ ՆՈՒՀԷՐ Է ՋՕՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ

Ի ԼԻԱՆՆԱ ՍՈՒՔԻԱՍԵԱՆԷ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ ՎԱՐԱԶԴԱՏԱՅ ՍՈՒՔԻԱՍԵԱՆԻ՝ ՀՕՐ ԻՐՈՅ 2018 Թ.

71. ՁԱՁԱՆԶ. արծաթյա, ականակուռ և հյուսածո եզերազարդով, նվիրատու՝ եկեղեցու ներկայիս հոգևոր հովիվ Տ. Գրիգոր քհն. Գրիգորյան, 2018 թ., դարձերեսին ունի շրջանաձև միատող փորագիր արձանագրություն (նկ. 136).

ՆՎԵՐ ՋՈՐԱՎՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ՝ Տ. ԳՐԻԳՈՐ Ք ԼԱՅՀԼԱՅՆԼԱՅ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՑ, 2018 Թ.

72. ՁԱՁԱՆԶ. արծաթյա, ականակուռ և հյուսածո զարդերով, Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու համայնքի անդամների կողմից, 2018 թ., դարձերեսին ունի շրջանաձև միատող փորագիր արձանագրություն (նկ. 137ա, բ).

ՆՎԵՐ ՋՈՐԱՎՈՐ ՍԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ, 2018 Թ.

Միևնույն համայնքի կողմից եկեղեցուն նվիրաբերվել է նմանօրինակ ևս մի առարկա՝ նույն արձանագրությամբ, որն առանձին չենք հիշատակում:

73. ՁԱՁԱՆԶ. արծաթյա, նվիրատու՝ Անդրանիկ Բաբոյան, 2018 թ., դարձերեսին ունի շրջանաձև նմանօրինակ արձանագրություն.

† ՁԱՁԱՆԶՍ ՋԱՅՍ ՆՈՒՅԷՐ Է ՋՕՐԱՒՈՐ ՍԲ. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՒԱՏԱՒՈՐ ՋԱՒԱԿԷՆ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ԲԱԲՈԵԱՆԷ, 2018 Թ.

Անդրանիկ Բաբոյանի կողմից եկեղեցուն նվիրաբերվել է նմանօրինակ ևս մի առարկա՝ նույն արձանագրությամբ. առանձին չենք հիշատակում:

74. ՁԱՁԱՆԶ. արծաթյա, նվիրատու՝ Ժաննա Ղազարյան, 2020 թ. (նկ. 140ա).

ՁԱՁԱՆԶՍ ՋԱՅՍ ՆՈՒՅԷՐ Է ՋՕՐԱՒՈՐ ՍԲ. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ Ի ՀԱՒԱՏԱՒՈՐ ՋԱՒԱԿԷՆ՝ ԺԱՆՆԱ ՂԱԶԱՐԵԱՆԷ, Ի ՅԻՇԱՏԱԿ ԾՆՈՂԱՑՆ ԻՐՈՅ՝ ՂԱԶԱՐ ԵՒ ՅԱՍՄԻԿ ՂԱԶԱՐԵԱՆՆԵՐԻ, 2020 Թ.:

75. ՁԱՁԱՆԶ. արծաթյա, նվիրատու՝ Գագիկ Ավետիսյան, 2020 թ. (նկ. 140բ).

ՁԱՁԱՆԶՍ ՋԱՅՍ ՆՈՒՅԷՐ Է ՋՕՐԱՒՈՐ ՍԲ. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ Ի ՀԱՒԱՏԱՒՈՐ ՋԱՒԱԿԷՆ՝ ԳԱԳԻԿ ԱՒԵՏԻՍԵԱՆԷ, Ի ՅԻՇԱՏԱԿ ԾՆՈՂԱՑՆ ԻՐՈՅ՝ ՆԱՀԱՊԵՏ ԵՒ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԱՒԵՏԻՍԵԱՆՆԵՐԻ, 2020 Թ.

76. ՁԱՁԱՆԶ. արծաթյա, նվիրատու՝ Անդրանիկ Բաբոյան: Ունի մարմարյա կլոր պատվանդան, որին ամրացված շրջանաձև արծաթյա զարդագոտին բոլորում է միատող փորագիր արձանագրությունը (նկ. 138ա, բ).

ՁԱՁԱՆԶՍ ՋԱՅՍ ՆՈՒՅԷՐ Է ՋՕՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՒԱՏԱՒՈՐ ՋԱՒԱԿԷՆ՝ ՏԻԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ԲԱԲՈԵԱՆԷ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ ՎԱՂԱՄԵՌԻԿ ՄԵՐՈՒԺԱՆ ԽԱԶԱՏՐԵԱՆԻ:

77. ՁԱՁԱՆԶ. արծաթյա, նման նախորդին, նվիրատու՝ Անդրանիկ Բաբոյան.

ՁԱՁԱՆԶՍ ՋԱՅՍ ՆՈՒՅԷՐ Է ՋՕՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՒԱՏԱՒՈՐ ՋԱՒԱԿԷՆ՝ ՏԻԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ԲԱԲՈԵԱՆԷ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԵԼՈՅՍ ՆԱՀԵԼԻ ԲԱԲՈԵԱՆԻ:

78. Ս. ՍԵՂԱՆԻ ԽԱՉ. *արծաթյա, ականակուռ, հյուսածո զարդերով, նվիրատու՝ Ալբերտ Շահբազյան, ունի արծաթյա կլոր պատվանդան, որը բոլորում է միատող փորագիր արձանագրությունը.*

ՆՎԵՐ ՍՈՒՐԲ ՋՈՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒՆ՝
Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ՀԱՎԱՏԱՅԵԼՈՅ, 15. IX. 1985.
ԱԼԲԵՐՏ ԲԱԼԱԲԵԿԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻՑ:

79. Ս. ՍԵՂԱՆԻ ԽԱՉ. *արծաթյա, մարմարյա պատվանդանով, բարձր.՝ 0,52 մ, նվիրատուներ՝ Դավիթ Սամուելյան և Ադելինա Բալասանյան, պատվանդանին փակցված ուղղանկյունաձև մետաղին առկա է հետևյալ գրությունը, 5 տող.*

ՍՈՒՐԲ ՍԵՂԱՆԻ ԱՅՍ ԽԱՉՆ
ԸՆԾԱՅԱԲԵՐՈՒԵԼ Է / ԵՐԵԻԱՆԻ ՋՕՐԱՒՈՐ
ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ / ԵԿԵՂԵՑՈՒՆ՝
ԲԱՐԵՊԱՇՏ ԱՄՈԼ ՏԻԱՐ ԴԱՒԻԹ / ԽԱՉԻԿԻ
ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ ԵՒ ՏԻԿԻՆ ԱԴԵԼԻՆԱ /
ՍԱՄՈՒԷԼԻ ԲԱԼԱՍԱՆԵԱՆԻ ԿՈՂՄԻՑ:

80. Ս. ՍԵՂԱՆԻ ԽԱՉ. *արծաթյա, ականակուռ, ճոխ զարդատարրերով, արմավազարդով, ունի գնդաձև, ապա՝ հարթ և կլոր մարմարյա պատվանդաններ, վերջինիս վրա փակցված արծաթյա շրջանակին առկա է միատող փորագիր արձանագրություն.*

ՋՐՕՐՀՆՅԱՅ ԱՅՍ ՍՈՒՐԲ ԽԱՉԸ ՆՎԵՐ Է
ՋՈՐԱՎՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ՝
ԲԱԴԵՑԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՑ:

81. Ս. ՍԵՂԱՆԻ ԽԱՉ. *արծաթյա, ականակուռ, հյուսածո զարդերով, ունի կլոր մարմարյա պատվանդան, նվիրատու՝ Վոլոդյա Խաչատրյան, 2005 թ., դարձերեսին ունի 18 տողից փորագիր արձանագրություն (նկ. 141ա, բ).*

ՍՐ / ՋՈՐԱՎՈՐ / Ա[ՍՏՎԱ]ԾԱԾԻՆ / ԵԿԵ/ՂԵ/
ՑՈՒՆ՝ / Ի ՀԻՇԱՏԱԿ ՆԻԿՈԼ ԵՎ ԲԱԼԱՍԱՆ /
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆՆԵՐԻ, / ՎՈ/ԼՈԴ/ՅԱ / ԽԱ-/
ՉԱ/ՏՐ/ՅԱ/ՆԻՑ, / ԵՐԵՎԱՆ, / 2005 Թ.

82. ՄԱՍՈՒՆՔԱԿԻՐ ԽԱՉ. *արծաթյա, կենաց փայտի մասունքով, նվիրատու՝ Գեղամ Ղուկասյան, 2017 թ. (նկ. 148).*

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՒ
ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ Տ. ՆԱԻԱՍԱՐԴԻ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿՃՈՅԵԱՆ, ԱՐԴԵԱՄԲ
ԲԱՐԵՊԱՇՏ ՁԱԻԱԿԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՄԵՐՈՅ ԳԵՂԱՄԱՅ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ, ՅԱՄԻ
ՏԵԱՌՆ 2017 ՊԱՏՐԱՍՏԵՑԱԻ ԽԱՉՍ ԵԻ
Ի ՍՄԱ ԱՄՓՈՓԵՑԱԻ ՁՄԱՍՆ Ի ԿԵՆԱՑ
ՓԱՅՏԷ, ՈՐՊԷՍ ՁԵԻՇԱՏԱԿ Ի ԴՈՒԻՆ ՍՈՒՐԲ
ՋՕՐԱՒՈՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ:

Այս մասունքակիր խաչը ներկայումս զետեղված է եկեղեցու ավագ խորանի աջակողմյան ապակեծածկ պատրհանում և դուրս է հանվում յուրաքանչյուր տարվա վարագա Սուրբ Խաչի տոնին: Կարդինալական դրոշմով կնքված մասունքը արտերկրում ձեռք է բերել Գեղամ Ղուկասյանը, ապա նվիրել Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցուն, որից հետո պատրաստվել է արծաթյա խաչն ու մասունքը տեղադրվել խաչաթևերի հատման մասում:

83. ՄԱՍՈՒՆՔԱԿԻՐ ԽԱՉ ՄԱՍՆԱՏՈՒՓ-ՊԱՀԱՐԱՆՈՎ. *արծաթյա, կենաց փայտի և մի քանի սրբերի մասունքներով: Ժթ. դարին բնորոշ ձեռաց խաչը վերջերս ամփոփվել է երկփեղկ դռներով արծաթյա մասնատուփի մեջ, որը պատրաստվել է եկեղեցու բարեպաշտ զավակների միջոցներով, վարպետ Հայկ Մխիթարյանի կողմից: Մասնատուփի հակառակ կողմում կազմվել է 22 տողից բաղկացած հետևյալ ելնդատառ արձանագրությունը (նկ. 150ա–է).*

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ / Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆԻ
Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ / ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ / ԵԻ

ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ / Տ. ՆԱԻԱՍԱՐԴԱՑ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ / ԿՃՈՑԵԱՆԻ ԵԻ Ի ՀՈՎՈՒՈՒԹԵԱՆ / Տ. ԳՐԻԳՈՐԻ ՔԱՀԱՆԱՅԻ / ԳՐԻԳՈՐԵԱՆԻ, ԱՐԴԵԱՄԲ / ԲԱՐԵՊԱՇՏ ՋԱԻԱԿԱՅՆ / ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ՄԵՐՈՅ , Ի ԹՈՒԻՆ / ՀԱՅՈՑ ՌՆԿԷ. ԵԻ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ / 2018 ՊԱՏՐԱՍՏԵՑԱՒ ՊԱՀԱՐԱՆ / ՄԱՍՆԱՏՈՒԻՓՍ ԵԻ Ի ՍՄԱ / ԱՄՓՈՓԵՑԱԻ ԺԹ ԴԱՐՈՒ / ՄԱՍՈՒՆՔԱԿԻՐ ԱՐԾԱԹԷ ԽԱՉՍ, / ՅՈՐՈՒՄ ԿԱՆ ՄԱՍՈՒՆՔ ԿԵՆԱՑ / ՓԱՅՏԻ, Ս. ԲԱՐՍՂԻ ԿԵՍԱՐԱՑԻՈՑ, / Ս. ՄԱԿԱՐԻՈՍԻ ԵԻ ԵԻՍ ՄԱՍՈՒՆՔ / ԵՐԿՈՒ, ՈՐՔ ՁՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՍ / ՈՋ ՈՒՆԻՆ: ՅԻՇԱՏԱԿ Ի ԴՈՒՌՆ / ՋՈՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ / ԵԿԵՂԵՑԻՈՑ:

Մասնատուփ-պահարանի տակ՝ նեղ հատվածում, նշված են եկեղեցու անունը, վարպետի կնիքն ու ստորագրությունը.

ՋՈՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ: ՎԱՐՊԵՏ ՀԱՅԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ:

*Ուրախությամբ պետք է փաստենք, որ տարիներ առաջ եկեղեցուն նվիրաբերված սեղանի խաչերից մեկն իր չորս խաչաթևերում և նույն թևերի հատման կետում ամփոփում է մի քանի սրբերի մասունքներ (նկ. 150ա–է), որոնցից որոշների անուննե-րը եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Գրիգոր քհն. Գրիգորյանի առաջարկով մեզ հաջողվեց պարզել նրանցում զետեղված գրությունների վերծանման շնորհիվ: Խաչաթևերի հատման մասում ամփոփված են Տիրոջ կենաց փայտից և այլ երկու մասունքներ, որտեղ ժթ. դարին բնորոշ շղագրով հետևյալ գրությունն է. «Կենաց փայտ եւ այլ Բ. (2) մասունք»: Վերին ուղղահայաց խաչաթևի գրության համաձայն՝ այստեղ ամփոփված է համաքրիստոնեական սուրբ Մակարիոս (Մարկարիոս) քահանայի մասունքը. «Այս է Սբ. Մարկարիոսի մասունքն է», իսկ աջ խաչաթևն ամփոփում է Ընդհանրական եկեղեցու տասներկու նշանավոր վարդապետներից մեկի՝ Բարսեղ Կեսարացու երկու մասունք՝ հետևյալ գրությամբ. «Այս Բ. (2) Սբ. մասունքըն Բարսեղ Կեսարացուն է»: Ձախ և ստորին ուղղահայաց խաչաթևերը ևս մասունքակիր են, սակայն գրությունների համար նախատեսված թղթերին գրեր չկան: Բավական ուշագրավ այս խաչի մասին մեզ հետաքրքիր տեղեկություններ հաղորդեց Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու ուխտավորներից, երևանաբնակ տիկին Լուսյա Գրիգորի Թիլիկյանը (ծնվ. 1938 թ.): Ըստ նրա՝ մասունքակիր խաչը ծագումով Արմաշի Ջարխափան Ս. Աստվածածին եկեղեցուց է, որը Տ. Եղիա քահանայի ջանքերով 1925 թ. փոխադրվել է Հունաստան, ապա՝ Երևան: Երևանում խաչը գտնվել է Տ. Եղիայի դուստր Խոսրովուհու մոտ և միայն 1960-ականներին՝ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանի (հետագայում՝ Վահան եպս. Տերյան) օրոք, Խոսրովուհին խաչը նվիրաբերել է Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցուն:

2018 թ. եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Գրիգոր քհն. Գրիգորյանի նախաձեռնությամբ և համայնքի անդամների նվիրատվությամբ խաչի համար պատրաստվել է արծաթյա շքեղ մասունքատուփ-պահարան, որը հարդարված է փեղկերին՝ Ս. Թադեոսի և Ս. Բարդուղիմեոսի, նրանց շուրջը՝ Տիրամոր և Հովհաննես ավետարանչի, Քրիստոսի և Հովհաննես Մկրտչի, չորս ավետարանիչների և նրանց խորհրդանիշների պատկերաքանդակներով, իսկ պահարանի կողային նեղ հատվածներում պատկերված են վերևում՝ Սուրբ Հոգին, աջ և ձախ կողմում՝ շրջան-մեդալիոնների հենքով ներկայացված տասներկու առաքյալները: Պատկերներին կից առկա են համապատասխան գրությունները:

84. ՄԱՍՈՒՆՔԱԿԻՐ ՁԱՁԱՆԶ. *արծաթյա, Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքով, նվիրատու՝ Գեղամ Ղուկասյան, 2019 թ. (նկ. 149).*

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ Տ. ՆԱԻԱՍԱՐԴԱՑ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿՃՈՑԵԱՆԻ ԵՒ Ի ՀՈՎՈՒՀՈՒԹԵԱՆ Տ. ԳՐԻԳՈՐԻ ՔԱՀԱՆԱՅԻ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ, ԱՐԴԵԱՄԲ ԲԱՐԵՊԱՇՏ ՋԱՒԱԿԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ՄԵՐՈՑ ԳԵՂԱՄԱՑ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ, Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ՌՆԿԸ ԵՒ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 2019 ՊԱՏՐԱՍՏԵՑԱՒ ՁԱՁԱՆԶ-ՄԱՍՆԱՏՈՒՓՍ ԵՒ Ի ՍՄԱ ԱՄՓՈՓԵՑԱՒ ՋՄԱՍՈՒՆՔ ՍՐԲՈՑ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՄԵՐՈՑ, ՅԻՇԱՏԱԿ Ի ԴՈՒՌՆ ՋՈՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ։

85. ՄԱՍՆԱՏՈՒՓ. *նվիրատու՝ Եսայան ընտանիք, 2020 թ. (նկ. 155ա, բ)*

ՄԱՍՆԱՏՈՒՓՍ ՁԱՅՍ ՆՈՒԷՐ Է ՋՈՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՅԵՍԱՅԱՆ ԸՆՏԱՆԵՆԱՑ, 2020 Թ.

86. ԲԱԺԱԿԱՄԱՆ. *արծաթյա, նվիրատու՝ Նաիրա Սարգսյան։ Հարդարված է քառաթև սերովբեներով և խաչերով, ունի մաղզմա՝ նման հարդարատարրերով, բաժակամանի նստուկի տակ առկա է շրջանաձև երկտող փորագիր արձանագրություն (նկ. 128).*

ՆԱԻՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՑ ՆՎԵՐ ՋՈՐԱՎՈՐ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ Ի ՓԱՌՍ ԱՍՏԾՈ։

87. ԿԵՌՈՆ. *նվիրատուներ՝ Գագիկ և Գայանե Գալստյաններ, 2020 թ. (նկ. 143ա, բ).*

ԿԵՌՈՆՍ ՁԱՅՍ ՆՈՒԷՐ Է ՋՈՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՑՆ ՀԱՒԱՏԱՒՈՐ ՋԱՒԱԿԱՑՆ՝ ԳԱԳԻԿ ԵՒ ԳԱՅԻԱՆԷ ԳԱԼՍՏԵԱՆՆԵՐԷ՝ ՎԱՍՆ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՋԱՒԱԿԱՑ ԻՒՐԵԱՆՑ, 2020։

88. ԳՐՔԻ ԿԱՋՄ. *նվիրատու՝ Լյուդվիգ Գայիջյան, 1985 թ.։ Վաղարշապատում՝ 1906 թ. հրատարակված Ավետարանի նոր կարմիր կաշեկազմին փակցված մետաղյա պիտակին հետևյալ քառատող փորագիր և մանրատառ հիշատակագրությունն է.*

Յիշատակ / Ս. Ջօրավոր եկեղեցուն / Լյուդվիգ Գայիջեանից, / Երևան, 1985։

89. ԳՐՔԻ ԿԱՋՄ. *նվիրատու՝ Համլետ Սարոյան, 2013 թ.։ Երուսաղեմում՝ 1868 թ. հրատարակված ճաշոց գրքի նոր կարմիր կաշեկազմը հարդարված է արծաթյա ձուլածո պատկերաքանդակներով, մասնավորապես՝ Ա. փեղկի կենտրոնում ոճավոր խաչն է՝ թևերի հատման կետում՝ «է», չորս անկյուններում ավետարանիչներն են իրենց խորհրդանիշների հետ, իսկ Բ. փեղկի կենտրոնում արևմտաեվրոպական պատկերագրությանը բնորոշ «խաչելություն» տեսարանն է, անկյուններում մեկական վեցաթև սերովբեներ։ Կազմի մեջքին հետևյալ երկտող արձանագրությունն է.*

ՀԱՄԼԵՏ ՍԱՐՈՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՑ ՋՈՐԱՎՈՐ / ՍԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ, ԵՐԵՎԱՆ, 2013։

90. ԳՐՔԻ ԿԱՋՄ. *նվիրատու՝ Հարությունյան ընտանիք, 2019 թ.։ Թեհրանում՝ 2008 թ. հրատարակված Մաշտոցի զույգ արծաթապատ փեղկերին «Մկրտություն» և «Խորհրդավոր ընթրիք» տեսարաններն են (նկ. 152ա–գ)։ Վերջինս ՄՄ Հ՚՛ 316 Ավետարանից հայտնի մանրանկարի (ԺԴ. դար) կրկնօրինակն է։ Գրքի մեջքի կրկնակազմին նվիրատուի երկտող արձանագրությունն է.*

ՆՎԵՐ ՁՈՐԱՎՈՐ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ / ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՑ։

* * *

Եկեղեցական առարկաներից հարկ է հիշատակել նաև զանգակատան նախկին արձանագիր զանգը, ինչպես նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնից յուրաքանչյուր տարի եկեղեցի բերվող Ս. Անանիա առաքյալի մասունքակիր աջը, որը ևս արձանագիր է։

Տ. Գրիգոր քհն. Գրիգորյանի նախաձեռնությամբ, տեր և տիկին Ռոբերտ Շամիրյանի և Մեդեա Մկրտումյանի մեկենասությամբ 2017 թ. նոյեմբերին եկեղեցու զանգակատունը համալրվեց երեք նոր զանգերով։ Նախկին պղնձյա զանգը նեկայումս կախված է հովվատան արևելյան պատի մետաղյա ամրակից.

91. ՁԱՆԳ. (բարձրությունը՝ 0,54 մ, տրամագիծը՝ 0,50 մ) իրանի կենտրոնում ունի 6 տողից կազմված փորագիր արձանագրություն, որը, ցավոք, զանգի կոտրվածքի և հետագա զոդման արդյունքում միջնամասում վնասվել է։ Այդուհանդերձ, հիշատակագրությունը հիմնականում ընթեռնելի է, վերծանությունը՝ ստորև (նկ. 156ա, բ).



ՅԻՇԼԱՅՏԼԱՅԿ Է ՁԱՆԳԱԿՍ Ի ԴՈՒՌՆ
ՍՈՒՐԲ ...Ս ԵԿԼԵՑԵՑՈՅ
Ի ԹԻԼՔԻՁԵՑԻ ԵՐԻՑ ԵՂԲԱՐՑ՝
ԳԷՈՐԳ, ՄԱՏԵՍԻ ԳԱՍՊԱՐ
ԵՒ ԲԱՂԴԱՍԱՐ ԽՕՍՐՈՎԵԱՆՑԻ
ՀՈ/ԳՈՑ 18..., 27 ՄԱՐՏԻ, ՅԵՐԵՒԱՆ։

Ձանգի կոտրվածքի հետևանքով կորստյան է մատնվել ինչպես եկեղեցու անվան, այնպես էլ թվականի հատվածները։ Եկեղեցին, որին նվիրաբերվել է զանգը, պետք է որ Ձորավոր Ս. Աստվածածինը լինի, մինչդեռ պահպանված վերջին Ս գիրը փոքր-ինչ տարակուսելու տեղիք է տալիս, միգուցե պետք է կարդալ ՍԱՐԳԻՍ, մանավանդ որ Երևանի հայտնի եկեղեցիներից մեկն է Ս. Սարգիսը, որն այնքան էլ հեռու չէ Ս. Աստվածածնից։ Ինչևէ, եթե առաջնորդվենք այս կերպ, ապա ենթադրել կարելի է, որ սկզբնապես Երևանի Ս. Սարգիս եկեղեցուն ընծայված զանգը հետագայում տեղափոխվել է Ձորավոր Ս. Աստվածածին։ Ինչ վերաբերում է թվականին, որից միայն առաջին երկու թվանիշն է պահպանվել, այն է՝ 18..., ապա հաշվի առնելով Երևանի եկեղեցիներում և, մասնավորապես, Ձորավոր Ս. Աստվածածնում շինարարական ու բարեկարգման աշխատանքների՝ առավելապես 1880-ականներից հետո իրականացված լինելու հանգամանքը, զանգը կարելի է թվագրել ԺԹ. դարի երկրորդ կեսով։ Արձանագրության 3-րդ տողի ԹԻԼՔԻՁ բառը, որի վերջնամասը չի պահպանվել, վերականգնել ենք ԹԻԼՔԻՁԵՑԻ, այսինքն՝ Թիֆլիսեցի՝ նկատի առնելով, որ հիշյալ ժամանակաշրջանում հայ մշակույթի կենտրոն Թիֆլիսում շատ էին վաճառականներն ու ունևորները, որոնք մշտապես նյութական օժանդակություն էին ցուցաբերում ի նպաստ Հայաստանի և այլ վայրերի հայկական պատմաճարտարապետական կոթողների վերականգնմանն ու բարեզարդմանը։ Կարծում ենք՝ հիշատակված երեք եղբայրները՝ Գևորգ, Գասպար և Բաղդասար Խոսրովյանցները, նվիրատուներն են, որոնք հոգացել են զանգի պատրաստման

ծախսերն ու նվիրել Երևանի եկեղեցուն: Նկատենք նաև, որ փորագրիչը Կ տառերը գլխիվայր է փորագրել:

Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցին ունի միայն իրեն բնորոշ երեք տոնակատարություններ, որոնք հռչակված են որպես եկեղեցու ուխտի օրեր:

Յուրաքանչյուր տարվա մայիսի 14-ին՝ Ս. Մովսես Տաթևացի հայրապետի հիշատակության օրը, Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցում սուրբ և անմահ պատարագի արարողությամբ կատարվում է հանդիսավոր արարողություն, և այդ օրը Մաշտոցյան Մատենադարանից եկեղեցի է բերվում «Զորավոր» Ավետարանը (ՄՄ ձեռ. Հմր 4060):

Սեպտեմբեր ամսին նշվող Վարագա Սուրբ Խաչի տոնին, հավատացյալների երկրպագության համար դուրս է հանվում եկեղեցու ավագ խորանի աջակողմյան պատրհանում ցուցադրված տերունական խաչափայտի մասունքով արծաթազարդ խաչը, որի մակագրությունը վերը հիշատակվեց (արձ. 82), իսկ Ս. Խաչի 5-րդ կիրակիին հաջորդող երեքշաբթի օրը, մեծ հանդիսավորությամբ նշվում է Ս. Անանիա առաքյալի հիշատակության տոնը, որի ընթացքում մատուցվում է սուրբ պատարագ, և սկսած 2013 թ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնից եկեղեցի է բերվում Ս. Անանիա առաքյալի մասունքակիր աջը: Գևորգ Դ. կաթողիկոսը 1874 թ. կազմել է Մայրավանքի թանգարանի Մայր Տոմարը, որտեղ նկարագրված են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարաններում եղած սրբություններն ու այլ առարկաները: Ս. Անանիա առաքյալի մասունքակիր աջն այսպես է նկարագրված. «Աջ Անանիա Առաքելոյ արծաթապատ ոսկեզօծ, յերկուս ծայրս բազկին միակարգ ապարանջանաձև գոյնզգոյն ակունք, ի բթամատն և ի ճկութն մատանի զանազան ակամբք, և ի ծայր բազկին գրի. Աստուած օրհնէ Սաւրիգեղցի Մատթէոսն ճրեց»[568]: Մասունքակիր աջի մեր ուսումնասիրությունը թույլ է տալիս վերանայել և սրբագրել մակագրության վերծանությունը, որին կցում ենք նաև գրչանկարը.

92. Ս. ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼԻ ՄԱՍՈՒՆՔԱԿԻՐ ԱՋ. ստորին հատվածի (բազկի) էլիպսաձև մակերեսին արված են յոթ զույգ գծեր, որոնց կենտրոնում՝ միատող փորագիր արձանագրությունն է (նկ. 157ա—գ).



ԱԾ Օ[Ր]ՀՆԷ ՍԱՎՐԿԵՂՑԻ [Մ]ՄԱԹԷՈՍՆ, ՈՐ ՃՐԵՑ:

Հիշատակված Մաթեոսը ծագումով Պարսկահայաստանի Սալմաստ գավառի Սավրա (Սավվ, Սավր, Սավրի, Սուրա) գյուղից է, որտեղ խոսում էին հիմնականում Սալմաստի բարբառով[569]: Սրա վառ ապացույցը վկայված ճրեց, այսինքն՝ ջրեց բառն է, որը Պարսկահայաստանի,

[568] Մայր Տօմար Ս. Էջմիածնի թանգարանի, 1874, Հմր 18, տե՛ս նաև **Հովհաննես սրկ. Մանուկյան (Հրանտ քհն.)**, Երևանի Սուրբ Անանիա առաքյալի անապատը, մագիստրոսական թեզ, էջ 15:

http://www.surbzoravor.am/post/view/surb-anania-araqyal (նյութը պատրաստեց՝ Հովհաննես սրկ. Մանուկյանը [Հրանտ քհն.]):

[569] Տեղանունների բառարան, հ. 4, Երևան, 1998, էջ 508:

Վանի ու Ղարաբաղի բարբառներին հատուկ չ-ճ հնչյունական տեղաշարժի միջոցով արտասանվել ու գրվել է ճրեց[570]*, այս դեպքում՝ չրեց, ոսկեչրեց, փայլեցրեց իմաստով: Ստացվում է, որ Մաթեոսը արծաթյա մասունքակիր աջը պատրաստող վարպետն է կամ վարպետներից մեկը, որն ավարտից հետո այն նաև ոսկեչրել-փայլեցրել է:*

Մասունքակիր աջի մատնեմատի մետաղյա շղթայից իբրև կախազարդ օգտագործվել է մի արծաթյա դրամ, որի արաբերեն մակագրության համաձայն՝ այն հատվել է Կ. Պոլսում, Հիջրի 1223 թ., Փրկչական՝ 1808/9 թվականներին: Արաբերեն բնագիրը՝ ստորև.

ضرب في قسطنطينية [12]23

(թարգմ.՝ Հատված է Կ. Պոլսում 1223 թ. [1808/9])

Արաբերեն արձանագրություն ունի նաև Ս. Անանիա առաքյալի դամբարանի կամարակապ մուտքի վերնամասի՝ ԺԹ. դարին բնորոշ փոքրաչափ սրբապատկերը[571] *(նկ. 114ա), ուր եպիսկոպոսի հանդերձանքով հասակով մեկ պատկերված է Ս. Անանիա առաքյալը՝ արաբերեն* القديس حنانيا الرسول *(թարգմ.՝ Ս. Անանիա առաքյալ) գրությամբ*[572]*:*

93. ԿՈՆՔ (ԼԱԳԱՆ). *անագապատ պղնձից, տրամագիծը՝ 0,45 մ, բարձրությունը՝ 0,12 մ, դուրս ճկված շուրթը հարդարված է ուղղանկյունաձև շրջանակներում արված բուսական և երկրաչափական զարդերով, շուրթին, թերևս բուն սեփականատիրոջ, իսկ նստուկին՝ ներքուստ, թերևս գնորդի նվիրատվական արձանագրություններն են, առաջինը՝ միատող, ելնդատառ, երկրորդը՝ միատող, շրջանաձև, փորագիր (նկ. 159).*



ՅՈՎԱՆԷՍԻ ՈՐԴԻ ԱԻԵՏԻՔ:
Յ⌊Ի⌋Շ⌊Ա⌋Տ⌊Ա⌋Կ Է ՋԵՌԱՅԼԱԳԱՆ
Խ⌊Ո⌋Ջ⌊Ա⌋Յ ՄԻՐԶԻՆ ԵՒ ԻՄ ԿՈՂԱԿԻՑ
ՅԷՎՈՒՆ ԵՒ ԻՒՐ ԴՈՒՍՏՐ ՀԱՌՈՄՍԻՄԻՆ, ՈՐ
ԵՏ ԴՈՒՌՆ ՎԵՐԻՆ ԱՆԱՊԱՏԱՅ ՍԲ ԳԷՈՐԳԻՆ՝
Յ⌊Ի⌋Շ⌊Ա⌋Տ⌊Ա⌋Կ ԻՒՐԵԱՆՑ ՀՈԳՈՒՆ. ԱՄԷՆ,
⌊ԹՎԻՆ⌋ ՌՃՂԴ. (1745):

Արձանագրության բովանդակությունից դատելով՝ 1745 թ. երեք լագան է նվիրաբերվել (պարզապես մեկն է արձանագրվել) Վերին անապատի Ս. Գևորգ եկեղեցուն՝ ի հիշատակ խոջա Միրզայի, կողակից Եվայի և, թերևս, վերջինիս դուստր Հառոմսիմի (=Հռոմսիմե): Եկեղեցու՝ Ս. Գևորգ անունը թույլ է տալիս ենթադրել, որ վկայված Վերին անապատը միևնույն Լիմ անապատն է, մանավանդ, որ Ջորավոր Ս. Աստվածածին

570 **Մ. Ասատրյան**, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Երևան, 1962, էջ 39, 205, տե՛ս նաև **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. Դ., Երևան, 1979, էջ 135:

571 Մատուռ-դամբարանի մյուս սրբապատկերները տե՛ս ներդիրներում, նկ. Մատուռ-դամբարանի մյուս սրբապատկերները տե՛ս ներդիրներում, նկ. 109–114:

572 Մակագրության վերծանությունը՝ արաբագետ Միհրան Մինասյանի:

եկեղեցում Լիմից այլ առարկաներ էլ կան (տես արձ. 35):

94. ՍԿՈՒՏԵՂ. *արույրե, տրամագիծը՝ 0,40 մ, նվիրատու՝ Ժաննա Առաքելյան, 1982 թ., ունի միատող, մանրատառ, փորագիր արձանագրություն (նկ. 160).*



Ի պայծառութիւն Ս. Ջօրատր եկեղեցւոյ, յիշատակ Ժաննա Առաքելեանից, 1982 թ.:

* * *

Ամփոփելով՝ նշենք, որ եկեղեցական առարկաների ներկա հավաքածուն եղածների միայն արձանագիր մասն է, որոնք չնայած ժամանակագրորեն հին չեն, բայց ընդհանրության մեջ եկեղեցու պատմության յուրօրինակ բաղկացուցիչն են, շնորհիվ որոնց եկեղեցին շարունակում է բարեզարդվել՝ ապրելով ավելի քան 300-ամյա իր գոյության լուսավոր դարաշրջանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Միջնադարյան Երևանի պատմությունն ամփոփված է ինչպես վիմական արձանագրությունների ու ձեռագիր մատյաններ-ի, այնպես էլ մատենագրական երկերի, ուղեգրությունների և արխիվային վավերագրերի էջերում, ուստի ավելի քան պարզ է, որ միջնադարյան յուրաքանչյուր հուշարձանի ուսումնասիրությունն անհրաժեշտ է իրականացնել նշված աղբյուրների համալիր քննությամբ: Նմանօրինակ հետազոտության արդյունք էր ներկա աշխատությունը՝ նվիրված Երևանի հինավուրց հոգևոր ու մշակութային կենտրոն Ս. Անանիա առաքյալի անապատի (մենակյացների սրբավայր) և նրա տեղում՝ 1693 թ. կառուցված Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու պատմությանն ու գրավոր ժառանգությանը: Ժէ. դարի պատմագիր Առաքել Դավրիժեցու հաղորդմամբ՝ Երևանի հյուսիսային այգիներում ծվարած Ս. Անանիայի մատուռը գոյություն ուներ «ի վաղեմի ժամանակաց», որտեղ պահպանվել էին նաև սրբի կիսավեր ատորգետնյա դամբարանն ու տապանաքարը: Պատմագրի այս վկայությունը թույլ տվեց նախ և առաջ անդրադառնալ Ս. Անանիայի պաշտամունքին, նրա վարքին ու վկայաբանությանը: Սրանով էր պայմանավորված ուսումնասիրության սկզբում Սուրբ Գրքից, Հայսմավուրքից և վարքաբանական գրականությունից քաղված՝ Ս. Անանիա առաքյալին բնութագրող հատվածների վերարտադրությունը, որը միտված էր ընթերցողին հաղորդակից դարձնելու նահատակ Ս. Անանիայի երկրային կյանքի մանրամասներին: Նյութի թելադրանքով Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրերում պահպանված լուսանցային մանրանկարների միջոցով առաջին անգամ ներկայացվեց նաև Ս. Անանիայի պատկերագրությունը հայ միջնադարյան մանրանկարչական արվեստում: Դատելով սուրբգրային և վարքաբանական վկայություններից՝ Ս. Անանիա առաքյալը Հիսուս Քրիստոսի վարդապետության հետևորդ 72 աշակերտներից մեկն էր, որը Պետրոս առաքյալի կողմից ձեռնադրվել էր Դամասկոսի եպիսկոպոս, ուստի պատահական չէ, որ մանրանկարներից մեկում նա եպիսկոպոսի հանդերձանքով է պատկերվել (ՄՄ ձեռ. Հ՞ր 4547, 63ա): Սուրբ Գրքում քանիցս նրան է վերագրվում մոլորված Սավուղին (կամ՝ Սողոսին) Դամասկոսում հոգու ու մարմնի կուրությունից բժշկելու և իբրև Պողոս մկրտելու առաքելությունը: Նրա նահատակությունը պատճառաբանված է իբրև հրեաներից ու հեթանոսներից ստացած տևական հալածանքների արդյունք, որը տեղի է ունեցել Փրկչական 70 թ.: Սրբի նշխարներն աշակերտներն ամփոփել են Դամասկոսի Հուդայի ապարանքում, որտեղ հետագայում եկեղեցի է կառուցվել: Նշխարներից մաս է տարվել Հռոմ, նաև՝ Հայաստան, որի լուռ վկան սրբի դամբարանում պահպանված ուղղանկյունաձև տապանաքարն է: Դատելով քարի կենտրոնում առկա խաչաքանդակի հորինվածքային մանրամասներից՝ այն կարելի է թվագրել ժ–ժԱ. դդ. կամ մի փոքր ավելի վաղ՝ համարելով սրբավայրից պահպանված հնագույն քարեղեն մասունքը:

Երևանի հնամենի այս սրբավայրի տեղում՝ Ս. Անանիայի ատորգետնյա

դամբարանին կից, հետագայում վանք ու միաբանություն է ստեղծվել, որտեղ նաև վանական դպրոց է գործել ու գրչության կենտրոն դարձել: Վերջինիս համալիր ուսումնասիրությունն էլ դարձավ մեր հետազոտության բուն նպատակներից մեկը: Քննությունը պարզեց, որ Երևանի այս գրչօջախում ընդօրինակված ձեռագրերը թվով 12-ն են, ևս մեկը՝ գրված 1407 թ. Տաթևի վանքում, 1658 թ. նորոգվել է այստեղ: Ժամանակագրորեն վաղագույն երկու ձեռագրերը ԺԵ. դարի առաջին կեսից են, մեկը՝ ՄՄ Հմր 6405 Քարոզգիրքն է՝ գրված 1409—1410 թթ., մյուսը՝ Մշո Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի և շրջակայքի ձեռագրացուցակի Բ. հատորում նկարագրված Հմր 20 Գանձարանը՝ 1450 թ., որը, ցավոք, մեզ չի հասել: Ձեռագրերի մեծ մասն ընդօրինակվել է 1620—1660-ական թթ., երբ Մովսես վրդ. Տաթևացու (հետագայում կաթողիկոս՝ Մովսես Գ. Տաթևացի — 1629—1633 թթ.) ջանքերով այստեղ անապատ ու վանական դպրոց էր հիմնվել, որտեղ վարդապետի աշակերտների կողմից նաև բազմաթիվ ձեռագրեր են ընդօրինակվել: Այս շրջանից հայտնի գրչագրերը հիմնականում Մաշտոցյան Մատենադարանի հավաքածուից են (ՄՄ ձեռ. Հմր 507, 1538, 3502, 4058, 5243, 6322, 9147), նույն հավաքածուից ևս մեկն ընդօրինակվել է 1773—1776 թթ. (ՄՄ ձեռ. Հմր 7939), մեկն էլ՝ 1916 թ. (ՄՄ ձեռ. Հմր 8337): Նշված ձեռագրերի գրչության ժամանակի և հետագայի բավականին ուշագրավ հիշատակարանները բացառիկ սկզբնաղբյուրներ են անապատի հիմնադրման, գրչության պայմանների, առաջնորդ-միաբանների, գրիչների ու պատվիրատուների անձի, նաև՝ երկրում տիրող քաղաքական, տնտեսական և մշակութային իրադարձությունների լուսաբանման առումով: Ուշագրավն այն է, որ այդ նույն հիշատակարանների առանցքում քանիցս մանրամասն բնութագրվում է մեծ րաբունապետ, մեր երկրորդ լուսավորիչ Մովսես Տաթևացու անձն ու նրա անմնացորդ նվիրումը Հայ եկեղեցուն ու նրա հավատարիմ զավակներին: Այդ մատյաններում ենք կարդում նրա բազմարդյուն աշակերտների անունները, որոնք հետագայում դարձան մեր հոգևոր ու մշակութային կյանքի կարկառուն ներկայացուցիչները: Նրանցից են՝ Զաքարիա վրդ. Վաղարշապատցին, Խաչատուր վրդ. Կեսարացին, Պողոս Տիվրիկացին, Եսայի սրկ. Կարճավանեցին, Մինասը, Առաքելը, Խաչատուրը և այլք: Մովսես րաբունապետի գործունեությունը ներկայացնող այդ ընդարձակ սկզբնաղբյուրները, նաև՝ Ս. Անանիա առաքյալի անապատում նրա ծավալած կրթական ու դպրոցաշինական գործն առիթ դարձան հատուկ անդրադառնալու ոչ միայն նրա անձին, ծննդյան-մահվան տարեթվերին (առավել համոզիչ է՝ 1573—1633 թթ.), չպահպանված տապանագրին (վաղագույն ընդօրինակությունը պահպանվել է ՄՄ Հմր 737 ձեռագրում), այլև նրա հիմնած դպրոցին ու երևելի սաներին: Անկարևոր չհամարեցինք նաև նրանից մեզ հասած սակավ, բայց յուրօրինակ մատենագրական գործերի, առավելապես՝ թղթերի մասին քննություն ծավալելը: Առանձին ուսումնասիրության նյութ է նաև ՄՄ Հմր 6322՝ Ս. Անանիա առաքյալի անապատում՝ 1626 թ. գրված սրբոց վարքերի ժողովածուն՝ կազմված Մովսես Տաթևացու կողմից:

Սրբավայրի մասին տեղեկությունները զարգացած միջնադարում գրեթե բացակայում են, հայտնի է միայն, որ ԺԵ. դարասկզբին այստեղ է գրվել ՄՄ Հմր 6405 Քարոզգիրքը, որի գրիչներից մեկն էլ պատմագիր Թովմա Մեծոփեցին է: Այն, որ արդեն տվյալ ժամանակաշրջանում Ս. Անանիայի անապատը Երևանի հոգևոր ու մտավոր հայտնի կենտրոններից էր, Թովմա Մեծոփեցու

կենսագրականում վկայում է Կիրակոս Բանասեր վարդապետը, ըստ որի՝ Տաթևից Մեծոփավանք, ապա Արարատյան երկիր ուղևորվելուց հետո Գրիգոր Տաթևացին Երևանում իր մի քանի աշակերտներին, այդ թվում՝ Թովմա Մեծոփեցուն վարդապետական գավազան է շնորհել: Այս մասին հետագայում ակնարկում է նաև ինքը՝ Թովմա Մեծոփեցին, ավելի ուշ՝ Դավիթ Բաղիշեցի ժամանակագիրը:

Այս և ԺԵ. դարից հայտնի մեկ այլ ձեռագրի հիշատակարանում վանական կենտրոնն արդեն իսկ հռչակված էր Ս. Աննանիայի անունով, որի «ամենազոր» նշխարների հովանու ներքո ձեռագրեր են ընդօրինակվել: Սրանից հետո ընդհուպ մինչև ԺԷ. դարի 20-ական թթ. Ս. Աննանիա առաքյալի վանք-անապատը այլուր չի հիշատակվում: Միայն Գրիգոր Դարանաղցի ժամանակագիրը, մի փոքր ավելի ուշ՝ Առաքել Դավրիժեցին մանրամասն նկարագրում են ծագումով Սյունյաց աշխարհի Խոտանան գյուղից Մովսես Տաթևացի վարդապետի մուտքը Երևան, ծառայության անցնելը տեղի կաթողիկե եկեղեցում, ապա Երևանի կառավարիչ Ամիրգունա խանի և հավատավոր ժողովրդի ցանկությամբ ու առաջարկով քաղաքի այգիներում ծվարած Ս. Աննանիայի հինավուրց մենաստանում հաստատվելու, շրջապատը բարեկարգելու, շենք ու շինություններ կառուցելու, դպրոց ու միաբանություն ստեղծելու պատմությունը: Փաստորեն, երբեմնի հռչակավոր Ս. Աննանիայի անապատը վերածնունդ է ապրում Մեծանուն Մովսես Տաթևացու անմիջական ջանքերով ու տնօրինությամբ: Կարևորն այն է, որ Մովսեսի օրոք անապատում ծաղկում է ապրել գրչարվեստը, այսինքն՝ դպրոցին կից ընդօրինակվել են նաև ձեռագրեր: Հետաքրքիր է, որ այդ ձեռագրերից և ոչ մեկի ծաղկողի անունը հայտնի չէ և չնայած նրան, որ այդ մատյաններն առավելապես աչքի չեն ընկնում ճոխ մանրանկարչությամբ՝ այդուհանդերձ նրանց հեղինակներն, ըստ ամենայնի, միևնույն գրիչներն են եղել:

Մովսես Տաթևացու վերահիմնած անապատը, ցավոք, հրկիզվել ու ավերակների է վերածվել 1635—1636 թթ. թուրք-պարսկական ընդհարումների հետևանքով և բացառված չէ, որ այդ բախումների պատճառով կորստյան են մատնվել նաև անապատում գրված ու այդտեղ պահված բազմաթիվ ձեռագրեր: Բարեբախտաբար, Մովսես Տաթևացու հաջորդ և նրա աշակերտ Փիլիպոս Ա. Աղբակեցի հայրապետը շարունակողը եղավ իր ուսուցչի եկեղեցաշեն գործունեության: Նրա անմիջական հսկողությամբ վերականգնվեցին ոչ միայն Վաղարշապատի Ս. Հռիփսիմե և Ս. Գայանե վանքերը, այլ նաև Երևանի Ս. Աննանիա առաքյալի անապատը, որը Փիլիպոս Աղբակեցին վերակառուցեց ոչ թե փայտով, այլ քար ու կրով:

Վերականգնված անապատին, սակայն, սպասվում էր մի նոր փորձություն՝ Երևանի 1679 թ. մեծ երկրաշարժը, որը հիմնահատակ կործանեց ոչ միայն Երևանի հուշարձանները, այլև Գառնին, Խոր Վիրապը, Գեղարդավանքը, բացի Վաղարշապատի վանքերից, որոնք ըստ ԺԷ. դարի գրիչ Գրիգոր Երևանցու՝ անսասան մնացին ի փառս հայ ժողովրդի: Նույն գրչի հաղորդմամբ՝ երկրաշարժից խոնարհվեց նաև Ս. Աննանիա առաքյալի եկեղեցին, որի փլատակների տակ վախճանվեց Գեղարդավանքի վանահայր, րաբունի Ստեփանոս եպիսկոպոսը:

Մեծ երկրաշարժին հաջորդեց Հայաստանում եկեղեցաշինության նոր փուլը: Կառուցվեցին և վերականգնվեցին եկեղեցիներ, որոնք չնայած իրենց ճարտարապետական և քանդակագործական լուծումներով հեռու էին վաղ և զարգացած միջնադարի հայտնի գլուխգործոցներից, բայց

յուրօրինակ են ԺԷ—ԺԸ. դդ. հայկական ճարտարապետության պարզ ու ինքնուրույն դրսևորումներն ուսումնասիրելու առումով: Ահա հենց այս ժամանակաշրջանի ծնունդ է նաև Ս. Անանիա առաքյալի անապատի տեղում՝ Նահապետ Ա. Եղեսացի կաթողիկոսի օրոք՝ 1693 թ., խոջա Փանոսի մեկենասությամբ կառուցված Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցին (այսպես է կոչվել տևական ժամանակ այստեղ պահված մի հրաշագործ Ավետարանի անունից, որը ՄՄ Հ՞ 4060 ձեռագիրն է): Ըստ ճարտարապետական հորինվածքի՝ եկեղեցին մեկ զույգ մույթերով եռանավ բազիլիկ կառույց է, որի որմերին պահպանվել են մեկ տասնյակից ավելի վիմագրեր, որոնք նրա կառուցման ու հետագա նորոգումների քարեղեն հավաստի վկայագրերն են:

Եկեղեցու վիմագրական ժառանգության համալիր քննության արդյունքում նախկինում հրատարակված 13 վիմագրերին ավելացան ևս 18-ը: Հրատարակված վիմագրերի վերծանություններում արվել են բազմաթիվ ուղղումներ: Վիմագրերի գիտական արդի պահանջներին հարիր ամբողջական հրատարակությունը, այլև՝ ԺԹ—Ի. դդ. բազմաթիվ արխիվային փաստաթղթերի օգտագործումը հնարավորություն ընձեռեց ժամանակագրորեն քննել նաև եկեղեցում իրականացված շինարարական և նորոգչական աշխատանքները՝ պարզելով առաջնորդ-վանահայրեր Մեսրոպի (1693 թ.), Պետրոս վարդապետի (1778 թ.), Ավետիս վարդապետ Կարբեցու (1781 թ.), Անանիա վարդապետի (1786 թ.), Աթանաս վարդապետի (մինչև 1798 թ.), Մինաս վարդապետի (1798-ից հետո), մեկենասներ խոջա Փանոսի և նրա ընտանիքի անդամների, Գաբրիել հազարապետի, Աֆրիկյան եղբայրների, վերակացուներ Դավթի, Հովհաննեսի, երեսփոխան Մկրտիչ Տեր-Սարգսյանի և այլոց անունները: Պակաս կարևոր չէր նաև եկեղեցու ներքին շարվածքում օգտագործված արձանագիր քարերի ուսումնասիրությունը, որոնցից մեկի՝ ԺԹ—ԺԴ. դդ. բնորոշ վիմագրում վկայված է այգու «հաս» հարկային տերմինը: Այն եկեղեցու վիմագրերից ժամանակագրորեն վաղագույնն է:

Սիմեոն Երևանցի կաթողիկոսի «Ջամբռ»-ի և վավերագրական այլ աշխատությունների միջոցով պարզվեց, որ չնայած նորակառույցը կրում էր Ս. Աստվածածնի անունը, բայց ԺԸ. դարում ևս սրբավայրը շարունակել է կոչվել Ս. Անանիա առաքյալի անունով և, որ ուշագրավն է, այն ունեցել է իր վանքապատկան թեմը, որի կազմում ընդգրված են եղել Առինջ գյուղն ու Կոնդի բոշաների թաղը: Մինչև 1830-ականների սկիզբն այս կենտրոնն իբրև վանական համալիր է գործել, ապա հանձնվել Մարաղայի գաղթականներին ու դարձել ծխական եկեղեցի: Տեղեկությունների համաձայն՝ հենց այդ ժամանակներից էլ տեղի հրաշագործ Ավետարանի անունից ժողովուրդը եկեղեցին կոչել է «Ջորավոր», որից էլ՝ Ջորավոր Ս. Աստվածածին:

Եկեղեցու պատմության ուսումնասիրության շրջանակներում կարևոր էր նաև նրա որպիսությունը ստալինյան բռնապետության և հետագա տարիներին ըստ արխիվային վավերագրերի ներկայացնելը, որը որքան էլ ցավալի, բայց և նրա պատմության անբաժանելի մասն է: Այս առումով ներկայացված նյութը որոշակիացնում է եկեղեցու և նրա հոգևորականների դժվարին կացությունն այդ տարիներին, որը կանոնակարգվում է միայն 1940-ականների վերջերին, երբ իր եպիսկոպոսական անդրանիկ պատարագն այս եկեղեցում է մատուցում Վազգեն Ա. վեհափառ հայրապետը: Վերջինիս օրոք, Հայաստանի մի շարք եկեղեցիների շարքում բարեզարդվում ու սկսում է կանոնավոր գործել նաև Ջորավոր Ս. Աստվածածինը: Այսօր էլ այն Երևան

քաղաքի հինավուրց եկեղեցական համալիրներից է, որի հոգևոր հովիվ Տ. Գրիգոր քհն. Գրիգորյանի անխոնջ ջանքերով եկեղեցին շարունակում է ոչ թէ տարեցտարի, այլ օր օրի բարեզարդվել ու հարստանալ եկեղեցական սպասքով: Այս էր պատճառը, որ վերջին տարիներին ստացված եկեղեցական առարկաների արձանագիր նմուշները ևս ներառեցինք մեր աշխատանքում՝ նրանց հետ նաև եկեղեցում պահպանված համեմատաբար հին արձանագիր առարկաները՝ սրբապատկերներ, գրքեր, խաչեր, որոնց արձանագրություններն, ըստ էության, առաջին անգամ են հրատարակվում:

Մեր խոսքն ամփոփելով՝ վերստին պետք է փաստենք, որ միջնադարյան Երևանն իբրև գրչության և ուսումնական դպրոց՝ հարուստ է իր հոգևոր ու մշակութային կենտրոններով, որոնցից առաջնայինը, անկասկած, Ս. Անանիա առաքյալի անապատն է կամ Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցին:

АРСЕН АРУТЮНЯН

ЕРЕВАНСКАЯ ПУСТЫНЬ СВ. АПОСТОЛА АНАНИИ ИЛИ ЦЕРКОВЬ СВ. БОГОРОДИЦЫ ЗОРАВОР

РЕЗЮМЕ

Средневековая история Еревана — это дошедшие до нас историко-архитектурные памятники, их эпиграфические материалы и рукописные книги, а потому более чем очевидно, что изучение города, как и, вообще, любого памятника, необходимо проводить посредством комплексного рассмотрения упомянутых источников. Примером подобного исследования явился настоящий труд, посвященный историко-культурному наследию древнего духовного и культурного центра города Ереван — Пустыни Св. апостола Анании (святилища отшельников) и построенной на его месте церкви Св. Богородицы Зоравор. По свидетельству историографа XVII века Аракела Даврижеци, «приютившаяся» в садах в северной части города часовня Св. Анании существовала «со стародавних времен», здесь сохранилась также полуразрушенная подземная гробница святого. Эти свидетельства летописца позволили прежде всего обратиться к культу Св. Анании, его деяниям и жизнеописаниям мученика. Этим была обусловлена перепубликация в начале исследования отрывков из Святого Писания, Четьи-Минеи и жизнеописаний, повествующих о Св. апостоле Анании, что было направлено на ознакомление читателя с подробностями земной жизни мученика Св. Анании. Материал подтолкнул также к представлению в первый раз иконографии Св. Анании в средневековом искусстве посредством маргинальных миниатюр, сохранившихся в рукописях собрания Матенадарана им. М. Маштоца. Судя по библейским свидетельствам и жизнеописаниям мучеников, Св. апостол Анания был одним из 72-х учеников — последователей учения Иисуса Христа, кто был рукоположен апостолом Петром в епископы Дамаска. Посему не удивительно, что на одной из миниатюр (рукопись №4547, 63а) он был изображен в одеянии епископа. В Святом Писании неоднократно ему приписывается исцеление в Дамаске Савла (или Сагоса) от слепоты души и тела и миссия наречения его Павлом. Его мученическая смерть, наступившая в 70-ом году от Рождества Христова, объясняется как результат продолжительных гонений, понесенных со стороны иудеев и язычников. Мощи святого были захоронены его учениками в Дамаске в доме Иуды, где в последующем была построена церковь. Часть мощей была перевезена в Рим, а также в Армению, немым свидетельством чего является сохранившееся в гробнице святого прямоугольное надгробье. Судя по композиционным особенностям креста, вырезанного в центральной части надгробья, оно может быть датировано X—XI веками либо относится к немного более раннему периоду, дополняя древние каменные «реликвии», сохранившиеся на месте святилища.

На территории этого древнего святилища, при подземной гробнице Св. Анании в

дальнейшем был основан монастырь и братство, где действовала также монастырская школа и был создан центр книгописания. Комплексное рассмотрение последнего и стало одной из основных целей нашего исследования. Изучение показало, что в этом скриптории было создано 12 манускриптов и еще один, написанный в 1407 году в Татевском монастыре, в 1658 году был здесь восстановлен. Хронологически наиболее древние рукописи относятся к первой половине XV века. Одна из них — это Книга проповедей, рукопись № 6405 из собрания Матенадарана им. М. Маштоца, написанная в 1409—1410 годах. Другая — Книга сокровищ монастыря Св. Аракелоц-Таргманчац Муша и окрестностей, указанная во II томе списка рукописей под № 20, и, к сожалению, до нас не дошедшая. Большая часть рукописей была скопирована в 1620—1660 годах, когда стараниями вардапета Мовсеса Татеваци (в последующем католикоса Мовсеса Татеваци III — 1629—1633) здесь была основана пустынь и учено-монашеская школа, где учениками вардапета были, помимо прочего, переписаны многочисленные рукописи. Большая часть наиболее известных манускриптов этого периода хранится в собрании Матенадарана им. М. Маштоца (№№ 507, 1538, 3502, 4058, 5243, 6322, 9147), еще одна рукопись из того же собрания (№ 7939) была скопирована в 1773—1776 годах, еще одна в 1916 года (№ 8337). Довольно примечательные памятные записи о времени написания и дальнейшей судьбе упомянутых рукописей представляют исключительную значимость как первоисточники, повествующие о создании, условиях действия скриптория, монахах-предводителях, писцах, о личности заказчиков, а также с точки зрения освящения событий, происходящих в политической и экономической жизни страны. Заслуживает внимания, что в основной канве этих же памятных записей не раз подробно характеризуется личность великого вардапета, нашего второго Просветителя католикоса Мовсеса Татеваци, его беззаветная преданность Армянской церкви и ее верным сынам. В этих текстах мы находим имена его плодовитых учеников, ставших в последующем видными деятелями духовной и культурной жизни Армении. К их числу относятся: вардапеты Закария Вагаршапатци и Хачатур Кесараци, Погос Тиврикци, диакон Есаи Карчаванеци, Минас, Аракел, Хачатур и др. Упомянутые многочисленные источники, представляющие деятельность вардапета Мовсеса, а также предпринятые им в пустыни Св. апостола Ананию труды по развитию образования и созданию школ, послужили толчком к особому обращению не только к его личности, датам рождения и смерти (наиболее вероятные — 1573—1633 гг.), несохранившейся эпитафии (самая ранняя копия сохранилась в рукописи № 737 из собрания Матенадарана им. М. Маштоца), но и к основанной им школе и именитым воспитанникам. Немаловажным мы посчитали также рассмотрение дошедших до нас немногочисленных, но самобытных сочинений летописцев, главным образом исследование переписки. Предметом отдельного изучения стал сборник жизнеописаний святых, написанный Мовсесом Татеваци в 1626 году в пустыни Св. апостола Ананию (рукопись № 6322).

Сведения о святилище из периода развитого средневековья в Армении почти отсутствуют. Известно лишь, что в начале XV века здесь была написана Книга проповедей (рукопись № 6405), одним из авторов которой являлся летописец Товма Мецопеци. О том, что уже в этот период пустынь Св. Ананию была одним из значимых духовных и культурных центров Еревана, в жизнеописании

Товмы Мецопеци свидетельствует вардапет Киракос Банасер. По его словам, после путешествия из Татева в Мецопаванк и далее в страну Араратскую Григор Татеваци вручил в Ереване нескольким своим ученикам, в числе которых был и Товма Мецопеци, жезл архимандрита. Об этом впоследствии упоминает и сам Товма Мецопеци, а еще позднее — летописец Давид Багишеци.

В этой, а также в памятной записи другой рукописи XV века (Муша и окрестностей, рукопись № 20) данный монастырский комплекс уже фигурирует под именем Св. Анании, под покровительством «всемогущих» мощей которого была переписана рукопись. С этого времени вплоть до 20-ых годов XVII века монастырь-пустынь Св. апостола Анании не упоминается. Лишь летописец Григор Даранагци, а несколько позднее и Аракел Даврижеци подробно описывают историю входа Мовсеса Татеваци родом из деревни Хотанан Сюникской области в Ереван, его переход на службу в местную церковь Катогике, а в дальнейшем, по воле правителя Еревана хана Амиргуна и предложению верующих — утверждение в древней обители Св. Анании, находящейся в садах Еревана, благоустройство окружающих территорий, возведение зданий, основание школы и монастыря. Фактически, некогда прославленная пустынь Св. Анании пережила период своего возрождения трудами достославного Мовсеса Татеваци. Важно то обстоятельство, что в дни правления Мовсеса в пустыне процветало искусство книгописания, то есть, при школе осуществлялось также переписывание рукописей. Примечательно, что имя ни одного из иллюстраторов этих рукописей не известно. Большая часть этих манускриптов не отличаются особой роскошью иллюстраций, по-видимому, их художниками являлись те же переписчики.

Возрожденная Мовсесом Татеваци пустынь, к сожалению, была предана огню и превращена в руины в 1635—1636 годах по причине турецко-персидских столкновений, и не исключено, что в результате этих войн были утрачены также написанные и хранящиеся в пустыне многочисленные рукописи. К счастью, последователь Мовсеса Татеваци и его ученик — патриарх Пилипос Агбакеци стал продолжателем дела строительства церквей. При его непосредственном участии были восстановлены не только церкви Св. Рипсимэ и Св. Гаянэ в Вагаршапате, но и пустынь Св. апостола Анании, которую Пилипос Агбакеци реконструировал не деревом, а камнем и известью.

Однако восстановленную пустынь ожидало новое испытание — сильное землетрясение в Ереване 1679 года, до основания разрушившее не только памятники Еревана, но и Гарни, Хор Вирап, Гегардаванк, и не коснувшееся в такой мере лишь памятников Вагаршапата, которые, по словам летописца XVII века Григора Ереванци, остались непоколебимы во славу армянского народа. Как сообщает тот же автор, в результате землетрясения пала также церковь Св. апостола Анании, под обломками которой оказался погребенным настоятель Гегардаванка епископ Степанос.

За большим землетрясением в Армении последовал новый этап строительства церквей. Были возведены и перестроены церкви, которые по своему архитектурно-художественному решению хоть и далеки от прославленных шедевров раннего и развитого средневековья, но своеобразны и представляют интерес с точки зрения изучения простых и аутентичных форм армянской архитектуры XVII—XVIII веков. Именно в этот период, в 1693 году, на территории пустыни Св. апостола Анании, при католикосе Наапете

Едесаци I и меценатстве ходжи Паноса, была создана также церковь Св. Богородицы Зоравор (так она называлась продолжительное время по названию хранящегося здесь чудотворного Евангелия — в настоящее время рукопись № 4060 из собрания Матенадарана им. М. Маштоца). По своему архитектурному решению церковь представляет собой трехнефную базилику с парой колонн. На стенах церкви сохранилось более десятка памятных надписей, являющихся достоверным свидетельством об истории ее строительства и дальнейших реконструкций.

В результате комплексного исследования эпиграфического наследия церкви к опубликованным ранее 13-ти памятным надписям было добавлено еще 18. В расшифровке опубликованных ранее надписей были сделаны многочисленные правки. Полное издание эпиграфических памятников, осуществленное в соответствии с современными требованиями, а также использование некоторых архивных документов XIX века, позволило хронологически исследовать также осуществленные в церкви строительные и восстановительные работы. Были установлены имена предводителей монастыря: «смиренного» Месропа (1693 г.), вардапета Петроса (1778 г.), вардапета Аветиса Карбеци (1781 г.), вардапета Анании (1786 г.), вардапета Атанаса (до 1798 г.), вардапета Минаса (после 1798 г.), ктитора ходжи Паноса и членов его семьи, азарапета Габриэла, братьев Африкянов, руководивших строительством Давида и Ованнеса, ереспохана (представителя общины, ведающего хозяйственными делами церкви) Мкртича Тер-Саргсяна и других. Не менее важно было осуществить исследование также памятных надписей на камнях, использованных во внутренней кладке церкви, на одном из которых зафиксирован налоговый термин, обозначающий сад — «хас». Эта надпись в эпиграфическом наследии церкви хронологически является наиболее ранней.

Из Собрания государственных актов («Джамбр»-а) католикоса Симеона и других документов мы узнаем, что несмотря на то, что новопостроенная церковь именовалась именем Св. Богородицы, однако и в XVIII веке святилище продолжало называться по имени Св. апостола Анании и, что примечательно, имело свою, подчиненную монастырю, епархию, в состав которой входили село Ариндж и квартал бошей в Конде. До 1835 года этот центр действовал как монастырский комплекс, а в дальнейшем был передан беженцам из Мараги и стал приходской церковью. Согласно некоторым сведениям, именно с этого времени по имени находящегося там чудодейственного Евангелия люди стали называть церковь Зоравор (Всемогущая), а впоследствии — Св. Богородицы Зоравор.

В рамках исследования истории церкви важно было представить также ее состояние в период сталинского тоталитаризма, что является хоть и горькой, но неотъемлемой страницей ее истории. Представленный в этой связи материал описывает мрачное положение церкви и священнослужителей в эти годы, стабилизирующееся лишь в конце 1940-ых, когда здесь проводит свою первую литургию в сане епископа Верховный Патриарх Вазген I. В дни правления последнего, наряду с другими церквами, благоустраивается и начинает регулярно действовать также церковь Св. Богородицы Зоравор. И сегодня она является одним из древнейших церковных комплексов Еревана. Неустанными стараниями духовного пастыря церкви, Тер Григора иерея Григоряна, она продолжает не просто из года в год, но изо дня в день все более благоустраиваться и обогащаться церковной утварью. По этой причине образцы

надписей на полученных в последние годы церковных предметах также были включены в наше исследование, а наряду с ними и сохранившиеся в церкви относительно старинные предметы — образы святых, книги, кресты, памятные надписи на которых, по существу, опубликованы впервые.

Обобщая сказанное, мы должны вновь засвидетельствовать, что средневековый Ереван как школа книгописания и образования весьма богат своими духовными и культурными центрами, наиболее передовым из которых является, безусловно, пустынь Св. апостола Анании или церковь Св. Богородицы Зоравор.

Перевод на русский:
НИНА СТЕПАНЯН-ГАНДИЛЯН

ARSEN HARUTYUNYAN

THE HERMITAGE OF ST. ANANIAS THE APOSTLE OR ZORAVOR ST. ASTVATSATSIN CHURCH OF YEREVAN

SUMMARY

The medieval history of Yerevan is presented by historical-architectural monuments, their epigraphs and manuscripts preserved to our days, therefore it is more than clear that the observation of a city or generally each monument should be realized through the complex study of the abovementioned sources. The given work is a result of a similar study dedicated to the history and cultural heritage of an old spiritual and cultural center of Yerevan – the Hermitage of St. Ananias the Apostle (a sanctuary of hermits) and Zoravor St. Astvatsatsin Church built on the latter's site in 1693. According to the 17th-century historiographer Arakel Davrizhetsi, the Chapel of St. Ananias which was located in the orchards at the northern side of Yerevan, had existed "since ancient times" where the semi-ruined underground mausoleum of the Saint preserved here, too. This very evidence of the historiographer enabled first of all to refer to the worship of St. Ananias, his life and martyrology. Thus, this conditioned the reprinting of the passages describing St. Ananias the Apostle extracted from the Holy Bible, Haysmavurk (Synaxarium) and hagiographic literature at the beginning of the study which was intended to inform the reader about the details of the earthly life of martyr St. Ananias. By the dictation of the material for the first time through margin miniatures preserved in the manuscripts of the Mashtots Matenadaran, St. Ananias's iconography in Armenian medieval art was presented. Judging by the Holy Scriptural and hagiographic evidence, St. Ananias the Apostle was one of the 72 disciples who followed Jesus Christ's teaching and was later ordained Bishop of Damascus by Apostle Peter, therefore it is no coincidence that in one of the miniatures he was portrayed in an archimandrite's vestment (manuscript of the Mashtots Matenadaran №4547, 63a). The mission of curing Saul's (or Saulus) spiritual and bodily blindness in Damascus and baptizing the latter as Paul is many a time ascribed to St. Ananias in the Holy Bible. His martyrdom is considered to be the result of being permanently persecuted by the Jews and the gentiles which happened in the year of 70 Anno Domini. The Saint's relics were enshrined in the Juda's Palace of Damascus by his disciples where subsequently a church was erected. Some part of the relics was taken to Rome as well as to Armenia where the rectangular gravestone preserved in the Saint's mausoleum silently witnesses about it. Judging by the compositional details of the carved cross in the center of the gravestone it could be dated by the 10th–11th cc. or a little earlier considering it as the earliest stone relic preserved from the sanctuary.

On the site of this ancient sanctuary of Yerevan, adjacent to the underground mausoleum of St. Ananias, posthumously there was founded a monastery and a congregation where there also acted a monastic school

which turned into a writing center, too. The complex study of the latter became one of the main goals of the research. The examination revealed there are 12 manuscripts copied in this writing center of Yerevan and another one written at Tatev Monastery in 1407 was renovated here in 1658. Chronologically, the earliest two manuscripts belong to the first half of the 15th century, the first one is the №6405 Karozgirk (A Book of Sermons) of the Mashtots Matenadaran written in 1409–1410, and the other one – the №20 manuscript Gandzaran (Treasury) described in the II volume of the manuscript register of the surroundings of Msho Surb Arakelots-Targmanchats Monastery (St. Apostles'-Translators' Monastery of Mush) was written in 1450, which, unfortunately, did not reach us. Most of the manuscripts were copied during 1620–1660 when by the efforts of Archimandrite Movses Tatevatsi (later Catholicos Movses Tatevatsi the III (1629–1633)) a hermitage and a monastic school were founded here where numerous manuscripts were copied by the disciples of the Archimandrite. The famous manuscripts preserved from this period are mainly from the collection of the Mashtots Matenadaran (№507, 1538, 3502, 4058, 5243, 6322, 9147), another one from the same collection was copied in 1773–1776 (№7939 manuscript) and one was copied in 1916 (№8337). The quite interesting colophons of the writing and subsequent periods of the abovementioned manuscripts are exceptional primary sources in terms of elucidation of the foundation of the hermitage, the conditions of writing, the figures of the leader-friars, scribes and clients, as well as the political and economic events in the country. It is remarkable, the personality of our Great Pontiff and second Illuminator Movses Tatevatsi, his unwavering devotion to the Armenian Church and its faithful believers are many a time characterized in the axis of the same colophons. In those manuscripts we read the names of his prolific disciples, who subsequently became the illustrious representatives of our spiritual and cultural life, among them Archimandrite Zakaria Vagharshapattsi, Archimandrite Khachatur Kesaratsi, Poghos Tivriketsi, Deacon Yesayi Karchavanetsi, Minas, Arakel, Khachatur and others. These extensive primary sources presenting the activities of Pontiff Movses, including his educational and school-building initiatives in the Hermitage of St. Ananias became a special occasion to address not only his personality, the dates of his birth and death (more convincingly can be dated 1573–1633), the non-preserved epitaph (the oldest copy is preserved in the №737 manuscript of the Mashtots Matenadaran), but also the school founded by him and his notable disciples. We did not either consider it trivial to realize a study on his scarce handwritten works, chiefly the documents preserved to our days. Another material for study may also serve the №6322 manuscript of the Mashtots Matenadaran – a hagiographic compilation of the saints written at the Hermitage of St. Ananias in 1626 and compiled by Movses Tatevatsi.

In the High Middle Ages there are almost no records preserved about the hermitage, it is only known that at the beginning of the 15th century the №6405 Karozgirk (Book of Sermons) of the Mashtots Matenadaran was written here and historiographer Tovma Metsopetsi was one of its authors. The fact that the Hermitage of St. Ananias was among the famous spiritual and cultural centers of Yerevan, Archimandrite Kirakos Banaser (the Philologist) testifies about in the biography of Tovma Metsopetsi, according to which on his way from Tatev to Metsopavank, then to the land of Ararat, some of his disciples including Tovma Metsopetsi were handed over pastoral staff by Grigor Tatevatsi

in Yerevan. Subsequently, Tovma Metsopetsi himself also hints at this, and later chronicler Davit Baghishetsi does so.

In the colophon of this and other manuscript known from the 15th century (the №20 manuscript of Mush city and its surroundings) this monastic center had already been long famous by Ananias's name, under the auspices of the latter's "omnipotent" relics a manuscript was copied. After that, up to the 20s of the 17th century, the Monastery-Hermitage of St. Ananias the Apostle is not mentioned elsewhere.

Only chronicler Grigor Daranaghtsi, a little later Arakel Davrizhetsi described in detail the entry of Archimandrite Movses Tatevatsi to Yerevan who originated from Khotanan village of the land of Syunik, his entry on service at local Katoghike Church, subsequently, at the request and suggestion of the governor of Yerevan Amirguna Khan and the faithful people his being settled at the old Hermitage of St. Ananias lost in the orchards of the town, the story of the improvement of the surrounding area, the establishment of a school and a congregation.

Virtually, once the famous Hermitage of St. Ananias was revived with the direct efforts and leadership of illustrious Movses Tatevatsi. It is noteworthy, that under Movses the writing art flourished in the hermitage, that is to say, manuscripts were also copied adjacent to the school. It is interesting that the name of the limner neither of these manuscripts is known and, despite the fact that these manuscripts do not stand out for rich miniature painting, nevertheless, their authors were apparently the same scribes.

Unfortunately, the hermitage reestablished by Movses Tatevatsi was fired and turned into ruins as a result of the 1635–1636 Turkish-Persian clashes, and it is not ruled out that numerous manuscripts created and preserved in the hermitage were subject to destruction in consequence of these clashes. Fortunately, Pilipos Aghbaketsi — the successor and disciple of Movses Tatevatsi, became the continuer of his teacher's church-building activities. Under his direct control not only St. Hripsime and St. Gayane monasteries of Vagharshapat were restored, but also the Hermitage of St. Ananias the Apostle in Yerevan, which was rebuilt by Pilipos Aghbaketsi not with wood but stone and lime.

A new misfortune, however, was to befall the restored hermitage; the 1679 great earthquake of Yerevan destroyed wholly not only the monuments of the settlement, but also Garni, Khor Virap, Geghardavank except for the Vagharshapat monasteries, which, according to the 17th century scribe Grigor Yerevantsi, remained steadfast for the glory of the Armenian people. According to the same scribe, the church of St. Ananias the Apostle was destroyed from the earthquake, too, under the ruins of which Abbot Stepanos of Geghard Monastery died.

The new stage of church building in Armenia followed the great earthquake. Churches were built and restored, which, despite their architectural and sculptural solutions being far different from famous masterpieces of the Early and High Middle Ages, however, are unique in terms of studying simple and independent manifestations of Armenian architecture of the 17th–18th cc. Zoravor St. Astvatsatsin Church is also the birth of the very period built at the place of the Hermitage of St. Ananias the Apostle under Catholicos Nahapet Yedesatsi in 1693 with patronage of Khoja Panos (it was called so in the name of a wondrous Gospel preserved here for a long time, which is the №4060 manuscript of the Mashtots Matenadaran). According to the architectural composition, the church is a three-nave basilic structure with a pair of vaults and more than a dozen epigraphs preserved on the walls which are the true stone certificates of its construction and subsequent repairs.

